ՄԻՆԱՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵԾ ԾՈՎԱՆԿԱՐՉԻ ԿՅԱՆՔԸ

ՄԻՆԱՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵԾ ԾՈՎԱՆԿԱՐՉԻ ԿՅԱՆՔԸ

«ԱՆԱՀԻՏ» 1990

ԳՄԴ 85.143 (22) 1
Ս 259

Գրախոս՝ ՀԽՍՀ ժող. նկարիչ, պրոֆեսոր
Խ. Հ. ԻՍԱԲԵԿՅԱՆ

Սարգսյան Մ. Ս.

Մեծ ծովանկարչի կյանքը։ Մենագրություն.— Ս 259 եր., Անահիտ, 1990.— 432 էջ, 32 նկ.։

Աշխատությունը ներկայացնում է հայ ժողովրդի մեծ զավակ Հովհաննես Այվազովսկու (1817—1900) կյանքի և ստեղծագործության տարեգրային պատմությունը։ Գիրքը հեղինակի երկարամյա ուսումնասիրությունների արդյունք է։ Շրջանառության մեջ են դրվում նոր և հարուստ նյութեր, որոնք ընդլայնում են աշխարհահռչակ ծովանկարչի բեղմնավոր կյանքի մասին մինչև այժմ եղած պատկերացումը։

Նախատեսվում է մասնագետների և արվեստասեր լայն շրջանների համար։

ISBN 5—550—0042—2

4903020000 (1)
Ս ——————— 90
710 (01) 89

ԳՄԴ 85.143 (22) 1

© «Անահիտ» 90

ԻՆՁ ՀԱՄԱՐ ԱՓՐԵԼ՝ ԱՇԽԱՏԵԼ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ:

Հ. Կ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

ԻՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա աշխատությամբ մեր առջև խնդիր ենք դրել սկըզբնաղբյուրների մանրազնին ուսումնասիրության հիման վրա ընթերցողների լայն շրջաններին ներկայացնել հայ ժողովրդի մեծ զավակ, աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու հարուստ և հետաքրքիր, շատ կողմերով ուսանելի կյանքի (1817—1900) փաստագրական պատմությունը: Ամբողջ նյութը ներկայացվում է ժամանակագրական կարգով: Փաստական նյութերի ընձեռած հնարավորությունների սահմաններում մենք աշխատել ենք ցույց տալ և ուրվագծել հանճարեղ ծովանկարչի անցած ուղին, ներկայացնելով նրա մեծ կյանքի շարժումը տարի առ տարի, ամիս առ ամիս, օր առ օր, իսկ երբեմն նույնիսկ՝ ժամ առ ժամ... Դրաճում է սույն մենագրության առանձնահատկությունը:

Այդ դժվարին խնդիրը լուծելու համար մենք օգտագործել ենք բազմաթիվ և բազմազան աղբյուրներ, ինչպես նաև Այվազովսկու գեղարվեստական ժառանգության ուսումնասիրության ուղղությամբ անցյալում մեր կատարած բազմամյա (ավելի քան 40 տարվա) աշխատանքում կուտակված փորձը: Մեր նախնական որոնումների արդյունքն առաջին անգամ հրապարակվել է 1945 թ.[1], այնուհետև առանձին հոդվածների

1 «Հովհ. Այվազովսկին և հայ կուլտուրան»: Տե՛ս. «Խորհրդային գրականության և արվեստ» ամսագիր, 1945, № 5, էջ 94—97:

ձևով՝ տարբեր պարբերականներում, «Հայկական և ռուսական կերպարվեստի կապերը XIX—XX դարերում» աշխատության մեջ[2], իսկ առանձին գրքով՝ 1967[3], 1976[4], 1978[5] թվականներին:

Մեզ համար, սակայն հավաստի աղբյուրներ են ծառայել արխիվային փաստաթղթերը: Դրանց մեծ մասը հրապարակվել է տարբեր ժամանակներում, մյուսները ձեռ եմ բերել վերջին տասնամյակում և օգտագործել եմ ներկա պատմության ճշմարիտ տեսության համար:

Մեզ համար առաջնային նշանակություն են ունեցել նկարչի ստեղծագործ թյուններ: Խորհրդային Միության քանգարաններում, մասնավոր անձանց մոտ և արտասահմանում գտնվող մեզ հայտնի ավելի քան 900 ստեղծագործություններից աշխատության մեջ ընդ եմ գլխավորապես այն լավագույնները, որոնք էտապային նշանակություն ունեն, առավել լավ են բնութագրում նկարչի անցած ուղին և անմիջականորեն առնչվում են նրա մեծ կյանքի կարևոր անցքերին:

Աշխատության մեջ օգտագործել եմ նաև նկարչի ժամանակվա հայ, ռուս, արևմտաեվրոպական երկրների և ամերիկյան պարբերական մամուլի հաղորդագրությունները, ինչպես նաև ռուսական և խորհրդային արվեստագիտական գրականությունը[6]: Ցավոք, պետք է ընդ, որ Հովն. Այվազովսկու մասին գոյություն ունեցող գրականության մեջ, հատկապես ռուսական արվեստագիտության բնագավառում, մինչև վերջին ժամանակներս անհրաժեշտ չափով չեն օգտագործվել հայկական

---

[2] «Հայկական և ռուսական կերպարվեստի կապերը XIX - XX դարերում», 1953, էջ 104—118:

[3] «Հովհաննես Այվազովսկի», գրքույկ, 1967, 62 էջ: «Айвазовский— Документы и материалы» (ժողովածու), 1967, 405 էջ, կազմողներ՝ Մ. Սարգսյան, Գ. Հարությունյան, Հ. Շաթիրյան:

[4] «Հովհաննես Այվազովսկի», 1976, 278 էջ:

[5] «Պետերբուրգի դեղարվեստի ակադեմիան և հայ նկարիչները» եր., 1978, էջ 26—39:

[6] «Русская старина», ж. 1878, т. XXI, XXII, XXIII, 1881, т. XXXI. Н. Н. Кузьмин, И. К. Айвазовский и его произведения, 1901. СПб Н. Барсамов, И. К. Айвазовский, 1962, М., В. Н. Пилипенко, Айвазовский, Альбом. 1983. с., Н. Новоуспенский, Айвазовский, альбом, 1980, 1983, Ленинград.

աղբյուրները, արխիվները, հայերեն բազմաթիվ ճամակները, հայ մշակույթի նշանավոր գործիչների հետ Այվազովսկու ունեցած անձնական և ստեղծագործական կապերը, հայերի շրջանում ծավալած հասարակական գործունեությունը, ինչպես նաև հայկական թեմաներով նրա բազմաթիվ պատկերները, որոնք հսկայական նյութ են տալիս մեծ նկարչի բեղմնավոր կյանքի տարեգրության համար:

Աշխատության մեջ Հովհ. Այվազովսկու կյանքը ներկայացվում է այնպես, ինչպես եղել է, նույնպես և նրա շրջապատի հայ, ռուս և այլազգի մարդիկ, ժամանակի գեղարվեստական կյանքը, հասարակական հարաբերությունները իրենց բարդությամբ և հակասություններով, այսինքն՝ այն ռեալ իրականությունն ու կենսական միջավայրը, որի մեջ ապրել ու ստեղծագործել է արվեստագետը:

Մենագրության մեջ միաժամանակ բացահայտվում է ծովանկարիչ Այվազովսկու ստեղծագործությունների ուրույն տեղը և նշանակությունը ոչ միայն հայ, այլև 19-րդ դարի ռուսական ու համաշխարհային նկարչության զարգացման պատմության մեջ: Մենք ելնում ենք այն համոզմունքից, որ Հովհ. Այվազովսկու արվեստը խորապես ազգային է, ինչպես ազգային են Մոցարտի և Գլինկայի երաժշտությունը, Ռեպինի, Բաշինջաղյանի և Սարյանի նկարչական ստեղծագործությունները: Միևնույն ժամանակ նրա արվեստը համամարդկային է, քանի որ խորապես մարդկայինի, ճշմարտի և գեղեցկի հատկանիշները հատուկ են բոլոր ժողովուրդների դասական արվեստին:

Առաջին մաս

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ

Հովհաննես Այվազովսկին ծնվել է 1817 թ. հուլիսի 17-ին, Ղրիմի Թեոդոսիա քաղաքում, հայ առևտրականի ընտանիքում։ Նրա ծննդյան մասին Թեոդոսիայի հայոց Ս. Սարգիս եկեղեցու չափաբերական (ծննդական) մատյանում գրանցվել է. ծնվեց «Գէորգ Այվազեանի որդի Յօհաննէսն-1»[1]։ Հովհաննեսը «ի հնասեր հռոմեական հայ հորէ և ի լուսավորչական հայ մորէ» ծնված երրորդ (կրտսեր) արու զավակն էր Գրիգոր և Գաբրիել որդիներից հետո։ Բոլորն էլ, ինչպես և նրանց Հռիփսիմե մայրը, մկրտվել էին նույն եկեղեցում՝ հայ լուսավորչական (Գրիգորյան) դավանանքով։

Այվազովսկու նախնիները (որոնք առաջ կոչվել են Այվազկամ Հայվազ), չկարողանալով տանել թուրքական դավիչների բռնակալական դաժան լուծը, 18-րդ դարում Արևմտյան Հայաստանից (այժմ Թուրքիա) բազմահազար հայերի հետ գաղթում են Լեհաստան (ապրում են Գալիցիայի շրջանում), ուր հայերը դեռևս 17-րդ դարում ստեղծել էին հայաբնակ մեծ գաղութ իր վարչական ու կուլտուր-լուսավորական հիմնարկներով։ Հետագայում, հարազատ եղբայրների միջև ծագած անհամաձայնության պատճառով, նկարչի հայրը երիտասարդ

---

[1] «Айвазовский — Документы и материалы». Ер., 1967, Сборник составили: кандидат искусствоведения М. С. Саргсян, старшие научные сотрудники ЦГИХ Арм. ССР Арутюнян Г. Г., Шатирян М. Л., *Այսուհետև* «Документы...»,

հասակում տեղափոխվում է Մոլդավիա, այնտեղից էլ՝ Բուկովինա, իսկ 19-րդ դարի սկզբներին մեկնում է Ղրիմ, որտեղ, հանդիպելով հայուհի Հռիփսիմեին, ամուսնանում է նրա հետ և մշտական բնակություն հաստատում Թեոդոսիայում։

Նկարչի ավագ եղբայր արքեպիսկոպոս Գաբրիել Այվազյանը (Այվազովսկի) 1877 թ. դեկտեմբերի 13-ին գրում է, որ իր հայրը «...Քայթան Այվազ անունով անցած ըլլա ի Լեհաստան Մոլտավիա և անտի ի Ռուսաստան, վասն զի այս Քայթան Ռուսաստանի մեջ առել է Կոստանտին Գրիգորյան անունը, իսկ յուր Այվազ կամ Հայվազ ազգանունը անոր հետ մար հարկ համարել է Այվազովսկի, որ Ռուսաստանի մեջ այն ժամանակները կային Այվազ անունով ուրիշ ազգատոհմներ։ Նա է մեր հանդուցեալ հայր Կոստանդին-Գևորգ Այվազովսկի, որ վախճանյալ է 1841-ին[2]»։

Այվազովսկիների ազգականներից Բուկովինայի հայաբնակ Սուչավա քաղաքում ապրող Պողոս աղա Այվազին 1877 թ. դեկտեմբերի 13-ին հայերեն գրած նամակում Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը հայտնում է, որ Ղրիմի, Բուկովինայի և Մոլդավիայի Այվազները մեծավաղ ազգատոհմեր են։ Հայտնի է, որ հայ Այվազների երկու ընտանիք է եղել Բուկովինայում։ Նրանցից Ներսես, Ստեփան և Նիկողոս Այվազները 1789 թ. Չերնովից քաղաքից տեղափոխվել են Սուչավա և նրա շրջակայքում նոր կալվածքներ են գնել, իսկ մյուսը՝ Գրիգոր Այվազի ընտանիքը, մնալով տեղում, մի խումբ հայերի հետ նվիրատվություն է արել Չերնովից քաղաքում հայոց եկեղեցի կառուցելու համար[3]։ Նշելով Պողոս աղա Այվազի ընտանիքի հետ իրենց ազգակցությունը, Գաբրիել Այվազյանը 1877 թ. հաստատորեն գրում է. «Ձիք երկբայութիւն զի Այվազքն (կամ Հայվազք) Կալիցիոյ և Պուգովինայի և Խրիմու ազգակիցք են մխյանց՝ ոչ հեռավորք»։[4]

Իրենց ազգանվանը կցելով «սկի» լեհական վերջավորու-

---

2 «Документы...», էջ 311—312։

3 Լ. Բաբայան, Հայերը Մոլդավայում և Բուքովինայում, 1911 էջ, 108, 195։

4 Այվազովսկիների նախնիների ու նրանց ազգանունի փոփոխության մասին մանրամասն տե՛ս Գ. Հարությունյանի հոդվածը. Հայկական ԽՍՀ Տեղեկագիր, 1965, №2։

թյունը, Այվազյանները որոշ ժամանակ պահպանել են Գ սկզբնատառը և գրվել են Գայվազովսկի։ Այդ Գ-ն մնացել էր ռուսերենում գոյություն չունեցող Հ տառի վերահնչյունավորումից։ Այդ պատճառով «Հայվազ» ազգանունը գրվել է «Գայվազ» (Гайваз)։ Հետագայում Այվազովսկիները նետում են Գ տառը և սկսում են գրվել ավելի բարեհնչյուն ձևով՝ Այվազովսկի։ Հայերեն գրած նամակներում, ինչպես մի քանի նկարների տակ նկարիչն իր անունը գրել է Յոհաննես, Օհաննէս, ազգանունը՝ Հով. Այվազովսկի կամ Այվազեան հայերեն, իսկ ստեղծագործությունների մեծ մասը կամ պաշտոնական գրագրությունները ստորագրել է ռուսերեն Ի. Айвазовский, երբեմն՝ նաև Гай, ИГ— Իվան Կոնստանտինովիչ Այվազովսկի։*

Հովհաննես Այվազովսկու մանկությունն ու պատանեկությունն անցնում է Թեոդոսիայում։ Թեոդոսիան այն ժամանակ մի փոքրիկ, ծայրագավառային առևտրական քաղաք էր։ Բնակչության մեծ մասը հայեր էին։

Հայերը Ղրիմի թերակղզում բնակություն են հաստատել դեռևս 7—9-րդ դարերում։ Նրանց թիվը Ղրիմում ավելի է ուժգնանում Անիի բագրատունյաց թագավորության կործանումից հետո, երբ սելջուկների, այնուհետև մոնղոլների արշավանքների ու կողոպուտների հետևանքով 11—13-րդ դարերում հայերի մի զգալի հատված բուն Հայաստանից գաղթում է Ղրիմ և ընդմիշտ հաստատվում է այնտեղ։ Դեպի Ղրիմ հայերի նորանոր խմբեր են գաղթում նաև 15—18-րդ դարերում, երբ Հայաստանը, Թուրքիայի և Պարսկաստանի միջև բաժան-բաժան արված, հեծում էր արևելյան բռնակալության ծանր, կործանարար լծի տակ։ Բնակություն հաստատելով Ղրիմում, հայերն այստեղ կառուցում են քաղաքներ և գյուղեր, ճանապարհներ և կամուրջներ, ամրոցներ ու պաշտամունքային շենքեր՝ տաճարներ, եկեղեցիներ, մատուռներ և վանքեր իրենց հարուստ դրադարան-ձեռագրատներով, դպրոցներ, հասարակական ու մասնավոր մենաստաններ, իրենց բնակավայրերին տալով հայկական անուններ, ինչպես, օրինակ, «Սուրխաթ» («Սուրբ խաչ»), «Ջարխափան», «Արմյա-

---

* *Իվանը Հովհաննես անվան ռուսերեն թարգմանությունն է։*

նրսկ», «Արմյանսկի բազար» և այլն։ Այդ գյուղերում և քաղաքներում շինարար հայերը տնտեսական ու մշակութային լայն գործունեություն են ծավալում։ Միջնադարում հայ ազգաբնակչությունը այնքան մեծաթիվ էր, որ Ղրիմի թերակղզու ծովամերձ շրջանները ճենովական հին աղբյուրներում կոչվել են Armenia maritina— ծովային կամ ծովափնյա Հայաստան։

Մշտական բնակություն հաստատելով Ղրիմում, Հայաստանից գաղթած հայերը պահպանում են ոչ միայն իրենց ազգային սովորություններն ու բարքերը, այլև ստեղծում են նյութական և հոգևոր մշակույթի բազմաթիվ հուշարձաններ՝ ճարտարապետական, քանդակագործական, որմնանկարչական և մանրանկարչական արվեստի արժեքավոր կոթողներ։ Հենց միայն Թեոդոսիայում (որը առաջ կոչվել է Կաֆա) հայերն այնքան մեծ թիվ են կազմել, որ անհրաժեշտություն է զգացվել կառուցել 24 հայկական եկեղեցի, որոնց մի մասը մեզ հասել է կիսավեր վիճակում։

Մեզ է հասել և այժմ Մատենադարանում է պահվում 13—17-րդ դարերի Ղրիմի հայաբնակ քաղաքներում և գյուղերում գրված ու նկարազարդված ավելի քան 100 ձեռագիր գիրք։ Դրանց մագաղաթյա էջերի վրա հայ նկարիչների ստեղծած մանրանկարները և զարդանկարները այժմ էլ գեղարվեստական մեծ հաճույք են պատճառում։ Առանձնապես հատկանշական են մանրանկարիչներ Առաքելի, Գրիգոր Սուքիասյանի, Ավագի, Նաթերի որդիներ Ավետիսի և Հովհաննեսի, Թադևոսի, Նիկողայոս Ծաղկարարի և անանուն մանրանկարիչների ստեղծագործությունները, որոնք, հարազատ լինելով բնաշխարհիկ արվեստի ավանդույթներին, կազմում են հայ միջնադարյան մշակույթի օրգանական մասը՝ Ղրիմի հայկական մանրանկարչության դպրոցը։

Ղրիմի թերակղզում, մասնավորապես Թեոդոսիայի բնակչության մեջ, հայերը նշանակալից դեր են կատարում արհեստագործության և առևտրի բնագավառներում։ Շփումն այլ ժողովուրդների և Մոսկովյան պետության հետ նպաստում է ղրիմահայերի մշակույթի փոխադարձ հարստացմանը։ Ճարտարապետության մեջ դա արտահայտվում է այն բանում, որ հայկական որոշ մոտիվներ և ձևեր կիրառում են գտնում տեղի հունական, թաթարական և հրեական պաշտամունքային

շենքերի ճարտարապետության մեջ և զարդաքանդակներում։ Հայկական ձեռագիր գրքերի 17—18-րդ դարերի մի քանի կազմերի ձևավորման մեջ, ինչպես արդեն նկատված է, օգտագործվել են ռուս վարպետների կերտած Քրիստոսի, Աստվածամոր և ավետարանիչների կերպարներ։

Դեռևս ռուս արվեստագետ Ա. Ն. Սվիրինն է նկատել, որ տասնյակ XVI դարի սկզբներին ստեղծված մի շարք ձեռագիր գրքերի զարդարվեստի մեջ առկա են մոտիվներ, որոնք տիպական են Հին Հայաստանի գրքի արվեստի համար։ ...Միանգամայն հավանական է, որ հայկական ձեռագիր գրքեր են բերվել Մոսկվա, որոնք իրենց գույների անսովոր պայծառությամբ, զարդանկարների զարմանալի բազմազանությամբ չէին կարող տպավորություն չթողնել ռուս արտագրողների և գրքասերների վրա»[6]։

Այդ երևույթը ավելի ցայտուն արտահայտվում է հատկապես XIX դարում, երբ հանդես է գալիս հայ հանճարեղ ծովանկարիչ Հովհ. Այվազովսկին։

Հովհաննես Այվազովսկին իր նախնական կրթությունը ստանում է ծննդավայր Թեոդոսիայում։ Ութ տարեկան հասակում՝ 1825 թ. աշնանը, նա սկսում է հաճախել Թեոդոսիայի հայոց Ս. Սարգիս եկեղեցուն առընթեր ծխական դպրոցը։ Դա տարրական ուսումնարան էր, ուր երեխաներին սովորեցնում էին հայոց և ռուսաց լեզուներ, քերականություն, թվաբանություն, կրոն, ծանոթացնում աշխարհագրության և հայ ժողովրդի պատմության հետ։ Այստեղ նա սովորում է հինգ տարի։ Այդ տարիների ընթացքում Հովհաննեսը ստանում է հայկական կրթություն և ընդհանուր տեղեկություններ հարազատ ժողովրդի պատմության, մշակույթի և անցյալի նշանավոր գործիչների մասին։

Վաղ հասակից նրա մեջ հետաքրքրություն է առաջանում նկարչության և երաժշտության նկատմամբ։ Նկարում է ձեռքն ընկած գրքերի ու թերթերի վրա, իսկ երբեմն նաև, կավճով կամ ածուխով, շենքերի պատերին։ Պահպանվել են Այվազովսկու հասուն տարիքում 1887 թ. նկարած մի քանի ինքնակենսագրական բնույթի գծանկարներ, որոնցում նկարիչը

---

[6] А. И. Свирин, Древнерусская миниатюра, м. 1950.

պատկերել է իրեն մանուկ հասակում, բնության տեսարան կամ մարդկանց նկարելիս։ Այդ մասին է վկայում մի գրչանկար, որը պատկերում է մանուկ Հովհաննեսին մարդկանց, դիմվորներ ու նավեր պատի վրա նկարելիս։ 1887 թ. մի յուղանկար պատկերում է բարձունքի վրա նստած 8 տարեկան մանուկին՝ բնության տեսարան նկարելիս։ Կտավի մի անկյունում գրված է. «Айваз, 1825 год»։ Թեոդոսիայի տուն-թանգարանում ցուցադրվող այդ պատկերը հաստատում է, որ Այվազովսկին նկարել սկսել է շատ վաղ հասակից։

Նույն հասակում երաժշտասեր ու երգող պատանին ինքնուրույնաբար սովորում է չուվաք նվագել և այնքան լավ է նվագում, որ մի անգամ փողոցով անցնող քաղաքագլուխ Ա. Խ. Կազնաչեևը, պատահաբար լսելով նրա նվագը, զարմանքից խնդրեց շարունակել և գովեց նրան»[7]։

Պատանու նկարչական թոթովանքները գրավում են Թեոդոսիայի ճարտարապետ Կոխի ուշադրությունը։ Տեսնելով այդ աշխատանքները, ճարտարապետը խորհուրդներ է տալիս նրան, ծանոթացնում է նկարչության՝ հատկապես հետանկարչության, ծավալայնության և լուսաստվերների նախնական գիտելիքների հետ։ «Այդ առաջին դասերը,— խոստովանում է նկարիչը լրագրողին,— իրեն մեծ օգուտ բերին»։

Մանուկ Հովհաննեսի դպրոցական տարիներն անցնում են նյութական աննպաստ պայմաններում։ Նրա հայրը «միջոցներ չունենալու պատճառով,— վկայում է նկարիչը հետագայում,— չի կարողանում իր ավագ եղբայր Գաբրիելին կրթության տալ նրա ընդունակություններին համապատասխան»[8]։ Նա ստիպված է լինում իր միջնակ որդուն՝ Գաբրիելին, 1823 թ. ուղարկել Վենետիկի ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանության գիշերօթիկ դպրոցը։ Ընտանիքում աշխատում էր նաև մայրը՝ Հռիփսիմեն, որը գեղեցիկ ձեռագործեր էր անում հարուստների համար, և Հովհաննեսը տանում, հանձնում էր պատվիրատուներին։

Ապրելով այդպիսի պայմաններում՝ Հովհաննեսը, սակայն,

---

[7] «Русская старина», 1878, էջ 655։

[8] Նույն տ/գ, էջ 433։

երբեք չի թողնում իր սիրած նկարչությունը։ «Առաջին նկարները,— ասում է նա,— որոնք ես տեսել եմ, երբ իմ մեջ վառվում է գեղեցիկ արվեստների նկատմամբ բոցավառ սիրո առաջին կայծը, եղել են վիմագրություններ և պղնձի վրա կատարած փորագրություններ (գրավյուրներ, շատ վատերը), որոնք պատկերում էին Հունաստանի ազատագրման համար 1820-ական թվականների վերջերին թուրքերի դեմ մարտնչած հերոսների սխրագործությունները։ Իմ առաջին մանկական թոթովանքների մեջ խառնվել, մասնակից են դարձել հենց Բաբոլինին, Կանարիսը, Միաուլին և ուրիշներ»[9]։

Ռուսական արվեստագիտության մեջ անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել այն փաստի վրա, թե ինչու՞ հասուն տարիքում, 61-ամյա նկարիչը նշում է, որ իր «մանկական առաջին թոթովանքների մեջ մասնակից են դարձել» Թուրքիայի բռնակալության դեմ ուղղված և Հունաստանի ազատագրության համար մարտնչող ազգային-ազատագրական շարժման այդ հերոսների անունները։ Բաբոլինին, Կանարիսը, Միաուլին և ուրիշներ եղել են ազգային հերոսներ, որոնք իրենց կյանքը նվիրել են հայրենիքի և հարազատ ժողովրդի ազատագրության գործին։ 1820-ական թվականներին ծավալված այդ շարժումը լայն արձագանք է գտնում ազատատենչ ժողովուրդների և ժամանակի առաջավոր գործիչների մոտ։ Այդ պայքարին զինվորագրվել է անգլիացի մեծ բանաստեղծ Ջ. Բայրոնը ևս, որը 1823 թ. կամավորների չոկատի գլուխ անցած կռվել է թուրքերի դեմ։ Ա. Ս. Պուշկինը նույնպես հիացմունքով է ողջունել հույների ազատագրական շարժումը։

Մանուկ Հովհաննեսը ծնողներից և ապա դպրոցում լսելով իրենց տոհմի և ընդհանրապես հայ ժողովրդի պատմական անցուդարձերը, Վարդանանց պատերազմի և հայերի մղած հերոսամարտերի մասին, բնականաբար չէր կարող անտարբեր լինել բռնակալ թուրքերի դեմ հույն հերոսների մղած ճակատամարտերը պատկերող այդ փորագրությունների նկատմամբ և, խորապես տպավորված, նրա մանկական հոգում, ինչպես Ա. Ս. Պուշկինի մեջ՝ «гневом дух пылал»*։ Ուստի պատա-

---

9 Նույն տեղ, էջ 654։

* «Զայրույթով հոգին այրվում էր» (Ա. Ս. Պուշկին)։

հական չէ, որ դառնալով ճանաչված նկարիչ, Հովհ. Այվազովսկին տաղանդի մեծ ուժով ստեղծում է ռուս-թուրքական պատերազմների թեմաներով այնպիսի պատկերներ, որոնք մեծարում են ռուսական ռազմանավերի հաղթանակը թուրքերի դեմ, ռուսական զենքի հաջողության մեջ տեսնելով Թուրքիայի գերիշխանության տակ հեծող քրիստոնյա փոքր ազգերի, այդ թվում հարազատ ժողովրդի արևմտյան հատվածի ազատագրության հույսերը։

Ճարտարապետ Կոխը, որը սիրում էր պատանուն և հետևում նրա մանկական աշխատանքներին, մի անգամ նրա գծանկարները տանում և ցույց է տալիս քաղաքապետին։ Քաղաքապետ Ա. Ի. Կազնաչեևը, որը կիրթ ու զարգացած մարդ էր, նկատելով արտակարգ ընդունակություններ այդ համեստ, աշխատասեր ընտանիքի փոքրիկ անդամի նկարներում, ցանկություն է հայտնում տեսնել նրան։ Հաջորդ օրը պատանի Հովհաննեսը, հոր և ճարտարապետ Կոխի ուղեկցությամբ, մի քանի նոր նկարներ ձեռքին, ներկայանում է Ա. Ի. Կազնաչեևին։ Վերջինս ուշադիր դիտելով նկարները, հայտնում է իր գոհունակությունը, խրախուսում է նրան և նվիրում ջրաներկերի մի տուփ ու նկարչական թղթեր։ Ապա ծանոթացնելով իր որդու հետ, առաջարկում է հաճախ այցելել իրենց տուն։ Այդ օրվանից ընկերություն անելով պատանի Կազնաչեևի հետ, Հովհաննեսը դառնում է այդ քաղաքակիրթ ընտանիքին հաճախ այցելող հյուրերից։

1829 թ. Հովհաննեսը, կարոտից մղված, մանկական ձեռագրով մի նամակ է գրում իր Գաբրիել եղբորը, որն այն ժամանակ սովորում էր հեռավոր Վենետիկ քաղաքի մոտ գտնվող ս. Ղազար կղզում՝ Մխիթարյանների միաբանության կաթոլիկական դպրոցում։ Մեկ էջանոց այդ նամակի մեջտեղում նա գրչով նկարում է մի տաղավար (բեսեդկա) և տակը գրում՝ «գոթական հին ըրուցատեղի... իմ արվեստի առաջին նվերը»։ 12-ամյա պատանու այդ մանկական թոթովանքը, որը կրում է իր շնորհքը ցույց տալու և դրանով իսկ կարոտյալ եղբորը ուրախացնելու միտում, մեծ ծովանկարչի գրաֆիկական

ամենավաղ ստեղծագործություններից է, որը հասել է մեզ և այժմ պահվում է Թեոդոսիայի պատկերասրահի արխիվում[10]։

1830 թ. Թեոդոսիայի քաղաքապետ Ա. Ի. Կազնաչեևը նշանակվում է Ղրիմի Տավրիկյան նահանգապետ և ընտանիքով տեղափոխվում է Սիմֆերոպոլ։ Նա իր հետ Սիմֆերոպոլ է տանում նաև Հովհ. Այվազովսկուն։

Սիմֆերոպոլը Տավրիկյան նահանգի ամենամեծ ու կենտրոնական քաղաքն էր՝ Ղրիմի սիրտը։ Այն ժամանակ դա ռուսական այն քաղաքներից էր, որն ավելի էր կապված Պետերբուրգի ու Մոսկվայի հետ, և որտեղ ավելի շատ էին մշակութային օջախներն ու ազնվական դասը։

13-ամյա պատանին ընկնում է նոր, ավելի աշխույժ ու լուսավոր միջավայր։ Այստեղ նա ծանոթանում ու շփվում է Կազնաչեևների ընտանիքին հաճախ այցելող բարձր դասի ընտանիքների հետ։

Շնորհալի պատանու նկարչական աշխատանքները գրավում են շատերի ուշադրությունը։ Առանձնապես ջերմ հոգատարություն է ցուցաբերում իշխանուհի Նատալյա Ֆեոդորովնա Նարիշկինան՝ աքսորված դեկաբրիստ Դ. Վ. Նարիշկինի կինը, որի պատանի որդու, ինչպես և Կազնաչեևի տղայի հետ ընկերություն էր անում Հովհաննեսը։ Տեսնելով պատանու մեջ ոչ միայն նկարչական, այլև երաժշտական ընդունակություններ, Ն. Ֆ. Նարիշկինան մտահոգվում է նրան հիմնավոր կրթության տալու խնդրով։ Որոշ ժամանակ անց Ա. Ի. Կազնաչեևի ու նրա մերձավորների միջամտությամբ 14-ամյա Հովհաննեսը 1831 թ. օգոստոսի 15-ին ընդունվում է Սիմֆերոպոլի ռուսական գիմնազիայի առաջին դասարանը։ Այստեղ նա սովորում է մինչ այդ իրեն անծանոթ հանրահաշիվ, երկրաչափություն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, տրամաբանություն առարկաներ և, որ կարևոր ու սիրելի էր ամենից ավելի, նկարչության ու գծագրության արվեստը։ Ընդունակ և աշխատասեր գիմնազիստը արագորեն կլանում էր այն ամենը, ինչ դասավանդում էին մասնագետ ուսուցիչները։

Հովհաննեսի առաջադիմությանը նպաստում էր և նրա միջավայրը։ Ապրելով նահանգապետի առանձնատանը՝ նրա

10 Հովհ. Այվազովսկու անվան Թեոդոսիայի պետական պատկերասրահ, այսուհետև՝ ՊպՊ. արխիվ № 10։

համար հատկացված սենյակում, պատանին գտնվում էր ամենօրյա շփման մեջ ոչ միայն զարգացած ընտանիքի անդամների, այլև երեխաների դաստիարակների, կրթված մեծատոհմիկ հյուրերի ու նրանց բարեկամների հետ։ Այդ շփումը բավականաչափ հղկում է ծայրագավառից եկած պատանուն։ Նա ձեռք է բերում նրբագեղ շարժուձև, քաղաքավարի վարվելակերպ և, որ շատ կարևոր է, կարդում է այն բոլոր գրքերն ու ամսագրերը, որոնք պարբերաբար ստացվում էին Պետերբուրգից, Մոսկվայից և արտասահմանից։

Ազատ ժամերին զբաղվում էր նկարչությամբ կամ նվագում էր ջութակ։ Երբ հյուրեր էին լինում, նրան հաճախ էին խնդրում նվագել։ Նվագում էր ժողովրդական և դասական երաժշտություն։ Նոտաները սովորել էր Կազնաչեևների զավակներից ու նրանց երաժշտության դասատուից։ Այստեղ է նա առաջին անգամ լսում Մոցարտի, Բեթհովենի և մյուս նշանավոր կոմպոզիտորների մասին, հին հունական ու իտալական մեծ արվեստագետների վերաբերյալ պատմություններ, որոնք անջնջելի հետք են թողնում նրա հիշողության մեջ։

Մի անգամ, պատմում է Այվազովսկին հետագայում, ինքը «գրչով նկարում է մի խումբ հրեաների սինագոգում։ Երիտասարդ նարիշկինը այդ նկարը տանում, ցույց է տալիս մորը։ Դա Նատալյա Ֆեոդորովնայի վրա այնքան ուժեղ տպավորություն է թողնում, որ նա վճռում է պատանի նկարչի տաղանդի համար հոգ տանել»[1]։ Գիմնազիայի նկարչության դասատու Գրոսսը, որը նկարչի պաշտոնով մասնակցել էր Կերչի հնագիտական պեղումներին, տեսնելով գիմնազիստի արտադասարանական մի քանի աշխատանքներ, այդ թվում՝ «Թաթարական հարսանիք» ջրանկարը, կենցաղային թեմայով մի պատկեր, մնում է հիացած և հարց է բարձրացնում նրան տեղափոխել կերպարվեստի դպրոց, տալ նկարչական կրթություն։ Այդ կարծիքին էին նաև պատանուն հովանավորող նահանգապետը, իշխանուհի Ն. Ֆ. Նարիշկինան և գիմնազիայի ուսուցիչները։

Դեռևս 1832 թ. փետրվարի 27-ին նկարչի ավագ եղբայր Գրիգորը Սիմֆերոպոլից գրում է իր հորը. «Իմ եղբայրիկ

---

[1] «Русская старина», *1878, էջ 656։*

Հովհաննեսին գիմնազիայում քննությունները հանձնելուց հետո կուղարկեն Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիա»[12], Իսկապես, մեկ տարի հետո՝ 1833 թ. մայիսի 8-ին, նկարչի հայրը գրավոր դիմում է Սիմֆերոպոլի գիմնազիայի վարչությանը. «Իմ 16-ամյա հարազատ որդի Իվան Գայվազովսկին, որը սովորում է Տավրիկյան նահանգային գիմնազիայում, մեկնելու է Պետերբուրգ՝ դեղարվեստի ակադեմիա ընդունվելու, որի համար անհրաժեշտ է վկայական ուսման մեջ ունեցած հաջողությունների վերաբերյալ, ուստի խնդրում եմ տալ Ձեր բարեհաճ եղրակացությունը»։

Այդ դիմումի համաձայն 1833 թ. հունիսին տրվում է հետևյալ տեղեկանքը, «Տավրիկյան գիմնազիայի 2-րդ դասարանի աշակերտ, քաղքենիական կոչում ունեցող Իվան Գայվազովսկին 1831 թ. օգոստոսի 15-ից ընդունվելով Տավրիկյան գիմնազիան, սովորել է այստեղ առաջին երկու դասարաններում մինչև նախկա թվականը։ Ինչպես երևում է ուսուցիչների վկայությունից, ռուսերեն քերականությունից և աշխարհագրությունից, հանրահաշվից և երկրաչափության նախնական հիմունքներից, գերմաներեն լեզվի նախնական կանոններից ունեցել է բավականաչափ հաջողություն, լատիներեն և ֆրանսերեն լեզուների նախնական կանոններից՝ լավ, կենդանաբանությունից և գծանկարից՝ շատ լավ, ընդհանրապես գծանկարչության արվեստից՝ գերազանց հաջողություններ»[13]։

Այս տեղեկանքը, Այվազովսկու մի քանի այլ փաստաթղթերի և ջրանկար ու գծանկար պատկերների հետ նահանգապետ Ա. Ի. Կազնաչեևի միջամտությամբ Ն. Ֆ. Նարիշկինան ուղարկում է Մոսկվա՝ իր բարեկամ ճարտարապետ Տոնչիին, կցելով, մի նամակ, որով խնդրում է պատանուն ուղարկել Հռոմ՝ գեղարվեստական կրթություն ստանալու։ Այդ գործերը ճարտարապետ Տոնչին Պետերբուրգում հանձնում է կայսերական տան մինիստր իշխան Պ. Մ. Վոլկոնսկուն, իսկ վերջինս այն ներկայացնում է գեղարվեստի ակադեմիայի հովանավոր Նիկոլայ կայսրին։

---

12 ՔՊՊ, արխիվ։

13 «Документы...», էջ 10։

Վերադասի կարգադրությամբ Պ. Մ. Վոլկոնսկին Այվազովսկու գործերը հուլիսի 9-ին ուղարկում է գեղարվեստի ակադեմիա՝ հարցումով. «Հնարավոր չէ՞, արդյոք, Գայվազովսկուն նախ ընդունել տեղիս գեղարվեստի ակադեմիան»[14]։ Ծանոթանալով պատանու նկարներին, ակադեմիայի պրեզիդենտ Ա. Ն. Օլենինը պատասխանում է. «Թեոդոսիացի հայ որդի 13 (16) տարեկան Իվան Գայվազովսկին գեղարվեստի մեջ գերազանց ընդունակություններ ունի։ ...Դատելով նրա գծանկարներից, նա ունի արտակարգ հակում կոմպոզիցիայի նկատմամբ», ուստի ինքը՝ պրեզիդենտը, հարկ է համարում «ընդունել նրան ակադեմիա որպես թոշակառու ուսանող», նկատի ունենալով, որ «....Գայվազովսկին իսկապես տաղանդավոր պատանի է»։ Իրեն ուղղված դիմումի վրա նա մակագրում է. «...Երիտասարդ Գայվազովսկին, ճիշտ է, չունի այն գիտելիքները, որոնք օրենքով նախատեսված են ակադեմիայում պետական ուսման ընդունելու համար, սակայն քանի որ նա ցույց է տալիս մեծ ընդունակություն նկարչության մեջ, իմ կարծիքով շատ օգտակար կլինի սկզբում ընդունել նրան ակադեմիա որպես պետական թոշակառու՝ կաբինետի հաշվին, և կրթել նրան սկզբում այստեղ և ոչ թե Իտալիայում, որտեղ նրան կարելի է ուղարկել 6 տարի հետո»[15]։ Այդ կարծիքի հիման վրա կայսերական տան մինիստրը պաշտոնապես ծանուցում է, որ ակադեմիայի հովանավոր կայսրը համաձայնել է «Թեոդոսիացի հայի որդի 13 (16) ամյա Իվան Գայվազովսկուն ընդունել գեղարվեստի ակադեմիա որպես նորին մեծության թոշակառու և տեղափոխել այստեղ պետության հաշվին»[16]։

Հովհ. Այվազովսկուն գեղարվեստի ակադեմիա ընդունելու լուրը և մանավանդ այն, որ նա լինելու է նորին մեծության կաբինետի թոշակառու ուսանող, ուրախությամբ է ընդունվում Սիմֆերոպոլում։ Բոլորը՝ նահանգապետ Կազնաչեևը, Նարիշկինան, գիմնազիայի ուսուցիչներ ջերմորեն ողջունում են պատանուն և պատրաստվում են նրան ճանապարհելու։

---

14 «Документы...», էջ 10—11։

15 Նույն տեղ, էջ 11—12։

16 Նույն տեղ, էջ 13։

Մուղներին ու բարեկամներին հրաժեշտ տալուց հետո [illegible] Ջերմուկից օգոստոսի սկզբներին նա ճանապարհվում է Պետերբուրգ։

Հովհ. Այվազովսկին Պետերբուրգ է մեկնում ձիով, մեծահամբավ Վ. Ա. Բաշմակովայի ընտանիքի հետ։ Ճանապարհին, [illegible] կանգառներում, նա նկարում է բնության տեսարաններ։ Պահպանվել է «Եկատերինասլավի տեսարանը» ջրաներկը, որի վրա Վ. Ա. Բաշմակովան հետագայում, տարեթիվը սխալ հիշելով, մակագրել է. «Դեպի Պետերբուրգ կատարած ճանապարհորդության ժամանակ Եկատերինասլավում։ Ինձ համար բնականից նկարեց Ի. Կ. Այվազովսկին։ 1834 (1833) թ.»[17]։

Շուրջ մեկշաբաթյա ձիով և ձիակառքով ճանապարհորդությունից հետո նրանք ժամանում են Պետերբուրգ։ Օգոստոսի 23-ին Հովհաննեսը ներկայանում է գեղարվեստի ակադեմիայի վարչությանը։ Նույն օրը նրան գրանցում են կայսերական ակադեմիայի ուսանողների ցուցակում, որպես նորին մեծության կաբինետի թոշակառու ակադեմիստ։

Սկսվում է Հովհ. Այվազովսկու կյանքի և ուսման նոր շրջանը գեղարվեստի ակադեմիայում։

17 ԹՊՊ, արխիվ։

Երկրորդ մաս

ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան անցյալ դարի 30-ական թվականներին կերպարվեստի կադրերի պատրաստման հիմնական, թերևս միակ ուսումնական հիմնարկն էր Ռուսաստանում։ Այստեղ են սովորել ռուսական նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ականավոր շատ գործիչներ։ «Գեղարվեստի ակադեմիան,— ասվում է Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտկոմի 1957 թ. ուղերձում,— կատարել է կարևոր դեր մեր երկրի ազգային մշակույթի զարգացման գործում։ Գեղարվեստի ակադեմիայում են ձևավորվել ու իրենց գործունեությունը սկսել ռուս մեծ նկարիչներն ու ճարտարապետները։ Նրանց կերտած գեղարվեստական ստեղծագործությունները խոշոր ներդրում են մեր ժողովրդի հոգևոր հարստության գանձարանում»[18]։

Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան նշանակալից դեր է կատարել նաև ռուսական կայսրության սահմաններում ապրող մյուս ազգերի շնորհալի նկարիչների, քանդակագործների ու ճարտարապետների կադրերի պատրաստման գործում։ Առանձնապես խոշոր է եղել Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի դերը և նշանակությունը հայ նկարիչների, քանդակագործների ու ճարտարապետների պատրաստման, ազգային նոր կերպարվեստի սկզբնավորման ու զարգացման գործում։

[18] «Академия художеств СССР». Десятая сессия, (юбилейная), М., 1959, էջ 3։

18-րդ դարի վերջերից սկսած և հատկապես 19-րդ դարում, մինչև 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները այստեղ նկարչություն, քանդակագործություն և ճարտարապետություն են սովորել, ինչպես նաև դպրոցներում նկարչություն դասավանդելու իրավունք են ստացել 45 հայ երիտասարդ, այդ թվում՝ Հովհաննես Այվազովսկին, Ստեփան Ներսիսյանը, Մ. Աղաթոն Հովնաթանյանը, Հովհաննես Քաթանյանը, Մովսես Մելիքյանը, Գևորգ Բաշինջաղյանը, Էմանվել Մահտեսյանը, Գրիգոր Գաբրիելյանը, Դավիթ Օքրոյանը, Խաչատուր Տեր-Մինասյանը, Վրթանես Ախիկյանը, Կարապետ Ջիրախյանը, Հարություն Շամշինյանը, Հովհաննես Պատկանյանը, քանդակագործ Միքայել Միքայելյանը, ճարտարապետներ Ալեքսանդր Քամանյանը, Նիկողայոս Բունիաթյանը և շատ ուրիշներ։

Ուսանելով ռուս նշանավոր նկարիչների ու արվեստագետների մոտ, վերոհիշյալ հայ նկարիչները, քանդակագործները և ճարտարապետները հայրենի արվեստ են մուծում ռուսական գեղարվեստական մշակույթի լավագույն ավանդույթները, նրանց հարուստ փորձն ու նվաճումները, ծառայեցնելով դրանք հայ նոր կերպարվեստի ստեղծմանը, նրա զարգացմանն ու առաջադիմությանը։ Այդ երևույթը 19-րդ դարում որոշակի արտահայտություն է գտնում հայկական հաստոցային պրոֆեսիոնալ նոր գունանկարչության և գրաֆիկայի կազմավորման, առանձին ժանրերի՝ ծովանկարչության, դիմանկարչության, կենցաղային նկարչության և բնանկարչության, ձևավորման ու զարգացման մեջ։

Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում Հովհ. Այվազովսկին սովորում է բնանկարչության դասարանում, պրոֆեսոր Ս. Ն. Վորոբյովի ղեկավարությամբ։ Ռուսական լիրիկական բնանկարի ականավոր ներկայացուցիչ Մաքսիմ Նիկիֆորովիչ Վորոբյովը (1787—1855) ռուսական ազգային բնանկարչության հիմնադիրներից է։ Իր բազմաթիվ ստեղծագործություններում և առանձնապես Պետերբուրգի քաղաքային տեսարաններ ներկայացնող պատկերներում պահպանելով անցյալի ակադեմիական ավանդական ուղղությունը, Մ. Ն. Վորոբյովը 1830—1840-ական թվականներին ռուսական նկարչություն է մուծում ռոմանտիկական տարրեր, որոնց նա հաճախում է

առանձնապես լուսաստվերների միջոցով Մ. Ն. Վորոբյովը այդ կարևոր առանձնահատկությունն իր արտահայտությունն է գտնում հատկապես նրա աշակերտների, այդ թվում՝ Այվազովսկու ստեղծագործություններում։ Իր աշակերտներին նա սովորեցնում էր գունանկարչորեն պատկերել բնության կոնկրետ մանրամասները։ Խորապես յուրացրած լինելով հնուենկարչության հիմունքները և գծանկարի բարձր կուլտուրան, Վորոբյովը դրանք ուսուցանում է իր աշակերտներին։ Նա, ինչպես հաստատում է խորհրդային արվեստագիտությունը, միաժամանակ ընդլայնում է բնանկարչության, որպես ինքնուրույն ժանրի, սահմանները։ Նա հարստացնում է ռուսական նկարչությունը նաև Նևայի գետափնյա և ծովափնյա պատկերներով։

Այն ժամանակ Ռուսաստանում ծովանկարիչներ չկային։ Ծովափնյա պատկերներ, այն էլ իտալական՝ Նեապոլի կամ Սորենտոյի տեսարաններ, նկարում էր միայն Սիլվեստեր Շչեդրինը, որը, սակայն, ապրում էր Իտալիայում։ Այդ պատճառով Վորոբյովի նկարած վերոհիշյալ պատկերները նրա աշակերտների մեջ հետաքրքրություն են առաջացնում ծովանկարչության նկատմամբ։ Պատահական չէ, որ նրա մի քանի աշակերտները՝ Այվազովսկին, Լագորիոն, Բոգոլյուբովը և ուրիշներ, հետագայում դարձան ծովանկարիչներ։

Ուսման առաջին տարում պրոֆեսորի հանձնարարությամբ Այվազովսկին հաճախակի այցելում է կայսերական էրմիտաժ թանգարանը, որտեղ նա մոտիկից ուսումնասիրում է նշանավոր նկարիչների ստեղծագործությունները, անում պատճեններ, կարդում գրականություն արվեստի ու նկարիչների մասին։ Միաժամանակ բարեխղճորեն կատարում է ակադեմիական առաջադրանքները, այդ բնագավառում հանդես բերելով արտակարգ աշխատասիրություն և բարձր ընդունակություններ։

1834 թ. հուվհ. Այվազովսկին Պետերբուրգում ծանոթանում է կալվածատեր, մեկենաս, պատկերների հավաքածու ունեցող Ալեքսեյ Ռոմանովիչ Տոմիլովի (1779—1848), իշխան Ա. Ա. Ռուվորով-Իտալինսկու և մեծատոհմիկ արվեստասեր այլ անձանց հետ, որոնք, ինչպես նկարիչն է ասում հետագայում «երիտասարդ նկարչի կյանքում շատ բարի ու չերմ մասնակ-

թյուն են ունենում։ Տոնական ու կիրակի օրերին Այվազովսկին հաճախ է այցելում նրանց»[19]։

«Նկարիչներին խրախուսող պետերբուրգյան ընկերություն» անգամ Ա. Ռ. Տոմիլովի հրավերով Այվազովսկին 1834 թ. ակադեմիայի ամառային արձակուրդներն անց է կացնում այդ արվեստասերի կալվածքում՝ Վալխովի գետափին ընկած Ստարայա Լադոգայի մոտ գտնվող Ուսպենսկի գյուղում։ Գյուղական կյանքը և շրջակա կանաչավետ բնությունը ակադեմիստին այնպես են հրապուրում, որ նա մատիտով ու ջրաներկով նկարում է տեսարանային պատկերներ և մարդանց՝ իր և հյուրընկալի ալբոմները լցնելով բազմազան գծանկարներով։ Այստեղ նրան առավելապես գրավում է Տոմիլովի գեղարվեստական հավաքածուն՝ դասական և ժամանակակից նկարիչների բնագիր ստեղծագործությունները, որոնք գեղեցիկ արվեստներ սիրող կալվածատերը ժամանակին գնել ու հավաքել էր։ Այդ հավաքածուի մեջ ուշագրավ էին ռուս նշանավոր նկարիչներ Ա. Պ. Բորովիկովսկու, Օ. Կիպրենսկու, Լ. Ֆ. Լոսենկոյի, Ս. Շչեդրինի կտավները, Օրլովսկու, Ռեմբրանդտի և այլոց գծանկարներն ու օֆորտները։ Հափշտակված արվեստի այդ գործերով, Այվազովսկին ոչ միայն մանրակրկիտ ուսումնասիրում է դրանք, այլև անում է մի քանիսի պատճեններ։ Մեզ է հասել Ս. Շչեդրինի «Ամալֆիի տեսարանը Վեզուվ սարով» պատկերի պատճենը, որը այժմ գտնվում է Կալինին քաղաքի պատկերասրահում։ Այդ պատճենը որոշակի ցույց է տալիս բնագրին հարազատ մնալու սկսնակ նկարչի ձգտումը և նրա հետաքրքրությունը ծովանկարչության նկատմամբ։ Ուսպենսկի գյուղում Այվազովսկին նկարում է այլ պատկերներ ևս, այդ թվում «Գյուղական բակը» էսքիզը (ջրանկար), որի վրա, ինչպես նկատել են ռուս արվեստագետները, զգացվում է պրոֆեսոր Մ. Ն. Վորոբյովի ազդեցությունը։

Նոր ուսումնական տարին սկսվելուց հետո Այվազովսկին ամբողջապես կլանվում է տկադեմիական առաջադրանքների կատարմամբ. նկարում է բնորդներից, ստեղծում է «Հուդայի մատնությունը» էսքիզը պատկերի համար, էմմաուժում նկարում է 18-րդ դարի ֆրանսիացի նկարիչ Կլոդ Լորենի պատ-

---

[19] «Русская старина», 1878, էջ 659։

ներից մեկի պատճենը, հաճախում է ակադեմիայի անատոմական ու պրակտիկ բոլոր դասընթացներին՝ հետզհետե կատարելագործելով իր ունակությունները։ Ազատ ժամերը նա անց է կացնում դասընկերների հետ։ Իր խաղաղ և բարեկիրթ բնավորությամբ նա շատ շուտով մտերմանում է ուսանողների հետ։ Առանձնապես մոտ էր նկարիչներ Վ. Շտերնբերգի, Պ. Շամշինի, իր պրոֆեսորի որդու՝ Ս. Վորոբյովի, քանդակագործներ Ն. Պիմենովի, Ն. Ռամազանովի, Լագունովսկու, Ստավասերի և ուրիշների հետ։ Շատ ուսանողների պես նա ևս չբավարարվելով իրեն տրված քոշակով, վաճառում է ջրանկարներ և ստացած «գրպանի աննշան փողերը օգտագործում առօրյա մանր ծախսերի վրա»[20]։

1835 թ. հունվարից Այվազովսկու ուսանողական կյանքում տեղի են ունենում փոփոխություններ և ճակատագրական կարևոր իրադարձություններ։ Ռուսական թագավորի հրավերով Փարիզից հունվարի սկզբներին Պետերբուրգ է ժամանում ֆրանսիացի անվանի ծովանկարիչ Ֆիլիպ Տանները (1795—1845)՝ ծովանկարների պատվերներ կատարելու և համապատասխան կադրեր պատրաստելու նպատակով։ Այդ կապակցությամբ թագավոր-կայսրը հարցում է անում գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտին.

— Չկա՞ ակադեմիայի աշակերտների մեջ հարմար թեկնածու տաղանդավոր բնանկարիչ Ֆ. Տանների մոտ աշակերտ ընդունելու համար։

Պրեզիդենտ Ա. Ն. Օլենինը տալիս է Այվազովսկու անունը։

Հաջորդ օրը ակադեմիստ Այվազովսկուն ներկայացնում են ֆրանսիացի նկարչին։ «Նա շատ քնքշաբար է վերաբերվում ինձ և խնդրում է որևէ բան ցույց տամ իրեն իմ նկարներից»,— գրում է Այվազովսկին 1835 թ. հունվարի 8-ին իր բարեկամ Ա. Ռ. Տոմիլովին։ Այդ պատճառով Այվազովսկին խնդրում է վերադարձնելու պայմանով շտապ իրեն ուղարկել Տոմիլովի մոտ մնացած իր նկարչական աշխատանքները՝ «Քնությունից կատարած գծանկարները թղթապանակով և նաև ինքնանկարը, եթե կարելի է, այն գծանկարները, որոնք կատարված

---

20 «Русская старина», 1878, էջ 650։

21 Նույն տեղը, էջ 661—662։

են Ձեր ալբոմում, հատկապես փոքրորիկ պատկերող վերջին նկարը։ Դրանով Դուք ինձ շատ կուրախացնեք, քանի որ ես ցանկանում են նրա հետ մոտիկից լավ ծանոթանալ»[22]*։ Այդ նպատակով նա այցելում է էրմիտաժ թանգարանը և ուշադիր դիտում Տաննեի աշխատանքները։ «Ծրեկ ես եղա էրմիտաժում... և նույնիսկ պատիվ ունեցա այնտեղ տեսնելու մեծն Տաննեի մի քանի պատկերները։ Դիտելով նրա ստեղծագործությունները, չեմ կարող Ձեզ չհայտնել իմ զարմանքը,— գրում է Այվազովսկին վերոհիշյալ նամակում, ավելացնելով,— նա ուշ չի զարմացնի»։ Ֆրանսիացի նկարիչը, ակադեմիստի աշխատանքները ուշադիր դիտելուց հետո, համաձայնվում է լինել նրա ղեկավարը ծովանկարչության ժանրում մասնագիտացնելու համար։*

Հունվարի երկրորդ կեսից Այվազովսկին դուրս է գրվում պրոֆ. Մ. Ն. Վորոբյովի բնանկարչության դասարանից և այնուհետև ամբողջ ժամանակը անց է կացնում Ֆ. Տաննեի արվեստանոցում։ Նոր ուսուցիչը սկզբում հանձնարարում է իր աշակերտին պատրաստել վրձինները և ներկերը նկարելու համար։ Հետագայում նկատելով աշակերտի արտակարգ ընդունակությունները և պրոֆեսիոնալ կարողությունը, Տաննեը հանձնարարում է նրան նկարել Պետերբուրգի տեսարժան վայրերի էսքիզներ իր պատկերների համար։ Հովհ. Այվազովսկին լուրջ կատարում է թագավորի հովանավորությունը վայելող ֆրանսիացի նկարչի բոլոր պահանջները, իսկ Ֆ. Տաննեը օգտվելով իր շնորհալի աշակերտի ճշգրիտ էսքիզներից, արագորեն՝ մեկը մյուսի հետևից, նկարում է պատկերներ և վաճառում, բավարարելով ազնվական պատվիրատուների պահանջները։ Այդ ամբողջ ժամանակաշրջանում սակավախոս վարպետը քիչ է զբաղվում իր աշակերտի ուսուցմամբ, բայց ուշիմ Այվազովսկին դիտելով Տաննեի աշխատանքը, խորապես յուրացնում է նրա տեխնիկան և ծովանկարչության գաղտնիքները։

Հուլիս ամսին Ֆ. Տաննեը մեկնում է Կրոնշտադտ, այնտեղ ծովային և նավահանգստի պատկերներ նկարելու համար՝ պատվիրելով աշակերտին իր բացակայության շրջանում նկա-

---

22 «Документы...», էջ 14։

րել էսքիզներ Պետրոպավլովսկի ամրոցը Տրուբեցկի կամուրջի կողմից և Նևայի գետափնյա տեսարաններ, որպեսզի ինքը վերադառնից հետո նկարի այդ թեմաներով պատկերներ։ Գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտը տեղյակ լինելով այդ ամենին, ինչպես նաև նկատելով, որ ֆրանսիացի նկարիչը անամոթաբար շահագործում է տաղանդավոր ակադեմիստին, հանձնարարում է Այվազովսկուն նկարել պատկերներ առաջիկա ակադեմիական ցուցահանդեսի համար։

Հովհ. Այվազովսկին հիվանդ ձևանալով, փակվում է իր տանը և երկու ամսվա ընթացքում նկարում է մի քանի ծովանկար, որոնք պրոֆեսորների կողմից հավանության արժանանալով, սեպտեմբերի 24-ին ցուցադրվում են ակադեմիական (աշնանային) ցուցահանդեսում։ Տեսնելով աշակերտի կտավները իր ստեղծագործությունների կողքին՝ եսասեր ու փառամոլ Ֆ. Տանները վրդովվում է և անմիջապես գանգատվում թագավորին այն մեղադրանքով, որ աշակերտի գործերը ցուցադրվել են առանց իր գիտության ու համաձայնության։ Վերադասին անտեսելու նման արարքը դիտելով որպես կարգուկանոնի կոպիտ խախտում, Նիկոլայ թագավորը իսկույն հրամայում է ցուցահանդեսից հանել «օրինազանց» աշակերտի աշխատանքները։ Այդ հրամանի համաձայն կայսերական տան մինիստր Պ. Վոլկոնսկին կարգադրում է «Նկարիչ Տանների նախկին հիվանդ աշակերտ Այվազովսկու նկարած բոլոր պատկերները հանել ցուցահանդեսից»[23]։ Սեպտեմբերի 30-ին ակադեմիական ցուցահանդեսից, հասարակության աչքի առաջ, հանվում են Այվազովսկու բոլոր հինգ պատկերները՝ «Կրոնշտադտի տեսարանը հարյուր թնդանոթակիր առագաստանավով, անհանգիստ եղանակի ժամանակ», «Հերկուլես» շոգենավի տեսարանը անհանգիստ եղանակին», «Ծովային տեսարան, ծովափին կանգնած չուխոնցիներով», «Երկու պատանի կարթով ձուկ որսալիս», «Փայտեզնդակ խաղացող տղաները»[24]։

Դա խորապես ցնցում է երիտասարդ նկարչին, և նա, ընկճված ու խորապես հիասթափված, փակվում է իր սենյակում։ Իր սնոբիզական պետին տեղյակ չպահելու և գեթ մի անգամ

---

[23] Նույն տեղ, էջ 15—16։

[24] Նույն տեղ, էջ 15։

կարգադրությամբ չգործելու համար այդպես դաժանորեն պատժված Այվազովսկին ինչպես ասում են, «ընկնում է թագավորի աչքից» և հավանորեն կխափանվեր նրա ապագան, եթե հենց այդ նույն ժամանակ նրան սիրտիկ խոսքեր չասեին ռուսական մշակույթի նշանավոր գործիչները։

Համարձակվելով զայրույթի պահին թագավորի առջև միջնորդել և պատժվելու վախից նրան տեղյակ չպահելով այն մասին, որ ակադեմիստը այդ պատկերները նկարել ու կախել է ակադեմիայի պրեզիդենտի ու պրոֆեսորների գիտությամբ ու համաձայնությամբ, ռուս մեծ բանաստեղծ Վ. Ա. Ժուկովսկին այցելում է Այվազովսկուն և հուսադրում է ընկճված ուսանողին, մտերմորեն զրուցում նրա հետ։ «Սվետլանայի տաղանդավոր երգիչը,— պատմում է Այվազովսկին,— խորհուրդ է տալիս չհուզվել, հոգեպես չընկճվել և առաջվա պես ինքնամոռաց զբաղվել նկարչությամբ»[25]։

Ռուս նշանավոր բանաստեղծ Վասիլի Անդրեևիչ Ժուկովսկու (1783—1852) այդ այցը դեռևս անհայտ սկանակ նկարչին և նրա վերոհիշյալ սիրտիկ խոսքերը պատահական չէին։ 19-ամյա ակադեմիստը, ոչ միայն ծանոթ է եղել բանաստեղծի հետ, այլև ամենայն հավանականությամբ իմացել է մարդու նկատմամբ պայծառ սիրո զգացմունքով տոգորված նրա ստեղծագործությունները, որոնց մասին Ա. Ս. Պուշկինը ժամանակին գրել է.

«Эго стихов пленительная сладость
Пройдет веков завистливую даль...»

Վ. Ա. Ժուկովսկին շատ բարի և սրտամոտ անձնավորություն լինելով, դեռևս 1822 թ. ազատագրել է իր ճորտերին, 1826—1838 թթ. թագաժառանգի դաստիարակը եղած ժամանակ նա օգտագործել է պալատի հետ ունեցած իր անմիջական կապերը և իր բարեխղճությամբ մեղմացրել է մշակութային գործիչների նկատմամբ ցարական կառավարության դաժան պատիժները։ Այսպես, Ա. Ս. Պուշկինի աքսորը Սիբիր փոխել է տվել Կովկաս ուղարկումով, նպաստել Ա. Ի. Գերցենի աքսորից վերադառնալուն, հորդորել է արվեստակից ընկեր-

[25] «Русская старина», 1878, № 4, էջ 661։

յը՝ Կ. Պ. Բրյուլովին, նրա նկարած իր՝ Ժուկովսկու, դիմանկարի արժեքով ազատագրել Տ. Շևչենկոյին ճորտությունից և այլն։ Վ. Ա. Ժուկովսկին միաժամանակ երաժիշտ էր ու նկարիչ։ Հիանալի նվագում էր դաշնամուր և կատարում էր գրքերի նկարազարդումներ։ Իր գրական ստեղծագործություններից մի քանիսը, որոնք հրատարակվել են, ինքն է նկարազարդել։

Վ. Ա. Ժուկովսկին գրել է նաև ծովին նվիրված բանաստեղծություններ։

Ակներև է, որ ռուս առաջավոր մտավորականի սերը նկարչության ու ծովային պատկերների նկատմամբ ունեցել է կարևոր նշանակություն վերոհիշյալ այցի և երիտասարդ ծովանկարչին խրախուսելու գործում։

Երիտասարդ նկարչի հետ պատահած այդ տհաճ դեպքը խորապես հուզում է նաև հայտնի առակագիր Ի. Ա. Կռիլովին, որը, գալով ակադեմիա, ցանկություն է հայտնում տեսնել Այվազովսկուն։

— Արի, արի ինձ մոտ, սիրելիս,— ասում է Կռիլովը Այվազովսկուն և երկու ձեռքերը մեկնելով դեպի նա գրկում և համբուրում է նրա ճակատը,— ես տեսել եմ քո պատկերները ցուցահանդեսում, հիանալի է, ինչքա՜ն լավ են դրանք, ծովային ալիքները մտել են իմ հոգու մեջ և բերել ինձ քեզ մոտ, սիրելիս։ Ապա, գրկելով Այվազովսկուն, նա փաղաքշորեն ասում է.

— Ինչ է, եղբայրիկ, ֆրանսիացի՞ն է քեզ նեղացնում, է հեյ, նա ի՞նչ է որ... Դե աստված նրա հետ, մի՛ հուզվիր...»։

Ի. Ա. Կռիլովը մի ամբողջ ժամ մնում է Այվազովսկու մոտ։ Հեռանալիս նա խորհուրդ է տալիս չթողնել նկարչությունը, սիրով զբաղվել և «սիրել բնությունը»[26]։

Ռուսական գրական մշակույթի այդ խոշոր գործիչների, ինչպես և գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսորների սիրալիր, բարյացակամ վերաբերմունքը երիտասարդի նկատմամբ բավական մեղմացնում են պալատական ինտրիգներին մինչ այդ անտեղյակ ուսանողի հոգեկան տվայտանքը։

Ավելի տպավորիչ է լինում ուսանող ընկերների ընդվզումը

---

[26] Նույն տեղ, էջ 664։

Տաննների դեմ։ Երբ ֆրանսիացի գոռոզամիտ նկարիչն այցելում է ցուցահանդես, այնտեղ գտնվող ուսանողները խմբով սուլում, աղմկում, գոռում-գոչում են՝ ծաղրելով նրան։ Տաննները զգալով իրեն վարկաբեկված, անմիջապես հեռանում է ցուցահանդեսից, բայց այս անգամ չի համարձակվում գանգատվել թագավորին[27]։

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Այվազովսկին վերսկսում է իր հաճախումները բնանկարչության դասարանի պարապմունքներին և պրոֆեսոր Մ. Ն. Վորոբյովի ղեկավարությամբ կատարում ակադեմիական նոր առաջադրանքներ։

Որոշ ժամանակ անց ֆրանսիացի նկարիչ Ֆ. Տաններին առաջարկվում է հեռանալ Ռուսաստանից։ Թևավորված թագավորի հովանավորությունից, Տաննները մեծամտացել ու արհամարանքով էր վերաբերվում ոչ միայն շարքային մարդկանց ու մտավորականներին, այլև պալատականներին։ Մեկ տարվա ընթացքում նա այնքան էր իրեն վարկաբեկել ու գոռոզամիտ բնավորությամբ իր դեմ գրգռել պալատին մոտ կանգնած բարձրաստիճան անձանց, որ նրանց պահանջով թագավորը առաջարկում է հեռանալ։ Ֆ. Տաննները շուտով մեկնում է Փարիզ։

Անցնում են ձմեռային ցուրտ, մռայլ ու ծանր օրերը։ Գարնան սկզբներին բնությունն ամենուրեք ապրում է զարթոնք։ Մի մեծ ու լուսավոր զարթոնք է տեղի ունենում Հովհ. Այվազովսկու կյանքում։ Այդ մասին պատմում է հենց ինքը՝ նկարիչը։ «Գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսոր Ա. Ի. Զաուերվեյդը, որը թագավորին և պալատական տիկնանց նկարչություն էր դասավանդում, մի անգամ, 1836 թ. մարտ ամսին, պարապմունքից հետո Ձմեռային պալատի այն սրահում, ուր կախված էին Ֆ. Տաննների ծովանկարները, թագավորը հարցնում է, թե ինչպիսի՞ն է պրոֆեսորի կարծիքը Տաննների կտավների մասին։ Ա. Ի. Զաուերվեյդը համեստորեն պատասխանում է.

— Ակադեմիստ Այվազովսկին, որի պատկերները հանվեցին անցյալ տարվա ցուցահանդեսից, Տաններից վատ չի նկարում...

---

27. Նույն տեղ, էջ 663։

Թագավորի դեմքին վայրկյանապես սև ամպ է կուտակվում, նրա կապույտ աչքերում երևում է վրդովմունք, բայց ազնիվ Ջաուերվեյդը համարձակորեն շարունակում է.

— Ջնայած Տանները Այվազովսկու մասին վատ է արտահայտվել, նրան ներկայացրել է անշնորհակալ մարդ և ընդհանրապես նկարագրել է սև գույներով, սակայն մենք՝ ակադեմիայի պրոֆեսորներս, արդարացիորեն ենք վերաբերվում մեր աշակերտների նկատմամբ։

Կայսրի դեմքին նշմարվող թեթև ժպիտը ավելի է համարձակություն տալիս Ջաուերվեյդին, և նա իր խոսքն ավարտում է Այվազովսկու մասին բարձր գնահատականով։

— Ինչու՞ դու այդ մասին առաջ ինձ ոչինչ չասացիր,— նկատում է Նիկոլայը։

— Ձերդ մեծություն,— պարզամտորեն պատասխանում է Ջաուերվեյդը,— փոթորիկի ժամանակ փոքրիկ նավակներին ուշադրություն չեն դարձնում, առավել ևս հարյուր թնդանոթներին... իսկ խաղաղ եղանակին կարելի է։

— Դու միշտ արդարանում ես,— ծիծաղելով ասում է կայսրը և ապա հարցնում։

— Որտե՞ղ է այժմ Այվազովսկին։

— Ակադեմիայում, Ձերդ մեծություն։

— Վաղը ևեթ ներկայացրու ինձ նրա այն պատկերները, որոնք հանվել են ցուցահանդեսից,— եզրափակում է Նիկոլայ Պավլովիչը՝ ազատ արձակելով Ջաուերվեյդին»[28]։

Հաջորդ օրը Այվազովսկու նկարները ուղարկվում են Ձմեռային պալատ։ Նիկոլայը ուշադիր դիտում է դրանք, գոհ է մնում և կարգադրում է վճարել երիտասարդ նկարչին 1000 ռ. թղթադրամ (ասիգնացիա) և նշանակել նրան ուղեկցող իր որդուն՝ Կոնստանդինին, Բալթիկ ծովում նախատեսված փորձնական զորավարժության ժամանակ[29]։

Պրոֆ. Ա. Ի. Ջաուերվեյդի հաղորդած այդ լուրը ոչ միայն Այվազովսկուն, այլև ուսանողությանը և ակադեմիայի պրոֆեսորներին մեծ ուրախություն է պատճառում։ Նրան ողջունողների թվում է նաև մեծ նկարիչ Կ. Պ. Բրյուլովը, որը

---

[28] Նույն տեղ, էջ 666։

[29] Նույն տեղ։

սիրելով Այվազովսկուն, վերցնում է նրան իր հովանավորության տակ։ Պրոֆ. Ա. Ի. Ձաուերվեյդը հպարտ իր արածով, հետագայում գրում է. «Երբ ֆրանսիացի նկարչի ահեղ զբաղմունքությունը սպառնում էր Այվազովսկուն խեղդել, ես չդանդաղեցի պաշտպանել նրան»[30]։ Իսկապես, պրոֆ Ա. Ի. Ձաուերվեյդը առաջիկա տարիներին ևս, հետամուտ լինելով իր աշակերտի առաջադիմությանը, ամեն կերպ օժանդակում է նրան, իսկ 1844 թ., ինչպես ցույց կտանք, ներկայացնում է ակադեմիայի պրոֆեսորի կոչման։

1830-ական թվականների կեսերին տաղանդավոր ուսանողի նկատմամբ ուշադրություն և համակրանք է ցուցաբերում նաև պրոֆ. Կարլ Պավլովիչ Բրյուլովը (1799—1852)։ Նա Այվազովսկուն ներգրավում է «Եղբայրություն» («Братия») խմբակը, որի անդամներից են կոմպոզիտոր Մ. Ի. Գլինկան, ինքը՝ Բրյուլովը, Կուկոլնիկ եղբայրները, գրողներ Ֆ. Ս. Ձևրնիշևը, Յ. Յանենկոն և ուրիշներ։ Նրանք շաբաթը մեկ անգամ հավաքվում էին Կ. Բրյուլովի կամ գրող-լրագրող Ն. Կուկոլնիկի տանը և այստեղ կազմակերպում ուրախ զրույցի ու ժամանցի երեկոներ։ Երբեմն այդ երեկոները ավարտվում էին ուշ գիշերին, կերուխումով։ «Ես այնտեղ ինձ զգում էի ինչպես իմ հարազատ միջավայրում»,— հիշում է Մ. Ի. Գլինկան[31]։ Այդ խմբակի երեկոներին «Մեծն Բրյուլովը սրամիտ ու բանիմաց խոսում էր արվեստի ու նրա ծագման մասին, Մ. Գլինկան հիացնում էր իր դաշնամուրային նվագով, կատակասեր Յանենկոն (որին Պյանենկո էին անվանում) շշմեցնում էր իր զվարճախոսությամբ, Պլատոն Կուկոլնիկը նվագում էր ջութակ, Նեստոր Կուկոլնիկը քարոզախոսում էր արվեստի մասին և հանպատրաստից բանաստեղծություններ հորինում, Ֆ. Ս. Ձևրնիշևը կարդում էր իր «Զինվորական հեքիաթը»[32]։

Հովհ. Այվազովսկին անմասն չի մնում այդ ամենից։ Նա ևս երգում ու նվագում է ջութակ։ Նա իր երաժշտական լսողությամբ, ձայնով և նվագով լրացնում է ընդհանուր ուրախությունը, իսկ երբեմն այդ երեկոներին նա նկարում է՝ հի-

---

30 «Документы...», էջ 76:

31 М. И. Глинка, Литературное наследство, 1952, հ. 1, էջ 180, 435

32 «Русская старина», 1870, էջ 320:

ացնելով բոլորին։ Հովհ. Այվազովսկին «Բրյուլովի և Գլինկայի մոտ եղած հավաքույթների ժամանակ,— գրում է նկարչին ժամանակակից կենսագիր Ն. Կուզմինը, — ոչ քիչ հետաքրքիր տեղեկություններ է քաղում գեղարվեստի ու գրականության հարցերի վերաբերյալ, շնորհիվ ընդհանուր վեճերի ու զրույցների, որոնք աշխուժանում էին ներկաների տաղանդի ու պերճախոսության փայլից։ Նա վերջնականապես զարգացրեց իր բնատուր գեղագիտական ճաշակը և հակումները»[33]։

Բայց երիտասարդ Այվազովսկին այդ հավաքույթների ժամանակ ոչ միայն հարստացնում է իր գիտելիքները, զարգացնում ճաշակը և հակումները, այլև իր քաղցրահնչյուն արևելյան երգով ու նվագով նպաստում է այդ միջավայրում արվեստի նոր գործերի ստեղծմանը։ «Ես հաճախ Գլինկայի համար նվագում և երգում էի երգեր, որոնք լսել էի Ղրիմում, մանկությանս տարիներին, իսկ նա այդ երգերը հետագայում դետեղեց իր «Ռուսլան և Լյուդմիլայի» մեջ,— պատմում է Այվազովսկին։ Մի անգամ, երբ ես նկարում էի ոչ մեծ ծովային տեսարան, Գլինկան նստեց դաշնամուրի առջև և հրապուրված նվագեց դրանք, արևելյան պարերը և andante-*ն «Ռուսլանից»։ Դրանից հետո նա զգացմունքով և համոզչությամբ երգեց Անտոնիդայի «*Не о том скорблю, подруженки*» *romանսը. ես առաջին անգամ էի նրան լսում։ Նա ինձ իր երգով միանգամայն հիացրեց։ Իր ձայնին նա սքանչելի էր տիրապետում»*[34]։

Իր հիշողություններում Մ. Ի. Գլինկան (1804—1856) ևս տեղեկացնում է, որ «Եղբայրություն» («Братия») խմբակի հավաքույթների ժամանակ ակադեմիստ Այվազովսկին երբեմն երգում կամ նվագում էր ջութակ։ Կոմպոզիտորին առանձնապես դուր էին գալիս երիտասարդ հայի երգած Ղրիմի ժողովրդական երգերը, որոնք Մ. Ի. Գլինկան սիրով ունկնդրում, գրի է առնում մեղեդիներ և օգտագործում իր ստեղծագործություններում։ Այդպիսի մի քանի մեղեդիներ Գլինկան մշակել է իր «Ռուսլան և Լյուդմիլա» օպերայի համար։ «Գայվազով-

---

[33] Н. Н. Кузьмин, И. К. Айвазовский и его произведения, СПб, 1901.

[34] *Նույն տեղ, էջ 17։*

սկին,— գրում է նա,— որը հաճախ էր այցելում Կուկոլնիկին, հաղորդեց ինձ երեք թաթարական եղանակ, հետագայում դրանցից երկուսը ես օգտագործեցի լեզգինկայի, իսկ երրորդը Ռատմիրի andante-ի համար «Ռուսլան և Լյուդմիլա» օպերայի երրորդ գործողության մեջ»[35]: Ղրիմի ժողովրդական երգերը Մ. Գլինկային հաղորդելու մասին Այվազովսկին պատմել է նաև Ա. Պ. Չեխովին, երբ վերջինս 1888 թ. Թեոդոսիայում այցելել է նկարչին: Թերևս այդ փաստն է նկատի ունեցել Ա. Պ. Չեխովը, երբ 1888 թ. հուլիսի 22-ին իր քրոջը ուղղած մի նամակում գրել է, որ Հովհ. Այվազովսկին «Գլինկայի հետ գրել է «Ռուսլան և Լյուդմիլան»[36]:

Պետք է նկատել, որ Այվազովսկին միշտ էլ պահպանել է իր ջերմ սերը երաժշտության նկատմամբ և մտերմությունը հայ, ռուս և եվրոպացի շատ կոմպոզիտորների հետ: Օպերային երաժշտության սիրահար նկարիչը հետագայում ծանոթանում և, ինչպես ցույց կտանք, մտերմիկ հարաբերություններ է հաստատում Ա. Տ. Ռուբինշտեյնի, Ջ. Ռոսսինիի, Գ. Դոնիցետտիի, Ֆերենց Լիստի, Ջ. Վերդիի և ուրիշների հետ, իսկ երիտասարդ կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի ու ջութակահար Հովհ. Նալբանդյանի հետ համատեղ ելույթներ է ունենում բարեկամների նեղ շրջանում:

Մասնակցելով Կ. Բրյուլովի կամ Նեստոր Կուկոլնիկի տանը հաճախակի կազմակերպվող «Ծղբայրություն» խմբակի ստեղծագործական հավաքույթներին, Այվազովսկին, սակայն, իրեն հեռու է պահում այդ երեկոները եզրափակող կերուխումից:

— Ինչ լավ եք անում, Այվազովսկի, որ չեք խմում,— մի անգամ ասում է Կ. Բրյուլովը իրեն այցելած ակադեմիստին, գանգատվելով գլխացավից և անառողջ վիճակից այն երեկոյից հետո, երբ «եղբայրների» հետ ուրախ ժամանցի պահերին խմել, հարբել էր[37]:

Հովհ. Այվազովսկին սիրում և մեծ հարգանքով էր վերաբերվում ժամանակի մեծագույն նկարչին: Նա բազմիցս խոստովանել է, որ ինքը շատ է պարտական Բրյուլովին[37]: Ծա-

---

35 М. И. Глинка, Литературное наследие, М., 1952, հ. 1, էջ 180, 435:

36 А. П. Чехов, Полное собр. соч. и письма, XIV, (1949, էջ 137:

37 «Русская старина», 1878, էջ 667:

մանակակից կենսագիրները նույնպես նշում են, որ ռուս մեծ նկարչի հետ Այվազովսկու շփումը և մտերմությունը «խրախուսում էին Այվազովսկու վրձինի առաջին հարվածները»[38], Նրանց միջև հաստատված մտերմական հարաբերությունները, չնայած տարիքի մեծ տարբերության, էական նշանակություն են ունեցել, ինչպես ցույց կտանք ստորև, Այվազովսկու անձնական ու ստեղծագործական կյանքում:

Այժմ նշենք միայն, որ ամռան ամիսներին, ակադեմիական արձակուրդների ժամանակ, Այվազովսկին մասնակցում է Բալթիկ ծովի ռուսական նավատորմի փորձնական զորավարժություններին և այնուհետև զբաղվում է նոր կտավների ստեղծմամբ:

Մեծ իշխան Կոստանդին Նիկոլաևիչի՝ կայսրի ավագ որդու հրավերով, ինչպես և նախատեսված էր, ակադեմիստ Այվազովսկին ուղեկցում է նրան զորավարժության ժամանակ՝ ականատես լինելով ռազմածովային նավատորմի «մարտական» գործողություններին: Գտնվելով ռազմանավի վրա՝ նա մոտիկից տեսնում և ուսումնասիրում է ռազմանավերի շարժումը ծովի ալիքների մեջ և դրանց մարտական գործողությունները, որոնք ուժեղ տպավորվում են նրա հիշողության մեջ: Այստեղ Այվազովսկին նկարում է բազմաթիվ ճեպանկարներ, էտյուդներ և էսքիզներ, որոնք ծնունդ են տալիս նորանոր կտավների: Նկարչի խոստովանությամբ, «Ֆիննական ծոցում կատարած նավագնացությունը նրա տաղանդին բերեց հսկայական օգուտ»[39]:

Այդ զորավարժությունից վերադառնալուց անմիջապես հետո Այվազովսկին նկարում է «Մեծ նավատորմը Կրոնշտադտում» կտավը և մի քանի ծովանկարներ, որոնք ներկայացնում է ակադեմիայի վարչությանը: Բարձր գնահատելով ուսանողի առաջադիմությունը՝ գեղարվեստի ակադեմիայի խորհուրդը որոշում է նրան պարգևատրել երկրորդ կարգի ոսկե մեդալով:

1836 թ. սեպտեմբերի 28-ին ակադեմիայի ցուցասրահներում բացվում է աշնանային ցուցահանդես, որին մասնակ-

---

38 Նույն տեղ, 1881, էջ 586:
39 Նույն տեղ, 1878, էջ 667:

ցում են ավարտ ու կրտսեր սերնդի նկարիչներից շատերը։ Ցուցադրվում են Ա. Իվանովի, Ա. Եգորովի, Օ. Կիպրենսկու, Ֆ. Բրունիի, Մ. Վորոբյովի, Ֆ. Տանների, Ա. Զաուերվեյդի, Կրյուգերի, Պլյուշարի, Ֆրիկեի, Մարկովի, ակադեմիստներ՝ Վ. Շտերնբերգի, Ն. Ռամազանովի, Մ. Լեբեդևի, Ստավասսերի, Ն. Պիմենովի և ուրիշների ստեղծագործությունները։

Հովհ. Այվազովսկին ցուցադրում է 7 կտավ՝ «Թեոդոսիայի տեսարանը», «Մեծ նավատորմը Կրոնշտադտում», «Հոլանդական նավը բաց ծովում», «Ամպերը Օրանիենբաումի ծովափից», «Զուխանցիների խումբը Ֆիննական ծոցի ափին» և էլի մի ծովանկար։ Այս ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն է առաջացնում և, ինչպես գրում է ժամանակի թերթերից մեկը. «Դեպի ակադեմիայի դահլիճներն է բերում մայրաքաղաքի հազարավոր բնակիչների»։ Ն. Կուկոլնիկի խմբագրությամբ Պետերբուրգում լույս տեսնող «Խուդոժեստվեննայա գազետա» թերթը առանձնապես բարձր է գնահատում Այվազովսկու ստեղծագործությունները։ «Ծովային տեսարանների պատկերները բնանկարչության այդ տեսակը մեզանում դեռևս փոքրաթիվ է,— գրում է այդ թերթը,— Գայվազովսկու երկու պատկերները, որոնք ներկայացնում են դեպի Կրոնշտադտ գնացող շոգենավ և հոլանդական մի առագաստանավ բաց ծովում, խոսում են առանց կողմնակի ակնարկների, որ տաղանդը նկարչին հեռու կտանի։ Բնականի ուսումնասիրությունը կբացի մնացած գանձերը, որոնց մասին այժմ տաղանդը միայն ենթադրվում է... Գայվազովսկու ստեղծագործությունները այժմ հիացնում, աչքի են ընկնում»[40]։

Ցուցահանդեսում ներկայացված գործերից մեզ է հասել միայն «Մեծ նավատորմը Կրոնշտադտում» նկարը, որը գտնվում է Ռուսական թանգարանում։ Այստեղ դիտողին ամենից ավելի գրավում է բնությանը հարազատ մնալու նկարչի ձգտումը։ Դա որոշակի արտահայտվում է նաև այդ շրջանի նրա բազմաթիվ մատիտանկար և ջրանկար աշխատանքներում, մանավորապես, «Քաղաքը ծովափին» և «Առագաստանավ» գծանկարներում։

Այդ ցուցահանդեսի օրերին, հավանաբար սեպտեմբերի

---

[40] «Художественная газета», 1837, № 19—20.

30-ին, Այվազովսկու կյանքում տեղի է ունենում մի երջանիկ դեպք. Սանդիպում և ծանոթանում է ռուս մեծ բանաստեղծ Ա. Մ. Պուշկինի հետ։ «1836 թ., մահվանից երեք ամիս առաջ, սեպտեմբերին,— գրում է Այվազովսկին,— Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինը կնոջ՝ Նատալյա Նիկոլաևնայի, հետ եկավ ակադեմիա, դիտելու սեպտեմբերյան մեր ցուցահանդեսը։ Իմանալով, որ Պուշկինը ցուցահանդեսում է, անտիկ պատկերասրահում, մենք՝ ակադեմիայի աշակերտներս ու երիտասարդ նկարիչներս, վազեցինք այնտեղ ու շրջապատեցինք նրան։ Նա, կնոջը թևանցուկ, կանգնել էր տաղանդավոր բնանկարիչ Լեբեդևի նկարի առջև։ Պուշկինը հիանում էր այդ նկարով։ Ակադեմիայի մեր տեսուչը՝ Կրուտովը, որ ուղեկցում էր նրան, բոլորի մեջ որոնում էր Լեբեդևին՝ Պուշկինին ներկայացնելու համար։ Բայց Լեբեդևը չկար, և տեսնելով ինձ՝ բռնից ձեռքս ու ներկայացրեց Պուշկինին, որպես այդ ժամանակ ոսկե մեդալ ստացածի։ Պուշկինը փաղաքշորեն ընդունեց ինձ, հարցրեց, թե որտեղ են իմ նկարները։ Ես դրանք ցույց տվեցի Պուշկինին։ Հիշում եմ, ինչպես այսօր, երկու պատկեր էին՝ «Պիպերը Օրանիենբաումի ծովափից» և մյուսը՝ «Ջուխոնցի-Նևի խումբը Ֆիննական ծոցի ափին»։ Իմանալով, որ ես բնիկ ղրիմցի եմ, մեծ բանաստեղծը հարցրեց՝ ո՞ր քաղաքից, և եթե սյրքան վաղուց է, որ այստեղ եմ, ապա չե՞մ կարոտել հայրենիքիս և հյուսիսում չե՞մ հիվանդանում... Հիմա ես մատներս վրա եմ հաշվում այն սակավաթիվ մարդկանց, որոնք հ. չում են նրան, իսկ ես դրանից բացի սիրալիր ընդունվել ու փաղաքշվել եմ բանաստեղծի կողմից»[41]։

Կենսագիր Ն. Կուզմինը Այվազովսկու մասին գրած իր հիշող ւթյուններում հաղորդում է Պուշկինի հետ ունեցած նկարչի մի այլ հանդիպման մասին ևս։ Այդ հանդիպումը տեղի է ունեցել նույն՝ 1836 թ. Պետերբուրգում։ Նա գրում է, որ Այվազովսկին նորից հանդիպել է Պուշկինին, Վ. Ժուկովսկու ընկերակցությամբ, և փողոցում զրուցել է նրանց հետ[42]։ Դա նշանակում է, որ Պուշկինի և երիտասարդ Այվազովսկու ծանոթությունը շարունակվել է գեղարվեստի ակադեմիայի աշնանային

---

[41] «Документы...», էջ 274—276։

[42] Н. Н. Кузьмин, Воспоминания об Айвазовском, СПб, 1885:

ցուցահանդեսից հետո էլ, և այդ ծանոթությունը թերևս տևեր երկար, եթե Պուշկինը վաղաժամ չհեռանար կյանքից։

«Ռուսական պոեզիայի արեգակի» հետ երիտասարդ նկարչի հանդիպումները խոր տպավորություն են թողնում, նրա պայծառ հիշատակը ուղեկցում է մինչև կյանքի վերջը։ Տարիներ հետո՝ 1841 թվականին, Այվազովսկին նկարում է «Լուսնյակ գիշեր ծովափին» կտավը և նվիրում Պուշկինի կնոջը։ Ա. Ս. Պուշկինի պայծառ կերպարը եղել է նկարչի համար ոգևորության աղբյուր, նրա մտորումների առարկան։ Կյանքի վերջին շրջանում՝ 1896 թ. մայիսին, վերհիշելով իր հանդիպումը Պուշկինի հետ, նա գրում է. «Այդ ժամանակից ինձ համար սիրելի պոետը դարձավ իմ մտածմունքի, ոգևորության և երկար զրույցների ու հարցասիրության առարկան»։ Հետագայում Այվազովսկին նկարում է ավելի քան 10 պատկեր Պուշկինի կյանքից։ Նրան առանձնապես հետաքրքրել է ռուս մեծ բանաստեղծի այցը Կովկաս և Ղրիմ, ընտրելով այդ այցելությունից այնպիսի սյուժեներ, որոնք մոտ են ու համապատասխան իր ստեղծագործական տարերքին։

Ակադեմիական ցուցահանդեսին մասնակցելը և ոսկե մեդալով պարգևատրվելը ուսանող Այվազովսկուն պետերբուրգյան արվեստասերների միջավայրում ճանաչում են բերում։ Դրան նպաստում են նաև մայրաքաղաքի մամուլի արձագանքները։ Արդեն պարզ է դառնում, որ հեռավոր Հարավից Պետերբուրգ եկած հայը իր արտակարգ ընդունակություններով կարող է նվաճել շատ բարձունքներ և, ինչպես գրական քննքն է գրել, «տաղանդը նկարչին կտանի հեռու»։ Այդ ավելի պարզորոշ նկատում էին ակադեմիայի նկարիչ-պրոֆեսորները, որոնք հոգատարությամբ շրջապատելով նրան, աշխատում էին ամեն կերպ լայնացնել նրա կարողությունների սահմանները։ Թերևս նրանց միջամտությամբ թագավոր-կայսրը կարգադրում է Այվազովսկուն տեղափոխել մարտանկարչության դասարանը։ Այդ մասին կայսերական տան մինիստրի՝ 1837 թ. մարտի 14-ի գրության մեջ կարդում ենք. «...Այվազովսկուն տեղափոխել մարտանկարչության դասարան պրոֆ. Ա. Ի. Զաուերվեյդի ղեկավարությամբ ռազմածովային նկարչությամբ պարապելու համար և այդ կապակցությամբ նրան

հաստակացնել արվեստանոց նկարիչ Պիրատսկու արվեստանոցի իրերին»[43]:

Դրանից հետո Այվազովսկին պրոֆ. Մ. Վորոբյովի բնանկարչության դասարանից տեղափոխվում է մարտանկարչության դասարան և այստեղ պրոֆ. Զաուերվեյդի ղեկավարությամբ սովորում է ծովային մարտանկարչության և պատմական թեմաներով սյուժետային բազմաֆիգուր պատկերներ ստեղծելու արվեստը: Այժմ արդեն ունենալով սեփական արվեստանոց, նա աշխատում է օրնիբուն, մեկը մյուսի հետևից կատարելով ակադեմիական առաջադրանքները: «Հիշում եմ,— գրում է «Նկարիչներին խրախուսող ընկերության» նախագահ Ֆ. Օ. Լվովը իր հրապարակած հոդվածում,— այն ժամանակ Այվազովսկին զարմացնում էր բոլորին իր բեղմնավորությամբ, իսկ Զաուերվեյդի մարտանկարչության դասարանում (որտեղ Այվազովսկին աշխատում էր) համարյա ամեն օր փոխվում էին կտավները նկարակալի վրա: Արդեն այն ժամանակ Այվազովսկու երևակայությանը սահման չկար: Նախանձտները ասում էին, թե նա աշխատում է հնապաշտորեն, նկարում է մատուցարան և ոչ թե պատկերներ, բայց հետևանքը ապացուցում է հակառակը»[44]:

Ապրիլին թագաժառանգ Կոստանդինը՝ Նիկոլայ Թագավորի ավագ որդին, որին նկարիչը ուղեկցել էր Բալթիկ ծովում ռազմանավերի զորավարժության ժամանակ, ցանկություն է հայտնում տալ Այվազովսկու այն պատկերը, որը արժանացել է ոսկե մեդալի և այժմ պատկանում է գեղարվեստի ակադեմիային: Այդ կապակցությամբ սլեզիդենտ Ա. Ն. Օլենինը գրավոր դիմում է պրոֆ. Զաուերվեյդին՝ ակադեմիստ ղեկավարին. «Պատվիրել Այվազովսկուն նկարել ճշգրիտ պատճենը: Նա, կարծում եմ, կաշխատի կատարել մեծ ջանասիրությամբ, մանավանդ, որ Այվազովսկին արդեն ձևոք է բերել մեծ փորձ նկարչության այդ բնագավառում: Պատճենը պատրաստելուց հետո Զաուերվեյդը կարող է լավագույնն ընտրել մեծ իշխանի համար կամ փոխարինել այն բնագրի հետ»[45]: *Պրոֆ. Զաուեր-*

---

[43] «Документы...», *էջ 17—18*:

[44] «Русская старина», 1881, № 8, *էջ 634—635*:

[45] «Документы...», *էջ 18*:

վեյդի հանձնարարությամբ Այվազովսկին վարպետությամբ նկարում է իր պատկերի պատճենը և այն հանձնվում է պատվիրատուին։

Աշխատելով պրոֆ. Ա. Ի. Ջաուերվեյդի ղեկավարությամբ, Այվազովսկին յուրացնում է ամենից առաջ նրա գծանկարի բարձր կուլտուրան։ Պրոֆեսորը առաջնակարգ գծանկարիչ էր, թեև նա հայտնի էր «Վառնայի գրավումը», «Լայպցիգի ճակատամարտը» մեծակտավ մարտանկարչական պատկերներով, սակայն նրա թեմատիկ-պատմական կոմպոզիցիաներում որոշակի դրսևորված ամուր, ճշգրիտ և ոլաստիկորեն արտահայտիչ գծանկարը գնահատվել է ամենից ավելի։ Նրա ուսանողի համար մեծ դպրոց էր նաև բազմաֆիգուր սյուժետային թեմատիկ պատկերներ կառուցելու արվեստը, կոմպոզիցիաների ամուր հիմքը և մասերի հավասարակշռության պահպանում։ Բայց ոչ միայն ուսուցչի ստեղծագործությունները, այլև նրա կենդանի խոսքը, ցուցմունքները, բացատրությունները և զրույցները հարստացնում են աշակերտների, այդ թվում և Այվազովսկու գիտելիքները, կատարելագործում նրա կարողությունները։

Պրոֆ. Ա. Ի. Ջաուերվեյդի դասարանում ակադեմիական առաջադրանքների հետ Այվազովսկին նկարում է նաև ծովանկարներ։ Դրանցից մեզ են հասել «Ծովափը լուսնյակ գիշերին» և «Քամու ալրաղացը ծովափին» պատկերները։ Ժամանակի «Գեղարվեստական թերթը» արտահայտվում է նաև «նավախորտակում» կտավի մասին։ «Վերջին պատկերի մեջ,— գրում է թերթը,— նկարիչը ցույց է տալիս իր տաղանդի միանգամայն նոր կողմը՝ հենց դինամիկ նկարչությունը, ուժեղ, զգացմունքով լի և մտքերով հարուստ բեմական ճշմարտությունը»[46]։

Ինչ վերաբերում է մեզ հասած ստեղծագործություններին, ապա դրանցից մեկի՝ բնությունից անմիջականորեն նկարված «Քամու ալրաղացը ծովափին» պատկերի մեջ նկարիչը հմտությամբ վերարտադրել է գետնի, հողմաղացի, ծովափի ավազի և նավակի մանրամասները։ Այստեղ ճշտորեն և հստակ գծանկարով, գեղարվեստորեն համոզիչ պատկերվել են մարդիկ,

---

[46] «Художественная газета», 1837, № 23, 259—260։

Նրանց շարժումը կարճ ժամանակամիջոցում՝ «Մեծ նավատորմը կրոնշտադտում» նկարից հետո, ուսանողը խոշոր առաջընթաց թույլ է տատարում բնությունը և առարկաները գեղարվեստական ճշմարտությամբ վերարտադրելու խնդրում։ Նկատվում է, որ նկարիչը արդեն տիրապետում է պատկերի ամուր կառուցվածքի ու հեռանկարչության հիմունքներին։

1837 թ. Այվազովսկին նկարում է նոր պատկերներ, այդ թվում «Անդորրությունը», որը սեպտեմբերին մյուս կտավների հետ ցուցադրվում է ակադեմիական ցուցահանդեսում։ Այստեղ ակադեմիստի ծովանկարներն այլևս ընկնում ոչ միայն իրենց ժանրային առանձնահատկությամբ, այլև՝ գեղեցկությամբ։ Գեղարվեստի ակադեմիայի մեծ խորհուրդը ենթատեքստերի 26-ին որոշում է կայացնում. «Առաջին կարգի ոսկե մեդալով պարգևատրել ակադեմիստ Այվազովսկուն երեք ծովանկարների և հատկապես «Անդորրության» սքանչելի պատկերի համար, գործուղել նրան Ղրիմ երկու տարով կատարելագործվելու, որպես ակադեմիայի թղտակառու, իսկ հետո, որտեղ որ անհրաժեշտ կհամարվի՝ ըստ ակադեմիայի հայեցողության»[47]։

Այս որոշումով փաստորեն երկու տարով երճատվում է Այվազովսկու դասընթացը, իսկ դա նշանակում է, որ տասնդավոր աշակերտը կատարել է ստեղծագործական մեծ բռիչք։ Նա ուսման չորս տարում արդեն տիրապետում է այն ամենին, ինչ կարող էր տալ ռուսական գեղարվեստի ակադեմիան 6 տարվա ընթացքում։ Այս որոշումը երիտասարդ նկարչին, անշուշտ, մեծ ուրախություն է պատճառում։ Նա իրեն երջանիկ է զգում նաև այն բանի համար, որ հնարավորություն է տրվում մեկնել հայրենիք, ապրել ու աշխատել իր հարազատ միջավայրում, ծնողների մոտ, Ղրիմի հարավային ափերի կանաչավետ ու ծովային բնության գրկում։

Բայց այդ որոշումը անմիջապես մեկնելու իրավունք դեռևս չէր տալիս։ Դա պետք է հաստատվեր վերադասի՝ կայսերական տան մինիստրի և ակադեմիայի հովանավոր կայսրի կողմից։ Այդ նպատակով պրեզիդենտ Ա. Ն. Օլենինը հոկտեմ-

---

[47] «Документы...», էջ 19։

բերի 3-ին ծանուցում է կայսերական տանը վերոհիշյալ որոշման մասին և միաժամանակ հայտնում է որ «...Առաջին կարգի ակադեմիստ Գայվազովսկին ծովանկարչության մեջ հիանալի հաջողության համար պարգևատրվել է առաջին կարգի ոսկե մեդալով, որը իրավունք է տալիս նրան օտար երկրներ մեկնել կատարելագործվելու նպատակով։ Սակայն ակադեմիայի խորհուրդը նկատի ունենալով, որ Այվազովսկուն ավելի օգտակար կլինի նախ և առաջ ծովային տեսարաններ նկարել Ռուսաստանում, հատկապես նրա հարավային մասում, մնալով ակադեմիայի հատուկ հսկողության տակ, որոշել է ուղարկել Ղրիմ, այն հաշվով, որ նա ձմռանը վերադառնա ակադեմիա և հաշիվ տա իր ամառային աշխատանքների մասին, իսկ ձմռան ամիսներին պարապի գծանկարչությամբ բնորդի (նատուրայի) դասարանում, իսկ որպես առաջին կարգի ոսկե մեդալակիր թոշակառու, Ղրիմ մեկնելու և վերադառնալու համար պետք է վճարել տարեկան 3000ռ.»[48]։

Պրեզիդենտի այս գրությանը պատասխան է տրվում միայն չորս ամիս հետո՝ 1838 թ. փետրվարի 14-ին. «Թագավորկայսրը թույլատրում է գնել ակադեմիստ Այվազովսկուց 6 պատկեր և վճարել նրան դրանց համար 3000 ռուբլի կաբինետի հաշվին, այդ պատկերները նվիրել ակադեմիային, իսկ Գայվազովսկուն թույլ տալ մեկնել Ղրիմ մեկ տարով այնտեղ պատկերներ նկարելու, այն պայմանով, որ վերադառնալուց հետո իր նոր պատկերները ներկայացնի նորին մեծությանը»[49]։

Այսպիսով, թագավորի կարգադրությամբ թույլատրվում է Այվազովսկուն Ղրիմ մեկնել ոչ թե երկու տարով, ինչպես որոշված էր ակադեմիայի խորհրդի կողմից, այլ՝ մեկ տարով, ընդ որում էլ վերադարձին ստեղծագործական հաշվետվություն ներկայացնելու պայմանով։ Ինչ վերաբերում է տարեկան 3000 ռ. թոշակ հատկացնելուն, ապա պետական բյուջեով այն նախատեսված չլինելու պատճառով առաջարկվում է Ակադեմիային առայժմ բավարարվել գնված 6 պատկերների 3 տարով, մինչև հարցի հետագա լուծումը։ Ակադեմիան

---

[48] «Документы...», էջ 20։

[49] Նույն տ'ղ, էջ 22—23։

Այվազովսկուց գնված պատկերներն էլ ծովանկարներ էին՝ «Ծովը արևածագի ժամանակ», «Արևից լուսավորված երկու նավ», «Խաղաղ ծովը և ափին մի նավ նավաստիներով», «Մոտալ գիշեր ծովում այրվող նավով», «Կրոնշտադտի մի մասը տարբեր նավերով» և «Նավախորտակում»։ Գեղարվեստի ակադեմիայի թանգարանի տնօրեն Ուխտոմսկին պաշտոնապես հայտնում է, որ ակադեմիստի այդ աշխատանքները թանգարան են բերվել Ձմեռային պալատից, և պրոֆ. Ջաուերվեյդի պահանջով ու պրեզիդենտի կարգադրությամբ դրանք բոլորն էլ տեղափոխվում են պրոֆեսորի մարտանկարչության դասարան[50]։

Այդ գործերի մեծ մասը Այվազովսկին նկարել էր վերջին մեկ տարում և հունվար-փետրվար ամիսներին պրոֆ. Ջաուերվեյդի դասարանում պարապելու ժամանակ, նոր ստացած իր արվեստանոցում։ Դա վկայում է դեռևս ուսումնառության շրջանում երիտասարդ նկարչի հանդես բերած արտակարգ աշխատասիրության և բեղմնավոր գործունեության մասին։

Մարտի 1-ին Հովհ. Այվազովսկին ստանում է վկայական այն ժամանակվա տերմինով ասած՝ բիլետ, պրեզիդենտ Ա. Ն. Օլենինի ստորագրությամբ ու կնիքով, Ղրիմ մեկնելու համար։ Վկայականում ասվում է նաև, որ նորին մեծության համաձայնությամբ «արգելք չինել ճանապարհին կամ ամբողջ Ղրիմի թերակղզու տեսարաններ նկարելուն, իսկ անհրաժեշտության դեպքում ցույց տալ նրան օգնություն տեղական մարմինների կողմից»[51]։

Իր սիրելի պրոֆեսորներին և ուսանող-ընկերներին հրաժեշտ տալուց հետո Այվազովսկին ներկայանում է ակադեմիայի պրեզիդենտ Ա. Ն. Օլենինին, որը, բարի ճանապարհ մաղթելով, «թույլատրում է նրան իրեն նամակ գրելու իրավունք»։ Դոհ ու շնորհակալ գեղարվեստի ակադեմիայից, Այվազովսկին հրաժեշտ է տալիս Պետերբուրգին և ճանապարհվում դեպի Ղրիմ։

---

50 Նույն տեղ, էջ 24։

51. Նույն տեղ, էջ 23—24։

Երրորդ մաս

ՀԱՅՐԵՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

1838 թ. մարտի սկզբներին Հովհ. Այվազովսկին Ղրիմ է մեկնում իր դասընկեր, նկարիչ Վ. Ի. Շտերնբերգի հետ։ Վերջինս գնում էր Ուկրաինա՝ իր հայրենիքը, ծնողների մոտ։ Ճանապարհին երկու ընկերները Շտերնբերգի հրավերով այցելում են Ջերնոդուվյան գավառի «Կաչեննվկա» կոչված կալվածքը, որտեղ երանց սիրալիր ընդունում է Շտերնբերգի ազգական, կալվածատեր ու արվեստասեր Գ. Ս. Տարնովսկին։ Այստեղ երանք հյուրընկալվում են մի քանի օր, որի ընթացքում երիտասարդները ծանոթանում են գյուղական բնությանը, գեղչուկների կյանքին, կենցաղին և մտերմանում հյուրասեր կալվածատիրոջ հետ։ Հավանաբար այդ օրերին է նկարիչը մի կտավ նվիրել գեղեցիկ արվեստներ սիրող տանտիրոջը, քանի որ Գ. Ս. Տարնովսկին հետագայում ձեռք է բերում նորերը ևս, այդ թվում «Լուսնյակ գիշեր Դուրզուֆում» (1839 թ.) պատկերը։

Գարնան սկզբներին Այվազովսկին արդեն Թեոդոսիայում էր։ Հինգ տարվա բացակայությունից հետո նա կրկին գտնվում է հայրենական տանը, ծնողների, եղբոր քրոջ և եղբոր մոտ, հարազատների միջավայրում։ Հայրը բավական ծերացել էր, մայրը շարունակում էր վարել տան գործերը, քույրը սովորում էր, իսկ ավագ եղբայրը՝ Գրիգորը, ծառայության մեջ էր նավահանգստային գրասենյակում։ Մյուս եղբոր՝ Գաբրիելի, մասին լուր չունեին։ Նա վաղուց չէր գրում. գիտեին միայն, որ ս. Ղազար կղզում (Վենետիկ) Մխիթարյանների միաբանության մեջ վարդապետի կոչում ստանալուց հետո

խիստ զբաղված էր գործերով։ Բայց ծնողները հանգիստ էին, որ նա գտնվում է ապահով տեղում։

Ավելի քան մեկ շաբաթ ընտանիքում և հայրենակիցների շրջապատում անցկացնելուց հետո, ազնիվ ու պարտաճանաչ Հովհ. Այվազովսկին ապրելի կեսերին մեկնում է Սիմֆերոպոլ՝ իր առաջին հովանավոր Ա. Ի. Կազնաչեևի մոտ, որն իր բնտանիքի ու բարեկամների հետ նրան ընդունում է ջերմությամբ։ Այստեղից էլ նա ճանապարհվում է Ղրիմի հարավային ափերը, դեպի այն վայրերը, «որտեղ,— ինչպես գրում է նա պրեզիդենտ Օլենինին,— փարթամ բնությունը, հայկական ծովն ու գեղանկարչական լեռները նեքնչում են նկարչին այնքան բարձր պոեզիա»[1]։

Հեռու Պետերբուրգից, հսկողությունից ու ակադեմիական առաջադրանքներից, երիտասարդ նկարիչն այստեղ իրեն միանգամայն ազատ և անկախ զգալով, ուսումնասիրության օբյեկտ է ընտրում բնությունը։ Նա սկսում է նկարել միայն բնությունից։ Սակայն ակագեմիական կրթության որոշ կանոններ իրենց չեն արագարացնում բնությունը անմիջականորեն, այնպես, ինչպես որ նա կա, պատկերելու համար։ Այդ պատճառով նա զգում է բնությունն ուսումնասիրելու, նրա գեղեցկությունները ճանաչելու և բազմազան երևույթներից մեջ թափանցելու շատ ավելի մեծ պահանջ, քան այն, ինչ տվել էր նրան ակագեմիան։ Թերևս դրանով պետք է բացատրել, որ ծննդավայր վերադառնալուց մի քանի օր հետո իր բարեկամ Ա. Տոմիլովին գրած նամակում նա հայտնում է, որ ինքը ուժեղ տպավորություններ ունի Ղրիմի բնությունից և որ կարծես շատ բան նոր է տեսնում և նոր է միայն ընկալում։ «Որքա՜ն փոփոխություններ կան բնության մասին իմ ունեցած հասկացողություններում,— գրում է նա 1838 թ. մարտի 17-ին,— ինչքա՜ն նոր գեղեցկություններ տեսա և որքան էլ մնում է նայելու առաջիկայում, որոնք այժմ թվում են ծածկված ոսկյա հորիզոնի հետևում։ Այստեղ հորիզոնը այնպես մոտիկ չէ, ինչպես հյուսիսում, սարերն էլ բարձր են ամպերից։ ...Ես անհամբեր սպասում եմ այն պահին, թե երբ կսկսեմ

[1] Նույն տեղ, էջ 28։

նկարել»,— գրում է նկարիչը՝ հիացած հայրենի բնության յուրօրինակությամբ[2]։

Ղրիմի հարավային ափին Այվազովսկին շրջագայում է «մինչև հուլիս ամիսը և նկարեցի մի քանի հաջող էսքիզներ, ապա այնտեղից վերադարձա Սիմֆերոպոլ»,— զեկուցում է նկարիչը, ավելացնելով, որ այդ քաղաքում կարճ ժամանակում ինքը նկարում է շատ մարդկանց բնականից, «ապա մի արվեստանոց սարքեցի իմ ծննդավայր Թեոդոսիայում, որտեղ է և իմ սիրելի տարերքը»[3]։ Այվազովսկին արվեստանոցի է վերածում հայրական տան սենյակներից մեկը և այստեղ իր էսքիզների ու ճանապարհորդական տպավորությունների հիման վրա նկարում է նոր նկարներ, այդ թվում «Յալթա» և «Ֆրեգատը առագաստներով» կտավները։

Սակայն այս շրջանում վերջանում են նրա ստացած դրամական միջոցները, և հոկտեմբերի սկզբներին ստիպված դիմում է ակադեմիայի կոնֆերենց-քարտուղարին, տեղյակ պահելով, որ իր 6 պատկերների դիմաց իրեն տրված գումարն արդեն ծախսվել է ճանապարհի, Ղրիմում ճանապարհորդելու և նկարչական պարագաների վրա, ուստի խնդրում է իրեն դրամական օգնություն ցույց տալ։ Այդ կապակցությամբ հոկտեմբերի 26-ին կոնֆերենց-քարտուղարը պատասխանում է, որ ակադեմիայի վարչությունը հաշվի առնելով Այվազովսկու բարեխղճությունը, նրա աշխատասիրությունը և բարոյական լավ հատկությունը, որոշել է տալ նրան 1000 ռ. այն հավոքով, որ նա Պետերբուրգ վերադառնալուց հետո ակադեմիային հանձնի իր նկարներից որևէ մեկը։

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Այվազովսկին շարունակում է աշխատել իր տանը հիմնած արվեստանոցում, որտեղ սկսում և ավարտում է 5 պատկեր։ Այդ պատկերներից մի քանիսը՝ «Յալթա», «Ֆրեգատը առագաստներով» և այլն՝ նկարիչն ուղարկում է Պետերբուրգ՝ իր դեկավար պրոֆ. Ի. Ի. Ջաուերվեյդի անունով։ Ակադեմիայում դրանք արժանանում են պրոֆեսորների հավանությանը։

1839 թ. հունվարի 1-ը՝ Նոր տարին, Այվազովսկին անց է

---

2 Նույն տեղ, էջ 26։

3 Նույն տեղ, էջ 28։

կացնում հայրենական տանը՝ հարազատների, բարեկամների ու հայրենակիցների հետ։ Հունվարին նա սկսում է իր էտյուդների և էսքիզների հիման վրա նկարել նոր գործեր։ Մտահղանում է մի քանի սյուժե և ոգեշնչված աշխատում է բոլորն իրականացնել միաժամանակ՝ որոշ ընդմիջումներով։ Ստեղծագործական այդ աշխատանքը նրան այնպես է կլանում, որ սկսում է անհանգստանալ Ղրիմում մնալու ժամկետը մոտենալու պատճառով։

Փետրվարին Այվազովսկին դիմում է ակադեմիայի վարչությանը Ղրիմում մնալու իր ժամկետը (մարտի 1-ը) հետաձգել մինչև օգոստոս ամիսը։ «Բայց մինչև այժմ ոչ մի պատասխան չեմ ստացել,— գրում է նա պրեզիդենտին 1839 թ. ապրիլի 27-ին,— այդ պատճառով վճռել եմ մնալ այստեղ մինչև պատասխան ստանալը»[4]։ Պատասխանը, իսկապես, բավական ուշանում է, բայց 22-ամյա հասակը թնակոխած նկարիչը ժամանակը իզուր չի կորցնում։ 1839 թ. մարտի 17-ին Ա. Տոմիլովին գրած նամակում նա ասում է. «...ինձ մոտ այժմ արդեն կա չորս մեծակտավ պատկեր հետևյալ սյուժեներով. 1) «Գիշերը հարավային ափերին», 2) «Փոթորիկ չեն վական ավերակների մոտ Թեոդոսիայում», 3) «Յարական Սրեձնդի տեսարանը» և չորրորդը՝ նոր սկսած «Սևաստոպոլի տեսարանը ռազմանավերով»։ ...Այդ բոլորը դուք կտեսնեք օգոստոս ամսին Պետերբուրգում»[5]։

Ապրիլին Թեոդոսիա է ժամանում ռուսական բանակի Կովկասի ծովափնյա շրջանի պետ, գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Նիկոլաևիչ Ռաևսկին (1801—1843), որը Տավրիկյան նահանգապետ Ա. Ի. Կազնաչեևի հետ այցելում է Այվազովսկուն։ «Ինքը՝ Կազնաչեևը, Ռաևսկու հին բարեկամը, նրա հետ գալիս է համարյա թե ինձ համար»,— գրում է նկարիչը։ Ն. Ն. Ռաևսկին երիտասարդ նկարչին հրավիրում է մասնակցելու Մեգրելիայի սևծովյան ափերին տեղի ունենալիք ռուսական նավատորմի դեսանտային արշավանքներին։ «Գեներալ Ռաևսկին եկավ ինձ մոտ արվեստանոց և համառորեն համոզում էր ինձ մեկնել իրենց հետ, որպեսզի տեսնեմ Սև ծովի

---

4 Նույն տեղ, էջ 28։

5 Նույն տեղ, էջ 26—27։

արևելյան ափերի քիչ հայտնի քնության գեղեցկությունները և ներկա լինեմ զորքերի ափ իջեցմանը ու մարտական գործողություններին,— գրում է Այվազովսկին պրեզիդենտ Օլենինին 1839 թ. ապրիլի 27-ին։— ...Ահա շոգենավերը և նավատորմը կանգնած են իմ աչքի առջև, որպեսզի ընդունեն զորքերին։ Վաղը չէ մյուս օրը հույս ունեմ տեսնել այն, ինչ չեմ տեսել և, գուցե, երբեք չտեսնեմ կյանքումս։ Առաջին դեսանտից հետո,— շարունակում է նա, —որը կլինի մայիսի 1-ին, ես կվերադառնամ Թեոդոսիա, որպեսզի ավարտեմ ցուցահանդեսի համար սկսած պատկերները, իսկ հետո նորից կմեկնեմ նավատորմի հետ երկրորդ և երրորդ դեսանտներին մասնակցելու, եթե, իհարկե, կլինի Ձեր թույլտվությունը»[6]։

Հովհ. Այվազովսկին մի ժամանակ տեղյակ է պահում, որ «գեներալ Ռաևսկին իր կողմից ևս գրել է զինվորական մինիստրին թագավոր-կայսրին զեկուցելու ռազմարշավին իմ մասնակցության և Ղրիմում մնալու ժամկետը մինչև մյուս գարուն հետաձգելու համար»։ Այվազովսկին ավելորդ չի համարում նաև ասել, որ «վստահ Ձեր մեծահոգության վրա և մտածելով, որ Ձեզ անդուրեկան չի լինի տեսնել իմ նոր փորձերը ծովային ու ծովափնյա ճակատամարտեր պատկերող սյուժեները», ինքը չսպասելով վերադասի թույլտվությանը, «որոշել է դուրս գալ իր արձակուրդի շրջանակից»[7]։

Իսկապես. թույլտվությունը Պետերբուրգից կարող էր ուշանալ, իսկ սեծովյան նավատորմի մարտական գործողությունները մի քանի օրից սկսվելու էին։ Երիտասարդ նկարիչը կատարում է համարձակ քայլ. նա մայիսի մեկին մասնակցում է ռուսական սեծովյան նավատորմի դեսանտային գործողություններին Կովկասի ափերի մոտ։ Նա սկզբում լինում է գլխավոր Ն. Ն. Ռաևսկու հետ «Կոլխիդա» շոգենավում, ապա ս եղափոխվո մ է Մ. Պ. Լազարևի մոտ «Սիլիստրիա» գծանավի վրա, որի կապիտանն էր Պ. Ս. Նախիմովը։ Ռազմանավերից կատարված ռմբակոծությունից հետո Այվազովսկին ծովափ է իջնում 7000 զինվորների հետ և մասնակցում անհնազանդ ու ապստամբ չերքեզների դեմ մղվող ճակատամարտերին։ Նրբ

---

6 Նույն տեղ, էջ 29։

7 Նույն տեղ, էջ 29։

վերաբերվում է ռուս սպաներից մեկը՝ Ֆրիդերիկսը, նկարիչը նրան տեղափոխում է նավ և հետո նորից վերադառնում ծովափ։ «Իմ ամբողջ ընտանիքը,— պատմում է նա իր կենսագրին,— բազկացած էր ատրճանակից և գրքերով ու նկարչական պարագաներով լի պայուսակից»[8]։

Իր այդ «զինվածությամբ» Այվազովսկին կատարում է մարտական անցքերի, զինվորների և բնության ճեպանկարներ, մատիտով կամ չրաներկով գծանկարներ։ «Հիշում եմ,— պատմում է նկարիչը,— թե ինչպես ծովափից մեր նավը եկավ մի չերքեզ հետախույզ։ Ես նկարում էի, իսկ նա կանգնած ուշադիր հետևում էր իմ աշխատանքին։

— Դու այդ ի՞նչ ես անում,— հարցրեց նա ինձ։

— Տեսնու՞մ ես, նկարում եմ. իսկ ի՞նչ, եթե ես ձեզ մոտ գերի ընկնեի, թույլ կտայի՞ք ինձ նկարել— հարցրի ես իմ հերթին։

— Ոչ՛... Դա դատարկ բան է։ Այ, եթե դու դերձակ լինեիր, մենք քեզ չէինք արգելի աշխատել.. իսկ նկարելը դատարկ բան է։

Կարճ, պարզ և որ գլխավորն է՝ պրակտիկ է»[9]։

Ռուսական ամծովյան նավատորմի առաջին դեսանտային գործողություններին մասնակցելուց հետո Այվազովսկին վերադառնում է տուն՝ Թեոդոսիա, և զբաղվում իր գրքապահակի հարուստ նյութերի մշակմամբ։ Շուտով նա ստանում է պաշտոնական հաղորդում. մայիսի 25-ին զինվորական մինիստրը ծանուցում է կայսերական տանը, որ «Թագավոր-կայսրը թույլ է տալիս ակադեմիստ Այվազովսկուն մնալ Ղրիմում իր խնդրած ժամկետով սկսած պատկերները ավարտելու համար։ Միաժամանակ թույլատրվում է վճարել նրան 1000 ռ. թղթադրամ (ասիգնացիա) կատարված ծախսերը փակելու և աշխատանքը շարունակելու համար»։ Ռազմական մինիստրը միաժամանակ խնդրում է կարգադրել ֆինանսների մինիստրությանը Այվազովսկուն տրված փողը, Ռևսկու պահանջով, փոխադրել Կերչ։

---

[8] «Русская старина», 1878, էջ 673։

[9] Նույն տեղ, էջ 273—274։

Գեներալ Ն. Ն. Ռաևսկու՝ իր ժամանակի ամենակրթված և ազատամիտ գործիչներից մեկի, Ա. Ս. Պուշկինի մտերիմ ընկերոջ և դեկաբրիստների բարեկամի միջնորդությամբ ձեռք բերված այդ թույլտվությունը երիտասարդ Այվազովսկուն տալիս է ազատություն և հայրենի հողի վրա ստեղծագործելու լայն հնարավորություններ։

Ոգեշնչված իր այդ բարեկամների անշահախնդիր օգնությունից, Այվազովսկին շարունակում է կրկնապատիկ ուժերով աշխատել։ Հուլիս ամսին նա Ն. Ն. Ռաևսկու հետ մասնակցում է Աբխազիայի ծովափնյա շրջանում ձեռնարկված ռազմարշավին, հարստացնելով իր տպավորությունները։ «Ն. Ն. Ռաևսկու հետ Աբխազիայի ծովափնյա շրջանում կայացած ռազմարշավը խանգարեց ավարտել բոլոր այն պատկերները, որոնք ես նախատեսել էի ցուցահանդեսի համար։ Այդ պատճառով երկրորդ ռազմարշավից վերադառնալուց հետո ես զբաղվեցի դրանց ավարտման գործով,— օգոստոսի 13-ին գրում է նկարիչը ակադեմիայի կոնֆերենց-քարտուղար Վ. Ի. Գրիգորովիչին,— բայց բոլորը չհասցրի»։ Նա խնդրում է, եթե կարելի է, ցուցադրել նախկին աշխատանքները՝ «Յալթան», «Հուլյները», «Պուրգաս», «Առավոտը» և «Գիշերը»։

Նույն օրը Այվազովսկին գեներալ Ն. Ն. Ռաևսկուց ստանում է հրավեր՝ շտապ մեկնել Կերչ, որպեսզի սևծովյան նավատորմի հետ մեկնի երրորդ դեսանտային գործողություններին[10]։ Այվազովսկին շտապ մեկնում է Կերչ, այնտեղ էլ նա ստանում է գեներալ Ռաևսկու պահանջով ուղարկված դրամը և նավատորմի հետ մեկնում է դեպի Կովկասյան ափերը, մասնակցելով դեսանտային գործողություններին։

Այսպիսով, մայիս-օգոստոս ամիսներին երիտասարդ նկարիչը անմիջական մասնակցություն է ունենում ռուսական ռազմածովային նավատորմի ու զինվորների մարտական գործողություններին, մոտիկից ծանոթանալով ծովափնյա մարտերին։ Այդ ամենի մեջ նրա վրա ուժեղ տպավորություն է գործում ծովափնյա Սուբաշի բնակավայրի գրավումը, որին ականատես ու մասնակից է լինում նաև ինքը։ Դա էլ հենց պատճառ է նրա նոր՝ «Սուբաշի գրավումը» կտավի ստեղծման։

---

10 «Документы...», էջ 83։

Այդ մարտերի շրջանում, ազատ ժամերին, Այվազովսկին ստեղծում է այլ գործեր ևս՝ ծովակալ Մ. Պ. Լազարևի դիմանկարը գծանախշի տախտակամածին կանգնած, «Կերչի տեսարանը» և այլն։ Պահպանվել է մի գրչանկար, որտեղ նկարիչը պատկերել է իրեն բարձրաստիճան ծովային սպաներ Պ. Նախիմովի, Վ. Կորնիլովի, Ն. Խոմուտինի հետ։

Ուշագրավ է գրաֆիկական մի աշխատանքի հետ կապված Այվազովսկու պատմածը. «Ծովափին տնկի ունեցած մարտերից հետո, դարձի ժամանակ, երբ չերքեզները սայլակով եկել էին իրենց զոհվածներին տանելու, ես բացելով թղթապանակս և զինվելով թուղթ ու մատիտով, սկսեցի նկարել մի խմբի։ Այդ ժամանակ ինչ-որ չերքեզ, առանց քաշվելու, վերցրեց իմ ձեռքից թղթապանակը, տարավ յուրայիններին ցույց տալու։ Դուր եկա՞վ այն լեռնցիներին, թե՞ ոչ, չգիտեմ, հիշում եմ միայն, որ չերքեզը վերադարձրեց ինձ գծանկարը արյունոտված... Այդ «տեղական կոլորիտը» այդպես էլ մնաց նկարի վրա, և ես երկար ժամանակ պահպանում էի այն որպես շոշափելի հիշողություն ռազմարշավի մասին»[11]։

1839 թ. ամռան ամիսներին կովկասյան ափերին տեղի ունեցած ռուսական սևծովյան նավատորմի դեսանտային գործողությունների ընթացքում Այվազովսկին ծանոթանում և մտերմանում է ոչ միայն նավատորմի բարձրաստիճան հրամանատարների՝ հետագայում անվանի հերոսների, այլև Կովկաս աքսորված նախկին դեկաբրիստների հետ։ «Հիշում եմ,— պատմում է նկարիչը,— որ Սուբաշիի գործում մասնակցում էին շարքային ծառայության իջեցված դեկաբրիստներ Մ. Մ. Նարիշկինը, Ա. Ի. Օդոևսկին և Ն. Ի. Լորերը։ Նրանք ծառայում էին շարքային զինվորներին հավասար իրավունքով, բայց անձնական կենցաղում օգտվում էին որոշ հարմարություններից։ Ես ծանոթացա և մեծ բավականությամբ զրուցում էի այդ խիստ կրթված մարդկանց հետ»[12]։ Նա ծանոթանում է նաև Ա. Ս. Պուշկինի եղբոր՝ Լ. Ս. Պուշկինի հետ, որն այդ ժամանակ սպայի աստիճանով ծառայում էր Կովկասյան բանակում։ Կովկասի ծովափնյա շրջանում տեղի

11 «Русская старина», 1878, № 7, էջ 673։

12 Նույն տեղ, էջ 674։

ունեցած զորարշավին մասնակցելը կարևոր նշանակություն ունեցավ Այվազովսկու ստեղծագործական կյանքում։ 22-ամյա նկարիչը ոչ միայն աչքառու տեսավ ռազմանավերի ու զինվորների մարտական գործողությունները, այլև եղավ դրանց անմիջական մասնակիցն ու նկարիչը։ Դա զգալիորեն հարստացնում է նրա ռազմական գիտելիքներն ու ստեղծագործական երևակայությունը։ Այդ է հաստատում նաև Այվազովսկու հայտնածը. «Սևծովյան նավատորմի մեր հերոսները սրտախտությամբ ընդունեցին նկարչին իրենց շրջանը, ծանոթացրին նրան ծովային գործի տեխնիկային և ընդհանրապես ցույց տվին ամենակիրթ ուշադրություն իր նկատմամբ»[13]։

Է՛լ ավելի կարևոր էր նրա շփումը ռուս նշանավոր զորավարների, ժամանակի կրթված, զարգացած մարդկանց, ինչպես և դեկաբրիստների հետ, որը և նպաստում է երիտասարդ նկարչի բարեկրթությանը, նրա արագ առաջադիմությանն ու աշխարհընդբռնմանը։ Հովհ. Այվազովսկին տուն է վերադառնում հոգեպես ավելի հարստացած, թարմ տպավորություններով և ստեղծագործական մեծ լիցքով։ Աշնան ամիսներին նա ավարտում է «Դեսանտ Սուբաշիում», «Սևաստոպոլ» և «Հին Թեոդոսիան» կտավները։ Ստվարաթղթի վրա նկարում է Մ. Պ. Լազարևի դիմանկարը։ Այդ, ինչպես և «Լուսնի ծագումը Գուրզուֆում» աշխատանքները պերճախոս վկայում են նկարչության մեջ նրա առաջադիմության և թեմատիկայի ընդլայնման մասին։

Հատկանշական է «Հին Թեոդոսիան», որը այժմ գտնվում է Այվազովսկու անվան պատկերասրահում։ Այս, ինչպես և վերոհիշյալ պատկերները, Այվազովսկին նկարել է անմիջականորեն բնությունից, մանրամասները կատարելով արվեստանոցում։ Դա ներկայացնում է հին, բարձր կետից դիտված քաղաքի ընդհանուր տեսարանը, որի հենքի վրա, առաջին պլանում, նկարիչը մուծել է կենցաղային տարր՝ ճաշապարհին կանգնած երկու աղքատներ անցորդներից ողորմություն խնդրելիս։ Քաղաքամերձ ծովն այստեղ պատկերված է վերջին պլանում, խաղաղ ու հանգիստ, իսկ ծովափին՝ բազմաթիվ ուզտաստանավեր՝ մեծ ու փոքր։ Նկարիչն աշխատել է ման-

13 Նույն տեղ, էջ 672։

թամասնությամբ վերարտադրել մտքի և հնության գանձերը առարկաները, մարդկանց ազգային տարազը, քաղաքի արևելյան տիպի միջավայրը, հարթ տանիքներով տները, հնամենի, մեկ սարերի չորությունը։ Հայրենի քաղաքի յուրահատկությունը ստիպել է նկարչին սովորել հենց բնությունից, գտնել նոր արտահայտչամիջոցներ բնության պատկերը ճշգրտորեն վերարտադրելու համար։

Երիտասարդ նկարչի ստեղծագործական կյանքում նոր թեմա է «Դեսանտ Սուրաշիում» պատկերը։ Դա ներկայացնում է բազմաֆիգուր մարտական տեսարան։ Սովափնյա բնակավայրը ամբակոծվում է, իսկ ռազմանավերից իջեցված նավակով զինվորները լողում են դեպի ափ։ Ափ իջածները արամարտում են «Դեսանտ Սուրաշիում», ինչպես և «Սևաստոպոլի տեսարանը ռազմանավերով» աշխատանքները Պետերբուրգում լավ ընդունելություն են գտնում։ «Այդ ստեղծագործություններից,— գրում է պրոֆ. Ա. Ի. Զաուերվեյդը,— Նորին մեծությունը շատ գոհ մնաց, ...թեև չրի պատկերման հարցում որոշ դիտողություններ արվեցին, թագավորը այդ երկու պատկերները գնեց իր համար»[14]։

Պետերբուրգ ուղարկած մյուս կտավները ևս ուշադրության են արժանանում, բայց և արժում են դիտողություններ։ Այսպես, նկարչի բարեկամ Ա. Ռ. Տոմիլովը, տեսնելով Այվազովսկու հինգ նկարները, գրում է. «Արևի ծագումը» նկարում արևը հարթության վրա ավելի գեղեցիկ կերևար, եթե այդ հարթությունը վերցված լիներ հենց այն պահին, ինչպիսին ասկյա երկինքն է լուսավորված. մինչդեռ երկնքի հետ չի համաձայնեցված գետինը. երկինքը ներկայացնում է գեղեցիկ օրվա սկիզբը, այնինչ գետինը թվում է այնպիսին, ինչպիսին կլիներ աշնանային մառախլապատ երեկոյի պահին։ «Հույները նավի տախտակամածի վրա» գեղեցիկ է նկարված, բայց հույնի աջ ոտքը չի երևում՝ ինչի՞ վրա է հենված, բոլորովին չեն երևում ծնկները, թեև ոչնչով չեն ծածկված»։

Այս և նմանօրինակ դիտողություններ գուցե և ճշմարիտ են (այդ պատկերները մեզ չեն հասել), սակայն գրանք անկասկած զգաստացնում են երիտասարդ նկարչին։ Շատ ավելի

---

[14] «Документы...», էջ 43

կարևոր էն Ա. Ի. Տոմիլովի խորհուրդները։ Նա գրում է. «Ուսուցիչը պետք է լինի բնության հայելին կամ, ավելի ճիշտ ասած, պետք է լինի ընդօրինակությունը այն զգացողության, որ պիտի բնությունը թողնում է նկարչի զգացմունքի վրա»[15]։ Երիտասարդ նկարիչը չէր կարող նկատի չունենալ ավագ բարեկամի դիտողությունները և աշխատում է կատարելագործել իր արվեստը։

Մինչ ակադեմիստը ապրում և ծրագրեր է աշխատում Թեոդոսիայում, Ռուսաստանի մայրաքաղաքում գեղարվեստի ակադեմիայի խորհուրդը «նկատի ունենալով Այվազովսկու մեծ հաջողությունները ծովանկարչության մեջ, հատկապես նրա համեստությունը, ազնիվ ու գովելի վարքագիծը», 1839 թ. սեպտեմբերի 23-ին որոշում է կայացնում նրան նկարչի կոչում տալու և ծառայության դեպքում 14-րդ դասի արտոնություն շնորհելու մասին։ Նրան տրվում է վկայագիր, որը Կարչին ու նրա ժառանգներին իրավունք է վերապահում [illegible] ավելի օգտվելու այդ արտոնություններից[16]։ Դա նշանակում էր, որ Այվազովսկին արդեն «ավարտել է իր ուսման դասընթացը» և որպես ազատ նկարիչ կարող է աշխատել ուր որ կյանկանա։ Բայց ազատ նկարիչ Այվազովսկին Պետերբուրգ շտապ մեկնելու ցանկություն չուներ։ Հարազատ ընտանիքը, Ղրիմի գեղեցիկ ու կանաչավետ, արևոտ ու լուսառատ բնությունը, մանավանդ նրա տարերքը՝ ծովը, պահում են նրան հայրենի երկրում, նպաստելով նոր կտավների ստեղծմանը։

Այդ ժամանակ էլ ծնողների հետ Ղրիմ եկած Լ. Ֆ. Լագորիոն (1827—1905)՝ հետագայում անվանի ծովանկարիչը, տեսնելով Այվազովսկու ստեղծագործությունները, հափշտակվում է նկարչությամբ և հոր հետ այցելելով նկարչի արվեստանոցը, խնդրում է իրեն նկարչություն սովորեցնել։ 22-ամյա ուսուցիչը հանձնարարում է նրան պատճեններ նկարել, և 12-ամյա Լ. Ֆ. Լագորիոն դառնում է նրա առաջին աշակերտը[17]։

1840 թ. առաջին վեց ամիսներին Այվազովսկին ապրում և ստեղծագործում է Ղրիմում՝ մեծ մասամբ Թեոդոսիայում։

---

15 Նույն տեղ, էջ 38—39։

16 Նույն տեղ, էջ 33—34։

17 «Русская старина», 1878, հ. 23, էջ 302։

Նա վերջնականապես ավարտում է նախորդ տարում սկսած գործերը և ստեղծում նորերը։ Այս շրջանում է ստեղծում «Մովափ», «Ջոլոտոյ Ռոգի տեսարանը», «Մովային բնանկար» կտավներ։ «Մովափը» տպավորիչ աստեղծագործություն է։ Դա ներկայացնում է աշնանային սառը քամուց անհանգստացած ծովի սովորական տեսարան։ Արևելյան հագուստով մի մարդ, հավանաբար Թեոդոսիացի մի հայ, խուրջինը ուսին գցած ու երկար ձեռնափայտին թեթևակի հենված, հանգիստ կանգնել է ծովափին և ուշադիր նայում է դեպի ծովը։ Հեռվում, հորիզոնի մոտ, ծովը երևում է մուգ կապտավուն։ Նրա լայն ձգված և ծանր ալիքները զուգահեռ շարքերով շարժվում են դեպի դիտողը։ Երկու սպիտակաթև ճայեր ճախրում են ջրերի վրա։ Քամին դեռ ուժեղ չէ, փոթորիկ չկա, թեև երկնքում կուտակվող սև, անձրևաբեր ամպերը զգացնել են տալիս բնության տարերքի ավելի սաստկացում։ Տեսարանն աշխուժացված է մարդու ֆիգուրի կենդանի վերարտադրմամբ և առանձնահատկություններով, որոնցից երկուսը իրենց առանձնահատկություններն արդեն հավաքած կանգնել են ծովափին։ Այստեղ, ավելի քան նախորդ պատկերներում, նկարչին հաջողվել է վերարտադրել ջրի շարժուն վիճակը և թափանցիկությունը, օդային միջավայրը և բնության տվյալ պահի կոլորիտը, թեև ներկի բարակ շերտով նկարված լինելու պատճառով առաջին հայացքից թողնում է անավարտության տպավորություն։ Բայց հենց այն, որ 23-ամյա նկարիչը կարողացել է այստեղ շատ սեղմ միջոցներով հասնել ծովային բնության ռեալ, կենդանի պատկերման ու տեսարանի գեղարվեստական համոզչության, ինքնին վկայում են նկարչի աճը և վարպետությունը։

Նոր սյուժեներ ընտրելու նպատակով Այվազովսկին գարնան ամիսներին կրկին ճանապարհորդություններ է կատարում Ղրիմի հարավային ափերով։ Ալուպկայում հանդիպում է իշխան Մ. Ս. Վորոնցովին, որը նրան պատվիրում է նկարել իր պալատը ծովի կողմից։ Տեղում էսքիզներ և էսքիզներ անելուց հետո, վերադառնում է տուն և կարճ ժամանակամիջոցում նկարում է այդ պատկերը։ Հունիսի սկզբներին, երբ Նովոռոսիայի գեներալ-գուբերնատոր և Բեսարաբիայի շրջանի կառավարիչ կոմս Մ. Ս. Վորոնցովը գալիս է Թեոդոսիա և

այցելում Այվազովսկուն, նրա պատվերն աշխեն կատարված էր։ «Ընդան շատ գոհ եկան իմ պատկերները,— գրում է Այվազովսկին նույն ժամանակ՝ 1840 թ. հունիսին, ակադեմիայի կոնֆերենց-քարտուղարին,— առանձնապես գոհ եղավ իր պատվերից։ Իսկապես, հաջողված պատկեր է։ Վորոնցովը այն ուղարկեց Լոնդոն՝ նվեր իր քրոջը»[18]։

Աշխեն վերջանում էր գարունը, և Ղրիմում նրա մնալու ժամկետը լրանում էր, ուստի Այվազովսկին պատրաստվում է մեկնել Պետերբուրգ։ Հունիսի 25-ին ակադեմիայի կոնֆերենց-քարտուղարին գրած նամակում նա հայտնում է. «Վերջապես պատրաստվում եմ ճանապարհ ընկնել... կլինեմ Պետերբուրգում մինչև հուլիսի 10-ը։ Իմ մի քանի պատկերները Պետերբուրգում կլինեն մի փոքր ուշ, քանի որ դրանք փաստորեն չեն ընդունվում արկղերի երկար լինելու պատճառով։ Ես հիմարություն եմ արել, որ նկարել եմ մեծ չափերով, այժմ ոչինչ անել չենք կարող, ...ես ինձ հետ կբերեմ միայն երկու փոքրիկ պատկեր, այսինքն՝ փոստով եմ ուղարկում։ Ինձ հետ այժմ վերցնում եմ միայն «Սևաստոպոլը» և «Դեսանտը»[19]։

Մեկ շաբաթ հետո՝ հուլիսի 3-ին, Պետերբուրգի կայսերական գեղարվեստի ակադեմիայի վարչությունը տալիս է վկայական այն մասին, որ ակադեմիան ոսկե մեդալով ավարտած 14-րդ դասի նկարիչներ Ն. Բենուան, Մ. Շուրուպովը, Ս. Վորոբյովը, Հովհ. Այվազովսկին, Վ. Շտերնբերգը գործուղվում են արտասահման գեղարվեստի քննագավառում հետագա կատարելագործման համար որպես ակադեմիայի թոշակառուներ[20]։

Այդ նկարիչներից երեքը՝ Բենուան, Շուրուպովը և Վորոբյովը, հուլիսի սկզբներին արդեն մեկնում են Իտալիա։ Հովհ. Այվազովսկին Թեոդոսիայից Պետերբուրգ է ժամանում նույնպես հուլիսի սկզբներին, բայց չի հանդիպում մեկնող ընկերներին։ Նա իշխանում է այն բնակարանում, որտեղ ապրում էին իր ընկեր Վ. Շտերնբերգը և ուսանող Տ. Շևչենկոն։ «Ղրիմից եկավ Այվազովսկին և մնաց մեզ մոտ,— գրում է հետա-

---

18 «Документы...», էջ 41։

19 Նույն տեղ, էջ 40—41։

20 Նույն տեղ, էջ 42։

պատմում Տ. Շևչենկոն ինքնակենսագրական բնույթ կրող իր «Նկարիչ» վիպակում։ Շտենբերգը հիացմունքով դիմավորեց իր ընկերոջը, բայց ինձ, չգիտեմ ինչու, առաջին հայացքից գուր չեկավ։ Նրա մեջ կա, չնայած նրա գեղեցիկ մաներային, թե՛լ-որ անդուրեկան, ոչ գեղարվեստական, ինչ-որ կիրթ սառնություն և վանողական բան։ Իր պայուսակները նա մեզ ցույց չտվեց, ասում է թողել է Թեոդոսիայում, մոր մոտ, իսկ ճանապարհին նա չի նկարել, որովհետև շտապել է հասնել արտասահման մեկնող չոգենավին։ Նա, ի դեպ, ապրեց մեզ մոտ գրեթե մի ամիս, չգիտեմ ինչ հանգամանքներում։ Ով այդ ժամանակաշրջանում մեր հարևանուհին ոչ մի անգամ մեզ չայցելեց՝ նա վախենում էր Այվազովսկուց։ Ով ես դրա համար պատրաստ էի նրան ամեն օր ճանապարհ գցել արտասահման»[21]։

Այդ հանդիպումից 15 տարի հետո՝ 1856 թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին գրված վիպակում, Տ. Շևչենկոյի նկարագրած իր առաջին աննպաստ տպավորությունը երիտասարդ առաղանգավոր նկարչի մասին առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, եթե նկատի չունենանք, որ նրա «Նկարիչ» ևրկը գեղարվեստական ստեղծագործություն է։ Կարծում ենք, որ այդ նկարագրությունը բխում է ոչ այնքան ճորտությունից նոր ազատագրված ուսանող Շևչենկոյի համոզմունքից, որքան բանաստեղծի գրական-գեղարվեստական ստեղծագործության այժմեական լուծման անհրաժեշտությունից։ Բայց ինչ էլ որ լիներ, գա նկարիչ Այվազովսկու համար որևէ նշանակություն չի ունենում։ Այվազովսկին զբաղվում է իր գործերով։

Պետերբուրգ գալուց անմիջապես հետո իր հետ բերած «Դեսանտ Սևաշխում», «Սևաստոպոլի տեսարանը ռազմանավերով» և «Ովսափին» կտավները հանձնում է գեղարվեստի ակադեմիային՝ Նորին մեծությանը ներկայացնելու համար։ Այդ գործերից երկուսը՝ «Դեսանտը» և «Սևաստոպոլը», ինչպես արդեն ասացինք վերևում, Նիկոլայ Քաղավորը գնում է իր համար։

Արտասահման մեկնելու պատճառով Այվազովսկին դիմում է ակադեմիայի վարչությանը՝ խնդրելով տալ իրեն որոշ գու-

---

21 Т. Шевченко, «Художник», см. Собр. соч., т. 3, 1937, стр. 359.

մար այն վարձատրությունից, որը սպասվում է իրենից գնած նկարների դիմաց։ Հուլիսի 9-ին, քննության առնելով նրա դիմումը, ակադեմիայի վարչությունը որոշում է վճարել նկարչին 4000 ռ. թղթադրամ (ասիգնացիա), այն հաշվով, որ նա ստանա 3000 ռ. իսկ մնացած 1000 ռ. թողնել աշնանը (սեպտեմբերին) նշված վայրը ուղարկելու համար։ Սակայն այդ որոշումից դժգոհ է մնում միայն պրոֆ. Ա. Ի. Զաուերվեյդը՝ Այվազովսկու անմիջական ղեկավարը, որը հատուկ նամակ է գրում պրեզիդենտ Օլենինին՝ պահանջելով իր աշակերտի երկու պատկերների համար վճարել 20,000 ռ. «Եթե թագավոր-կայսրը ցանկանում է ունենալ պատկերներ, որոնք արտացոլեն վերահիշյալ տեսարանները,— գրում է պրոֆեսորը,— ապա այդպիսի աշխատանքի համար օտարերկրացի նկարչին կհատկացվեր 20,000 ռ.»[22]։

Օտարերկրացի արվեստագետներին բարձր վճարելու սովորության դեմ ուղղված այս նամակը, փակ վիճակում, պրոֆեսորի հանձնարարությամբ Այվազովսկին է անձամբ հանձնում պրեզիդենտ Ա. Ն. Օլենինին։ Վերջինս ծանոթանալով նամակի բովանդակությանը, հարցնում է Այվազովսկուն, թե արքան գումարով կարող է բավարարվել երիտասարդ նկարիչը։ Այվազովսկին, գործին անտեղյակ, պատասխանում է, որ Եթե իրեն տրվի 4000 ռ. հոնորար, ինչպես արդեն որոշված է, ինքը լիովին բավարարված կզգա՝ դրա մի մասը իր ծերացած ծնողներին հատկացնելու համար։ Հուլիսի 12-ին պրեզիդենտ Օլենինը պատասխանում է պրոֆ. Զաուերվեյդին. «Դրամական վարձատրություն Այվազովսկու աշխատանքների համար, ինչարկե, կլինի, Եթե ոչ այնքան մեծ գումարով, որքան ակնկարկում է պրոֆ. Զաուերվեյդը (20.000 ռ.), այլ առնվազն հինգ կամ չորս հազար ռ. թղթադրամով երկու նկարի համար, ինչպես ինքը՝ Այվազովսկին, հայտնեց։ Այս արժանավոր նկարիչը,— շարունակում է պրեզիդենտը,— ոչ Եթե ագահությունից է ցանկանում ստանալ որոշ գումար իր աշխատանքների համար, այլ միայն իր ծերացած և աղքատ ծնողների ապահովության համար, որոնք ապրում են Ղրիմում։ Նրանց վիճակը բարելավելու համար նա բաժին է հանում իր հանա-

---

22 «Документы...», էջ 43—44։

պաշտօրյա հացիկ։ Ահա Այվազովսկու բարոյականութեան գիծը, որը ծառայում է նրա գեղարվեստական տաղանդի գեղեցիկ զարդարմանը»[23]։

Հուլիսի 14-ին Այվազովսկին դիմում է ակադեմիայի վարչութեանը՝ խնդրելով արտասահման գործուղվելու համար իրեն տրվող թոշակից որոշ գումար ուղարկել Թեոդոսիայում ապրող իր ծերացած և աղքատ ծնողներին[24]։ Հաջորդ օրը՝ հուլիսի 15-ին, պրեզիդենտ Օլենինը դիմում է կայսերական տան մինիստրին արտասահման մեկնող 23 տարեկան նկարչից թագավորի գնած երկու պատկերների («Դեսանտ Սուբաշիում» և «Սևաստոպոլ») համար վճարել 4000—5000 ռ., յուրաքանչյուրը 2000—3000 ռ. գնահատելով։ Նա միաժամանակ հայտնում է. «...տալ երիտասարդ նկարչին միջոցներ իր ծերացած ծնողների վիճակը վերջնականապես բարելավելու համար, համենայնդեպս մինչև օտար երկրներից վերադառնալը»[25]։

Մի քանի օրից դուրս է գրվում երիտասարդ նկարչի հոնորարը՝ 4000 ռ.։ Հուլիսի 19-ին Այվազովսկին դիմումով խնդրում է իր ստացած 4000 ռուբլուց 1000 ռ. ուղարկել Սիմֆերոպոլ (Ղրիմ) Տավրիկյան նահանգապետ Ա. Ի. Կաղնաչեևի հասցեով, այդ գումարը իր ծնողներին հանձնելու համար[26]։

Պետերբուրգում եղած 10—12 օրում Այվազովսկին հասցնում է նկարել «Կրոնշտադտի նավերը» պատկերը և մի քանի էտյուդներ։ Բացի այդ, Թեոդոսիայից մեկնելիս նա իր հետ վերցրել էր մանուկ Լ. Ֆ.Լագորիոյի մի քանի գծանկարները, որոնք նա հանձնում է իր ղեկավար պրոֆ. Ա. Ի. Զաուերվեյդին, խնդրելով օժանդակել նրան գեղարվեստի ակադեմիա ընդունվելու համար։ Մի քանի տարի հետո՝ 1843 թ., Լ. Ֆ. Լագորիոն ընդունվում է գեղարվեստի ակադեմիա։

Վերջապես հասնում է արտասահման մեկնելու օրը։ Հուլիսի 20-ին Հովհ. Այվազովսկին իր մտերիմ ընկերոջ՝ Վ.

---

23 «Документы...», էջ 45։
24 Նույն տեղ, էջ 46—47։
25 Նույն տեղ, էջ 46—47։
26 Նույն տեղ, էջ 48։

Շտերնբերգի հետ մեկնում է Իտալիա։ «Մենք ճանապարհում էինք իմ Շտերնբերգին մինչև Կրոնշտադտ,— գրում է Տ. Շևչենկոն իր «Նկարիչ» վիպակում,— նրա շուրջը ճանապարհելու համար խմբվել էին մեզանից 10 հոգի, իսկ Այվազովսկուն ոչ ոք չկար ճանապարհող։ Տարօրինակ վերաբերմունք նկարիչների հանդեպ»[27]։

---

[27] Т. Шевченко, «Художник», см. Собр. соч., *с. 3, 1937, էջ 358։*

Չորրորդ մաս

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Հովհ. Այվազովսկին և Վ. Շտերնբերգը Իտալիա են մեկնում՝ անցնելով Բեռլին, Դրեզդեն, Վիեննա և Տրիեստ քաղաքները ճանապարհին դիտելով տեսարժան վայրերը։ Հուլիսի վերջերին նրանք հասնում են Իտալիա։ «Իտալիայի առաջին քաղաքը, որ ես այցելեցի, իհարկե, Վենետիկն էր,— պատմում է Այվազովսկին իր կենսագրին,— տխուր Բեռլինից, Դրեզդենից և Վիեննայից հետո այդ քաղաքն ինձ անասելի դուր եկավ»[1]։ Երկու երիտասարդ նկարիչները մեծ հետաքրքրությամբ շրջագայում են քաղաքում, դիտում են վենետիկյան ճարտարապետության ու գեղարվեստական մյուս հուշարձանները, այցելում թանգարանների վերածված նախկին պալատներն ու մենաստանները։ Այնքան շատ տեսնելու և ուսումնասիրելու բան կար, որ նրանք որոշում են այստեղ երկար մնալ։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՂԲՈՐ ՀԵՏ

Վենետիկից հեռու չէ ս. Ղազար կղզին։ Ասում են, որ անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Բայրոնը այստեղից լողալով է հասել կղզին։ Եվ դա կրկնել է մի քանի անգամ։ Հենց այդ կղզում էր ապրում ու աշխատում նկարչի ավագ եղբայրը՝ 28-ամյա Գաբրիելը, որին չէր տեսել արդեն 14 տարի։ Հավհաննեսը անհամբեր մեկնում է ս. Ղազար կղզին և հանդի-

[1] «Русская старина», 1878, հ. 21, էջ 423։

պում իրենից 5 տարով մեծ եղբորը։ Ջերմ ու արտառուլ է լինում այդ հանդիպումը։ Գաբրիել եղբայրը, որը վաղուց ավարտել էր տեղի հոգևոր դպրոցը և արդեն վարդապետի կոչում ուներ, աշխատում էր Մխիթարյան միաբանության մեջ որպես գիտնական-քարտուղար։ Նա սիրով ծանոթացնում է միաբանության գործունեության, ցույց տալիս գրադարանը, հայկական հին ձեռագրերը, որոնք հարուստ են բարձրարվեստ մանրանկարներով, Բայրոնի սենյակը, որտեղ հանճարեղ անգլիացին հայերեն է սովորել վանահայր Հ. Ավգերյանի մոտ և կղզու մյուս հիշարժան վայրերը։ Նկարիչը հայտնում է ծնողների կարոտը և խնդրում է որևէ կերպ մեկնել Ղրիմ, հարազատների հետ տեսակցության։ Այդ խնդրանքը նա հայտնում է նաև Մխիթարյան միաբանությանը։ Մի ամբողջ օր կղզում մնալուց և այստեղ մի քանի ճեպանկար անելուց հետո Հովհ. Այվազովսկին խորապես տպավորված և գիտելիքներով հարստացած, երեկոյան վերադառնում է Վենետիկ, քանի որ աշխարհիկ մարդկանց այնտեղ գիշերելն արգելված էր։

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԳՈԳՈԼԻ ՀԵՏ

Վենետիկում Այվազովսկին պատահաբար հանդիպում է ռուս մեծ գրող Ն. Վ. Գոգոլին։ Այդ հանդիպումը տեղի է ունենում Ի. Ի. Պանաևի տանը[1]։

— Ո՞վ է այս մարդը,— հարցնում է Այվազովսկին Պանաևին՝ զարմացած հանճարեղ գրողի ինքնատիպ արտաքինով։

— Գոգոլն է,— պատասխանում է Պանաևը։

— Իսկ դուք Այվազովսկի՞ն եք,— հարցնում է գրողը՝ լսելով նրանց զրույցը և մոտենալով երիտասարդ նկարչին, ուժեղ սեղմում է նրա ձեռքը։

— Գիտե՞ք, Իվան Կոստանդինովիչ,— Այվազովսկուն դառնալով ասում է Պանաևը,— ախր Գոգոլը ձեր ջերմ երկրո-

1 Н. Н. Кузьмин, նշված աշխ., էջ 24—25։

պագոն էր, երբ դիտում է Ձեր պատկերները, նա պարզապես շնչասպառ է լինում ուրախությունից։

— Զարմանալի չէ, եղբայր, շնչասպառ լինելը, երբ նա իր պատկերներում վերարտադրում է այդպիսի հրաշալի ջուր,— պատասխանում է Գոգոլը[2]։

Իր կենսագիրներից մեկին արված այս պատմությունը նկարիչը լրացնում է մեկ ուրիշ կենսագրի հետ ունեցած զրույցի ժամանակ։ «Վենետիկում ես ծանոթացա Գոգոլի հետ, որն ապրում էր Ն. Պ. Բոտկինի մոտ,— պատմում է նկարիչը,— կյանքումս առաջին անգամ այն ժամանակ տեսնելով «Ութվիզորի» հեղինակին, ես շուտով բարեկամացա նրա հետ և զարմացա նրա յուրօրինակ արտաքինով։ Եթե ես դիմանկարիչ լինեի, այդ ժամանակ կնկարեի Գոգոլի դիմանկարը։ Կարճահասակ, վտիտ, շատ երկար, սուր քթով, շիկահեր մազերի փնջերով, որոնք հաճախ ընկնում էին կկոցած աչքերին։ Գոգոլը այդ անդուրեկան արտաքինը ծածկում էր իր սիրալիրությամբ, անսպառ ուրախությամբ և իր հիանալի հումորի փայլատակումներով, որով համեմվում էր նրա զրույցը բարեկամների շրջանում։ Նոր անձի երևալը մի ակնթարթում ստվեր էր գցում Գոգոլի բարությամբ փայլող և ժպիտով պայծառացած դեմքին։ Նա լռում էր, մռայլվում և կարծես ամփոփվում ինքն իր մեջ։ Ինավորության այս տարօրինակ գիծը նրա մեջ նկատել էին բոլոր մտերիմները։ Ինձ հետ, սակայն, նա բավական շուտ մտերմացավ, և ես քանիցս հյուրընկալ եմ նրա սիրալիր զրույցով»[3]։

Այդ մտերմությունը և սիրալիր վերաբերմունքը նկարչի հետ հասնում է այնտեղ, որ Գոգոլը Այվազովսկու համար կազմում է Իտալիայում կատարվելիք ճանապարհորդության պլան։ Ն. Վ. Գոգոլը հիանալի գիտեր Իտալիան, նրա պատմությունը, արվեստը և լեզուն։ 1837 թ. գարնանից գտնվելով Իտալիայում, նա շրջագայել էր շատ քաղաքներ և ուշադիր ու մանրամասնորեն ուսումնասիրել էր այդ երկրի գեղարվեստական մշակույթը, ժողովրդի կյանքը և մարդկանց։ Այդ պատճառով նրա համար հեշտ էր նշել այն քաղաքներն ու գե-

---

2 Նույն տեղ., էջ 24—25։

3 «Русская старина», ж. 1878, հուլիս, էջ 423—424։

դատեսիլ վայրերը, ուր հարկ է, որ լիներ Ռուսաստանից առաջին անգամ Իտալիա եկած երիտասարդ նկարիչը։ «ԵՒիզիրի» տաղանդավոր հեղինակին միաժամանակ ոգևորում էր այն համոզումը, որ «միայն այստեղ,— ինչպես գրել է նա իր մի նամակում,— կարելի է իմանալ, թե ինչ բան է գեղարվեստը» և որ այդ «արվեստը ավելի է բարձրացնում մարդուն, տալով նրան ազնվաբարոյություն և հոգեկան հիանալի մղման գեղեցկություն»[4]։

Բացի այդ, ռուս նշանավոր գրողը լինելով «նկարիչներին խրախուսող պետերբուրգյան ընկերության» թղթակից-անդամ, իր պարտքն էր համարում օժանդակել սկսնակ նկարչին։ Նա հրապարակել էր մի շարք հոդվածներ կերպարվեստի, մանավորապես ժամանակակից նկարիչների մասին։ Հայտնի է նրա ծավալուն հոդվածը Կ. Պ. Բրյուլովի «Պոմպեյի վերջին օրը» պատկերի մասին, որը ժամանակին լայն արձագանք գտավ մտավորականության շրջանում։

Հովհ. Այվազովսկին, անշուշտ, գիտեր այդ մասին, և դա, ըստ էության, ավելի է մտերմացնում նրանց։ Այդ մտերմությունը հաստում է այնտեղ, որ Ն. Վ. Գոգոլը (և մյուսները) առաջարկում են միանալ իրենց և որոշ ժամանակ շրջագայել Վենետիկում և Ֆլորենցիայում։ «Գոգոլը, Պանաևը և Բրյուկինը,— ասում է Այվազովսկին,— առաջարկում են իրենց հետ մեկնել Ֆլորենցիա։ Ես դրան, իհարկե, ուրախությամբ համաձայնվեցի։ Մենք մեկնեցինք վարձու չորս տեղանոց կառքով, և, խոստովանում եմ մեր ընդհանուր մեղքը, ճանապարհին մենք խաղում էինք պրեֆերանս՝ կառքի բարձիկը դարձնելով սեղան։ Բայց և այնպես այդ պրոզային զբաղմունքը մեզ չխանգարեց հիանալու ճանապարհին հանդիպող գեղեցիկ վայրերով»[5]։

Օգոստոսին նրանք արդեն Ֆլորենցիայում են։ Ռուս բարեկամների հետ Այվազովսկին դիտում է Ֆլորենցիայի հրաշալիքները, այցելում Պալլացո Պիտտիի պատկերասրահը և թանգարանները։ Այստեղ էլ տեղի է ունենում մի նոր հանդիպում և ծանոթություն ռուսական գեղարվեստական մշա-

---

[4] «Советский музей», кн. 1934, № 2, էջ 11.

[5] «Русская старина», 1878, № 6, էջ 444։

կույթի խոշոր գործիչներից մեկի հետ՝ Հռոմից Ֆլորենցիա էր եկել նկարիչ Ա. Ա. Իվանովը իր «Քրիստոսի երևալը ժողովրդին» մեծակտավ պատկերի համար էսքիզներ անելու և հատկապես նկարիչ Սալվատոր Ռոզայի պատկերներից ծառերի էսքիզներ անելու նպատակով։ Շատ ուրախացած այդ նոր ծանոթության համար, Այվազովսկին, սակայն, մնում է զարմացած, թե «նրա ի՞նչին են հարկավոր.... Սալվատոր Ռոզայի պատկերներում եղած ծառերի բնանկարները, երբ դրանցից քիչ չեն հենց Հռոմի շրջակայքում»[6]։

Ֆլորենցիայում, ինչպես Վենետիկում, Այվազովսկին մի քանի էսքիզներ անելուց հետո, Շտերնբերգի հետ բաժանվում են Գոգոլից, Պանաևից և Բոտկինից, որոնք ցանկանում էին այստեղ ավելի երկար մնալ։

Երկու ընկերները մեկնում են Սորենտո։ Այստեղ նրանք վարձում են հենց այն բնակարանը, որտեղ 17-րդ դարում ծնվել ու ապրել է իտալական վերածննդի շրջանի մեծ բանաստեղծ, «Երուսաղեմի ազատագրումը» հանրահայտ պոեմի հեղինակ Տորկվատո Տասսոն (1644—1695)։ Սորենտոյում Այվազովսկին նկարում է մի քանի պատկեր, ընտրելով հատկապես այն դիտակետերը, որտեղ իրենից առաջ նկարել էր ռուս նկարիչ Սիլվեստր Շչեդրինը (1791—1830)։

Օգոստոսի վերջերին Այվազովսկին մեկնում է Նեապոլ, որտեղ նա նկարում է «Գիշերը Նեապոլում» պատկերը։ Այնուհետև նա լինում է Ամալֆի ծովափնյա քաղաքում, ուր նկարում է «Ամալֆիի ծովափը» նկարը։ Այստեղ հրաժեշտ տալով Վ. Շտերնբերգին, Այվազովսկին մեկնում է Հռոմ։

ՌՈՒՍ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

1840 թ. սեպտեմբերի 2-ին Այվազովսկին ժամանում է Հռոմ։ Իտալիայի մայրաքաղաքը միաժամանակ ռուս արվեստագետների, ինչ-հանգամանքներ Իտալիայում ապրող կամ այս երկրում շրջագայող մտավորականության կենտրոնն էր,

[6] Նույն տեղ., էջ 424։

նրանց հավաքատեղին։ Այստեղ Այվազովսկին հանդիպում է բազմաթիվ ռուս նկարիչների, քանդակագործների, ճարտարապետների, գրողների ու այլ մտավորականների։ Նկարիչներից այստեղ էին Պ. Շամշինը, Ա. Իվանովը, Ֆ. Իորդանը, Ջավալյովը, քանդակագործներ Պիմենովը, Ստավասսերը, Լոգանովսկին, Կուդինովը, Տամարինսկին, Ռամազանովը և ակադեմիայի թոշակառու մյուս նկարիչները։

Ներկայանալով «ռուսական գաղութի» ղեկավարին՝ Այվազովսկին հաջորդ օրվանից սկսում է մոտիկից ծանոթանալ մայրաքաղաքին։ Ամբողջ սեպտեմբեր ամիսը Այվազովսկին անց է կացնում Հռոմում։ Այստեղ նա հիշում է, որ լրանում է իր առաջին և անմոռաց հովանավոր Ա. Ի. Կազնաչեևի ծննդյան տարեդարձը։ Այս առթիվ նա նկարում է բարերարի ընտանիքի հետ կապված իր կյանքի անցքերից մեկը՝ իրեն պատանի հասակում (12 տարի առաջ), Կազնաչեևների տանը այն պահին, երբ քաղաքապետը նվիրում է փոքրիկ Հովհաննեսին 12 ջրանկարներով արկղիկը։ Այդ պատկերը Այվազովսկին Հռոմից ուղարկում է Սիմֆերոպոլ, նվեր իր բարերարին նրա ծննդյան տարեդարձի կապակցությամբ։

Հոկտեմբերի սկզբներին Այվազովսկին մեկնում է Նեապոլ՝ բնությունից պատկերներ նկարելու համար։ Այս ժամանակ քաղաքը նրան շատ է դուր գալիս, և նա որոշում է այստեղ երկար մնալ։ Իտալական «Վալեռ» թերթը 1841 թ. հունվարի 9-ի համարում հաղորդում է, որ մեկ ամսվա ընթացքում Այվազովսկին Նեապոլում նկարում է 5 կտավ։ «Նեապոլի օրագրությանց ըստծին նայելով շատ վարպետությամբ քաշած է հիշյալ պատկերները»[1]։ Այդ ստեղծագործություններից առանձնապես հայտնի է «Նեապոլի նավատորմը Վեզուվ սարի տեսարանով» պատկերը, որն անմիջապես գնում է Նեապոլի թագավորը և, ինչպես գրում է նկարիչը, կախում է իր պալատում։ Այդ լուրը արագորեն տարածվում է քաղաքում և հետաքրքրասիրողների ու պատվիրատուների թիվը մեծանում է։ Այվազովսկին աշխատում է օրն ի բուն. նա կատարում է էտյուդներ անմիջականորեն բնությունից և միաժամանակ

---

1. «Արշալույս Արարատեան», 1841, № 18։

նկարում է հիշողությամբ։ Երկու ամսում նա այնքան շատ պատկերներ է նկարում, որ դրանց մի մասը մտածում է ցուցադրել 1841 թ. Հռոմում բացվելիք գեղարվեստական ցուցահանդեսում։ «Երկու ամիս է, ինչ գտնվում եմ Նեապոլում,— գրում է Այվազովսկին դեկտեմբերի 3-ին Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի վարչությանը,— այդտեղ ունեմ մի քանի պատկեր, որոնք Հռոմի ցուցահանդեսում ներկայացնելուց հետո կուղարկեմ Պետերբուրգ»[8]։

Այդ ժամանակ Այվազովսկուն է այցելում նկարչության կրքոտ սիրահար և գիտակ Կ. Ա. Վեկկին, որը հետո դարձավ Իտալիայի ժողովրդաազատագրական պատերազմի առաջնորդ Ջուզեպպե Գարիբալդիի թիկնապահը և համախոհ-մարտիկը։

Ջ. ԳԱՐԻԲԱԼԴԻԻ ԱՊԱԳԱ ԹԻԿՆԱՊԱՀԻ ՀՈԳՎԱԾԸ

Կ. Ա. Վեկկին, ինչպես ինքն է գրում, «Օգտվելով Այվազովսկու ունեցած բարեկամությունից», ուշադիր դիտելով արվեստանոցում եղած բոլոր նկարները և հիացած նկարչի ծովանկարներով, հոդված է հրապարակում «Վալեռ» թերթում, որտեղ նշելով Այվազովսկու վրձնի բեղմնավորությունը, գրում է. «Նեապոլի երկինքին և ծովին գեղեցիկ գույնը անանկ եռանդը մը տվավ անոր, որ Նաբոլի քաղաքին պատկերը՝ գիշերվան ատեն քաշեց ու լուսնի լուսով մեկ տեղ՝ անանկ նման և փայլփլացնող, որ կզմայլի տեսնողը։ Մյուս լմնցուցած նկարներուն մեջ ալեկոծությյան պատկեր մը կա, ուր տեղը բոլոր երկինքը մութ ամպերով պատած է ու մնացած մասը՝ ահագին ալիքներ (տալղաներ), միայն հեռուանց նավ մը կերևնա, կեսը ծածկված կատաղի ալիքներով ու ընկղմելու մոտ։ Կսեն թե արհեստավորի միտքը ան էր, որ ճշմարիտը ու բանաստեղծությունը մեկմեկու հետ խառնելով՝ սոսկումը տա նավին կորսվելուն համար. ուստի ով որ կգնէ աս պատկերը՝ գիտես թե զինքը թրջված կկարծե չուրին սոսկումեն։ Այվազովսքիին համար կպատմեն թե անատենը միայն պատ-

[8] «Документы...», էջ 50։

Երբ կրկին, երբոր ստիպված է իր աշխոյժ եռեւակայութեան, և ոգովհետև մտքին մեջ կտեսնայ ինչ որ պիտի նկարեն, թղթի մեջ տեսնելու պես, ուստի լավ գիտենալով հարկավոր ձողած ներկը կզարնե զանք կտավին վրա ու պատկերը իսկույն կելմնայ։ Պետք է, որ ամեն արհեստավոր ալ ասանկ ըլլայ»[9]։

Նույն հոդվածում Կ. Ա. Վեկկին գրում է. «Հազար անկեղծ գովասանք այդ պատկերների տաղանդավոր ստեղծողին, որը իր վրձինի արվեստով և բռնկուն հանճարով այդպես լիովին համապատասխանում է գեղարվեստի ու իր հայրենակիցների ակնկալութիւններին»[10]։

Կ. Ա. Վեկկին, որի հետ երիտասարդ նկարիչը հանդիպում է հետագայում ևս, առաջինը չէր, որ հրապարակորեն ու բարձրաձայն արտահայտվում է «Այվազովսկու տաղանդի մասին, մի կողմ թողնելով հազար ու մի անկեղծ գովասանքը»։ Նրա մասին արտահայտվում են իտալական շատ թերթեր։ Դրանցից էլ իմանում ենք, որ առաջին վեց ամսում, երբ նա գտնվում էր Իտալիայում կատարելագործման մեջ (Հուլիս-դեկտեմբեր, 1840 թ.), նկարում է շուրջ 13 պատկեր, որոնք համարյա բոլորն էլ վաճառվում են և տարվում օտար երկրներ։ Դրանով էլ պետք է բացատրել, որ այդ շրջանի ստեղծագործություններից ոչ մեկը չկա այժմ Խորհրդային Միության թանգարաններում։ Թերևս այդ նկատի ուներ նկարիչը, որ այնուհետև դառնում է ավելի զուսպ իր նկարները օտարերկրացիներին վաճառելու հարցում։

«ՔԱՈՍԸ» ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

1841 թ. գեղարվեստական ցուցահանդեսը Հռոմում բացվում է գարնան սկզբներին, դիմակահանդեսի ժամանակ։ Այդ ցուցահանդեսին մասնակցելու համար Այվազովսկին նեապոլից գալիս է մայրաքաղաք և այստեղ նկարում մի քանի նոր պատկեր, որոնցից մեկն էր «Քաոսը»։ Այդ պատկերի համար

---

9. «Արշալույս Արարատեան», 1841, №18։

10 «Художественная газета», 1841, № 11.

Գիմք է ծառայում Աստվածաշնչից քաղված այն տողերը, ուր ասվում է. «Եվ երկիր էր աներևույթ և Հոգի Աստուծոյ շրջեր ի վերայ ջրոց»[11], կտավը ներկայացնում էր խավարի մեջ երևացող ջրի հսկա ալիքի տեսարան, որի վրա արտացոլվել են երկնքի խավարում առկայծող «Հոգի Աստուծոյ» լույսի ճառագայթները։ Այս գործը «Փոթորիկ» ու «Նեապոլյան գիշեր» ծովանկարների հետ Այվազովսկին ներկայացնում է Հռոմի ցուցահանդեսում։

24 տարեկան նկարչի այդ երեք ծովանկարները Հռոմում, այնուհետև ամբողջ Իտալիայում մեծ աղմուկ են հանում։ Համարյա բոլոր թերթերը գրում և գովասանքով են արտահայտվում նկարչի ու նրա ստեղծագործությունների մասին։ «Հռոմի գեղարվեստական ցուցահանդեսում Այվազովսկու նկարները ճանաչվում են առաջինը,— գրում է իտալական թերթերից մեկը,— «Նեապոլյան գիշեր», «Փոթորիկ», «Քաոս» պատկերներն այնքան աղմուկ են հանում գեղեցիկ արվեստների քաղաքում, որ բարձրաստիճան անձանց սրահներում, հասարակական հավաքատեղիներում և արիստների ակումբներում հռչակվում է Ռուսաստանից եկած բնանկարիչը, թերթերը լցվում են շոայլ գովասանքներով, և բոլորը միաբերան հաստատում են, որ մինչև Այվազովսկին ուրիշ ոչ ոք այդպես ճիշտ ու կենդանի չի նկարել լույսը, օդը և ջուրը։ ...Քաոսի պատկերումը, ընդհանուրի կարծիքով, աշքի է ընկնում նոր գաղափարներով և ընդունվում է որպես արվեստի հրաշք»[12]։

Այդ օրերի Հռոմի գեղարվեստասեր հասարակայնության ընդհանուր տպավորության մասին է հաղորդում նաև նկարիչ Ա. Ա. Իվանովը, որը երիտասարդ նկարչի հետ ծանոթացել էր նախորդ տարում՝ Ֆլորենցիայում։ Մ. Բոտկինին ուղղած նամակում Իտալիայից նա գրում է. «Նեապոլի օրը» Հռոմում ընդհանուր հավանություն գտավ։ Այստեղ ոչ ոք ջուրը այդպես լավ չի նկարում։ ...Այվազովսկին.... նույնպես արագ է աշխատում, բայց լավ, նա բացառապես զբաղվում է ծովային

---

11 *Աստվածաշունչ, 1817, ս. Պետերբուրգ, էջ 1։*

12 «Художественная газета», 1841, № 11, *տե՛ս նաև* «Книга для чтения по истории искусства», *հ. 4, 1848, էջ 26—28։*

տեսարաններ նկարելով, և քանի որ այդ տեսակի մեջ այստեղ չկա ուրիշ նկարիչ, ուստի նրան փառաբանում և գովաբանում են»[13]:

Իտալիայում առաջին անգամ ցուցադրած ստեղծագործություններից մեծ ճանաչում է գտնում «Քաոսը», որը ընդունվեց, ինչպես ասացինք, «որպես արվեստի հրաշք»: Այդ նկարով հետաքրքրվում է նույնիսկ Հռոմի պապը: Իր կարդինալներից տեղեկանալով այդ ստեղծագործության բովանդակության և արվեստի մասին, Պապը ցանկություն է հայտնում տեսնել այն: Ցուցահանդեսից հետո այդ պատկերը տարվում է Վատիկան, և պապ Գրիգոր XVI-ը հավանելով, մտածում է գնել իր հավաքածուի համար: Սակայն Վատիկան հրավիրված երիտասարդ նկարիչը հրաժարվում է այն վաճառել և նվիրում է Պապին՝ Վատիկանի պատկերասրահի համար: Գրիգոր XVI-ը ընդունում է նվերը, կախել է տալիս Վատիկանում, ուր կարող էին մուտք ունենալ միայն մեծագույն արվեստագետների ստեղծագործությունները, իսկ Այվազովսկու վզից կախում է Վատիկանի ոսկե մեդալ, որը աշխարհականներին տրվում էր հազվադեպ:

Այդ լուրը անմիջապես տարածվում է արվեստագետների ու մտավորականների շրջանում, իսկ հետո՝ ամբողջ Հռոմում: «Ռուսական գաղութում» երիտասարդ արվեստագետի բարեկամները տոնական հանդիսավոր սեղան են բացում, որտեղ Գոգոլը այդ կապակցությամբ կենաց խոսք է ասում.

— Վանյա,— ասում է նա իր խոսքի վերջում,— եկար դու, փոքրիկ մարդ, Նևսկի ափերից և իսկույն «քաոս» ստեղծեցիր Վատիկանում...

Ընդհանուր ուրախության պահին Այվազովսկին փարվում է Գոգոլին: Վերջինս, ինչպես միշտ, կատակով բացականչում է:

— Տեսնու՞մ եք, պարոնայք, իմ վզին սրան կախեցին, իսկ Այվազովսկուն՝ ոսկե մեդալ[14]:

1841 թ. ապրիլի 30-ին ակադեմիայի կոնֆերենց-քարտու-

---

13 М. Боткин, А. А. Иванов, его жизнь и переписки, спб, 1880, Письма XXIV, XXVI:

14 Н. Н. Кузьмин, *նշվ. աշխ., էջ 25:*

ղար Վ. Ի. Գրիգորովիչին ուղարկած նամակում Այվազովսկին իր կողմից ևս հայտնում է, որ «Հռոմի հասարակությունը շատ մեծահոգաբար ընդունեց իմ պատկերները, բևեռում փառաբանվեցին չափից ավելի։ Այդ բոլորը ինձ, խոստովանում եմ, ուրախացնում է, բայց չկարծեք, թե դա կարող է ինձ վնասել։ Ես շարունակում եմ լրջորեն դիտել և ուսումնասիրել բնությունը։ ...Այժմ ես պետք է ամեն մի ֆիգուր, որը պետք է լինի իմ պատկերի մեջ, նկարեմ բնականից»[15]։

Հռոմի գեղարվեստական ցուցահանդեսում Այվազովսկու ունեցած հաջողությունը, ինչպես և Հռոմի պապի կողմից նրան ոսկե մեդալ շնորհելը, լայն ճանաչում են բերում նրան գեղեցիկ արվեստների այդ ավանդական քաղաքում։ Հետաքրքրությունը նկարչի ստեղծագործությունների նկատմամբ այնքան է մեծանում, որ ամեն մի նոր նկարի համար, ինչպես ինքն է հայտնում, «լինում են մի քանի գնորդներ»։ Հայրենասեր նկարիչը, սակայն, չի ցանկանում իր լավագույն աշխատանքները վաճառել օտարերկրացիներին, այլ ուզում է տալ այնպիսի անձանց, որոնք հետո դրանք կտանեն հայրենիք։ Այդ պատճառով էլ «Նեապոլյան գիշեր» և «Կեսօր» պատկերները, որոնց «...անգլիացիները տալիս էին 5000 ռ., ես չցանկացա վաճառել, այլ նրանցից մեկ՝ «Նեապոլյան գիշերը», տվեցի իշխան Գորչակովին 2000 ռուբլով, պայմանով, որ իր վերադարձին այն հանձնի ակադեմիային։ Նա ինձ խոստացավ այդ անել»[16]։

Սակայն Իտալիայում Այվազովսկու ծովանկարների նկատմամբ հետզհետե աճող պահանջը ստիպում է որոշ ժամանակ կատարել բարձրաստիճան խնդրողներին՝ օրնիբուն աշխատելով նրանց պատվերների վրա։ Այսպես. «Կեսօրը» առայժմ պահել եմ ինձ մոտ, երկու փոքրիկ նկար գնեցին անգլիացիները և տարան Լոնդոն, երկու փոքրիկ էլ գնեց կոմս Ենգլաֆլտեյնը և տարավ Բեռլին, իսկ մնացած երկուսը՝ կոմս Չիաչը Համբուրգից»,— տեղեկացնում է նկարիչը[17]։

---

15 «Документы...», էջ 52։

16 Նույն տեղ.։

17 Նույն տեղ.։

Մարտի 25-ին Այվազովսկին կրկին մեկնում է Նեապոլ՝ նոր ոյուժենեդով ստեղծագործելու համար։ Այստեղից ապրիլի 30-ին նա գրում է ակադեմիային. «Այն ժամանակվանից, ինչ ես գտնվում եմ Իտալիայում, նկարել եմ մինչև 20 մեծ ու փոքր պատկեր։ Դե, ինչ ասած, հնարավոր չէ անգործ մնալ, չնկարել, մեկ լուսինն է սքանչելի, մեկ էլ արևամուտը չքեղ Նեապոլում։ Ինձ թվում է, թե մեղք կլինի դրանց անուշադիր թողնելը, առավել ևս ինձ համար, որ ունի իր գլխավոր խնդիրը»[18]։

Այդ ժամանակ Նեապոլում էին նրա ընկերներից երկուսը՝ նկարիչ Վ. Շտերնբերգը և ճարտարապետ Ի. Ա. Մոնիգետտին։ Որոշ ժամանակ միասին անցկացնելուց հետո նրանք բաժանվում են իրարից տարբեր ուղղությամբ՝ Այվազովսկին մի քանի օրով մեկնում է Կաստելմարո, դրա շրջակայքի բնության տեսարաններից էտյուդներ անելու, ճարտարապետ Մոնիգետտին՝ Պոմպեյի ավերակները դիտելու և ուսումնասիրելու, իսկ Շտերնբերգը գնում է իր սիրած կեղտոտ լացատունի՝ Նեապոլի լյումպեն պրոլետարական թաղամասերը, կենցաղային պատկերներ նկարելու համար։

Մայիսի սկզբներին Նեապոլում բացվում է պատկերահանդես։ Վերադառնալով Կաստելմարոյից՝ Այվազովսկին նկարում է նոր կտավներ ցուցահանդեսի համար։ «Ես պատրաստում եմ երեք պատկեր դրա համար,— գրում է նկարիչը,— իսկ հետո ամառվա երեք ամիսներին պետք է միայն էտյուդներ անեմ բնությունից»։ Ապրիլի 30-ին Նեապոլից գրած նամակում նա միաժամանակ հայտնում է. «Ցանկություն ունեմ Սիցիլիա մեկնել, իսկ ձմռանը նորից գալ Նեապոլ»[19]։

Նեապոլում ցուցադրած ծովանկարները, ինչպես Հռոմում, չեմ ընդունելություն են գտնում ոչ միայն քաղաքացիների, այլև այստեղ այցելած զբոսաշրջիկների ու նկարիչների կողմից։ Իտալացի և օտարերկրյա շատ նկարիչներ, որոնք առաջ ծովային տեսարաններ չէին նկարում, այժմ սկսում են սիրով անդրադառնալ նկարչության այդ ժանրին։ Ուշագրավն այն է, որ Նեապոլում, Հռոմում և իտալական այլ քաղաքներում

---

[18] Նույն տեղ։

[19] Նույն տեղ։

երևան են գալիս ծովային տեսարաններ հետաքրքրական աշխատանքներ, որոնք հիշեցնում են Այվազովսկու ծովանկարները, իսկ որոշ նկարիչներ ուղղակի նկարում են Այվազովսկուն նմանողությամբ։ Այդ մասին է վկայում ռուս նկարիչ Ֆ. Ի. Իորդանը Իտալիայից գրած մի նամակում. «Այվազովսկին նոր էր եկել Հռոմ, որ նկարեց երկու պատկեր՝ «Անդորրը ծովում» և փոթորածավալ «Փոթորիկը»։ Հետո երևան եկավ նրա երրորդ պատկերը՝ «Ծովափը»։ Այդ երեք նկարները Հռոմում և նրա հյուրերի մոտ առաջացնում են համընդհանուր հետաքրքրություն։ Շատ նկարիչներ սկսում են նմանվել Այվազովսկուն։ Մինչ նրա գալը Հռոմում հայտնի չէր ծովանկարչությունը, իսկ նրանից հետո ամեն մի կրպակում երևում են ծովային տեսարաններ «Ա-լյա Այվազովսկի»։ Նրա փառքը դղրդում էր ամբողջ Եվրոպայով մեկ»[20]։

Նեապոլյան ցուցահանդեսը փակվելուց հետո Այվազովսկին մեկնում է Հռոմ, որտեղից Պետերբուրգ է ուղարկում իր աշխատանքներից մի քանիսը։ Այստեղ տեղեկանալով, որ Հռոմում է գտնվում Կովկաս աքսորված դեկաբրիստ Ն. Ի. Լորերի կրտսեր եղբայրը ընտանիքով, Այվազովսկին այցելում է նրանց և իր հարգանքը արտահայտելով դեկաբրիստի նկատմամբ, եղբոր կնոջ ալբոմում նկարում է մի պատկեր իր ստորագրությամբ։ Այդ ալբոմում իրենց ստորագրությամբ նկարներ էին արել նկարիչներ Մատվեևը, Մ. Վորոբյովը, Տ. Դեմոնը և ուրիշներ[21]։

Նույն ժամանակ Հռոմում գտնվող ռուս երիտասարդ նկարիչ Ա. Վ. Տիրանովը (1818—1859) նկարում է Այվազովսկու դիմանկարը և նվիրում ընկերոջը։ Այդ դիմանկարը Այվազովսկին ուղարկում է Պետերբուրգ՝ ցուցահանդեսի համար, իսկ ավելի ուշ գնում է Պ. Տրետյակովը իր պատկերասրահի համար։

Այդ ամբողջ ժամանակաշրջանում Այվազովսկին անխոնջ աշխատում է և միաժամանակ ուսումնասիրում է Իտալիայում գտնվող անտիկ արվեստի ու վերածննդի շրջանի մեծա-

---

[20] Ф. И. Иордан, Записки, М., 1918, էջ 19։
[21] «Старые годы», 1912, № 10—11, էջ 29։

գուշ արվեստագետների հանճարեղ ստեղծագործություններ։ Պետերբուրգ ուղարկած նամակներից մեկում նա հենց այդպես էլ գրում է. «Ես տեսա Ռաֆայելի ու Միքելանջելոյի ստեղծագործությունները, տեսա Կոլիզեյը, Պետրոսի և Պոզոլի նիկելները և այլն, և այլն։ Նայելով հանճարների ստեղծագործություններին, այդ հսկաներին, զգում ես քո ոչնչությունը։ Այստեղ մի օրը մի ամբողջ տարի արժե։ Ես մեղվի պես ծաղիկներից նեկտար եմ ծծում»[22]։

Համաշխարհային արվեստի հնագույն կենտրոններից մեկի՝ Հռոմի և ընդհանրապես Իտալիայի ողջ տարածքի վրա սփռված գեղարվեստական ճարտարապետության, նկարչության ու քանդակագործական հուշարձաններին մոտիկից ծանոթանալուց, նկարչի սուր դիտողականությամբ ուսումնասիրելուց և լավագույն ավանդները յուրացնելուց բացի, Այվազովսկին միաժամանակ այցելում է նշանավոր արվեստագետների արվեստանոցները, զրուցում նրանց հետ, ներկա լինում այդ վարպետների ստեղծագործական աշխատանքներին։ Հռոմում նա ծանոթանում է դասական նշանավոր քանդակագործ Բերտել Թորվալդսենի (1768—1844) հետ և այցելում նրա արվեստանոցը։ Թորվալդսենը անծանոթ անուն չէր նկարչի համար։ Դեռևս Պետերբուրգում ուսանելիս նա ոչ միայն լսել, այլև տեսել էր նրա մի քանի ստեղծագործություններից մի քանիսը։ Այդ ծանոթությունը և անձնական շփումը մեծ արվեստագետի հետ, զրույցները դասական արձանագործության ու քանդակագործության մասին նպաստում են երիտասարդ նկարչի ճաշակի հղկմանը, գեղարվեստական ըմբռնումների և լավագույն ավանդների յուրացմանը։ Ուշ կլասիցիզմի ականավոր ներկայացուցչի հետ երիտասարդ նկարչի շփումը, անշուշտ, անհետևանք չի մնում։ Բ. Թորվալդսենը, որի տաղանդի զարգացումն ընթացել է անտիկ քանդակագործության, իտալական Վերածննդի շրջանի նկարչության, մասնավորապես Ռաֆայելի արվեստի խորացմանն ուսումնասիրության ճանապարհով, կարող էր դառնալ և, իրոք, դառնում է լավագույն օրինակ հերթարվեստի բարձունքներին հասնելու համար։ Եվ Այվազովսկին ընթանում է այդ ճանապարհով։

---

22 «Русская старина», 1878, հ. 22, էջ 427։

1842թ. Այվազովսկին Իտալիայում շարունակում է ստեղծել նոր պատկերներ։ Դրանք կախելով իր արվեստանոցի պատերից՝ նա դարձնում է այն մի փոքրիկ պատկերասրահ իրեն այցելող ծանոթների ու պատվիրատուների համար։ Երբ մարտի 29-ին նրան է այցելում ռուս գրող Ֆ. Վ. Չիժովը (1811—1877), որը Իտալիայում գործող ռուս նկարիչների ու նրանց ստեղծագործությունների վերաբերյալ նյութեր էր հավաքում, Այվազովսկու արվեստանոցում արդեն կային 17 պատկեր։ Ֆ. Վ. Չիժովը գրանցում է դրանց անունները։ Ահա դրանք. «Փոթորիկ», «Նեապոլի ծովածոցը Մոլոի մոտ», «Գիշերը Նեապոլում ծովի կողմից», «Արևամուտը Նեապոլի ծովածոցում», «Ծովի խաղաղ վիճակը» (գնել է Գագարինան), «Նեապոլը լուսնի լույսով լուսավորված» (գնել է Տաշկևիչը), «Ծովը», «Նեապոլը լուսավորված», «Կապրիի ժայռերը», «Կապրի կղզու կապույտ քարանձավը», «Սորենտո», «Նեապոլի շրջակայքում», «Ամալֆի՝ փոքրիկ քաղաք Սորենտոյի մոտ» և այլն։ «Ահա մեր Այվազովսկու բոլոր նկարները,— գրում է ռուս գրողը հպարտության բարձր զգացումով,— ինչ հիացումով էինք ասում Հռոմում այդ «մերը», ինչպիսի հպարտությամբ էինք մենք նայում այդ «Russo» բառին, որը գրված էր նրա կտավների վրա Հռոմի ցուցահանդեսում և ինչպիսի բավականությամբ էինք մենք դիտում Հռոմի փողոցներում նրա պատկերներից կատարված պատճենները»[23]։

Զ. ԹՅՈՐՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

25-ամյա նկարչի տաղանդավոր ստեղծագործությունները իսկական հպարտություն և հիացմունք են պատճառում հայրենիքից այստեղ եկած ամեն մի հայ կամ ռուս մարդու, որը տեսնում է օտար երկնակամարում առկայծող հայրենական հանճարի փայլատակումները։

Այդ արվեստը հրճվանք է պատճառում նաև գեղեցիկը

---

[23] «Документы...», էջ 59։

հասկացող ու գնահատող օտար անձանց՝ ամենամեծ արվեստագետներին ու մշակութային շատ գործիչներին։ Դրա պերճախոս վկայությունն է անգլիացի մեծ ծովանկարիչ Ժուզեֆ Մալլորդ Ուիլյամ Թյորների (1775—1851) անկեղծ ու սրտառուչ հիացմունքը երիտասարդի արվեստի նկատմամբ։ Այդ ժամանակ Իտալիայում շրջագայող անգլիացի նկարիչը տեսնելով Այվազովսկու ստեղծագործությունները, մասնավորապես «Նեապոլի ծովածոցը լուսնյակ գիշերին» պատկերը, այնքան է ուրախանում ու ոգևորվում, որ հիացմունքի խոսքերով իտալերեն մի ներբող-բանաստեղծություն է գրում և նվիրում երիտասարդ նկարչին, անվանելով նրան հանճար։ «Ձո արվեստը բարձր է ու զորեղ, որովհետև քեզ ոգևշնչում է հանճարը»,— գրում է նա իր բանաստեղծության մեջ։

«Նեապոլի ծովածոցը լուսնյակ գիշերին» պատկերի մեջ,— գրում է 67-ամյա նկարիչ Թյորները 25 տարեկան Այվազովսկուն,— ես տեսնում եմ ոսկյա-արծաթագույն լուսնյակը, որը կանգնած է ծովի վրա և արտացոլվել է ջրերի մեջ։ Ծովի մակերեսը, որի վրա թեթև քամին առաջացրել է թրթռուն կոհակներ, թվում է փոքր կայծիկների դաշտ կամ մեծ թագավորի պատմուճանի մետաղյա փայլքեր... Ների՛ր ինձ, մեծ նկարիչ, եթե ես սխալվեցի (պատկերը իրականության տեղ ընդունելով), բայց քո ստեղծագործությունը դյութեց ինձ, և հիացմունքը տիրապետեց ինձ։ Ձո արվեստը բարձր է ու հզոր, որովհետև քեզ ոգեշնչում է հանճարը»։

Ահա այդ բանաստեղծության իտալերեն բնագիրը.[24]

Come tenda che si lieva
E si ferma alla metà
Come duol che mezzo allieva
La speranza di piacer;
Si la notte il cielo abbruma
Della placida città
Ed il raggio della luna
Ne rischiara ogni sentier!
Dalla via ch'a Margellina
Sta sa dosso a cavalier,
Guarda tutta la marina
Ed un sogno ti parra.

---

24 «Русская старина», 1873, հ. 22, էջ 131։

Quelle case, quel Vulcano,
Taciturne quel pensier
Distuanno un senso arcano
Che anch il di non cacieral
Quella luna d'oro e argento
Sopra il mar' si specchia e stà,
Onde il mar' ch'un leggier vento
V'a incessando innanzi a tè
Sembre un campo di scintille
Che la spuma accende e va,
O metalliche faville
Sopra il manto d'un gran' rè...
Ma di giorno che raggiona
Quella luna è bassa ognor!
Somma artista, mi perdona
Se un artista s' ingannó!...
Nel delizio della mente
Mi sedusse il tuo lavor
L' arte tua ben' e potente
Perche il genio t' inspiról...

Որքան էլ շոյիչ էր իսկական արվեստը հասկացող մարդկանց մեծարանքը իր տաղանդի նկատմամբ, այնուամենայնիվ Այվազովսկին հասկանում էր, որ պետք է անընդհատ աշխատել ու կատարելագործվել։ 1842 թ. ապրիլի 30-ին գրած մի նամակում նա հենց այդպես էլ արտահայտվում է. «ես մշտապես զբաղվում եմ իմ արվեստով և գործադրում եմ բոլոր ջանքերս կատարելագործվելու համար»։ Այդ նամակի հետ նա Պետերբուրգ է ուղարկում չորս կտավ՝ «Կապրի կղզին լուսնյակ գիշերին», «Իսկիա կղզին արևամուտին», «Նեապոլ», և «Անդորր»։ Վերջինս գնել էր իշխանուհի Ի. Ա. Գագարինան։

Հովհ. Այվազովսկու ուղարկած պատկերները հետագայում ցուցադրվում են Պետերբուրգի գեղարվեստական ցուցահանդեսում և լավ արձագանք են գտնում մամուլում։ «Դառնանք սկզբում Այվազովսկուն,— գրում է ռուսական ամսագրերից մեկը,— նրա գործերը թողնում են առանձնահատուկ տպավորություն. նա խորապես զգում է բնությունը, հիանալի որսում է ջրի խաղերը և նրա երանգների փոփոխությունները։

Նա անսովոր տաղանդ է։ Այվազովսկին ծովը զգում է կրքոտ, իր ամբողջ էությամբ»[25]։

Մայիսին Այվազովսկին մտադրվում է ճանապարհորդել դեպի Հոլանդիա և Անգլիա, «որպեսզի տեսնեմ,— ինչպես նա է գրում,— ծովափնյա վայրեր և հայտնի ծովանկարիչների ստեղծագործությունները»[26]։ *Այդ նպատակով նախ մեկնում է Ջենովա, ապա՝ Վենետիկ, որտեղ ռուսական կոնսուլ Գ. Գենցիբեյգոնկի մոտ տեսնում է հայտնի հին վարպետների գծանկարների բնօրինակների մի հավաքածու։ «Ես տեսա դրանք և հիացմունքի մեջ եմ»,— գրում է նկարիչը, ավելացնելով, որ ինքը այժմ կատարյալ «առողջ է և երջանիկ բոլոր տեսակետից»*[27]։ *Ա. Ռ. Տոմիլովին գրած մի այլ նամակում նույնպես ասում է. «Այժմ, փառք աստծու, ես միանգամայն երջանիկ եմ ամեն ինչով, բոլորը ցանկանում են ինձ հետ ծանոթանալ։ ...Ես երջանիկ եմ նրանով,— շարունակում է նա,— որ բնությունը օժտել է ինձ շնորհալիությամբ և բարի կամեցողների առաջ ինձ արդարացնելու ուժով»*[28]։

Այդ երջանկության զգացումը պայմանավորված էր իր ստեղծագործությունների ունեցած հաջողությամբ։ Իսկապես, երիտասարդ նկարչի ամեն մի նոր նկար ջերմությամբ էր ընդունվում ամենուրեք։ Վենետիկում այս անգամ նկարած կտավները, մանավանդ «Լուսնյակ գիշերը», Այվազովսկու խոստովանությամբ, «համընդհանուր հիացմունք պատճառեցին», իսկ իտալական մի ամսագիր գրում է. «Հենց միայն «Առագաստանավը Միջերկրական ծովում» պատկերի օրինակով կարելի է, անկասկած, ընդունել նկարչի մեջ հանճարեղություն»[29]։

---

25 «Отечественные записки», 1942, № 25, *էջ 25։*

26 «Документы...», *էջ 60։*

27 *Նույն տեղ., էջ 63։*

28 *Նույն տեղ., էջ 64։*

29 «Il voglio», *1842, № 34, տե՛ս նաև* «Русская старина», 1878 *հուլիս, էջ 432։*

Իր կյանքի պատմությունը անելիս Այվազովսկին վերհիշում է մի այսպիսի դեպք, որ շատ բնորոշ է նկարչի համար։ «Վենետիկում ինձ հետ ծանոթացավ մի մարկիզ, որը հիացած էր իմ պատկերներով և թափում էր դրանց վրա ամենահիացական գովասանքներ... Այդպիսի գովասանքից հետո մարկիզը անցավ թափանցիկ ակնարկի այն մասին, որ իր եղբայրը Բոլոնիա քաղաքում ունի երշիկի հարուստ ֆաբրիկա, կրքոտ կերպով սիրում է նկարչությունը։

— Եթե նա համարձակվի առաջարկել Ձեզ,— ասում է վերջապես մարկիզը,— Ձեր պատկերներից մեկի դիմաց իր արտադրությունից որևէ բան տալ...

— Ինչու՞ չէ,— պատասխանեցի ծիծաղալով,— ես շատ եմ սիրում ապուխտ, երշիկներ և նրբերշիկներ, հատկապես բոլոնյան արտադրության...

— Per Baceho! *բացականչեց մարկիզը. ուրեմն Դուք չե՞ք հրաժարվում իմ եղբորը ուրախացնելուց...*

Նույն օրը ես նկարեցի ոչ մեծ չափի մի նկար, որը մարկիզը ուղարկեց իր եղբորը։ Որոշ ժամանակ անց շնորհակալ երշիկագործը ուղարկեց ինձ իր արտադրանքի հսկայական քանակություն։ Իսկապես, առաջնակարգ արտադրություն էր...»[30]։

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1842 թ. մայիսի վերջերին Այվազովսկին մեկնում է նոր ճանապարհորդության։ Նա լինում է Շվեյցարիայում, Հռենոս գետով նավարկում է մինչև Հոլանդիա, որտեղ նա այցելում է նկարիչների արվեստանոցները և դիտում մասնավոր հավաքածուներ։ Նրան առանձնապես գրավում էին հոլանդացի ծովանկարիչների ստեղծագործությունները, որոնք, ինչպես

[30] «Русская старина», 1878, *էջ 432։*

գրում է մի նամակում, «ինձ համար հետաքրքրական էին»[31], «ես տեսա շատ հրաշքներ»,— գրում է նա մի այլ նամակում[32]։

Հոլանդիայից նա մեկնում է Լոնդոն, որտեղ տեսնում է... «բոլոր հիանալի վայրերը և նավահանգիստները։ ...Լոնդոնում,— գրում է նա իր զեկուցագրում,— կան շատ մանրիստներ, բացառությամբ Վիլյեի, որից ես հիացած եմ և ոչ մի բան ինձ այնքան չուրախացրեց այս ճանապարհորդության ընթացքում, որքան այդ մեծ նկարիչը։ Բարեբախտաբար երբ ես Լոնդոնում էի, ցուցադրվում էին այդ նկարչի ստեղծագործությունները, նա վերջերս էր մեռել։ Հավատացեք,— գրում է նա Վ. Ի. Գրիգորովիչին,— նրա մի քանի նկարների առաջ ես ծիծաղում էի խեղդվելու չափ լուրջ անգլիացիների շրջանում, իսկ ուրիշ պատկերների առաջ լալիս էի երեխայի պես։ Խոստովանում եմ անկեղծորեն՝ ոչ ոք ինձ այդպես չի զարմացնում, որքան այդ նկարիչը։ Նրա բոլոր պատկերները տարբեր տեսակի են, բայց մեծ մասամբ սիրում եմ Վիլյիին ուրիշներից ավելի, առաջնակարգ նշանակություն եմ տալիս այն ամենին, ինչ ես գիտեմ այդ տեսակի մեջ»[33]։

Լոնդոնից նա Պետերբուրգ է ուղարկում այստեղ նկարած երեք կտավ ցուցահանդեսի համար։ Ջորս նկար էլ խոստանում է ուղարկել Համբուրգ, այնտեղ բացվող ցուցահանդեսին։

Հուլիսի սկզբներին Լոնդոնից Այվազովսկին մեկնում է Փարիզ։ «Այստեղ ինձ լավ ընդունեցին լավագույն նկարիչներ Գյուդենը և մյուսները»[34] ,— գրում է Այվազովսկին Ա. Ռ. Տոմիլովին Փարիզ գալուց 20 օր հետո։ Հիշելով իր նախկին ֆրանսացի ուսուցչին, Այվազովսկին գրում է «Տանները այստեղ չէ։ Այստեղ նրան ոչ ոք տանել չի կարողանում, բոլորի հետ բնչ-որ բան է»[35]։

Հովհ. Այվազովսկին Փարիզում մնում է մոտ մեկ ամիս։ Այդ ժամանակաշրջանում նա ծանոթանում է ֆրանսիացի ու

---

31 «Документы...», էջ 65։

32 Նույն տեղ, էջ 65։

33 Նույն տեղ, էջ 68։

34 Նույն տեղ, էջ 65։

35 Նույն տեղ, էջ 69։

օտարերկրացի շատ նկարիչների ու նրանց ստեղծագործությունների հետ, հատկապես ծովանկարիչների գործերին՝ հարստացնելով իր գիտելիքները։ Այստեղ նա ծանոթանում է նշանավոր մենապարուհի Մարիա Տալիոնիի հետ, որը եղել էր Պետերբուրգում, բայց ինքը այնտեղ չէր վայելել նրա աքանչելի պարերի հրապույրը։

Մոտիկից ծանոթանալով ֆրանսիական ժամանակակից նկարչությանը, մասնավորապես ծովանկարներին, Այվազովսկին մտածում է, որ կարելի է նրանցից լավ նկարել։ Ա. Ռ. Տոմիլովին 1842 թ. հուլիսին Փարիզից ուղարկած նամակում նա գրում է. «Ուզում եմ իմ նկարները կրկին ուղարկել այստեղի ցուցահանդեսը, որ խնդրում են ինձնից շատ քաղաքացիներ։ Հավանաբար ես չեմ կարող այստեղ ունենալ այն առաջնակարգ փառքը, ինչ ինձ տրվեց Իտալիայում, բայց համենայնդեպս թող ինձ քննադատեն, քանի դեռ երիտասարդ եմ, իսկ ես ուզում եմ մրցել ֆրանսիացիների հետ»[36]։

Այդ մրցությանը պատրաստվելու համար Այվազովսկին սկսում է ավելի լուրջ աշխատել։ Նա հենց այդպես էլ գրում է իր բարեկամին. «Հինգ օր հետո մեկնելու եմ Մարսել և հետո՝ Նեապոլ. նորից լուրջ պարապելու համար»։

Հուլիսի 25-ին Այվազովսկին Մարսելից մեկնում է Նեապոլ, ապա հանգրվանում է Վենետիկում։ Այստեղ նա մնում է ավելի քան երկու ամիս։ Հոկտեմբերի 26-ին Վ. Ի. Գրիգորովիչին ուղղած նամակում գրում է. «Ջորս ամսվա ճանապարհորդությունից հետո հանգստանում եմ այս խաղաղ քաղաքում։ Ես այստեղ շատ աշխատեցի և նկարեցի էսյուդներ, իսկ այժմ, երբ եղանակները փչանում են, սկսում եմ պատկերներ նկարել և բավական բարդ սյուժեներով։ ...Այն բոլորը, ինչ ես նկարում եմ այժմ, ցանկանում եմ ցուցադրել Փարիզում և հետո ուղարկել Պետերբուրգ, եթե կլինի Ձեր համաձայնությունը։ Ես շատ բավարարված եմ, որ կատարել եմ այդ ճանապարհորդությունը, ես այժմ ավելի լավ կարող եմ տեսնել իմ թերությունները»[37]։

---

36 Նույն տեղ, էջ 65։

37 Նույն տեղ, էջ 68։

Օգոստոս ամսին Վենետիկում բացվում է գեղարվեստական ցուցահանդես։ «Այստեղ գալուց անմիջապես հետո ես նկարեցի մի նկար և ցուցադրեցի,— գրում է Այվազովսկին,— այդ գործը շատ դուր եկավ վենետիկցիներին»[38]։Իտալացի հայտնի բանկիր, մեծահարուստ, պատկերների հավաքածու ունեցող Տրեվիզոն հրավիրում է նրան իր մոտ և նոր կտավների պատվեր տալիս։ «Ես նրա համար նկարեցի երկու պատկեր»,— ասում է նկարիչը[39]։

ՈՒՂԵՐՁ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԿԱՐՉԻՆ

Սեպտեմբերի սկզբներին Այվազովսկին երկրորդ անգամ մեկնում է ս. Ղազար կղզին՝ Մխիթարյանների միաբանություն, իր եղբոր՝ Գաբրիելի հետ տեսակցելու։ Մխիթարյանները հայրենակից համբավավոր նկարչին ջերմությամբ են ընդունում և նրա պատվին կազմակերպում են ճաշկերույթ։ Ինչպես նախորդ, այս անգամ ևս Այվազովսկին հորդորում է իր ավագ եղբորը հայրենիք վերադառնալ, տեսակցել ծնողներին։ Այս փաստը հաստատում է նաև Միաբանության աբբահայր Ս. Սոմալյանը, որը այդ հանդիպումից 10 օր հետո գրում է. «Ճարտար պատկերահանը թախանձանք մ' էր հայտնած միաբանությանը, որ հրաման տրվի իր եղբոր, որ հայրենիք այցելե... քանզի եղբայր նորա Հովհաննէս անընդհատ է հորդորել զնըբայրն և մեզ թախանձել զի թողուցանեմք առ ժամանակ մի գայ այդր, և տեսանել զընտանիսն որք յոյժ կարոտով են սորա»[40]։

Սակայն Մխիթարյան միաբանությունը դարձյալ արգելակում է Գաբրիել Այվազյանի այցելությունը հայրենիք, նկատի ունենալով երիտասարդ գիտնականի չափազանց զբաղվածությունը և կարևորությունը ս. Ղազար վանքում։ Արդեն մագիստրոսի աստիճան ունեցող հայ գիտնականը շարունակում է

---

38 Նույն տեղ, էջ 69։

39 Նույն տեղ, էջ 68։

40 Նույն տեղ, էջ 322։

մնալ ու աշխատել ս. Ղազար կղզում։ Մխիթարյանների մատենադարանում նկարիչը ուշագիր ու մանրամասնորեն ծանոթանում է հայոց հին ձեռագիր գրքերում եղած մանրանկարներին։ Առանձնապես ուժեղ տպավորություն են թողնում Մլքե թագուհու (10-րդ դար) ձեռագրի մանրանկարները, որոնց թարմ, տաք և կենսուրախ գույները մոտիկ ու հարազատ են թվում իրեն։ Նրան պատմում են ս. Ղազար վանքն այցելած անգլիացի մեծ բանաստեղծ Բայրոնի այցի, նրա հայասիրության, Հունաստանի ազատագրության համար թուրքերի դեմ մարտնչելու և հերոսաբար զոհվելու պատմությունը։

Կղզուց հեռանալիս նա Մխիթարյան միաբանությանը նվիրում է «Վենետիկի փարոսը» պատկերը։ Այդ կապակցությամբ աբբահայր Ս. Սոմալյանը Միաբանության անունից սեպտեմբերի 3-ին գրում է. «Առ ազնուական և մեծանուն պարոն Հովհաննէս Այվազովսկի» շնորհակալական ուղերձ, ուրտեղ ասվում է. «Ազնիվ պարոն. ...Մեր հասարակութեան վրա ցրցուցած սիրուն ու երախտացը փոխարէն մեր փոխադարձ սերը և շնորհակալությունըն ալ պակաս չէր եղած ու պիտի չըլլա։ Իսկ հիմա հրամանքիդ հրաշալի հանճարոյն նոր ծնունդը մեր վանքին պարգևելովդ՝ կպարտավորես զմեզ, որ մեզ հաջորդները որ այս անմահական գործդ մեր աչքին առջևը ունենալով, հավիտեան չի մոռանանք հրամանքիդ սերն ու պատիվը։ Ուստի կը խնդրեմ, որ այս շնորհակալության խոսքերը ինչ արտէ որ առաջ եկած են՝ նույն սրտով ընդունիս մեր վանքին կողմանէ. գիտենաս, որ մենք միշտ կը պարծենանք հրամանքիդ տաղանդովը՝ ազնվությամբը ու բարեկամությամբը և միշտ աղոթող ենք առողջութեանդ ու երջանկութեանդ համար»[41]։

Շփումը հայ հոգևոր ու մշակութային գործիչների հետ, ազգային պատմությանը, գրականությանն ու մանրանկարչական արվեստին ծանոթանալը հեռավոր Իտալիայում ավելի ու ավելի են ամրապնդում օտարության մեջ գործող երիտասարդ նկարչի մերձեցումը հարազատ ժողովրդին և նրա գեղարվեստական մշակույթին։

---

41 Նույն տեղ, էջ 66։

Վերադառնալով Վենետիկ՝ Այվազովսկին այստեղ մնում է մինչև ուշ աշուն։ Նա իր ազատ ժամանակն անց է կացնում Ռուսաստանից այստեղ եկած արվեստագետների, հատկապես իր նկարիչ քնկերների հետ։ Նրանցից այստեղ էին նկարիչներ Նիկոլայ Բենուան, Արխիպ Էյինգերը, Միքայել Սկոտտին, Էլսը և ուրիշներ։

«ԳԵՂԵՑԻԿ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՄ ՈՒՆԵՑԱԾ ԲՈՑԱՎԱՌ ՍԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼ Է ԻՆՁ ԱՄԵՆ ՄԻ ԳԱՑԹԱԿՂՈՒԹՅՈՒՆԻՑ»

1842 թ. հոկտեմբեր ամսին Այվազովսկին, ռուս թագավորի համաձայնությամբ, թույլտվություն է ստանում «մեկնել Փարիզ և մի քանի մեծ ծովանկարներով (որոնք նա այժմ նկարում է) մասնակցել փարիզյան ցուցահանդեսին, իսկ իրեն թույլատրել մի քանի ամիս մնալ Փարիզում՝ ծովանկարչության մեջ կատարելագործվելու նպատակով»[42]։

Հովհ. Այվազովսկին Փարիզ է մեկնում դեկտեմբերին, ծածկած կառքով (դիլիժանս)։ «1842 թ. աշնանը ,— պատմում է նկարիչը այդ ճանապարհորդության մասին,— ես պետք է մեկնեի Փարիզ ցուցահանդեսի համար։ Մտնելով դիլիժանսների կայանի գրասենյակը Ջենովայում՝ ես հանդիպեցի այնտեղ մի շատ գեղեցիկ երիտասարդ տիկնոջ, որի դեմքը ինձ, կարծես, ծանոթ թվաց։ Ուշադիր դիտելով, ես հիշեցի, որ այդ տիկնոջը տեսել եմ Հռոմում, կարնավալի ժամանակ։ Այդտեղ՝ դիլիժանսների գրասենյակում, ես իմացա, որ այդ տիկինը ավստրիական լեհուհի է՝ կոմսուհի Պիտոցկայա։ Նա նույնպես, ինչպես և ես, գնում էր Միլան և, միանգամայն պատահաբար, պետք է դիլիժանսի մի բաժնով մեկսին մեկնեինք։ Երրորդ ուղեկիցը ֆրանսիացի ինչ-որ մանկավարժ էր։ Ճանապարհին այդ կոմսուհին (շատ սիրալիր և խելոք զրուցակից էր) խոսակցություն սկսեց քաղաքականությունից և, որպես իսկական լեհուհի, ոչ այնքան բարյացա-

42 Նույն տեղ, էջ 67։

կամ էր արտահայտվում մեր ռուսների մասին, քանի որ նա չգիտեր, թե ես ինչ ազգի եմ պատկանում։ Ջրանսիայի, ինչպես որ պետք էր սպասել, նրա կողմն էր պահում, և ինձ մեռում էր պաշտպանել մեր հայրենիքը նրա երկու քշնամիների կատաղի հարձակումներից։ ...Հասանք Միլան, ֆրանսիացին չքացավ, իսկ իմ ուղեկցուհին միանգամայն սիրալիր դիմեց ինձ և հարցրեց.

— Ո՞ր հյուրանոցում եք մտադիր մնալ։

Ես պատասխանեցի, և նա էլ իր համար տեղ վերցրեց նույն այդ հյուրանոցում մի հարկ բարձր կամ ցածր։ Հաջորդ օրը կոմսուհին իր սպասավորուհու միջոցով հրավիրում է ինձ իր մոտ նախաճաշին սուրճ խմելու։ Նախաճաշից հետո մենք գնացինք դիտելու Միլանի տաճարը, որտեղ նա իր գեղեցկությամբ գրավում էր շատ իտալացիների ու զբոսաշրջիկների ուշադրությունը։ Տաճարը դիտելուց հետո կոմսուհին չափազանց սիրալիր հրավիրում է ինձ իր հետ ճաշելու։ «Աղ ու հացդ հանցանքը հրաժարվում է» մտածեցի ես և ընդունեցի հրավերը։ Հավանաբար տրամադիր լինելով ինձ սիրահետող կամ covallere-servente դարձնել, նորին պայծառափայլությունը հրավիրում է ինձ ճաշից հետո էլ ուղեկցել իրեն վարձու կառքով զբոսնելու... Այդ էլ կարելի է, մտածեցի ես։ Երկուերեք ժամվա չափ զբոսնեցինք աննկատելի, որից հետո կոմսուհին հրաժեշտ տվեց և նույն երեկոյան մեկնեց Վիեննա։ Իսկ ես երկու օրից հասա Փարիզ, որտեղ գտա իմ հոռոմացի բարեկամ Վեկկիին, որը սիրով համաձանեց դառնալ իմ էքզկուրսավարը Ջրանսիայի մայրաքաղաքում։ Մի անգամ զբոսնելով քաղաքային այգում, ես հանդիպեցի մեր ընդհանուր բարեկամին, լեհ Տ-ցկուն, որի հետ հաճախ էինք ճաշում Նեապոլում։ Այնտեղ Տ-ցկին ինձ հետ շատ քնքուշ էր և զբուցասեր։ Այստեղ՝ Փարիզում, սակայն, չի պատասխանում բարևներիս։

— Ի՞նչ է նրա հետ պատահել,— հարցրի Վեկկիին։

— Նա վրդովված է Զեզանից,— ծիծաղելով պատասխանում է իտալացին,— և մտադրություն ունի Զեզ մենամարտի հրավիրել։

— Ինչի՞ համար, ի՞նչ առիթով։

— Ասաված գիտե։ Ինչ-որ մեկից նա իմացել է, որ Գուբ

Ջենովայից Փարիզ եր բերել այն տիկնոջը, որին սիրահետում էր այդ լեհը արդեն մի քանի տարի, որի համար էլ մեկնել էր Իտալիա։ Այո՛, նա լրջորեն է մտածում մենամարտի մասին, բայց չգիտի ինչպես անել։

Լեհական Օթելլոի խոնդը ինձ ծիծաղեցնում էր արցունք թափելու չափ։ Հաջորդ օրը հանդիպելով Տ-ցկուն սրաճարանում, ես մեղմորեն հարցրի նրա վրդովմունքի պատճառը։ Լեհացին ուղղակի պատասխանեց, թե ես Պիտոցկայային բերել եմ Փարիզ։ Նման թյուրիմացությունը պարզելը հեշտացավ այնքանով, որ Փարիզում ես իշհանել էի մի հյուրանոցում Վեկկիի հետ, նաև կոմսուհին Ջենովայից մեկնել էր Միլան։ Տ-ցկին ուրախացավ և հանգստացավ։ Ես և Վեկկին սրտանց ծիծաղում էինք այս անմեղ ռոմանտիկական արկածի երգիծական վախճանի վրա, միակը իմ արտասահմանում եղած ամբողջ ժամանակաշրջանում։ Իմ բռցավառ սերը արվեստի նկատմամբ պաշտպանել է ինձ ամեն մի գայթակղությունից[43]։

«ՈՒՂՈՒՄ ԵՄ ՄՐՑԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻՆԵՐԻ ՀԵՏ»

1842 թ. հուլիսին Փարիզում ծանոթանալով ֆրանսիական արվեստին, մասնավորապես ծովանկարչությանը, Հովհ. Այվազովսկին, ինչպես արդեն նշել ենք, գրել է. «Իսկ ես ուզում եմ մրցել ֆրանսիացիների հետ»։ Այդ ոգով տոգորված՝ նա էքստեմբեր ամսին Իտալիայից մեկնում է Փարիզ։

Հովհ. Այվազովսկին Փարիզ է տանում Վենետիկում նկարած երեք մեծ պատկեր, որոնք ցուցադրվում են Լուվրի պալատում բացված համաշխարհային ցուցահանդեսում։ Այստեղ ռուսական արդի նկարչության բաժինը ներկայացնում էր միայն Այվազովսկին[44]։ *1843 թ. Փարիզի ֆրանսիական ազգային գեղարվեստական հանրահայտ թանգարանի հիմնադրման 50-ամյակի տարեդարձի առիթով (1793—1843) բացված ցուցահանդեսում Այվազովսկու այդ ստեղծագործու-*

---

43 «Русская старина», *1878, հուլիս, 434—436։*

44 «Документы...», *էջ 70։*

թյուններն արտակարգ հետաքրքրություն են առաջացնում։ Այվազովսկին Փարիզից մայիսի սկզբներին գրում է. «Դրանք չէին կարող մեծ էֆեկտ ստեղծել իրենց համեստ չափերով, բայց ընդհանրապես դուր եկան։ ...Փարիզում իմ ունեցած հաջողությունների ապացույց է նաև նկարներ վաճառողների պահանջը։ Նրանք խնդրում են ինձնից նկարներ և մեծ գումարներ են վճարում և իրենք էլ նշանակում են այնպիսի գներ, ինչպիսին վաճառվում են Գյուդենի գործերը։ Մի խոսքով, բանկ են գնահատում իմը։ Այդ բոլորն ինձ ուրախացնում է և հավաստում, որ ես նրանց հայտնի եմ շատ լավ կողմերով։ Բայց բավական է պարծենալ,— ավելացնում է Այվազովսկին,— այժմ կասեմ գլխավորը. այդ բոլոր հաջողությունները հասարակության մեջ դատարկ բաներ են։ Դրանք ինձ ուրախացնում են վայրկենապես և այդքանը միայն, իսկ իմ գլխավոր երջանկությունը դա իմ հաջողությունն է կատարելագործման մեջ»[45]։

Բարձր գնահատելով 26-ամյա Այվազովսկու ծովանկարները՝ Փարիզի թագավորական գեղարվեստի ակադեմիան «գերազանց ստեղծագործության համար» նկարչին պարգևատրում է ոսկե մեդալով[46]։ *«Ձեր տաղանդը փառաբանում է Ձեր հայրենիքը»,— ասում է ֆրանսիացի հայտնի նկարիչ Օրաս Վերնեն (1789—1863)*[47], *իսկ Փարիզում գտնվող իտալացի կոմպոզիտոր Գաետանո Դոնիցետտին (1797—1848) 1843 թ. հուլիսին գրում է նրան ողջույնի երկտող, որի մեջ արտահայտում է իր «Հարգանքը և շնորհակալությունը» երիտասարդ նկարչի բարձր արվեստի համար*[48]։ *Ռուս նկարիչ Ֆ. Ի. Իորդանը, որն այդ ժամանակ գտնվում էր Փարիզում, գրում է. «Նույնիսկ ինքնապաստան՝ իր արժանիքների վրա չափազանց վստահ, Փարիզը հիացավ նրա կտավներով։ Արևածագ կամ արևամուտ պատկերող նրա նկարներից մեկը այն աստիճան կենդանի և ճշգրիտ է նկարված, որ ֆրան-*

---

45 Նույն տեղ, էջ 70։

46 Նույն տեղ, էջ 137։

47 «Одесский вестник», 1846, № 6, էջ 49—50։

48 «Искусство», ж., 1942, № 2, էջ 69։

ախացիները կասկածում էին, չկա՞ այստեղ աշքակապություն, արդյոք պատկերի հետևում մոմ կամ ճրագ չէ՞ դրված»[49]:

Փարիզում ունեցած հաջողությունները բնավ չեն հանգստացնում մեր նկարչին: Նա առաջվա պես շարունակում է փորձարկել իր արվեստը և ստեղծում է նոր պատկերներ, որոնք մեկը մյուսին գերազանցում են իրենց նոր բովանդակությամբ և արվեստով: «Փարիզում,— գրում է նա,— ես նկարեցի փոթորիկի երկու մեծ պատկեր և լիովին ավարտեցի. հուսով եմ, որ դրանք լավագույնն են այն ամենի համեմատությամբ, ինչ արել եմ մինչև այժմ: Ափսոսում եմ, որ դրանք չհասցրեցի մենչև ցուցահանդեսը: Սեպտեմբերին այդ բոլորը կուղարկեմ Պետերբուրգ: Այժմ ես մտածում եմ նկարել մի մեծ պատկեր՝ փոթորիկ, որը տեղի է ունեցել վերջերս Աֆրիկյան ծովում, ափերից շատ հեռու: 8 մարդ 45 օր կառչած են մնացել ջարդված նավի բեկորին, մանրամասները սարսափելի են, նրանց փրկում է ֆրանսիական երկկայմ առագաստանավը (բրիգ): Այդ մասին վերջերս գրվեցին թերթերում: Այժմ ես շատ եմ զբաղված այդ սյուժեով և հույս ունեմ ցույց տալ Զեզ սեպտեմբերին, Պետերբուրգում»[50]

Փարիզում Այվազովսկին ծանոթանում և շփվում է ռուս և հայ անվանի գործիչների հետ, այդ թվում ռուսական դեսպանորդ Կիսելյովի, իշխանուհի Գալիցինայի, կոմս Հեյդենի, Բարանովի և ուրիշների հետ, որոնք «Այվազովսկուն ցույց են տալիս առանձնահատուկ փաղաքշանք ու համակրանք»[51]:

Այվազովսկու նկատմամբ առանձնահատուկ համակրանքով է արտահայտվում նաև նույն շրջանի հայկական մամուլը, մասնավորապես «Արշալույս Արարատեան» թերթը: «Բերկրանիթ սրտիվ կփութանք գովութեամբ հիշատակել նկարիչ պարոն Հովհաննես Այվազովսքի աշխուժ երիտասարդին ունեցած հազվագյուտ ճարտարութեունը և հաջողութեունը մրրիկներ և ծովային ալեկոծութեուններ նկարելու, որով Գաղղիայի մեջ մեծ համբավ ստացավ ու շատ երևելի պատկերահաններ

---

49 Ф. И. Иордан, «Записки», м., 1918, էջ 19:

50 «Документы...», էջ 71:

51 «Русская старина», 1878, էջ 437:

զարմացուց իրեն հրաշալի գծագրությունովը»,— գրում է հայկական այդ թերթը, քաղվածքներ բերելով ֆրանսական «Ավրվեստ», «Գրական Ֆրանսիա» և «Լա պրեսս» թերթերում տպագրված հոդվածներից և ավելացնում է. «Հիմա տակավին Փարիզ է, ուրտեղ մեծ պատիվ կընեն մեր ազգին իրեն հազվագյուտ տաղանդովը»[52]:

ՆՈՐ ՇԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՈՐ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լայն ճանաչում գտնելով Փարիզում և այստեղ պատկերներ վաճառողի մոտ թողնելով մի քանի ստեղծագործություն, Այվազովսկին հուլիսին մեկնում է Լոնդոն, որտեղ կազմակերպում է անհատական ցուցահանդես: Այնուհետև նա մեկնում է Պորտսմութ, Ատլանտյան օվկիանոսով ճանապարհորդելը, պատմում է նկարիչը, հարստացնում է նրա տպավորությունները, որոնք նոր սյուժեներ են հուշում նկարչին:

Պորտսմութից նա մեկնում է Իսպանիա: Ճանապարհին տեղի է ունենում մի դեպք, որը ուժեղ տպավորվում է նկարչի մեջ: Այն շոգենավը, որով գնում էր Այվազովսկին, հանդիպում է սոսկալի փոթորկի: Նավապետը ստիպված է լինում կտրել և ծովը թափել առագաստային սյուները և ծխնելուղների խողովակները, նավը թեթևացնելու համար և, վերջապես, մեծ դժվարությամբ հասնում է Լիսաբոն: «Սարսափը լցնեց իմ մեջ փոթորիկի՝ որպես գեղեցիկ, կենդանի պատկերի, տպավորության ընկալման և հիշողությանս մեջ պահպանելու ընդունակությունը,— ասում է Այվազովսկին,— մեր շոգենավի փոթորկի մեջ ընկնելու լուրը անսովոր արագությամբ և անխուսափելիորեն գեղեցկացված տարածվեց մայր ցամաքում: Նորություններ պատմելու սիրահար պարապանքաննները ալիքների մեջ խորտակվածների ցուցակում մտցնում են և իմ անունը: Այդ սուտ լուրից ճարպկորեն օգտվում է պատկերների փարիզյան վաճառական Դյուրան-Ռյուելը, որի մոտ վաճառքի համար ես թողել էի երկու պատկեր: Նա նույնպես

---

52. «Արշալույս Արարատեան» 1843, №250:

հավատալով իմ կործանմանը, այդ նկարները վաճառում ֆ ավելի քանկ։ Որոշ ժամանակ անց, իմ Փարիզ վերադառնալուց հետո, Դյուրան-Ռյուելլն ինքը պատմեց այդ մասին, ծիծաղելով իր հնարամտության և չարաշահում անելու կարողության վրա»[1]։

Իսպանիայում ճանապարհորդելիս նկարիչը լիսաբոնից բացի լինում է Մադրիդում, Գրենադում, Սեվիլիայում, Մալագայում, Կադիկսում և նույնիսկ Ջիբլարթարում, ամենուր դիտելով ճարտարապետական հուշարձանները, ծանոթանալով ժողովրդի կյանքին ու կենցաղին, բնության առանձնահատկություններին։ Բայց նրան ավելի շատ հետաքրքրում էր իսպանական արվեստը, մասնավորապես նկարչությունը։ Այդ պատճառով նա ուշադիր դիտում և ուսումնասիրում է իսպանացի մեծ նկարիչներ Վելասկեսի, էլ Գրեկոյի, Սուրբարանի, Մուրիլիոյի, Գոյայի և մյուսների արվեստը, հարըստացնելով իր գիտելիքները։ Նա, միաժամանակ, նկարում է շատ էտյուդներ, էսքիզներ և իր ճանապարհորդական ալբոմը լցնում է իսպանական տեսարանների գծանկարներով։ Հայաստանի պետական պատկերասրահում պահվում են այդ շրջանից մեզ հասած մի քանի գծանկար, որոնցից երկուսը պատկերում են Լիսաբոնի և Կադիկսի տեսարաններ։ Իսպանիայից հարուստ տպավորություններով վերադառնալով Իտալիա՝ Հովհ. Այվազովսկին աշնան ամիսներն անց է կացնում Հռոմում։ Այստեղ էլ նա կրկին հանդիպում է ռուսաց գաղութի իր ընկերներին։ Վ. Շտերնբերգը նկարում է Այվազովսկուն Իսպանիայից բերած ցլամարտիկի հագուստով և ապա իտալացու զգեստով։ Այս չրանկարը գտնվում է այժմ Հայաստանի պետական պատկերասրահում։ Դա պատկերում է երիտասարդ Այվազովսկուն աշխույժ, կենսուրախ տրամադրությամբ։ Այդ թեմայով մյուս պատկերը՝ իսպանացու գեղեցիկ կեցվածքով, դարձյալ Շտերնբերգի նկարածը, այժմ գտնվում է Ռուսական թանգարանում։ Երկու պատկերներում էլ աչքի է ընկնում երիտասարդ նկարչի անհոգ և ինքնավստահ բնավորությունը։ Հենց այդպիսին էր Այվազովսկին Իտալիայում և եվրոպական շրջագայությունների ժամանակ։

---

1 «Русская старина», 1878, էջ 437։

Ակտիվ հետաքրքրությունը շրջապատի նկատմամբ մղում էր նրան նոր շրջագայություններին։ Միջերկրական ծովը նորից տեսնելու և տպավորությունները թարմացնելու նպատակով Այվազովսկին մեկնում է Մալթա կղզին։ «Վերադարձին ես մնացի Հռոմում ձմեռելու»,— ասում է նկարիչը[2]։ Այդ ժամանակ էլ իտալական գեղարվեստի ակադեմիան (Ֆլորենցիայի ակադեմիան) նրան շնորհում է ակադեմիկոսի կոչում։

Ամփոփելով իր կյանքի պատմությունը Իտալիա մեկնելու օրից մինչև 1843 թ. վերջը, Այվազովսկին ասում է. «Ծառար երկրներ ճանապարհորդելու ժամանակից մինչև 1843 թ. վերջերը ես նկարել եմ ավելի քան հիսուն մեծ պատկեր»[3]։ Այդ բոլորից Խորհրդային Միությունում գտնվում են շուրջ 12 գունանկար պատկեր և 5 ջրանկար ու գծանկար աշխատանքներ։ Մյուսները ցրված են Եվրոպայի, Ասիայի և Արևմտյան կիսագնդի երկրների թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում։ Մեզ հասած ստեղծագործություններից առանձնապես նշանակալից են «Վենետիկ» (1841), «Նեապոլյան ծովածոցը լուսնյակ գիշերին» (1842), «Նեապոլյան ծովածոցը առավոտյան» (1843), «Նավախորտակում» (1843) և հատկապես «Վանականները Վենետիկում իրիկնամուտին» պատկերները։

«Վենետիկը» (1842) Այվազովսկու այս շրջանի լավագույն ստեղծագործություններից է։ Դա բնանկար է՝ ծովափնյա տեսարան, մարդկանց ֆիգուրներով։ Երեք երիտասարդ կանայք մի փոքրիկ տղայի հետ մոտեցել են ծովափին՝ նավակ նստելու։ Գոնդոլավարը նավակում կանգնած նրանց է սպասում։ Հեռվում երևում են Վենետիկ քաղաքի շենքերի, աշտարակների և տաճարների ուրվագծերը։ Վենետիկի ծովածոցը այստեղ պատկերված է խաղաղ, հանգիստ, հայելապատ մակերեսով։ Այդպես խաղաղ ու հանգիստ են երևում և մարդիկ։ Առաջին պլանում երևացող հնամենի ու հաստաբուն ծառը պատկերը կարծես բաժանում է երկու մասի, ավելի շատ տեղ հատկացնելով ձախ կողմին, որտեղ բարձր երկնակամարի

---

2 Նույն տեղ, էջ 440։

3 Նույն տեղ։

վրա լուսնյակի աղոտ, խոնավ օդի միջոցով թափանցող ճառագայթները արտացոլվել են խաղաղ ծովածոցի անդորր ջրերի մեջ, գծելով լուսե մի փոքրիկ շերտ առաջին պլանում։ Իրիկնամուտ է, հորիզոնը լուսավորվել է անհետացող արևի վերջին ճառագայթներով, և խաղաղ երեկոն իջնում է Վենետիկի վրա։ Հովհ. Այվազովսկին այս պատկերը նկարել է անկասկած սբ. Ղազար կղզուց։ Այդ մասին է վկայում առաջին պլանում նկարված ամայի ցամաքամասի և Վենետիկի միջև եղած ջրային նեղ տարածությունը։ Դիտակետ ընտրելով կղզու հարավ-արևմտյան ծայրամասը, որտեղից հստակորեն երևում է Վենետիկը, նկարիչը ոգեշնչված հարավային բնության յուրօրինակ գեղեցկությամբ, ռոմանտիկորեն է պատկերել իրականությունը։ Դա արտահայտվում է ոչ միայն բնության տեսարանի, առանձին առարկաների՝ ծառի և մարդկանց պատկերման մեջ, այլև պատկերի գունային կառուցվածքում։

Ռոմանտիզմը որոշակի դրսևորվել է նաև անհանգիստ ծովը կամ փոթորիկ պատկերող այս շրջանի մի քանի ստեղծագործություններում ևս։ Մենք նկատի ունենք «Նավախորտակում» կտավը։ Թեոդոսիայի պետական պատկերասրահում գտնվող «Նավախորտակում» մեծակտավ պատկերը որոշակի ցույց է տալիս նկարչի պրոֆեսիոնալ աճը և նրա գաղափարական-գեղարվեստական հասունությունը։ Ահեղ փոթորիկի պահին կատաղի ալիքները նետվում են դեպի ծովափնյա ժայռերը։ Պատկերի խորքում հազիվ երևում է ջարդված կայմով մի առագաստանավ, որն արդեն կիսով չափ սուզվել է փրփրակալած ալիքների մեջ։ Մի քանի մարդ պատսպարվել են նավակի մեջ, որին հսկա ալիքները բարձրացրել են վեր և ուր որ է զարկելու են մոտակա ժայռին։ Մի մարդ կիսով չափ ընկղմված է ջրի մեջ, մյուս դժբախտը պատսպարվել է խորտակված նավից մնացած տախտակների վրա։ Ամեր և ամայի ապառաժը, որի ծայրին երևում է անկված խաչի խորհրդանիշը, ավելի է ուժեղացնում դրության դրամատիզմը։ «Նավախորտակումը» երիտասարդ նկարչի բռնկուն ոգու արտահայտությունն է։ Լավապնդելով իմանալով ծովային տարերքը, հատկապես փոթորիկի ահեղ բնույթը, նկարիչը դրանք պատկերել է ռոմանտիկական ոգով։

Ռոմանտիզմը բնորոշ է այս շրջանի համարյա բոլոր ստեղծագործություններին։ Այդ ուղղությունն իր որոշակի արտահայտությունն է գտնում նաև «Վանականները Վենետիկում իրիկնամուտին» այուժետային պատկերի մեջ։ Դա մեկն է այն երեք պատկերներից, որոնցով նկարիչը մասնակցում է 1843 թ. Փարիզյան ցուցահանդեսին։ Այդ մասին նույն տարվա մայիսի 2-ին Փարիզից Այվազովսկին գրում է. «Վենետիկից ես այստեղ եկա դեկտեմբերին երեք նկարով ցուցահանդեսի համար։ Ուզում էի, որ լիներ նաև փոթորիկի տեսարան, բայց չհասցրի և այդ պատճառով ցուցադրեցի խաղաղ պահերի երեք պատկեր— մեկը՝ Վենետիկի մեծ պատկեր, մյուսը՝ վանականները Վենետիկում իրիկնամուտին և երրորդը՝ գիշեր նույն տեղում»։

Այս երեք պատկերներն էլ չերմ ընդունելություն են գտնում արվեստասեր հասարակության մեջ և մամուլում։ Ֆրանսիական թերթերն ու ամսագրերը դրվատանքով են արտահայտվում երիտասարդ նկարչի ստեղծագործությունների մասին։ «Այստեղի ակադեմիայի իրավասուները շատ գոհ եղան ցուցահանդեսում ներկայացրած իմ պատկերներից,— գրում է Այվազովսկին նույն նամակում,— ...Այստեղ նրանք ինձ շատ լավ ծանոթացրին տեղացի նկարիչների հետ, Տուրինում վեց անգամ ինձ գովասանքի արժանացրին։ Եղան նաև գրախոսություններ մամուլում "Siecle"-ում, "journal des Beard arts" և "france-litteraire"-ում, նույնպես և "artiste"-ում: Այդ բոլոր ամսագրերում շատ լավ են արտահայտվում իմ պատկերների մասին, որն ինձ զարմացրեց, քանի որ ֆրանսիացիները շատ չեն խնայում հյուրերին, հատկապես ռուս նկարիչներին, բայց ինչ-որ հակառակը դուրս եկավ։ Իսկ բացի ամսագրային և այլ գովասանքներից, գեղեցիկ արվեստների այստեղի հայտնի սիրողները՝ կոմս Պորտալեսը և գեղարվեստական ընկերության մյուս անդամները, ցանկանում էին ունենալ իմ նկարները, բայց քանի որ դրանք արդեն պատկանում էին ուրիշներին, ես խոստացա նկարել նորերը»։

Փարիզում հաջողություն գտած այդ երեք ստեղծագործություններից մեզ համար մի առանձին հետաքրքրություն է

---

[4] «Документы...», էջ 70։

ներկայացնում «Վանականները Վենետիկում իրիկնամուտին» պատկերը, որը այժմ գտնվում է Երևանում։ Առաջին հայացքից բնանկար թվացող այս պատկերը դիտողին գրավում է իր թեմատիկ-սյուժետային լուծումով։ Պատկերում է Վենետիկի ս. Ղազար կղզու ծովածոցը և մի խումբ հայ վանականներ կղզում, որոնցից մեկը՝ մի ծերունի, հենված կղզու եզրապատին դիտում է հեռվում երևացող Վենետիկ քաղաքը։ Նրա մոտ դրված է ստվարածավալ մի գիրք։ Երկուսը՝ մեկը կանգնած, մյուսը նստած, զրուցում են միմյանց հետ և երկու այլ անձինք, որտեղ հայացքն ուղղված է դեպի խաղաղ ջրերի վրա դանդաղորեն սահող գոնդոլին։

Իրիկնամուտ է։ Ամառային օրվա արևի վերջին տաք ճառագայթները ողողել են երկնակամարը և արտացոլվել ծովածոցի հայելապատ մակերեսին, լուսավորելով հորիզոնը և ջրային տարածությունը։ Իրիկնամուտի ստվերներն արդեն նկատվում են պատկերի առաջին պլանում։ Այստեղ նկարիչը դիտողի ուշադրությունը կենտրոնացրել է զրուցող երկու անձանց վրա։ Նրանք Մխիթարյան միաբանության վանականներ են, որոնք անկասկած նկարված են բնականից և դիմանկարային են։ Նկարիչն ընդգծել է նրանց զրույցի լուրջ և հուզական բնույթը։ Այժմ դժվար է որոշակի ասել, թե ինչի մասին է նրանց զրույցը, բայց դատելով պատկերվածների դիմանկարներից և նրանց հուզական վիճակից, կարելի և ընդունել, որ զրույցը տեղի է ունենում մշակութային հայկական այդ օջախի երկու նշանավոր գործիչների՝ նկարչի եղբայր Գաբրիել վարդապետ Այվազյանի (Այվազովսկու) և միաբանության աբբահայր Սուքիաս Սոմալյանի միջև։

Մենք արդեն նշել ենք, որ դեռևս 1840 թ. և այնուհետև ամեն անգամ ս. Ղազարի հայոց վանքը ժամանելիս, նկարիչ Այվազովսկին խնդրում էր Միաբանությանը թույլատրել ավագ եղբորը ժամանակավորապես մեկնել հայրենիք ծնողների հետ տեսակցելու համար «որք հույժ կարոտով են սորա»։ Սակայն միաբանությունը դժվարանում էր լուծել այդ խնդրանքը, նկատի ունենալով Գաբրիել վարդապետի չափազանց կարևորությունը և զբաղվածությունը վանքում և այն, որ մագիստրոսի աստիճան ստացած Այվազյանը (Այվազովսկին) հիմնադրել ու արդեն 1843 թ. սկսել էր հրատարակել «Բազ-

մավէպ» հայերեն ամսագիրը, ուստի չէր կարող աշխատավայրից բացակայել։

Հայրենիքի կարոտով ու ծնողներին տեսնելու զգացումով համակված վանական գիտնականը հուզված, դեմքով դեպի դիտողը և գլխիկոր կանգնել է ծերունի աբբահոր առաջ, իսկ վերջինս ձեռքերն առաջ պարզած կարծես փորձում է նրան համոզել խնդրի դժվարությունը։ Որ այստեղ պատկերված է աբբահայր Ս. Սոմալյանը և ոչ այլ ոք, վկայում է ոչ միայն նրա ծերունական դեմքը, կեցվածքն ու հագուստը, այլև այն ջերմ ու սիրալիր վերաբերմունքը, որը նա ցուցաբերել է երիտասարդ նկարչի նկատմամբ ամեն անգամ, երբ նկարիչն այցելել է Միաբանությանը, մասնավորապես մեր նշած 1842 թ. սեպտեմբերի 3-ին Այվազովսկուն ուղղված Ուղերձում, Սոմալյանի արտահայտած այն միտքը, թե «Հավիտյան չի մոռանանք քո սերն ու պատիվն։ ...Գիտես, որ մենք միշտ կպարծենանք քո տաղանդովը՝ ազնվությամբը և բարեկամությամբը և միշտ աղոթող ենք առողջությանդ ու երջանկությանդ համար»։

Երախտապարտ նկարիչը, հարկավ, չէր կարող անտեսել այդպիսի անձնավորությանը, որը միաժամանակ ամբողջ համայնքի ու մշակութային օջախի ղեկավարն էր, արքեպիսկոպոս, և որի հետ էր կապված նաև իր եղբոր ապագա բախտը։ Երկֆիգուր այս կոմպոզիցիան, որը նկարիչը զետեղել է պատկերի ձախ կողմի ներքևի մասում՝ կենտրոնի մոտ, որոշ դրամատիզմ է մտցնում խաղաղ իրիկնամուտի տեսարանում։

Սակայն պատկերի գաղափարական բովանդակությունը պարզորոշ արտահայտում է կոմպոզիցիայի կենտրոնական մասից քիչ ցած, կղզու եղրապատի վրա դրված մեծածավալ գիրքը, որը նկարված է կարմիր գույնով և անմիջապես գրավում է դիտողի ուշադրությունը։ Գիրքը այստեղ փոխաբերական իմաստ ունի։ Դա ցույց է տալիս Միաբանության գիտնական հայրերի գրական-գիտական լայն գործունեությունը՝ նրանց գեղարվեստական, պատմագրական, լեզվաբանական և թարգմանական գրականության հարուստ և շքեղ հրատարակություններ, գրականություն, որը հարստացնում է ոչ միայն ազգային մշակույթը, այլև նշանակալից ներդրում է համաշխարհային գրական-հասարակական մտքի պատմու-

թյան մեջ։ Իսկապես, իր գործունեության ամբողջ ընթացքում, մասնավորապես 1830—40 թվականների սկզբներին ս. Ղազար կղզու միաբանության վանականները գրել, թարգմանել և հրատարակել են բազմաթիվ մեծածավալ գրքեր ու գիտական ուսումնասիրություններ, այդ թվում նկարչի եղբոր՝ Գ. Այվազյանի (Այվազովսկու) «Համառոտ պատմություն ռուսաց» (1836), Մ. Բժշկյանի «Սրբազան պատմություն» (1838), Մ. Մաքաք-Թեոփիլյանցի «Կենսագրություն երևելի արանց» (1839), Հոմերոսի «Իլիականը» (1843), Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և այլոց երկերը։ Այդ հայագիտական ու թարգմանական բազմաթիվ գրքերի շարքում բացառիկ տեղ է գրավում 1836—1837 թթ. հրատարակված Գ. Ալիշանյանի, Խ. Սուրմելյանի և Մ. Ավգերյանի «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» մեծածավալ, ավելի քան երկու հազար էջից բաղկացած երկհատոր աշխատությունը։ Մենք կարծում են, որ սույն պատկերի կոմպոզիցիայի կենտրոնում պատկերված է հենց այդ մեծարժեք ու ստրավածավալ գիրքը, որը ժամանակին հրատարակվել է նաև կարմիր կազմով։ Նկարիչն անթաքնելի ոգևորությամբ ծանոթացել ու հիացել է այդ «Հայկազյան բառարանով», բարձր է գնահատել այն և խորհրդանշորեն գիտակցված զետեղել է պատկերի մեջ որպես իր այդ ստեղծագործության հիմնական գաղափարի՝ Մխիթարյան Միաբանության ազգօգուտ գործունեությունն արտահայտող խորհրդանիշ։ Պատահական չէ, որ նկարիչն իր գիտնական եղբորը հորդորել է գրել հայոց այդ համայնքի բեղմնավոր գործունեության պատմությունը, որն, ինչպես ցույց կտանք ստորև, սիրով կատարել է Գաբրիել Այվազովսկին, գրավոր շնորհակալություն հայտնելով նկարչին այդ հայրենանվեր առաջարկի համար։

Այսպիսով, «Վանականները Վենետիկում իրիկնամուտին» պատկերը ներկայացնում է ազգային մշակույթի օջախներից մեկի՝ Վենետիկի ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանության կյանքը, մեծարելով հայ վանականների գրական-բանասիրական և պատմագիտական գործունեությունը, 1840-ական թվականների սկզբներին այստեղ գործող առավել հայտնի անձանց դիմանկարչական կերպարներով։ Պատկերը մտնում է հայ նոր կերպարվեստի պատմության մեջ որպես ազգային

գունանկարչության թեմատիկ-սյուժետային առաջին ստեղծագործություններից մեկը։ Ծովանկարիչը մինչև այդ էլ և նույն շրջանում, նկարել է սյուժետային այլ պատկերներ ևս, սակայն 1843 թ. ստեղծած այս ստեղծագործությունը մեզ գրավում է, ամենից առաջ, իր հայկական բովանդակությամբ։ Դա նշանակում է, որ հայկական թեման որոշակի տեղ է գտել ծովանկարչի դեռևս վաղ շրջանի ստեղծագործություններում։ Ռոմանտիզմն այստեղ արտահայտվել է բնության ընդհանուր տեսարանի պատկերման, կոմպոզիցիայի որոշ պայմանական լուծման, լուսավորության և կոլորիտի մշակման մեջ։ Դրան նպաստել է երևույթի արտակարգ լինելը՝ այն, որ մի փոքրաթիվ վանական-գիտնականներ բուն հայրենիքից հեռու՝ այս մենավոր կղզում, մշակութային մեծ գործունեություն են ծավալել։ Անսովոր ու արտակարգ, հազվադեպ անցքերի ու երևույթների պատկերումը բնորոշ էր երիտասարդ նկարչի այս շրջանի ռոմանտիզմի համար և դա որոշակի արտահայտվել է նույն տարիներին ստեղծված ծովանկարներում ևս, մի ուղղություն, որի առաջադիմական մասը նպաստեց ինչպես մյուս ժողովուրդների, նույնպես և հայ ժողովրդի արվեստի հետագա զարգացմանը, նոր ժանրերի, գեղարվեստական նոր միջոցների ստեղծմանն ու նկարչության ճանաչողական հնարավորությունների ընդլայնմանը։ «Վանականները Վենետիկում իրիկնամուտին» պատկերը այդ երևույթի ցայտուն արտահայտությունն է 19-րդ դարի առաջին կեսի հայ կերպարվեստի մեջ։

ՆԿԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

«1844 թ. սկզբներին ես կրկին մեկնեցի Փարիզ»,— ասում է Այվազովսկին[1]։ Այդ ժամանակ Փարիզում բացվում է գեղարվեստական մի նոր ցուցահանդես, որին նա մասնակցում է չորս ստեղծագործություններով։ Ժամանակի ֆրանսիական ու հայկական թերթերի հաղորդմամբ դրանք են. «Սև ծովում

[1] «Русская старина», 1878, էջ 440—441։

վրա չերքեզի գերեվարած նավակ մը, որ ռուսի պատերազմական նավի մը վրա կհարձակվի», «Արևելեցի կնիկները կլվացվին», «Նեապոլի ձկնորսները», «Կապրի կղզին»։ Այդ նկարների կապակցությամբ ֆրանսիական «Քոռսեր» թերթը գրում է (բերում ենք հայկական թերթի թարգմանությամբ). Ֆրանսիացի նշանավոր ծովանկարիչներ «Կյուտեն և Իզապե մեծ ծովապետներուն այս տարուան քաշած պատկերները իրանց անվանը գովեստ տալու պարտք չունինք։ Անոնց փոխարեն Բեռսպուրկեն մեզի ծովանկար պատկերահան մը եկավ մեծ ձրից տեր, և օր-օրի ալ ավելի մեծնալու հույս տվող, ըսած պատկերահանինս՝ պարոն Յոհաննէս Այվազովսքին էր։Ասօր քաշած պատկերները գեղարվեստից սրահին մեջ բարձրագլուխ կհանդիսանան»[2]։ Մի այլ ֆրանսիական թերթ՝ «Դեմոկրասի Պասիֆիկը», Այվազովսկուն անվանելով «երևելի պատկերահան մը», մայիսի 17-ի համարում գրում է. «Պարոն Հօհաննէս Այվազովսքիին նկարած Միջերկրական ծովուն հանդարտութիւնը նշանավոր գործ մըն է։ ...Ծովուն եզերքը՝ տղա մը ջուրին մեջ կխաղա, ու իր մայրը՝ փափկասուն արևելցի, կհանվի, որ ծովը մտնա լվացվի։ Կողքին ամաններով անուշահոտ եղեր դրված է, որով իր գեղեցիկ մարմինը պիտի օծէ։ Նյութը փաբուկ, իմաստը՝ վսեմ, քաղվածքը ճարտար, գլուխ գործոց է աս պատկերը»[3]։ Ֆրանսիական նույն թերթը հունիսի 26-ին հաղորդում է նաև, որ «Այս տարումն հազարավոր պատկերներուն մեջեն հիսունի մը չափ գլուխ գործոց սեպուած պատկերներուն կարգը կդասեն պարոն Այվազովսքիին քաշածը»[4]։

Այս անգամ Փարիզում Այվազովսկին հանդիպում է բազմաթիվ հայերի ու հայ մշակույթի գործիչների, որոնց հետ զրուցելիս հազմիցս միտք է հայտնում Կոստանդնուպոլիս և հայաբնակ Զմյուռնիա (Իզմիր) մեկնելու և այնտեղ քնության տեսարաններ նկարելու մասին։ «Մեծ ուրախութիւյամբ այսքանը մը կիմացունենք,— վկայում է Խ. Պարտիզպանյանը Փարիզից ուղարկած իր նամակում, որը հրապարակել է Հայոց

---

2 «Արշալույս Արարատեան», 1844, № 196։

3 Նույն տեղ։

4 Նույն տեղ։

թերթը,— որ պարոն Յովհաննէս Այվազովսքին այս տարի Փարիզեն շիտակ Կոստանդնուպոլիս անցնելու միտք ունէր, և թէ Կոստանդնուպոլսոյ, թէ Զմյուռնիոյ հայոց հիշատակ ձգեր մեկ-մեկ պատկեր քաշել կուզեր, որ ազգերնուս մեջեն պատկերահանութեան հետևող երիտասարդաց օրինակ ըլլայ»[6]։

Այս տեղեկութիւնը շատ կարևոր է։ Դա ցույց է տալիս, որ Հովհաննես Այվազովսկին դեռևս երիտասարդ տարիներին մտադրություն է ունեցել ոչ միայն հայաբնակ վայրերի բնութեան պատկերներ նկարել և դրանք նվիրաբերել հայոց կազմակերպութիւններին, այլև այդ վայրերի հայութեան մեջ խթանել սերը նկարչության, գեղեցիկ արվեստների նկատմամբ և «ազգերնուս մեջ պատկերահանութեան հետևող երիտասարդաց օրինակ ըլլալ»[6]։ 27-ամյա նկարչի հայրենասիրական այդ միտումը ավելի հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք, որ Իտալիայի մի շարք քաղաքներում և Փարիզում նրա ցուցադրած ստեղծագործութիւնները անծանոթ են մնում հարազատ ժողովրդի լայն զանգվածներին, առավել ևս՝ թուրքական դաժան բռնապետության պայմաններում ապրող արևմտահայութեանը։

Այդ տարիներին Այվազովսկու ցուցաբերած հայրենասիրական մղումներից մեկն էլ այն է, որ նա անմիջականորեն մասնակցում և խոստանում է այսուհետև ևս իր ստեղծագործութիւններով մասնակցել հայկական հրատարակութիւններին։ Այդ մասին է վկայում Փարիզից «Արշալույս Արարատեան» թերթին ուղարկած նամակի հեղինակը, ըստ որի Այվազովսկին Կ. Պոլսից եկած հայտնի տպագրիչ, հրատարակիչ ու գրող Հովհաննես Մյուհենթիսյանին տալիս է մի գեղեցիկ նկար, նրա «Հայկական օրացույցում» 1846 թ. տպագրելու համար և խոստանում է հաջորդ տարիների համար ևս ուղարկել նոր նկարներ։ «Ահա այժմ իր ազգասիրութիւնը առհավատչեա մը Թողու մտօք ,— գրում է այդ նամակի հեղինակ Խ. Պարտիզպանյանը,— Կոստանդնուպոլսո մեջ Մյուհենթիսյան պարոն Յովհաննեսին գեղեցիկ գրող և մաքուր տպագրութեամբ հանած ըլլալովը՝ անոր տալու 1846 թ.

---

5 Նույն տեղ։

6 Նույն տեղ։

տարվան օրացույցին համար գեղեցիկ պատկեր մը օրինակ ձգեց, և մեկ-մեկ պատկեր չինել խրկելու խոսք տուաւ»[7]։

Հովհ. Այվազովսկու տված այս «գեղեցիկ պատկեր մը», իրոք, տպագրվել է Հովհ. Մյուհենտիսյանի հրատարակած 1846 թ. հայկական օրացույցում։ Դա փոքրածավալ (4.5×8) գրաֆիկական ստեղծագործություն է՝ վիմագրություն, որը իհարկե, կատարել են վիմագրող վարպետները։ «Հովհ. Այվազովսկին,— վկայում է հոդվածագիրը,— այս պատկերներում ճշգրիտ փորագրությանը կամ վիմագրությանը վերակազմությունը Փարիզում մեջ երկու երևելի պատկերահանի յանձնել, որ ի սիրոյն համար յօժարությամբ յանձնառու եղան, թե՛ այս վերակացությունն ընելու, և թե՛ յիշեալ տպարանին ալ ավելի կատարելությանը ուրիշ պետք եղածներք հոգալու»[8]։

Այսպիսով, Փարիզում հայ նշանավոր տպագրիչ ու հրատարակիչ Հովհ. Մյուհենտիսյանին Այվազովսկու տված նկարը, հավանաբար ջրանկար, «երկու երևելի պատկերահանների» կողմից փոխադրվել է վիմագրական քարի վրա, և նրանց խնամակալությամբ տպագրվել օրացույցում։ Ուրեմն, մենք գործ ունենք երիտասարդ նկարչի մի նոր ստեղծագործության հետ, որը կապված լինելով հայկական հրատարակության հետ, մինչև այժմ դուրս է մնացել ռուսական արվեստագիտության ուշադրությունից[9]։

Օրացույցում տպագրված նկարը պատկերում է ծովափնյա քնության տեսարան մարդկային ֆիգուրներով։ Առաջին պլանում՝ ծովափին, հաստաբուն ծառի տակ պատկերված են հենված խոտի կապոցներին հենված մանգաղով երիտասարդ մի կին երեխայի հետ, զամբյուղով մի աղջիկ ծառից միրգ քաղելիս և մի տարեց կին, որ մոտենում է նրանց։ Երկրորդ պլանում հրևում է անհանգիստ ծովը առագաստանավով։ Հորիզոնում կուտակված սև ամպերի վրա ճայթել է կայծակը։ «Հայկական օրացույցի» համար կատարված աշխատանքում

---

7 «Արշալույս Արարատեան», 1844, №196։

8 Նույն տեղ։

9 Այվազովսկու այդ նկարի մասին առաջին անգամ նշել է լրագրող Հ. Հակոբյանը։

պատկերող այս փոքրածավալ գծանկարը կրում է ժամանակի ակադեմիական նկարչության կնիքը։

ԱՆԱԿՐՆԿԱԼ ԴԵՊՔ

Փարիզում և ընդհանրապես եվրոպական շրջագայության մեջ Այվազովսկին կարող էր դեռ երկար մնալ, եթե մի անակընկալ դեպք պատճառ չդառնար ժամկետից շուտ հայրենիք վերադառնալուն։ Փարիզյան գրչակներից մեկը Այվազովսկու մասին գրած հոդվածում արտահայտում է այն միտքը, թե իբր Ֆրանսիայի մայրաքաղաքում չափազանց շոյված ու գնահատված լինելով, նկարիչը մտադիր է մշտական բնակություն հաստատել այնտեղ։ «Թերթային ֆելիետոնիստի այդ հորինված սուտը կարող էր ինձ վրա անցանկալի ստվեր նետել»,— ասում է Այվազովսկին[10] և գրավոր դիմում է ռուսական հյուպատոս Կոմս Մ. Յու. Վիլգորսկուն՝ պաշտոնապես հերքելու համար։ Սակայն վերջինս ավելորդ է համարում այդ դատարկ բանով զբաղվել և հայտնում է նկարչին, որ թագավոր-կայսրը ցանկանում է նրան ծովանկարների պատվերներ տալ, երբ նա վերադառնա Ռուսաստան։ «Կոմս Վիլգորսկու այդ խոսքերը դրդեցին ինձ կրճատել արտասահմանում իմ մնալու ժամկետը երկու տարով»,— ասում է նկարիչը[11]։

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հունիսի սկզբներին Այվազովսկին ճանապարհվում է դեպի Ռուսաստան։ «Պարոն Այվազովսկին գնաց, բայց իր գովեստը գնդարվեստից դիրքերուն մեջ արձանագրեալ մնաց, և իր անունը Փարիզու մեջ բերնե-բերան կհոչակի,— գրում է հայկական թերթի թղթակիցը Փարիզից և ավելացնում,— սքանչելի վրձին, որ ամեն ամեն տեղ միլիոններ վաստկցնել

[10] «Русская старина», 187, հուլիս, էջ 440—441։
[11] Նույն տեղ։

կարող բլլալեն զատ գեղարվեստին պատմության մեջն ալ Այվազովըսքիին հիշատակը դարուց ի դար պիտի անմահացունե ի պարծանըս ազգիս հայոց»[1]։

Հովհ. Այվազովսկին Ռուսաստան է մեկնում՝ անցնելով Նիդեռլանդական երկրները։ Նա լինում է Բելգիայում և Հոլանդիայում, այս անգամ ավելի երկար ու մանրազնին ուսումնասիրելով այդ երկրների արվեստը, նրանց գեղարվեստական կուլտուրան։ Հունիսի 10-ին Իտալիայում գտնվող Վ. Ի. Շտերնբեργին Անտվերպենից (Բելգիա) ուղարկած նամակում նա գրում է «...Ուզում եմ ասել, թե ես ինչ աստիճանի գոհ եմ այստեղի այժմյան դպրոցից (շկոլա) և խորհուրդ կտամ քեզ, որքան հնարավոր է շտապ թողնել Իտալիան։ Չնայած որ ես մի օրը Իտալիայում բարձր եմ գնահատում հյուսիսի ամսից, բայց ահա թե ինչն է ինձ ստիպում խորհուրդ տալ քեզ շտապել այստեղ։ Այստեղ ես գտա այնքան հիանալի տաղանդներ, որքան ոչ մի տեղ, հատկապես նկարչության քո ժանրի գծով։ Զարմանալի տաղանդներ են, որոնք չեն զիջում իրենց մեծ նախնիներին. Դե-Կեստդոր, Վապալերս, Լեյս, Բրոմլեր, Վերբուկհովեն, Կունուկ և շատ ուրիշները։ Դրանք բոլորն էլ այնպիսի տաղանդներ են, որ, անկեղծ ասած, ափսոս կլինի նրանց աչքաթող անելը, այնպես էլ ափսոս է այստեղից մեկնելը»[2]։ Նշելով նկարիչների համերաշխ գործունեությունը՝ նա գրում է. «Բելգիական ու հոլանդական դպրոցը ամենանպատակայինն է հատկապես քեզ համար, ուստի, աստված սիրես, մնացած երկու տարիներին եղիր այս կողմերում, դու շատ, շատ գոհ կլինես։ Ես գիտեմ, որ մեծ զոհաբերություն կլինի Իտալիան Բելգիայով փոխարինելը, բայց գեղարվեստը պետք է լինի ամենուր առաջին մխիթարանքը և ամեն ինչ պետք է զոհաբերել դրան։ ...Դարձյալ ասում եմ, է՛կ այստեղ և մնա որքան հնարավոր է երկար։ Կծանոթանաս այստեղի նկարիչների հետ, կսկսես աշխատել և, ես հավատացած եմ, որ նրանք քեզ լիովին կգնահատեն և քեզ կտան այն աստիճանը, որին քո տաղանդը իրավունք ունի»[3]։

---

1 Արշալույս Արարատեան, 1844, №196։

2 «Документы...», էջ 73—74։

3 Նույն տեղ, էջ 74։

Տեղյակ պահելով ընկերոջը բելգիական նկարիչների միջև եղած փոխադարձ հարգալից ու առողջ մթնոլորտի մասին, Այվազովսկին գրում է. «Բոլոր արտիստներն ապրում են միմյանց հետ ինչպես հարկն է. ոչ մի մանր նախանձ, ոչ մի բամբասանք, ընդհակառակն, նրանցից ամեն մեկը ձգտում է մյուսի արժանիքները ցուցադրել օտարերկրացուն։ Ինձ շատ էին ասում այդ մասին, վերջապես ես անձամբ համոզվեցի։ Որքան քնքշությամբ ընդունեցին և ուղեկցեցին նրանք ինձ մեկ նկարչից մյուսին։ Հետո, ինչը որ ինձ <զարմացրեց> հավասարապես, դա նրանց նահապետական կյանքն է։ Նրանք ապրում են հիանալի կերպով և նկատելի է, որ նրանք լիովին հաճույք են զգում և արվեստանոցից դուրս, ինչպես և պետք է լինի շնորհալարտ նկարիչը»[4]։

Այս նամակը լիովին համոզում է, որ Այվազովսկին իր ճանապարհորդության ընթացքում ոչ միայն ուշադիր ուսումնասիրում է բելգիական հին ու նոր արվեստը, այլև հանդես է բերում հոգատարություն ժանրիստ ընկերոջ նկատմամբ՝ խորհուրդ տալով նրան տեղափոխվել Բելգիա և սովորել այստեղ ավանդական դարձած կենցաղային բարձրարվեստ նկարչություն։ Կասկածից դուրս է, որ բելգիական նկարչությունից, մասնավորապես ծովանկարիչների ստեղծագործություններից շատ բան սովորում է և ինքը՝ Այվազովսկին, օգտագործելով այն իր արվեստի կատարելագործման համար։

Նկարչի կատարելագործմանը բավական նպաստում է նաև հոլանդական արվեստը, որին նա մոտիկից ծանոթանում է Բելգիայից Հոլանդիա մեկնելուց հետո։

Հոլանդիան, ինչպես և Բելգիան, 17-րդ դարում իսպանական գերիշխանությունից ազատագրվելուց հետո ապրում են տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման անախընթաց շրջան։ Այդ երկրներում ծաղկում է հատկապես նկարչությունը։ Դա այն ժամանակն էր, երբ ապրում ու ստեղծագործում էին Պաուլ Պետեր Ռուբենսը, Վան Դեյքը, Իորդանսը և ուրիշներ, որոնք ֆլամանդական նկարչությունը բարձրացրին եվրոպական առաջավոր արվեստի մակարդակին։

Բայց եթե ֆլամանդական արվեստի մեջ ծաղկեց գլխա-

---

[4] «Документы...», էջ 74։

վորպես դիցաբանական այուժեներով նկարչությունը և դիմանկարը, ապա Հոլանդիայում առավելապես լայն զարգացում գտավ կենցաղային նկարը և բնանկարչությունը։ Հոգեբանական դիմանկարի ու ռեալիստական նատյուրմորտի հետ այս երկրում ստեղծվում են նաև բազմաթիվ ծովանկարներ, որոնք չէին կարող չգրավել Այվազովսկու ուշադրությունը։ Եվ նա ագահորեն կլանում է այն լավագույնը, ինչը տալիս էր նրանց արվեստում։ Այստեղ՝ Հոլանդիայում ևս, մի քանի պատկեր նկարելուց հետո, Այվազովսկին Ամստերդամ քաղաքում բացում է իր ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը, որը մեծ հաջողություն է գտնում։ Անմիջապես վաճառվում են մի քանի նկար։ Թագավորական ընտանիքը՝ Վիլհելմ Երկրորդը և մեծ իշխանուհի Աննա Պավլովնան, գնում են նրա կտավներից մեկը։ Ամստերդամի գեղարվեստի ակադեմիան բարձր գնահատելով նկարչի արվեստը՝ 27-ամյա Այվազովսկուն ընտրում է հոլանդական ակադեմիայի անդամ[5]։

Այսպիսով, Հովհ. Այվազովսկին կատարելագործելու նպատակով չորս տարի շարունակ Իտալիայում և արևմուտքի երկրներում լինելով՝ իր բարձրարվեստ ծովանկարներով համընդհանուր ճանաչման է արժանանում։ 25—27 տարեկան հասակում ընտրվում է Ֆլորենցիայի, Փարիզի և Ամստերդամի գեղարվեստի ակադեմիաների իսկական անդամ՝ ակադեմիկոս։ Իր առաջին արտասահմանյան գործուղման և նրա արդյունքների մասին նկարիչը հետագայում ասում է. «Ուրախալի է գիտակցել, որ ես իմ ուժերի և ընդունակությունների ամփոփումներում արդարացրի իմ նկատմամբ ցուցաբերած այն բարեհաճությունը և հույսերը, որ ինձ վրա էին դրել իմ հայրենակիցները։ Հռոմը, Նեապոլը, Վենետիկը, Փարիզը, Լոնդոնը և Ամստերդամը արժանացրին ինձ ամենաջերմ խրախուսանքի, և ներքուստ ես չեմ կարող չհպարտանալ օտար երկրներում իմ ունեցած հաջողություններով՝ կանխազգալով համակրական ընդունելություն հայրենիքում»[6]։

---

5 «Русская старина», *1878, հուլիս, էջ 441։*

6 *Նույն տեղ, էջ 441—442։*

Հինգերորդ մաս

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

1844 թ. հունիսի վերջերին Հովհ. Այվազովսկին վերադառնում է Պետերբուրգ։ Հուլիսի 1-ին կայսերական տան մինիստր իշխան Պ. Մ. Վոլկոնսկին արդեն գրում է գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտին. «Թագավոր-կայսրը կարգադրել է նկարիչ Այվազովսկուն պատվիրել նկարելու հետևյալ տեսարանային պատկերները.

1. Կրոնշտադտ

2. Պետերբուրգի տեսարանը Նևայի գետաբերանից

3. Պետերգոֆի պալատը շատրվաններով, ծովի կողմից

4. Ռևելը (Տալինը) ծովի կողմից

5. Սվետաբորգը ծովի կողմից

Գ. Գանգուտա»[1]։

Նույն օրը կայսերական տան մինիստրը պրեզիդենտին տեղյակ է պահում, որ պալատական նորաստեղծ հիմնարկներից մեկին՝ ռուսական կայսերական ու ցարական շքանշանների կապիտուլին կայսրի արած կարգադրության համաձայն, «Հարգելով նկարչության մեջ ցուցաբերած նրա գերազանց տաղանդը», նկարիչ Այվազովսկին պարգևատրվում է ս. Աննայի 3-րդ կարգի շքանշանով[2]։

---

[1] «Документы...», էջ 75։

[2] *Նույն տեղ, էջ 76։*

Արտաքսմանից վերադառնալու հենց հաջորդ օրը Այվազովսկին սկսում է վարձու բնակարան փնտրել Պետերբուրգում։ «Փնտրում էի բնակարան ինձ համար, պիտանիորեն քաղաքի կենտրոնական մասերում և այնպիսին, որ կարողանամ այնտեղ հարմար արվեստանոց էլ տարրել,— պատմում է նրա հետքերը։— Ոչ երկար որոնումներից հետո, վերջապես ինձ հաջողվեց գտնել այդպիսի բնակարան Կարավանայա փողոցի տներից մեկում։ Վճռելով վարձել այն, ցանկանում էի կանխավճար տալ դռնապահին, վերջինս նախօրոք հարցրեց. «ով եմ ես», որպեսզի զեկուցի տանտիրուհուն.

— Նկարիչ եմ, Այվազովսկի,— պատասխանեցի ես։

— Այդպես,— մռայլ արտահայտվեց դռնապահը, ապա, գտնելով ինձ, ասաց,— այդ գործը դուխ չի գա և բնակարան ձեզ վարձով տալ չեմ կարող։

— Այդ ինչի՞ համար։

— Դրա համար, որ տանտիրուհին շատ խիստ արգելել է ներս թողնել արհեստավորներին։ Դեռ երեկ նա զբաղակին մերժեց։ Մենք հասկանում ենք դա,— համոզիչ ասում է դռնապահը,— այնուամենայնիվ, նշանակում է արհեստավոր, ներկարարների ցեխից, կկեղտոտեք հատակները, այնպես որ հետո էլ չեք մաքրի, ա՛յ, ներեցեք բնակարան չեմ համաձայնվում վարձու տալ,— ավարտելով իր խոսքը, ասում է մաքրասիրության չատագովը։

Տանտիրուհու հետ խոսելն ու նրան բացատրելը ես ավելորդ համարեցի, վախենալով, որ նա ևս ինձ կդասի ներկարարների ցեխին։ Այդպես ես բնակարան չվարձեցի Կարավանայա փողոցում[3]։

Որքան էլ տարօրինակ, բայց փաստ է, որ Ռուսաստանի մայրաքաղաքում տարբեր մարդիկ, համենայն դեպս նրանց հատարակ խավը, դեռևս չէին տարրերում ներկարարությունը այլ ճեխանական նկարչություններից։ Դա միջոցառնակ ասում է այն մասին, որ արվեստը Ռուսաստանում դեռ մուտք չէր գրծել ժողովրդի մեջ, և որ ասա ժողովրդի լայն զանգված-

[3] «Русская старина», 1878, հոկտ., էջ 642։

ները 1840-ական թվականներին անծանոթ էին Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի պատերի մեջ, նրա ցուցասրահներում, կամ վերնախավի պալատական սալոններում պարբերաբար երևան եկող կերպարվեստի ստեղծագործություններին։

Վերջապես հարմարավետ բնակարան ու արվեստանոց վարձելով մայրաքաղաքի կենտրոնական թաղամասերից մեկում,[1] Այվազովսկին սկսում է աշխատել։

ՆՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐ

Հովհ. Այվազովսկուն տրված 6 նկարների պատվերների կատարումը կարևոր ու պատասխանատու էր, քանի որ նա պարտավոր էր ցուցադրել իր արվեստը կատարելագործելուց հետո և արդարացներ իր նկատմամբ ցուցաբերված վստահությունն ու այն ջերմ, հարգալից ընդունելությունը, որը ցույց տվեցին ակադեմիայի պրոֆեսորները, անվանի նկարիչները, գրողներն ու բարեկամները։

Դրանով էլ պետք է բացատրել, որ շատ չանցած, սեպտեմբերի 4-ին, պրոֆեսոր Ա. Ի. Զաուերվեյդը, նախկին ակադեմիստ Այվազովսկու ղեկավարը, հարց է բարձրացնում ակադեմիայի խորհրդի առջև Այվազովսկուն պրոֆեսորի կոչում շնորհելու մասին։ Ակադեմիայի խորհրդին ուղղած նամակում նա գրում է. «Երբ Այվազովսկին հանձնվեց իմ ղեկավարությանը ակադեմիայում, ես իմ պարտքն եմ համարում հիշեցնել, որ նա մի քանի տարում կատարեց այն, ինչ ուրիշները չեն կարողացել անել վեց կամ ավելի տարիների ընթացքում»։ Նշելով, որ նա անուն է հանել Իտալիայում, իսկ Փարիզում նվաճել «առաջին նկարչի փառքը», Հոլանդիայում, Անգլիայում և այլուր լայն ճանաչում է գտել, իսկ Նիկոլայ Թագավորը ասել է. «Այվազովսկին ժամանակ չի կորցրել», պրոֆ. Ա. Ի. Զաուերվեյդը շարունակում է. «արժա-

---

[1] Այվազովսկին վարձում է մեծ Սադովայա փողոցում, Օրդոնանհաուզի մոտ Յակովլևայի առանձնատան մի քանի սենյականոց բնակարանը։

նանալով բարձր գովասանքների ու պարգևների, որպիսիք ոչ մի թոշակառու ուսանող բախտ չի ունեցել երբևէ ձեռք բերել, ես իմ պարտքն եմ համարում առաջարկել. հարգելով Այվազովսկու արժանիքները, շնորհել նրան պրոֆեսորի կոչում»[1]։ 9 օր հետո՝ սեպտեմբերի 13-ին, գեղարվեստի ակադեմիայի խորհուրդը քննելով այդ հարցը, միաձայն որոշում է. «Այվազովսկուն տալ ակադեմիկոսի կոչում և սույն որոշումը ներկայացնել մեծ խորհրդին՝ հաստատման»[2]։ Գեղարվեստի ակադեմիայի մեծ խորհուրդը շուտով հաստատում է այդ որոշումը և երիտասարդ՝ ընդամենը 27 տարեկան, նկարիչը դառնում է եվրոպական չորս երկրների՝ իտալական, ֆրանսիական, նիդեռլանդական (Ամստերդամի) և ռուսական գեղարվեստի ակադեմիաների իսկական անդամ։

Երեք օր անց ռուսական ծովային մինիստրության գլխավոր ծովային շտաբի պետ իշխան Ա. Ս. Մենշիկովը պաշտոնապես հայտնում է. «Թագավոր-կայսրը կարգադրել է ակադեմիկոս Այվազովսկուն նշանակել նորին կայսերական մեծության գլխավոր ծովային շտաբում նկարիչ, ծովային մինիստրության արտահագուստ (մունդիր) կրելու իրավունքով, այն հաշվով, որ այդ կոչումը համարվի պատվավոր՝ առանց գրամական վարձատրության, նկատի ունենալով, որ Այվազովսկու աշխատանքները կվարձատրվեն առանձին»[3]։ Սեպտեմբերի 21-ին նրան պաշտոնապես գրանցում են գլխավոր ծովային շտաբում որպես ռազմածովային շտաբի նկարիչ։

Այդ պատվավոր կոչումը նկարչին հնարավորություն է տալիս ավելի մոտիկ կանգնել ռազմածովային նավատորմին և ծովագնացության (ադմիրալտեյստվո) վարչությունից ստանալ անհրաժեշտ օգնություն։ «Երբ ես նկարում էի ծովամարտի տեսարանները,— ասում է Այվազովսկին հետագայում,— ադմիրալտեյստվոյից տրվում էր ինձ բոլոր անհրաժեշտ պարագաները՝ նավերի գծագրեր, գծանկարներ, զենքեր և այլն։ Ինձ հնարավորություն էր տրվում մոտիկից տեսնել հրանոթ-

---

1 «Документы...», էջ 76—77։
2 Նույն տեղում, էջ 78։
3 Նույն տեղում, էջ 78—79։

ներքից արձակված արկերի թռիչքը ծովի ջրի վերին շերտերով, մարտական լքվածքով հրանոթների կրակոցներ, մասնակցել ծովային զորավարժությանը»։

ՆՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍՈՒՄ

1844 թ. սեպտեմբերի 24-ին Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի ցուցասրահներում բացվում է ակադեմիայի տարեկան ցուցահանդեսը, որին Այվազովսկին մասնակցում է չորս նկարներով։ Դրանցից պետերբուրգյան հասարակությանը վրա առանձնապես ուժեղ տպավորություն են թողնում այն նկարները, որոնք պատկերում են գիշերը ծովի վրա և գիշերը Իսպանիայում։ Նկարիչ Ա. Ի. Իվանովը, տեսնելով դրանք մնում է հիացած և հոկտեմբերի 14-ին մի նամակում հաղորդում է իր հիացմունքը այսպես. «Գիշերը ծովի վրա» մեծ ու լուսավոր պատկերը ներկայացնում է առաջին պլանում մի փոքրիկ ծովափ, որտեղ մի կին ու մի երեխա են ջրի կոհակների հետ խաղում, իսկ մյուսը՝ «Իսպանական գիշեր» ոչ մեծ նկարը։ Աստված իմ, ինչպիսի գիշեր։ Ինչպես ինքը՝ Այվազովսկին ասաց, այդ պատկերի համար հիմք են եղել Պուշկինի բանաստեղծական տողերը։ Դրանք, կարծեմ, այսպիսին են.

Вот взошла луна златая,
Тише, чу, гитары звон,
А испанка молодая
Оперлася на балкон.
Ночной зефир струит эфир,
Шумит, бежит Гвадалквивир,
Скинь мантилью, ангел милый,
И явись как ясный день

---

[4] «Русская старина», 1878. *Տուիս, էջ 444։ Հետագայում նկարիչ Այվազովսկին ստանում է նաև ծովակալի պատվավոր կոչում՝ ծովակալի համազգեստ կրելու իրավունքով և մինչև կյանքի վերջ օգտվել է ռազմածովային գլխավոր շտաբի և ծովային մինիստրության ընձեռած հեռաստվորություններից։*

Сквозь чугунные перилы
Ножку дивную продень. и т. д.

Եթե ոչ այսպես, համենայն դեպս այդ տեսակի մեջ։ Այդ մեծ արտիստի բոլոր ստեղծագործությունները,— շարունակում է նկարիչ Ա. Ի. Իվանովը,— համարյա առանց բացառության զարմացնում են ինձ իրենց արժանիքներով, իսկ իսպանական գիշերը հուզում է, տեղափոխում մեզմ բարեբեր կլիմա։ Ես այնտեղ եմ, ես հիանում եմ երկնակամարի թափանցիկությունից, լսում եմ երգչի ձայնը, վախենում եմ նկատվել երիտասարդ իսպանուհու կողմից, որպեսզի չընդհատեմ նրա նվիրական խոհերը, որպեսզի չխանգարեմ նրա երջանկությունը։ Եթե Պուշկինը դագաղից դիտեր այդ պատկերը, ապա իսկապես վաղուց գրած կլիներ Այվազովսկուն իր շնորհակալությունը իսպանական գիշերվա համար։ Մեկը գիտեր պատմել-գրել, իսկ մյուսը հզոր վրձինով մարդուն տեղափոխում է Պետերբուրգից Իսպանիա և պատճառում է նրան բավականություն՝ անձամբ տեսնելու տվյալ վայրի գիշերը։ Նրանցից որի՞ն առաջնություն տալ», հարցնում է նկարիչ Իվանովը[1]։

Դեռևս հոկտեմբերի 10-ին նույն Ա. Ի. Իվանովը և ակադեմիայի ուսանող 17-ամյա Լ. Ֆ. Լագորիոն, միասին այցելելով Այվազովսկու արվեստանոցը, մնում են զարմացած. կարճ ժամանակամիջոցում Այվազովսկին արդեն նկարել ու ավարտել էր թագավորի պատվերներից երկուսը, որոնցից ամենամեծը՝ «Տալլինի տեսարանը», նրանց վրա ուժեղ տպավորություն է թողնում։ Այդ պատկերում,— գրում է Ա. Ի. Իվանովը,— «հորիզոնը անցել է անվերջ տարածության մեջ, իսկ թափանցիկությո՞նը, ինչպիսի՞ թափանցիկություն»[2]։

Այդ նոր ստեղծագործությունների լուրը անմիջապես տարածվում է պետերբուրգյան նկարիչների շրջանում։ Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 11-ին, նկարիչ Զերնեցովը նույն Լագորիոյի [redacted] այցելում է Այվազովսկուն։ Այդ նույն ժամանակ նկարիչն [redacted] էր մի նոր կտավի վրա։ «Նրանց ներկայությամբ

---

[1] «Документы...», էջ 79—80։

[2] Նույն տեղ, էջ 79։

Այվազովսկին սկսեց և ավարտեց ոչ մեծ ծավալի օդի պատկերը նկարի մեջ։ Հաջորդ օրը, երբ Ջերնեցովը կրկին այցելում է նրան, Այվազովսկին հարցնում է.

— Ինչպե՞ս է Ձեզ թվում օդի նկարը։

— Ես հիացած եմ,— պատասխանում է Ջերնեցովը։

— Այո՛, այդ օդի նկարը լավագույններից մեկն է իմ նկարած օդերից, ես սրանից գոհ եմ,— ասում է Այվազովսկին։[3]

Այս շրջանում էլ բանահավաք-բժիշկ և մշակութային գործիչ Գևորգ Ախվերդյանը Պետերբուրգում ծանոթանում է Հովհ. Այվազովսկու հետ և, տեսնելով նրա ստեղծագործությունները, գրում է Մկրտիչ Էմինին. «Այվազովսկին այստեղ է. ես ծանոթացա նրա հետ, վերջերս ցուցահանդեսում ես տեսա նրա վրձնին պատկանող 6 <4> ծովանկար, ազատ ժամանակ ես քեզ հաշվետվություն կտամ Այվազովսկու և ինձ վրա այդ մեծ արվեստագետի ստեղծագործությունների թողած տպավորությունների մասին»[4]։ 1846 թ. իր «օրագրում» գրի առած այս տպավորությունը ինքնին վկայում է, որ արտասահմանից նոր վերադարձած երիտասարդ նկարչի ստեղծագործությունները բարձր գնահատականի են արժանանում ոչ միայն ռուս, այլև հայ մտավորականության կողմից։

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Այվազովսկին Պետերբուրգում զբաղվում է պատվերների կատարման աշխատանքներով։ Նա նկարում է Սվետաբորգի և Կրոնշտադտի նավահանգստների տեսարանները ծովի կողմից, ինչը հանձնարարված էր, հիշողությամբ նկարում է իտալական նոր տեսարաններ՝ «Փոթորկից փրկվածները», «Ծովային բնանկար», որոնք մեզ են հասել։ Հայաստանի պետական պատկերասրահում է գտնվում «Նավախորտակումից փրկվածները» ոչ մեծ կտավը, որը, կարծես, նույն տարիներին նկարած փոթորիկ և նավախորտակում ներկայացնող պատկերների այուժետային գծի շարունակությունն է ու ավարտը։

---

3 Նույն տեղ, էջ 79։

4 Գ. Ախվերդյան, Նամակներ, 1964, էջ 155։

1845 թ. հունվարի սկզբներին Այվազովսկին դիմում է գեղարվեստի ակադեմիայի վարչությանը, խնդրելով թույլ տալ իրեն մեկնել Ղրիմ, Թեոդոսիայում գտնվող իր ընտանիքի հետ տեսակցելու և սևծովյան նավահանգիստները նկարելու համար։ Հունվարի 7-ին նրան պատասխանում են, որ թույլատրվում է մեկնել Թեոդոսիա մինչև մայիս ամիսը, և կարգադրված է սևծովյան նավահանգիստների բոլոր պետերին ամեն կարգի աջակցություն ցույց տալ նկարչին իր խնդիրները կատարելու համար[1]։

Սակայն Այվազովսկուն չի հաջողվում ցուրտ ձմռանը մեկնել հեռավոր ճանապարհ։ Նրան խանգարում են նաև վերնախավի մեծամեծ անձանց պատվերները, որոնք ժամանակին կատարելու համար նկարիչը ստիպված է լինում մի քանի ամիս ևս մնալ մայրաքաղաքում։ Այդ պատվերներից մեկը տալիս է արդարադատության մինիստր կոմս Վ. Ն. Պանինը։ Նա Այվազովսկուն հայտնում է, որ ինքը ցանկանում է իր առանձնատան լայնարձակ սենյակները զարդարել նկարչի վրձնի արտադրություններով։ Այվազովսկին նրա համար նկարում է երկու մեծակտավ պատկեր՝ «Նեապոլի տեսարանը մի խումբ ձկնորսներով» և «Լուսնյակ գիշեր Ամալֆիում ավազակախմբի հետ, որոնց մեջ բանաստեղծ և նկարիչ Սալվատոր Ռոզան նկարում է տեղանքի բնանկարը»։

Այդ պատվերները նախքան տիրոջը հանձնելը նկարիչը դրանք ցույց է տալիս իշխանուհի Մարիա Նիկոլաևնային՝ կայսրի աղջկան, որը և իր պալատում ցույց է տալիս հորը։ Հաջորդ օր Մարինյան պալատից Ձմեռային պալատ ոտքով գնալիս Մեծ Մորսկոյ փողոցում պատահաբար հանդիպելով Այվազովսկուն, կայսրը կանգնեցնում է նրան։

— Ես հրապուրվեցի քո պատկերով,— ասում է նա բարևելով նկարչին, ապա ավելացնում է,— ճիշտ ասած, ես կխլեմ դրանք Պանինից... Նրա համար նկարիր ուրիշները։

Բայց նկարիչը, չնայած դրան, թույլ չի տալիս անարդարու-

[1] «Документы...», էջ 81։

թյուն և կատավները հանձնում է Վ. Ն. Պանինին, ստանալով դրանց համար որոշակի վարձատրություն»[2]։

Մի քանի օր հետո, ապրիլի սկզբներին, «գատկի առաջին օրը, վաղ առավոտյան մտնելով ճաշասենյակ, Այվազովսկին զարմանքով տեսնում է սեղանի վրա դրված սևրյան ճենապակու գործարանի արտադրության մի սքանչելի թեյի բաժակ, կուլիչ՝ քաղցր թխվածք, կարմիր ձու և մի քանի փունջ ծաղկած վարդենի։

— Որտեղի՞ց այս բոլորը,— հարցնում է նկարիչը։

— Այդ իրերը առավոտ կանուխ բերել է այստեղ կոմս Պանինի ծառայապետը։

Վ. Ն. Պանինի նվերը հուզում է նկարչին, և այդ բաժակը նա պահում է իր մոտ մինչև կյանքի վերջը»[3]։

Այդ նվերը իհարկե պատահական չէր։ Արդարադատության մինիստրը, հավանաբար լսած լինելով իր պատվիրած նկարները խլելու Նորին մեծության ցանկությունը և նկարչի համարձակ ու արդարացի վարմունքի մասին, որոշել էր այդ ձևով վարձահատուցել լինել ազնիվ արվեստագետին։

Նույն այդ օրերին գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտը դիմում է գլխավոր ծովային շտաբի պետին, հայտնելով, որ «մեծ իշխան Կոստանդին Նիկոլաևիչը՝ թագավորի ավագ որդին, ուզում է նկարչի հետ միասին ծովային ճանապարհորդություն կատարել։ Ուստի խնդրում է թույլատրել Այվազովսկուն մեկնել Ղրիմ և այնտեղ մնալ մինչև դեկտեմբեր»[4]։ Թագավոր-կայսրը այդ գրության վրա մակագրում է «Կոստանդին Նիլոլաևիչը այդ մասին խնդրել է, և ես դրան համաձայն եմ, բայց միայն սիրք է, որ նկարիչը նկարի Սևաստոպոլի, Օդեսայի և Կերչի տեսարանները»[5]։

Ստանալով Նորին մեծության թույլտվությունը՝ պրեզիդենտը ապրիլի 13-ին հայտնում է Այվազովսկուն Ղրիմ մեկնելու և ծովակալ Ֆ. Պ. Լիտկեի արշավախմբի հետ Կոստանդին Նուպոլիս ճանապարհորդելու մասին, պայմանով, որ վերա-

---

[2] «Русская старина», 1878, հ. 23, էջ 56։

[3] Նույն տեղ։

[4] «Документы...», էջ 81—82։

[5] Նույն տեղ, էջ 83։

դարձից հետո որոշ ժամանակ մնա Ղրիմում և նկարի Սևաստոպոլի, Թեոդոսիայի, Կերչի և Օդեսայի նավահանգիստների տեսարանները[6]։

Կայսերական տան մինիստրը հաստատելով այդ, ապրիլի 18-ին հայտնում է, որ թագավոր-կայսրը միաժամանակ կարգադրել է «այդ ճանապարհորդությունից հետո Այվազովսկին նիկոլաև քաղաքում սպասի իրեն՝ Նորին մեծությանը[7]։

Ապրիլի վերջերին Այվազովսկին մեկնում է Ղրիմ։ Պետերբուրգից մեկնելուց առաջ իր բնակարանը և արվեստանոցը հանձնում է հայրենակից նկարիչ, գեղարվեստի ակադեմիան մի քանի տարի առաջ ավարտած Ստեփան Ներսիսյանին։ Դա հաստատում է նաև նկարիչ Ստ. Ներսիսյանը, որը 1845 թ. գրած նամակում նշում է իր նոր հասցեն այսպես. «Բնակարան ունեմ մեծ Սադովյան փողոցի Օրդոնանս-հաուզի մոտ, տիկին Յակովլևայի տանը, ակադեմիկոս Այվազովսկու բնակարանը»[8]։

Այդ բնակարանում Ստեփան Ներսիսյանը ապրում և ստեղծագործում է մեկ տարի՝ մինչև 1846 թ. աշունը՝ Այվազովսկու վերադարձը Պետերբուրգ։

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

1845 թ. մայիսի սկզբներին Հովհ. Այվազովսկին արդեն Թեոդոսիայում էր։ Այդ ժամանակից էլ սկսվում է նկարչի կյանքի և գործունեության նոր ու փառավոր շրջանը։

Ավելի քան չորս տարվա բացակայությունից հետո նա վերադառնում է հայրենական տուն, ուր գտնում է միայն ծերացած մորը, որն ապրում էր իր թոշակից հատկացված գումարով և քրոջը։ Հայրը վաղուց չկար. նա մեռել էր 1841 թ.։ Երկու ավագ եղբայրները՝ Գրիգորը և Գաբրիելը, ապրում էին ընտանիքից հեռու, մեկը՝ հեռավոր ս. Ղազար կղզում, մյուսը՝ առանձին։ Մոր և քրոջ հետ նոր կյանք է սկսում ռու-

6 Նույն տեղ, էջ 82։

7 Նույն տեղ, էջ 83։

8 Խորհրդային գրականություն և արվեստ, 1953, № 11։

սական և եվրոպական մի քանի երկրների գեղարվեստի ակադեմիաների իսկական անդամ, անվանի նկարիչը։

Ամբողջ մայիս ամիսը իր ընտանիքում, բարեկամների, հայրենակիցների ու ընկերների շրջապատում անցկացնելուց հետո, Այվազովսկին հրաժեշտ է տալիս նրանց, մեկնում Սիմֆերոպոլ, որտեղ տեսակցելով իր առաջին հովանավոր Ա. Ի. Կազնաչեևի և գիմնազիայի ուսուցիչների հետ, գնում է Սևաստոպոլ՝ ծովակալ Ֆ. Պ. Լիտկեի արշավախմբին միանալու համար։ Այստեղ էլ նա հանդիպում է մեծ իշխան Կոստանդին Նիկոլաևիչին, որի հրավերով էլ նկարիչը մասնակցում է այդ արշավին։

Գեներալ-համհարզ, ծովակալ Ֆ. Պ. Լիտկեն (1797—1882), որը միաժամանակ ռուսական աշխարհագրական ընկերության նախագահն էր, շատ շուտով մտերմանում է նկարչի հետ, հայտնելով իր պատրաստակամությունը նրան ամեն կերպ օգնելու խնդրում։ Արշավախումբը նրա ընդհանուր ղեկավարությամբ հունիսի սկզբներին դուրս է գալիս Սևաստոպոլի նավահանգստից և «Բեսարաբիա» շոգենավով ուղղություն է վերցնում դեպի Կոստանդնուպոլիս՝ անցնելով Թուրքիայի արևմտյան ափերի մոտով։ Հունիսի 6-ին արշավախումբը հասնում է Թուրքիայի մայրաքաղաքը։ Մեծ իշխան Կոստանդինի գլխավորությամբ ծովակալ Ֆ. Պ. Լիտկեն, երկու ռուս սպաներ, բժիշկը և նկարիչ Հովհ. Այվազովսկին այցելում են ռուսական դեսպանատուն։ Մեկ շաբաթ հետո՝ հունիսի 14-ին, այստեղ տեղի է ունենում ճոխ ընդունելություն, որին մասնակցում է նաև նկարիչը[1]։ Նախորդ օրը մեծ իշխանը նկարչի ուղեկցությամբ այցելում է Քում-Քափուի շրջանի հայոց մայր եկեղեցին, որտեղ «արժանավոր հարգությամբ երկրպագություն ընծեյեն հետքը գնաց պատրիարքարան այցելության սրբազան պատրիարքին, որ ակնածական մեծարանօք և արժանավոր պատվով ընդունեց այցելուին։ Կայսրորդին նույն օրը առավոտյան ս. Փրկիչի հայոց հիվանդանոցն ալ պտտել-գացել է»,— տեղեկացնում է զմյուռնահայ թերթը[2]։

Հունիսի 17-ին արշավախմբի անդամների հետ Այվազով-

---

1 «Արշալույս Արարատեան», 1845, №255։

2 Նույն տեղ, № 235։

սկին ներկա է լինում նաև սուլթան Աբդուլ Մեջիդի Բեյլեր բեյ պալատում կազմակերպված ընդունելությանը։ Ընդունելության պահին սուլթանը մնում էր նստած և համարյա չէր խոսում։ «Սուլթանը բոլորին ընդունեց լուռ,— գրում է ծովակալ Ֆ. Պ. Լիտկեն իր ծոցատետրում,— միայն երբ տվեցինք նկարիչ Այվազովսկու անունը, ապա լայն ժպտալով նա հավանություն տվեց, որ մենք չենք մոռացել նկարչին մեզ հետ վերցնել»[3]։

Հովհ. Այվազովսկին նկարում է այդ ընդունելության տեսարանը։ Մոսկվայի Գրականության պետական արխիվում է պահվում նկարչի ճանապարհորդական ալբոմի այն թերթիկը, որը պատկերում է սուլթանին և մեծ իշխան Կոստանդինին իրար դիմաց նստած զրուցելիս, ծովակալ Ֆ. Պ. Լիտկեին արշավախմբի անդամների հետ մի շարքի կանգնած պալատական սրահում։ Նկարում աջից 4-րդը Այվազովսկին է։ Գրաֆիկական այս ստեղծագործությունը գեղարվեստորեն համոզիչ և արտահայտիչ է ներկայացնում իրական անցքը։

Մի քանի օր հետո՝ հունիսի 21-ին, երեկոյան նկարիչը մեծ իշխանի շքախմբի հետ մեկնում է Բրեհո կղզին, որտեղ կայսրի որդին Այվազովսկու ուղեկցությամբ «բարեհաճեցավ օթևանել զ[ուտ]ունիացի ազնվամեծար Դավիթ Սավալանյանի քնակարանը և արժանապես ճաշ ընելով նույն գիշեր այնտեղ ննջեց»[4]։

Հաջորդ օրերին նկարիչը արշավախմբի հետ Դարդանելի նեղուցով նավարկում է դեպի արշիպելագ և դիտում հիշարժան վայրերը։ Հունիսի 27-ին նրանք դիտում են Տրոյա քաղաքի ավերակները։ Այստեղ Այվազովսկին նկարում է պատմություն դարձած այդ հնագույն քաղաքի տեսարանները տարբեր կետերից և օրվա տարբեր ժամերին։ Հաջորդ օրը նա տեղափոխվում է «Մինհլայ» կորվետը՝ ռուսական միջին մեծության հին հետախուզական նավը, և շրջագայում Միջերկրական ծովի կղզիների շրջանում։

---

[3] Л. С. Берг, «Путешествие адмирала Ф. П.Литке из Петербурга в Константинополь», տե՛ս «Труды II Всесоюзного географического съезда», *М., 1949, т. III, էջ 263։*

[4] «Հայրենասեր», *Զմյուռնիա, 1845, №55։*

Հունիսի 29-ին արշավախումբը «Բեսարաբիա» շոգենավով մեկնում է Զմյուռնիա (Իզմիր), որտեղ բնակչության զգալի մասը հայեր էին։ Այստեղ, 8 օր առաջ՝ հունիսի 21-ին, քաղաքում հրդեհ էր սկսվել և կրակի ճարակ դարձել քաղաքի մի մասը։ Այրվել էին շատ բնակելի տներ, խանութներ, շուկան և նույնիսկ հայոց եկեղեցիներից մեկը։ Բնակչության մեջ եղել են զոհեր։ Հազարավոր մարդիկ մնացել են անօթևան։

Երբ ռուսական արշավախումբը առավոտյան ափ է իջնում, Զմյուռնիայի քաղաքային 21 աշտարակներից հրանոթները կրակոցներով ողջունում են հյուրերին։ Հյուրերը այցելում են քաղաքապետին և հայտնում են իրենց ցավակցությունը քաղաքի հրդեհի և դրա պատճառած մեծ կորուստների համար։ Այնուհետև նրանք հյուրընկալվում են տեղի հասարակական գործիչ Հովհաննես Փափազյանի տանը։

Հայաբնակ քաղաքին հասած դժբախտությունը կսկիծով է ընդունում առանձնապես Այվազովսկին։ «Նա խիստ ցավակից եղավ Իզմիրա հայոց դժբախտության վրա,— գրում է ժամանակակից Բերքը,— և անմիջապես այցելության գնաց ս. Մեսրոպյան ուսումնարանին և հիվանդանոցին, որոնք միայն ազատ մնացին հունիսի 21-ին պատահած սոսկալի հրդեհիս։ ...Անոր քաղցր հիշատակը,— շարունակում է Բերքը,— անչնչելի պիտի մնա իր բարեկամների սրտին մեջ, որոնք շատ կցավին, որ չկրցան արժանավոր կերպիվ պատվասիրել զինքը՝ հրկիզության ցավալի դիպվածոյն պատճառով»[5]։

Այդ ցավալի անցքերը տեսնելով, ինչպես և հարգելով իրեն ուղեկցող նկարչի հայրենասիրական զգացումները, Թագաժառանգ Կոստանդինը տեղում նվիրաբերում է 20.000 ղուրուշ, որից 4000 ղուրուշը՝ տուժած հայերին օգնելու համար։ Նույն ժամանակ ռուսական կառավարությունը ևս հատկացնում է որոշ գումար այդ նպատակով։

Հուլիսի սկզբներին Այվազովսկին ռուս ճանապարհորդների հետ լինում է Քիոս, Պատմոս, Լեմնոս, Լեսբոս, Ռոդոս կղզիներում, դիտում Սինոպի նավահանգիստը և քաղաքը։

Հուլիսի 10-ին արշավախումբը վերադառնում է Կոստանդնուպոլիս։

---

5 «Արշալոյս Արարատեան», 1845, №23։

Հովհ. Այվազովսկու վրա առանձնապես ուժեղ տպավորություն է թողնում Կոստանդնուպոլիս քաղաքը, որ նա մյուսների հետ մնում է համեմատաբար երկար. «Հիացած եմ առանձնապես Կոստանդնուպոլսով,— գրում է նա իր նամակներից մեկում,— հավանաբար աշխարհում չկա այդ քաղաքից ավելի հոյակապը, այնտեղ մոռացվում է և՛ Նեապոլը, և՛ Վենետիկը»[6]։

Այստեղ նկարիչը հետաքրքրվում է նաև հայոց կուլտուրլուսավորական հիմնարկներով, մասնավորապես հայոց դպրոցների վիճակով։ Տեղեկանալով, որ մայրաքաղաքի Սկյուտարի թաղամասում 1838 թ. հիմնադրված հայկական ուսումնարանը փակվել է միջոցներ չլինելու պատճառով և 1843 թ. վերածվել թուրքական զինվորական հիվանդանոցի, Այվազովսկին միջամտում է հայկական այդ ուսումնարանը վերաբացելու գործին։ Նա դիմում է տեղի ունևոր դասին և առանձին ընտանիքների՝ իրենց միջոցներով նպաստել անհրաժեշտ ծախսերը հոգալու համար։ Իր կողմից նա խոստանում է որոշ գումար հատկացնել, եթե այդ ուսումնարանը վերաբացվի նախկին հիմունքներով։ Հովհ. Այվազովսկու հայրենասիրական այդ արարքը ջերմ արձագանք է գտնում պոլսահայ իրականության մեջ։ Արևմտահայ մամուլը գրում ու փառաբանում է նկարչի հոգատարությունը ազգային դպրոցի վերկանգնման խնդրում։ «...Ի՜նչ աստիճան ուրախությամբ պիտի լցվի հիմա մեր սիրտը,— գրում է հայկական թերթը,— և որքա՜ն երախտագիտությամբ գոհ պիտի ըլլանք հոգ տանող ազգասեր անձանց, մանավանդ բարեհամբավ աղա Հովհաննես Այվազոլքիեն, որ... քանի մը անգամ առաջարկել է ազգիս երևելիներուն՝ ճեմարանի համար, այսուամենայնիվ իր ազգասեր քնավորությամբ 100 հազար դուրուշ տալու ալ խոստովանել թերթը,— իրրև մայր դրամ մշտնջենավոր մնալով, անոր շահը է, թէ «երբ որ ճեմարանը բացվի։ Սույն «աստակը միայն ճեմարանին ծախսերը համար տրվի»։ Որոշ ժամանակ ա՛ղ արդեն հավաքվում է 500.000 դուրուշ, և հայոց ուսումնարանը 1845 թ. կրկին վերաբացվում է։

---

[6] «Документы...», էջ 90։

[7] «Հայ.Կնաակր», 1845, №98, №248։

Կոստանդնուպոլսում, ուր այն ժամանակ հայ բնակչության թիվը հասնում էր մինչև 100.000-ի, ինչպես մյուս հայաբնակ վայրերում՝ (Զմյուռնիա, Բուրուսա և այլն), իր ազգանվեր գործունեության կուզրնթաց Այվազովսկին անընդհատ նկարում է բնության տեսարաններ, մարդկանց, նավերի ու նավահանգիստների նկարներ, էսքիզներ և էսքիզներ։ Պահպանվել և այժմ Մոսկվայի պետական կենտրոնական գրական արխիվում է պահվում Հովհ. Այվազովսկու այդ տարվա ճանապարհորդական ալբոմը, որի մեջ կան սեպիայով, ջրաներկով կամ հենց միայն մատիտով նկարված 25 նկար, որոնք պատկերում են հիշյալ քաղաքների, կղզիների, տարբեր բնակավայրերի ու ծովային տեսարաններ, արևելյան մարդկանց տիպեր և կենցաղային պատկերներ։ Բնորոշ է Կոստանդնուպոլսի հայաբնակ թաղամասերից Սկյուտարի ծովափնյա տեսարանը իր արևելյան երկհարկանի մենատներով, երկանիվ ծածկասայլով ու հայ բնակիչների ֆիգուրներով։ Ուժեղ ու ճշգրիտ գծանկարով նկարիչը կարողացել է վերարտադրել տեղանքի համոզիչ պատկերը, նրա արևելյան կոլորիտը, փոքր ծավալների մեջ լուծելով տարածական խնդիրներ։ Ուշագրավ է, որ ալբոմում զետեղված այդ նկարների տակ նկարիչը ստորագրել է «Այվազ էֆենդի» (ռուսերեն)՝ նշելով տարեթիվը (1845)։ Դա հիմք է տալիս ասելու, որ նկարիչը Կոստանդնուպոլսում և ծովափնյա մյուս հայաբնակ քաղաքներում հայրենակիցների հետ հանդիպելիս և զրուցելիս գործածվել է արևմտահայերի մոտ ընդունված այդ արտահայտությունը։

Հուլիսի 29-ին ծովակալ Ֆ. Պ. Լիտկեի արշավախմբի հետ Այվազովսկին վերադառնում է Օդեսա՝ իր հիշողությունը հարստացրած նոր տպավորություններով, որոնք առատ նյութ են տալիս ստեղծագործելու։ «Այդ ճանապարհորդությունը,— գրում է նկարիչը,— եղավ չափազանց հաճելի ու հետաքրքրական, ամենուր ես հասցրի նկարել էսքիզներ պատկերների համար»[8]։

[8] «Документы...», էջ 90։

ՂՐԻՄՈՒՄ

Դեպի Կոստանդնուպոլիս կատարած ճանապարհորդությունից հետո Այվազովսկին, կայսերական տան նախօրոք կարգադրությամբ համաձայն, Օդեսայից անմիջապես մեկնում է Նիկոլաև քաղաքը, որտեղ դիմավորում է Պետերբուրգից ժամանած կայսրին։ Կայսերական շքախմբի հետ նա շոգենավով մեկնում է Սևաստոպոլ։ «Ես բախտ ունեցա, թագավորի կամքով, նրա հետ մեկնել շոգենավով Նիկոլաևից մինչև Սևաստոպոլ։ Ամբողջ ժամանակ կայսրը ինձ հետ արտակարգ սիրալիր էր և Սևաստոպոլի նավահանգիստը դիտելիս ինձ շատ պատվերներ տվեց»,— գրում է նկարիչը[1]։

Այդ պատվերները կատարելու համար նկարիչը Սևաստոպոլում մի քանի էսքիզներ է անում և օգոստոսի սկզբներին վերադառնում է Թեոդոսիա։

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Այվազովսկին ապրում և աշխատում է Թեոդոսիայում, երբեմն մի քանի օրով մեկնում է Ղրիմի հարավային ափերը էսյուդներ անելու։ Նոյեմբերի 29-ին նա գրավոր դիմում է գլխավոր ծովային շտաբի պետին և ակադեմիայի պրեզիդենտին, խնդրելով թույլ տալ իրեն մնալ Ղրիմում մինչև 1846 թ. մայիս ամիսը, հանձնարարված պատվերները կատարելու համար[2]։ Նա միաժամանակ տեղյակ է պահում, որ ինքը արդեն «հասցրել է ավարտել երկու պատկեր, մեկը ներկայացնում է Կոստանդնուպոլսի մի մասը Զոլոտոյ Ռոգի հետ, մյուսը՝ Գալատյան աշտարակի կողմից։ Այդ պատկերները ուղարկում եմ Ձեզ նախօրոք տեսնելու և ապա Նորին մեծությանը ներկայացնելու համար»[3]։ Նկարիչը Պետերբուրգ է ուղարկում նաև «Աֆոնի լեռները» և «Արշաարը գիշեր ժամանակ» կտավները, որոնք նա նկարել էր վերջին ամիսներին։

Ստանալով Ղրիմում մինչև 1846 թ. մայիս ամիսը մնալու իրավունք՝ Այվազովսկին ուշ աշնանը գնում է մրգատու մի

---

1 «Документы...», էջ 90:

2 Նույն տեղ, էջ 87։

3 Նույն տեղ, էջ 88։

փոքրիկ այգի Ղրիմի հարավային ափին և սկսում զբաղվել նաև տնտեսական գործերով։ Չափազանց գոհ իր այդ գնումից, նա գրում է. «Զարմանալի տեղ է, ձմռանը հմայրյա բոլորը կանաչ են, քանի որ կան կիպարիսներ և դափնի ծառեր, իսկ ամռական վարդերը ծաղկում են մշտապես ձմռանը։ Ես հիացած եմ այդ գնումից, թեև ոչ մի կոպեկի օգուտ չունեմ, բայց փոխարենը Իտալիայի և ոչ մի վիլլա չի ստիպի ինձ նախանձել»[4]։ Կարգի բերելով այգին և փոքրիկ բնակելի տունը իր պահանջներին համապատասխան՝ Այվազովսկին աշնան ամիսները անց է կացնում այդտեղ։ «Համարյա ամբողջ աշունը ես անցկացրի Ղրիմի հարավային ափին, որտեղ ես լիովին ու մեծ հաճույք ստացա բնությունից, համարելով այն Եվրոպայի լավագույն վայրերից մեկը»,— գրում է նկարիչը[5]։

Այդպես գոհ ու երջանիկ, նկարիչը շարունակում է ապրել ու աշխատել Ղրիմում, ազատ ժամանակն անցկացնելով բարեկամների ու ծանոթների հետ։ Մինչև տարեվերջ նկարչի տանը և արվեստանոցում կուտակվում են բազմաթիվ նկարներ, որոնցից մեզ են հասել հինգ գունանկար և ավելի քան 8 գծանկար աշխատանքներ։ Պահպանվել և Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում է գտնվում «Լուսնյակ գիշեր Ամալֆիում մի խումբ ավազակների հետ, որոնցից նկարիչ Սալվատոր Ռոզան նկարում է շրջակայքի բնանկարը», կոմս Պանինի պատվերով նկարված մեծակտավ (118×189) աշխատանքը։ Դա պատկերում է իտալական քաղաքի ծովափնյա ժայռոտ մասը և մի քանի ավազակներ, ժայռի ստորոտում խարույկ վառելիս։ Նկարի ձախ կողմում, հսկա ժայռի վրա, երևում է այդ ավազակների մեծավոր տունը, իսկ դրա դիմաց՝ ծովի մեջ խրված ժայռաբեկորին նստած, Սալվատոր Ռոզան նկարում է բնության այդ հոյակապ տեսարանը։ Նրա մոտ կանգնած ավազակներից մեկը ուշադիր դիտում է նկարչի աշխատանքը։ Երկֆիգուր այս կոմպոզիցիան որոշ հավասարակշռություն է մտցնում պատկերի երկու կողմերի միջև։ Երկրորդ պլանում անհանգիստ ծովն է երկու փոքրիկ առագաստանավեր Բարձր և լուսավոր երկնակամարը նպաստում է առաջին

---

4 «Документы...», էջ 90։

5 Նույն տեղ։

պլանում պատկերված ժայռերի ու մարդկանց ֆիգուրների ցայտուն երևալուն։

Այդ տարի Այվազովսկին կատարում է նաև գրքի նկարազարդման աշխատանքներ։ Պետերբուրգում եղած ժամանակ, Կ. Պ. Բրյուլովի հրավերով ու առաջարկությամբ, Այվազովսկին Բրյուլովի հետ ձևավորում և նկարազարդում է ռուս նշանավոր երկրաբան և ճանապարհորդ Ա. Պ. Չիխաչևի «Գիտական ճանապարհորդություն Արևելյան Ալտայ և Չինաստանի սահմանային շրջանները» գիրքը, որը լույս է տեսնում 1845 թ. Փարիզում, ֆրանսերեն։ Ծանոթանալով այդ գրքի բովանդակությանը, Այվազովսկին նկարում է «Չիխաչևի էքսպեդիցիայի հանգիստը Փոքր Ալաշ հովտում» նկարը, որը որպես նկարազարդում զետեղված է գրքում[6]։

Անցյալ դարի կեսերի ռուսական մշակույթի և առաջավոր գիտության խոշոր ներկայացուցիչ Ա. Պ. Չիխաչևի գրքի գեղարվեստական ձևավորմանն ու նկարազարդմանը երիտասարդ ծովանկարչի ու Կ. Պ. Բրյուլովի մասնակցությունը պատահական չէր։ Արևելյան երկրների մասին մարդկության իմացությունը հարստացնող Չիխաչևի աշխարհագրական-ճանապարհորդական աշխատությունները և նրանց մատերիալիստական ոգին ժամանակին բարձր գնահատականի են արժանացել հեղափոխական դեմոկրատներ Վ. Բելինսկու և Ն. Չերնիշևսկու կողմից։ Դրան հակառակ, հետադիմական շրջանները ամեն կերպ աշխատել են լռության մատնել Չիխաչևի անունն ու նրա գիտական կարևոր հայտնաբերումները։ Հովհ. Այվազովսկին պրոֆ. Կ. Պ. Բրյուլովի հետ նկարազարդելով Չիխաչևի այդ գիրքը, դրսևորում է իր ակտիվ վերաբերմունքը։ «Դա մեկն է մեզ հայտնի ոչ շատ այն դեպքերից, երբ ծովանկարիչ Այվազովսկին ընդգծելով իր համերաշխությունը մոռացության մատնված գիտնականի հայացքների հետ, հանդես է գալիս նրա գրքի նկարազարդող»,— գրում է ակադեմիկոս Հովսեփ Օրբելին[7]։

---

[6] Tchihatcelff P. Voyage sientifique dans l'Altai oriental et les parties adgaltes de la frontiére de Chine, fait par ordres de J. M. I. Empereur de Russe, 1845, Paris.

[7] «Советская культура», г. 1960, № 73.

Գրքի նկարազարդման բնագավառում Այվազովսկու կատարած այս աշխատանքը առաջինը չէ նրա ստեղծագործական կյանքում։ Ինչպես արդեն նշել ենք, նա գրքի ձևավորման ու նկարազարդման աշխատանքներ է կատարել դեռևս ուսանող եղած ժամանակ։

ՂՐԻՄԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ

1846 թ. հունվարի 1-ը՝ նոր տարվա առաջին օրը, նկարիչը անց է կացնում հարազատների ու բարեկամների միջավայրում։ Թեոդոսիայի հայրենական տունը և այնտեղ հիմնած արվեստանոցը դառնում են մշտական այցելությունների վայր՝ մի տեսակ ուխտատեղի, ուր հայրենակիցները այցելում են ոչ միայն տեսնելու և հրճվելու հարազատ զավակի տաղանդավոր ստեղծագործություններով, այլև լուծելու իրենց հուզող հարցեր։ Որպես մեծ հեղինակություն վայելող անձի, նրան են դիմում դպրոցական, կրոնական, ընտանեկան, կուլտուրական, նույնիսկ անձնական ու հասարակական այլևայլ խնդիրներով, և նկարիչը իր գիտելիքների ու հնարավորությունների սահմաններում օգնում է նրանց։ Բնորոշ է, օրինակ, այն փաստը, որ նրան են դիմում Ղրիմի հայբնակ վայրերում եկեղեցիներ և մատուռներ կառուցելու, դրանց համար սրբապատկերներ նկարելու և նույնիսկ հայոց եկեղեցիների նախագծեր պատրաստելու խնդիրներով։ Եվ նկարիչը, թեև ճարտարապետ չէր, կատարում է հայրենակիցների խնդրանքը։ Մաշտոցյան մատենադարանում պահպանվել է մի փաստաթուղթ, որը պերճախոս վկայություն է այդ մասին։ Գա Տավրիկյան գավառի եկեղեցիների և վանքերի հոգեբարձու պարուչիկ Թ. Տելվիթյանի 1846 թ. հունվարի 4-ի նամակն է, որով նա Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն հայտնում է, որ «...Երեկոյան օրն ըստացա պ. Օհաննեսեն Այվազովվզոյ աշխատեալ և շինեալ բլանն ի Ֆեօտոսիա ս. Գևորգա ուղտատեղույն, որ ըստ սըմին ունիմ պատիվ մատուցանել առ ամենասողորմած տեառնդ և խնդրել ի հասարակութենէն Ֆեօտոսիայի հայոց ժողովրդոց՝ վերադա-

ցուցանել և հրամայել ըսգսել շինուիլյունն այսմ գարնան։ Պ. Այվազովսգին մնաց այս ձմեռ ի Ֆեօտոսիա ըստ խնդրանաց իւր, ինքնակալ կայսերն ռուսաց հրաման տվավ մինչև ցմայիսի 10 մնալ ի Ղրիմու նահանգին։ Յույս ունիմ, որ չի Թողնեմ մինչև ի գնալս Ղարասու Պազարու եկեղեցւոյ բլանն ել շինել տամ»[1]։

Իսկապես, այդպիսի աշխատանքներ նկարիչը արել է, և նրա նախագծերով Ղրիմում ժամանակին կառուցվել են հայկական մի քանի եկեղեցիներ ու մատուռներ։ Թեոդոսիայի Այվազովսկու անվան պետական պատկերասրահի մեմորիալ բաժնի էքսպոզիցիայում այժմ էլ ցուցադրվում է հայոց եկեղեցու նախագծերից մեկը, ինչը խոսում է այն մասին, որ այդպիսի նախագծեր նկարիչը կատարել է նաև հետագայում։

Ավելին, օժտված լինելով նաև ճարտարապետի շնորհներով, Այվազովսկին մտածում է իր համար ևս նոր տուն կառուցել Թեոդոսիայում։ Իր այդ միտքը նրան այնպես է ոգևորում, որ նա ամենակարճ ժամանակամիջոցում ավարտում է երկհարկանի տան նախագիծը, որը լինելու է շքեղ ամառանոցային տիպի շենք՝ վիլլա։ Բոլոր մանրամասներով ավարտելով նախագիծը՝ պատրաստվում է առաջիկա գարնանը սկսել շինարարական աշխատանքները։ Չափազանց զբաղված լինելով անձնական և հասարակական գործերով՝ նկարիչը նոր տարվա առաջին օրերին որևէ կտավ չի նկարում։ Նրան պակասում էին նաև նկարչական պարագաները, հատկապես ներկեր, որոնք Ղրիմում չկային։ «Ցունենալով ինձ մոտ նկարչության անհրաժեշտ նյութեր,— գրում է նա,— ես ստիպված եղա դուրս գրել Պետերբուրգից, խնդրեցի և այլ պարագաներ ևս, այդ պատճառով ես մի փոքր ուշ սկսեցի աշխատել, այսինքն՝ հունվարի 15-ից միայն կարողացա սկսել նկարել»[2]։

Երկու ամիս անց՝ մարտի 16-ին, Այվազովսկին իր ծանոթներից կոմս Ջուբովին հայտնում է. «Ես արդեն նկարել եմ չորս մեծ պատկեր (Սև ծովի նավահանգիստները) Նորին մեծության պատվերով։ Այժմ նկարում եմ Կոստանդնուպոլսի պատկերը մեծ չափով, մտածում եմ նկարել էլի չորս փոքր

---

1 Մատենադարան, կաթ. դիվան. թղթ. 121, վավ. 16։

2 «Документы...», էջ 90:

չափերով և մայիսի վերջերին անպայման կմեկնեն Պետերբուրգ այդ պատկերներով։ Տեղյակ պահելով այդ մասին՝ Նկարիչը միաժամանակ հայտնում է. «Ավարտելով բոլոր այդ պատկերները, ես ուզում եմ այստեղ՝ իմ ծննդավայրում կազմակերպել ցուցահանդես»[3]։

Թեոդոսիայում իր ստեղծագործությունների անհատական ցուցահանդես կազմակերպելու մտադրության մասին Այվազովսկին հայտնում է նաև էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն։ 1846 թ. մայիսի 17-ին Թեոդոսիայից նրան ուղղած հայերեն նամակում Նկարիչը գրում է. «Այս կողմերու շատ գիտնական անձանց խնդրանօքը ես յօժարացայ ցույց տալ (վիստավքա) այս ձմեռվան իմ քաշած պատկերները, որ նոր պիտի ըլլա, այս մայիսի քսան և մեկին, որ ժամանակին այս Դաւրիկյան նահանգի առաջավոր անձանց կսպասեմ, որոնց հետ և Ազնուամեծար աղա Թորոսին Դանիելյան իւր ընտանեօքը»[4]։ Բազմազրաղ Ներսես Աշտարակեցուն իր մտադրությունը տեղյակ պահելու փաստը ինքնին վկայում է Ամենայն հայոց կաթողիկոսի հետ Նկարչի ունեցած ծանոթության և փոխադարձ մտերմության մասին։

Դեռևս 1844 թ. ամռան և աշնան ամիսներին, մինչև 1845 թ. սկզբները Պետերբուրգում գտնվող երիտասարդ Նկարիչը անկասկած հանդիպել ու զրուցել է նույն ժամանակ Պետերբուրգում բուժման մեջ գտնվող Ներսես կաթողիկոսի հետ։ Այդ է վկայում ոչ միայն սույն նամակի մտերմիկ ոճը և կամ «Դուլթինս մատուցանելու ձեր վեհափառութեան իմ վրայ ունեցած յիշողութեանց վրա», այլև այն, որ դեռևս ավելի քան մեկ տարի առաջ՝ 1845 թ. մարտի 29-ին, հայոց կաթողիկոսին Մոսկվայից գրած նամակում, Նկարիչն արտահայտել է հարազատ ժողովրդին ծառայելու իր պատրաստակամությունը։ «...ինչի մասին առնեն այնօրիկ զորմե պատմաբանիք ի հայրապետական կոնդակի Ձերում,— գրել է Նկարիչը,— հոգ-կալալց անշուշտ ի կատար ածել զմուտ և զելիս գործին՝ քաջ տեղեկացեալ ըստ պատճենի առաքելոյ առ իս, առ ժամս պարտաւորութիւն անձին կալալ ծանուցանել ի միամտու-

---

[3] «Документы...», էջ 30:

[4] Նույն տեղ.։

թիւն վեհափառ տերութեան Ձերոյ զորացմանէ և առ յապայն հաղորդեցից Ձեզ նույնպես ոչ անագան քան զառաջին սուրհանդակաւ ստուգութեամբ տեղեկացեալ զորպիսութիւն ելից և մտից գործին»[5]։

Հայ հասարակության «ելից և մտից գործերին» ծանոթ լինելու և նրանց վիճակի մասին ստույգ տեղեկություններ ունենալու համար պետք էր, որ նա կապված լիներ ժողովրդին և նրան հուզող հարցերին։ Հովհ. Այվազովսկին հենց այդպիսին էր։ Պետերբուրգում լիներ, թե արտասահմանում, Ղրիմում թե Կովկասում, նա ամենուր շփվում էր հայերի կամ հայության զանգվածների հետ, գործուն մասնակցություն ունենալով նրանց կյանքում։ Սույն նամակից էլ պարզորոշ երևում է, որ նա, իրոք, կապված է եղել ղրիմահայության հետ և շահագրգռված նրան հետաքրքրող խնդիրներով։ Իր ծնող ժողովրդի հետ Այվազովսկու սերտ կապերի լավագույն ապացույցն է նաև 1846 թ. մայիսի 17-ի նրա նամակը կաթողիկոսին, որի մեջ իր ցուցահանդեսը բացելու մտադրության մասին հաղորդումից բացի, նկարիչը հստակորեն դրսևորել է իր անմիջական միջամտությունը և պայքարը Վատիկանի կաթոլիկ ճիզվիտների դեմ։

Ինչպես հայտնի է, Վատիկանը իր միսիոներներով և կաթոլիկ հայ հոգևորականների միջոցով դարեր շարունակ աշխատել է դավանափոխել հայերին, բաժան-բաժան անել ժողովրդի առանձին զանգվածներ, ջլատել նրանց ուժը և խաթարել հայրենասիրական մղումը, դրանով իսկ հող նախապատրաստել Արևելքի ժողովուրդների վրա արևմտաեվրոպական երկրների էքսպանսիային։ Հայ ժողովուրդը միշտ էլ պայքարել է Վատիկանի այդ ոտնձգությունների դեմ։

19-րդ դարի կեսերին Վատիկանը ուժեղացնում է իր քայքայիչ աշխատանք ոչ միայն արևմտահայության, այլև Ղրիմի հայերի շրջանում։ Դա լուրջ վտանգ էր ժողովրդի այդ զգնգվածի համար։ Խորապես զգալով այդ՝ Հովհ. Այվազովսկին 1846 թ. մայիսի 17-ի թվակիր նամակով Ներսես կաթողիկոսին տեղյակ է պահում Ղրիմի հայերի մեջ մարդորսություն զբաղվող կաթոլիկ ճիզվիտների քայքայիչ գործունեու-

---

5 Հայկական ԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. բաժ.), 1958, №11, էջ 89։

թյան մասին, առաջարկում է հեռացնել տալ Ռուսաստանից և արգելել նրանց գրականության մուտքը։ Հայերեն գրած այդ նամակում Այվազովսկին հաղորդում է. «...Այստեղի եզուիդք... բավական դեղնցին մեր ժողովուրդները անհարկի խոսքերով, Ձեր վեհափառութեանը ճանապարհորդութեննն յետոյ, որոնց համբերութիւն չի բավականանար, շատ քաւ կուտայ մեր շատ ժողովրդեան նոցա արած անկարգ խոսքերն»։ Եվ ապա ավելացնում է, քանի որ «...մեր ժողովրդեան մեջ կրթեալ անձինք սակաւ են՝ այն պատճառով շատին սրտին մեջ անկարելի է, որ անկարգ տպաւորութիւն չի գոյանայ»։ Ելնելով վերոհիշյալից, Այվազովսկին եզրակացնում է. «Առանց կարծեաց յայտնի է, որ հռոմեահայոց քահանայից այս տեղերէն հեռանալները, շատ օգուտ կը կարենայ գոյացնել մեր ազգին», ուստի պահանջում է նրանց «հեռացնել այս կողմերէն» և ճիզվիտների «տպած գրքերուն Ռուսիա գալը արգելել»։ Հովհ. Այվազովսկին հայտնում է, որ ինքը մտադիր է այդ մասին դիմել ռուսաց կառավարությանը՝ ճիզվիտներին Ռուսաստանից դուրս վռնդելու համար[6]։

Այս նամակում, ինչպես տեսնում ենք, որոշակի արտահայտված է ոչ միայն նկարչի անձնական վերաբերմունքը, այլև արտացոլում է գտել այն խոր զայրույթը, որ գոյություն է ունեցել ժամանակին հայ հասարակության առաջավոր խավերում ճիզվիտ հոգևորականների քայքայիչ գործունեության նկատմամբ։

Այդ զայրույթը և պայքարն արտահայտվել են նաև նույն շրջանի գեղարվեստական գրականության, հրապարակախոսության և պարբերական մամուլի էջերում։ Բնորոշ է, օրինակ, Ս. Վարդանյանի «Ագապի» վեպը (1840), որի հիմքում ընկած է վատիկանի և նրա գործակալների դեմ ուղղված արևմտահայերի պայքարը։

Նույն ժամանակ Վատիկանի և կաթոլիկության այդ քայքայիչ գործունեության դեմ անհաշտ պայքար է մղում նաև հրապարակախոս-դեմոկրատ Մինաս Նալբանդյանը։ Հանդես գալով Հովհ. Այվազովսկու վերոհիշյալ նամակից մի փոքր

---

[6] «Документы...», էջ 91—92:

ուշ՝ 1850-ական թվականների կեսերին, Մ. Նալբանդյանը «Հյուսիսափայլ» ամսագրի էջերում և Ֆրեն Սյուի «Թափառական հրեա» գրքի հայերեն թարգմանության առաջաբանում, իսկ ավելի ուշ՝ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքում բացահայտում է Վատիկանի գործունեության քաղաքական կողմը, ցույց տալով, որ «...կաթոլիկական պրոպագանդան սպառնում է ոչ միայն հայ ժողովրդի կրոնական միության խախտմանը, այլև նրա դասակարգային, սոցիալական պայքարին և նրա հետ միասին ազգային-ազատագրական պայքարին»[7]։ Այսպիսով, Վատիկանի և նրա ճիզվիտ գործակալների քայքայիչ գործունեության դեմ հայ իրականության մեջ տարվող պայքարին Այվազովսկու եռանդուն մեջամտությունը ցույց է տալիս, որ երիտասարդ ծովանկարիչը դեռևս 1840-ական թվականների կեսերին ակտիվ մասնակցություն է ունեցել հայ հասարակական կյանքին։ Կաթոլիկության գործունեության դեմ նկարիչը հանդես է գալիս նաև հետագայում՝ 1870—80-ական թվականներին։

Ուշագրավ է, որ կաթոլիկ ճիզվիտների քայքայիչ գործունեության դեմ նկարիչն առաջին անգամ հանդես է գալիս հենց այն ժամանակ, երբ մի քանի օր հետո բացվելու էր նրա ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը։ Կարծում ենք, որ փաստն ինքնին խոսուն է։ Հովհ. Այվազովսկին գիտեր, որ ցուցահանդեսի առթիվ Թեոդոսիա կգան ղրիմահայերի հոծ զանգվածներ, որոնց փոխմերձեցումն ու շփումը կարող է նպաստել հայոց ներքին կյանքի կազմակերպմանը, ազգապահպանման սրբազան գործին։

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԹԵՈԴՈՍԻԱՅՈՒՄ

Թեոդոսիայում ցուցահանդես բացելու ցանկությունը քխում էր ամենից առաջ նկարչի հայրենասիրական զգացումներից։ Մինչև այդ կայսրության ծայրագավառային այդ քաղաքում և ընդհանրապես ռուսական փոքր քաղաքներում նման

---

7 Գ. Ստեփանյան, «Ազգապահ» վեպի առաջաբանը, 1953, էջ 14։

Միջոցառումը աննախադեպ էր։ Քաղաքի բնակիչները թեև տեղյակ էին երիտասարդ համաքաղաքացու հաջողություններին, բայց դեռ չէին տեսել նրա ստեղծագործությունները։ Ցուցահանդեսը նպատակ ուներ նաև նպաստել հայրենակիցների գեղարվեստական-գեղագիտական կրթությանն ու առաջադիմությանը։ Բացի այդ, 1846 թ. զուգադիպում էր իր հրապարակ գալու և ճանաչման առաջին տասնամյակին։ Այսպիսով, Թեոդոսիայի այդ ցուցահանդեսին տրվում է հոբելյանական բնույթ, մանավանդ, որ այն համընկնում էր նրա ծննդյան տարեդարձին։

Ցուցահանդեսը բացվում է մայիսի 24-ին, Թեոդոսիայի զինվորական ջոկատի հրամանատար Կ. Մ. Պոտյոմկինի առանձնատանը, որը գտնվում էր ծովափնյա զբոսայգում։ Ցուցադրվում են 12 նկար. «Փոթորիկ Կերչի նահանգում», «Թեոդոսիան արևածագին», «Գիշերը Օդեսայի ծովափնյա շրջանում», «Կոստանդնուպոլիսը իրիկնամուտին», «Մելոս կղզին վաղորդյան արևի ժամանակ», «Հասարակական կյանքի տեսարան Կոստանդնուպոլսում», «Սրճարան», «Փոթորկալից գիշեր ծովի վրա», «Ս. Գևորգի վանքը Սևաստոպոլի մոտ» և այլն[1]։ Այս պատկերների մեծ մասը Այվազովսկին նկարել էր Թեոդոսիայում, այն տպավորությունների հիման վրա, որոնք ստացել էր նա վերջին ճանապարհորդության ժամանակ։

Ղրիմի տարբեր կողմերից Թեոդոսիա են ժամանում բազմաթիվ հյուրեր, այդ թվում նկարչի առաջին հովանավոր ու մեծ բարեկամ Ա. Ի. Կազնաչեևը, Տավրիկյան նոր նահանգապետ Վ. Պ. Պեստելը, Կերչի քաղաքագլուխ իշխան Զ. Ե. Խերխեուլիձեն, ծովակալ Մ. Պ. Լազարևը, «12 առաքյալներ» ռազմանավի հրամանատարը և ուրիշներ։ Նրանց ներկայությամբ ցուցահանդեսի բացումը վեր է ածվում տոնի։ Տոնակատարությունն ավելի հանդիսավոր է դառնում, երբ Սևաստոպոլից Թեոդոսիայի ափերին են մոտենում սևծովյան նավատորմի հինգ ռազմանավ՝ «12 առաքյալներ» գծանավի հրամանատար Վ. Ա. Կոռնիլովի հրամանատարությամբ, որոնք քաղաքի մոտ խարիսխ են գցում և թնդանոթային համազարկ տալիս։ Նկարչի ժամանակակից կենսագիրը այդ կապակցությամբ գրում

---

1 «Одесский вестник», 1846, март.

է. «կարելի է ասել, որ մարտական Սևաստոպոլը այցելել է յաղաղ Թեոդոսիային»[2]։

Նախօրոք կազմված ծրագրի համաձայն այդ տոնակատարությունը կատարվում է այսպես. «Աստվածային պատարագը (լիտուրգիան) աղոթքի հետ լսելուց հետո,— գրում է «Իլյուստրացիա» ամսագիրը, —հյուրերը այցելում են ցուցահանդես, իսկ տոնակատարությանն սկսում են հավաքվել ժ. 6-ին Կովկասի հայտնի հերոս Պ. Ս. Կոտլյարևսկու ամառանոցում։ Ժ. 6-ին սկսվում է ձիարշավը։ Ապա հեծյալ ջիգիթները մենամարտում են, փորձելով իրար ձեռքից խլել թաշկինակը, իսկ կանայք շնորհում են մրցանակները, պարերը երբեմն ընդհատվում էին հրավառության ժամանակ, այնուհետև նստում են ընթրիքի 320 անձով այգու նկարազարդ վրանում։ Պարահանդեսը ավարտվում է առավոտյան ժամը 4-ին»[3]։ «Այդ ամբողջ ժամանակվա ընթացքում երաժշտությունը հնչում էր անդադար»,— պատմում է նկարիչը։

Թեոդոսիայում հոբելյանական տոնակատարությունը տևում է 3 օր՝ մայիսի 21-ից մինչև 23-ը, իսկ ցուցահանդեսը շարունակվում է մինչև մայիսի 31-ը։ Առավոտվա ժ. 8-ից մինչև երեկոյան ժ. 6-ը ծովանկարներով զարդարված սենյակները լեփ-լեցուն էին այցելուներով։ «Սևի ծովի հյուսիսային շրջանի համարյա բոլոր քաղաքների բնակիչները ցանկանում էին ողջունել հռչակավոր հայրենակցին, որը ձեռք էր բերել Եվրոպայի առաջնակարգ նկարչի անուն»,— գրում է ժամանակակից լրագիրը[4]։

Երիտասարդ կոմպոզիտոր Ա. Ն. Սերովը (1820—1871)՝ ապագա նկարիչ Վ. Ա. Սերովի հայրը, դիտելով ցուցահանդեսը, քննադատ-արվեստագետ Վ. Վ. Ստասովին գրում է. «Ես չեմ կարծում, որ այժմ Եվրոպայում կա որևէ նկարիչ, որը գերազանցի Այվազովսկուն նկարչության այդ տեսակի մեջ»։ Ապա մեկ առ մեկ նկարագրելով բոլոր 12 կտավները՝ տալիս է իր գնահատականը, որը հետաքրքրական է որպես ժամանակակցի խոսք։ Բերում ենք նրա նմանակի այդ հատ-

2 «Русская старина», 1878, հ. 22, էջ 61։

3 «Иллюстрация», 1846.

4 «Одесский вестник», 1846, № 49.

վածը. «...«Թեոդոսիա» և «Օդեսա» պատկերները արժեն մինչև 12 բալ, իսկ «Կոստանդնուպոլիսը»՝ 12։ Ես չգիտեի, որ դա Այվազովսկու վերջին մեծ նկարներից է, բայց իսկույն նկատեցի, որ նկարիչը այստեղ առաջ է գնացել մյուս նկարներից, և դա իսկական շեղբեր է։ Դա բնական է, որովհետև այդ պատկերների մեջ խնդիրը ավելի կարևոր է, և նկարիչը պետք էր, որ իր համար բացեր բոլոր առագաստներում։ Բայց հենց այդ աշխատանքներում, նույնիսկ ամենաթույլ «Սևաստոպոլում» (որին ես կտայի 10 կամ 11 բալ) ինչպիսի՞ բնականություն կա օդում և ծովի պատկերում։ Պարզապես անհասանելի է։ ...Պատկերացրու, հունվարի 15-ից մինչև մայիսի 19-ը նա նկարել է հինգ մեծ պատկեր (որոնցից միայն «Կոստանդնուպոլսի» վրա աշխատել է 21 օր, իսկ մյուսների վրա՝ մեկ շաբաթ և պակաս) և 5 փոքր նկարներ։ Փոքրածավալ նկարներից հրաշալի են քաղաքային կյանքից երկու կենցաղային տեսարան. մեկը՝ սրճարան, մյուսը՝ կանայք նավակի մեջ։ Ես նույնիսկ երբեք չեմ իմացել, որ նա այդպես լավ է նկարում մարդկային ֆիգուրներ, ամենուր այնքան կյանք կա, այնքան փայլ, և այժմ արդեն նրա մոտ չկա չափազանցում, որի համար նրան անցյալում հանդիմանում էին։ ...Երեք փոքր բնանկարներից ինձ ամենից ավելի դուր եկավ «Տրոյան»։ Այստեղ շատ է ինչ-որ եղերգական պոեզիան, որի մասին մտահոգվել է նախ և առաջ ինքը՝ նկարիչը։ Մի խոսքով, անման են»։ Ա. Ն. Սերովը նկատում է նաև թերություններ։ Նա, օրինակ, «Թեոդոսիա» պատկերի մեջ գտնում է որ «դիտողից ձախ երևացող նավակը աշտարակի համեմատությամբ թեք է նկարված։ ...Դա միակ թերությունն է, որ ես կարողացա նկատել»,— ասում է կոմպոզիտորը, խնդրելով Ստասովին, որ նա Պետերբուրգում այն տեսնելիս ստուգի իր տպավորությունը[5]։ Յուցահանդես այցելողների մեջ է լինում նաև մի թաթար մուրզա, որը, ինչպես վկայում է Ա. Ն. Սերովը, «երկար հրապուրված դիտելուց հետո» ասաց. «Սա անբնական է, այդպիսի արվեստը բարձր է մեկ մարդկային ուղեղից»[6]։

---

[5] «Документы...», էջ 95—96:

[6] Նույն տեղ։

Մայիսի 31-ին Այվազովսկին իր ստեղծագործությունների ցուցահանդեսը տեղափոխում է Օդեսա, և ինքն էլ հունիսի 1-ին ներկա է լինում բացմանը։

«Օդեսայի լրաբեր» թերթը հունիսի 19-ին հրապարակում է ընդարձակ հոդված «Այվազովսկու կտավների գեղարվեստական ցուցահանդեսը Թեոդոսիայում» վերնագրով, որի մեջ բարձր է գնահատում նկարչի արվեստը[7]։ Այդ օրերին Օդեսայից Պետերբուրգ ուղարկված մի մասնավոր նամակում Այվազովսկու ծովանկարների մասին կարդում ենք. «...առաջին իսկ հայացքից թվացել են ինձ ինչ-որ հրաշքի երևույթ, տեսիլք, դրանք արտադրվել են ոչ թե երկրային ձեռքով, այլ՝ էբոթես թե Պրոմեթեոսի կրակով, ոչ թե ներկերով, այլ ուրիշ տարրերով. արևից և լուսնից հանված ճառագայթներով»։ Տպագրելով այդ նամակը՝ ամսագրի խմբագիր Ն. Կուկոլնիկը՝ նկարչի վաղեմի ծանոթը և բարեկամը, գրում է. «Մի՞թե նկարիչը կզրկի Պետերբուրգին ևս բավարարելուց, ինչից օգտվել են Օդեսան և Թեոդոսիան, թթե վերջինս նրա հայրենիքն է, ապա Պետերբուրգը՝ նրա ուսումնարանը։ Հարգելի նկարիչ, ամեն մեկին՝ իրենը»[8]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հովհ. Այվազովսկու ստեղծագործությունների առաջին անհատական ցուցահանդեսը Թեոդոսիայում և Օդեսայում նրան լայն ճանաչում բերեց հայրենի երկրում։ Նա դարձավ նաև ղրիմահայության պարծանքը։

Այդ ցուցահանդեսը միաժամանակ ամփոփում է նկարչի մինչև այդ կատարած աշխատանքները և նրա որոնումները։ Ցուցահանդեսում ներկայացված ստեղծագործությունները, ինչպես և տարվա հետագա ամիսներին նկարած նոր աշխատանքները, որոնցից մեզ են հասել ավելի քան 10 կտավ, որոշակի ցույց են տալիս նկարչի թռիչքային ճաշը, և այն, որ ծովանկարչությունը եղել և մնում է նրա ստեղծագործության հիմնական, թերևս միակ բնագավառը։ Այդ ծովանկարներում արտացոլվել են ժամանակի հայկական և ռուսական կերպարվեստի մեջ եղած ուղղությունները՝ նրա ռեալիստական ստեղ-

---

7. «Одесский вестник», 1946, № 49, № 50.

8 «Иллюстрация», 1946, *հուլիսի 6, №61, էջ 293։*

ծագործական մեթոդի մեջ տեղ գտած որոշ ակադեմիկան և ռոմանտիկական տարրերը։ Այվազովսկին, սակայն, իր ստեղծագործություններում դեռևս պահպանում է որոշ կոմպոզիցիաների կանխորոշ պայմանականությունը և դարչնագույն կոլորիտը, որը արդյունք էր նրա ակադեմիական կրթության։ Բայց անվիճելի է, որ նա հաղթահարում է մինչև այդ իր գործերում նկատվող որոշ մաներայնությունը և հարում է նոր, առաջադիմական ռոմանտիզմի հոսանքին, որը խորացնում էր դեմոկրատական գաղափարախոսությունը ազգային արվեստի մեջ։ Այդ երկու ուղղությունների միջև 1830—40-ական թվականներին տեղի ունեցող պայքարում հետզհետե թուլանում, քայքայվում է ակադեմիական-պահպանողական հոսանքը և դրան հակառակ ուժեղանում, ամրապնդվում է առաջադիմականը։ Հումանիստական գաղափարներով ներծծված Կ. Պ. Բրյուլովի «Պոմպեյի վերջին օրը» մեծակտավ աշխատանքը 1830-ական թվականների կեսերին արդեն ազդարարում էր առաջադիմական հոսանքի հաղթական առաջընթացը։ Միևնույն ժամանակ Սիլվեստր Շչեդրինի և մյուս բնանկարիչների ստեղծագործություններում դրսևորված ռեալիզմին զուգընթաց իրեն զգացնել է տալիս նաև ռոմանտիզմը, որի ցայտուն ներկայացուցիչներից էր Մ. Վորոբյովը՝ Այվազովսկու առաջին ուսուցիչներից մեկը։ Ռոմանտիզմը, որը եկել էր փոխարինելու կլասիցիզմին, համակել էր նույն շրջանի շատ նշանավոր նկարիչներին, այդ թվում Կ. Բրյուլովին, Օ. Կիպրենսկուն, Ա. Օլովսկուն, որոնք և զարգացրին այդ ուղղության առաջադիմական կողմերը։

Չնայած պատմական որոշ սահմանափակության, որն արտահայտվում էր գլխավորապես իրականության նկատմամբ նկարչի ունեցած միակողմանի, սուբյեկտիվ մոտեցումով, առաջադիմական ռոմանտիզմը կարևոր նշանակություն ունեցավ դարաշրջանի հակումների բացահայտման, արդիական թեմաներ ընդգրկման, արվեստի դաստիարակիչ, վերափոխող հնարավորությունների ընդլայնման և գեղարվեստական արտահայտչականության նոր միջոցների հարստացման բնագավառներում։ Բնանկարչության մեջ այն արտահայտվում էր նաև բնության անսովոր, հազվագեպ, արտակարգ պահերի բանաստեղծական պատկերումով։ Ռոմանտիկները բնության

պատկերման մեջ մտցրին էլ ավելի կենդանություն, ուժեղ շարժում և արտաքին փայլ, այդ ամենը ծառայեցնելով մարդու ազատագրության գաղափարի էմոցիոնալ-կերպարային վերարտադրման խնդիրներին։

Ռոմանտիզմի հիշյալ տարրերը որոշակի արտահայտություն են գտնում Այվազովսկու այս շրջանի մի շարք ստեղծագործություններում ևս։ Այդ են հաստատում արդեն նշված «Նեապոլյան ծովածոցը առավոտյան», «Երեկո Վենետիկում», «Վենետիկ» (1843), «Ռևել» (1844) ծովանկարները և 1846 թ. նկարած «Գևորգևյան վանք» (Թեոդոսիա), «Պետրոս Առաջինը կարմիր սարի մոտ», (Տրետյակովյան պատկերասրահ), «Կոստանդնուպոլիսը լուսնյակի լույսով լուսավորված» (Ռուսական թանգարան), «Օդեսայի տեսարանը գիշերով» (Ռուսական թանգարան) և վերջապես Հայաստանի պետական պատկերասրահում գտնվող «Նավաբեկումից փրկվածները» (1844) կտավները։ Վերջինս պատկերում է անհանգիստ ծովը և նավակի մեջ պատսպարված մի խումբ մարդկանց։ Դա արդեն ներկայացնում է բնության արտակարգ մի պահ, երբ վճռվում է մարդկանց բախտը։ «Ֆիոլենտի հրվանդանը» (1846) պատկերում է ծովափնյա տեսարան գիշերով։ Ծովն այստեղ նկարված է առաջին պլանում աջ կողմից, իսկ ձախում՝ մինչև կենտրոն, ձգված է հրվանդանը։ Լուսնյակի աղոտ լույսի տակ նշմարվում է բարձունքի վրա նստած Գևորգևյան վանքը։ Նկարիչն ավելի ուժեղ ընդգծել է ժայռոտ ափերը, որոնք չնայած ստվերների տակ են, սակայն գիշերային խավարի ու խոնավ օդի մեջ հստակորեն երևում են դրանց ծանր, ամուր և դուրս ցցված ապարները։ Խաղաղ ծովի հարթ մակերեսին լուսնյակի շողերը գծել են մի լայն, լուսավոր ճանապարհ, որը հեռավոր հրվանդանի ծայրից ձգվում է մինչև դիտողը։ Նկարիչը շատ պարզ միջոցներով է հասել ջրի մեջ լուսնի ճառագայթների արտացոլման ճշմարիտ պատկերմանը։ Այստեղ այլևս չի նկատվում այն պայմանականությունը և պատկերի առանձին մասերի կուլիսային լուծմանը, որը առկա էր 1842 թ. Իտալիայում նկարած «Նեապոլյան ծովածոցը լուսնյակ գիշեր ժամանակ» պատկերի մեջ։ «Ֆիոլենտի հրվանդանը» աչքի է ընկնում իր մոնումենտալ ոճով։

Դա ապացույց է այն առաջադիմության, որ կատարում է նկարիչը հայրենիքում՝ արտասահմանից վերադառնալու վերջին երկու տարում։

Ռուսական թանգարանում գտնվող «Օդեսայի տեսարանը լուսնյակ գիշերով» կտավը (1846) նկարչի վարպետության աճի ցայտուն օրինակներից է։ Այստեղ Օդեսա քաղաքը դիտվում է ծովի կողմից։ Երևում են միայն պատկերի խորքում գետեղված քաղաքի ծովափնյա շենքերը՝ լուսավորված լուսնյակի սառը լույսով։ Ամբողջ առաջին պլանը զբաղեցրել է ծովի անհագիստ ջուրը, որի ալիքների մեջ լողում են մարդկանցով լի մի նավակ, իսկ հեռվում՝ առագաստանավը։ Ջրի ոչ մեծ ալիքների վրա լուսնյակի լույսի արտացոլումները, որոնք ռիթմիկորեն հաջորդում են միմյանց, ուժեղացնում են կյանքի թրթիռը։ Այս պատկերը նկարչի ամենալիրիկական ստեղծագործություններից է։ Այստեղ առկա է որոշ ռոմանտիկա գիշերային բնության վերարտադրման մեջ։ Լուսնկա գիշերը նկարիչը պատկերել է մեծ հուզականությամբ և բանաստեղծական շնչով։

* * *

Թեոդոսիայում Այվազովսկին շարունակում է ստեղծագործել և միաժամանակ ձեռնամուխ է լինում իր առանձնատան կառուցմանը։ Ընտրելով քաղաքից դուրս, ազատ ու անմարդաբնակ ծովամերձ մի վայր, նկարիչը սկսում է շինարարական աշխատանքները։ Շենքի հիմքը դնելուց և պատերը կառուցելուց հետո Այվազովսկին աշխատանքի ղեկավարությունը հանձնում է մի վարձակալի և ինքը շտապ մեկնում է Պետերբուրգ, իր հետ տանելով մի քանի նոր կտավներ։ Պետերբուրգում տեսնելով դրանք՝ Ն. Կուկոլնիկը գրում է. «Ավյազովսկու երկու նոր պատկերները՝ «Մարմարա ծովի Իշխանաց կղզիները ձուկնների ձուիչքի բարձրունքից դիտված» և «Կոստանդնուպոլսի տեսարանը» հանդիսանում են նրա լայն տաղանդի լրիվ հաստուտության ապացույցը»[9]։

Նույն ժամանակ Թագավոր-կայսրը գնում է նրանից չորս

[9] «Иллюстрация», 1846, № 31.

մեծ կտավ։ Նրա իսկ հրավերով նկարիչը ուղեկցում է թագավորին մինչև Բալթիկ ծովի նավատորմը և մասնակցում Պետերգոֆի մոտ տեղի ունեցող ծովային զորավարժություններին։

Օգոստոսին Այվազովսկու «Աֆոնի սարերը», «Արշաւարը գիշերը ժամանակ» և «Կոստանդնուպոլսի տեսարանը» նկարները բազավորի կամքով ուղարկվում են Բեռլինի գեղարվեստական ցուցահանդեսին։ Գերմանիայում դրանց շուրջ մեծ աղմուկ է առաջանում։ Արվեստասեր հասարակայնությունը, հատկապես նկարիչներն ու լրագրողները, իրենց կարծիքներում բաժանվում են երկու իրարամերժ խմբերի։ Մեկը ժխտում է նկարչի տաղանդը (ինչո՞ւ նա չի սովորել Դյուսելդորֆում), մյուսը ընդունում է նկարչի տաղանդը, տաղանդի զարգացումը բացատրելով... նրա իբրև թե ֆիզիկական պակասությամբ՝ խուլ ու համր լինելու պատճառով... Որքան էլ դա տարօրինակ թվա, «այնուամենայնիվ ցուցահանդեսում Այվազովսկու պատկերների երևալը մեծ աղմուկ է առաջ բերում Գերմանիայի գեղարվեստական աշխարհում» գրում է ռուսական ամսագիրը[10]։

Վաճառելով չորս մեծ պատկերներ և մի քանի փոքրածավալ ստեղծագործություններ, Այվազովսկին վերադառնում է Թեոդոսիա և շարունակում զբաղվել առանձնատան շինարարական աշխատանքներով։

«Ձենք հավատում նկարչի մտադրությանը, բայց ինչ էլ որ լինի, Թեոդոսիայում կառուցվում է լավ վիլլա, նկարչի սեփական նախագծով,— գրում է պետերբուրգյան «Իլյուստրացիա» ամսագրի խմբագիր Ն. Կուկոլնիկը սեպտեմբերին՝ այդ մասին լսած լինելով նկարչից։ Այվազովսկին հուսով է, որ մեկընդմիշտ կտեղափոխվի այնտեղ, կստեղծի մեծ արվեստանոց, որը միևնույն ժամանակ կդառնա նկարչության դպրոց այդ երկրամասի համար։ Այդ միտքը ամբողջովին հիմնավոր է։ Այն երկրամասը, ուր բնությունը տաք է ու շքեղ, որտեղ գեղանկարչական վայրերը տեղադրված են անընդհատ հետևողականությամբ, որտեղ, վերջապես, ալեկոծվում է ծովը, այդպիսի երկրամասը, անկասկած, կարող է ծառայել որպես ակադեմիա ծովանկարչության և բնանկարչության համար։

---

10 «Русская старина», 1878. հ. 23, էջ 60։

Մենք հավատացած ենք, որ այնտեղ կարող է մեծ հաջողությամբ զարգանալ և պատմական նկարչության ակադեմիան»[11]։

Սեպտեմբերի վերջերին Պետերբուրգում բացվում է ակադեմիայի աշնանային ցուցահանդեսը, որտեղ գլխավորապես ցո ցադրվում են ռուս և օտարազգի նկարիչների բնանկարներ։ Հովհ. Այվազովսկին այդ ցուցահանդեսին չի մասնակցում։ Բեռ ցուցադրվեին Այվազովսկու ստեղծագործությունները, ցուցահանդեսը «բավական կաշխուժացնեին», իսկ դրանց բացակայության պատճառով,— գրում է ժամանակի պարբերականը,— «ցուցահանդեսը շատ բան է կորցրել»[12]։

Բայց Հովհ. Այվազովսկին այլ մտադրություն ուներ. Պետերբուրգում պատրաստվում էր առաջիկա ամիսներից մեկում անհատական ցուցահանդես բացել, երևույթ, որը աննախադեպ էր ռուս արվեստագետների շրջանում։ Այդ տրամադրությամբ էլ նա դիմավորում է նոր տարին։

ԱՌԱՋԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

1847 թ. հունվարի 1-ին Հովհ. Այվազովսկին այցելում է Ա. Ս. Պուշկինի այրուն՝ Նատալյա Նիկոլաևնային, և նոր տարվա առիթով շնորհավորելուց հետո նվիրում է նրան իր ստեղծագործություններից մեկը՝ «Լուսնյակ գիշերը ծովածոցում, Կոստանդնուպոլիս» պատկերը։ Այդ ստեղծագործությունը մեզ չի հասել, սակայն ցուցադրվել է 1905 թ. դիմանկարչական ցուցահանդեսում։

Նոր տարվա առաջին երկու ամիսներին Պետերբուրգում Այվազովսկին պատրաստվելով իր ցուցահանդեսին, միևնույն ժամանակ եռանդուն աշխատում էր։ Փետրվարի կեսերին արդեն պատրաստ էին ավելի քան 12 նկար։ 7 աշխատանք էլ բերելով Թագավորի պալատից՝ նկարիչը մտադրվում է ցուցահանդեսը բացել ամսվա վերջերին։

---

11 «Иллюстрация», *1846, №34, սեպտեմբերի 14։*

12 *Նույն տեղ, № 52, էջ 245։*

Փետրվարի 23-ին ակադեմիայի վարչության համաձայնությամբ «Սանկտ-Պետերբուրգսկիե վեդոմոստի» թերթում հրապարակվում է հետևյալ հայտարարությունը. «Շատ արվեստասերներ, որոնք հնարավորություն են ունեցել այցելել մեր ծովանկարիչ Այվազովսկու արվեստանոցը, վաղուց ցանկություն են հայտնել տեսնելու նկարչի նոր ստեղծագործությունները։ Նորին մեծության կարգադրությամբ ակադեմիայի պրեզիդենտը հատկացրել է ակադեմիայի մի քանի սրահներ, որտեղ գեղարվեստ սիրողները կարող են դիտել դրանք փետրվարի 26-ից մինչև մարտի 8-ը»[1]։

Այս հանձնարարությունն անսպասելի էր և նույնիսկ զարմանք է առաջացնում շատերի մեջ։ Պետերբուրգում մինչ այդ մի առանձին նկարչի անհատական ցուցահանդես երբեք չէր կազմակերպվել։ Մարդիկ նույնիսկ չէին պատկերացնում, թե դա ինչպես կարող է լինել. ակադեմիայի երկու մեծ ցուցասրահները և մի՞ նկարիչ։

«Իսկ դուք լսե՞լ եք, Այվազովսկին մենակ ուզում է մի ամբողջ ցուցահանդես բացել,— ասում է մեկը մյուսին,— կարդում ենք նույն օրերի ռուսական թերթում։

— Թող բացի, թող իր ծովերով ամբողջ ակադեմիան ջրով լցնի։ Կխեղդվի։ Աստված թող բարին անի,— պատասխանում է մյուսը։

— Ո՛չ, բայց ներեցեք,— միջամտում է երրորդը, հավանաբար շարքային մի նկարիչ,— սա ի՞նչ է նշանակում, ի՞նչ է նա ցանկանում ցույց տալ, ա՞յն, որ իբրև թե ի՞նքն է միայն աշխատում, իսկ ուրիշները ոչինչ չե՞ն անում,— սատանայական ինքնասիրահարվածություն. ուզում է հայտնի՞ դառնալ...

— Ո՛չ, ես ձեզ ասում եմ,— սրամտորեն նկատում է համեստ ընդունակության տեր ինչ-որ մեկը,— իսկական տաղանդը ստեղծագործում է լռության մեջ, արվեստը պետք է լինի արվեստի համար, և, ոնց կուզեք, հին է, բայց լավ է ասված, որ համեստությունը զարդարում է տաղանդը։ Իսկ ի՞նչ է նա մտածում։ Ախր եթե ուրիշները ցանկանային,

---

[1] «Документы...», էջ 38:

կարող էին ցուցադրել ինչ-որ բան... և ոչ միայն ջրով կարող կլինեին խփել հասարակությանը»[2]։

Չնայած տարաբնույթ կարծիքներին և ասեկոսներին, Հովհ. Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսը բացվում է փետրվարի 26-ին, գեղարվեստի ակադեմիայի երկու լուսավոր սրահներում։ Ցուցադրվում են 20 մեծ ու փոքր ծովանկարներ, որոնցից մի քանիսը բազմաֆիգուր , սյուժետային լուծումներով։ Այստեղ են Կրոնշտադտի, Ռևելի, Հելսինգֆորսի և այլ ծովափնյա քաղաքների պատկերներ, «Պետրոս Առաջինը խարույկ է վառում ռուսական նավատորմին ազդանշան տալու համար» մեծ կտավը և այլն։ Ցուցահանդեսը «երկու շաբաթվա ընթացքում գերեց հասարակությանը. չնայած ցեխին և հալվող ձյանը, մարդիկ խմբերով գնում էին դեպի Վասիլևյան կղզին, լցվում ակադեմիայի դահլիճները,— գրում է երիտասարդ բանաստեղծ Ա. Ն. Մայկովը (1821—1897) այդ ժամանակ հրապարակած իր հոդվածում,— հիացմունքի և բավարարվածության բազմազան արտահայտություններն ակնառու ցույց էին տալիս, որ բոլորը լիովին վարձատրված են իրենց հետաքրքրության համար.... Շնորհակալություն Այվազովսկուն։ Իր ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսով հանդես գալու վճիռը խիզախություն է, որի համար հարկավոր է շնորհակալ լինել նկարչից»[3]։ Իր ընդհարձակ հոդվածում բնութագրելով գրում է «Այվազովսկու հարավային բնության տեսարանները... հիանալի են, նրա հարավային բնության, ծովի և երկնքի էֆեկտային պատկերները... կատարելիությունից բարձր են... Շնորհակալություն Ձեզ այն հաճույքի համար, որ այդ պատկերները պատճառեցին մեզ»։

Հովհ. Այվազովսկու ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը, որը առաջին փորձն էր Ռուսաստանում, մի անգամ ևս հաստատում է, որ երեսնամյա նկարչի արվեստը

---

[2] «Отечественные записки», 1847, էջ 116—170: *Տե՛ս նաև* «Русские писатели об изобразительном искусстве», м. 1976, էջ 102:

[3] А. Н. Майков, Выставка картин Айвазовского в 1847 г.; *Տե՛ս* «Отечественные записки»: 1847, ч. 51, էջ 166—176: *Տե՛ս նաև* «Русские писатели об изобразительном искусстве», № 1976, էջ 102—103:

լիովին համապատասխանում էր իր ժամանակի հասարակության բոլոր խավերի գեղարվեստական-գեղագիտական պահանջներին։ Ցուցահանդեսը միաժամանակ աչքառու ցույց է տալիս արվեստագետի պրոֆեսիոնալ աճը ծովանկարչության մեջ, որը և նկատի ունենալով, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի խորհուրդը մարտի 17-ին որոշում է կայացնում Հովհ. Այվազովսկուն շնորհել պրոֆեսորի կոչում[4]։ Այդ որոշումը հաստատում է Նորին մեծությունը[5]։ Մարտի 31-ին տրվում է պրոֆեսորի կոչում նրա «առանձնահատուկ արվեստի ու ծովանկարչության գերազանց իմացության համար»։

Սակայն նկարիչը չի ցանկանում ծառայության մտնել գեղարվեստի ակադեմիայում։ Նա գերադասում է ակադեմիայից հեռու, ազատ ստեղծագործելը, մանավանդ որ մտադրություն ուներ իր նորակառույց տան արվեստանոցը միաժամանակ օգտագործել որպես գեղարվեստական դպրոց՝ ծայրագավառի շնորհալի պատանիներին նկարչություն սովորացնելու համար։

ԱՆԱԿՆԿԱԼ ԱՅՑ ՆԿԱՐՉԻ ԱՐՎԵՍՏԱՆՈՑ

Այդ մտադրությամբ էլ նա պատրաստվում էր մեկնել Ղրիմ, երբ կոմսուհի Բոբրինսկայան (ծագումով՝ Սամոյլովա) նրան պատվիրում է մի նոր նկար, որի սյուժետը ինքը՝ կոմսուհին էր մտահղացրել։

— Պատկերեք,— ասում է կոմսուհին,— ծովափնյա մի վայր, որտեղ մի խումբ հույն տղամարդիկ և կանայք անհոգ զվարճանում են արևամուտին։

Այվազովսկին ընդունելով կոմսուհու պատվերը՝ մտածում է այդ «Անհոգ զվարճացող հույն կանանցից» մեկի՝ անփույթ դիրքով, շքեղ, արատ արձակած մուգ վերով հելլենուհու ֆիգուրի համար բնարդ ընտրել տիկին Դյու-Տեին՝ Պետերբուրգում ապրող բրյուսելցի իրավաբանի գեղանի կնոջը, որի հետ

---

[4] «Документы...», էջ 100:

[5] Նույն տեղը:

Նկարիչը ծանոթացել էր դեռևս արտասահմանում։ Գեղեցկուհին սիրով համաձայնվում է նկարվել կիսամերկ։ Հյուրասիրելով նրան արտակարգ նախաճաշով և շամպայնով՝ Այվազովսկին սկսում է նկարել այդ ինքնակամ բնորդուհուն՝ նախօրոք իր ծառային կարգադրելով ոչ մի այցելու չընդունել։

Տարված աշխատանքով՝ Այվազովսկին հանկարծ ոտնաձայն է լսում միջանցքում։ Նրա է մտնում Նիկոլայ Պավլովիչը՝ Ռուսաստանի ահեղ թագավոր-կայսրը, որի առջև անխոս բացվում են ոչ միայն պալատների, այլև, ինչպես ասում են, աստվածային տաճարների շքամուտքերը։ Ներկապնակը և վրձինը ձեռքին, Այվազովսկին շտապում է դիմավորել մեծարգո հյուրին, որին նա պատիվ է ունենում իր արվեստանոցում ընդունել երրորդ անգամ։

Հիշեցնելով նրան պալատի համար իր տված պատվերների մասին, թագավոր-կայսրը, առանց պատասխանի սպասելու մտնում է արվեստանոց՝ հարցնելով.

— Ի՞նչ նոր բան ես նկարում։

Տիկին Դյու-Տեն տեղից վեր թռչելով, կարմրելով իր կիսամերկ, արևելյան թափանցիկ հագուստի համար, խոր գլուխ է տալիս, ուսերանս է անում և փաթաթվում ուսերից ցած սահած շարֆով։ Թագավորը սիրալիր ժպիտով բարևում է շփոթված ֆրանսուհուն և Այվազովսկու ականջին շշնջում.

— Վատը չի... ո՞վ է նա։

Ասելով, թե ով է այդ «հելլենուհին», նկարիչը շտապում է բացատրել պատկերի սյուժեն, պարզաբանելով, որ այդպես հարկավոր է նկարի համար։

— Այո՛, այո՛, իհա՛րկե, հարկավո՛ր է, շա՛տ է հարկավոր,— ասում է թագավորը ժպտալով և, հեռանալով նկարից, նորից ասում է կիսաձայն.

— Տիկինը վատը չէ... Պատկերի համար։ Բայց ու՞մ համար ես նկարում։

— Կոմսուհի Բոբրինսկայայի համար, ձերդ մեծություն։

— Այդպե՛ս, այդպե՛ս... լավ։

Հրաժեշտ տալով ֆրանսուհուն, կայսրը դուրս է գնում, իսկ բաժանվելիս հուշում է նկարչին.

— *Տե՛ս, հա, ծովերը իմ չմոռանաս...*[1]

Պետերբուրգում Այվազովսկուն իր արվեստանոցն է հրավիրում քանդակագործ Ա. Ն. Բելաևը։ Նկարիչը մի քանի անգամ այցելում է քանդակագործին, որը հաջողությամբ ստեղծում է արվեստագետի դիմաքանդակը։ Այդ նույն ժամանակ ծովակալ Մ. Պ. Լազարևը, որը, ինչպես նշել ենք, վաղուց էր ծանոթ նկարչին, և վերջինս նրա դիմանկարն էր կերտել, խնդրում է Այվազովսկուն գտնել մի նկարիչ, որը կարողանա օգտակար ծառայություն մատուցել ծովափնյա տեսարաններ գծանկարելու գործում, ծովային քարտեզի նոր հրատարակության համար։ Այվազովսկին տալիս է հայ նկարիչ Մովսես Մելիքյանի անունը։ Մ. Մելիքյանը սովորել էր գեղարվեստի ակադեմիայում և եղել էր Կ. Պ. Բրյուլովի աշակերտը։ «Այվազովսկին առաջարկեց ինձ այդ տեղը, որը ես ընդունեցի հաճույքով»,— գրում է նկարիչ Մովսես Մելիքյանը (Մելիքով, 1818—?) հետագայում[2]։

Ավարտելով իր գործերը Պետերբուրգում՝ Այվազովսկին հուլիս ամսին շտապում է Ղրիմ՝ Թեոդոսիա։ Այդ ժամանակ Այվազովսկու առանձնատունը գրեթե պատրաստ էր, մնում էին ներքին և արտաքին գեղարվեստական մի քանի հարդարանքներ։ Նկարիչը շարունակում և շուտով ավարտում է շինարարության հետ կապված բոլոր գործերը։

ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆԸ

Հովհ. Այվազովսկու առանձնատունը դառնում է ամենագեղեցիկ շենքերից մեկը Թեոդոսիայում, որն աչքի էր ընկնում իր ոճական առանձնահատկությամբ և ինքնատիպությամբ։

Առանձնատունը և արվեստանոցը կահավորելուց հետո Այվազովսկին իր ընտանիքով՝ մոր և քրոջ հետ, տեղափոխ-

---

[1] «Русская старина», 1878, հ. 23, էջ 65—66:

[2] **М. Е. Меликов**, Заметки и воспоминания художника-живописца, «Русская старина», 1896, № 6, էջ 673—674:

վում է նոր բնակարանը և այստեղ ապրում և ստեղծագործում է մինչև կյանքի վերջը։

Նա նոր էր սկսել իր ստեղծագործական աշխատանքը, երբ Սիմֆերոպոլից ստանում է իր նախկին ուսուցիչ Գրոսսից երկտող-նամակ, որով նկարչության ուսուցիչը հայտնում է, որ ինքը 20-ամյա աշակերտ Ադոլֆ Իվանովիչ Ֆեսլերի մեջ նկատելով հակում նկարչության նկատմամբ, նրան խորհուրդ է տվել սովորել պրոֆ. Այվազովսկու մոտ։ Այվազովսկին դրան պատասխանում է. «Եթե ես տեսնեմ, Ֆեսլերի մեջ շնորհալի ընդունակություն, ապա թույլ կտամ, որ նա աշխատի իմ արվեստանոցում»։ Ա. Ի. Ֆեսլերը գալիս է Այվազովսկու մոտ և Թեոդոսիայում, պրոֆեսորի հանձնարարությամբ, կատարում է նկարչական մի քանի աշխատանքներ, որոնք վկայում են երիտասարդի բնածին ընդունակությունների մասին։ Այվազովսկին զբաղվում է նրանով, սովորեցնում է նկարչություն և տալիս է նրան գունանկարչության արվեստի այնպիսի գիտելիքներ, որոնցով զինված Ֆեսլերը հաջողությամբ հանձնում է պահանջվող քննությունները և ընդունվում Մոսկվայի նկարչության և քանդակագործության ուսումնարանը։ Հետագայում Ա. Ի. Ֆեսլերը (1826—1885) դառնում է նշանավոր նկարիչ և ամբողջ կյանքում երախտագիտությամբ է հիշում մեծ ծովանկարչին՝ իր առաջին ուսուցչին։

Իր ստեղծագործությունների համար նոր սյուժեներ որոնելու նպատակով Այվազովսկին հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կրկին շրջագայում է Ղրիմի հարավում, լինում է այն վայրերում, ուր դեռևս փարթամորեն աճում էր կանաչավետ բնությունը։ «Աշնանը ես եղա Յալթայում,— գրում է նա մեծահարուստ Ա. Ն. Մորդվինովին,— և մտա Ձեր այգին, այնտեղ ամեն մի քայլափոխում ես հրճվանքի մեջ էի. հիանալի հրաշք է»[1]։

Այդպիսի տպավորություններով վերադառնալով տուն՝ Այվազովսկին իր արվեստանոցում ոգեշնչված ստեղծագործում է նոր պատկերներ։ Մինչև տարեվերջ նա ավարտում է նախկինում սկսած գործերը, որոնցից մեկը հասել ավելի

1 «Документы...», էջ 102:

քան 10 կտավ, ցրված խորհրդային Միության տարբեր թանգարաններում։ Դրանք բոլորն էլ ծովային ու ծովափնյա տեսարաններ են, որոնց մի մասը նա նկարել է բնությունից՝ «Ովաժուցը» (Թեոդոսիա), «Ծովը» (Մինսկ), «Պետերբուրգի բիրժան» (Լենինգրադ), «Ժամատուն ծովափին» (Կալինին), «Սրճարան Ղրիմում» (Օդեսա), մյուսները հիշողությամբ՝ «Գիշերը Վենետիկում» (Ուֆա), «Փոթորիկ ծովում» «Լենինգրադ), «Նավախորտակում» (Երևան) և այլն։ Այդ տարի նա մեծ սիրով ու խանդաղատանքով է նկարում իր առաջին հովանավոր Ա. Ի. Կազանչեևի դիմանկարը (Թեոդոսիա)։

ՄԱՐՏԱՆԿԱՐՆԵՐԸ

1848 թ. հունվարին Հովհ. Այվազովսկին շարունակում է աշխատել պատմա-հայրենասիրական թեմաներով պատկերներ ստեղծելու վրա։ Դրանք պետք է լինեին նոր, թեմատիկ-մարտանկարչական ստեղծագործություններ, որոնք արտացոլելու էին ռուսական հզոր նավատորմի հաղթանակները թուրքական զինված ուժերի դեմ։ Ուսումնասիրելով անցյալի պատերազմական անցքերի պատմությունը, Այվազովսկին ընտրում է դրանցից իր ստեղծագործական տարերքին մոտ այժմեներ և նկարում է «Չեսմենի ճակատամարտը», «Ճակատամարտ Քիոսյան նեղուցում» և պատրաստում է ««Մերկուրի» նավը թուրքական երկու ռազմանավերի դեմ տարած հաղթանակից հետո» մեծակտավ պատկերի էսքիզը։ Դրանք բոլորն էլ վերաբերվում են 18-րդ դարի վերջին քառորդում և 1820-ական թվականներին տեղի ունեցած նշանակալից մարտական անցքերին, որտեղ նկարչին հետաքրքրել են ռուս ծովայինների ցուցաբերած հերոսականությունը և դրանց առաջադիմական-ազատագրական միտումը։ «Չեսմենի ճակատամարտը» պատկերում է Միջերկրական ծովում՝ Մորեյա թերակղզու մոտ, Չեսմենի նավահանգստի շրջանում 1770 թ. հունիսի 24-ին ռուսական ռազմածովային նավատորմի և

Թուրքական նավերի միջև տեղի ունեցած ճակատամարտի ահեղ տեսարանը։ Այդ ճակատամարտում մի գիշերվա մեջ ռուսական 26 ռազմանավից բաղկացած նավատորմը ոչնչացնում է Թուրքական 63 նավ։ Ծովակալ Սպիրիդոնովը իր զեկուցագրի մեջ հաղորդել է. «...Պատիվ համառուսական նավատորմին, 25-ի լույս 26-ի գիշերը գրոհեցինք Չեշմայի ռազմական նավատորմի վրա, ջարդեցի՛նք, փշրեցի՛նք, խորտակեցի՛նք, հրդեհեցի՛նք, մոխիր դարձրի՛նք, երկինք թռցրի՛նք, իսկ ինքներս մնացինք ամբողջ արշիպելագոսում տիրապետողը»[1]։

Ռազմական այս հաղորդագրությանը, անկասկած, ծանոթ էր Այվազովսկին, և թերևս, հենց դրա հիման վրա էլ նկարում է այդ ծովային ճակատամարտը՝ տալով դրան որոշ ռոմանտիկական գունավորում։ Այստեղ նկարիչը ընտրել է այդ ճակատամարտի ամենագրամատիկ, հատկապես նրա կուլմինացիոն սյուժե՝ Չեշմայի ռազմանավերի կործանման տեսարանը։ Ռուսական ռազմանավերի գրոհից այրվել ու պայթում են Թուրքական նավերը։ Պայթյունից վեր ձգված բոցերը լուսավորել են երկինքը, ջուրը, հեռավոր ափերի բարձունքները, քաղաքի ծովափնյա շենքերը և ծովը թափված Չեշմայի զինվորներին։ Այրվող նավերի տաք, կարմրավուն լեզվակները ընդգծում են ճակատամարտի թեժությունը։ Գեղարվեստորեն համոզիչ պատկերելով 18-րդ դարի ռազմական առագաստանավերն ու դրանց մարտական գործողությունները՝ Այվազովսկին սրել է ճակատամարտի տեսարանի արտահայտչականությունը՝ նրա մեջ դնելով հերոսական ռոմանտիկա։ Դա արտահայտվում է ոչ միայն պատկերի բազմաֆիգուր կոմպոզիցիայում, այլև հարուստ գունային կառուցվածքի մեջ։

«Չեշմեի ճակատամարտը» Այվազովսկու պատերազմական թեմաներով նկարած լավագույն ստեղծագործություններից է։ Ռուսական հարուստ մարտանկարչությունը մինչև այդ չգիտեր մեծ ծավալի ճակատամարտի այնպիսի պատկեր, որն ավելի համոզիչ ու տպավորիչ թվար, քան այդ կտավը։

---

[1] **В. Зверев**, Страницы русской морской летописи. 1960 էջ 116։

Դրանով էլ Հովհ. Այվազովսկին նոր և խոշոր ավանդ է մուծում ոչ միայն հայ ազգային նկարչության, այլև ավանդույթով հարուստ ռուսական մարտանկարչության մեջ՝ ստեղծելով հայրենասիրական բովանդակությամբ ծովային մարտանկարչության ֆունդամենտալ գործ։

Նույն ժամանակ Այվազովսկու նկարած «Ճակատամարտ Քիոսյան նեղուցում» կտավի հիմնական գաղափարական բովանդակությունը կազմում է ռուսական ռազմածովային նավատորմի հերոսական ու հաղթական ոգին։ Այվազովսկին հետագայում ևս ստեղծում է մարտանկարչական պատկերներ, բայց 1848 թ. սկզբներին ստեղծված հիշյալ աշխատանքները մտան նկարչի գեղարվեստական հարուստ ժառանգության մեջ որպես ծովային մարտանկարչության լավագույն օրինակներ։

Իր այդ կտավների մասին նկարիչը Թեոդոսիայից փետրվարի 4-ին գրում է. «...Ամբողջ ձմռանը ես նկարում էի մարտանկարներ, որոնք ինձ պատվիրել էր Նորին մեծություն թագավոր-կայսրը։ Այս օրերին վերջացնում եմ երրորդը, որից հետո կսկսեմ նկարել սյուժետներ իմ ընտրությամբ, Ուզում եմ այստեղ մնալ մինչև օգոստոսի 15-ը, որից հետո պատկերների հետ կմեկնեմ Պետերբուրգ»[2]։

Ավելորդ չենք համարում նկատել, որ թագավոր-կայսրի պատվերով նկարելը բնավ էլ չի նշանակում արտահայտել պալատական վերնախավի ճաշակը կամ արիստոկրատիայի գեղարվեստական պահանջները։ Անցյալի մեծ նկարիչները՝ Վելասկեսը, Պաուլ Պետեր Ռուբենսը և ուրիշներ, նույնպես ստեղծել են թագավորների, հոգևոր բարձրաստիճան հայրերի, նույնիսկ Հռոմի պապերի պատվերներով նկարներ, բայց նրանցից և ոչ մեկը իրենց ստեղծագործություններում չեն արտահայտել նրանց ճաշակն ու գաղափարախոսությունը։

Հակառակ այդ ժանրում անհատի մեծարման ավանդների, Այվազովսկին առաջին պլան է մղում ռուսական ամբողջ նավատորմը, զինվորներին և նավաստիներին, որոնք քաջաբար կռվում են և հերոսաբար զոհվում։ Մարտանկարչության ժանրի այդօրինակ լուծումը, որի ցայտուն օրինակներն են

---

2 «Документы...», էջ 102:

վերահիշյալ երկու կտավները, անկասկած նոր և առաջավոր քայլ էր ծովանկարիչ Այվազովսկու կողմից։ Գարնանը Այվազովսկին ժամանակավորապես տեղափոխվում է Թեոդոսիայից մոտ 30 կիլոմետր հեռու գտնվող իր գնած նոր կալվածքը՝ Շախ-մամայ, որտեղ քաղաքային աղմուկից և հյուրերի անընդհատ այցելություններից հեռու օրնիբուն աշխատում է։

ԱՆԿՈՂ ՀՅՈՒՐԸ

Մի օր անսպասելի արվեստանոց է մտնում կառավարության կողմից հետապնդվող թաթար լեռնցիների առաջնորդ։ Նա, արյունահեղությունից խուսափելով, հարուստներից հափշտակում էր նրանց ունեցվածքը և բաժանում աղքատներին։

— Շատ եմ լսել քո մասին, Օվաննես աղա,— ասում է նա, հարգանքով ողջունելով նկարչին,— բոլորն էլ գովում են քեզ, վաղուց էի ցանկանում քեզ տեսնել։ Ասում են պատկերներ ես նկարում։ Կարելի՞ է դիտել քո նկարները։

Այվազովսկին նույնպիսի հարգանքով ու սիրով ցույց է տալիս արվեստանոցում եղած ծովանկարները։

Հետաքրքրությամբ դիտելով նկարչի ստեղծագործությունները անկող հյուրը՝ ուռճացած հարուստների ոխերիմ թշնամին, ասում է.

— Շնորհակալություն քեզ, Օհաննես աղա, որ ցույց տվեցիր այդ բոլորը։

Հովհ. Այվազովսկին արևելյան սովորությամբ հյուրին հրավիրում է սուրճ խմելու։ Մտերմական զրույցի ընթացքում ակնհայտ է դառնում, որ նկարիչը շուտով ամուսնանալու է, հյուրը խաստանում է անպայման, չնայած իրեն սպառնացող վտանգին, ներկա լինել նրա հարսանիքին։ Այդ հյուրը Կովկասի լեռնաբնակների առաջնորդ, իր քաջությամբ և համարձակությամբ հայտնի Շամիլն էր, որին ցարական կառավարությունը հայտարարել էր օրենքից դուրս և նրան ձերբակալելու համար նշանակել մեծ պարգև։

Ղրիմում, իր նոր առանձնատանը և Շախ-մամայ կալվածքում, նկարիչը մոր և քրոջ հետ ապրում էր խաղաղ ու հանգիստ, երբ Ֆրանսիայից ստացված նամակից տեղեկանում է, որ իր եղբայր Գաբրիելը արդեն դուրս է եկել Մխիթարյան միաբանությունից և մեկնել Փարիզ, որտեղ նա տեօրինում է հայկական դպրոցի գործերը։ Դա նկարչին շատ է ուրախացնում։ Վերջապես իր եղբայրը հեռացավ կաթոլիկ մխիթարյաններից և կարող է զբաղվել աշխարհիկ գործերով ու գիտությամբ։

Շարունակելով իր ստեղծագործական աշխատանքը՝ Այվազովսկին տարվա առաջին կեսում նկարում է «Փոթորկոտ ծովը» (Թեոդոսիա), «Արևամուտը ծովում» (Ռիգա), «Նավը փոթորիկի ժամանակ» (Պերմ) և այլ կտավներ։ Անցյալ աշնանը նկարած էտյուդների հիման վրա ստեղծում է «Երեկո Ղրիմում» (Թեոդոսիա) և «Սայլը դաշտում» (Կիև) լենցաղային բնույթի բնանկարները։

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

1848 թ. ամռանը Հովհաննես Այվազովսկու կյանքում տեղի է ունենում նշանակալից մի իրադարձություն. նա ամուսնանում է։ Ամուսնությունն այնքան արագ ու անսպասելի է լինում, որ նրան ճանաչողներից շատերը մնում են զարմացած։ Ինքը՝ Այվազովսկին, խոստովանում է, որ «երկու շաբաթում ամեն ինչ վերջացած էր... Ես ամուսնացա որպես իսկական արտիստ, այսինքն՝ սիրահարվեցի, ինչպես երբեք»։

Այդ ամուսնությունն իսկապես բանաստեղծական էր, արտիստիկ։ Պետերբուրգում ազնվական ընտանիքի տարեց մի այրի, որը ճանաչում ուներ հասարակության մեջ, Այվազովսկուն առաջարկում է նկարչություն դասավանդել իր երկու աղջիկներին։ Այդ աղջիկները, ինչպես ասում են, «ամուսնացնելու տարիքի» էին և ստանալով տնային լավ դաստիարակություն, միաժամանակ Անգլիայից Ռուսաստան եկած շոտլանդուհի դաստիարակչուհու մոտ պարապում էին

անգլերեն ու դաշնամուրային երաժշտություն։ Նկարչությունը նրանց սիրած զբաղմունքն էր, և Այվազովսկու պես հանրահռչակ ուսուցիչ ունենալը նրանց ավելի է կապում գեղեցիկ արվեստների հետ։

Կարճ ժամանակում տիրապետելով ջրանկարչությանը՝ օրիորդները հոգնած պահերին իրենց առանձնատանը կազմակերպում են երաժշտական երեկոներ, որոնց մասնակցում են նաև Այվազովսկին և տնային դաստիարակչուհին։ Այդ երեկոները երբեմն շատ երկար են տևում, իսկ ջութակ նվագող նկարիչն այնքան ուշադրություն է ցուցաբերում այդ տանտիրուհու նկատմամբ, որ վերջինս սկսում է ենթադրել, թե իր աղջիկներից որին նախապատվություն կտա անվանի նկարիչը, ներքուստ մտածելով, որ այդ ամենը կատարվում է հենց այդ նպատակով...[1]

Բայց մեծ է լինում բոլորի զարմանքը, երբ Այվազովսկին առաջարկություն է անում դաստիարակչուհի Ջուլիա Գրևսին՝ լութերադավան շոտլանդուհուն։ Շուտով նրանք մեկնում են Ղրիմ։

Այդ շտապ, չկոռադատված ամուսնությունը կատարվում է Ղրիմի հայոց եկեղեցում, հայկական ազգային սովորությամբ, պայմանով, որ նրանցից ծնված երեխաները նույնպես պետք է մկրտվեն «հայկական սուրբ ավազանում»։ Այդ մասին վկայում է հենց ինքը՝ Այվազովսկին. «Ամուսնացեալ յամի 1848-ի 15 օգոստոսի ընդ Յուլիա դստեր Յակոբայ կռև անգլիացւոյ լութերականի,— գրում է նկարիչը 1870 թ. հունիսի 10-ին էջմիածնի սինոդին,— բայց պսակեալ և ի մերումս հայաստանեայց եկեղեցւոց՝ պայմանով մկրտել զզավակունս մեր ի նմին հայկական սուրբ ավազանի»[2]։

Ինչպես տեսնում ենք, 31-ամյա Հովհաննես Այվազովսկին ընտանիք կազմելիս ևս պահպանում է հայկական սովորությունները և հետամուտ է լինում, որ ծնված չորս աղջիկներն էլ մկրտվեն «հայկական սուրբ ավազանում»։ Պսակադրությունը

---

[1] *Այվազովսկու ակադեմիական ընկերոջ՝ Ֆարտարապետ Մոնիգետտի ազգականուհի Տ. Ա. Լիստովայի գրավոր պատմածը։ Տե՛ս ԲՊՊ, արխիվ։*

[2] «Документы... էջ 161.

և հարսանեկան հանդեսը նույնպես կատարվում են հայկական ընդունված կարգով։ Եկեղեցուց նորապսակ հարսին տուն տանելու համար նկարիչը վարձում է ծաղիկներով զարդարված մի քանի կառք և հյուրերի հետ ճանապարհվում դեպի Շախ-մամայ՝ հարսանեկան ճաշկերույթի։ Ահա հենց այդ ժամանակ անտառից դուրս է գալիս լեռնցիների հագուստով, զինավառ ու հեծյալ մի ջոկատ և կանգնեցնում հարսանեկան թափորը։ Շատերը վախենում են, կարծելով, թե դա թալանի ելած թաթար ավազակախումբ է։ Սակայն նրանց առաջնորդը մոտենում է կառքին, իջնում ձիուց և, համարձակորեն բացելով կառքի դռնակը, ասպետին վայել հանդիսավորությամբ գլուխ է տալիս, շնորհավորում նորապսակներին։ Գովելով Այվազովսկու ընտրությունը՝ գեղեցիկ հարսի ծնկներին է դնում մի թաշկինակ, ապա երկուսին էլ երջանկություն մաղթելով, նետվում է ձիու վրա և իր թիկնապահ հեծյալների հետ անհետանում։ Դա լեգենդար Շամիլն էր, կովկասյան լեռների արծիվը, որն իր խոստման համաձայն եկել էր մասնակցելու մեծ նկարչի հարսանեկան հանդեսին։ Շամիլի ասպետական այդ արարքը չափազանց դուր է գալիս ներաստականներին, և նկարիչը հետագայում՝ Անդրկովկասում եղած ժամանակ (1868) նկարում է նրա անվան հետ կապված լեռնային բնապատկերներ։

Ջուլիա Գրևսի հետ ամուսնության առաջին տարիներին Այվազովսկին իրեն երջանիկ է համարում։ Ավելին, նա հիացած է այդ ամուսնությամբ։ Հարսանեկան արարողությունից որոշ ժամանակ անց, իր բարեկամներից մեկին ուղարկած նամակում սիրահարված նկարիչը գրում է. «...Այժմ ես շտապում եմ ասել Ձեզ... իմ երջանկության մասին։ Այժմ, ութ ամիս հետո, ասում եմ Ձեզ, որ ես այնքան եմ երջանիկ, որ... ես երբեք չէի կարող պատկերացնել նույնիսկ դրա կեսը»։ Այդպես թունդ սիրահարված և ներշնչված իր այդ սիրով՝ նա գրում է. «Ես այժմ աշխատում եմ ավելի քան երբևէ»։ Իսկապես, տարվա երկրորդ կեսում և այնուհետև Այվազովսկին աշխատում է ավելի ոգևորված։ Նա խոստովանում է, որ «Իմ լավագույն կտավները նրանք են, որոնք ես նկարել եմ ոգեշնչված, ինչպես և երբ ամուսնացա...»։

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հովհ. Այվազովսկին ոչ միայն ոգեշնչված է աշխատում, այլև նույնպիսի տրամադրությամբ ցանկանում է հասարակությանը ծանոթացնել իր նոր ստեղծագործություններին։ Այդ նպատակով սեպտեմբերի սկզբներին նա մեկնում է Պետերբուրգ՝ ճանապարհին կանգ առնելով Մոսկվայում։

Մոսկվայի նկարչության և քանդակագործության ուսումնարանի ուսուցիչները և աշակերտները ցանկություն են հայտնում ուսումնարանի շենքում կազմակերպել Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդես։ Նկարիչը տալիս է իր համաձայնությունը՝ եթե գեղարվեստի ակադեմիայի ղեկավարությունը չառարկի։ Ուսումնարանը այդ խնդրով դիմում է գեղարվեստի ակադեմիային և շուտով ստանում ակադեմիայի և նորին մեծության թույլտվությունը։ Եվ ահա, 1848 թ. սեպտեմբերի 27-ին Մոսկվայի գեղարվեստական ուսումնարանում բացվում է Այվազովսկու 10 ստեղծագործությունների ցուցահանդեսը։ Մոսկվայի արվեստասեր հասարակայնությունը, որը փաստորեն առաջին անգամ էր տեսնում հայտնի ծովանկարչի կտավները Ռուսաստանի երկրորդ մեծ քաղաքում, հափշտակվում է նրա արվեստով։ 10 օրվա ընթացքում, առավոտից մինչև կեսօր, ուսումնարանի ցուցասրահները լցվում են այցելուներով։ Ցուցահանդեսի փակման օրերին «Այվազովսկին թույլ է տալիս ուսումնարանի աշակերտներին նկարել պատճեններ իր ծովանկարներից,— կարդում ենք ուսումնարանի հաշվետվության մեջ,— և աշակերտները բավական հաջողությամբ են պատճեններ նկարում, որը շատ է նպաստում նրանց ճաշակի զարգացմանը բնանկարչության մեջ»[1]։ Այվազովսկու ստեղծագործություններից պատճեններ նկարող աշակերտների թվում էր նաև Ա. Կ. Սավրասովը (1830—1897)՝ ապագա ռուս մեծ բնանկարիչը։

Մոսկվայի Գեղարվեստական Ընկերության խորհուրդը ամփոփելով ցուցահանդեսի արդյունքները՝ իր ընդարձակ հաշվետվության մեջ արձանագրում է. «...խորհուրդը իրավունք է վերապահում իրեն շնորհակալություն հայտնել հայրենական

---

1 «Документы...», էջ 105:

ին ոսկեր նկարչին... ամբողջ Մոսկվայի անունից։ ...Խորհուրդը միաժամանակ վկայում է նկարչի ստեղծագործությունների ունեցած հսկայական հաջողությունը մեր մայրաքաղաքում և այն օգտակարությունը, որ բերեց այդ ցուցահանդեսը ուսումնարանին։ Ցուցահանդեսը 10 օրում առաջացրեց այցելողների այնպիսի հոսք, որպիսին Մոսկվայում վաղուց չեն հիշում. հաճելի վկայություն այն բանի, թե գեղեցիկ արվեստների ստեղծագործությունները ինչպիսի աշխուժություն են ար նացնում հասարակության բոլոր օղակներում»[2]։

Կակելով Մոսկովյան ցուցահանդեսը՝ Այվազովսկին հոկտեմբերի կեսերին մեկնում է Պետերբուրգ, խոստանալով կրկին այցելել Մոսկվա և կազմակերպել ցուցահանդես։ Նա ձմեռն անց է կացնում Պետերբուրգում, որտեղ, սակայն, երկար չի մնում։ Նկարները պատվիրատուներին հանձնելուց հետո և նոր պատվերներ ստանալով, Այվազովսկին գարնան սկզբներին վերադառնում է Թեոդոսիա, ուր ապրում և ստեղծագործում է իր նոր առանձնատանը։

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՕԳՏԻՆ

1850 թ. աշնանը նկարիչը իր ստեղծագործությունների նոր ցուցահանդես է բացում Օդեսայում։ Այդ ցուցահանդեսից գոյացած գումարը, որը նկարչի վկայությամբ «բավական մեծ էր», նա նվիրաբերում է քաղաքի աղքատներին։ Օդեսայի երախտագետ քաղաքացիները Այվազովսկու պատվին կազմակերպում են ճոխ ճաշկերույթ և որպես մնայուն հիշատակ նրան գեղարվեստական նուրբ փորագրություններով արծաթյա հիանալի մի սափոր են նվիրում։ Խորապես հուզված չերմ ընդունելությունից, նկարիչը իր հերթին քաղաքային ակումբին ու բիրժային է նվիրում երկու ստեղծագործություն՝ «Մառախլապատ առավոտ» և «Իտալական գիշեր» կտավները՝ հանելով դրանք ցուցահանդեսի էքսպոզիցիայից։ Միաժամանակ ծո-

---

[2] Նույն տեղ, էջ 104—105։

վային մի մարտանկար է նվիրում նաև Սևաստոպոլի նորաստեղծ քաղաքային գրադարանին։

Ուշ աշնանը նկարիչը մեկնում է Պետերբուրգ։ Այստեղ նա նկարում է երկու գծանկար Ա. Ումանցի «Ճանապարհորդություն դեպի Սինայ» գրքի համար, որոնք տպագրվում են նույն թվին հրատարակված երկու հատորների անվանաթերթերի վրա։ Պետերբուրգում, նոյեմբեր ամսին, Նիկոլայ կայսրը Այվազովսկուն հրավիրում է Ձմեռային պալատ, ցույց տալու իր նոր գնած կտավները և տեսնելու նկարչի վերջին ստեղծագործությունները։ Արևմտաեվրոպական մի քանի նկարիչների գործեր դիտելուց հետո կայսրը նկարչի ուշադրությունը հրավիրում է «Մադոննա» նկարի պատճենի վրա, որը ինքնուս նկարիչ Սվերչկովի նկարածն էր։ Այվազովսկին լուռ է մնում, քանի որ չէր ճանաչում այդ նկարչին և ցույց է տալիս իր նոր ստեղծագործությունները։ Թագավոր-կայսրը ուշադիր դիտում է նկարչի վերջին աշխատանքները, հավանության արժանացնում և շտապ հեռանում է։ Շատ չանցած՝ 1851 թ. փետրվարի 12-ին, Հովհ. Այվազովսկուն շնորհվում է սբ. Աննայի երկրորդ կարգի շքանշան։

«ԻՆՆԵՐՈՐԴ ԱԼԻՔԸ»

«1849—1850 թվականներին Այվազովսկին նկարում է ավելի քան երեսուն մեծ ու փոքր պատկեր»[1]։ Այդ ստեղծագործություններից ԽՍՀՄ թանգարաններում են գտնվում շուրջ 15-ը։ Դրանցից հայտնի է «Իններորդ ալիքը», որը նկարչին շատ մեծ փառք բերեց։ Լենինգրադի ռուսական թանգարանում գտնվող այդ մեծակտավ հանճարեղ ստեղծագործությունը պատկերում է փոթորկոտ ծովը վաղ առավոտյան։ Պատկերված է երկինքը և ընդամենը երեք-չորս ալիք, սակայն դրանցից մեկը՝ իններորդը, վերարտադրված է այնպիսի ուժով, այնքան հակայական ու շարժման վիթխարի թափով, որ միայն

---

[1] «Документы...», էջ 138։

դրանով արդեն զգացվում է փոթորկոտ ծովի ահռելիությունը։ Վաղորդյան արևի ոսկեզօծ առաջին ճառագայթներով լուսավորված իններորդ ալիքը հզոր ուժով վեր է խոյացել մյուսներից և, թվում է, թե ահա, ահա կգահավիժի այն դժբախտ մարդկանց վրա, որոնք կառչել են խորտակված նավի բեկորից։ Նրանց կործանումը ակնհայտ է։ Սակայն, չնայած ողբերգական դրությանը, այդ խիզախ մարդիկ չեն կորցրել խրենց փրկության հույսը։ Նրանք նույնիսկ համակված են միմյանց օգնելու ցանկությամբ։ Նրանցից մեկը գլխիվայր, կիսով չափ ընկղմվել է ջրի մեջ, մյուսը՝ ինքն էլ վտանգի մեջ, բռնել է նրան, ընկերոջը վեր քաշելու և փրկելու ճիգեր է անում։ Մեկ ուրիշը ձեռքը և հայացքը դեպի լուսաշող հորիզոնն ուղղած՝ փրկություն է աղերսում։

Չնայած կործանման մոտալուտ վտանգին, որը այնքան պարզորոշ է արտահայտված, դիտողը, այնուամենայնիվ, ներքին ինչ-որ մղումով մտածում է, որ նրանք կփրկվեն։ Դա գալիս է Այվազովսկու արվեստի լավատեսությունից։ Նկարիչը կարողացել է ամենաահեղ վտանգի պահը ներկայացնել այնպես, որ փրկության հույսը մնա, և դիտողն էլ համակվում է այդ հույսով։ Այդ է հուշում գիշերային մռայլ խավարում ծովի կատաղի ջրերի վրա հորիզոնից առկայծող արևի ջերմ ճառագայթների գծած լուսափայլ ճանապարհը, որտեղ ուղղված են վտանգի ենթարկված մարդկանց հայացքները և ջարդված կայմի շարժման ուղղությունը։ Այստեղ իրար են հակադրված բնության ահեղ տարերքը և հանուն կյանքի մարդկանց համառ, քաջարի ջանքերը։ Այդ հուսահատ և ողբերգական պայքարում մարդիկ հանդես են գալիս որպես իսկական հերոսներ, որոնք մեծագույն ճիգերով դիմադրում են կործանմանը։ Նկարիչն այստեղ արտահայտել է մարդկային հոգու վեհությունը, նրա հաղթանակի կամքը բնության կործանարար ուժերի դեմ։ 1834 թ. Կ. Բրյուլովի նկարած «Պոմպեյի վերջին օրը» մեծակտավ հանճարեղ ստեղծագործության մեջ արտահայտվել են ժամանակի առաջադիմական հայացքները։ Լինելով նույն շրջանի և միջավայրի արվեստագետ՝ Հովհ. Այվազովսկին ևս իր այս ծովանկարում կերպա-

բային միջոցներով բացահայտում է ժամանակի առաջադիմական, մարդասիրական գաղափարները։

«Իններորդ ալիքը» ստեղծագործության մեջ ծովի ալեկոծման տեսարանը, ինչպես և փոթորկալից կամ խռովահույզ բնության այլ պատկերների մեջ, նկարիչը անվերապահորեն չի արտահայտում մարդու կործանման կամ նրա մոտալուտ մահվան գաղափար։ Փոթորկալից ծովի տարերքը՝ այն հազվադեպ ու զեղեցիկ պահերը, որոնց մեջ ապրում և իր կամքն է կոփում մարդը, նա վերարտադրում է թեթևությամբ, այնպես որ երևա դրա ահեղությունը, բայց ոչ մահվան սարսուռը։ Այստեղ առկա որոշ տպավորչությունը, որն արտահայտված է չափազանց ջերմ, դեղնանարնջավուն կոլորիտի մեջ, զգալիորեն նպաստում է պատկերի խիստ դրամատիկ բովանդակության մեղմացմանը։ Նկարում արևի լույսը, որ թափանցել է ջրերի մեջ և ջերմացրել հորիզոնը, միաժամանակ ուժեղացրել է պատկերի ընդհանուր լավատեսական ոգին։

Փոթորկոտ ծովի վրա բացվող վաղորդյան գունագեղությունը Այվազովսկին պատկերել է ներկապնակի ամենապայծառ ու տաք գույներով ու ռոմանտիկ շնչով։ Այն աչքի է ընկնում կատարման թեթևությամբ ու փայլով։ Դա նորություն էր այն ժամանակվա բնանկարչության մեջ։ Այդ նորույթը, ամենից առաջ, նրա հերոսական բովանդակությունն էր՝ բնանկարչության մեջ մուծած արևելյան հախուռն խառնվածքը, կենսահաստատ ուժը և կերպարների վեհությունը։ Իր հիմքով ռեալիստական այդ ստեղծագործության մեջ առկա է ժամանակի առաջադիմական ռոմանտիզմի շունչը։

Հետաքրքրական է «Իններորդ ալիքը» կտավի ստեղծման պատմությունը։ Որոշ արվեստագետներ դիտում են այն որպես նկարչի հարուստ երևակայության արդյունք։ Մինչդեռ այդ սյուժեն ունի իրական հիմք։ Ինչպես արդեն նշել ենք դեռևս 1843 թ. Փարիզում կատարելագործման մեջ գտնվող 26-ամյա նկարիչը թերթերում կարդում է մի այդպիսի դեպքի մասին։ Հովհ. Այվազովսկին այսպես է գրել 1843 թ. մայիսի 10-ին. «Այժմ ես ձեռնամուխ եմ եղել նկարելու մի մեծ պատկեր՝ փոթորիկ, որը տեղի է ունեցել աֆրիկյան ափերից շատ հեռու։ 8 մարդ 45 օր շարունակ կառչած են մնացել ջարդված

Նավի մի բեկորից։ Մանրամասները ստուգափելի են, նրանց փրկել է ֆրանսիական երկկայմ մի նավ»[1]։

Ինչպես տեսնում ենք, Այվազովսկին դեռևս 1843 թ. ձեռնամուխ է եղել» նկարելու մի այդպիսի սյուժեով փոթորիկի պատկեր, որ, իսկապես, «տեղի է ունեցել» և նույնիսկ, ինչպես նշել ենք, հույս է ունեցել շուտով ավարտել այն և ցուցադրել Պետերբուրգում։ Դա նշանակում է, որ նկարիչը սյուժեն վերցրել է իրական կյանքից՝ արտահայտելով իր ժամանակի համար առաջադիմական գաղափարներ։ Նկարիչը հարազատ է մնացել նաև պատմական ճշմարտությանը։ Դեպքը տեղի է ունեցել Աֆրիկայի շրջանում, ուստի, ամենայն հավանականությամբ, այդ դժբախտները եվրոպացիները չեն եղել։ Այս պատկերում ևս արևելքի մարդիկ են։ Նրանց դիմագծերը և հագուստները նույնպես արևելյան են։ Այստեղ պատկերված ծովային բնությունն անգամ իր վառ ու տաք գույներով աշխարհագրական այդ երկրամասն է հիշեցնում։ Տարբերությունը միայն մարդկանց քանակի մեջ է. իրականում եղած 8 անձի փոխարեն նկարիչը առաջին պլանում պատկերել է 6 մարդ, որը սակայն, չի խանգարում սյուժեի պատմականությունը և հերոսականությունը բացահայտելուն։

ԵՐԿՈՒ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Պետերբուրգում Այվազովսկին հանդիպում է իր վաղեմի ընկերոջը՝ ակադեմիկոս Ֆ. Ա. Բորգանին, որը ցանկություն է հայտնում միասին ցուցահանդես կազմակերպել Մոսկվայում։ Համաձայնվելով՝ մարտի սկզբներին նրանք մեկնում են Մոսկվա։

Մոսկվայում Այվազովսկին տեսակցում է իր ծանոթների ու բարեկամների հետ։ Նրանցից մեկը՝ բանաստեղծ Պ. Ա. Վյազեմսկին, մի երկտող է գրում ակադեմիկոս Մ. Պ. Պոգոդինին, որն այդ ժամանակ «Մոսկվիտյանին» ամսագրի խմբագիրն էր։ «Մեր նշանավոր նկարիչ Այվազովսկին,— գրում է նա,— ցանկանում է Ձեզ հետ ծանոթանալ։ Բացի գեղագետից

---

[1] «Документы...», էջ 71:

տաղանդից, նա ունի նաև մի առանձնահատուկ արժանիք ևս։ Նրա արտաքինը հիշեցնում է մեր Ա. Ս. Պուշկինին։ Համախակի այցելեք նրան քե տաղանդի, և քե նմանության համար»[1]։ Այդպիսով Այվազովսկին ծանոթանում է մոսկովյան աշխարհի նշանավոր գործիչներից մեկի հետ և նրանց միջև ստեղծվում է բարեկամություն, որը տևում է երկար տարիներ։

1851 թ. մարտի 19-ին Հովհ. Այվազովսկին և գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, նկարիչ-գրաֆիկ Ֆեոդոր Իվանովիչ Իորդանը (1800—1883) ցուցադրում են իրենց ստեղծագործությունները Մոսկվայի նկարչության և քանդակագործության ուսումնարանի սրահներում։

Նույն օրը եղեգնյան նրանց պատվին տրվում է ճաշկերույթ, որի ժամանակ նշանավոր նկարիչների մասին ջերմ խոսքեր են ասում ուսումնարանի ուսուցիչները, տնօրեն Ն. Ա. Ռամազանովը, ակադեմիկոս Մ. Պոգոդինը և ուրիշներ։ Քանդակագործ Ն. Ա. Ռամազանովը (1815—1868), որը Այվազովսկու հետ սովորել էր ակադեմիայում և միաժամանակ կատարելագործման մեջ եղել Իտալիայում, իր ճառում, որը հետո տպագրվեց, ասում է. «Այվազովսկու ստեղծագործությունները, հատկապես «Կապրի կղզու տեսարանը» մեծ բավականություն պատճառեցին արվեստի իսկական սիրահարներին և կրկին հաստատում են, որ բացի Այվազովսկուց մեզ մոտ ուրիշ ոչ ոք այդպես ճշմարտացի չի պատկերում ծովի կյանքը, ոչ ոք չի հասնում օդի թափանցիկության վերարտադրմանը, ոչ ոք, բացի իրենից, չի մնում այդպես հարազատ օդային տարածականության պատկերմանը, ինչպես նաև իսկական տաղանդը, կենսականությունը նկատվում է նաև նրա ոչ մեծ գործերում»[2]։ Այս խոսքերը գրում է մի մարդ, որը մոտիկից գիտեր ռուսական ժամանակակից կերպարվեստը։

Իր պատասխան խոսքում Այվազովսկին ասում է. «...Իմ աշխատանքների նկատմամբ ձեր ջերմ վերաբերմունքով ես

---

1 Վ. Ի. Լենինի անվ. գրադարանի արխիվ, Пог./ п 7—81։

2 «Москвитянин», ж. 1854, էջ 264։

վարձատրված եմ, և դա ինձ իսկապես երջանկացրեց։ Կաշխատեմ շնորհակալ լինել ինձ անընդհատ կատարելագործելով։ Դա կլինի իմ պարտքը և իմ շնորհակալությունը գեղեցիկ արվեստները հասկացողների նկատմամբ»։ Նկարիչը խոստանում է առաջիկա տարիներին նկարել նաև Մոսկվայի տեսարժան վայրեր։ Նա իր կողմից ուսումնարանի տնօրինությանն է հանձնում իր ստեղծագործություններից մեկը՝ աղքատների օգտին վաճառելու կամ վիճակախաղ գցելու համար։

ԳԵՆԵՐԱԼ Ա. Պ. ԵՐՄՈԼՈՎԻ ԵՎ ՆԱԽԿԻՆ ԴԵԿԱԲՐԻՍՏ Զ. Գ. ՉԵՐՆԻՇԵՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՆԿԱՐՉԻ ԱՐՎԵՍՏԱՆՈՑՈՒՄ

1851 թ. մարտին Մոսկվայում բացված Այվազովսկու և Իորդանի ստեղծագործությունների միացյալ ցուցահանդեսը այցելողներից է լինում նաև գեներալ Ա. Պ. Երմոլովը (1772—1861)՝ 1812 թ. հայրենական պատերազմի հերոսներից մեկը, Կովկասի նախկին կառավարիչը։ Նա ցանկություն է հայտնում ծանոթանալ ծովանկարչի հետ և տեսնել, թե ինչպես է նկարում այդքան գեղեցիկ ծովային պատկերներ։ Հովհ. Այվազովսկին նրան հրավիրում է իր արվեստանոցը։ Հաջորդ օրը «Երմոլովը, նշանակված ժամից 20 րոպե շուտ, կառքով գալիս է այն տունը, ուր ապրում էր Այվազովսկին, բայց մտնում է մոտիկ գրախանութը, ժամանակ անցկացնում, և երբ ժամացույցը խփում է 10 անգամ, նա թակում է նկարչի դուռը և մտնում նրա արվեստանոցը։ Այդ ժամանակ Այվազովսկին վերցնում է կտավով ծածկված մի փոքրիկ շրջանակ, դնում է նկարակալին և նախկին զորավարի աչքերի առջև սկսում է նկարել Կովկասի լեռները Սև ծովի կողմից։ Ծովը փոթորկոտ է։ Առաջին պլանում նկարում է մի խումբ չերքեզներ, որոնք դիտում են ծովափնյա ժայռերին զարկվող նավակը։ Այվազովսկին պատկերն ավարտում է երկու ժամում, որի ընթացքում Երմոլովը հետաքրքրությամբ և առանց աչքը հեռացնելու դիտում է նկարչի աշխատանքը և զարմանում, թե ինչպե՞ս է սպիտակ կտավի վրա նկարչի վրձնի տակից

այդպես արագորեն ծնվում կենդանի պատկերը։ Բայց նրան ավելի հուզում է այուժեն, որը հիշեցնում է գեներալի կովկասյան տարիները, մարտական անցքերը, որոնց մասին էլ նրանք խոսում էին նկարելու ժամանակ։

Այվազովսկին նոր էր ավարտել վերջին վրձնահարվածը, երբ թակում են արվեստանոցի դուռը։ «Ներս է մտնում մի տարեց մարդ, սպիտակած մորուքով,— պատմում է նկարիչը։

— Օ՜հ թույլ կտաք,— դիմում է նա իրեն ընդառաջ եկող Այվազովսկուն, բայց տեսնելով այնտեղ նստած նախկին գեներալին, ծերունին ասում է.

— Կանցնեմ ուրիշ ժամանակ, այժմ Ձեզ մոտ Ա. Պ. Երմոլովն է, իսկ ես չգիտեմ դուրեկան կլինի նրան տեսնել ինձ...

— Բայց ու՞մ հետ պատիվ ունեմ խոսելու,— հարցնում է նկարիչը՝ չճանաչելով նորեկ հյուրին։

— Ես Ձերնիշևն եմ,«Союз благоденствия» ընկերության նախկին անդամը...

Նկարիչը հաղորդում է Երմոլովին ծերացած դեկաբրիստի տարակուսանքը, և այդ պահին Երմոլովը արագ վեր է կենում տեղից, մոտենում կոմս Ձերնիշևին, կոչում նրան անուն հայրանունով, ջերմորեն գրկում և վերաբերվում է նրա հետ որպես հին ու թանկագին ընկերոջ։ Շատ հուզական բան կար այդ երկու ծերունիների զրույցի մեջ, որոնք այդպես տարբեր ավարտեցին իրենց ծառայության ասպարեզը...»[1]։

Հովհ. Այվազովսկին, ինչպես նշել ենք, դեռևս 1830-ական թվականների վերջերին ծանոթացել էր մի քանի դեկաբրիստների հետ և հիացած էր նրանց խիզախությամբ։ Այս նոր ծանոթությունը նախկին անվանի դեկաբրիստ Ջ. Դ. Ձերնիշևի հետ ավելի է ամրապնդում նրա համոզմունքը։ Այս փաստը միաժամանակ ասում է այն մասին, որ նկարիչը շփում էր ունենում հասարակության տարբեր խավերի ու գաղափարական տարբեր հոսանքների պատկանող անձանց հետ։

Գեներալ Ա. Պ. Երմոլովի և նախկին դեկաբրիստ Ջ. Դ. Ձերնիշևի հետ ունեցած վերոհիշյալ հանդիպումից ու զրույցներից հետո Այվազովսկին հաջորդ օրը իր նկարած կտավը

---

[1] «Русская старина», 1878, հ. 23, էջ 66—67:

ուղարկում է ծերունի զորավարին հետևյալ մակագրությամբ. «Ռուսական արվեստի նվերը ռուսական ռազմական աբիությանը»։ Այդ առիթով Երմոլովը նկարչին գրում է շնորհակալական նամակ, որտեղ նա Այվազովսկուն անվանում է «ամենանշանավոր նկարիչ... ահեղ փոթորիկների ու խաղաղ ծովի սքանչելի գեղեցկությունների ստեղծող», որի «հիանալի արվեստը» հիացմունք է պատճառում դիտողին[2]։

Մոսկվայում Այվազովսկին նկարում է երկու նոր պատկեր քաղաքի պատմության և նրա բնության թեմաներով՝ «Մոսկվայի տեսարանը Փրկչի տաճարով» և «Մոսկվայի հրդեհը 1812 թ.»։ Այդ ստեղծագործությունները թագավորի թույլտվությամբ ցուցադրվում են Նիկոլաևյան պալատում, Մոսկվայից թագուհու մեկնելուց անմիջապես հետո։

«ԾՈՎԻ ԹԱԳԱՎՈՐԸ

Ավարտելով իր ցուցահանդեսային գործունեությունը և հանդիպումները Մոսկվայում՝ Այվազովսկին վերադառնում է Թեոդոսիա և գարնան վերջը և ամռան ամիսները անց է կացնում Ղրիմում։ Այդ ժամանակ թագավորի հրավերով նկարիչը շտապ մեկնում է Նիկոլաև քաղաքը, որտեղ հանդիպելով Նարին մեծությանը, նրա շքախմբի հետ «Վլադիմիր» շոգենավով մեկնում է Սևաստոպոլ։ Թագավորը ծովափ էր եկել մեծ շքախմբով։ Նրան ուղեկցում էին ավագ որին՝ Կոստանդինը, իշխան Ա. Ս. Մենշիկովը, ավստրիական դեսպանը և ուրիշներ, որոնց հետ միանալով, նկարիչը մասնակցում է սևծովյան նավատորմի ծովային զինավարժությանը։ «Ծովագնացության ժամանակ թագավորը հաճախ էր զբաղեցնում նրան սիրալիր զրույցներով,— գրում է կենսագիրը Այվազովսկու պատմածի հիման վրա,— հրավիրելով նրա ուշադրությունը ծովի էֆեկտային լուսավորության կամ զորաշարժային նավերի գեղանկարչական խմբավորման վրա»[1]։

---

2 «Документы...», էջ 107—108:

1 «Русская старина», 1878, հ. 23, էջ 70:

Այդ նավագնացության մասին պատմում է նաև նկարիչ Կ. Վ. Լեմոխը (1844—1910)։ «Մովի վրա կատարած ճանապարհորդության ժամանակ թագավորը վերցրեց իր հետ Այվազովսկուն և կանգնած նավի մի կողմում, թագավորը հեռվից բացականչում է նկարչին.

— Այվազովսկի, ես երկրի թագավորն եմ, իսկ դու՝ ծովի թագավորը»[2]։

ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԱՀԸ

Նոր ծովանկարներ Այվազովսկին ստեղծում է նաև 1852 թվականին։ Այդ տարվա սկզբներին Մոսկվայում նկարիչը պատահաբար հանդիպում է Ն. Վ. Գոգոլին և նրա հետ կարճատև զրույց է ունենում[1]։ Որտեղի՞ց նա կարող էր իմանալ, որ այդ հպանցիկ տեսակցությունից կարճ ժամանակ անց՝ մարտի 4-ին կյանքից ընդմիշտ կհեռանար ռուս նշանավոր գրողը։ Ն. Վ. Գոգոլի մահը խորապես ազդում է արվեստագետի վրա։ Նկարչին, սակայն, առավել մեծ ցավ է պատճառում իր մեծ բարեկամ՝ հոգևոր հայր և ուսուցիչ կարլ Պավլովիչ Բրյուլովի վաղաժամ և անսպասելի մահը, որը տեղի է ունենում հունիսի 11-ին։ Այդ երկու մոտիկ ու հարազատ բարեկամների մահով նկարիչը ղրկվում է իր բարի և խորհրդատու ուսուցիչներից։ Նրան ոչ պակաս ցավ է պատճառում նաև բանաստեղծ Վ. Ա. Ժուկովսկու մահը, մի գրող, որը երիտասարդ նկարչի կյանքի ամենադժվար պահերին սրտառուչ վերաբերմունք է ցուցաբերել արվեստագետի նկատմամբ։

Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտի տարեկան հաշվետվության մեջ նշվում է 1851—1852 թթ. Այվազովսկու նկարած ավելի քան 15 կտավ։ Մեզ հայտնի 8 ստեղծագործություններից երկուսը, որոնք պատկերում են

---

[2] Я. Д. **Минченков**, Воспоминания о передвижниках, № 1980, էջ 29։

[1] «Русская старина», 1878, հ. 23, էջ 70։

Սևաստոպոլի նավահանգստի ռազմանավերը, նա նկարել էր ծովային ռազմարշավի ժամանակ, մյուսները՝ հիշողությամբ։

Ամենից ավելի ուժեղ ու արտահայտիչ է «Զկնորսները ծովափին» մեծակտավ ստեղծագործությունը, որը գտնվում է Հայաստանի պետական պատկերասրահում։

ՕԳՏՅԱԿԱՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԾՈՒՄԸ

1853 թ. սկզբներին Հովհ. Այվազովսկին մտադրվում է Թեոդոսիայի իր տանը, արվեստանոցին կից, գեղարվեստական դպրոց բացել։ Այդ նպատակով նա կազմում է ապագա դպրոցի ծրագիրը, ըստ որի այն բաղկացած է լինելու երկու բաժնից՝ ա) նախապատրաստական, բ) նկարչական։ «Դպրոցի նպատակն է պատրաստել ծովանկարչության, բնանկարչության և ժողովրդական տեսարանների նկարիչներ»։ Տարեկան ծախսերի համար պահանջվում է միայն 3000 ռ.։ Մարտի սկզբներին Այվազովսկին իր կազմած դպրոցի ընդարձակ ծրագիրը ուղարկում է Պետերբուրգ գեղարվեստի ակադեմիա՝ հաստատման[1]։ Գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտը հավանություն է տալիս և «համարելով Այվազովսկու առաջարկությունը օգտակար և՛ այդ երկրամասի, և՛ գեղարվեստի համար», մարտի 17-ին իր կողմից ևս դիմում է ֆինանսների մինիստրությանը[2]։ Երկու շաբաթ հետո՝ մարտի 31-ին, ֆինանսների մինիստրը պաշտոնապես ծանուցում է. «Թագավոր-կայսրը ցանկություն չհայտնեց այդ ուսումնարանի պահպանման համար տարեկան 3000 ռ. արծաթ ասիգնացիա տալ»[3]։ Դրանով մերժվում է Ղրիմում նկարչության դպրոց հիմնելու նկարչի առաջարկությունը։ Բայց Այվազովսկին չի հուսալքվում։ Համոզված իր նախաձեռնության օգտավետու-

---

1 «Документы...», էջ 110—113.

2 *Նույն տեղ, էջ 109—110։*

3 *Նույն տեղ, էջ 113—114։*

բյան մեջ, այդ խնդիրը կրկին բարձրացնելու հարցը հետաձգում է ավելի բարենպաստ ժամանակների։

Այդ ժամանակ տեղի է ունենում արևի խավարում։ Ղրիմում այդ երևույթը այնպես հստակ ու ընդգծված է արտահայտվում, որ նկարիչը անմիջապես որոշում է նկարել բնության այդ հազվադեպ պահը։ «Արևի խավարում Ղրիմում» կտավը ստացվում է չափազանց ճշմարտացի ու գեղեցիկ, ուստի նկատի ունենալով իր ստեղծագործության ոչ միայն գեղարվեստական, այլև գիտական կարևոր (ունիկալ) նշանակությունը, Այվազովսկին այն ուղարկում է Պետերբուրգ, աշխարհագրական ընկերությանը՝ նվեր։ Այդ առիթով էլ մարտի 17-ին Այվազովսկին ընտրվում է ռուսական աշխարհագրական ընկերության իսկական անդամ։ Հովհ. Այվազովսկին մի նկար ևս, պատկերում է Պետերբուրգի հիմնադրումը, նվեր է ուղարկում թագավորի կրտսեր որդուն՝ Միխայիլին, նրա ծննդյան տարեդարձի առթիվ, որի դիմաց մայիսի 21-ին թագաժառանգից ի նշան երախտագիտության ստանում է ադամանդե մատանի։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ

Թեոդոսիայում հողային ու շինարարական աշխատանքների ժամանակ երբեմն հայտնաբերվում են հռոմեական և հունական առարկաներ, դրամներ և գեղարվեստական-կիրառական արվեստի նյութեր, որոնք վկայում են այդ քաղաքի հնագույն պատմությունը։ Պատահականորեն գտնված այդօրինակ նյութերը նկարչին մտածել են տալիս զբաղվել հնագիտական պեղումներով։ Նկարիչը, իհարկե, գիտեր, որ Թեոդոսիան եղել է հին հռոմեական կայսրության ծայրագավառներից մեկի նավահանգստային ու առևտրական կենտրոնը։ Այստեղ ապրել ու գործել են հռոմեացիներ, որոնք ունեցել են իրենց տներն ու պալատները, հոգևոր և մշակութային շենքերը, բաղնիքները, պահեստները և այն ամենը, ինչ հարկավոր է եղել հռոմեացու ազատ կյանքի ու կենցաղի համար։ Նրանք վաղուց չկան, բայց նրանց թողած հետքերը մնացել

են դարավոր փոշիների տակ ու ծածկվել հողի հաստ շերտով։ Իր այդ մտածումների մասին տեղյակ պահելով Ռուսաստանի ֆինանսների մինիստրությանը և մինիստր կոմս Լ. Պերովսկուց ապրիլի 31-ին ստանալով նամակ-հանձնարարական,[1] նկարիչը մի քանի բանվորների հետ ապրիլ ամսից սկսում է հնագիտական որոնումները։ Չլինելով հնագետ՝ նա կարողանում է գտնել հնագիտական օջախներ Թեոդոսիայում և ոգևորված՝ ձեռնամուխ է լինում միաժամանակ երկու գերեզմանաթմբի (կուրգան) պեղմանը։ Այդ ժամանակ էլ կոմս Լ. Պերովսկին պաշտոնապես ցուցում է անում տեղական կազմակերպություններին հնարավոր ամեն ինչով օժանդակել Այվազովսկուն՝ իր խնդիրը հաջողությամբ կատարելու համար[2]։ Մայիս-հունիս ամիսներին ծավալելով պեղումները՝ աշխատանքի մեջ ընդգրկում է նաև երիտասարդ կնոջը՝ Ջուլիա Գրևսին, որը օգնում է ամուսնուն հողի տակից հանված հնագիտական նյութերը մաքրելու և գրանցելու գործում։ Հունիսին Այվազովսկին արդեն պեղում է 80-րդ գերեզմանաթումբը։ Հուլիսի 3-ին նա կոմս Լ. Պերովսկուն հրճվանքով հաղորդում է. «Ես հիացած եմ Թեոդոսիայով... Հողի տակից գտանք կնոջ ոսկե արձանիկի գեղակերտ մի գլուխ և հագուստի մի քանի ոսկյա զարդարանքի առարկաներ, ինչպես նաև էտրուսկյան գեղեցիկ սափորների կտորներ։ Այս փոստով ուղարկում եմ Ձեզ այդ գլուխը և... մի քանի հին դրամներ, որոնք ես գտել եմ Թեոդոսիայում և որոնք գտնվել են հենց քաղաքիս մեջ։ Որպես նոր և անփորձ հնագետ,— շարունակում է նկարիչը,— ես չեմ համարձակվում հայտնել իմ կարծիքը, բայց ինչ վերաբերվում է նշված ոսկյա գլխիկին, ապա որպես արտիստ, ես հիացած եմ Թեոդոսիայով։ Այդ հայտնաբերվածները հույս են հայտնում, որ անօգուտ չեն լինի մեր աշխատանքները, և այդ ողջ հայտնաբերումը ապացուցում է, որ հին Թեոդոսիան եղել է հենց այս նույն տեղում»[3]։ Մի այլ նամակում նկարիչը հաղորդում է, որ աշխատանքները հետզհետե ծավալվելու պատճառով նա այդ գործի մեջ է ներգրավել ոչ միայն կնո-

---

1 Архив Ломимк Ак. наук СССР, ф. 9. д. 29.

2 Նույն տեղ.։

3 «Документы...», էջ 114:

չը, այլև իր քրոջ որդի Լ. Մազիրյանին (Մազիրով), իսկ երբ ինքը Պետերբուրգ մեկնի, որոնումների գործը «կհանձնարարեմ իմ մեկ ուրիշ ազգականին, որը կհսկի շինարարական մասերին, որպես ճարտարապետ»[4]։

Կոմս Լ. Պերովսկին, ստանալով Պետերբուրգ ուղարկած հնագիտական նյութերը, դրանց գիտական ուսումնասիրությունը հանձնարարում է ակադեմիկոս Ստեֆանիին, իսկ ինքը նկարչին խորհուրդներ է տալիս պեղումները գիտական մեթոդներով վարելու համար[5]։ Շարունակելով հնագիտական պեղումները ամռանը և աշնանը՝ Այվազովսկին հողի տակից հանում է անտիկ շրջանի և մեր թվարկության առաջին դարերին վերաբերվող բազմաթիվ ոսկյա, արծաթյա և կավե իրեր, արձանիկներ ու զարդարանքի առարկաներ, որոնց պատմական ու գեղարվեստական նշանակությունը կարևոր համարելով, ուղարկում է մայրաքաղաք, որտեղ ռուսական բաժնեկալվածքների մինիստրության (ուդել) գրասենյակի տնօրեն Հայրապետյանը (Այրապետով) կազմում է դրանց ցուցակը՝ էրմիտաժ թանգարանին հանձնելու համար։

* * *

Թեոդոսիայում Այվազովսկին միաժամանակ զբաղվում է իր հայրենակիցների հոգսերով, միջամտում կամ լուծում է նույնիսկ ընտանեկան հարցեր։ Հուլիսի 23-ին, օրինակ, նա Թեոդոսիայից նամակով դիմում է էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Ներսեսին, խնդրելով «...Հրամայել լուծանել... մերձավոր ազգականիս դատեր... նշանդրությունը, որով ինձ շատ կպարտաւորեք և պատճառ կլինեք, որ ողորմելի ծնողքեն փախստական ուրախութիւնը կրկին կրսկսէ նոցա շեմը, վերջապես բերելով նոցա իրենցմեն շատ ցանկացած ընտանեկան անդորրություն և հանգստություն»։ Նկարիչը խնդրում է վեհափառին «զիճանելով որդիական խնդիրս՝ շուտով ուրախացնել յիշեալ տունը անբախտութեանց» ավելացնելով, որ «շատ ուրախութիւն էր իմ սրտիս լսել, որ Դուք ինձ չեք մոռա-

---

[4] Архив Ломимк Ак. наук СССР, ф. 9, д. 29.

[5] Նույն տեղ., թ. 5։

ՂՐԻՄՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՅՎԱԶՈՎՍԿԻՆ

1853 թ. աշնանը՝ հոկտեմբերին, սկսվում է Արևելյան (Ղրիմյան) պատերազմը Ռուսաստանի և Թուրքիայի միջև։

Պատերազմի հենց սկզբում Կովկասյան ռազմաճակատում թուրքական զորքերը ներխուժում են Արևելյան Հայաստանի սահմանամերձ շրջանները, ընդհուպ մինչև Շիրակ և ավերում, կողոպտում են հայկական գյուղերն ու քաղաքները, կոտորում հայերին։ Ավելի է վատթարանում արևմտահայերի վիճակը, որոնք իրենց հույսերը կապում էին ռուսական բանակի հաղթանակի հետ, ուստի ամենուրեք ոտքի են կանգնում, կազմում են հետևակ ու հեծելազոր կամավորական ջոկատներ և, միանալով ռուսական զորամասերին, մասնակցում են պատերազմական գործողություններին։

Այս պատերազմում ռուսական զորքերի հաղթանակով շահագրգռված էին նաև Ղրիմի հայերը։ Նրանք ակտիվ մասնակցություն են ունենում Սև ծովի ափերի մոտ տեղի ունեցող մարտական գործողություններին՝ իրենց բոլոր միջոցներով նպաստելով ռուսական զենքի հաղթանակին։

Ղրիմի բազմաթիվ հայերի հետ պատերազմին իր մասնակցությունն է բերում նաև Հովհաննես Այվազովսկին։ Մնալով Ղրիմում, իր ժողովրդի մեջ և հետևելով պատերազմի ընթացքին, նա ստեղծում է նոր կտավներ, պատերազմական կարևոր անցքերի թեմաներով։ Նոյեմբերի 18-ին ռուսական նավախումբը ծովակալ Պ. Ս. Նախիմովի հրամանատարությամբ ոչնչացնում թուրքական նավատորմը Սինոպ ծովափնյա քաղաքի նավահանգստում։ Այդ հաղթանակի մասին խորհրդային խոշոր պատմաբան Ե. Տարլեն գրում է. «Թուրքական նավատորմը, որի վրա հարձակվեց Նախիմովը, լիովին ոչնչ-

---

6 *Մատենադարան, կաթ. դիվան, թղթապ. 121, վավ. 17։*

չացավ— չազատվեց և ոչ մի նավ, բոլորը կործանվեցին իրենց համարյա ամբողջ անձնակազմով»։

Հաղթանակի լուրը ոգևորում է նկարչին, և նա անմիջապես նկարում է այդ թեմայով մեկ, հետագայում՝ երկրորդ պատկերը։ Դրանցից մեկը գտնվում է Լենինգրադի ռազմածովային կենտրոնական թանգարանում։

Այդ գործերում նկարիչը փառաբանում է ռուսական ռազմական նավատորմի և ռուս ծովայինների փայլուն հաղթանակը, որը ուրախություն է պատճառում ոչ միայն ռուս մարդկանց, այլև Ղրիմի հայությանը։

Այդ ուրախությունն արտահայտվում է նաև հայ երաժշտության մեջ։ Սիմֆերոպոլի հայկական դպրոցի երաժշտության դասատու, կոմպոզիտոր և նկարիչ Անդրեաս Քաղցածյանը (1809—1856) Սինոպում տարած հաղթանակի տպավորության տակ գրում է «Ջու ի Սինոպ» հաղթական քայլերգը։ Երբ ծովակալ Պ. Ս. Նախիմովը հաղթարշավից վերադառնում է Սիմֆերոպոլ, քաղաքի զինվորական փողային նվագախումբը նրան և մյուս ծովայիններին դիմավորում է հայ կոմպոզիտորի գրած «Ջու ի Սինոպ» հաղթական քայլերգով։ Փողային նվագախումբը ղեկավարում էր ինքը՝ հեղինակը, որին ծովակալը շնորհակալություն է հայտնում. «տեղն ու տեղը պարգևատրում նրան և ապա նշանակում նույն նվագախմբի կապելմեյստեր»[1], իսկ քայլերգի ձեռագիրը ուղարկում է Պետերբուրգ, որտեղ այն տպագրվում է և մի օրվա մեջ հազարավոր օրինակներով տարածվում[2]։ Ա. Քաղցածյանը գրում է այլ երգեր ևս, այդ թվում «Ջու հաճույս խարասու-բազարի» քայլերգը, որը նվիրված է պատերազմի ժամանակվա իր հայրենի քաղաքին[3]։

Աշնան ամիսներին Այվազովսկին նկարում է «Ռուսական «Վլադիմիր» ռազմանավի հաղթանակը թուրքական «Պերվազ-Բախրի» շոգենավի դեմ» կտավը, որն արտացոլում է ռուսական ռազմածովային նավատորմի մի այլ սխրագործություն։

---

1 «Սովետական արվեստ», 1955, №2, էջ 41։

2 Մ. Մուրադյան, Հայ երաժշտությունը 19-րդ դարասկզբում, Եր., 1978, էջ 45։

3 Նույն տեղ։

«Վլադիմիր» ռազմանավը մարտի բռնվելով թուրքական հզոր զինվորական շոգենավի հետ, ջախջախում է հակառակորդի անձնակազմը, իսկ շոգենավը թուքսիրով բերում է Սևաստոպոլ։

Այս և վերոհիշյալ «Սինոպի ճակատամարտը» պատկերները հատկանշվում են նկարչի ստեղծագործական կյանքում ոչ միայն ժամանակակից բովանդակությամբ, այլև սյուժեների ռեալիստական լուծումով։

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԵՎԱՍՏՈՊՈԼՈՒՄ

1854 թվականին կյանքը արվեստագետին թելադրում է նոր խնդիրներ։ Այդ տարվա գարնանից պատերազմական գործողություններն ավելի ու ավելի են մոտենում Ղրիմի ափերին։ Թուրքական, ֆրանսիական և անգլիական ռազմանավերը սկսում են ռմբակոծել Ղրիմի ծովափնյա քաղաքներն ու բնակավայրերը։ «Մեկ տարուց ավել է, ինչ մենք ապրում ենք Ղրիմում, ինչպես կովկասյան ամրոցներում»,— գրում է նկարիչը։ Հունվարի 19-ին նա կոմս Լ. Ա. Պերովսկուն հայտնում է. «...Ներկայիս պայմաններն ինձ հնարավորություն չտվեցին Պետերբուրգ մեկնել։ Չնայած մերոնց փառավոր հաղթանակներին, ծովափնյա շրջանի բնակիչները վախի մեջ են, և որքան էլ որ մենք աշխատում ենք համոզել, բոլորովին իզուր է»։ Նույն նամակում գրում է. «կա նաև այլ պատճառ, որը պահում է ինձ Ղրիմում, դա պատվերներն են՝ ռազմանավեր գրավումը ներկայացնող պատկերներ նկարելը։ Այժմ ես նկարում եմ Սինոպի հիանալի գործը։ Տեղեկություններ հավաքելու համար ես որոշ ժամանակ ապրեցի Սևաստոպոլում տրտեղ կարողացա հավաքել ամենաճշգրիտ տվյալներ»[1]։

Ավարտելով այդ նյութերի հիման վրա սկսած աշխատանքները՝ նկարիչը մայիս ամսին կրկին մեկնում է Սևաստոպոլ և ամռան վերջում բացում է պատերազմական թեմաներու

---

1 «Документы...», էջ 117։

նկարած իր նոր ստեղծագործությունների ցուցահանդեսը։ Ասում են՝ երբ կրակում են թնդանոթները, մուսաները լռում են, բայց միշտ չէ, համենայն դեպս միշտ չէ նկարիչ Այվազովսկու նկատմամբ։ Պատերազմի հենց սկզբից նա ծրագրում է նկարել հերոսաբար մարտնչող մարդկանց՝ հայրենիքի պաշտպաններին և նրանց հերոսական սխրագործությունները։ Այդ նպատակով նա մեկնում է պատերազմական գործողությունների շրջաններ, շփվում զինվորների ու նավաստիների հետ և, վտանգի ենթարկելով կյանքը, լինում է կրակակետերում, կատարում էտյուդներ և ճեպանկարներ։ Ավելին։ Մայիսի 31-ին նա կազմակերպում է իր ստեղծագործությունների ցուցահանդես մարտական Սևաստոպոլում։ Դա արդեն խիզախություն էր, համարձակ քայլ, որը եզակի երևույթ է արվեստի պատմության մեջ, ապացույց այն բանի, որ երբ կրակում են թնդանոթները, մուսաները չպետք է լռեն։ Նա ցանկանում էր իր ստեղծագործություններով նպաստել զինվորների մարտունակության բարձրացմանը, ամրապնդել գեղեցիկի զգացումը, հայրենասիրության և խիզախության լավագույն օրինակներ տալ և, վերջապես, այդ ցուցահանդեսով ստուգել իր արվեստի ներգործուն ուժը։ Այդ ժամանակ գրած նամակներից մեկում Այվազովսկին իր ստեղծագործությունների մասին ասում է. «Ներկայացնում է կարծիքի... այն նավաստիներին, որոնք իրականում մասնակցել են պատկերված գործողություններին»[3]։

Իսկապես, չնայած անընդհատ ռմբակոծությանն ու պատերազմական գործողություններին, մարտական Սևաստոպոլում բացված ցուցահանդեսը չերմ ընդունելության է գտնում։ Ցուցահանդեսի դահլիճները առավոտից մինչև երեկո լեցուն են զինվորներով, նավաստիներով և քաղաքացիներով։ Միչման Իվանովը, որը եղել է ծովակալ Պ. Ս. Պանֆիլովի դրոշակակիր սպան և հերոսաբար զոհվել մարտում, 1854 թ. հունիսի 1-ին իր հարազատներին ուղարկած նամակում հայտնում է, որ Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսը ուրախություն է պատճառում ռազմաճակատի մարտիկներին

---

[2] «Документы...», էջ 115—116։

[3] Նույն տեղ., էջ 117։

և որ Սինոպի հերոս Պ. Ս. Պանֆիլովը, այստեղ տեսնելով «Սինոպի ճակատամարտը», ասում է «պատկերը չափազանց ճիշտ է նկարված»։ Այնուհետև միչման Իվանովը գրում է. «...Այսօր երկրորդ օրն է, ինչ Այվազովսկին իր ստեղծագործությունների ցուցահանդեսն է բացել։ Ներկայացված է Սինոպի ճակատամարտի երկու պատկեր, երկու մեծ նկար էլ «Պերվաս-Բախրի» և «Վլադիմիրի» միջև տեղի ունեցած ճակատամարտի թեմաներով, իսկ հինգերորդը՝ «Վլադիմիրը» քաշում է «Պերվաս-Բախրին» դեպի Սևաստոպոլի նավահանգիստը։ Այդ կտավների առջև միշտ էլ հավաքվում են մարդկանց խմբեր, հատկապես սպայական կազմից։ Առաջին պատկերը ներկայացնում է «Սինոպի» ճակատամարտի սկիզբը։ Հակառակորդի մի քանի նավ սիրել են այրվել, մյուսները արդեն լքված են, մի ֆրեգատ պայթեցված է։ Երկրորդը ներկայացնում է հրդեհ քաղաքում և նավերի վրա գիշեր ժամանակ։ Այդ պատկերն այնպես է հիացնում, որ դժվար է նրանից կտրվելը։ Մեր նավատորմը կանգնած է այն տեղում, որտեղ տեղի է ունեցել ճակատամարտը։ Շոգենավը պատրաստվում է քաշել-տանել մի քանի նավ (սահմանային գծի միջով)։ Այդ պատկերի կապակցությամբ կարելի է դիտողություն անել նկարչին, որ այնտեղ չափից ավելի է տպավորչականությունը (էֆեկտը)։ ...Երեք պատկերներից (որոնք ներկայացնում են կռիվ թուրքական «Պերվաս-Բախրիի» դեմ) յուրաքանչյուրը մեկուկես արշին են, իսկ («Սինոպի ճակատամարտը») մեծակտավ աշխատանք է։ Այվազովսկին այստեղ է և, լսելով դիտողությունները, ուղղում է իր սխալները»[4]։

Ինչպես տեսնում ենք, պատերազմի թոհուբոհի մեջ բացված ցուցահանդեսը ոչ միայն դիտվում, ուրախություն և հրճվանք է պատճառում զինվորներին ու քաղաքացիներին, այլև առաջ է բերում մտքերի փոխանակություն ու բանավեճեր, որը ինքնին հաստատում է Այվազովսկու արվեստի կենսունակությունը, նրա գրավչությունը և հաղթանակի նկատմամբ ժամանակակիցների հավատքը։

Սեպտեմբերին սկսվում է Սևաստոպոլի հերոսական պաշտպանությունը։ Հետզհետե ուժեղանում է և Թեոդոսիայի

[4] «Документы...», էջ 115—116:

վրա հարձակվելու վտանգը։ Քաղաքի հաճախակի ռմբակոծությունները ստիպում են բնակիչներին հեռանալ։ Հովհ. Այվազովսկին ևս կնոջ, երկու աղջիկների և 70-ամյա մոր հետ հոկտեմբերին մեկնում է Խարկով։ «Հոգեկան կսկիծով մենք ստիպված եղանք դուրս գալ մեր սիրելի Ղրիմից, թողնելով այնտեղ մեր ամբողջ ունեցվածքը, որը ձեռք ենք բերել մեր աշխատանքով»,— գրում է նկարիչը Խաչատուր Լազարյանին Խարկովից, նոյեմբերի 17-ին[5]։ Հիացած ռուս զինվորների ու նավաստիների մարտունակությամբ, նա շարունակում է. «Մեր նավաստիների քաջությունը բարձր է ամեն տեսակի նկարագրություններից։ Հարկավոր է տեսնել մեր ամրոցների (բաստիոնների) գործողությունները և այն ժամանակ կարելի է պատկերացնել և հավատալ այն ամենին, ինչ որ պատմում են սևաստոպոլյան գարնիզոնի մասին»։ Իր մասին նկարիչը գրում է. «Վերջերս ես մենակ մեկնեցի Ղրիմ, հոկտեմբերի 28-ին եղա նաև Սևաստոպոլում, ներկայացա մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին և նրա իսկ ցանկությամբ ու առաջարկով նկարեցի Սևաստոպոլի ընդհանուր տեսարանը քաղաքի վրա տեղացող տեղատարափ կրակի տակ»[6]։

Վերադառնալով Խարկով Այվազովսկին կարգի է բերում իր նկարչական աշխատանքները, և երբ թագավորի երկու որդիները Սևաստոպոլից Պետերբուրգ են մեկնում Խարկովի վրայով, իրադրության մասին թագավորին զեկուցելու համար, իրենց հետ տանում են նաև Այվազովսկու այն գծանկարները, որոնք պատկերում են պատերազմի առանձին անցքեր[7]։ Պետերբուրգից վերադառնալիս Սևաստոպոլ մեկնող Կոստանդին և Միխայիլ Նիկոլաևիչները Խարկովում նկարչին հաղորդում են իրենց թագավոր հոր շնորհակալությունը ուղարկած գծանկարների համար և թագավորի խոսքը այն մասին, թե «ինչ էլ որ նկարի Այվազովսկին, ես կգնեմ»[8]։

Դա ոգեշնչում է նկարչին պատերազմի այդ ծանր օրերին և, չնայած առկա դժվարություններին, Խարկովում տարեվեր-

---

[5] «Документы...», էջ 117:

[6] Նույն տեղ։

[7] «Русская старина», 1878, հ. 23, էջ 71:

[8] Նույն տեղ։

ջին բացում է իր ստեղծագործությունների ցուցահանդեսը, որը հետո տեղափոխում է Պետերբուրգ։ Նա իր հետ Պետերբուրգ է տանում նաև այստեղ նկարած մի քանի մեծ ու փոքր կտավներ, որոնցից նա կազմում է նոր ցուցահանդես։ Ցուցահանդեսը բացվում է 1855 թ. գարնանը, Հովհաննես Լազարյանի ամառանոցային առանձնատանը։ Այս, ինչպես և Սևաստոպոլի ու Խարկովի ցուցահանդեսների մուտքի ամբողջ գումարը, և նույնիսկ վաճառված նկարների արժեքը Այվազովսկին ամբողջապես հատկացնում է վիրավոր զինվորներին ու զոհվածների ընտանիքներին օգնություն ցույց տվող կանանց կոմիտեի ֆոնդին։ Նկարիչը միաժամանակ 150 ռ. արծաթ է նվիրում Թեոդոսիայի զինվորական հիվանդանոցին, «դոշակի կտոր գնելու համար», որպեսզի նկարչի կալվածքից բերված չոր խոտը լցնեն դրանց մեջ և դարձնեն ներքնակ՝ այնտեղ բուժվող վիրավոր զինվորների համար։ Այդ նվիրատվության համար, ինչպես տեղեկացնում է ակադեմիայի պրեզիդենտը, 1855 թ. փետրվարի 9-ին «Այվազովսկուն հայտնվում է թագավոր կայսեր շնորհակալությունը»[9], Վերոհիշյալ կանանց կոմիտեն ևս շնորհակալություն է հայտնում նկարչին, կոմիտեին ցույց տված անշահախնդիր օգնության համար։

1855 թ. Այվազովսկին նկարում է պատերազմական թեմաներով մի շարք մեծարժեք կտավներ, որոնց թվում «Ծովակալ Կորնիլովը Բաստիոնում», «Սևաստոպոլի ռմբակոծությունը», «Ճակատամարտ ծովի վրա», «Անգլիական նավատորմի կործանումը փոթորկից Բալակլավայի մոտ», «Ծովանկար» և այլն։

Հետաքրքրական է նկատել, որ Ռուսաստանի համար շրջադարձային նշանակություն ունեցող այդ պատերազմը շատ թույլ և աննշան արտացոլում է գտնում ժամանակի ռուսական, հատկապես ակադեմիական նկարչության մեջ։ Ռուսական մարտանկարչությունը, որը բավական զարգացած էր, ինչպես և նշվում է արվեստագիտական գրականության մեջ, լուրջ ձեռքբերումներ է անցնում այս պատերազմի ու նրա հերոսական անցքերի կողքից։ Եվ այն մի քանի պատկերները, որոնք ստեղծվել են 1850-ական թվականներին, պատկանում են

[9] «Русская старина», 1878, հ. 23, էջ 138։

ոչ թե ակադեմիական, այլ նկարչության դեմոկրատական հոսանքի նկարիչների վրձնին։ Դրանք էլ, սակայն, անմիջականորեն չեն արտացոլում պատերազմի անցքերը, այլ մեծ մասամբ կրում են կենցաղային բնույթ։

Նկատի ունենալով այդ՝ ռուս արվեստագետ Վ. Վ. Ստասովը «Ռուսական արվեստը 25 տարում» ընդարձակ հոդվածում խստորեն քննադատում է ակադեմիական մարտանկարիչներին, որոնք իրենց հեռու պահելով ժամանակի կարևոր անցքերից, նկարում են միայն անցյալի, այն էլ հին հունական կամ հռոմեական ժամանակների պատերազմական իրադարձությունները։ «Տեղի ունեցավ Ղրիմի պատերազմը,— գրում է Ստասովը այդ հոդվածում,— դա եղավ, անշուշտ, արվեստի համար հենց այն ժամանակը, երբ նա պետք է կատարեր իր իսկական ծառայությունը։ Եվ ի՞նչ ժամանակաշրջան կարող էր լինել ավելի կարևոր, որտե՞ղ կարելի էր որոնել ավելի ցնցող, ռուսական ամբողջ հասարակության համար ավելի կարևոր խնդիրներ և սյուժեներ, որտեղ առկա է ժողովրդական տիպերի, մտքերի, զգացմունքների հարստությունը, կյանքի և անցքերի ավելի շատ բազմազանություն։ Բայց նիկոլաևյան շրջանի արվեստը այդ ամենի նկատմամբ մնաց կույր և խուլ... Նրան ծտար էր այն ամենը, ուր կար կյանք և ճշմարտություն։ ...Իսկ այստեղ պահանջվում էր պատկերել իսկական կենդանի մարդկանց։ ...Թող մեր ամեն մի պրոֆեսորին տրվեր պատվեր նկարելու «Հորացիոսների ու Կուրիացիների ճակատամարտը» կամ «Սամսոնը ֆիլիստիմլյանների հետ մենամարտելիս» թեմաները, ապա նրանցից ոչ մեկը չէր հրաժարվի։ Բայց նկարել իսկական, կենդանի մարդկանց, այժմյան ռուսներին, երբե՛ք»[10]։

Վ. Վ. Ստասովի այս հանդիմանությունն արդարացի էր։ Միայն պատերազմի վերջին շրջանում և նրանից հետո մի քանի ռուս նկարիչներ, այդ թվում ակադեմիայից գործուղվածները, այցելեցին Ղրիմ, բայց խոշոր, մնայուն գործեր նրանք այն ժամանակ չկարողացան ստեղծել։

Չնայած այդ ամենին, Արևելյան պատերազմը զգալի ազդեցություն ունեցավ ռուսական ռեալիստական մարտանկար-

---

[10] **В. В. Стасов**, Избранное. *1950, հ. 2, էջ 428—429։*

չության հետագա զարգացման վրա։ Դեռևս նախախորհրդային շրջանում արվեստագետ Վ. Նեչաևը նկատել է, որ ռուսական մարտանկարչության համար «Ղրիմի կոմպանիայի էպոխան դարձավ շրջադարձային կետ հին ավանդներից դեպի նոր հովերը»[11]։ Այդ նոր հովերի զարգացման մեջ խոշոր նշանակություն ունեցան Հովհ. Այվազովսկու այս շրջանի մարտանկարչական ստեղծագործությունները, որոնք պարզապես անտեսվել են, նույնիսկ Այվազովսկու անունը չի նշվել Վ. Ստասովնի «Ռուս մարտանկարիչները 18—19-րդ դարերում» ծավալուն գրքի համապատասխան բաժնում[12]։

Հենց միայն այն փաստը, որ Այվազովսկին առաջինը անդրադարձավ Արևելյան (Ղրիմի) պատերազմի թեմաներին և վտանգի ենթարկելով իր կյանքը, եղավ նույնիսկ ռազմաճակատում, բնականից նկարեց էսքիզներ, գծանկարներ և և սյուժետային պատկերներ, որոնք հենց պատերազմի տարիներին ցուցադրվեցին զանազան տեղերում ու մայրաքաղաքում, պետք է համարել շատ կարևոր։ Դրանով իսկ Այվազովսկին տվեց ոչ միայն իսկական հայրենասեր նկարչի լավագույն օրինակ, այլև իր բարձրարվեստ ստեղծագործություններով հաստատեց, ինչպես քննադատ Վ. Ստասովն էր պահանջում, պատերազմի անմիջական դեպքերը բնականից նկարելու կարևորությունը։ Պատերազմի վերջում ակադեմիայի մի քանի ուսանողների կամ նորավարտների գործուղումը Ղրիմի ռազմաճակատ և նրանց, ինչպես և հետագայում մի քանի ռուս նկարիչների կողմից միևնույն թեմաներով և համարյա նույն սյուժեներով պատկերների ստեղծման մեջ պետք է տեսնել նաև Այվազովսկու բարերար ազդեցությունը։ Ավելորդ չենք համարում ասել, որ Արևելյան պատերազմը իր արտացոլումն է գտնում ոչ միայն Այվազովսկու, այլև նույն շրջանի մյուս հայ նկարիչների ու արվեստագետների ստեղծագործություններում։ Հայտնի է այդ պատերազմում հերոսներից մեկի՝ կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, գեներ-

---

[11] **В. Н. Нечаев**, Живопись батальная, *տե՛ս* «Военная энциклопедия», 1912, *հ. 10, էջ 395։*

[12] **В. В. Садовен**, Русские художники — Баталисты XVIII—XIX вв., м. 1955.

րալ-լեյտենանտ Բարսեղ Բեհբությանի (Բեբուտով) դիմա-նկարը (1 57), որտեղ նկարիչ Ստ. Ներսիսյանը կերտել է պատերազմի դաշտերում կոփված զորավարի ու պետական խոշոր գործչի արտահայտիչ կերպարը։

Պատերազմի տարիներին Այվազովսկին նկարում է ոչ միայն մարտական, այլև խաղաղ բնության և ծովային տեսարաններ։ Դրանց զգալի մասը նա նկարում է հիշողությամբ կամ ժամանակին կատարած էսքիզների ու գծանկարների հիման վրա։ Այդպիսիք են, օրինակ, «Էսմնյակ գիշեր Նեապոլի մոտ» (1854), «Ամստերդամի տեսարանը ծովի կողմից» (Խարկով), «Վենետիկը Լիդոյի կողմից» (1855, Խարկով), «Վիկոյի տեսարանը Նեապոլի մոտ» (1855, Կալինին) և այլն։ Պատերազմի տարիներին Այվազովսկու ստեղծած կտավներից մեծ հետաքրքրություն են առաջացնում նրա մարտանկարչական ստեղծագործությունները։ Պատերազմի վետերան Կ. Ի. Բուտակովը՝ «Վլադիմիր» ռազմանավի նախկին կապիտան-լեյտենանտը, ցանկություն է հայտնում իր մոտ ունենալ այն նկարի պատճենը, որը պատկերում է ռուսական և թուրքական ռազմանավերի ճակատամարտը։ Այդ կապակցությամբ Այվազովսկին 1856 թ. մարտի 5-ին գրել է. «Իմ ընկեր նկարիչ Վ. Ֆ. Տիմմը ինձ ասաց, որ Դուք ցանկանում եք ունենալ իմ «Վլադիմիր» նավի կռիվը թուրքական «Պերվաս Բախրի» դեմ» պատկերի պատճենը։ Ձեր այդ ցանկությունը ինձ համարձակություն է տալիս մտածելու, որ դրա բնագիրը կարող է Ձեզ բավականություն պատճառել։ Ուստի մի առանձին հաճույքով վճռել եմ խնդրել Ձեզ ընդունել այդ պատկերն ինձանից որպես նվեր՝ ի նշան Ձեր նկատմամբ ունեցած իմ անկեղծ հարգանքի։ Եվ խնդրում եմ դա չհամարել ինչ-որ զոհաբերություն իմ կողմից, այլ ընդունել որպես ալբոմային գծանկար»[13]։ Եվ պատկերը հանձնվում է խնդրատուին։

---

[13] «Документы...», էջ 118։

«ՈՉԽԱՐՆԵՐԸ ՓՈԹՈՐԿԻ ԺԱՄԱՆԱԿ»

Թեև ղրիմյան պատերազմը շարունակվում էր, սակայն նկարչին արդեն համակել էր խաղաղության կարոտը։ «Անհամբեր սպասում ենք խաղաղության»,— գրել է Այվազովսկին վերոհիշյալ նամակում։ Ահա այդ օրերին, երբ նկարիչն իր ընտանիքով գտնվում էր դեռևս Խարկովում, նկարում է «Ոչխարները փոթորկի ժամանակ» պատկերը, որի համար հիմք է ծառայում իրական մի դեպք։ Նկարչի աննշան շրջակայքում՝ ծովափին, Այվազովսկու ունեցած 3000 ոչխարները արածելու ժամանակ փոթորիկ է բարձրանում։ Ոչխարները խրտնում, իրար են անցնում։ Նրանցից մեկը վախից շփոթված վազում է դեպի ծովը, և ալիքները նրան կլանում են։ Մյուսները, հետևելով նրան, իրար հրելով, խառնիխուռն և խելակորույս, նետվում են ալիք ծովը և 1800 ոչխար միանգամից կործանվում են։ Նկարչի հայ հովիվները հազիվ կարողանում են մյուսների ճանապարհը կտրել և փոխադրել ավելի ապահով տեղ։ Տեղեկանալով այդ մասին՝ Այվազովսկին հաջորդ օրը նկարում է մի կտավ՝ այնժե ընտրելով իր ոչխարների կործանման պահը։ Շատ չանցած նկարը ցուցադրվում է Պետերբուրգի իր արվեստանոցում։ Տեղի ունեցած դեպքի և նկարչի նոր կտավի մասին ժամանակին գրում են ոչ միայն ռուսական, այլև եվրոպական թերթերը։ Այվազովսկին որոշում է ուղարկել այն Լոնդոնի համաշխարհային ցուցահանդես։ Բայց ոմն Կոկորև գնում է այդ գործը, պայմանով, որ եթե ուրիշները մեծ գումար տան, ինքը կզիջի նկարչին։ Այդպես էլ լինում է։ Պատկերը գնում է անգլիացի մի լորդ և վճարում է չորս անգամ ավելի։ Այվազովսկին վերադարձնում է առաջին գնորդի տված փողը և մնացած գումարով Ղրիմում գնում է ոչխարների նոր հոտ, այնքան, որքան խեղդվել էին ծովում։ Գտնելով այս ամենը իր կենսագրին՝ նկարիչն ասում է. «Ես իմ վրձնով հարուցյուն տվեցի իմ կործանված ոչխարներին»[1]։

Փոթորիկի պատճառով 1800 ոչխարի կորուստը և այդ այնժեով ստեղծված կտավի նկատմամբ հասարակության

[1] «Русская старина», 1878, հ. 23, էջ 281—282։

լայն շրջաններում աճող հետաքրքրությունը բավարարելու համար Այվազովսկին պատվերով նկարում է նոր տարբերակներ ևս, իսկ երբեմն նույնը կրկնում է մի քանի անգամ։ Հետաքրքրությունը ավելի է մեծանում հատկապես 1856 թ. Պետերբուրգի գեղարվեստական ցուցահանդեսում այն ներկայացնելուց հետո։ Հենց միայն Թորհրդային Միությունում կա «Փոթորիկից դևպի ծովը նետվող ուխտարները» կամ «Ուխտաբների հոտը փոթորկի ժամանակ» վերնագրերով ավելի քան հինգ ստեղծագործություն, որոնցից մեկը այժմ գտնվում է Ուլան Ուդեի քանգարանում։

Պատկերը գրամատիկ բնույթ ունի և ցույց է տալիս բնության ուժերի հզորությունը, տարերքի կործանարար ուժը կենդանական աշխարհի վրա։ Դրան նպաստում է նաև ստեղծագործության մոխրագույն կոլորիտը։ Փոթորկից շփոթված ուխտարների հախուռն ընթացքին դեպի ալեկոծ ծով, որտեղ նրանք կատաղի ալիքների մեջ մասսայաբար ոչնչանում են, հակադրված է հովիվների դիմադրող գործողությունը։ Այստեղ ևս նկարիչը անդրադարձել է «մարդը և բնությունը» թեմային։ Պատկերելով անասունների խելակորույս կործանումը՝ Հովհ. Այվազովսկին կրկին հավաստում է մարդու գերազանցությունը տարերքի նկատմամբ, համոզելով դիտողին, որ միայն մարդկային կամքը կարող է դիմակայել բնության կործանարար ուժերին և վերջ ի վերջո նվաճել գոյատևությունը։

Վերադառնալով Պետերբուրգից, որտեղ վերոհիշյալ պատկերներից բացի մեծ հետաքրքրություն էր առաջացրել նաև ազգություններից հայտնաբերված «արտակարգ լավ ոճով պատկերված նետած դիրքով նետրուհու արձանիկը»[2], Այվազովսկին հատուկ հանձնարարությամբ Թեոդոսիայում շարունակում է ուսումնները, որոնք կերչի քանգարանի տնօրեն Լատչենկոյի միկայությամբ «ավարտվում են լրիվ հաջողությամբ»[3]։

Շուտով Հովհ. Այվազովսկին լուր է ստանում Փարիզից, որ այնտեղ իր եղբայր Գաբրիելը հրատարակել է «Մանուկ ազգի, ավետաբեր Հայաստանեաց» վերնագրով հայկական

---

[2] Архив ЛОИИМК АН СССР, ф. №29, р. 20։

[3] «Документы...», էջ 119—120։

ամսագիրը, որի առաջին օրինակները նա ուղարկել էր նկարչին։ Դա Հովհ. Այվազովսկուն մեծ ուրախություն է պատճառում, քանի որ Փարիզում ևս իր գիտնական եղբայրը շարունակում է ծառայել հայ ազգային մշակույթին։ «Մեր միայն բաղձանքն և հույսն այն է,— գրում է խմբագիր Գաբրիել Այվազյանը (Այվազովսկին) «Մասեաց աղավնի— ավետաբեր Հայաստանեաց» ամսագրի առաջին համարի առաջնորդող հոդվածում,— որ գիտության լուսովը լուսավորվի հայոց ազգին միտքը, սիրտը կրթվի և զարդարվի ընկերական առաքինություններով, ձեռքերը լցվին երկրագործության, ճարտարության և վաճառականության բերքերով, օրէօր... սիրելի ըլլա միշտ այն ժողովրդաց, որոնց մեջ այսօրվան օրս ցրված է»[4]։ Ավագ եղբոր գրածը համապատասխանում էր կրտսերի հայրենասիրական ձգտումներին, և նրանք միասին հանդես են գալիս որպես հարազատ ժողովրդի առաջադիմության և լուսավորության գործիչներ։

ՓԱՐԻԶՈՒՄ

Աշնանը՝ նոյեմբերի սկզբներին, Հովհ. Այվազովսկին կնոջ հետ մեկնում է Ֆրանսիա։ Հայտնելով այդ մասին՝ հայկական թերթը նոյեմբերի 16-ին գրում է. «Այս օրերս Բեզաւուրկեն գալով հասել է ի Փարիզ իր ազնվաշուք ընտանեօք ուր 5—6 ամիս պիտի մնա»[1]։ Թե ինչ նկատառումով է նկարիչը որոշել մնալ Փարիզում կես տարի, թերթը չի հաղորդում։

1857 թ. նոր տարվա առաջին օրը Հովհ. Այվազովսկին կնոջ հետ անց է կացնում եղբոր մոտ, Փարիզում։ Գաբրիել Այվազյանը (Այվազովսկին), որն արդեն երկու տարի հրատարակում էր «Մասեաց աղավնի— ավետաբեր Հայաստանեաց» ամսագիրը հայերեն-ֆրանսերեն լեզուներով, լայն համբավ ուներ ոչ միայն տեղի հայության, այլև ֆրանսիացիների շրջանում։ Նա հայտնի էր որպես խոշոր գիտնական։ Լավ

---

4 «Մասեաց Աղավնի— ավետաբեր Հայաստանեաց», 1855, Փարիզ № 1, էջ 1—2։

1 Արշալույս Արարատեան, 1856, №532։

գիտենալով եղբոր կատողությունները՝ նկարիչը նրան առաջարկում է գրել Վենետիկի Մխիթարյան միաբանության պատմությունը, տեղափոխվել հայրենիք, իր գիտությունը հարազատ ժողովրդին ծառայացնելու համար և այդ նպատակով ձեռնադրվել եպիսկոպոս։ Գաբրիել վարդապետը խոստանում է կատարել համբավավոր եղբոր հորդորանքը։

«ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆ» ՇՔԱՆՇԱՆԸ

Փարիզ ժամանելով՝ Հովհ. Այվազովսկին ժամանակ չի կորցնում։ «Մի ամեռվա ընթացքում (1856—1857) Այվազովսկին նկարում է մինչև քսանհինգ նկար»,— գրում է ժամանակակից նկարիչ Վ. Ֆ.Տիմմը իր խմբագրությամբ լույս տեսնող պարբերականում[1]։ Այդ 25 նկարներից 7-ը առաձնացնելով՝ Այվազովսկին ցուցադրում է փարիզյան ցուցահանդեսներից մեկում։ Դրանցից չորսը այլաբանական կտավներ են և ներկայացնում են Ռուսաստանի չորս հարստությունները։ «...մեկը պատկերում է սիբիրյան տափաստանը ամեռ ժամանակ, ճանապարհին ոսկի տանող տրանսպորտով (հանքային հարստություն), երկրորդում՝ փոքր Ռուսիայի (Ուկրաինա) հացահատիկային դաշտը բերքահավաքից հունձից առաջ (հողագործություն), երրորդը՝ տափաստան մարինոս ոչխարների հոտով արևամուտին, Նովոռոսիայի շրջանում (անասնապահություն), իսկ չորրորդը՝ ղրիմյան գիշեր Գուրզուֆում (բնության հարստություն)։ ...Այդ չորս պատկերներից բացի,— շարունակում է հոդվածագիրը,— Փարիզում ցուցադրված են երեք նկար ևս՝ «Փոթորիկ Աֆոնյան լեռների մոտ», «Գիշերը Ռոդոս կղզում», «Հանդարտ ծովը փոքրասիական ափերի մոտ»։ Բոլոր այդ պատկերները, ինչպես և մնացածները այն 25 պատկերներից, որոնք նկարվել են Փարիզում, մնացին արտասահմանում»[2]։

---

1 «Русский художественный листок», 1958, № 10.

2 Նույն տեղ։

Ժամանակի հայկական մամուլը նույնպես նշելով այդ փաստը, միաժամանակ հայտնում է, որ Այվազովսկու ստեղծագործությունները «ամենքն ալ բարձր գնով ծախու առնվեր են, Արվեստին հմուտ եղողները կհիանան անոր զարմանալի հանճարոյն և կարգե դուրս արագության վրա»[3]։ Նույն ժամանակ հայկական «Մասեաց աղավնի» ամսագիրը տեղեկացնում է. «Գաղղիոյ, մանավանդ Թե Եվրոպիոյ մայրաքաղաքին այս տարվա հանդիսարանը հայոց սրտին մեջ քաղցր ու անջնջելի հիշատակ մը պիտի Թողու եղեր, հինգ միլիոն ժողովրդեան անունը իր մեկ ներկայացուցչին անվամբը պսակելով»։ Նշելով Հովհ. Այվազովսկու ունեցած մեծ հաջողությունը Փարիզում՝ ամսագիրը գրում է. «Կա՞ ճշմարիտ հայու սիրտ մը որուն ծանոթ, մանավանդ Թէ սիրելի չըլլա այս փառավոր անունը»։ Եվ ապա՝ «Հովհաննէս փառքն ու անունը ստար եր՛րներ ևս հռչակվեց, ուր որ գնաց, ուսկից որ անցավ արվէստակյաց ու արվեստասիրացն զարմանքը գրավեց իր հրաշալի հանճարո՛վը»։ Այնուհետև ավելացվում է, որ ծովանկարիչ Հովհ. Այվազովսկին «...ոչ միայն իր ազգին... այլև Ռուսաստանի իր հյուրընկալ հայրենացը մեծ փառք ու պարծանք կըլլա»[4]։

Նկատի ունենալով Այվազովսկու լայն ճանաչումը Փարիզում՝ ռուսական դեսպանորդ կոմս Կիսելյովը տեսակցության համար առաջարկում է նկարչին ներկայանալ Ֆրանսիայի կայսրին։ Փետրվարի 17-ին Հովհ. Այվազովսկին կնոջ հետ ներկայանում է կայսր Նապոլեոն Երրորդին և կայսրուհի Եվգենիային։ «Թէ կայսրը և Թէ կայսրուհին սիրով ընդունել են» նրանց,— գրում է հայկական պարբերականը, «կփափաքի՛մ,— ըսել է կայսրը,— մեր այս տարվան դեղարվեստից հետքեր ես մեջ նկարներդ տեսնելուս։ Կայսրուհին ալ տիկնոջը հետ երկարօրեն խոսակցել է»[5]։ «Ես զարմացել էի կայսրուհու վեհագույն գիտեցկությամբ, հատկապես նրա կանացիական նազանիությամբ»,— ասում է Այվազովսկին։ Բոլորովին այլ առավելություն է ստանում Նապոլեոն Երրորդի արտաքինից։

---

3 «Մասիս», 1857, տե՛ս նաև «Արշալույս Արարատեան», 1857, №541։

4 «Մասեաց աղավնի», Փարիզ, 1857, էջ 274—277։

5 «Մասիս», 1857։

Ս՛ր քանի չերմ խոսք նկարչին ասելու կ՛ունենք մեր ժամանակում նոյնիսկ։

Այդ հանդիպումից շատ չանցած Ֆրանսիայի և կուլտուրայի կեդրոնական ակադեմիայի միջնորդությամբ ծովանկարիչ Հովհ. Այվազովսկուն շնորհում է Ֆրանսիայի այն ժամանակվա ամենաբարձր պարգևը՝ «Պատվո լեգեոնի» շքանշանը։ Այդ «պարգևատրումը հիանալի է նաև այն պատճառով,— գրում է նկարիչ Վ. Ֆ. Տիմմը,— որ ներկայացնում է առաջին օրինակը, երբ ռուսական նկարիչը ընդունվում է այդ օրդենի ասպետների թվում»[6]։ Դա, միաժամանակ, առաջին դեպքն է, երբ հայ նկարիչը պարգևատրվում է Ֆրանսիայի «Պատվո լեգեոնի» շքանշանով։ Հետագայում՝ 1900-ական թթ. սկզբներին, հայ նկարիչներից Վարդան Մախոխյանը, իսկ մեր օրերում նկարիչ Գառզուն պարգևատրվում են այդ շքանշանով։

Փարիզում Հովհ. Այվազովսկին ծանոթանում և շփվում է Ֆրանսիացի և օտարազգի նշանավոր շատ անձանց ու մշակութային խոշոր գործիչների, այդ թվում մարշալ Տելիսեի, կոմպոզիտոր Ռոսսինիի, և ուրիշների հետ։

Հովհ. Այվազովսկու հաջողությունները լայն արձագանք են գտնում ֆրանսիական պարբերական մամուլում։ «Թղթակից» թերթը գրում է. «Օտարազգի ոք է Այվազովսկին, որը ամենուն աչքին դիտողությունը իրեն կձգեն։ Այվազովսկու վրձինը հիահրաշ մոգություն մը ունի և իր նկարապատկերներեն մեկ քանին այնպիսի անհավատալի հաջողությամբ մը նկարված են, որ տեսնողին աչքը կխաբեն։ Մայր մտնող արևուն գեղաբորբոք երանգները, ցորենախիտ դաշտ մը, ու գիշերվան լուսնի ճառագայթները, որ կձգուին կերկճանան ու կծփծփան ծովուն ալեացը վրա, չեն գիտեր, թե ո՞վ երբեք կրցի՞ր է Այվազովսկիին ավելի լավ դուրս ցատգնել»։ Փարիզյան «Կայսերական մեղու», թերթը հաղորդում է. «Հանդիսարանին մեջ ամեն մեծ անուն ստացողներուն մեկն է անտարակույս Այվազովսկին... «Արևուն մայր մտնելու ժամա-

---

6. «Русский художественный листок». 1858, № 10.
Այդ շքանշանով ռուս նկարիչներից առաջինը պարգևատրվել է դիմանկարիչ Օրեստ Կիպրենսկին, (ծանոթ. հեղինակի՝ Մ. Ս.)։

նակ դաշտում տեսիլը» իրավացի հրաշալիքմր է ազդեցության ու գույնին կողմանե («Ոչխարները»), «Դաշտը ցորենով», «Փոքր Ռուսիա» այնպես սքանչելի է, իսկ «Նկարչական շտեմարան» պարբերականը հրապարակում է «Սրճարան Ռոդոս կղզում» պատկերի լուսանկարը։ Մովսեսկարչի մասին հոդվածներ են հրապարակվում նաև «19-րդ դարի արվեստը» ամսագրում և այլ պարբերականներում[7]։

ՄԱՐՇԱԼ ՖԵԼԻՍԵՆ ԵՎ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ՌՈՍՍԻՆԻՆ՝ ՆԿԱՐՉԻՆ

Նկարչի բարձրարվեստ ստեղծագործությունները և ֆրանսիական մամուլի հիացական հաղորդագրությունները մեծ հետաքրքրություն են ստեղծում Ծովանկարչի շուրջը։ Հովհ. Այվազովսկին ծանոթանում և շփվում է շատ նշանավոր անձանց և մշակութային խոշոր գործիչների հետ։ Նրանցից շատերը իրենք են ցանկություն հայտնում անձամբ ծանոթանալու նրա հետ և այցելել նկարչի արվեստանոցը։

Ֆրանսիայի հանրահայտ մարշալ Ֆելիսեն, որը մի քանի տարի առաջ, Ղրիմի պատերազմի ժամանակ Ռուսաստանի վրա հարձակվող դաշնակիցների ռազմական նավատորմի ընդհանուր ղեկավարներից էր, այժմ սիրով այցելում է ցուցահանդես, անձամբ ծանոթանում է նկարչի հետ, ողջունում է նրան և հետո գրում է Այվազովսկուն երկտող-նամակ, որով հայտնում է իր և բարեկամների հիացմունքը. «Առիթ ունեցա,— գրում է նա, — ճաշակի տեր եղող անձանց հոն տանելու և դիտելու ձեր նկարելու եղանակը, շատ հաճելի ժպիտ ամենուն։ Այս բանս ինձ շատ մեծ ուրախություն պատճառեց, ես առավել՝ Ձեզի եղած ազնվաշնորհ վարձատրությունը»։ Մարշալն այնուհետև ավելացնում է. «Ով որովհետև չէիրջին նիստին ներկա էի, ցնծությամբ Ձեր հաղթանակին

---

7 Քաղվածքները բերված են «Մասեաց աղավնի» ամսագրից 1858, էջ 258։

էլ ներկա գան Ելեցա և ուրիշներուն հետ մնկտեղ գՀնդ ծափահարելու և շատ ուժով ծափահարելու սխռրժն ունեցան[1]։ Այս նամակը հրապարակելու թույլտվությամբ մարշալի համհարզը պատասխանում է. «Բարձրապատիվ մարշալը շատ ուրախ է, որ այս առիթով դարձյալ առիթ մըն է Այվազովսքիին մրա ունեցած իր առանձին ու մեծ համոզմունքը նորեն վկայելու»[2]։

Նույն ժամանակ թերթերից տեղեկանալով Այվազովսկու ստեղծագործություննների ցուցահանդեսի և նրա արտակարգ հաջողությունների մասին, իտալացի մեծ կոմպոզիտոր Ջոակինինո Անտոնիո Ռոսսինին (1792—1868)՝ «Սևիլյան սափրիչ», «Գող կաչաղակ», «Վիլհելմ Տելլ» և այլ օպերաների հանճարեղ հեղինակը, վերադառնում է Փարիզ, այցելում Այվազովսկու արվեստանոցը և ցանկություն է հայտնում տեսնել նրա կտավները։ Այդ շրջանում Ռոսսինին լրջորեն չէր զբաղվում երաժշտությամբ։ Այվազովսկու վկայությամբ նա իր ժամանակը մեծ մասամբ անց էր կացնում բարերում և ռեստորաններում։ Տեսնելով նկարչի ստեղծագործությունները՝ Ռոսսինին, կարծես, զարթոնք է ապրում և, ինչպես գրում է նկարչի կենսագիրը, «Այվազովսկու պատկերները արթնացնում են նրա մեջ գեղեցիկ արվեստների նկատմամբ ունեցած սիրո լարերը»։ Այվազովսկին նկարում է նրա համար ոչ մեծ մի պատկեր և նվիրում նրան որպես հիշատակ իրենց հանդիպման ու ծանոթության, խնդրելով կոմպոզիտորից նրա ձեռքով նոտայագրված մի թերթիկ հիշատակի համար։ «Բայց կոմպոզիտոր-գաստրոնոմը,— ինչպես արտահայտվում է նկարիչը,— չի բավարարում Այվազովսկու համեստ խնդրանքը, խոստանալով, որ կգրի, բայց, ըստ էության, ծուլությամբ համակված, Ռոսսինին դժվարացավ գրիչ վերցնել»[3]։

---

1 *Մասեաց աղավնի, 1858, էջ 254։*

2 *Նույն տեղ, էջ 255։*

3 «Русская старина», *1878, հ. 23, էջ 73։*

ԳԱԲՐԻԵԼ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԱՄԱԿԸ ՆԿԱՐԻՉԻ ԵՂԲՈՐԸ

Փարիզում նկարիչը միաժամանակ զբաղվում է իր եղբոր՝ Գաբրիել Այվազյանի (Այվազովսկու) գործերով։ Հովհ. Այվազովսկուն ուրախացնում էր այն փաստը, որ ավագ եղբայրը իր գրական, թարգմանչական, գիտական ու լրագրական բեղմնավոր գործունեությամբ լայն համբավ էր ձեռք բերել Ֆրանսիայում։ Նկարչին առանձնապես ուրախացնում էր և այն, որ իր երկարամյա հորդորանքներից հետո Գաբրիելը 1855 թ. վերջապես հրաժարվել էր կաթոլիկությունից և վերադարձել հայոց Գրիգոր-Լուսավորչական դավանանքին։ «Ի բարեփոխություն մեզ,— գրում է նկարիչը 1857 թ. Փարիզից,— շուտով արդեն երկրոդ տարին կլրանար, որ նա թողել է կաթոլիցիզմը և միացել մեր եկեղեցուն։ ...Ես շատ երջանիկ եղա, երբ անցյալ տարի Փարիզում գտա նրան որպես լուսավորչահայ վարդապետ»[1]։

Բայց Հովհ. Այվազովսկուն հուզում էին երկու հարց ևս. վարդապետ երղբորը եպիսկոպոս ձեռնադրելու և նրան հայրենիք տեղափոխելու հարցերը։ Նկարիչը ցանկանում էր եղբորը տեղափոխել հայրենիք, նրա հետ մեկնել Հայաստան և էջմիածնում նրան եպիսկոպոս ձեռնադրել։ Այդ նպատակով նա Փարիզից մի քանի նամակ է ուղարկում Մոսկվա՝ Լազարյաններին, խնդրելով նրանց աջակցությունը։ Ռուսերեն գրված այս նամակում «լուսավորչահայ վարդապետ» բառերը նկարիչը գրել է հայերեն, դրանք ընդգծելու նպատակով։ Այվազովսկին գտնում էր, որ այնպիսի գիտնական ու կարող անձնավորություն, ինչպիսին է Գաբրիելը, չպետք է օտարին ծառայի, այլ հարկավոր է տեղափոխել հայրենիք և նրա ուժերն ու գիտությունը ծառայեցնել հարազատ ժողովրդի առաջադիմությանը։ «Ինձ, որպես ռուսահայի, խոստովանում եմ, նախանձելի չէ տեսնել նրան օտար պետության օգտին ծառայելիս և ես միշտ մտածել եմ որևէ ձևով նրան ընդմիշտ պահել Ռուսաստանում...»[2]։

Համոզելով եղբորը թողնել Ֆրանսիան և վերադառնալ

---

1 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 1, էջ 53։

2 «Документы...», էջ 121—124։

Հայրենիք, նկարիչը միաժամանակ հիշեցնում է իր երբեմնի հանձնարարությունը՝ գրել Վենետիկի Մխիթարյան միաբանության պատմությունը։ Ամագ եղբայրը, ինչպես նշել ենք, ընդունել էր այդ առաջարկությունը։ Եվ ահա կարճ ժամանակ անց հրատարակում է «Վենետիկի ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանության պատմությունը» գիրքը։ Այդ կապակցությամբ նկարիչ եղբորն ուղղված նամակում Գաբրիել Այվազովսկին նույն ժամանակ՝ 1857 թ. մայիսի 5-ին, գրում է. «Անձկավառ հարազատ իմ Յովհաննես. Մինչդեռ դու աստուածապարգև չքնաղ հանճարով ու հրաշալի վրձինովդ բնության հոյակապ տեսարանները կնկարեիր, և ես անոնց ճշգրտութեանն ու գեղեցկութեանը վրա զմայլված կնայեի, խնդրեցիր ինձմե, որ ես ալ բարոյական պատկեր մը նկարագրեմ, այսինքն ի գիր անցնեմ Մխիթարեան Միաբանութեան հոգին ու սկզբունքները, որոնցմե բաժանուած ըլլալուս անչափ ուրախ էիր՝ 20 տարվայ փափաքդ վերջապես կատարված տեսնելով վրաս։

Խնդիրդ դժվարին էր, եղբայր, և իմ անյիշաչար բնավորութեանս ու խաղաղասեր զգացմանս շատ հակառակ, սակայն քո արդարակորով մտածութեանդ, եռանդուն ազգասիրութեանդ, և այնքան ժամանակ իմ քաշածներուս վրայ ցուցած կարեկցութեանդ սիրոյն համար պարտական էի չէ՞ ըսել քեզի, և ահա որչափ որ կրցայ՝ կատարեցի խնդիրդ, այնպես, որ թէ պատահականութիւն վճարեմ և թե բնական զգացմանս դեմ չգործեմ։

Ընդունէ ուրեմն սիրով այն փոքրիկ գրուածքը, ոչ իբրև գունագեղ նկարագիր կամ պատկեր մանրանկար, այլ իբրև հարևանցի, բայց ճիշտ ուրուագիծ, և եթե քեզ և ինձ սիրելի ազգերնուս խրատ և օգուտ մը ըլլէ ասոր ընթերցմունքէն, ինչպես որ կը հուսամ, դուն ալ արժանապես մխիթարուէ և ուրախացիր։ Եղբայր քո Գաբրիել վ. Այվազովսկի»[3]։

Հայ մշակույթի և հոգևոր այդ խոշոր օջախի՝ Մխիթարյան միաբանության պատմությունը գրելու նկարչի առաջարկությունը պատահական չէր։ Հովհ. Այվազովսկին հետագայում ևս ամեն կերպ խրախուսել ու հորդորել է հայ ժողովրդի պատ-

[3] «Документы...», էջ 124—125։

մության, մասնավորապես պատմիչների գրքերի հրատարակության գործը, նվիրաբերելով նաև իր նյութական միջոցները։ Մատենադարանում պահպանվել է այդ նպատակով դրամական միջոցներ տրամադրած նշանավոր մարդկանց անունների մի ցուցակ, ուր գրանցված է նաև նկարչի անունը՝ «Պարոն Յովհաննէս աղա Այվազովսկի՝ նկարիչ և ասպետ»։

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕՋԱԽՈՒՄ

Մայիսի կեսերին նկարիչը եղբոր հետ Փարիզից մեկնում է հայրենիք։ Ճանապարհին նրանք կանգ են առնում Կոստանդնուպոլսում։ Մինչ այդ, ապրիլի 18-ին, Պետերբուրգ ուղարկած իր նամակում նա Խ. Լազարյանին հայտնում է հայ մշակույթի այդ խոշոր կենտրոնը մեկնելու իր մտադրության մասին։ «Հնարավոր է, որ Կոստանդուպոլսում հայոցվի եղբորս՝ Գաբրիելին՝ եպիսկոպոս ձեռնադրել,— գրում է նա և ավելացնում,— եթե, իհարկե, լինի ընդհանուր ժողովի անդամների ընդհանուր ցանկությունը»[1]։

Հովհաննես և Գաբրիել Այվազովսկիները Կոստանդնուպոլիս են հասնում մայիսի վերջերին։ Այստեղ նրանք մնում են երկու շաբաթ, որի ընթացքում տեղի հայերը նրանց ջերմ ընդունելություն են ցույց տալիս։ Ժամանակի արևմտահայ մամուլը հաղորդում է, որ «մեծահանճար և ազգապատիվ» ծովանկարչի և նրա եղբոր նկատմամբ «ազգին ըրած հյուրընկալությունը արժանավոր ու համեստ եղավ»[2]։ Ծղբայրները այցելում են հայկական ազգային դպրոցները, իսկ մայիսի 24-ին նկարիչը ներկա է լինում Պոլսի Միջագյուղի հայոց ս. Թարգմանչաց ընկերության «Դպրատան աշակերտաց հարցաքննության հանդեսին»։ Թերթերը հաղորդում են, որ «...բոլոր գլխավոր դպրոցներում ու ազգային երևելի հաստատութեանց ազգա-

---

1 «Документы...», էջ 123։ Ռուերևն գրած այս նամակում նա «ընդհանուր ժողով» բառերը Այվազովսկին գրել է հայերին։

2 «Մասեաց աղավնի», 1858, էջ 254։

սիրաբար այցելութիւն ընելեն զատ»[3], Այվազովսկիները ներկա են լինում Կոստանդնուպոլսի Իսկութարի, Պեշիկթաշի և Պեյօղլու թաղամասերի հայոց եկեղեցիներում մատուցած պատարագներին։ Այդ պատարագներից մեկը վարում է Գաբրիել Այվազովսկին[4]։

Կոստանդնուպոլսի հայոց համայնքում Հովհ. Այվազովսկին ծանոթանում և բարեկամական հարաբերություններ է հաստատում հասարակական ու մշակույթի անվանի շատ գործիչների, այդ թվում հայ մեծ ճարտարապետ Սարգիս Պալյանի, վառդապետ Հարություն Տատյանի ընտանիքի և ուրիշների հետ։ Նրանցից մի քանիսին նա նվիրում է իր ստեղծագործություններից։ Այդ մասին նկարիչը հետագայում՝ ավելի քան քսան տարի անց, իր կենսագրին պատմում է. «Ֆրանսիայից Ռուսաստան վերադարձի ճանապարհին Կոստանդնուպոլսում 1858 (1857) թվականին, ես այցելեցի ճարտարապետ Սարգիս էֆենդիին, որը շատ սիրալիր ու կրթված մարդ էր։ Մի անգամ երեկոյան, նստած նրա մոտ, ես ստվարաթղթի վրա նկարեցի ոչ մեծ պատկեր և նվիրեցի նրան որպես հիշատակ»[5]։ Այդ նկարը Սարգիս Պալյանը հետո նվիրում է Թուրքիայի սուլթան Ազիզին, որը շատ է հավանում և ցանկություն է հայտնում գնել նկարչից նոր գործեր։ Ճարտարապետ Սարգիս Պալյանը այդ մասին անմիջապես հայտնում է Այվազովսկուն։ Նկարիչը Թեոդոսիայից ուղարկում է չորս նկար, և սուլթանը բոլորն էլ գնում է։

Կոստանդնուպոլսում Այվազովսկիները հայոց համայնքի ղեկավար մարմինների ու հասարակական գործիչների հետ խորհրդակցում են հայկական նոր դպրոցներ բացելու և գիտական անձանց ղեկավարությամբ հայ պատանիներին մայրենի լեզվով կրթություն տալու հարցերի շուրջը։ «Այդ բոլորը Կոստանդնուպոլսում մեծ գոհունակությամբ ընդունվեցին»,— գրում է նկարիչը 1857 թ. սեպտեմբերին[6]։ Սակայն Կոստանդնուպոլսի հոգևոր խորհուրդը իրավասու չէր եպիս-

---

3 «Արշալույս Արարատեան», 1857, №. 547։

4 Նույն տեղ։

5 «Русская старина», 1878, №21։

6 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 1, էջ 53։

հոպոս ձեռնադրելու խնդրում, ուստի Այվազովսկիները մտադրվում են մեկնել Ղրիմ, այնտեղից էլ՝ Էջմիածին, քանի որ «Էջմիածնի սինոդը իրավունք ունի եպիսկոպոս ձեռնադրել... բայց Ամենայն հայոց կաթողիկոս Ներսեսի մահվան կապակցությամբ ստիպված ենք այդ ուղևորությունը հետաձգել մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը»,— տեղեկացնում է նկարիչը Խ. Հազարյանին՝ կաթողիկոս և եպիսկոպոս բառերը գրելով հայերեն։ Դեռ ս Փարիզից մարտի 24-ին գրած այդ նամակում նկարիչը միաժամանակ խնդրում է նրա միջնորդությունը՝ իր եղբորը Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ նշանակելու համար[7]։

Այդ մտադրությամբ և Թեոդոսիայում հայկական դպրոց բացելու ծրագրով Այվազովսկի եղբայրները հունիսին վերադառնում են Ղրիմ։ Այստեղ նրանք ձեռնամուխ են լինում հայկական նոր դպրոցի հիմնադրման գործին։ Նկարիչը նամակներով ու անձամբ դիմում է Ռուսաստանի լուսավորության մինիստրությանը, Ղրիմի և Նոր Նախիջևանի հայոց համայքների ղեկավարներին՝ խնդրելով ամեն կերպ օժանդակել Թեոդոսիայում հայկական նոր դպրոցի ստեղծմանը։ Նկարիչը նկատի ուներ, որ «Արևելյան Հայաստանի, Հնդկաստանի և Մոլդավլախայի հայերը մտադիր են իրենց երեխաներին ուղարկել ավելի շուտ մեզ մոտ, քան Փարիզ»։ Այդ դպրոցը,— գրում է նկարիչը,— պետք է լինի «մի մեծ ուսումնական հաստատություն», ուր աղքատ հայ պատանիները «միանգամայն ազատ կերպով սովորեն գլխավորապես հայոց լեզու, պատմություն և այլն, ինչպես նաև այստեղ տպագրվեն գրքեր և թերթեր»[8]։ Այդ նույն միտքն էր հետապնդում և նկարչի ավագ եղբայրը։ «Այնպիսի դպրոցներ պետք է ունենալ,— գրում է Գաբրիել Այվազովսկին,— որոնց մեջ աղքատը, այսինքն՝ ամենայն աղքատը ձրի ուսում առնու, իսկ միջակը և հարուստը չափավոր վճարի մը հատուցանելով»[9]։

Հայ պատանիներին կրթություն տալու այս ձգտումը առաջադիմական վիթխարի քայլ էր։ Դա արտահայտվում է նաև

---

7 «Документы...», էջ 121—122:

8 «Բանբեր Հայաստանի արխիվներից», 1969, №. 1, էջ 53։

9 «Մասեաց աղավնի», 1860, Թեոդոսիա, էջ 42։

Գ. Այվազովսկու ջանքերով Թեոդոսիայում, հակառակ կրոնամոլների համառ դիմադրության, օրիորդաց դպրոց բացելու գործում, մի օրինակելի ուսումնարան, որտեղ աղջիկներին սովորեցնում են հայերեն, ռուսերեն և օտար լեզուներ, թվաբանություն, կար ու ձև, կրոն, այսինքն՝ այնպիսի առարկաներ, որոնք «ազգային այժմյան վիճակին պատկանելիք հարկավոր ուսմունքներ են»[10]։

ԱՅՎԱԶՈՎՍԿԻՆԵՐԸ ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Իրենց մտահղացած օգտակար ձեռնարկությունը իրագործելու նպատակով նկարիչը և նրա եղբայրը 1857 թ. հոկտեմբերին մեկնում են մայրաքաղաք։ Հոկտեմբերի 19-ին նրանք արդեն Մոսկվայում էին։ Այստեղ նրանք մնում են չորս օր, որտեղ միասին այցելում են «մի քանի երևելի տեղեր», այդ թվում և Հովհաննես Լազարյանի հիմնադրած Արևելյան լեզուների ճեմարանը։ Լազարյան ճեմարանում կազմակերպվում է ուսանողության և դասախոսների հանդիպումը Այվազովսկիների հետ, որից հետո Հովհաննես և Գաբրիել Այվազովսկիները մոտիկից ծանոթանում են ճեմարանի մատենադարանի, գեղարվեստական հավաքածուի և հատկապես այստեղ պահվող հայկական ձեռագիր գրքերի ու մանրանկարչական ստեղծագործությունների հետ։ Նրանց վրա առանձնապես ուժեղ տպավորություն է թողնում Նորավանքում (Սյունիք) գրված ու նկարազարդված 989 թ. ձեռագիր ավետարանը (այժմ Մատենադարան, ձեռ. №. 2374) իր հարուստ զարդանկարներով, որոնք այժմ էլ աչքի են ընկնում իրենց չխունացող գույների պայծառությամբ։ Ավետարանի բազմաթիվ զարդանկարների և տերունական մանրանկարների հարուստ գունաշարը, լուսավոր ու տաք գույների ու նրբերանգների համադրությունը լինելով խորապես ազգային, մեծ հիացմունք են այստճառում ծովանկարիչ Այվազովսկուն, որի ստեղծագործությունները շատ կողմերով օրգանապես առնչվում են հայ

---

[10] *«Մասեաց աղավնի», էջ 104։*

արքեպիսկոպոսի այդ հնագույն տեսակիներ։ Թերևս դա է նկատի ունեցել ժամանակի թերթը, երբ գրել է. «...այդ մեծապատիվ հյուրերը խնամքով ուշադիր (են) եղել այսպիսի հազվագյուտ հնությանն»[1]։

Մոսկվայի Լազարյան ճեմարանում Այվազովսկիները միաժամանակ հետաքրքրվում են այդ նշանավոր ինստիտուտի ուսումնական գործի դրվածքով և ծրագրերով։ Դա անհրաժեշտ էր նրանց Թեոդոսիայում բացվելիք նոր ուսումնարանի ծրագրերը կազմելու և բարձրորակ ուսուցիչներով ապահովելու համար։ Շահագրգռված նոր սերնդի կրթության և դաստիարակության հարցերով՝ նրանք ելնում էին այն համոզմունքից, ինչ 1860 թ. գրել է թեմակալ Գ. Այվազովսկին. «լուսավորելու մեջ են հենց կայանում յուրաքանչյուր... առաջնորդի կարևորագույն պարտականությունները»[2]։ Այդ համոզմունքով էլ նրանք շարունակում են իրենց հետագա գործունեությունը։

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Հոկտեմբերի 14-ին Հովհաննես և Գաբրիել Այվազովսկիները Մոսկվայից մեկնում են Պետերբուրգ, որտեղ զբաղվում են Թեոդոսիայում հայկական նոր ուսումնարան և ազգային տպարան բացելու խնդրով, ինչպես նաև անձնական այլ հարցերով։ Գ. Այվազովսկին նոյեմբեր ամսին ռուսական կառավարությանն է ներկայացնում Թեոդոսիայում նախատեսվող դպրոցի ուսումնական նախագիծը, որը քննության է առնվում։ Համաձայն այդ նախագծի, դպրոցի ուսումնական ծրագրում նախատեսվում է դասավանդել հայոց, ռուսաց և ֆրանսերեն լեզուներ, «հավասարապես նաև այն գիտությունները, որոնք մտնում են ընդհանուր գիմնազիստական կրթության շրջանակներում կամ անհրաժեշտ են առևտրին նվիրվելու համար», այսինքն՝ թվաբանություն, աշխարհագրու-

---

1 «Արշալույս Արարատեան», 1857, №548։

2 Վ. Միքայելյան, Ղրիմի հայ գաղութի պատմությունը, 1970, էջ 236։

թյուն, երկրաչափություն, նկարչություն, գեղագիտություն, կրոն, մարմնամարզություն, հետագայում՝ ֆիզիկա և քիմիա, այդ առարկաների համապատասխան դասագրքերով։ «Քանի որ խիստ ցանկալի է,— գրել է Գ. Այվազովսկին,— որպեսզի նախատեսվող ուսումնարանում դաստիարակություն ստանան ոչ միայն այն երիտասարդները, որոնք միջոցներ ունեն լրիվ վճարելու <ուսման> վարձը, այլև նրանք, ովքեր վճարել կարող են լոկ դրա կեսը, հավասարապես նաև աղքատ ծնողների երեխաները, հարկավոր կլիներ ուսումնարանի հիմնադրման և պահպանման վրա ծախսել Նովոռոսիայի երկրամասի եկեղեցական գումարների մի մասը»։ Ուսումնարանը պետք է ունենա իր տպարանը և պարբերականը։ Այդ ծախսերի մյուս մասը ձեռք է բերվելու նվիրատվությամբ և աշակերտների վճարումներով։ Աղքատ աշակերտներն ստանալու են թոշակ, իսկ ուսումնարանը համալրվելու է մասնավոր։ Այդ մասնավոր անձը դառնում է նոր նախիջևանցի հարուստ Հարություն Խալիբյանը, որը Թեոդոսիայում դպրոցական նոր շենք կառուցելու համար հատկացնում է 50.000 ռ.։

Այվազովսկիննե՛ի ջանքերը պսակվում են հաջողությամբ։ Ստացվում է կառավարության թույլտվությունը Թեոդոսիայում Գ. Այվազովսկու տնօրինությամբ նոր ուսումնարան և տպարան հիմնադրելու վերաբերյալ։ Նույն ժամանակ Գ. Այվազովսկին նշանակվում է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմի հոգևոր առաջնորդ՝ թեմակալ։

Լուծելով իրենց խնդիրները՝ Գ. Այվազովսկին շտապ վերադառնում է Թեոդոսիա և զբաղվում դպրոցական ու հոգևոր գործերը կարգավորելու խնդրով։ Նա, միաժամանակ, այստեղ հրատարակում է Փարիզից Թեոդոսիա փոխադրած «Մասեաց աղավնի» ամսագիրը՝ եղբոր՝ նկարիչ Հովհաննեսի ձևավորած շապկանկարներով։ Դրանցից մեկը պատկերում է Թեոդոսիա քաղաքի ընդհանուր տեսարանը։

Հոկտ. Այվազովսկին մնում է մայրաքաղաքում և շարունակում է ստեղծագործել։ Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին նա Պետերբուրգում նկարել էր մի քանի ծովանկար և ցամաքային պատկերներ, որոնք նախորդ ամիսների ստեղծագործությունների հետ պատկանելի քանակ են կազմում։ Հենց միայն 1857 թ. կատարած աշխատանքներից մեզ է հասել ավելի քան 10 կտավ։ 1858 թ. առաջին ամիսներին Այվազովսկին նկարում է ավելի շատ կենցաղային թեմաներով պատկերներ, որոնց մեծ մասը նախորդ տարիների ստեղծագործությունների հետ, շուրջ 14 կենցաղային և ցամաքային բնանկարներ, նա ցուցադրում է Պետերբուրգում։ Երեք տարին մեկ գեղարվեստի ակադեմիայի սրահներում կազմակերպվող այդ ցուցահանդեսը, որին ռուս նկարիչներից բացի մասնակցում էին նաև արևմտյան երկրների արվեստագետները, միշտ էլ գրավել է հասարակության ուշադրությունը։ «Ցուցահանդեսը բազմամարդ չէ, բայց գեղեցիկ է,— գրում է գրող և նկարիչ Տարաս Շևչենկոն և ավելացնում ,— իսկ հատկապես բնանկարչության բնագավառում կան հիանալի բնանկարներ և ինչպիսի՜ բնանկարներ, պարզապես հրաշք»։ Նրան առանձնապես հիացրել էր ավստրիացի նկարիչ Կալամի մի գործը։ «Կալամը,— գրում է նա,— մեր բնանկարիչների վրա հսկայական ազդեցություն ունի։ Խիստ վիճելի, ոչնչով չպատճառաբանված այս մասնավոր տպավորությունը հայտնելուց հետո Տ. Շևչենկոն ապրիլի 25-ին ռուս գրող Ս. Տ. Ակսակովին ուղղած նամակում միաժամանակ աննպաստ է արտահայտվում Այվազովսկու մասին։ «Այվազովսկին,— գրում է Տ. Շևչենկոն,— ավա՜ղ, նյութական միջոց է դարձրել, նա աստվածային արվեստից ստեղծել է իր համար ոսկե կուռք և նրան աղոթում է։ Հանցանք է այդպես վիրավորել անշահախնդիր, անարատ արվեստը։ Թող աստվածը լինի նրան դատավոր»[1]։ Մեծ ծովանկարչի ցուցադրած կենցաղային թեմաներով 14 կտավների վերաբերյալ անվանի գրողի ու նկարչի գրեթե մերժողական դիրքորոշումը որքան էլ ծայրահեղ, այնուամենայնիվ պարու-

[1] Т. Шевченко, Собр. соч., *հ. 5, 1965, էջ 436։*

նակում է իր մեջ ճշմարտության որոշ տարր։ Հովհ. Այվազովսկին ժանրիստ չէր։ Նրա ուժը և հզոր տաղանդը դրսևորվում էր ծովանկարչության մեջ։ Թե ի՞նչն էր դրդել ծովանկարչին այդ ցուցահանդեսում ներկայանալ գերազանցապես կենցաղային (ժանրային) պատկերներով, այժմ դժվար է ասել։ Փաստն այն է, որ կենցաղային թեմատիկ-սյուժետային ստեղծագործությունները, ինչպիսիք են «Ձկնկարները», «Ջուրմականների գումակը ճանապարհին», «Գնչուների քափորը», «Ճանապարհ դեպի անտառ», «Փոթորկից ծովը նետվող ոչխարները» և այլն, թեև նրա արտին մոտ ու սիրելի են, և այդ կարգի գործեր նա ստեղծել է հետագայում ևս, սակայն դա նրա տաղերքը չէր։ Այդ պատճառով էլ ժամանակին, ինչպես տեսնում ենք, բավական ուժեղ քննադատվում է։

Հովհ. Այվազովսկին, իհարկե, չէր կարող հաշվի չառնել քննադատությունը, թեև նա երբեք գեղեցիկ արվեստներից իր համար պաշտամունքի ոսկե կուռք չէր սարքել, ինչպես սխալմամբ գրում է Տ. Շևչենկոն։ Նույն՝ 1858 թվականին, նա ստեղծում է բազմաթիվ բարձրարվեստ ծովանկարներ ևս, որոնցից մեզ հասած «Ծովը գիշեր ժամանակ» (Ուզբեկական ԽՍՀ պետական քանգարան), «Երեկո, իտալական բնանկար» (Թեոդոսիա), «Լուսնյակ գիշեր», «Ծովափ» (Ուֆա), «Վենետիկ» (Աշխաբադ) և այլն, թվով 16 պատկեր, ոչնչով չեն զիջում նախորդ տարիների աշխատանքներին։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼՐԱԳՐՈՂ ՄԱՏԹԵՎՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆԻ ԱՑՑԸ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒՆ

1858 թ. Պետերբուրգում Հովհ. Այվազովսկուն է այցելում երիտասարդ հայ մտավորական, հետագայում «Արևելյան մամուլ» հայկական ամսագրի խմբագիր, հրապարակախոս Մատթեոս Մամուրյանը (1830—1901)։ Նկարչի մահվան կապակցությամբ 1900 թ. իր ամսագրում նա հրապարակում է Այվազովսկու հետ ունեցած հանդիպման, զրույցների ու իր տպավորությունների մասին։ «Ես,— գրում է նա,— ոչեք պատիվ ունեցա այդ մեծ մարդու հետ մի քանի անգամ

տեսակցել ի Բեղդատուրկ 1858-ին, իր ապարանք աշխատանքին մեջ, պաշտոն ունենալով իր եղբոր մի հանձնագիրն իրեն ներկայացնել։ Իր առույգ տարիքին մեջ էր Այվազովսքի և հրաշակերտներ արտադրելու փառավոր ճամփուն վրա, կերպ մը ահ ու պատկառանք կհուզեր զիս, երբ ներկայացա և տեսա նկարչին ահագին կտավի մը առջև՝ մեկ ձեռքը վրձին, մյուսն՝ գունակալն, սակայն իր սիրալիր ընդունելությունն, գիրը կարդալե հետև, զրուցեց այցելությանս, մանավանդ իր համակրելի դեմքէն անուշ ու սուր աչունք, վայելուչ հասակն և պարզ ու հրապուրելի ձևերն բոլորովին գրավեցին սիրտս և ինձ համարձակություն տվին այցելությանս նպատակին վրա երկարորեն խոսիլ։ Նույն պահուն ուրս այցելուներ ևս գալով մեր տեսակցությունը կարճ անցավ, և միայն երկրորդ և երրորդ այցելությանս առթիվ նոր լույսով մ՝ երևցավ ինձ անվանի արվեստագետն, որ պաշտոնական շրջաններուն մեջ ազդեցություն ու հարգ կվայելեր, սակայն շրջահայացության քէ ոչ մեծ մարդերու հատուկ համեստության բերմամբ էր, որ զգուշ ու սակավախոս էր, տոհմային խնդիրներ շոշափելու տրամադիր չէր գտնվեր, և միշտ գեղարվեստի և հատկապես իր արվեստին վրա խոսելու առթիվ պերճախոս էր։ Ով երբ կգովեի չափավոր լեզվով իր հանճարն, ըսավ.

— Բնական տուրք է։

Ով վրձինն առնելով իբրև փորձ սկսավ շարժիլ արագ-արագ կտավին վրա և հանկարծ գույներու քաոսեն և խառն ի խուռն ստվերներեն կենդանի ակնախտիչ առարկաներ դուրս կցայտեին, և հանկարծ լո սինն, որ իր տմոյն արծաթե նշույլներն կսփռեր ալեկոծ ծովուն վրա և հեռուեն նավ՝ որ կմաքառեր կատաղի ալեանց դեմ, մերթ անդունդներու խորն դարավիժելով և մերթ կոհակներու կատարը տատանելով երևան կելնեին։ Նկարիչը իբրև թե ինքը չէր այս ահարկու ու վսեմ տեսարանին հեղինակն՝ անտարբեր ու ժպտուն դեմքով ինձ կնայի։ Ով Ես զմայլված կրսեմ.

— Ինչ բնական տեսարան։

— Ով իրոք, բնությունը եղած է միշտ իմ վարպետը-— ըսավ անվանի նկարիչը,— թեև երբեմն անոր խորթ ու բորդ կողմերն ուղղելու հանդգնություն ունիմ և արվեստին հմայքն անոր ազդելու։

Այսպես էր մեծ վարպետ նկարիչը, որ գեղարվեստից պատմութ յան մեջ անմահ անուն մը կթողնու»[1]։

Պետերբուրգում, ինչպես և Ղրիմ մեկնելու ճանապարհին, Այվազովսկին նկարում է «Ձմեռը Տուլայի գավառում մի տան բակի տեսարանով», «Ծղեղները Դնեպրի ափերին» կտավները, որոնք մի քանի այլ ստեղծագործությունների հետ նա ցուցադրում է 1858 թ. ակադեմիական ցուցահանդեսում։

«ՋԱՆ ԶԱՅՎԱԶԵԱՆ, ՋԱՆ ԶԱՇԵՄԵԱՆ ԼԱՎ Է ՄԻՋԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ»

1859 թ. գարնանը նորընտիր կաթողիկոս Մատթեոս Չուխաջյանին դեպի էջմիածին են ուղեկցում մի խումբ հոգևոր ու աշխարհիկ գործիչներ։ Նկարիչ Ստեփան Ներսիսյանը կարծելով, որ այդ ուղեկիցների խմբում եղել է իրեն ծանոթ նկարիչ Այվազովսկին ևս, Շուշի քաղաքից մայիսի 27-ին Թիֆլիսում ապրող բժիշկ-բանահավաք Գ. Ախվերդյանին գրած նամակում խնդրում է «ողջունել սիրով» նկարչին, թե իրոք «մեր Հովհաննես մեծանուն նկարիչ Այվազեանն ընդ եղբորն իւրումն եկեալ իցէ»[1]։

Սակայն նկարիչ Այվազովսկին չի եղել ուղեկցողների խմբում։ Այդ ժամանակ էջմիածին էր եկել նրա ավագ եղբայրը՝ վարդապետ Գաբրիել Այվազովսկին, որը շուտով մայր տաճարում օծվում է եպիսկոպոս։

Հովհ. Այվազովսկին 1859—1860 թվականներին այլ գործերի թվում ստեղծում է նաև հոր, մոր և տատի դիմանկարները։ Նույն ժամանակ՝ 1859 թ. մայիսին, Միքայել Նալբանդյանը Մոսկվայում լույս տեսնող «Հյուսիսափայլը» ամսագրում հրապարակում է Մասեհ Բաբաջանյանի կտակը, կցելով նրան մի հոդված, որով խիստ անհրաժեշտ է համարում կտակված գումարի շտապ տեղափոխումը և այդ գումարով նոր նախիջևանում հայկական աշխարհիկ դպրոց, ինչպես նա

---

1 «Արևելյան մամուլ», 1900, № 5, էջ 579—580։

1 Ջարենցի անվ. գրակ. և արվ. թանգարան, Գ. Ախվերդյանի արխիվ, № 184։

է գրում. ժողովրդի համար «լուսավորության առողջ ծննդաբերություն» հիմնելու համար։ Դրանից հետո հարց է ծագում, թե ո՞վ պիտի գնա Հնդկաստան և բերի այդ գումարը։ Առաջ են քաշվում մի քանի թեկնածուներ, որոնց թվում նշվում են Մ. Նալբանդյանի, Ա. Հովհ. Այվազովսկու անունները։ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող Գաբրիել Պատկանյանի ձեռագիր «Հիշատակարանից» երևում է, որ այդ հարցի շուրջը ժամանակին եղել է լուրջ և սկզբունքային վեճ։ Մեզ հետաքրքրում է այն փաստը, որ նկարիչ Հովհ. Այվազովսկին նույնպես ցանկացել է մեկնել հեռավոր Հնդկաստան և բերել կտակված գումարը։ Նրան իհարկե, ոգևորել է Նոր Նախիջևանում այդ գումարով նոր և օրինակելի դպրոց, միաժամանակ հայկական տպարան ու հիվանդանոց հեմնելու հեռանկարը։ Դրա հետ մեկտեղ նկարիչն ունեցել է նաև Հնդկական օվկիանոսը տեսնելու ցանկություն։ Մինչ այդ եվրոպական երկներ շրջագայած ծովանկարիչը չէր եղել այդ կողմերում։ Արևելքը ձգում էր նրան։ Նկարչի այդ ցանկության մեջ միաձուլվել էին հայրենասիրական ու ստեղծագործական ձգտումները։ Սակայն նրա ընդդիմախոսներն այն միտքն են հայտնում, որ նրա ավագ եղբայրը՝ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմակալ և Թեոդոսիայի հայկական հոգևոր դպրոցի տնօրեն Գաբրիել Այվազյանը (Այվազովսկին), կարող է եղբոր ձեռքից զավթել ամբողջ գումարը և օգտագործել իր հոգևոր պետքերի կամ հոգևոր դպրոց բացելու համար, ինչպես նա վարվել էր Մուրատյան կտակի նկատմամբ։ Այդօրինակ առարկումը, իհարկե, որոշ հիմք ուներ, և Մ. Նալբանդյանի ուսուցիչ Գաբրիել Պատկանյանը իր ելույթում ասում է. «քան զԱյվազեան, քան զԱճեմյան, լավ է Միքայել Նալբանդեան»[2]։ Այդ վեճը հենց այդպես էլ լուծվում է։ Հնդկաստան է մեկնում Մ. Նալբանդյանը։ Այնուամենայնիվ Հովհ. Այվազովսկու թեկնածության առաջ քաշումը և քննարկումը մի անգամ ևս հաստատում է հայ ժողովրդի ազգային գործերին նկարչի ունեցած անմիջական մասնակցությունը։ Այդ է վկայում նաև այն փաստը, որ Այվազովսկին մասնակցում է Թեոդոսիայի նորաստեղծ հայ-

[2] Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, եր. 1955, էջ 330։

կական տպարանի հրատարակությունների գեղարվեստական ձևավորման աշխատանքներին։ Այդ տպարանի առաջին հրատարակություններից կարաուլովի «Ֆեդոր, հին Սուգդայի տիրակալուհին»* գրքի համար 1859 թ. Այվազովսկին նկարում է Ղրիմի բնության երկու տեսարան, տպագրվում են վիմագրական տեխնիկայով։ 1860 թ. նա ձևավորում է նաև իր եղբոր հրատարակած «Մասեաց աղավնի» ամսագրի շապիկը։

Ամռան ամիսներին Հովհ. Այվազովսկին կնոջ և երեխաների հետ շրջագայում է Ղրիմի Հարավում և Հանգստանում Ալուպկայում։ Նա օգոստոսի 20-ին նամակով Թեոդոսիա է հրավիրում «Մոսկվիտյանին» թերթի խմբագիր, ակադեմիկոս Մ. Պ. Պոգոդինին, որը գտնվում էր Բորժոմում։ Սեպտեմբերի կեսերին նրանք վերադառնում են Թեոդոսիա։ Նոյեմբերի 5-ին Այվազովսկին պատսխանում է Ն. Պ. Պոգոդինին, որը նկարչին խնդրել էր գրել ինքնակենսագրությունը։ «Իմ կենսագրությունը ես շարադրել եմ այնքան, որքան համարում եմ բավական, իսկ նշել իմ լավագույն ստեղծագործությունները, անկեղծ ասած, ես չեմ կարող այն պատճառով, որ պատկերն ավարտելուց հետո ես նկատում եմ դրա մեջ շատ թերություններ և մխիթարվում եմ միայն նրանով, որ առաջիկայում ավելի լավը կնկարեմ, այդ պատճառով ես չեմ սիրում դրանք երկար պահել ինձ մոտ»[3]։

ԵՐԿՈՒ ՆՈՐ ՊԱՏԿԵՐ

1861 թ. Այվազովսկին նկարում է միևնույն տեղանքի երկու տարբեր պատկեր՝ «Ռոդոս կղզում» և «Գիշերը Ռոդոս կղզում» (Մինսկ)։ Առաջինը գտնվում է Թեոդոսիայի Այվազովսկու անվան պետական պատկերասրահում։ Դա ներկայացնում է կղզու մերձափնյա տների ու երկու մեծ աշտարակների տեսարանը իրիկնամուտին։ Առաջին պլանի ձախ կողմում, ծովափնյա տաղավարում պատկերված հանգստացող և սուրճ խմող

* Караулов Федор. властительница древней Сугдай, 1859.

[3] «Документы ...», էջ 126։

արևելյի մարդկանց ֆիգուրներն այստեղ մտցնում են կենցաղային որոշ տարր, թեև նկարիչը շեշտը դրել է ոչ թե կենցաղայինի, այլ մայրամուտի արևի վերջին ճառագայթների արտացոլման և հորիզոնի հրեղեն տեսարանի պատկերման վրա։ Արևի վերջին, բայց դեռ ջերմացնող ճառագայթները ողողել են ամեն մի անկյուն և ամեն ինչ։ Խոնավ օդը մշուշի պես պատել է երկինքը, լեռները և հեռուները։ Լույսի և ստվերների հարաբերությունների նպատակային կիրառումով նկարիչը վերարտադրել է հարավի տաք իրիկնամուտի համոզիչ տեսարան։ Ամբողջ պատկերից, մանավանդ նրա կենտրոնական մասից, ուր երևում է մայրամուտի հրեղեն արևը, կարծես ջերմություն կտավից դուրս է հոսում։ Պատկերը խորապես կոլորիտային է։ Թեոդոսիայի պատկերասրահում այս կտավը ցուցադրվում է նույն ժամանակ նկարված «Փոթորիկ Սառուցյալ օվկիանոսում» ստեղծագործության (1864) հետ։ Հետագայում՝ 1870 թ., նկարած «Սառուցյա լեռներ» նկարը ևս հաստատում է, որ տարբեր վայրերի բնության տեսարաններ նկարելիս Այվազովսկին կիրառում է գեղարվեստական արտահայտչականության այլևայլ միջոցներ, տվյալ վայրի բնույթը, նրա կոլորիտը ճշտորեն արտահայտելու համար։ Հովհ. Այվազովսկին չի եղել Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, բայց երևակայությամբ և ծովագնացների հետ ունեցած զրույցների հիման վրա կարողացել է վերարտադրել սառը բնության զգացողությունը և հասնել տեսարանի համոզչականության։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳՍԵՐ

Դեռևս անցյալ տարվա աշնանից վերսկսվում է նկարչի կնոջ հիվանդությունը, որի պատճառով Այվազովսկին ընտանիքով մեկնում է Պետերբուրգ։ Բժիշկների կարծիքով կնոջն անհրաժեշտ է լուրջ բուժում։ 1861 թ. հունվարի 7-ին Պետերբուրգից Ա. Պ. Խալիբյանին ուղարկած նամակում Այվազովսկին գրում է. «Իմ տանը սարսափելի դժբախտություն է տիրում։ Աղջիկներիցս մեկը՝ երրորդը, հիվանդացել է քութեշով, ուստի ես մյուս աղջիկների հետ տեղափոխվել եմ

դիմացի հյուրանոցը։ Այդ միջոցին կինս՝ կիսամեռ, ինչպես Ձեզ հայտնի է, մնացել է հիվանդ աղջկա հետ և ուժասպառ է եղել և արդեն վեց օր է, ինչ վտանգավոր հիվանդ է։ Բարեբախտաբար եկել են նրա եղբայրը և բժիշկը։ Նրանք երկուսով գիշեր-ցերեկ հիվանդների մոտ են, իսկ ես պահպանում եմ աղջիկներին, իսկ երբ այցելում եմ հիվանդներին, ապա մեծ զգուշությամբ վերադառնում եմ առողջ երեխաներիս մոտ»[1]։

Բժիշկների խորհրդով նկարիչը կնոջն ուղարկում է Գերմանիա՝ Վյուրցբուրգ, սիջուկով բուժման համար, իսկ ինքը շարունակում է մնալ աղջիկների հետ մինչև հիվանդի առողջանալը։ Այդ ժամանակամիջոցում, չնայած ընտանեկան դժբախտությանը, Այվազովսկին անընդհատ ստեղծագործում է, և ինչպես նա է գրում . «Ես շատ աշխատեցի այս ձմեռ»[2]։

Ապրիլի 12-ին, երբ արդեն ապաքինվել էր հիվանդ աղջիկը, նկարիչը Ա. Պ. Խալիբյանին ուղարկած ռուսերեն և հայերեն երկլեզվյա նամակում հայտնում է. «այժմ պետք է Ձեզ ասեմ, որ ես համարյա որոշել եմ ամռանը մնալ այստեղ, իսկ ձմռանը մեկնել արտասահման մինչև եկող գարունը։ Այդ պատճառով ինձ չսպասեք։ ...Իմ գործերը (այսինքն՝ նյութերները) պատճառ են, որ ես դեռ մի տարի էս պետք է թափառեմ այդ վայրերում, և դրանից հետո, ինչպես ասում են նավաստիները, արդեն չորս խարիսխ կձգեմ Ղրիմում»։ Ռուսերեն գրած այս նամակի վերջում նկարիչը գրում է հայերեն. «ինծի ասին աս օրերս, որ առաջվան գահանա (Պատկանովին) նախիջևանեն պիտ որ վռնտին, Հայրապետովն ալ մեկ խառնակութիւն մը տահա արածովը, պիտ որ հանին կալավայութենէ»[3]։ Նոր Նախիջևան հայկական քաղաքի ներքին գործերին վերաբերվող այս տեղեկությունը, ինքնին, ծանուցում է, որ նույնիսկ Պետերբուրգում գտնվող նկարիչը ծանոթ է հայ իրականության մեջ այդ շրջանում տեղի ունեցող անց ու դարձին։

---

1 «Документы...», էջ 127։
2 Նույն տեղ, էջ 131։
3 Նույն տեղ, էջ 130։

Պետերբուրգում Այվազովսկին նկարում է նաև «Ոչխարները փոքրկից քշվում են դեպի ծովը» նոր կտավը, որը ցուցադրում է նախ իր արվեստանոցում։ Այդ պատկերի ստեղծման և դրա հետ կապված պատմության լուրը անմիջապես, ինչպես նշել ենք, տարածվում է հասարակության մեջ։ Հանդես են գալիս նոր գնորդներ, նույնիսկ դրա լուսանկարները թղթադրողներ։ Գեղեցիկ արվեստների սիրահար և սենատոր իշխան Դ. Ի. Դոլգորուկովը Մոսկվայից նամակով խնդրում է այդ գործի լուսանկարը, միաժամանակ հարցնելով, թե ինչ նոր գործ վրա է աշխատում նկարիչը։ «Ձեր սիրալիր նամակը ինձ շատ դուր եկավ,— պատասխանում է նկարիչը։— Այս ձմեռ ես շատ աշխատեցի։ Ես մեծ սիրով մի օրինակ լուսանկար կուղարկեմ Ձեզ։ Հույս ունեմ մայիսի 20-ին Մոսկվայով անցնելիս առանց Ձեզ տեսնելու չմեկնել»[1]։

Ղրիմ մեկնելիս նկարիչը մեկ օր մնում է Մոսկվայում, տեսակցում իշխան Դ. Ի. Դոլգորուկովի, մյուս ծանոթների հետ և հունիսին հասնում Թեոդոսիա։ Թեև նա սկզբում որոշել էր Պետերբուրգում երկար մնալ և հետո արտասահման անցնել, սակայն, փոխելով մտադրությունը, որոշում է Կովկաս մեկնել և այցելել հայաբնակ վայրերը։

Այդ մտադրությամբ 1861 թ. սեպտեմբերի կեսերին Թեոդոսիայից շոգենավով ճանապարհորդում է դեպի Կովկաս։ Սեպտեմբերի 22-ին կերչից գրում է. «Այս նամակը գրում եմ Թեոդոսիայից դեպի Թիֆլիս մեկնելուս ճանապարհին շոգենավում։ ...Ձմռանը կմնամ Թիֆլիսում, գարնանը կվերադառնամ Թեոդոսիա»։ Խորհուրդ մտահղացած դպրոցական շինարարության հարցերով, նկարիչը Ա. Պ. Խալիբյանին ուղղած նամակում մյուս ժամանակ հայտնում է Թեոդոսիայում Խալիբյանի ծախսերով կառուցված դպրոցի նոր նախագծի մասին։ «Ուրախ կարդաք այդ նախագիծը, դուք ինքներդ կտեսնեք, որ Ձեր ուսումնարանը գիմանզիայի վերածելով, Դուք հսկայական օգուտ կբերեք հայերին և մեր քաղաքին։ ... Կատարելով այդ, Դուք ուսումնական հիմնարկը կազատեք կաթոդիկոսի և ընդ-

---

1 «Документы...», էջ 131։

հանրապես մեր հոգևորական սլաւոնական սրբոց գրքից օգտակար բան երբեք չի լինի։ ...Այս ժամանակ էլ մեր հայերը օգտակար կլինեն իրենց»[2]։ Այս նամակը նոր էր հանձնել կերչի փոստը, երբ Պետերբուրգից հրահանգ է ստանում դիմավորել ռուսական կայսրին, որը Ղրիմ է ժամանելու Հովհ. Այվազովսկին ստիպված ընդհատում է կովկասյան ճանապարհորդությունը և մեկնում Յալթա։ Այստեղ էլ, հոկտեմբերի սկզբներին, տեղի է ունենում նրա հանդիպումը Ալեքսանդր Երկրորդի և կայսրուհու հետ։ Այնուհետև նրանք մյասին մեկնում են Լիվադիա՝ թագավորական հանգստավայրպալատը, որտեղ նկարիչը, խորապես հուզված ընդունելությունից, կայսրուհուն է նվիրում մի ծովանկար։ «Թագավորկայսրը և կայսրուհին արտակարգ սիրալիր էին իմ նկատմամբ,— գրում է նկարիչը,— ես հրավիրվել էի ճաշի։ Ստացա քանկարժեք նվեր և մի քանի նկարների պատվեր»[3]։ Իսկապես, Հովհ. Այվազովսկու կտավի դիմաց կայսրուհին հոկտեմբերի 8-ին նկարչին է նվիրում «ադամանդե մատանի կայսրուհու անվան զարդագրով (վենզել)»[4]։

Այդ տպավորությամբ վերադառնալով Թեոդոսիա՝ Այվազովսկին վերսկսում է ստեղծագործական աշխատանքը՝ Անդրրկովկաս մեկնելը առժամանակ հետաձգելով։

Սեպտեմբերի վերջերին Պետերբուրգում բացված ակադեմիական ցուցահանդեսում Այվազովսկին մայրաքաղաքի հասարակայնությանը ներկայացնում է նույն տարում նկարած «Ոչխարներին փոթորիկը քշում է դեպի ծովը», «Ղրիմի հարավային ծովափը», «Փոթորիկ Եվպատորիայի մոտ» և այլ գործեր։ Քննադատությունը ջերմությամբ է արտահայտվում այդ նոր ստեղծագործությունների վերաբերյալ։ Ռուս նշանավոր գրող Ֆ. Մ. Դոստոևսկին «Նովոյե վրեմյա» ամսագրում գեղարվեստի ակադեմիայի տարեկան ցուցահանդեսի մասին հրապարակած հոդվածում գրում է. «Այվազովսկու «Փոթորիկ Եվպատորիայի մոտ» պատկերը նույնպես զարմանալի լավ է, ինչպես և նրա մյուս փոթորիկները, և այստեղ նա վարպետ

---

2 «Документы...», էջ 133։

3 Նույն տեղ, էջ 134։

4 Նույն տեղ, էջ 138։

է առանց մրցակցի, այստեղ նա լիովին նկարիչ էր։ Նրա փորձերի մեջ կա զմայլանք, կա այն հավերժ գեղեցկությունը, որը հիացնում է դիտողներին կենդանի, իսկական փոթորիկի ժամանակ»[5]։

Բացի վերոհիշյալ պատկերներից Այվազովսկին նույն 1861 թվականին նկարում է ավելի քան 10 ծովանկար Եւ։ Պատասխանելով իշխան Դ. Ի. Դոլգորուկովի նամակին՝ Այվազովսկին հոկտեմբերի 20-ին գրում է «Դուք հարցնում եք ի՞նչ եմ նկարում։ Այժմ ես հրճվանքի մեջ եմ «Համաշխարհային ջրհեղեղ» իմ նկարի համար։ Ես այն համարյա ավարտում եմ և դա, կարող եմ համարձակ ասել, որ իմ լավագույն ստեղծագործությունն է ... իսկ մյուսը կլինի, երբ Նոյը իր կենդանիներով իջնում է Արարատից։ Այդ երկրորդ պատկերը հույս ունեմ ավարտել մինչև հունվարի 15-ը»[6]։

Այդ աշխատանքները սակայն, մեզ չեն հասել։ Նույն թեմաներով Այվազովսկին նկարում է նաև հետագայում։ 1864 թ. նկարած «Համաշխարհային ջրհեղեղը» մեծակտավ ստեղծագործությունը այժմ գտնվում է ռուսական թանգարանում (Լենինգրադ), իսկ «Նոյը իջնում է Արարատից» (1887)՝ Երևանում։ Ռոստովի կերպարվեստի թանգարանում է գտնվում Հարություն (Արտեմ) Խալիբյանի (1790—1871) դիմանկարը, որը, չգիտես ինչու, ռուսական արվեստագիտական գրականության մեջ նշվում է «Տղամարդու պատկեր» վերնագրով[7]։ *Այդ նկարը ցուցադրվել է 1980 թ. Երևանում բացված Այվազովսկու հայկական թեմաներով ստեղծագործությունների ցուցահանդեսում և իր բարձր արվեստով գրավել է հասարակության ուշադրությունը։ Հարություն Խալիբյանի դիմանկարը իսկապես ծովանկարչի լավագույն դիմանկարչական ստեղծագործություններից է։*

Ահա այդ ժամանակ, 1862 թ. ամռանը, Հովհ. Այվազովսկու առանձնատանը գողություն է կատարվում։ Կասկածելով նկարչի եղբոր տպարանում գրաշարի պաշտոնով աշխատող

---

[5] «Новое время», 1861, № 10: *Տե՛ս նաև* Ф. М. Достоевский, Полн. собр. соч., *հ. 13, Մ., 1939, էջ 529—547։*

[6] «Документы...», *էջ 135։*

[7] **Н. Барсамов**, *Նշվ. աշխ., էջ 199։*

Ղազարոս Աղայանին՝ հետագայում անվանի գրողին և մանկավարժին ու նրա ընկերոջը, նրանց կալանավորում են։ «Մեկ անգամ էլ սրճարանում մեզ կալանավորեցին և բանտարկեցին երկու ժամի չափ,— նշում է Ղ. Աղայանը, գրի առած իր հուշերում։— Չգիտենք՝ ինչ է պատճառը, բայց շուտով իմացանք։ Նկարիչ Այվազովսկու տունը գողեր էին մտել և, նրա տան կառավարիչին մահացու վերք տալով, հափշտակել էին թանկարժեք բաներ։ Գողերը չերքեզի հագուստով էին եղել, մենք էլ այդպիսի հագուստ ունեինք։ Բռնվածներին տանում էին ցույց տալիս վիրավորվածին, որ ճանաչի, բայց մենք չտեսանք նրան։ Երբ որ մեզ տարան ցույց տալու, նկարիչ Այվազովսկին մեզ չոկել տվավ մյուսներից և ազատել տվավ։ Այստեղ առաջին անգամ տեսա ես հանճարեղ Այվազովսկուն։ Շատ դուր եկավ ինձ նա իր վայելչակազմ հասակով և համակրելի դեմքով։ Չգիտեմ ինչու ազատել տվավ մեզ, արդյոք գ՝տե՞ր, որ մենք իր եղբոր գրաշարն ենք, թե՞ իբրև նկարիչ մեր դեմքերից նշմարեց, որ մենք գողի պատկեր չունենք։ Ինչևիցե, բայց սրա համար նա ինձ ավելի դուր եկավ»[8]։

Հետագայում գրած «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» աշխատության մեջ, վերհիշելով այս պատմությունը, Աղայանը համեմատում է հանճարեղ նկարչին նրա եղբոր հետ և գրում է. «Երկու Այվազյանները ջոկ-ջոկ աստղերի տակ են ծնվել։ Աշխարհային փառքը մեկի հետևից է վազում, մյուսի առջևից։ Նկարիչը չի կարող փառքի ճանկերից ազատվել, որքան էլ փորձի փախչել նրանից»[9]։

* * *

Նույն տարում Այվազովսկին մասնակցում է հայ նշանավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի (1871—1928) ծնողների՝ Աֆանասի Սպենդիարյանի և նրա հարանացուի ամուսնական հանդեսին։ Նրանց հարսանիքը տեղի է ունենում Ղրիմի Սուդակ քաղաքում, և նկարիչը Թեոդոսիայից նվերներով մեկնում է Սուդակ։

---

8 Ղ. Աղայան, Երկեր, հ. 3, 1940, էջ 43։

9 Նույն տեղ։

Սակայն դա բացառիկ դեպք չէ մեծ նկարչի կյանքում։ Ղրիմում լայն ժողովրդականություն վայելող արվեստագետը սիրով մասնակցում է ժողովրդական տոնախմբություններին։ Հատկապես Թեոդոսիայում ու նրա շրջակայքի գյուղերում չի լինում հարսանիք կամ որևէ ուրախություն առանց Այվազովսկու ներկայության։ Շատ հարսանիքներում ստանձնում է քավորի պարտականությունները։ Նա աղքատ աղջիկներին ամուսնացնելու համար հաճախ օժիտ, հագուստներ, թանկարժեք զարդարանք կամ էլ դրամ է տվել։ Հարսանիքներում մեծ ծովանկարիչը երբեմն հանպատրաստից հորինել է բանաստեղծություններ, որոնք հարմարեցնելով Ղրիմի ժողովրդական որևէ երգի մոտիվին, արտասանել, երգել, կամ նվագել է ջութակով՝ ուրախացնելով բոլորին։ Պահպանվել է Այվազովսկու այդօրինակ ֆոլկլորային ստեղծագործություններից մեկը ռուսերեն թարգմանությամբ, որի մեջ գովերգում է նորահարսին և նրա գեղեցկությունը.

«Глаза твои сини, как терны,
Как пьявка, черны твои брови,
Как день, твои волосы белы,
А лоб твой блестит, как звезда.
Ты стройная, словно пальма,
ты нежная, как ягненок.
Тво й голос звенит, как свирель»*.

ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1860—1870-ական թվականներին ռուսական գեղարվեստական մշակույթը, մասնավորապես կերպարվեստը, ապրում է զարգացման մի նոր շրջան։ Այդ շրջանը բնորոշ է նրանով, որ արվեստի հիմնական ու վճռական ուղղությունը դառնում է քննադատական (գաղափարական) ռեալիզմը։ Դեռևս 1850-

* Н. Барсамов, И. К. Айвазовский, 1962. *էջ 126։*

ական թվականների վերջերին և 1860-ական թվականների սկզբներին ուսանող երիտասարդությունը կարդում էր Բելինսկու, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի հոդվածները, լսում էր Գերցենին և ներշնչվում հեղափոխական-դեմոկրատական գաղափարներով։ Այդ գաղափարները շատ կողմերով որոշեցին 60-ական թվականների ռուս նկարիչների գեղագիտական հայացքները։ Նոր հայացքների հիմքում ընկած էր Չերնիշևսկու «Գեղեցիկը կյանքն է» բանաձևը, որ արվեստի խնդիրն է «կյանքի երևույթների բացատրությունը», և այն, որ արվեստագետը պարտավոր է «կայացնել իր վճիռը կյանքի երևույթների նկատմամբ»։ 1860-ական թվականներին առաջավոր նկարիչների մեջ արմատավորվում է այն համոզումը, որ արվեստը կոչված է ճշմարտացիորեն ու համարձակ արտացոլել ժամանակակից կյանքը, պայքարել սոցիալական արդարության համար։ Քննադատական ռեալիզմի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Կրամսկոյը, հաստատում էր, որ նկարիչը պետք է լինի հասարակական երևույթների գնահատողը և քննադատը։

Ահա այդ շրջանում՝ 1863 թ. մարտ ամսին, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի մի խումբ ուսանող-ակադեմիստներ՝ թվով 14 նկարիչ, ըմբոստանալով ակադեմիայի ղեկավարության դեմ, հրաժարվում են նկարել սկանդինավյան դիցաբանության թեմաներով դիպլոմային ավարտական աշխատանքներ և ցուցադրական կերպով հեռանում են ակադեմիայից։ Հետագայում նրանք ստեղծում են իրենց «Ազատ նկարիչների արտելը»։ Կայսերական գեղարվեստի ակադեմիայում տեղի ունեցած երիտասարդ ռուս նկարիչների այդ «բունտը» արտահայտությունը հանդիսացավ կերպարվեստի բնագավառում այն փոփոխությունների, որոնք խմորվում էին այդ շրջանի հասարակական կյանքում։ Պայքարի դրոշ բարձրացնելով ընդդեմ կայսերական ակադեմիայի պաշտոնական-ծրագրային արվեստի դեմ, տոգորված նոր, դեմոկրատական գաղափարներով ու բարձրացող ժողովրդին օգնելու զգացումով, նրանք ձգտում են ստեղծել աշխատավոր ժողովրդին մոտիկ ու նրան հասկանալի արվեստ։

Հովհ. Այվազովսկին՝ կայսերական գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամը, մեկն էր այն պրոֆեսորներից,

որ նք խորապես հասկանում էին երիտասարդ նկարիչների ձգտումները, ոմանք նույնիսկ արդարացնում էին նրանց ըմբոստությունը, բայց անկարող էին այդ ժամանակ կայսերական ակադեմիայի ծրագրերում որևէ էական փոփոխություն մտցնել։ Սակայն այն, ինչ կարող էին անել, նրանք անում են իրենց ստեղծագործություններում։

1860-ական թվականների կեսերին ուժեղանում է ռեալիզմը Այվազովսկու ստեղծագործություններում։ Այժմ, ավելի քան առաջ, նկարիչը ընդհուպ մոտենում է կյանքին, վերարտադրում իրականությունն իր բոլոր մանրամասնություններով և, որ կարևոր է, բնության տեսարաններում բացահայտում է նոր գաղափարներ և կյանքի փիլիսոփայությունը։

1863 թ. սեպտեմբերին Այվազովսկին իր նոր ստեղծագործություններով հանդես է գալիս Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի սրահներում բացված գեղարվեստական ցուցահանդեսում։ Ակադեմիայի պրոֆեսորները, անվանի այլ նկարիչներ և քանդակագործներ այստեղ ցուցադրում եմ մեծ մասամբ բնանկարներ, որոնք պատկերում են իտալական, ռուսական տափաստանների, ուկրաինական, կովկասյան և այլ վայրերի տեսարաններ, անտիկ թեմաներով ու դիցաբանական սյուժեներով նկարներ ու քանդակներ։ Հովհ. Այվազովսկին ցուցադրում է ծովանկարներ։ Այդ ցուցահանդեսի կապակցությամբ ռուսական մամուլում հանդես է գալիս երիտասարդ արվեստագետ Վ. Վ. Ստասովը, որը նշելով մի քանի նշանակալից գործեր, խստորեն քննադատում է ցուցահանդեսում ներկայացված բնանկարները։ «Սա ի՞նչ Իտալիա է, սա ի՞նչ Մալոռուսիա է, ինչ Կավկազներ...,— բացականչում է նա,— ինձ կարող են առարկել, իսկ Այվազովսկի՞ն. ճիշտ այդպիսի հնամոլություն նա չի՞ նկարել։ Այո՛, կպատասխանեմ ես, բայց Այվազովսկու մոտ կա՛, չնայած դրան, իր իսկապես բանաստեղծական ջիղը, կա՛ բռնկում իսկական գեղեցկության և ճշմարտության նկատմամբ, միաժամանակ նա իրենը կատարել է, նա առաջ է մղել ուրիշներին նոր ճանապարհով»[1]։

Վ. Վ. Ստասովի այս ջերմ խոսքը ուղղված էր Այվազով-

---

1 **В. В. Стасов.** Избранные соч., *հ. 1, էջ 123։*

սկու նկատմամբ ժամանակին պարբերաբար կրկնվող անարդարացի հարձակումների դեմ, և որոշակի մատնանշում է նկարչի կարևոր ներդրումը ռուսական արվեստի մեջ՝ «առաջ մղելով ուրիշներին նոր ճանապարհով»։

Այդ նորը Այվազովսկու ստեղծագործություններում արտահայտում էր ոչ միայն մարդուն շրջապատող աշխարհի, մասնավորապես ծովային բնության, ճշմարտացի, ռեալիստական պատկերման, այլև դիցաբանական, ավետարանական և Աստվածաշնչի սյուժեներին աշխարհիկ բովանդակություն տալու, արտաքուստ կրոնա-ավետարանական թեմաները իրական կյանքի խնդիրներին ծառայեցնելու մեջ։ Այդպիսին են, օրինակ, «Ծովի վրա քայլելը», ավետարանական թեմայով նկարները (1863), որոնցից մեկը գտնվում է Թեոդոսիայի պատկերասրահում, մյուսը՝ Պսկովում, 1864 թ. մեկ օրում նկարած «Աշխարհի ստեղծումը» («Արարչագործություն») և հատկապես «Համաշխարհային ջրհեղեղը» մեծակտավ պատկերը 245×319)։

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՋՐՀԵՂԵՂ»

Համաշխարհային ջրհեղեղ» հանճարեղ կտավը, որից երկու օրինակ կա Լենինգրադի ռուսական թանգարանում (փոքրը՝ 196×228 չափի, չի ցուցադրվում), նկարչի երկարամյա որոնումների և ստեղծագործական ինքնայրման արդյունք է՝ համաշխարհային նկարչության զարդերից մեկը։

Դեռևս 1862 թ. նոյեմբերին, պատասխանելով իշխան Դ. Ի. Դոլգորուկովի նամակին, Այվազովսկին ինչպես նշել ենք, գրել էր. «Այժմ ես հրճվանքի մեջ եմ «Համաշխարհային ջրհեղեղ» իմ նկարի համար։ Ես այն համարյա ավարտում եմ, և դա, կարող եմ համարձակ ասել, իմ լավագույն ստեղծագործությունն է»։

Այդ համոզմունքով նա շարունակում է աշխատել երկու տարի ևս և, 1864 թ. ավարտելով այն, նույն տարում նկարած 8 այլ աշխատանքների հետ ցուցադրում է Պետերբուր-

գում բացած իր ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսում։

Մայրաքաղաքի գեղարվեստասեր հասարակայնության վրա ուժեղ տպավորություն է թողնում համաշխարհային ջրհեղեղը պատկերող անսովոր կտավը (246×369)։ Այն փաստը, որ նկարիչը այստեղ պատկերել է ոչ թե ընդհանրապես փոթորիկ կամ ալեկոծման տեսարան, այլ բիբլիական սյուժեով պատկեր, ակրարատ լեռը. մարդիկ ու կենդանիներ ահեղ պահին լեռան գագաթն ի վեր մագլցելիս, ինքնին վկայում է այն մասին, որ Աստվածաշնչի այդ սյուժեն նկարիչը լուծել է որպես ռեալ իրողություն, և դա արել է այնպիսի վարպետությամբ, որ դիտողի մեջ կասկած չառաջանա այդ ողբերգության իրական լինելու։ Նման սյուժեներով ստեղծագործելիս Այվազովսկին ելնում էր այն սկզբունքից, որ այն պետք է պատկերել բնականորեն, պարզ, բոլորին մատչելի և համոզիչ, առանց իդեալականացնելու ռեալ իրականությունը։ Այդ նույն սկզբունքով էլ նկարված է «Համաշխարհային ջրհեղեղը»։ Այն ներկայացնում է մարդկային մեծագույն ողբերգության մի սարսափելի տեսարան։ Կտավի ձախ կողմում, լեռան ժայռոտ բարձունքի վրա, խառնվել, պատսպարվել են բազմաթիվ մարդիկ և կենդանիներ, որոնք քարերից կառչած, ձգտում են դեպի վեր, ջրհեղեղի կատաղի ալիքներից փրկվելու համար։ Բայց ալիքները գալիս են նրանց հետևից և մարդկանց ու կենդանիներից շատերին առել են իրենց պտույտի մեջ։ Համաշխարհային ջրհեղեղը ալեկոծ ծովի նման պատկերված է նկարի աջ կողմի ներքևի մասում։ Նրա վրա կախված սև, մռայլ ամպերով երկնակամարը ավելի է ընդգծում աղետալի պահը։ Ինչպես միշտ, այստեղ ևս դրության ճնշող ծանրությունը փոքր-ինչ թեթևացվում է արևի պայծառ լույսով, որն առկայծում է պատկերի վերևի մի անկյունում՝ ամպերի ճեղքերից՝ լուսավորելով տեսարանի առանձին մասերը։

Այս ստեղծագործության մեջ մարդկային մեծագույն ողբերգությունը նկարիչը բացահայտում է ոչ միայն բնության տարերքի ահեղ տեսարանով, այլև մարդկանց ու նրանց գործողությունների բնութագրմամբ։ Ժայռերի սեպերից կառչած ընտանիքի ծերունի հայրը, ձեռքը երկինք պարզած փրկություն է աղերսում, մի այլ տեղ մահամերձ մի կին փովել է

գետնին՝ վագրի դիակի մոտ, իսկ կապիկն իր ձագերի հետ սարսափահար փախչում է լեռն ի վեր։ Շատ ավելի արտահայտիչ են առաջին պլանում ներկայացված մի խումբ մարդկանց, փղի, արջերի և այլ կենդանիների սարսափահար վիճակի պատկերները։ Վախը այնքան մեծ է, որ գազաններն անգամ անցնելով մարդկանց կողքով, չեն վնասում նրան։ Միայն թագավորը և նրա հոգևոր առաջնորդը, որոնք պատկերված են բարձունքի ծայրին՝ փղի վրա նստած, ներկայացված են ոսկեգույն իրերով ու զարդարանքներով։ Ակամայից հիշում ես Կ. Պ. Բրյուլովի «Պոմպեյի վերջին օրը» հանճարեղ կտավը, որի մեջ ևս ներկայացված է մի այդպիսի էպիզոդ՝ տաճարի քուրմը, հանդրային գանձերը թևի տակ պահած, փախչում է այն պահին, երբ աղետի ենթարկվածները օգնում են միմյանց։ Կյանքի այս կողմերը պատկերելով՝ Այվազովսկին բավական հեռանում է Աստվածաշնչի կրոնական գաղափարախոսությունից։ Այդ հանճարեղ ստեղծագործության մեջ նկարիչը վերարտադրել է ռեալ իրականության ողբերգական անցքերը։

Աստվածաշնչի սյուժեով այս պատկերը իր հարուստ բովանդակությամբ, գաղափարական նպատակասլացությամբ և բարձր արվեստով լայն ճանաչում է գտնում ժամանակին։ Դա րխում էր նաև ժամանակաշրջանի դեմոկրատական խավերի գաղափարական ձգտումներից և ապացուցում, որ Ծովանկարիչ Հովհ. Այվազովսկին իր լավագույն ստեղծագործություններով ընթանում էր դարաշրջանի առաջավոր մտածողների շարքում։

Ծովանկարչի առաջադիմության, նրա ռեալիստական հակումների մասին է վկայում 1864 թ. նկարած «Ծովը» մեծակտավ աշխատանքը (109×108), որ պատկերում է գիշերային անհանգիստ ծովը։ Սև ծովի վրա կախված ծանրախիտ ամպերի արանքից երևացող լուսնի ճառագայթները ոսկեզօծել են առափնյա կապտականաչավուն ալիքները և հսկա ժայռերը։ Միայնակ առագաստանավը, քամու ուժեղ ճնշումից մի կողմի վրա թեքված, մոտենում է ծովափին, ուր նստած են երկու մարդ։ Մեծ ոգեշնչությամբ նկարված այս հուզական պատկերը խորապես ռեալիստական է։ Ջրի, մանավանդ նրա փրփրակալած ալիքների շարժումը, ծովի խորությունն ու անծայրությունը տրված են այնպիսի ուժով և արտահայտչականու-

թյամբ, որ դիտողն իրեն զգում է ծովափին, այդ շարժուն ջրերին մոտիկ։ Կենդանությամբ են շնչում նաև «Ծովափը առավոտյան», «Մառախլապատ առավոտ Իտալիայում» (Թեոդոսիա), «Արալչագործություն», «Բոսֆորի տեսարանը» «Սեվաստոպոլ), «Ծովի տեսարանը լեռներից» (Լենինգրադ), «Յալթա» և 1864 թ. նկարած այլ աշխատանքներ։

Հաշվի առնելով Հովհ. Այվազովսկու ստեղծագործական աճը և բեղմնավոր գործունեությունը, ինչպես նաև 1864 թ. Պետերբուրգում բացված նկարչի անհատական ցուցահանդեսի հաջողությունները, գեղարվեստի ակադեմիայի փոխպրեզիդենտ Գ. Գ. Գագարինը շնորհակալություն է հայտնում նկարչին և միաժամանակ հայտնում, որ ԴԱ վարչությունը նրան ներկայացրել է պարգևատրման։ Շատ չանցած՝ 1865 թ. փետրվարին, Հովհ. Այվազովսկին պարգևատրվում է սբ. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանով։

«ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԱՆՈՑ»

1865 թ. սկզբներին Հովհ. Այվազովսկին կրկին սկսում է զբաղվել իր արվեստանոցին առընթեր նկարչական դպրոց բացելու հարցով։ Այդ նպատակով նա կազմում է ապագա ուսումնարանի համար նոր ծրագիր և Պետերբուրգ է ուղարկում մի զեկուցագիր, որով խնդրում է Ռուսաստանի հարավային երկրամասի երիտասարդության գեղարվեստական կրթության գործը թեթևացնելու նպատակով իր արվեստանոցին կից նկարչական դպրոց բացելու թույլտվություն։

Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի խորհուրդը հավանություն է տալիս նրա ծրագրին։ Միաժամանակ պրեզիդենտը դիմում է լուսավորության մինիստրությանը և նրանց միջոցով թագավոր-կայսրին, պրոֆ. Այվազովսկուն ակադեմիայում ծառայության վերցնելու խնդրով։ Մարտի 3-ին մինիստրությունից հայտնում են, որ թագավոր-կայսրը համաձայնվել է Այվազովսկուն ընդունել ակադեմիայում ծառայության պրոֆեսորի բոլոր իրավունքներով, սակայն առանց

աշխատավարձի։ Մի քանի օր հետո՝ մարտի 8-ին, նրան տրվում է պետական խորհրդականի աստիճան և իրավունք իր տնօրինությամբ գեղարվեստական ուսումնարան բացելու համար։

Դրանից հետո Այվազովսկին թերթում հայտարարություն է հրապարակում նկարչական դպրոցի վերաբերյալ։ Նվ շատ չանցած Ղրիմի և Ռուսաստանի տարբեր ծայրերից Թեոդոսիա են գալիս արվեստասեր պատանիներ, շուրջ երկու տասնյակ ջնորհալիներ, որոնցով կազմվում է առաջին դասարանը։ Նորակազմ նկարչական դպրոցին տալով «Ընդհանուր գեղարվեստական արվեստանոց» անունը՝ Այվազովսկին սկսում է իր մանկավարժական աշխատանքը, իրականացնելով վաղուց փայփայած իղձը՝ իր արվեստն ու վարպետությունը ծառայեցնել նոր սերնդի գեղարվեստական դաստիարակությանը։

Հովհ. Այվազովսկու «Ընդհանուր գեղարվեստական արվեստանոցը» դառնում է առաջին գեղարվեստական ուսումնարանը հայ մշակույթի պատմության մեջ։ Այդ նախաձեռնությամբ փաստորեն սկզբնավորվում է նոր, երիտասարդ սերնդի գեղարվեստական-գեղագիտական դաստիարակության գործը 19-րդ դարի հայ իրականության մեջ։ 18 տարի հետո՝ 1883 թ. Կոստանդնուպոլսում մեծատաղանդ քանդակագործ Երվանդ Ոսկանի ջանքերով ու նրա տնօրինությամբ բացվում է գեղարվեստական դպրոց նկարչության և քանդակագործության բաժիններով, ընդլայնելով կերպարվեստի մասնագիտական կրթության գործը ազգային գեղարվեստական մշակույթի մեջ։

«Ընդհանուր գեղարվեստական արվեստանոցում» Հովհ. Այվազովսկու սկսած նոր, նրա համար անսովոր մանկավարժական աշխատանքը, սակայն, բնավ չի խանգարում ստեղծագործական գործունեությանը։ 1865 թ. Այվազովսկին նկարում է բազմաթիվ նոր պատկերներ, որոնցից մեզ է հասել ավելի քան 17 ստեղծագործություն, մեծ մասամբ ծովանկարներ և մի քանի ցամաքային բնության ու կենցաղային պատկերներ, ինչպես օրինակ, «Վարը», «Գումակը ձմռանը», «Բայրամի տոնակատարության օր Կոստանդնուպոլսում գիշեր ժամանակ» և ուրիշները։ Հայաստանի պետական պատկերասրահում է գտնվում «Արևածագը Թեոդոսիայում» պատկերը (97×39)։ Դա ներկայացնում է ծննդավայր քաղաքի ծովափն-

14. Մեծ ծովանկարչի հյանքը

յա շրջանը վաղ առավոտյան՝ արշալույսին։ Արևի առաջին ճառագայթներն աղոտ կերպով լուսավորել են եղնականարը հորիզոնի մոտ, ծովափի բարձունքի եզրերը և սյտեղ եղած աղբյուր-հուշարձանից կժերով ջուր տանող կանանց ֆիգուրները։ Պատկերի գունային գամմայում իշխող սարդագույնը, ծովափնյա ջրերի բաց կապտավունի երանգային լուծման հետ պատկերին տալիս են խաղաղ այգաբացի տրամադրություն։

«ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՊԱՏԿԵՐԸ

1866 թ. գարնանը Այվազովսկին Թեոդոսիայում ստանում է Բրուսա քաղաքի և նրա շրջակայքի (Արևմտյան Հայաստան) հայ բնակչության հոգևոր առաջնորդ Գևորգի ապրիլին գրած նամակը, որով հայտնվում է տեղի հայոց եկեղեցին հրդեհվելու և վերաշինվածի համար սբ. Գրիգոր Լուսավորչի պատկերը նկարելու ցանկության։ Այդ նամակը մեզ չի հասել։ Պահպանվել է միայն նկարչի պատասխանը։ «Ամենապատիվ սրբազան տէր,— գրում է Հովհ. Այվազովսկին 1866 թ. մայիսի 30-ին,— ընկալեալ զպատուական նամակ սրբութեանդ որի 6 ապրիլի, և անտի տեղեկացեալ ցաւալի հրկիզութեան քաղաքիդ և եկեղեցւոյդ։ Կամավոր յօժարութեամբ յանձն առնում աւասիկ զկատարումն առաջարկութեան սրբի դիտապատիդ, նկարելով պատկեր մի սրբոյն Գէորգայ վասն սեղանոյ նորաշէն եկեղեցւոյ քաղաքիդ՝ ըստ հանգամանացն նշանակելոց ի Ձերմէ սրբութենէդ։ Ակն ունիմ զի ըստ ցանկութեան սրտի մերոյ և Ձեր յաջողեսցէ տէր ի գլուխ հանել ըստ արժանւոյն զայն վաստակ, որով անշուշտ հաղորդակից գտայց և ես ընդ Ձեզ Աստուածած իր պարգևաց՝ բարեխոսութեամբ քաջայաղթ անուանակցին Ձերոյ։ Հայցելով զօրհնութիւն ամենապատիւ տերութեանդ, մնամ խոնարհ ծառայ Օհաննէս Այվազովսկի»[1]։

Այս նամակից պարզ երևում է, որ աքվեստագետը

---

[1] «Документы...», *էջ 147—148։*

նկարում է սբ. Գրիգոր Լուսավորչի պատկերը և ուղարկում Բրուսա, ուր ընդունում են մեծ գոհունակությամբ։ Այդ մասին է վկայում հետագայում ամենայն հայոց կաթողիկոս ընտրված նույն Գևորգի (Գևորգ 4-րդ) 1867 թ. հունիսի 1-ին գրած նամակը, որն իր շնորհակալական խոսքում բարձր է գնահատում Այվազովսկու ծառայությունը, որպես «բարեպաշտ և ճշմարտապես ազգասեր», որի «գործովք պարծանաւ և փառս յավելումն ազգիս», իսկ նրա ստեղծագործությունը՝ «զգեղանկարն ասեմ պատկեր սրբոյն Գեորգայ՝ զարդիւնս չնաշխարհիկ հանճարոյդ ձերոյ և ճարտարութեանն»։ Նկարչի այդ նոր ստեղծագործության օծումը և տեղադրումը հայոց եկեղեցում լայն արձագանք է գտնում արևմտահայության շրջանում, և Այվազովսկին ավելի ու ավելի է ճանաչվում հայ ժողովրդի կողմից որպես «ճշմարտապես ազգասեր»։

1866 թ. նկարած սբ. Գրիգոր Լուսավորչի այս պատկերի մասին արվեստագիտության մեջ առ այսօր չի նշվել, թեև հիշատակվել է մեր հրապարակած փաստաթղթերում։ Նկարիչը հետագայում ևս նկարում է հայկական թեմաներով նոր կտավներ։ Սբ. Գրիգոր Լուսավորչի պատկերի ստեղծման փաստը և ժամանակակիցների գնահատականը՝ «զարդիւնս չնաշխարհիկ հանճարոյդ ձերոյ և ճարտարութեան», ինքնին վկայում են, որ Այվազովսկին 1860-ական թվականներին «կամավոր հոժարությամբ» և «ըստ ցանկութեան սրտի մերոյ» նկարում է հարազատ ժողովրդի պատմությանը և հավատքին վերաբերվող պատկերներ։

ՆՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՐ

Այս շրջանում, սակայն, Այվազովսկին ավելի շատ նկարում է ծովային տեսարաններ։ 1865—1866 թվականներին նրա ստեղծած ծովանկարներից առավել հայտնի են «Յալթայի տեսարանը երեկոյան» և «Հանգիստ ծովը»։ «Փոթորիկ գիշեր ժամանակ» պատկերը (1865) ներկայացնում է ծովային բնության ահեղ տեսարան։ Մութ գիշեր է։ Սև ու

Հռայլ ամպերի տակից երևացող լուսնի աղոտ շողերը հազիվ են լուսավորել անհուն և անծայր ծովի կենտրոնական մասը։ Այստեղ լուսնի գծած ճանապարհի առաջին և վերջին ծայրերում երևում են խորտակվող նավից ծովը թափված մարդիկ, որոնք ջուրն ընկած կայմի մի բեկորից կառչած, փրկություն են աղերսում։ Այստեղ էլ, ինչպես նախորդ ստեղծագործություններում, ահեղ վտանգի պահին միմյանց օգնելու մոտիվը կրկին գտել է իր որոշակի արտահայտությունը։ Կատաղի ալիքների մեջ մի բեկորից կառչած մարդկանց ֆիգուրները նկարիչը պատկերել է խոր զգացողությամբ։ Պատկերը հագեցված է ուժեղ շարժումով։ Բարձր ստեղծագործական պաթոսը ավելի հստակ է դարձնում նկարչի մտահղացումը և ստեղծագործության գաղափարական իմաստը։

Հայաստանի պետական պատկերասրահում է գտնվում «Թեոդոսիայի տեսարանը», որը պատկերում է արևամուտը ծննդավայրում։ Հեռավոր հորիզոնում երկինքը գունագեղ է, մայր մտնող արևը շիկնել է, և նրա ոսկեսփյուռ ճառագայթները գեղեցիկ լուսե ճանապարհ են գծել խաղաղ ծովի կոհակների վրա։ Նկարիչն այս անգամ Թեոդոսիան պատկերել է մի այլ դիտակետից. ծովափը և քաղաքի ընդհանուր տեսարանը զետեղել է կտավի աջ կողմում, հնամենի բարձր աշտարակի հետ, որն առաջին պլանում ուժեղ ընդգծված լինելով, անմիջապես գրավում է դիտողի ուշադրությունը։ Նա պատկերին հաղորդել է որոշ կենցաղային բնույթ. մի խումբ մարդիկ նավակ նստած դուրս են եկել իրիկնային զբոսանքի, իսկ նրանցից քիչ հեռու առագաստանավը խարիսխ գցած կանգնել է ծովափին։

Արևածագի կամ իրիկնամուտի և ընդհանրապես բնության անցողիկ գունագեղ պահերի տեսարանները Այվազովսկու սիրած մոտիվներն են։ Ջերմ բանաստեղծականությամբ է հանգեցված նաև «Արևածագը Թեոդոսիայում» կտավը, որը ներկայացնում է ծովափնյա տեսարան վաղ առավոտյան։ Այստեղ էլ նկարիչը բնության նուրբ զգացողությամբ վերարտադրել է ջրերի վրա վաղորդյան արևի առաջին ճառագայթների արտացոլքը, նշելով հանդարտ ծովի ջրերի վրա լուսավոր մի ճանապարհ, որն իր աշխույժ փայլով կարծես

ազդարարում է տաք օրվա այգաբացը արևելյան ծովափնյա քաղաքում։

Այս, ինչպես և 1865—1866 թթ. աշխատանքները մեզ հասած ավելի քան քսան ստեղծագործություններ նկարիչը սկզբում ցուցադրում է իր տանը, իսկ հետո քրոջ որդու՝ Լևոն Մազիրյանի միջոցով մի մասը ուղարկում է Պետերբուրգ, ակադեմիայի աշնանային ցուցահանդեսի համար։

Միաժամանակ նա Պետերբուրգ է ուղարկում «Ընդհանուր գեղարվեստական արվեստանոցի» աշակերտներ Ֆեսլերի, Ալթունջիի և Կոնդոպուլոյի նկարչական աշխատանքները, դրանց վրա հրավիրելով գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսորների ուշադրությունը։ «Ներկայացնելով իմ աշակերտների առաջին աշխատանքները ակադեմիայի խորհրդին,— գրում է նկարիչը,— ես խոնարհաբար խնդրում եմ խորհրդին առաջին ագամ ցուցաբերել զիջողամտություն և խրախուսանք իմ աշակերտների նկատմամբ, որով ես իսկապես վարձատրված կզգամ։ Եթե խորհուրդը հարմար համարի առաջինի (Ֆիսլերի) ծրագիրը նկարչի կոչմանը արժանի, ապա, ես շատ ուրախ կլինեմ»[1]։ Այվազովսկին տեղեկացնում է նաև, որ 1865 թ. Պետերբուրգից վերադառնալուց հետո, ծննդավայրում ընդհանուր գեղարվեստական արվեստանոց-ուսումնարան բացելով «մինչև այժմ մի քանի պատանիներ պարապում են իմ ղեկավարությամբ սկզբում գեղանկարչության բնօրինակից, բնորդից, և վերջապես յուղանկարչություն։ ...Նրանք նկարել են ծրագրային առաջադրանքներ՝ առաջինը՝ Սուդակի հովիտը, երկրորդը՝ Սուդակի ծովափը, իսկ երրորդը՝ Թեոդոսիայի տեսարանը։ Ծրագրային երեք խնդիրները նկարվել են իրենց կողմից սկզբից մինչև վերջ»[2]։ Գեղարվեստի ակադեմիայի խորհուրդը հավանություն է տալիս ակադեմիկոս Հովհ. Այվազովսկու ձեռնարկությանը և խրախուսում է նրա աշակերտներին։

1866 թ. սեպտեմբերին Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի ցուցասրահներում բացված ցուցահանդեսում Այվազովսկու ուղարկածներից միայն հինգ ստեղծագործություն

---

1 «Документы...», էջ 148—149։

1 Նույն տեղ։

է ցուցադրվում։ Թեև նկարիչը նամակով խնդրել էր, որ դրանց ց երեքը կամ երկու մեծ պատկերներ ընտրել Փարիզ ուղարկելու համար, սակայն ակադեմիայի խորհուրդը նպատակահարմար է գտնում ընտրել դրանցից մեկը՝ «Լուսնյակի լույսը» մեծակտավ աշխատանքը, որը և ուղարկվում է Փարիզի համաշխարհային ցուցահանդես։

«ԿԻՊՐՈՍ ԿՂԶԻՆ»

1860-ական թվականներին Այվազովսկին ստեղծում է նաև բազմաֆիգուր սյուժետային պատկերներ, ցամաքային բնության և կենցաղային տեսարաններ ներկայացնող ստեղծագործություններ։ Առանձնապես նշանակալից է «Կիպրոս կղզին» մեծակտավ աշխատանքը (1867)։ Դա ներկայացնում է կղզու ծովափնյա մասը։ Հույն բնակիչները հրաժեշտ տալով իրենց հարազատներին, երկար շարքերով գնում են դեպի ծովափին կանգնած ռուսական նավը։ Պատկերն արտացոլում է հույն ժողովրդի ազատագրական պայքարից մի տեսարան։ Կղզում շուտով տեղի է ունենալու մեծ ճակատամարտ թուրք զավթիչների և հույն հայրենասերների միջև։ Այդ պատճառով գաղթողների մեծ մասը կանայք, ծերեր և երեխաներ են։ Մի կին բաժանման պահին համբուրվում է ամուսնու հետ։ Մի ծերունի չի ուզում հեռանալ իր հարազատ, պապենական տնից, մի քանի կանայք բռնել են ուշագնաց մի այլ կնոջ։ Գաղթական հույների նոր քարավաններ են իջնում ծովափ։ Կղզուց հեռացող հույն բնակիչների տարբեր հոգեվիճակների պատկերումով նկարիչը ձգտել է դրամատիկ դարձնել հրաժեշտի տեսարանը։

Այդ ստեղծագործության մեջ ամբողջ գործողությունը տեղի է ունենում իրիկնային բնության գրկում։ Արևը մայր է մտնում։ Նրա վերջին ճառագայթները ոսկեզօծել են հորիզոնը և ծովափնյա ծառերի գագաթները։ Ծովափն արդեն սուզերի մեջ է։ Արևամուտի վարդագույն երկինքը արտացոլվել է ծովի ջրերի մեջ և ստեղծել հմայիչ տեսարան։ Ամբողջ պատկերը կառուցված է դեղնանարնջագույն և կապույտ

գույների հարաբերության վրա։ Ներկապնակի միայն մի քանի գույներով Այվազովսկին ստեղծել է ջերմ, արտահայտիչ պատկեր, հիանալիորեն վերարտադրելով հեռավարության-ները, երկնքի խորությունը, ամպերի թեթևությունը, ապա-ռաժները և ծովի ալիքների մեջ թափանցած լույսը։ Պատկերի բոլոր մասերը տրամաբանորեն կապված լինելով միմյանց, ուժեղացնում են հրաժեշտի տեսարանի դրամատիզմը։ Ռեալիստորեն պատկերելով իրականությունը, նկարիչը, սակայն, անտարբեր չի ներկայացնում այն։ Այստեղ ևս, ինչպես և նրա մյուս լավագույն ստեղծագործություններում, Այվազովսկին սյուժեն բացահայտել է լավատեսական ոգով՝ հավատացած, որ հույների, այստեղ հնուց բնակություն հաստատած հայերի և մյուս քրիստոնյա բնակիչների ապստամբությունը թուրքական զավթիչների դեմ վերջ ի վերջո ավարտվելու է հաղթանակով։ Նկարիչը պատկերը ողողել է լույսերով և իրիկնապահի արևի շերմ ճառագայթ-ներով, որոնք նրա գործերում հույսի, փրկության, ազատու-թյան խորհրդանիշեր են։ Նկարչի համակրանքը կիպրոս-ցիների ապստամբության նկատմամբ արտացոլում է գտել նաև նույն տարում նկարած «Բայրոնի այցը Հունաստան» պատկերի մեջ։ Այդ հավատը և խորին համակրանքը ազա-տագրական շարժման նկատմամբ նկարիչն արտահայտել է նաև իր նամակներում։ 1867 թ. մարտի 8-ին Պ. Մ. Տրետ-յակովին ուղղած նամակում Այվազովսկին գրում է. «Այժմ ես զբաղված եմ կիպրոսցիների ապստամբության թեմայով պատկերներ նկարելով։ Ավարտեցի մի մեծ պատկեր, որը ներկայացնում է Արկադիո վանքի (Կիպրոս կղզում) պայթ-յունը։ Թուրքական բարբարոսության ամբողջ սարսափները ես շատ ուժեղ ցուցադրել եմ այդ պատկերի մեջ։ Նկարել եմ կիպրոսյան թեմայով երկու պատկեր ևս, մեկը պատկերում է, թե ինչպես է ռուսական նավատորմը ընդունում դժբախտ հույներին, մյուսը՝ թե ինչպես հունական շոգենավը գիշերը ափ է իջեցնում ապստամբներին։ Սյուժետը գունանկար-չական է և հենց իմ հոգուն մոտ»[1]։

---

[1] Տրետյակովյան պատկերասրահի արխիվ։ Պ. Տրետյակովի ֆոնդ, №. 1, թ. 394։։

Հովհ. Այվազովսկին նոր էր ավարտել կիպրոսցիների ապստամբության թեմաներով իր վերջին նկարը, երբ հուլիսի սկզբներին հրավեր է ստանում Ռուսաստանի կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայից՝ ուղեկցել իրեն դեպի Կոստանդնուպոլիս կատարելիք ծովային ճանապարհորդության ընթացքում։ Նկարիչը ընդհատում է պլանավորած աշխատանքը և մեկնում Սևաստոպոլ, որտեղ միանալով Պետերբուրգից ժամանած կայսրուհու շքախմբին, նրանց հետ ճանապարհվում է Կոստանդնուպոլիս։ Ճբոսաշրջիկները այցելում են Թուրքիայի մայրաքաղաքի արժանահիշատակ վայրերը, դիտում բնության գեղանկարչական տեսարաններ, պալատներ ու առանձնատներ և, միանգամայն գոհ, վերադառնում են հայրենիք։ Ավելի քան երեք շաբաթ տևած ճանապարհորդության ընթացքում կայսրուհին, կայսերական տան մյուս անդամներն ու շքախումբը չափազանց սիրալիր են վերաբերվում նկարչին, որը ոչ միայն ուղեկցում, այլև ներկայացնում ու բացատրություններ էր տալիս այն ամենի մասին, ինչ հանդիպում էր նրանց ճանապարհորդելիս։

Վերադարձին, Սև ծովով նավարկելիս, կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնան ցանկություն է հայտնում լինել Թեոդոսիայում, տեսնել նկարչի նոր ստեղծագործությունները։ «Կայսրուհու ժամանելու օրը,— պատմում է նկարիչը,— Թեոդոսիա քաղաքը ամբողջապես զարդարվել էր դրոշակներով ու ծաղիկներով։ Իմ տան առջև պատրաստվել էր կանաչ ճյուղերից և ծաղիկներից կազմված հաղթական կամար։ Շոգենավը, որով գալիս էր կայսրուհին, ափից երկու վերստ հեռավորության վրա հանդիպում է մի մոտորանավակի, իսկ նրա հետևից եկող չորս գեղեցիկ գոնդոլներ շոգենավի շուրջը, ծովի ջրերի վրա, ծաղիկներ են շաղ տալիս։ Կայսրուհու հետ ափ են ինջնում նրա շքախմբի անդամներ՝ կոմսուհի Ա. Ա. Տոլստայան, տիկին Պոտանովան, կոնտր-ծովակալ Սոկոլկովը, Դ. Ս. Արսենևը, լեյբ-բժիշկ Ֆ. Կարբելը և ուրիշներ, որոնք ուղևորվում են Այվազովսկու տունը։ Այստեղ նկարիչը հյուրերին ներկայացնում է իր ընտանիքի անդամ-

ներին, որից հետո բակում մեծ սեղան է բացում, և տեղի է ունենում ճոխ ճաշկերույթ։

...Կայսրուհու այցը Թեոդոսիա վեր է ածվում տոնակատարության, որը շարունակվում է մինչև ուշ գիշեր։ Հաջորդ օրը, հյուրերի մեկնելու ժամանակ, Այվազովսկին Մարիա Ալեքսանդրովնային նվիրում է իր ստեղծագործություններից մեկը, որը պատկերում է տոնական օր Թեոդոսիայում։ Հասնելով Յալթա՝ Մարիա Ալեքսանդրովնան այստեղից հեռագրով շնորհակալություն է հայտնում նկարչին ճանապարհորդության և հյուրընկալության ժամանակ իրեն՝ նորին մեծության թագուհի-կայսրուհուն, բավականություն պատճառելու համար[1]։

ՇՆՈՐՀԱԼԻՆԵՐԻ ՀԵՏ

Հյուրերին ճանապարհելուց հետո Այվազովսկին վերսկսում է ստեղծագործական աշխատանքը։ Ճանապարհորդության ընթացքում նա նկարել էր մի շարք էտյուդներ և գծանկարներ, որոնցից մի քանիսի հիման վրա ստեղծում է նոր պատկերներ։ Նա նկարում է «Մովային տեսարան», «Մովը» կտավները։

Այդ ժամանակ Մարիուպոլի խոշոր վաճառական Ամորետտին հայտնում է Այվազովսկուն, որ 25-ամյա հույն Արխիպ Իվանովիչ Կուինջին ունի նկարչական ընդունակություններ և խնդրում է նկարչի հովանավորությունը։ Հովհ. Այվազովսկին հրավիրում է երիտասարդին իր մոտ, ծանոթացնում նկարչության նախնական գիտելիքներին և հանձնարարում է պատճեններ նկարել։ Ա. Ի. Կուինջին այդ առաջադրանքը կատարում է Այվազովսկու աշակերտ Ա. Ի. Ֆեսլերի ղեկավարությամբ։

Ավելի քան չորս ամիս «Ընդհանուր գեղարվեստական արվեստանոցում» պարապելուց հետո Ա. Ի. Կուինջին մեկնում է Մարիուպոլ, ապա՝ Պետերբուրգ և 1868 թ. ընդունվում է գեղարվեստի ակադեմիա։ Մեծ ծովանկարչի հոգատարությունը

---

[1] «Русская старина», *1878, հ. 23, էջ 283—285։*

Նույն շրջանում արտահայտվում է նաև հայ նշանավոր նկարիչ Վարդգես Սուրենյանցի (1860—1921) նկատմամբ։ «Առաջին ներկերը Այվազովսկին է նվիրել Վարդգես Սուրենյանցին»,— գրում է նկարչի քույրը[1]։ Դա տեղի է ունենում 1867 թ. աշնանը։ Այդ ժամանակ Սիմֆերոպոլում ապրող Սուրենյանցների ընտանիքը բարեկամական հարաբերությունների մեջ գտնվելով Այվազովսկու հետ, մի անգամ նկարչի հետ մեկնում են Բախչիսարայ։ Այստեղ Վարդգեսի վրա «ուժեղ տպավորություն թողեց հոչակավոր շատրվանը, որի վրա բեհեռվել էր նրա ուշադրությունը։ Տուն վերադառնալուն պես նա իր տեսածը անմիջապես նկարեց մատիտով և այնքան մանրամասնորեն, որ Այվազովսկին նրա վրա ուշադրություն դարձրեց, նկարչական մեծ ապագա գուշակեց և առաջին ներկերը նվիրեց նրան»[2]։ Մոսկվայում և Մյունխենում պրոֆեսիոնալ բարձր կրթություն ստացած նկարիչ Սուրենյանցը հետագայում հաճախ է այցելում մեծ հայրենակցին, իսկ 1899 թ. իր նկարազարդումներով հրատարակված Ա. Ս. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» գիրքը նա երախտագիտական ջերմ ձակագրությամբ նվիրում է Հովհ. Այվազովսկուն։

Հովհ. Այվազովսկուն երախտագիտությամբ են հիշում նաև այն անձինք և հիմնարկները, որոնց նկարիչը ժամանակին պատկերներ է նվիրել։ Դրանցից են, օրինակ, Ռուսական ռազմածովային մինիստրությունը և դրան առընթեր ծովային թանգարանը։ 1867 թ. նոյեմբերի 9-ին Հովհ. Այվազովսկին դիմում է ծովակալ Ի. Կ. Կրաբբեին, խնդրելով ընդունել որպես նվեր իր երկու ստեղծագործությունները ծովային վարչության թանգարանի համար։ Դրանցից մեկը պատկերում է «Ինգերմանլանդ» նավի կործանումը»։ Դրա հետ մեկտեղ, գրում է նկարիչը, «ես իմ պարտքն եմ համարում ավելացնել, որ վերադառնալուց հետո կնկարեմ «Սևաստոպոլի պաշարումը» պատկերը դարձյալ նույն թանգարանի համար»։

---

1 Վ. Սուրենյանցի ստեղծագործությունների համահավաք ցուցահանդեսի կատալոգ, Եր. 1981, էջ 8։

2 Նույն տեղը։

1868 թվականի աշնանը Հովհ. Այվազովսկին մեկնում է Անդրկովկաս։ Նա սկզբում լինում է Հյուսիսային Կովկասում՝ Վլադիկավկազում և Հյուսիսային Դաղստանում։ Ապա Դարյալի կիրճով ճանապարհվում է դեպի Անդրկովկաս։ Այցելում է նաև օվափսյա բազմաթիվ հայաբնակ քաղաքներ։ Ավելի քան երկու ամիս մնում է Թիֆլիսում։

Թիֆլիսն այն ժամանակ Կովկասի վարչական կենտրոնն էր։ «Ասիայում ռուսական իշխանության կենտրոնական այդ վայրը»[1] 19-րդ դարի կեսերին արդեն դարձել էր հայ մշակույթի խոշոր օջախներից մեկը։ 19-րդ դարում, առանձնապես 1860—70-ական թվականներին, հայերն այստեղ կազմում էին ազգաբնակչության մեծամասնությունը։ Այն ժամանակ, երբ ծովանկարիչը հյուր էր Թիֆլիսում, քաղաքային ինքնավարությունը (վարչությունը) գերազանցապես ներկայացնում էին հայերը։ «Այս ժամանակ,— գրում է վրացի պատմաբանը,— տեղական բուրժուազիան, որը բաղկացած էր բացառապես հայ կապիտալիստներից, զգալիորեն ամրացել էր և խաղում էր առաջին ջութակի դերը քաղաքային կյանքում, լայն ու ակտիվ մասնակցություն ունենալով հատկապես քաղաքային ինքնավարության մեջ»[2]։

Հայ մտավորականությունը, որի մի մասը համախմբված էր Թիֆլիսում, ջերմ ընդունելություն է ցույց տալիս մեծ հայրենակցին։ Թիֆլիսում Հովհ. Այվազովսկին ապրում է թամամշյանների առանձնատանը։ Այստեղ մի ընդարձակ սենյակ ընտրելով որպես արվեստանոց, նկարիչը վաղ առավոտից մինչև երեկո աշխատում է։ Նկարչի աշխատասիրությունը, նրա համառ, երկարատև, երբեմն անընդմեջ ստեղծագործական աշխատանքը զարմանք է պատճառում ոչ միայն հյուրընկալ թամամշյաններին, որոնք մտահոգված էին իրենց բանկային գին հյուրի հանգստի համար, այլև նրանց հարևան-

---

[1] К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, *Մոսկվա, 1933, հ. 10, էջ 555։*

[2] Ш. Цхетия, Армяне в Тбилиси в шестидесятых годах XIX века, *տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 161—167։*

ներին, որոնք նո յնպես հիացած նկարչի աշխատասիրությամբ, իրենց զավակներին, ծառայողներին և աշակերտներին, որպես աշխատասիրության լավագույն օրինակ, նրան են մատնացույց անում։ Նկարիչ Գ. Բաշինջաղյանը այդ մասին գրում է. «Այվազովսկին ապրում էր Վլ[illegible]ամինովսկայա փողոցում՝ Թամամշյանի տանը։ Ուղիղ նրա դիմաց այդ միջոցին Հ. Քաթանյանը տուն էր կառուցում, և երբ նա իր անբարեխիղճ վարպետներին պախարակում էր առավոտները գործի ուշ գալու համար, մատնացույց էր անում դիմացի պատուհանի մոտ նստած Այվազովսկուն, որը, վրձինը ձեռքին, լուսադեմից սկսած մինչև երեկո չէր հեռանում նկարակալից»[3]։

Այստեղ Այվազովսկին կարճ ժամանակամիջոցում ստեղծում է բազմաթիվ պատկերներ։ Բարեբախտաբար պահպանվել է Այվազովսկու ճանապարհորդական ալբոմներից մեկը, որը գտնվում է Թեոդոսիայում։ Նրա մեջ նկարիչը մատիտի թեթև հպումով գծանկարել է իր անցած ճանապարհի գեղատեսիլ վայրերը, կովկասյան բնության բազմազան տեսարաններ, մեծ մասամբ լեռնային բնության պատկերներ՝ դիտված բարձր կետերից։ Թամամշյանների հյուրընկալ տանը, հանգիստ պայմաններում, ճանապարհին կատարված ճեպանկարների հիման վրա Այվազովսկին ոգեշնչված ստեղծում է նոր կտավներ, որոնցից 12-ը նա ցուցադրում է Թիֆլիսում։ Ցուցահանդեսի մուտքի ամբողջ գումարը նկարիչը հատկացնում է քաղաքի մանկատանը։ Բարեգործական այդ քայլն ավելի է բարձրացնում ցուցահանդեսի նշանակությունը և հետաքրքրությունը նրա նկատմամբ։

Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսը մեծ ընդունելություն է գտնում ոչ միայն մտավորականության, այլև քաղաքային ազգաբնակչության բոլոր խավերում։ Բոլորը, ներառյալ դպրոցականները, խմբերով այցելում են Այվազովսկու պատկերների ցուցահանդեսը և հիանում նրա բարձրարվեստ ստեղծագործություններով։ Այդ ցուցահանդեսը բարձր է գնահատվում ոչ միայն հայերի, այլև Թիֆլիսի ողջ բնակչության կողմից։

---

3 «Մշակ», 1900, №97։

Նկարչի պատվին այստեղ կազմակերպվում է ճոխ ճաշկերույթ 200 մարդու մասնակցությամբ, որի ժամանակ Այվազովսկուն հյուրասիրում են ոսկյա երիզ ունեցող եղջրափողով գինի։ Նկարչին շատ է ուրախացնում հյուրասիրության այդ ձևը։ Նա քաղաքային ինքնավարությանը նվիրում է երկու նկար («Պետերբուրգի տեսարան» և «Գունիբ») և միաժամանակ առաջարկում է կովկասյան մարտերի հերոս Կոտլյարևսկու հիշատակին Թեոդոսիայում հուշարձան կանգնեցնելու համար հանգանակություն կատարել։ Նկարչի խոսքերից հետո, հենց տեղում, հավաքվում է 3000 ռուբլի։

Հովհ. Այվազովսկու պատվին կազմակերպված այդ հանդիսումը և նրա ստեղծագործությունների ցուցահանդեսը կարևոր նշանակություն ունեցան ինչպես նկարչի ստեղծագործական կյանքում, այնպես էլ հայ գեղարվեստական մշակույթի պատմության մեջ։ Հովհ. Այվազովսկու ճանապարհորդությունը Անդրկովկասի հայաբնակ քաղաքներ և մանավանդ նրա այցը Թիֆլիս, խորապես օգնում են նկարչին մոտիկից տեսնելու և ճանաչելու իր հարազատ ժողովրդին, նրա կյանքն ու կենցաղը, հայկական բնակավայրերը, բնության առանձնահատկությունները։

Անդրկովկասում ճանապարհորդելը հատկանշվում է նաև նրանով, որ 1868 թվականին և հետագայում ծովանկարիչը նկարում է բազմաթիվ պատկերներ Կովկասի լեռնային բնության տեսարաններից («Դարյալի կիրճը», «Կովկասյան լեռների շղթան», «Թիֆլիսի տեսարանը», «Ռիոն գետը», «Փոթիի նավահանգիստը», «Սուխումի արևելյան ծովափը», «Դաղստանի տեսարանը», «Ջնայի փլվածք կազբեկի մոտ Ռազմավիրական ճանապարհին», «Գունիբ լեռը») և այլ աշխատանքեր։ Հայաստանի պետական պատկերասրահում է գտնվում «Դարյալի կիրճը» փոքրածավալ կտավը, որը հավանաբար նա նկարել է ճանապարհին, կարճատև դադարի ժամանակ։ Այդ պատկերը բնությունից անմիջականորեն նկարված էտյուդի տպավորություն է թողնում։ Իրիկնամուտ է։ Արևի վերջին ճառագայթները լուսավորել են բարձր ժայռերի գագաթները, մինչդեռ կիրճի մեջ՝ գետափին, իջել է

մինչաղը։ Դարյալի կիրճի ձախակողմյան ճանապարհով անցնում է շորս ձիաքարշ կառքը, իսկ նրա ետևից՝ ուրիշները։ Ահռելի քարափների միջև շատ փոքր են երևում առաջին պլանի վրա պատկերված մարդիկ ու նրանց ձիերը։ Ինականից նկարված ժայռերն այստեղ վերարտադրվել են ընդգծված նյութականությամբ, ամուր և ծանր, ավելի շեշտելով նրանց ահռելիությունը։

Կովկասի բնությունը նկարչին այնքան է հետաքրքրում, որ նա նույն թեմային անդրադառնում է երբեմն մի քանի անգամ։ Այսպես, հայտնի է «Դարյալի կիրճը» թեմայով մի քանի պատկեր, որոնք Այվազովսկին նկարել է 1868—1869 թվականներին և հետագայում։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի բնության պատկերները։ Առավել հայտնի են Արարատ լեռան, Արարատյան դաշտի և Սևանա լճի պատկերները։ Հովհ. Այվազովսկին Արարատը և Արարատյան դաշտը նկարել է բազմիցս։ 1868 թվականին Անդրկովկասում կատարած ճանապարհորդության ժամանակ Այվազովսկին նկարում է Արարատի և Սևանա լճի երկու պատկեր, որոնք մեզ չեն հասել։ 1868 թվականին նկարած «Արարատ» կտավի մասին գաղափար ենք կազմում Ն. Կուզմինի «Հ. Կ. Այվազովսկին և նրա ստեղծագործությունները» գրքից, ուր առաջին անգամ տպագրվել է այդ գործի լուսանկարը[4]։ Այդ, ինչպես և «Սևանա լիճը» նկարի մասին տեղեկանում ենք նաև Սոբկոյի կազմած Այվազովսկու ստեղծագործությունների ցուցակից, որը հրատարակվել է «Ռուս նկարիչների բառարան» գրքում[5]։

1868 թվականին նկարած «Արարատ» պատկերը ներկայացնում է Արարատը և Արարատյան դաշտը ուղտերի քարավանով։ Առաջին պլանի վրա պատկերված դաշտավայրի մի զգալի մասը, ինչպես և Արարատ լեռը ծածկված են մշուշով։ Այդ մշուշի միջից երկինք է խոյացել Արարատ լեռան մեծ, սպիտակափայլ գագաթը, որն իշխում է շրջապատի վրա։ Դիտողի ուշադրությունը գրավում է առաջին պլանը, ուր

---

[4] Н. Н. Кузьмин, Айвазовский и его произведения, 1901.

[5] Собко, Словарь русских художников, 1893, էջ 290—345։

նկարված են Արարատյան դաշտը և ճանապարհով անցնող ուղտերի քարավանը։ Ուղտերը բեռնավորված են մեծ ու ծանր հակերով։ Նկարիչը վարպետությամբ և սիրով պատկերել է առաջին պլանի բոլոր մանրամասները՝ ուղտերն ու նրանց ծանրաքարշ բեռները, ճանապարհի քարերը և կանաչապատ գետինը՝ աշխատելով բնականություն հաղորդել տեսարանին։

«Արարատ» և «Սևանա լիճ» կտավները կարևոր են ազգային նկարչության պատմության համար։ Մինչ այդ հայ նկարիչներից ոչ ոք չէր ստեղծել Արարատի, Արարատյան դաշտի և Սևանի պատկերներ։ Հայ նկարիչներից Հովհաննես Այվազովսկին առաջինն էր, որ 1868 թվականին Թիֆլիսում, նկարելով հայրենի երկրի բնության այդ տեսարանները, ցույց տվեց մայր հայրենիքի գեղեցկությունը և հասարակության ու երիտասարդ նկարիչների ուշադրությունը հրավիրեց Հայաստանի գեղատեսիլ բնության վրա։ Այդ ստեղծագործությունները միաժամանակ հաստատում են, որ հետաքրքրությունն իր ժողովրդի, հայրենի բնության նկատմամբ Այվազովսկու մոտ ծագել է շատ ավելի վաղ, քան որոշ ուրիշ արվեստագետներ կարծում են մինչև հիմա։

Արարատի և Արարատյան դաշտի, որպես հայ ժողովրդի բնօրրանի, թեմային հայրենանվեր նկարիչը անդրադառնում է նաև հետագայում՝ 1880-ական թվականներին։ Մեզ են հասել «Արարատ լեռան հովիտը» (1882) և «Արարատ» (1887) կտավները, որոնցից առաջինը գտնվում է Մոսկվայում, իսկ սյուրը, որպես նկարչից նվեր, պահպանվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանում։

Հայաստանի բնությունը ներկայացնող գործերից բացի Այվազովսկին Անդրկովկասում ինչպես նշվեց, նկարում է նաև բազմաթիվ կովկասյան տեսարաններ։ Այդ, ինչպես նաև հայկական գաղթավայրերի (Թեոդոսիա, Ղրիմ, Տրապիզոն, Կոստանդնուպոլիս, Վենետիկ և այլն) գեղատեսիլ պատկերները կարևոր հետաքրքրություն են ներկայացնում իր ժողովրդի ու նրա մշակույթի հետ սերտորեն կապված նկարչի գեղարվեստական ժառանգության մեջ։ Հայաստանի բնության

և հայկական գաղթավայրերի միևնույն պատկերները պատահական զուգադիպություն չեն Այվազովսկու ինչպես և նկարիչներ Հաշինջաղյանի, Թադևոսյանի, Խերլեմեզյանի, Շամշինյանի, Հակոբյանի, Սարյանի, Փեթվաճյանի, Խաչատրյանի և այլոց գեղարվեստական ժառանգության մեջ։ Թիֆլիսում Այվազովսկին նկարում է նաև հայ ժողովրդի կյանքի և կենցաղի թեմաներով պատկերներ։ Առանձնապես հայտնի է «Թիֆլիսի տեսարանը» երկու մեծակտավ աշխատանքները, որոնցից մեկը, որը սյուժետային պատկեր է կենցաղային բովանդակությամբ։ Նկարիչը պատկերել է Թիֆլիսահայերի ժամանցի մի տեսարան, մերձքաղաքային կանաչավետ վայրում մի խումբ կանայք և տղամարդիկ քեֆ են անում։ Առաջին պլանում, կանաչի վրա փռված գորգին, նստել են մի քանի կանայք ու տղամարդիկ, որոնցից մեկը նվագում է, մյուսները ծափ են տալիս, իսկ մի կին պարում է։ Երկրորդ պլանում, ձախ կողմի ծառերի տակ, տղամարդիկ խորոված են անում, մյուսները պատրաստություն են տեսնում, իսկ մի մարդ երկանիվ արևելյան սայլով ուտելիքներ և խմիչք է բերում։ Պատկերի աջ կողմում, դեպի քաղաք ձգվող ճանապարհով, դանդաղաքայլ ընթանում է ուղտերի քարավանը։ Պատկերի կենտրոնի մոտ նկարված երկու բարձր բարդիները կարծես ամփոփում են առաջին պլանը իր կենցաղային տեսարանով։ Երկրորդ պլանը ներկայացնում է բարձունքների վրա գտնվող հին Թիֆլիսի միահարկ և հարթ կտուրներով տների սիլուետները։

Բնության տեսարանը, մարդկանց և նրանց ազգային-արևելյան տարազը Այվազովսկին այստեղ նկարել է սուր դիտողականությամբ և ճշգրտորեն։ Նկարիչը հիանալիորեն վերարտադրել է տեղացի մարդկանց, նրանց շարժ ու ձևի, որպիսիք տեսնում ենք նույն շրջանի նկարիչներ Հակոբ Հովնաթանյանի և Ստեփան Ներսիսյանի ստեղծագործություններում։ Հովհ. Այվազովսկին ստեղծել է ժամանակակիցների կյանքը և նրանց սովորույթներն արտացոլող մի պատկեր, որը դարձավ այդ շրջանի հայկական ռեալիստական կենցաղային նկարչության լավագույն ստեղծագործություններից մեկը։

Բոլորովին պատահական չէ, որ 60-ական թվականներին, ինչպես նշվեց, ստեղծվում է Ստեփան Ներսիսյանի «Ժամանց գետափին» կենցաղային թեմայով պատկերը, որը նույնպես ներկայացնում է Թիֆլիսի մերձքաղաքային մի տեսարան՝ խնջույքի նստած մարդկանցով։ Այն փաստը, որ ինչպես Ստեփան Ներսիսյանը, նույնպես և Հովհաննես Այվազովսկին միևնույն ժամանակ նկարել են քաղաքի մերձակայքում խնջույք-ժամանցի թեմայով երկու առանձին կտավ, վկայում է ոչ միայն քաղաքի մերձակայքում կազմակերպվող այդպիսի ուրախ ժամանցների սովորական լինելը, այլև այն, որ հանճարեղ ծովանկարիչը իր ստեղծագործության համար ընտրել է հենց այնպիսի թեմա, որը բնորոշ է եղել և տվյալ շրջանի հայերի կենցաղում։

Ժողովրդի կյանքին նկարչի քաջատեղյակության մասին է վկայում նաև այն փաստը, որ Այվազովսկու անվան հետ է կապված Կովկասում եղած կոպիտ բռնցքամարտի վերացումը։ «Շատ օտարոտի պիտի թվա ընթերցողին, երբ ասում են Այվազովսկին եղավ մեզանում բռնցքամարտին (кулачный бой) վերջ տալու պատճառը»,— գրում է Բաշինջաղյանն իր հոդվածներից մեկում և բերում է մի այսպիսի օրինակ. «Ինչպես եք հավանում մեր Թիֆլիսը,— հարցնում է նրան մի անգամ այն ժամանակվա փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչը։ Նկարիչն իր տպավորությունները հայտնելու միջոցին վառ գույներով նկարագրում է նաև բռնցքամարտը։ Այս վայրենի սովորությունը, որ տարածված էր Կովկասում, Թիֆլիսում կատարելության էր հասել։ Բռնցքամարտը կատարվում է Թիֆլիսից ոչ հեռու ձորի մեջ։ Որքան ինձ հայտնի է, այն ժամանակվա հռչակավոր ըմբիշներն էին Լեյլի աղա Ավետիքը և Լոխոդ մականունով մի դաբաղ։ Փոխարքան լսելով այդ տարօրինակ զվարճության նկարագրությունը, իր սարսափելի հետևանքներով, մարդիկ իրար քիթ ու պռունգ էին ջարդում, հաշմանդամ լինում, այլանդակում իրար, անմիջապես հրաման է առձանում արգելել բռնցքամարտը»[6]։

Այդ փաստն ինքնին հաստատում է, որ Անդրկովկասում

---

6 Գ. Բաշինջաղյան, Հովհաննես Այվազովսկի, «Մշակ», 1917 № 159։

Այլազովսկին ոչ միայն հետաքրքրվել է իր ժողովրդի կյանքով ու կենցաղով, այլև միջամտել է հին կենցաղի ժամանակավրեպ սովորությունների վերացմանը։ Դա ոչ թե ճանապարհորդող-զբոսաշրջիկի, այլ իր ժողովրդի առաջադիմությանը նախանձախնդիր զավակի սրտացավությունն էր, որը ժամանակակիցները, ինչպես վկայում է նկարիչ Գ. Բաշինջաղյանը, բարձր են գնահատել։

1868 թվականի նոյեմբերին Թիֆլիսում եղած ժամանակ, Հովհ. Այվազովսկին Հայաստանից ստանում է մի նամակ, որով Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 4-րդը նրան հրավիրում է էջմիածին՝ նկարչին համարելով «գերազնիվ... յավետ սիրելւոյ մերոյ և հարազատի առաքելական Մայր Աթոռոյս»։ Այնուհետև կաթողիկոսը գրում է. «Համբաւ գալստեան Ձերդ սիրելութեան ի Տփղիս հասեալ աստ զուարթացոյց զմեզ և լցաք խնդութեամբ, զի դուք մերձեցեալ իցեք ի սահմանս մեր աներկմիտ եմք եթե ի միտ ածելով և զմայր Աթոռս մեր և անմոռաց տեղեաց ի կարգ դասելով զայն գոնե ի հեռաստանէ զայն յիշեսջիք որով կատարեալ լիցի և խնդութիւն մեր»։ Այս նամակում կաթողիկոսը նկարչին մաղթում է առողջություն և երկար կյանք, «զի լիջիք միշտ փառաւոր ի կենաս ձեր և պարծանք գերազնիւ Ազգատոհմիդ յավետ վրձնոյդ արկանելով ի կիր գաշխատութիւն բնութեան չքնաղից զտեսիլս դրոշմելով ի դաստառակ աստվածատուր հանճարով ըղձալի արհեստից»[10]։

Այս սիրալիր և հայրական հոգատարությամբ գրված նամակը խորապես հուզում է նկարչին, և նա 1868 թվականի դեկտեմբերի 18-ին Նուխիի խանդաղատանքով պատասխան է գրում հայերեն լեզվով. «Վեհափառ տէր, ընկալեալ զդիր սիրոյ և օրհնութեան վեհիդ՝ լցայ ուրախութեամբ մեծաւ, և ահա ջերմ սրտիւ պատասխանեմ։ Թէպէտ վաղ ուրեմն պարտ էր ինձ այց ելանել Հայրենի անմոռաց երկիրս և տեսութեամբ նորին զուրաճանալ՝ վայելելով զսէր Ջօրհնութիւն Հօրդ հասարակաց, սակայն դառնաշունչ աւուրք-ձմեռային եղանակի արգելին զիս ի Տփղիս։ Բայց ի հաւանել գարնան

10 «Документы...», էջ 153—154.

զամսեանն ապրիլի, յաջողութեամբ տեառն և աղօթիւք վեհափառութեան Ձեր անշուշտ կատարեցից զուխտս իմ, որով և լցցի իղձ սրտիս, որ ի վաղուց հետէ տածէի յիս։ Մնամ վեհափառ տեառնդ և հօրդ հասարակաց խոնարհ ծառայ և որդի Յոհաննէս Այվազովսկի»[11]։ Առաջիկա ապրիլ ամսին Հայաստան գնալու հույսով Հովհ. Այվազովսկին Թիֆլիսից շտապ մեկնում է Թեոդոսիա, այնտեղից էլ՝ Պետերբուրգ, 1869 թ. Սուեզի ջրանցքի բացման համաշխարհային հանդեսին մեկնող ռուսական արշավախմբին միանալու համար։

ՇԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԵԳԻՊՏՈՍ

1869 թ. սկզբներին Հովհ. Այվազովսկին, փակելով իր ցուցահանդեսը Թիֆլիսում, շտապ մեկնում է Պետերբուրգ։ Նա լուր է ստանում, որ մայրաքաղաքում նախապատրաստվում են Սուեզի ջրանցքի բացման կապակցությամբ զբոսաշրջիկների մի արշավախումբ կազմել, Ռուսաստանի կողմից այդ ջրանցքի հանդիսավոր բացմանը մասնակցելու համար։ Նկարիչը ուզում էր Արևելք մեկնել, տեսնել Եգիպտոսը, Նորակառույց ջրանցքը և պատկերել ջրային նոր տարածքի տեսարաններ։

Փետրվարին նա արդեն Մոսկվայում էր։ Այստեղ նա մրնում է մի քանի օր, այցելում է ծանոթներին և Լազարյան ճեմարանը։ Արևելյան լեզուների ինստիտուտի դասախոսական կազմը և ուսանողությունը, որի մեծ մասը հայ երիտասարդներ էին, այս անգամ ևս նրան ընդունում են ջերմորեն։ Կազմակերպվում է ցերեկույթ, որի ժամանակ մեծահամբավ նկարիչը հանդիպում է իր հայրենակից ուսանողության և դասախոսների հետ։ Տեղի են ունենում մտերմիկ զրույցներ։ Ի նշանավորումն այդ հանդիպման, որպես հիշատակ նա հայկական այդ ուսումնական հիմնարկին է նվիրում ծննդա-

---

[11] «Документы...», էջ 154—155։

վայրի պատկերը՝ «Թեոդոսիայի տեսարանը», որը նկարել էր նա 1865 թ.։

Բարձր գնահատվելով Մոսկվայի հայրենակից մտավորականների կողմից՝ Հովհ. Այվազովսկին մեկնում է Պետերբուրգ և այստեղ, իսկապես գրանցվում է Եգիպտոս մեկնել ցանկացողների ցուցակում։

Գարնան սկսվելուն հետ Այվազովսկին վերադառնում է Ղրիմ։ Ապրիլ-մայիս ամիսներին Կովկասում կատարած ճեպանկարների հիման վրա նա նկարում է նոր պատկերներ, այդ թվում. «Լեռնային բնանկար», «Ձյունածածկ լեռներ», «Իրիկնամուտ» (Ղրիմ) և ուրիշներ։

Հունիսի 30-ին Այվազովսկին լրացնում է Պետերբուրգից ուղարկված մի անկետա, որտեղ իր ծննդյան տարեթիվը, ամիսը և օրը նշելուց բացի գրում է, որ իր հայրը կոչվել է «Կոստանտին Գրիգորևիչ, մայրը՝ Հռիփսիմե, որ ինքը ամուսնացել է 1848 թ. անգլուհի Գրեվսի հետ, և որ «կինս անգլիական դավանանքի է, իսկ ես — հայ Գրիգորյան։ Այժմ ես ավարտել եմ Կովկասյան տեսարաններ ներկայացնող 15 պատկեր։ Դրանք բոլորը ես նկարել եմ Թիֆլիսում այս ձմռանը։ Այդ պատկերները դեկտեմբերին կցուցադրվեն Պետերբուրգում»։[1]

1869 թ. աշնանը Այվազովսկին Թեոդոսիայից մեկնում է Սևաստոպոլ, որտեղ միանում է Պետերբուրգից ժամանած զբոսաշրջիկների արշավախմբին և նրանց հետ շոգենավով մեկնում է Միջերկրական ծով, ապա՝ Եգիպտոս, Սուեզի ջրանցքի բացման հանդեսին մասնակցելու համար։ Նոյեմբերի 5-ին տեղի է ունենում ջրանցքի հանդիսավոր բացումը։ Այդ օրը այստեղ էին ժամանել եգիպտական կառավարության ղեկավարները, եվրոպական շատ երկրների պետական ու հասարակական հայտնի անձինք, Ֆրանսիայի կայսրուհի Եվգենյան, Ավստրիայի կայսր Ֆրանց Իոսիֆը և ուրիշներ։

Եվրոպական չորս երկրների գեղարվեստի ակադեմիաների անդամ, ակադեմիկոս Հովհ. Այվազովսկին, ռուս ծովակալ Ֆ. Պ. Լիտկեի և «Ռուսկի վեստնիկ» ամսագրի խմբագիր պրոֆ. Լեոնտևի և մյուսների ընկերակցությամբ դիտում

---

[1] «Документы...», էջ 156—157.

են Սուեզի ջրանցքի՝ Արևմուտքը Արևելքի հետ կապող ծովային այդ ամենակարճ նորակառույց ջրային ճանապարհի, բացման հանդիսավոր արարողությունը, նկարիչը միաժամանակ մատիտը ձեռքին ճանապարհորդական ալբոմում նշումներ է անում, հետագայում այդ էսքիզների հիման վրա նոր պատկերներ ստեղծագործելու համար։

Երբ ավարտվում է բացման հանդեսը, այստեղ ժամանած տարբեր երկրների շոգենավերն ու առագաստանավերը հերթով՝ մեկը մյուսի հետևից անցնում են ջրանցքով։ Հենց այդ ժամանակ էլ նկարիչը ռուսական շոգենավի տախտակամածից նկարում է «Սուեզի ջրանցքը» պատկերը։ «Երբ մեր շոգենավը անցնում էր Սուեզի նորաբաց ջրանցքով,— պատմում է նկարիչը,— մեզանից առաջ ընթացող ֆրանսիական նավը խրվեց ծանծաղուտի մեջ, և մենք ստիպված եղանք հինգ ժամ սպասել։ Գեղեցիկ, լուսնյակ գիշեր էր, որը փարավոնների հին երկրի ավազոտ ափերին տալիս էր ինչ-որ առանձին, վեհ գեղեցկություն... Որպեսզի ժամանակը կրճատվի, ռուսական շոգենավի զբոսաշրջիկները կազմակերպում են իմպրովիզացիոն վոկալ համերգ։ ...Եվ ահա Եգիպտոսի ափերին հնչում է «Մայր Վոլգա», «Մուխ անտառ», «Մաքուր դաշտ» և ռուսական այլ երգեր»[2]։ Հովհ. Այվազովսկին մասնակցում էր այդ խմբերգին, որը շարունակվում է մինչև ուշ գիշեր։

Հաջորդ օրը զբոսաշրջիկները դուրս են գալիս շրջագայության։ Նրանք մեկնում են Կահիրե, ծանոթանում հին Արևելքի այդ նշանավոր քաղաքի առօրյա կյանքին, ճարտարապետությանը, մշակութային օջախներին։ Լինում են եգիպտական բուրգերի մոտ, դիտում, ուսումնասիրում են այդ հազարամյա մոնումենտալ հուշարձանները բոլոր կողմից, հիանում սֆինքսներով, որոնք խորհրդանշում են մարդու սլացիկ միտքը և աույծի հզոր ուժը։

Հովհ. Այվազովսկին ճանապարհորդական ալբոմը ձեռքին նկարում էր այն ամենը, ինչ տեսնում էր իր աչքի առաջ։

Սուեզի ջրանցքի հանդիսավոր բացումը և ընդհանրապես եգիպտական այդ ճանապարհորդությունը Հովհ. Այվազովսկու վրա ուժեղ տպավորություն են թողնում։ Վերադարձի ճա-

---

[2] «Русская старина», 1878. *1878, հ. 23, էջ 280։*

նապարին՝ շոգենավի մեջ և տանը նա նկարում է արևելյան թեմաներով մի շարք պատկերներ, որոնցից առանձնապես հայտնի են «Սուեզի ջրանցքը», «Բուրգեր», «Ուղտերի քարավանը եգիպտական անապատում» և տեսարաններ Կահիրե քաղաքից, ցերեկը՝ արևի կիզիչ ճառագայթներով լուսավորված, և Կահիրեն՝ երեկոյան լույսերի մեջ։

Առանձնապես տպավորիչ է «Սուեզի ջրանցքը» մեծակտավ պատկերը։ Դա պատկերում է նորաբաց ջրանցքի մուտքը, որտեղից հերթով, առաջին անգամ անցնում են առագաստանավեր և փոքրածավալ շոգենավեր։ Հեռվում՝ պատկերի կենտրոնական մասի աջ կողմում, երևում է ջրանցքի մուտքի մեծ ազդարարը՝ երկնասլաց մի սյուն, որի մոտով դանդաղ անցնում են առագաստանավերի շարասյուները։ Նրկարված լինելով մոտիկից, Այվազովսկին Սուեզի ջրանցքը ներկայացրել է լայնահուն՝ հարթ տարածության հենքի վրա, առաջին պլանում տեղադրելով մեծ ու փոքր առագաստանավեր և մի քանի նավակներ, որոնցից մեկը շոգիով ընթացող։ Պատկերի աջ կողմի ներքևի անկյունում դարձյալ երևում է մի մեծ առագաստանավի առաջամասը, որտեղից ողջունում են ջրանցքի առաջին այցելուներին։ Տեսարանը գեղեցիկ է ու տպավորիչ։

«Բուրգերը» պատկերում է Եգիպտոսի հանրահայտ խորհրդանիշը։ Առաջին պլանում են երեք՝ մեկը մյուսին հաջորդող, եռանկյունաձև, 2—3 տոննա ծանրություն ունեցող տաշած քարերից կառուցված դամբարանային հուշարձանները, որոնք հին եգիպտական ճարտարապետական մտքի հանճարեղ ստեղծագործություններն են։ Որքան փոքր, անշան են երևում նրանց մոտով անցնող, դեպի դիտողը եկող ուղտերի քարավանը և մարդիկ, այդ մեծ, հոյակապ, մինչև 140—145 մետր բարձրությամբ բուրգերի համեմատությամբ։ Այստեղ նկարիչը ընդգծել է բուրգերի մոնումենտալ և հավերժական բնույթը։ Բայց նա չի մոռացել և իր սիրած ջրային տարածությունը։ Երկրորդ պլանում՝ բուրգերի հետևից, երևում է Նեղոս գետի մի հատված։ Դա հստակություն է մտցնում կոմպոզիցիայում և ավելի ցայտուն է դարձնում հիմնական թեման՝ Բուրգերը։

Շատ տիպական է «Ուղտերի քարավանը Եգիպտոսում» պատկերը։ Նկարիչը պատկերել է կիզիչ արևից խանձված ավազուտ և չոր մացառուտներով լի անծայր հարթություն, որտեղ ուղտերի քարավանը մի քանի եգիպտացիների ուղեկցությամբ դանդաղորեն գնում է դեպի ավազուտները։ Ցածր հորիզոնը հնարավորություն է տվել նկարչին կոմպոզիցիայում մեծ տեղ հատկացնել բարձր, անանց և լուսավոր երկընքին։ Պատկերի մեջ գերիշխող բաց շականակագույնը, որը համապատասխանում է տեղանքի կոլորիտին, ուժեղացնում է արևախանձ անապատի և տաք օրվա տպավորությունը. դիտողը զգում է իրեն Եգիպտոսի անապատում և իր առաջ՝ ուղտերի քարավանը։

Եթե «Բուրգերը» հիշեցնում են պատմական հեռավոր ժամանակներում եգիպտացիների կատարած մեծագործությունները, որոնք այժմ էլ հիացմունք են պատճառում, ապա Սուեզի ջրանցքի բացումը նոր ժամանակների սխրագործություն է՝ մի արտակարգ երևույթ մարդու աղմից բնության փոփոխման բնագավառում։ Նկարչի մտահղացմամբ դա հաստատում է մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների գերազանցությունը բնության նկատմամբ։ Դրանում է կայանում լույսով ողողված այս պատկերի գաղափարական բովանդակությունը։ Ինչ վերաբերվում է «Ուղտերի քարավանը Եգիպտոսում» պատկերին, ապա դա արդեն արտացոլում է եգիպտացիների առօրյա, նաև ավանդական կյանքը կենցաղային որոշ մանրամասներով։

Եգիպտական թեմաներին նկարիչը անդրադառնում է նաև հետագայում։

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ

Եգիպտական ճանապարհորդությունից հարուստ տպավորություններով վերադառնալով Թեոդոսիա, Հովհ. Այվազովսկին, կարճատև հանգստից հետո, հավաքում է Կովկասում, Եգիպտոսում և Ղրիմում նկարած իր վերջին շրջանի նոր պատկերները և մեկնում է Պետերբուրգ։ Դեկտեմբերին նա

աբդեն մայրաքաղաքում էր։ Նա իր հետ բերել էր շուրջ երկու տասնյակ պատկեր և մտադիր էր այստեղ ցուցահանդես կազմակերպել, որի մուտքի վճարը նախատեսվում է հատկացնել գեներալ Պ. Կոտլյարևսկու պատվին հուշարձանի կառուցմանը։[1] Թուրքիայի և Իրանի լծից Կովկասի ժողովուրդների ազատագրության պայքարում զոհված հերոս գեներալ Պ. Կոտլյարևսկու հիշատակին հուշարձան կանգնեցնելու միտքը նկարչի մոտ վաղուց էր ծագել։ Դեռևս Թիֆլիսում եղած ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, Այվազովսկին բարձրացրել էր այդ հարցը և ճաշկերույթի ժամանակ, տեղացիները, գլխավորապես հայերը, իրենց միջոցներով հանգանակությամբ հավաքել և նկարչին էին հանձնել 3000ռ.։ Սակայն այդ գումարը չէր բավարարում մտահաղացածը իրագործելու համար։ Այս նոր ցուցահանդեսով նա մտադիր էր մուտքի վճարից և վաճառվող պատկերների գումարից լրացնել անհրաժեշտ գումարը և 1870 թ. սկսել շինարարական աշխատանքները։ Գեղարվեստի ակադեմիայի վարչությունը ընդառաջում է նկարչի բարեգործական-հայրենասիրական միտումին և նրան է տրամադրում ակադեմիայի երկու ցուցասրահները։

1870 թ. հունվարի առաջին կեսում բացվում է Այվազովսկու ստեղծագործությունների նոր ցուցահանդեսը Պետերբուրգում։ Դա գրավում է հասարակության լայն շրջանների հետաքրքրությունը։ Կովկասյան լեռնային բնության և Ղրիմի ծովափնյա տեսարանները գեղարվեստի ակադեմիայի ցուցասրահներ են բերում շատ արվեստասերների։ Երկու շաբաթվա ընթացքում ցուցահանդես են այցելում մի քանի հազար մարդ և հավաքվում է մուտքի վճարի բավական զգալի գումար։ Մի քանի պատկեր էլ վաճառվում է։ Ութսնական կեսյորը Այվազովսկուց գնում է նրա «Կարանայ» և երկու այլ պատկեր ևս, յուրաքանչյուրը 2000ռ., իսկ ամենամեծը՝ 3500 ռուբլով։[2]

Նույն ժամանակ՝ հունվարի 23-ին, գեղարվեստի ակադեմիայի խորհուրդը որոշում է. Հովհաննես Այվազովսկուն ներ-

---

[1] «Документы...», էջ 158:

[2] Նույն տեղ։

կայացնել իսկական պետական խորհրդականի կոչման, նկատի ունենալով նկարչի գերազանց տաղանդը, անսահման աշխատասիրությունը և գեղարվեստին բերած նրա օգուտը։ Փետրվարի 6-ին թագավոր-կայսրը հաստատում է այդ որոշումը[3]։

Ավարտելով իր գործերը մայրաքաղաքում՝ Հովհ. Այվազովսկին գարնան սկզբներին վերադառնում է Ղրիմ։ Թեոդոսիայում այդ ժամանակ արդեն սկսվել էին սբ. Ալեքսանդր Նևսկու անվան ռուսական տաճարի շինարարական աշխատանքները, այստեղ ապրող 9865 ուղղափառ ռուսների համար։ Տաճարը կառուցվում էր մի հին, արդեն վերացված թուրքական մեջիդի տեղում։ Ժողովրդի պահանջով Այվազովսկին նկարում է «Փրկիչի քայլելը ջրերի վրա» պատկերը այդ տաճարի բեմի համար։ Ավետարանական թեմաներով պատկերներ Այվազովսկին նկարել էր անցյալում ևս։ Սակայն այժմ ընդառաջելով ծննդավայրի ռուս բնակչության խնդրանքին, նա ընտրում է այնպիսի թեմա, որը համապատասխանում է նրա ստեղծագործական տարերքին։ Նկարիչը պատկերում է անհանգիստ ծովը և նրա ջրերի վրա՝ Քրիստոսին, քայլելիս։ Առասպելական սյուժեն այստեղ գտել է ռեալ, աշխարհիկ լուծում։ Հեռու միջնադարյան սրբապատկերների վերացական մտածելակերպից, Այվազովսկին իր նոր հերոսին պատկերել է ռեալ, մարդկային գծերով, դրա մեջ արտահայտելով իր հումանիստական աշխարհայեցողությունը։ Նույն թեմայով պատկերներ, ինչպես ցույց կտանք ստորև, նկարիչը ստեղծում է նաև հետագայում եկեղեցիների համար։

Հովհ. Այվազովսկին նոր պատկերներ է ստեղծում նաև 1870 թ. ամռան ամիսներին։ Այդ ժամանակ Ռուսաստանում պատրաստվում էին հանդիսավոր կերպով նշելու ռուս ծովագնացների կողմից Անտարկտիդայի հայտնագործման 50-ամյակը։ 1820 թ. նշանավոր ծովագնացներ Ֆ. Ֆ. Բելլինգսհաուզենը և Մ. Պ. Լազարևը «Վոստոկ» և «Միրնի» առագաստանավերով հասնում են մինչև Անտարկտիդա։ Այդ կապակցությամբ Այվազովսկին 1870 թ. նկարում է «Սառցե լեռներ Անտարկտիդայում» պատկերը ի պատիվ նոր աշխար-

---

3 Նույն տեղ, էջ 159—160։

համաս հայտնագործողների։ «Սառցե լեռներ Անտարկտիդայում» այն աստիճան ճշմարիտ է ու համոզիչ, որ թվում է, թե նկարիչը նկարել է բնականից։ Դա հիմք է տալիս ասելու, որ նկարչին օգնել են ծովագնացները իրենց խորհուրդներով կամ գծագրերով։ Պատկերի սառը մոխրագույն կոլորիտը, բաց կապուտակ օվկիանոսի մեջ դանդաղորեն լողացող արծաթափայլ սառցե հսկա լեռները դիտողի աչքերի առաջ բացում են մի նոր աշխարհ՝ բնության զարմանահրաշ երևույթներից մեկը, որը նկարչի հզոր երևակայությամբ կենդանի շունչ է ստացել։

ՀԱՅՑ ԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ

1870 թ. հունիսի 10-ին Հովհ. Այվազովսկին դիմում է էջմիածնի սինոդին ընտանեկան հարցով։ Նա ուզում է բաժանվել իր կին Ցուլիա Հակոբի Գրևսից։ Այդ խնդրագրում շարադրելով դրդապատճառները, նա հայտնում է, որ 1848 թ. օգոստոսի 15-ին ամուսնանալով անգլուհի լութերադավան Ցուլիա Գրևսի հետ «Քաց պսակեալ և ի մերումս Հայաստանեաց եկեղեցւոջ՝ պայմանավ մկրտել զզավակունս մեր ի նմին հայկական սուրբ ավազանի», ինքը հետագայում՝ տարիներ հետո, նկատում է այդ կնոջ «զբնածին կամակորութիւն իւր, զկուաւասիրութիւն և զինքնօրեն վարմունս յամենայնի, բայց ըստ հարկի մարդկային և քրիստոնէական պարտուց՝ համբերելով համբերէի ամենայն թերութեանցն, որպես վկայեն այսմ ոչ միայն ազգականք իմ և բարեկամք, այլև գրեթե ամենայն ծանօթք իմ որ աստ և ի զանազան քաղաքս Ռուսաստանի։ Երկրորդ. յանկանել նորա յամին 1857-ի ջղային իմն հիվանդութիւն, որ էր և է անբուժելի՝ ըստ վկայութեան քաջահմուտ բժշկաց, կուսարար բարք նորա դարձան հետզհետէ ի սոսկալի կատաղութեամբ այնպէս զի բոլորովին վեր ի վայր շրջեալ վրդովեաց զխաղաղութիւն տան իմոյ և զանդրտութիւն սրտիս և մտացս՝ ընդ ամս երկուտասան և ավելի... անլուր և անօրինակ զրպարտութիւնս բարդեաց և վերայ իմ և ի վերայ ազգականաց իմոց՝ առաջի զավակաց և օտարաց։

...նվ զայսոսիկ զրպարտութիւնս արար և առնէ նա այնու մըտօք՝ ըստ հավաստի տեղեկութեանց իմոց, որպեսզի մահացուցեալ զիս, թե ոչ նիւթապէս գէթ բարոյապէս, յափշտակէսցէ ի ձեռաց իմոց անհնարին անիրաւութեամբ զսեպհական ստացուածս իմ և զկալուածս, և կարօտ թողցէ զիս աւուրն պարենի»։ Այնուհետև նկարիչը գրում է. «...կինն իմ Յուլիա՝ ատելութեամբ վարելովն ընդ իս յամենայնի, հակառակելով միշտ ըղձից իմոց և օգտի իմում», ոչ միայն իմ տված «մեծագումար ծախիւք» բնակվում է «ի մայրաքաղաքն Ռուսաստանի», այլև ստեպ-ստեպ ճանապարհորդութիւններ է կատարում «յԱվստրիա, ի Գաղիա, և ի Գերմանիա։ ...Ահա երեք ամք են՝ զի ոչ անսալով բնաւ աղաչանաց իմոց և յորդորանաց՝ բնակէ յ Օտեսսա իզուր և մեծամեծ ծախիւք, զորս տայ առնել ինձ, և ոչ հավանի գալ ի տուն իւր և ի տեղի ի Թեոդիսիա՝ պատճառանօք զիւանդութեան իւրոյ, հակառակ իսկ կարծեաց և խորհրդոց մեծանուն բժշկաց Օտտեսսայի և կողմանցս այսոցիկ»։ Նկարիչը ցավով է նշում, որ «նա՝ ինքն Յուլիա Կռէվս, շարժեալ յուրմէ բանսարկու բնավորութենէն, և դրդեալ յօտարոտի և ի կասկածելի անձանց ոմանց շահասիրաց» վերջին ժամանակներս դիմել է «Ընդհանուր կուսակալն նահանգիս, ևս և առ բարձրագոյն Անձինս, խնդրելով... զի Տերութիւնն առէ ի ձեռաց իմոց զկալուածս իմ, և եկամտիւք նոցին որպես թէ յապահովեսցէ զապրուստ և զապագայ կեանս զիւրն և զդստերաց մերոց, մինչդեռ ես միշտ տուեալ եմ վասն սննդեան նոցա և ապրանացն՝ նաև յՕտեսսա՝ ոչ երբեք պակաս քան զրուպլիս հինգ կամ վեց հարիւր յամսեան՝ անթերի և կանխիկ առաքմամբ»։

Մեծ նկարիչը սրտի ցավով է նշում, որ «Ասպականեալ զըմիտս և թիւրեալ զսիրտս չորեցուն դստերացն իմոց, յորոց երեքն չափահասք են և չորրորդն տակաւին երկոտասան ամաց, առեալ է արդեն ինոցանէ ստորագրութիւն հանդերձ խոստմամբ, զի ի լինել բաժանման ընդ իս և ընդ նա՝ դրստերքն իմ պնդեսցին կալ մնալ առ իւր, և ոչ բնաւ գալ բընակվել առ իս»։[1]

Էջմիածնի սինոդը, ստանալով այս խնդրագիրը, նախնա-

[1] «Документы...», էջ 161—165:

կան հավանություն է տալիս բաժանության համար, բայց վերջնական վճիռ դեռևս չի կայացնում։ Այդպիսի վճռի համար անհրաժեշտ էր նաև լութերական եկեղեցու համաձայնությունը, քանի որ կինը պատկանում էր լութերադավան եկեղեցուն։ Այդ ժամանակվա օրենքների համաձայն այդպիսի պայմաններում բաժանության վճիռը կայացվում է երկու դավանանքի եկեղեցիների համաձայնության դեպքում։

Ծանր է դառնում նկարչի հոգեվիճակը։ Նա ստիպված է լինում ապրել կնոջից բաժան առանց օրինական ձևակերպման։ Նա իրավունք չի ունենում նաև նոր ընտանիք կազմել՝ ամուսնանալ ուրիշի հետ։ Իսկ այդ կնոջը և նրա մոտ գտնվող իր չորս աղջիկներին նյութապես ապահովելու համար ամսական 400-500 ռ. վճարելը ստիպում էր նկարչին շատ աշխատել և որքան հնարավոր է շատ պատկեր վաճառել։ Այդ դրժբախտությունը, որը նրա անձնական կյանքում սկսվել էր 1860-ական թվականներից և շարունակվում է շուրջ 20 տարի, խորապես հուզում էր նկարչին։ Նա ապրում էր քրոջ հետ Թեոդոսիայի իր առանձնատանը, իսկ կինը՝ մայրաքաղաք Պետերբուրգում, երբեմն՝ նաև Օդեսայում, բայց երբեք՝ գավառական Թեոդոսիայում։ Այդ ձևով էլ նա դաստիրակում էր իր աղջիկներին, որոնք արդեն մեծանում, հասունանում էին հորից զրկված։

Չնայած անձնական կյանքում եղած այդ դառնագին իրողությանը, Այվազովսկին ուժ է գտնում իր մեջ և շարունակում է ստեղծագործել։ Նա իր երջանկությունը գտնում է ըստեղծագործության մեջ։ Նա ստեղծագործում է ամեն տեղ՝ տանը, Թեոդոսիայում կամ իր կալվածքում՝ Շախ-մամայում, ճանապարհներին, հյուրանոցներում, նավերի վրա և այլուր։ Նրան հոգեպես բավականություն են պատճառում նաև բարեգործությունները, բարեգործական նպատակներով նա շատ դրամարներ է հատկացրել տարբեր կազմակերպություններին, խմբակներին և անհատ անձանց։

Այդ բարեգործություններից էր նաև իր նախագծով ու միջոցներով Թեոդոսիայում հնագիտական թանգարանի շենքի կառուցումը, որի աշխատանքներն արդեն սկսվել էին դեռևս անցյալ տարվանից։

ԹԱՆԳԱՐԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՎ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

1871 թ. աշնանը ավարտվում է Թեոդոսիայի մոտ գտնվող Միհրդատ սարի գագաթին Այվազովսկու կողմից դեռևս անցյալ տարի սկսած հնագիտական թանգարանի և նրան կից հանգուցյալ հերոս գեներալ Պ. Կոտլյարևսկու հիշատակին նվիրված մատուռի շինարարությունը։ Թանգարանի շենքը կառուցվել է նկարչի նախագծով ու նրա սեփական միջոցներով։ Դա իրենից ներկայացնում է հին հունական պանթեոնի տաճար հիշեցնող երկթեք տանիքով, քառանկյունի պլանով, գլխավոր ճակատի կողմից 6 սյուներով և ֆրոնտոնով մի շենք։ Այստեղ նկարիչը տեղադրում է Թեոդոսիայում և Ղրիմի տարբեր վայրերում հայտնաբերված նյութական կուլտուրայի հուշարձաններ՝ քարեղեն արձանագրություններ, հին հունարեն, լատիներեն, հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով, ծովի հատակից հանված կավե և բրոնզե իրեր, հայկական եկեղեցիների փայտաշեն քանդակազարդ դռներ, խաչքարեր և հնագիտական արժեք ունեցող այլ նյութեր։

«Մշակ» թերթը հաղորդում է, որ Թեոդոսիայի քաղաքացիները, կարևոր նշանակություն տալով նորակառույց այդ թանգարանին, իրենց մոտ եղած իրերից շատ նվիրատվություններ են արել՝ հարստացնելով թանգարանը հնագիտական էքսպոնատներով։ «Բազմաթիվ նվերների մեջ,— գրում է այդ թերթը,— ուշադրության է արժանի մեր նկարչի՝ Այվազովսկու նվերը։ Նա ընծայեց թանգարանին իր աշխատասիրած հինգ մեծ նկարներ»։[1]

Հովհ. Այվազովսկու կողմից հիմնադրված հնագիտական այս թանգարանը խոշոր ներդրում էր ոչ միայն ծննդավայր Թեոդոսիայի, այլև ամբողջ Ղրիմի թերակղզու մշակութային կյանքում։ Դա, միաժամանակ, հայերի կողմից ստեղծված առաջին հնագիտական թանգարաններից մեկն էր 19-րդ դարի հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ։ Կառուցված լինելով հեռվից և բոլոր կողմերից դիտվող բարձունքի՝ Միհրդատ սարի վրա, անտիկ ճարտարապետության օրինա-

---

1. «Մշակ» 1872, №. 9, էջ 3։

կով ստեղծված այդ գեղատեսիլ շենքը դառնում է կարծես Թեոդոսիայի պսակը։

Նրան կից կառուցված մատուռի շենքը նույնպես Այվազովսկու ստեղծագործությունն է։ Դրա մեջ ամփոփվում է գեներալ Պ. Կոտլյարևսկու աճյունը և Այվազովսկու նկարած Հերոս գեներալի դիմանկարը։ Այցելուները դիտելով թանգարանը, անպայման տեսնում են և մատուռը՝ մեծ ծովանկարչի ճարտարապետական նոր ստեղծագործությունը, հիանալով արվեստագետի բազմակողմանի ընդունակության, լայն հետաքրքրությունների և բարեգործության համար։

Ընտանեկան կյանքում դժբախտ՝ կնոջից և աղջիկներից լքված, հանճարեղ նկարիչը իր ուրախությունը և երջանկությունը գտնում էր ոչ միայն ստեղծագործելու կամ բարեգործություններ անելու մեջ, այլև ավագ եղբոր՝ Գաբրիելի ազգօգուտ գործունեության մեջ։ Նրան, իսկապես, ուրախություն է պատճառում գիտնական եղբոր բեղմնավոր, ստեղծագործական նվաճումները՝ իրեն հանձնված հայ ժողովրդի մի հատվածի հոգևոր առաջնորդությունը, գրականությունը, լեզվի ու թարգմանչության, պատմագիտության բնագավառներում նրա օգտակար ձեռնարկումները։ Ահա լույս է տեսել Գաբրիել եպիսկոպոս Այվազյանի (Այվազովսկու) «Օրենք վայելուչ կենցաղավարության», հայերեն լեզվով նոր գիրքը, որը տպագրվել է իրենց ջանքերով Թեոդոսիայում հիմնադրված Խաչիբյան ուսումնարանի տպարանում։ Գիրքը պարունակում է վայելուչ կենցաղավարության խորհուրդներ պատանիներին, այն մասին, թե ինչպես պահել իրեն եկեղեցական աղոթքի, հուղարկավորության, ճանապարհորդության, ուսումնառության խրախճանքի, այցելությունների, շարժվածքի, ունկնդրության ժամանակ և կյանքի այլևայլ պայմաններում։ Գիրքը նախատեսված էր ընթերցողների լայն շրջանների համար և ուներ դաստիարակչական խոշոր նշանակություն ազգային շրջանակներում։

Ապրելով ու ստեղծագործելով կյանքի զարգացմանը զուգընթաց, ընկալելով այն ամեն նորը և առաջադիմականը, որը բերում էր հասարակական-գեղագիտական մտքի զարգացումը հայ իրականության մեջ, Ռուսաստանում և արևմտաեվրոպական երկրների գեղարվեստական մշակույթի բնագավառում,

Հովհ. Այվազովսկին 1870-ական թվականներին նկատելիորեն ուժեղացնում է բնության երևույթների և տարերքի իրական պատկերումը, ուժեղացնում է բնանկարի բովանդակալից և նպատակասլաց կերպարային լուծումը։

Դա կապված էր ոչ միայն հայ, այլև ռուսական իրականության մեջ, մասնավորապես գեղարվեստական մշակույթի բնագավառում, ռեալիզմի ուղղության հաստատման ու արագ զարգացման հետ։

1871 թ. նոյեմբերի 29-ին Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի սրահներում բացվում է «Շրջիկ (Պերեդվիժնիկ) գեղարվեստական ցուցահանդեսների նկարիչների ընկերության» առաջին ցուցահանդեսը, որ նոր, շրջադարձային էտապ դարձավ ռուսական կերպարվեստի պատմության մեջ։ Այդ ընկերության հիմնադիր նկարիչների, մասնավորապես ցուցահանդեսների նախաձեռնող-մասնակիցներ Ի. Ն. Կրամսկոյի, Գ. Գ. Մյասոեդովի, Ն. Ն. Դևի, Վ. Գ. Պերովի, Ի. Մ. Պրյանիշնիկովի, Կ. Ե. և Ն. Ե. Մակովսկիների, Կ. Վ. Լեմոխի և մյուս նկարիչների հետ Այվազովսկին անձամբ ծանոթ էր և շատերի հետ նույնիսկ մաերմություն ուներ։ Ահա այդ նկարիչներն իրենց ստեղծագործություններով և ցուցահանդեսով կերպարվեստագետների առաջ նոր և կարևոր խնդիրներ են դնում։ Միավորելով բոլոր առաջադեմ նկարիչներին և քանդակագործներին մեկ ընկերության մեջ, նրանք իրենց դրոշն են դարձնում ստեղծել աշխատավոր ժողովրդին մոտիկ ու հարազատ, նրան հասկանալի, խորապես ռեալիստական կերպարվեստ։

Ժողովրդի կյանքը, նրա անմխիթար վիճակը, սոցիալական անարդարությունները, լավագույն կյանքի համար ժողովրդի ձգտումներն են դառնում ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև կերպարվեստի հիմնական թեմատիկան։ Հեղափոխական-դեմոկրատ Չերնիշևսկու այն պնդումը, թե գեղեցիկը կյանքն է և իրականությունը ճշմարտորեն արտացոլելիս արվեստագետները պարտավոր են արտահայտել իրենց ակտիվ վերաբերմունքը կյանքի երևույթների նկատմամբ և որ նրանք պետք է լինեն հասարակական երևույթների ճշմարիտ գնահատողը և քննադատը, դրվում է այս շրջանի առաջավոր նկարիչների ստեղծագործությունների հիմքում։

«Շրջիկ (Պերեդվիժնիկ) գեղարվեստական ցուցահանդեսների ընկերության» նկարիչները լայնորեն զարգացնում են կենցաղային (ժանրային) նկարչությունը, որի մեջ ավելի հստակորեն են արտահայտում դեմոկրատական խավերի գաղափարական-գեղարվեստական ձգտումները։ Նոր բովանդակություն են ձեռք բերում դիմանկարչությունը, պատմական նկարչությունը և բնանկարչությունը։

Այս շրջանում ձևավորվում է նոր հայացք բնանկարչության նկատմամբ։ Ավագ սերնդի նկարիչները հաղթահարում են բնության ռոմանտիկական պատկերումը։ Խորթ ու անընդունելի են համարվում բնության արհեստական գեղեցկացումը, գունային արտաքին էֆեկտներով տարվելը։ Բնանկարչության հիմնական թեման դառնում է հայրենի բնությունը և նրա ամենօրյա ռեալ, սովորական կյանքը իր բազմակողմանիությամբ։ Շրջիկ (պերեդվիժնիկ) գեղարվեստական ցուցահանդեսների ընկերության ցուցահանդեսում երևան եկած Ա. Ս. Սավրասովի «Սերմնագռավները վերադարձան» պատկերը (1873) նոր էջ է բացում ռուսական ազգային ռեալիստական բնանկարչության մեջ։

Էլ ավելի նշանակալից է այն, որ նոր հոսանքի նկարիչները որոշում են իրենց ստեղծագործությունների ցացահանդեսներ կազմակերպել ոչ միայն մայրաքաղաքում և Մոսկվայում, այլև Ռուսաստանի տարբեր քաղաքներում և գավառներում, կերպարվեստը մոտեցնելով ժողովրդի լայն խավերի գեղարվեստական դաստիարակությանը։

Այդպիսի խնդիր, մինչ այդ, կատարում էր միայն Այվազովսկին միայնակ, իր ստեղծագործությունների ցուցահանդեսները կազմակերպելով Ռուսաստանի տարբեր քաղաքներում և նույնիսկ ծայրագավառներում։ Այժմ այդպիսի խնդիրը իր վրա է վերցնում նորաստեղծ ընկերությունը։ Դա շատ բարձր է գնահատվում ժամանակի ռուս մտավորականության, ռուսական մշակույթի առաջավոր գործիչների կողմից, մասնավորապես գրող Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի՝ պերեդվիժնիկների առաջին ցուցահանդեսի կապակցությամբ հրապարակած հոդվածում։

Ռուսական գեղարվեստական մշակույթի մեջ տեղի ունե-

ցող վերոհիշյալ նշանակալից տեղաշարժերը, որոնք պայմանավորված էին ժամանակաշրջանի դեմոկրատական խավերի շահագրգռվածությամբ, իրենց յուրահատուկ արտահայտությունն են գտնում հայ կերպարվեստի և մասնավորապես Հովհ. Այվազովսկու ստեղծագործությունների մեջ։ Նկարիչը ավելի ու ավելի է մոտենում կյանքին, բնության տարբեր պահերի ռեալ պատկերմանը։ Զգալիորեն հաղթահարելով վաղ շրջանի ստեղծագործություններում երևան եկած ռոմանտիզմի տարրերը, որոնք, ինչպես արդեն նշել ենք, ցայտուն արտահայտություն են գտել լավատեսությամբ և՛ բնության ահեղ պահերին մարդը մարդուն օգնելու գաղափարը կրող «Իններորդ ալիքը» և՛ 1840-ական թվականների մի շարք պատկերներում, Այվազովսկին այժմ՝ 1870-ական և 1880-ական թվականներին, ստեղծում է մեծ մասամբ ռեալիստական պատկերներ։ Այդ տենդենցը նկատվում է 1871-1872 թվականներին նկարած պատկերներում, որոնցից մեզ են հասել շուրջ 18 մեծ ու փոքր ստեղծագործություններ, իսկ ավելի որոշակի «Միաձան» և «Նավաբեկում» պատկերներում (1873), որոնց մասին խոսք կլինի ստորև։

1871 թ. ուշ աշնանը Հովհ. Այվազովսկին մեկնում է Պետերբուրգ իր նկարած նոր պատկերները մայրաքաղաքում ցուցադրելու համար։ Պետերբուրգյան արվեստասեր հասարակությունը, ինչպես միշտ, այս անգամ ևս հետաքրքրությամբ է ընդունում անվանի արվեստագետի նոր ստեղծագործությունները։ Գնվում են մի քանի նկար։

1871-1872 թթ. ամեռը Հովհ. Այվազովսկին անց է կացնում Պետերբուրգում։ Այստեղ Այվազովսկին թերթերից տեղեկանում է, որ Մինսկ քաղաքի ուսանողները փտնվում են չափազանց ծշվառ, աղքատ վիճակում և օգնության կարիք ունեն։ Նկարիչը նկարում է «Ծովային տեսարան» պատկերը այդ ուսանողության օգտին վիճակախաղ (լոտերիայի) գցելու համար։ Այդ մասին Մինսկի պետական արխիվում պահպանվել է «Գործ ուսանողությանը օգնող ընկերության, Հ. Կ. Այվազովսկու պատկերը վիճակախաղի ծուլլ տալու մասին», որտեղ ասվում է. «Նշանավոր նկարիչ Հ. Այվազովսկին մայրաքաղաքային թերթերից տեղեկանալով Մինսկի աղքատ ուսանողության ծշվառ, ծանր վիճակի մասին, նրանց օգնե-

լու համար նկարեց «Ծովային տեսարան» պատկերը։ Վեց հարյուր տոմս յուրաքանչյուրը 1 ռուբլի, շուտով խաղացվում է վիճակախաղի համար և գումարը անմիջապես մուծվել է Մինսկի ուսանողական հիմնարկների դրամարկղը աղքատ ուսանողների և ուսանողուհիների ուսման վճարի համար»։[2]

Հովհ. Այվազովսկու մարդասիրական այդ արարքը լան արձագանք է գտնում ոչ միայն Մինսկի ուսանողության շրջանում, այլև մայրաքաղաքում։ Այդօրինակ օգնություն նկարիչը ցուցաբերում է նաև հետագայում։

Փակելով իր անհատական ցուցահանդեսը Պետերբուրգում և ավարտելով գործերը, Այվազովսկին գարնան սկզբներին վերադառնում է Թեոդոսիա։ Այդ ամիսներին և ամբողջ ամռանը Այվազովսկին ապրում և ստեղծագործում է տանը, պատրաստվում արտասահմանյան նոր ճանապարհորդության։

ԵՐԿՐՊԱԳՈՂՆԵՐԸ...

1872 թ. ուշ աշնանը, ձմռան ամիսներին, Հովհ. Այվազովսկին մեկնում է Նիցցա (Ֆրանսիա)։ Այստեղ 1873 թ. սկզբներին նա բացում է իր ստեղծագործությունների ցուցահանդեսը, որի մուտքի վճարը հատկացնում է քաղաքի մանկատան օգտին։ Ցուցահանդեսը մեծ հաջողություն է ունենում։ Նրա պատկերները տեսնելու համար ցուցահանդես են գալիս ոչ միայն շատ հաճախորդներ, այլև պատկերներ գնողներ և պատվիրատուներ։ Այդ մասին նկարիչը պատմում է. «Նիցցայում ես կազմակերպեցի իմ պատկերների ցուցահանդես, տեղի մանկատան օգտին։ ...Դեռ չէի հասցրել կախել նկարները, երբ ցուցահանդեսի սրահ մտավ ոմն կապիտան Գարլանդիացու մի իսկական տիպար. սառը, զուսպ շարժումների մեջ, խոսքի մեջ ժլատ։ Արագորեն փոխելով իր խավար աչքերը մի պատկերից մյուսը, նա մատով ցույց է տալիս պատ-

---

[2] Гос. ист. архив Белорусской ССР, տե՛ս նաև Н. Барсамов, И. К. Айвазовский, *1862*, էջ *107*։

կերները, անտանելի ֆրանսերեն լեզվով ասելով "je achete ça, ça-et pais ça!" (Ես գնում եմ սա՛, սա՛... և սա՛ էլ)։ Եվ նա գնեց ինձանից հինգ պատկեր 50.000 ֆրանկ ընդհանուր գումարով։ Ավարտելով առևտուրը մաքուր անգլիական ձևով, նա գրեց իմ հասցեն, մուծեց 5000 ֆրանկ կանխավճար, պարտավորվելով մնացած 45.000 ֆրանկը հանձնել 10 օր հետո։ Այս վերջին խոսքը այդ օրիգինալ գնորդը կատարեց ամենաճշգրտությամբ։ Իմ էժանագին պատկերները, ինչպես երևում է, համընկան անգլիացու ճաշակին»[1]։

Նույն ժամանակ Նիցցայի բնակիչ, հիանալի վիլլա ունեցող մի հայտնի հարուստ անձնավորություն, լսելով Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսի մասին, գալիս է ցուցահանդես՝ պատկերներ գնելու։ Նա ամենից առաջ հարցնում է ցուցադրված պատկերների գների մասին։ «Իմանալով, որ ցուցահանդեսում 10000 ֆրանկից ավելի գին ունեցող պատկեր չկա, դժկամությամբ հայտնում է, որ ինքը չի գնում 30000 ֆրանկից պակաս գին ունեցող պատկերներ» և հեռանում է ցուցահանդեսից...

«Մեկ ուրիշ, ոչ պակաս օրիգինալ անձ, որի հետ ես ծանոթացա Նիցցայում,— պատմում է Այվազովսկին,— շատ բարի և սիրալիր մի պառավ կին էր՝ կոմսուհի Դամպյերը, նկարչության կրքոտ սիրահար, որն անցյալում՝ չահել տարիներին, զբաղվել էր նկարչությամբ։ Նա գնեց ինձնից երկու պատկեր և ցանկություն հայտնեց ինձ հետ անձամբ ծանոթանալ։ Խոսելու ժամանակ նա իր համարյա ամեն մի խոսքը ուղեկցում էր շան հաչոց հիշեցնող մռնչյունով։ Խոսելով նկարչության մասին՝ նա ասում է, որ ինքը մի առանձին սիրով է նկարչությանը անդրադարձել շնորհիվ մի քանի տարի առաջ Փարիզ եկած լեհական ծովանկարիչ Իվակովսկու... Դատելով նրա տեսած պատկերների սյուժետներից, ես համոզվեցի,— շարունակում է պատմել Այվազովսկին,— որ նա խոսում է իմ մասին և ասացի նրան, թե նրա «Իվակովսկին» և Այվազովսկին միևնույն անձն է։ Այդ ժամանակ կոմսուհին ուրախացած գրկում է ինձ, սկսում է համբուրել, հաչել, դղրդելով ինձ ամենաքնքուշ, շոյիչ խոսքերով, միաժամանակ

[1] «Русская старина», 1878, հ. 23, էջ 292—293:

մռնչալով։ Այդ տեսարանը ինձ վրա ծանր տպավորություն թողեց»։[2]

Փակելով իր ցուցահանդեսը Նիցցայում՝ Այվազովսկին Ֆրանսիայից մեկնում է Իտալիա և փետրվարի սկզբներին Ֆլորենցիա քաղաքում բացում է մի նոր ցուցահանդես։ Նիցցայում վաճառած 7 պատկերների փոխարեն նա նկարում է նորերը և 12 պատկերներով ներկայանում է արվեստասեր ֆլորենցիացիներին, հայտնելով, որ իր այդ ցուցահանդեսի մուտքի վճարի ողջ գումարը հատկացնում է Առնո գետի բարձրացման պատճառով առաջացած հեղեղից տուժածներին օգնելու համար։ Բարեգործական նպատակով բացված այդ ցուցահանդեսը ավելի է բարձրացնում արվեստասերների, քաղաքի բնակչության և զբոսաշրջիկների հետաքրքրությունը։ Հովհ. Այվազովսկին անծանոթ արվեստագետ չէր տեղացիների, մանավանդ Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսորների համար։ Նրանք հիշում են 1840-ական թվականների սկզբներին այստեղ երիտասարդ նկարչի ունեցած հաջողությունները։ Այժմ՝ 30 տարի անց, նրանք շտապում են տեսնել մեծ արվեստագետի նվաճումները և կրկին հիանալ նրա անզուգական արվեստով։ Իտալական «Գեղարվեստական Իտալիա», «Ժողովրդական թերթ» և մյուս թերթերը հրապարակում են հոդվածներ նկարչի և նրա ստեղծագործությունների մասին, բարձր գնահատելով նրա արվեստը։ Այվազովսկու ցուցահանդեսը «հավաքեց անթիվ-անհամար ժողովուրդ մեր (Ֆլորենցիայի) գեղարվեստի ակադեմիայում»,— հաղորդում է դրանցից մեկը, ցուցահանդեսի «մուտքի մոտ անսովոր նեղվածք և հրոց-ջարդոց է տիրում»,— գրում ռուսական ամսագիրը։ Մուտքի վճարի գումարը հասնում է մինչև 4000 լիրի (800 ռ. արծ.)։

Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսորները ակադեմիայի կանոնադրության համաձայն առաջարկում են Այվազովսկուն, որպես մեծատաղանդ օտարերկրացի նկարիչ, նկարի իր ինքնանկարը Պիտտի պալատի պատկերասրահում գետեղելու համար։ Այդ պատկերասրահում 16-րդ դարից սկսած իրենց ինքնանկարներն են թողել բազմաթիվ աշխար-

---

[2] «Русская старина», 1878, հ. 23, էջ 292—293:

հանրակ արվեստագետներ։ Ռուս նկարիչներից այստեղ միայն Օրեստ Կիպրենսկու ինքնանկարն է։ Հովհ. Այվազովսկին խոստանում է նկարել իր ինքնանկարը և նվիրել պատկերասրահին։ Ահա այսօր Պիտտիի պատկերասրահում գտնվող այդ ինքնանկարը ներկայացնում է նկարչին հասուն տարիքում, կամային, ստեղծագործական ուժով լցված, աշխույժ և համարձակ, առաջ ուղղված հայացքով։

Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիայի այդ առաջարկը ավելի է բարձրացնում հասարակության ջերմ հետաքրքրությունը նկարչի նկատմամբ։ Առանձնապես մեծանում է Տոսկանիայի այդ մայրաքաղաքի կանանց, հատկապես աղջիկների ակտիվ հետաքրքրությունը։ Նրանք խմբերով, իսկ երբեմն նաև առանձին, ծաղկեփնջերով են դիմավորում մեծ արվեստագետին։ Նրանց միանում են Ֆլորենցիա ժամանած զբոսաշրջիկները։

Հովհ. Այվազովսկուն առանձնապես հուզում է ամերիկուհիների սարքած օվացիան հյուրանոցում։ Նյու-Յորք քաղաքից Իտալիա ժամանած զբոսաշրջիկները՝ մեծ մասամբ կանայք ու աղջիկներ, լսելով, որ Ֆլորենցիայում բացվել է Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսը, մեկնում են Ֆլորենցիա և հիանում նրա ծովանկարներով։ Նրանցից մեկը՝ մի դեռատի աղջիկ,— պատմում է նկարիչը,— ձեռք բերելով նկարչի հասցեն, այցելում է նրան և խնդրում նկարել իր համար ոչ մեծ ծավալի պատկեր 300 լիրայի (70 ռ. արծ.) գումարով։ Այվազովսկին իրեն հատուկ արագությամբ նույն ժամին նկարում է մի փոքրիկ ծովանկար՝ կատարելով աղջկա խնդրանքը, որը դեռատի ամերիկուհուն մեծ հրճվանք է պատճառում։

Հաջորդ օրը Այվազովսկուն է ներկայանում մի այլ ամերիկուհի, որը ցույց տալով նոր գնած բավական վատ մի բը նանկար, հարցնում է, թե ինչպիսի՞ն է այդ նկարը։ Այվազովսկին անկեղծորեն հայտնում է, որ դա վատ, անհաջող նկար է։ Այդ ժամանակ ամերիկուհին ասում է, թե այդ չափի ծովանկարի համար ինքը Այվազովսկուն վճարել չի կարող, իսկ ձրի վերցնել նա չի ցանկանում։

— Այդ կարելի է հարթել,— պատասխանում է նկարիչը՝ ասելով,— ես կնկարեմ մի պատկեր այն գնով, որքան դո

դուք վճարել եք այդ պատկերի համար, բայց ձեզնից փող չեմ վերցնի, դրա դիմաց գնեցեք ինձ համար խճերից պատրաստված որևէ բան։ Պատվիրատուն բավականությամբ համաձայնվում է և երբ գալիս է պատկերը վերցնելու, նկարչին է նվիրում մի շատ գեղեցիկ պրեսս-պապյե։ Դա տեղի է ունենում ուրբաթ օրը։ Կիրակի օրը եկեղեցուց վերադառնալով հյուրանոց, Այվազովսկին նկատում է, որ իրեն սպասում են ամերիկուհիներ... Նկարիչը մտնում է հյուրանոց և տեսնում է աստիճանների վրա՝ երկու կողմերից, ամերիկուհիներ կանգնած, կամելիա ծաղիկների հիասքանչ ծաղկեփնջեր ձեռքներին բռնած։ Երբ Այվազովսկին սկսում է աստիճաններով վեր բարձրանալ, այդ գեղեցիկ, սիրունատես աղջիկներն իրենց ձեռքի ծաղկեփնջերից ծաղիկներ են նետում մեծ նկարչի ոտքերի տակ։ Աստիճանների վերջում ամերիկուհիներից ավագը նրա գլխին դնում է ծաղկեպսակ, արտասանելով մի շատ սիրալիր ու բարեհամբույր ճառ։

Այնուհետև աղջիկները տալով նկարչին իրենց այցետոմսերը, խանդավառորեն հրավիրում են նրան Ամերիկա՝ Նյու-Յորք, խոստանալով նրան հանդիսավոր ընդունելություն կազմակերպել հայրենիքում, ծաղկապատելով նրա ամբողջ ճանապարհը։[3] Նույն ժամանակ Ֆլորենցիայի կանայք և աղջիկները, իրենց հերթին, Այվազովսկուն նվիրում են մի շքեղ ալբոմ Տոսկանիայի ամբողջ շրջանի մեծանուն անձանց, գիտական շրջանների և արվեստասեր կանանց բազմաթիվ autographներով։ Պատմելով այդ ամենն իր կենսագրին, Այվազովսկին ասում է, որ դա եղել է իր կյանքի ամենաերջանիկ օրերից մեկը։

Քանի դեռ Ֆլորենցիայի արվեստասերները հիանում էին նկարչի ծովանկարներով,— հաղորդում է իտալական մամուլը,— Այվազովսկին տանը՝ հյուրանոցում, շարունակում էր ստեղծագործել։ Այստեղ նա նկարում է «Փոթորիկ Սև ծովում», «Ամպերը Ազովի ծովի վրա երեկոյան պահին» և «Արևածագը Քիբլարթարում» պատկերները, որոնք երկու փոքրածավալ այլ նկարների հետ մտադրվում է ցուցադրել Հռոմում, «որտեղ նա մեկնում է ընթացիկ ամսվա վերջին»։[4]

3 «Русская старина», 1878, հ. 23, էջ 294։

4 Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահի արխիվ։

1873 թ. մարտի սկզբներին նա արդեն Հռոմում էր։ Այստեղի Փոփոլո հրապարակի վրա եղած մի սրահում նա ցուցադրում է իր նոր ստեղծագործությունները՝ վերոհիշյալ պատկերները, թվով 6 ծովանկար, որոնք գրավում են այցելուների ուշադրությունը։ Իտալիայից Պետերբուրգ ուղարկած Մ. Ի. Ժելեզնովի սևագիր հոդվածումասվում է, որ այնտեղ ցուցադրված պատկերներից մեկը՝ «Արևածագը Ջիբրալթարում» պատկերը, «...ամենակատարյալն է իմ տեսած պատկերներից»։ Նա հայտնում է, որ Այվազովսկուն փառաբանում են բոլորը, այդ թվում Պիտտիի պատկերասրահի պրոֆեսորները, փորագրության պրոֆեսոր Լիվին և ուրիշներ։[5] Հովհ. Այվազովսկին ընտրվում է Ֆլորենցիայի ակադեմիայի պրոֆեսորական կոլեգիայի պատվավոր անդամ։

Հովհ. Այվազովսկու հաջողությունները ջերմ արձագանք են գտնում նաև հայ մտավորականության շրջաններում։ Մարտի 12-ին բանասեր և պատմաբան Հ. Գ. Զարբհանալյանը Հռոմից գրում է Մխիթարյան միաբանության աբբահայր գերապատիվ Էդ. Հյուրմյուզյանին. «Այվազովսկի Յովհաննես դարձավ ի քաղաքս և ողջունէ զսրբութիւնդ։ Ի Փոփոլոյ հրապարակի եղեալ է ի տես հասարակաց վեց հրաշանկար պատկերս՝ զորս յեղեսցէ յարուեստահանդեսն Վիեննայի, Վասն միոյն եվեր, որ է տեսնի, մի ձմեռայնոյ ի Մոսկուա, և փոքր քան պատկեր նորա զոր ունիմք առ մեզ տուեալ են 80000 ֆրանքս, և չկամեցաւ է վաճառել, իսկ այլքն արդեն թուին վաճառեալք կամ յանձնարարութիւնք, և ոմանք եռապատիկ մեծութեամբ քան զմերն»։[6]

* * *

Հռոմից Այվազովսկին ապրիլի կեսերին մեկնում է Վիեննա։ Այդ ժամանակ Վիեննայում արագ տեմպերով ընթանում էին համաշխարհային գեղարվեստական ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքները։ Հովհ. Այվազովսկին

---

5 Լենինգրադի Ռուսական թանգարանի արխիվ, ֆ. 22. գ. 52։

6. Ս. Ղազար միաբանության դիվան։ Թուղթ առ Գևորգ Էդ. Հյուրմյուզյանին, 1873 մարտի 12։ Տե՛ս նաև «Բազմավեպ», 1937, №. 11։

այստեղ էր եկել իր ստեղծագործությունները համաշխարհային գեղարվեստական ցուցահանդեսում ներկայացնելու համար։ Դեռևս մարտ ամսին Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի սրահներում բացվել էր գեղարվեստական ցուցահանդես Վիեննայի ցուցահանդեսի համար ռուս նկարիչների ստեղծագործություններ ընտրելու համար։ Հովհ. Այվազովսկու մասնակցության հարցը նրա բացակայության պատճառով, թողնվել էր նրա հայեցողությանը։ Այստեղ՝ Վիեննայում, նկարչին հաջողվում է լուծել իր մասնակցության հարցը։

Մայիսի 1-ին Վիեննայում մեծ հանդիսավորությամբ բացվում է համաշխարհային գեղարվեստական ցուցահանդեսը։ Ցուցահանդեսի բացմանը մասնակցում են ոչ միայն աշխարհի տարբեր երկրներից ժամանած արվեստագետներ, հասարակական ու պետական գործիչներ, գիտության և հոգևոր գործիչներ, գրողներ, լրագրողներ, այլև... գողեր ու ավազակներ։ «Մշակ» թերթը հաղորդում է. «Վիեննայի պոլիցիան լոնդոնից ստացավ ֆոտոգրաֆիական պատկերների մեծ քանակություն (իգական և արական սեռի չարագործներ), որք դիտավորություն ունին պատվել իրենց ներկայությամբ Վիեննայի աշխարհահանդեսը...»։

Սակայն այդ գողերն ու ավազակները Վիեննա ժամանած Այվազովսկուն որևէ վնաս չեն պատճառում։ Նկարչի ցուցադրած երկու ծովանկարները այստեղ հետաքրքրությամբ են դիտվում։ Նա առիթներ է ունենում ծանոթանալու բազմաթիվ արվեստագետների և, որ կարևոր է, տարբեր երկրների ժամանակակից նկարչության հետ և հարստացնում իր տպավորությունները։ Ցուցահանդեսում վաճառվում է նրա ծովանկարներից մեկը։

ՆՈՐ ԳՈՐԾԵՐ

Գոհ և լավ տրամադրությամբ նա վերադառնում է տուն և ամբողջապես կլանվում ստեղծագործությամբ։ Վիեննայի համաշխարհային ցուցահանդեսում նրա ծովանկարների

նկատմամբ ցուցաբերված հետաքրքրությունը նրան նոր լիցք է տալիս շարունակելու իր բեղմնավոր գործունեությունը նկարչության այդ բնագավառում։ Նկարիչը տեսնում ու համոզվում է, որ ծովանկարչությունը ուրիշ ժողովուրդների արվեստում մեծ տեղ չի գրավում։ Շատ քիչ են լավագույն ստեղծագործությունները։ Դա պարտավորեցնում էր նրան ավելի շատ ու ավելի լավ գործեր ստեղծել։ Եվ նա ստեղծում է նոր պատկերներ։

Հունիս-օգոստոս ամիսներին, մինչև աշնանային եղանակները սկսվելը, 56 ամյա նկարիչը, անընդհատ աշխատելով, ստեղծում է ավելի քան 5 մեծ ու փոքր պատկեր, որոնցից «Միածան» (1873) կտավը (102×132) դառնում է այդ շրջանի նրա ստեղծագործությունների պսակը։

«Միածանը» ներկայացնում է փոթորիկի ահեղ տեսարան կեսօրին։ Ալեկոծ ծովի հսկա ալիքները առագաստանավը մղել են դեպի ամայի, քարքարոտ ափ և խփել ստորջրյա ժայռերին, որից հսկա առագաստանավը շրջվել է մի կողմի վրա։ Այնտեղից դուրս թափված մարդիկ պատսպարվել են մի նավակի մեջ, որին կատաղի, փրփրակալած ալիքները տաշեղի պես քշում են դեպի ժայռոտ ափը, որտեղ նրանց սպասում է անխուսափելի ջախջախումն։ Ուժեղ քամուց և սարսափից մարդիկ կծկվել են նավակի մեջ։ Մի քանի խիզախ թիավարներ, այլևս ոչինչ անել չկարողանալով, նայում են ափի մոտ երևացող ծիածանին։ Բազմագույն ծիածանի կիսակամարը, որը նրբորեն նկարված է մշուշապատ, ժայռոտ ափերի ֆոնի վրա, հեռավոր երկնակամարում երևացող կարմրավուն ամպերի հետ այդ ահեղ տեսարանին տալիս է ինչ-որ մեղմացնող, լուսավոր, հուսահատ տրամադրություն։ «Միածանը» նախորդ տարիներին նկարած փոթորիկի տեսարան ներկայացնող մյուս պատկերներից տարբերվում է իր լուսավոր, պայծառ կոլորիտով։ Դա հատկապես արտահայտում է նկարչի լավատեսական միտումը, այն, որ ծիածանի երևալուց հետո բնությունը խաղաղվում է և մարդիկ, որոնք վտանգի են ենթարկվել, կարող են փրկվել։ Մարդու կամքի և բնության ահեղ տարերքի բախման այս նոր տեսարանում Այվազովսկին դարձյալ արտահայտում է այն միտքը, ինչը եղել է նրա բոլոր փոթորիկների ու ալեկոծման

պատկերների գաղափարական բովանդակությունը՝ մարդու փրկության հույսը։ Որքան էլ ահեղ լինի բնության տարերքը, մարդը իր կամքով ու համառությամբ կարող է դիմադրել ու փրկել իր կյանքը։

Համարյա նույնպիսի բովանդակությունն ունի հետագայում նկարած «Նավաբեկում» կտավը (1876)։ Այստեղ ևս պատկերված է փոթորկի տեսարան ծովափի մոտ։ Առաջին պլանի վրա խորտակված է առագաստանավի կայմի մի բեկոր, որը լողում է ալիքների մեջ։ Պատկերի կենտրոնական մասում նկարված նավակը խոշոր և լայնաշերտ ալիքների ուժեղ զարկերից շրջվել է մի կողմի վրա և կիսով չափ սուզվել ալիքների մեջ։ Մարդիկ նետվել են նավի վերին կողմը և ձեռքերն առաջ պարզած փրկություն են աղերսում։ Արևի վերջին ճառագայթները ընկել են դիմացի հսկա ժայռերի վրա, ուր մի քանի մարդ սարսափահար նայում են ալեկոծ ծովի մեջ գտնվող դժբախտներին։ Նրանցից մեկը, ձեռքը մի կողմի վրա պարզած, ցույց է տալիս փրկության ճանապարհը, հասկացնել տալով, որ այստեղ՝ ուղղահայաց ժայռերի մոտ, որտեղ հսկայական ալիքները ուժգնորեն զարկվելով նրանց հարթ մակերեսին փշրվում են օդի մեջ, վայրէջքի ոչ մի ելք չկա։

Այստեղ ծովի հսկայական ուժը նկարիչը պատկերել է լայն շերտով, երկար ձգված կանաչ-կապտագույն ծանր ալիքների ոչ այնքան արտաքին, որքան ներքին, այսինքն՝ ամբողջ խորությամբ ընթացող շարժումով։ Այդ շարժումը հզոր ուժ է կրում իր մեջ։ Նկարիչը զարմանալի արտիստականությամբ կարողացել է ջրի նյութականության հետ վերարտադրել նաև նրա հոսուն մասսայի հզոր թափը, որի դիմաց ոչ մի ուժ, նույնիսկ մարդկանց համառությունը, չի կարող դիմանալ։ Սև, մոխրագույն, կապույտ ու կանաչ և ավելի տաք ու լուսավոր գույների մեղմ հակադրություններն այստեղ ստեղծել են գրքավիշ տեսարան, որն աչքի է ընկնում մեծ արտահայտչականությամբ։ Նկարչի լավատեսությունն այստեղ յուրովի լուծում է գտել։

1873 թ. վերջերին՝ ձմռան ամիսներին, Այվազովսկին մեկնում է Պետերբուրգ և գեղարվեստի ակադեմիայի սրահներում կազմակերպում է իր նոր ստեղծագործությունների ցու-

ցահանդեսը։ Այդ ժամանակ նրա ընկեր, մարտանկարիչ-ակադեմիկոս Բոգդան Պավլովիչ Վիլևալդեն Այվազովսկուն հայտնում է, որ ակադեմիայի կոնֆերենց-քարտուղար Պ. Ֆ. Խսեևը համաձայնվել է թագավոր-կայսրին տեղյակ պահել այդ վերջին ցուցահանդեսի մասին։ «Ես անկեղծորեն չնորհակալ կլինեմ Ձեզնից, եթե նորին մեծությունը կայցելի ցուցահանդես,— գրում է Այվազովսկին Պ. Ֆ. Խսեևին 1873 թ. դեկտեմբերի 6-ին,— ես կարգադրել եմ ցուցահանդեսը երկարաձգել մինչև երկուշաբթի՝ դեկտեմբերի 9-ը, որպեսզի Ձեր ակադեմիայի աշակերտներին առանց վճարի թույլ տան այցելել ցուցահանդես. Այդ պատճառով խնդրում եմ... եթե ավելորդ չեք համարի, տեղյակ պահեք աղքատ երիտասարդ նկարիչներին, իսկ նրանց համար բավական է, որ ասեն, թե իրենք ակադեմիայի աշակերտներն են»։

Հայտնի չէ. այցելե՞ց թագավոր-կայսրը Այվազովսկու անհատական ցուցահանդեսը, թե՞ ոչ, սակայն, Լենինգրադի պետական պատմական արխիվում պահվող մի հաշվետվություն տեղեկացնում է, որ ցուցահանդեսի մուտքի գումարը, առ 10-ը դեկտեմբերի եղել է 945 ռ. 50 կ., որը նկարիչը ամբողջությամբ նվիրաբերել է աղքատ ուսանողների և երիտասարդ նկարիչների օգնության ֆոնդերին։

Այդ ցուցահանդեսում ներկայացված պատկերներից և ընդհանրապես 1873 թ. ստեղծագործություններից մեզ են հասել և ԽՍՀՄ տարբեր թանգարաններում են գտնվում շուրջ 10 փունջակար և մատիտով ու սեպիայով կատարված 3 գրաֆիկական աշխատանքներ։

Գարնանը Այվազովսկին վերադառնում է Ղրիմ և մինչև աշուն ապրում ու ստեղծագործում է Թեոդոսիայում, երբեմն-երբեմն մեկնելով Շախ-մամայ՝ իր կալվածքը։

Լսելով, որ Ղրիմ է ժամանել Ռուսաստանի թագավոր-կայսրը իր ընտանիքով, այստեղ՝ թագավորական հանգստավայր ամառայրն հանգստի համար, Այվազովսկին մեկնում է այցելության, իր հետ տանելով վերջին ստեղծագործություններից մեկը։ «Ես բախտ ունեցա Լիվադիայում թագավոր-կայսրին նվիրաբերել Սևաստոպոլի ռմբակոծումը պատկերող մեծածավալ պատկերը,— գրում է Այվազովսկին նույն տարվա

նոյեմբերի 14-ին Պ. Ֆ. Խեվին ուղղած նամակում, ավելացնելով,— նորին մեծությունը բարեհաճությամբ ընդունեց այդ պատկերը և այն նվիրեց Սևաստոպոլի թանգարանին»։[7]

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

Ղրիմի Լիվադիա ամառանոցային քաղաքից վերադառնալով Թեոդոսիա՝ Այվազովսկին լուր է ստանում, որ Թուրքիայի սուլթան Աբդուլ Ազիզը նրան հրավիրում է իր մայրաքաղաքը։ Մինչև այդ՝ 1873 թ. ընթացքում, նկարչի և սուլթանի միջև հայ ճարտարապետ Սարգիս Պալյանի միջոցով տեղի էին ունենում փոխհարաբերություններ՝ ծովանկարներ պատվիրելու և պատկերներ վաճառելու գործարք, որը շարունակվում էր շուրջ 20 տարի։

Դեռևս 1850-ական թվականներին Կոստանդնուպոլսում եղած ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, նկարիչը հյուրընկալված լինելով հայ ճարտարապետ Սարգիս Պալյանի առանձնատանը, նրան նվիրում է մի ծովանկար։ Այդ պատկեհետագայում Պալյանը նվիրում է Աբդուլ Ազիզին։ Վերջինս, շատ հավանելով այն, ցանկություն է հայտնում ունենալ Այվազովսկուց մի քանի պատկեր։ Սարգիս Պալյանը անմիջապես հեռագրում է Այվազովսկուն։ «Ես ուղարկեցի չորս պատկեր, որոնք սուլթանը գնեց»,— պատմում է «Այվազովսկին,— դրանից հետո Սարգիս Պալյանի միջոցով նա ինքն է թելադրում իր պատվիրած պատկերների սյուժեները։ Նրա երևակայությունը, հարկ է նկատել, բավական բանաստեղծական էր։ Այդպես, նրա ուղարկած գծանկարների հիման վրա, կատարած կարմիր թանաքով, ես նկարեցի «Փոթորիկ Քիոս կղզու ժայռերի մոտ» և «Ջյունեծածկ սարեր» պատկերները, ընդհանուր առմամբ Աբդուլ Ազիզի համար ես նկարեցի 15 պատկեր։ ...Որոշ ժամանակ անց,— շարունակում է պատմել նկարիչը,— ես Կոստանդնուպոլսից ստացա պաշտոնական

---

[7] «Документы...», *1878, հ. 23, էջ 168։*

հրավեր սուլթանին ներկայանալու համար։ Պատրաստվելով մեկնել, ես նկարեցի մի քանի նոր պատկերներ ևս»։[1]

1874 թ. հոկտեմբերի սկզբներին Հովհ. Այվազովսկին սուլթան Աբդուլ Ազիզի հրավերով մեկնում է Կոստանդնուպոլիս։ «Կոստանդնուպոլիս գալուս հաջորդ օրը ես մեր հյուպատոսության ավագ ներկայացուցչի ուղեկցությամբ ներկայացվեցի սուլթանին։ Սուլթանը ինձ արտակարգ սիրալիր ընդունեց և իր սեփական ձեռքով պարգևատրեց Օսմանիե 2-րդ կարգի շքանշանով»։[2] Այդ բարձրաստիճան շքանշանը հանձնելով, սուլթանը միաժամանակ ծովանկարների նոր պատվերներ է տալիս նրան։

Հետևելով իրեն արվեստասեր ներկայացնող թուրքական սուլթանի պալատից, մի շքեղ պալատ, որը նախագծել ու կառուցել էր նույն հայ ճարտարապետ Սարգիս Պալյանը, Այվազովսկին կառքով վերադառնում է իր հյուրընկալ Պալյանների առանձնատունը և այնուհետև՝ ամբողջ երեք շաբաթ, անց է կացնում պոլսահայերի միջավայրում։

Պետք է նկատել, որ պոլսահայ մամուլը, իսկ դա նշանակում է մի քանի տասնյակ հայկական թերթեր և ամսագրեր, լայնորեն արձագանքում են մեծ հայրենակցի այցը մայրաքաղաք։ Հոկտեմբերի սկզբներին Այվազովսկու ժամանումը նշում է «Մամուլ» թերթը։ «Անվանի հայ պատկերահանը» վերնագրով հոդվածում թերթը հոկտեմբերի 12-ին հաղորդում է մեծ հայրենակցի «զմայլելի և հիանալի» պատկերների մասին՝ նշելով, որ նրա «վրձինը աշխարհիս վրա եզակի է և իր վրձնին հիշատակներովը հավիտյան անմահ պիտի մնա իր անունը, փառք ինքեան և պարծանք հայութեան»։[3]

Ավելի ճոխ և հանդիսավոր է լինում կիրակի օրը (հոկ-

---

1 «Русская старина», 1878, հ. 23, էջ 297։

2 Նույն տեղ, էջ 167։ Այդ մասին 1879 թ. իր կենսագրին պատմելիս Այվազովսկին ասել է այսպես. «Սուլթանը շատ սիրալիր արտահայտվեց իմ պատկերների մասին, ապա հեռացավ մյուս դահլիճը։ Հետո պալատականներից մեկը տվեց ինձ կարմիր թավիշով ծածկված մի արկղիկ ասելով. «Ներքին մեծության սուլթանը կարգադրեց հանձնել անձամբ Ձեզ»։ Այդ արկղիկի մեջ դրված էր երկրորդ կարգի Օսմանիե շքանշան բրիլանտե զարդով»։

3 «Մամուլ», Կ. Պոլիս, 1874, հոկտեմբերի 12։

տեմբերի 10-ին) ճարտարապետ Սարգիս Պալյանի առանձնատանը տեղի ունեցած Այվազովսկու հանդիպումը պոլսահայ մտավորականության հետ։ Այստեղ հավաքված պոլսահայ նկարիչների, գրողների, լրագրողների, հայոց դպրոցների ուսուցիչների ներկայությամբ մի խումբ հայեր յոթ ստորագրություններով ուղերձ են ներկայացնում նկարչին։ Այդ ուղերձի մեջ նրանք գրում են. «...մեծ բարեբախտություն է մեզ, մեր ուրախության գագաթումը հայտնել Ձեզ, որուն համբավըն ու փառքը, բոլոր հայկազյան ազգիս վրա կտարածվի։ Այո՛, հայ ազգը բոլոր աշխարհիս կպանծեննա Ձեզմով»։

Ընդունելով Ուղերձը «վսեմափայլ Հովհաննես էֆենդի Այվազովսկի հետևյալ իմաստալից պատասխանն ուղարկեց. «Շատ շնորհակալ եմ այսօրվան ձեր բարեմաղթություններեն, սակայն, ես երբեք այսչափ պատվո չեմ արժանացած։ Եթե աստված քիչ մը կարողություն ինձի տվել է, գիտցեք որ անդուլ աշխատանքով կրցել եմ ձեռք բերել այս ու ամենայնիվ դեռ աշակերտ եմ բնության հետ, վասնզի աստծու ստեղծած բաներն այնքան աննկարագրելի են, որ եթե 500 տարի ալ ապրելու ըլլամ, միշտ նոր բան մը պիտի տեսնամ շինելու համար։ Շատ թշնամություններ և շատ նախանձոտներ ունեցած եմ կյանքիս մեջ, որոնք լրագրաց միջոցով զիս տանջած են, սակայն երբեք վհատած չեմ։ Իմ միակ մխիթարությունս կտավն է ու վրձինս էր։ Այնտեղ կմոռանայի բոլորն ալ։ ...Մենք ամենևին ժողովրդեն գանգատվելու իրավունք չունինք, եթե մեր կողմանե կատարյալ աշխատություն չլլա, շինէ նախ և առաջ աղեկ բան մը և մի վախենա, զանիկա ուզող և ծանր գնով առնող շատ կգտնվի։ Շատ անգամ իմ շինածներս մեկ անկյունը դրած են, սակայն, զարմանքով կտեսնեի, որ ժողովուրդը մեկեն զանի կգտնար և կդիտեր։ Ռուսերեն առած մը կա, որ կըսէ. աչք ժողովրդին, աչք աստուծո։ Քառասուն տարի է, որ կաշխատիմ և 5000 կտորի չափ պատկերներ շիներ եմ, որոնց հազիվ 200 հատը ապսպրած են ինձի։ Ուրեմն դուք ալ չանացեք, աշխատեցեք, այս պարզապես օգուտ քաղելու։ Ուրախությամբ կտեսնեմ, որ հայերը քիչ ժամանակվա մեջ շատ առաջ գացեր են արվեստներու մեջ, մանավանդ ճարտարապետության մեջ։ Օրինակի համար Սարգիս պեին կառուցած պալատները հիանալի են, և որևիցե ար-

վեստավոր անոր գեղեցիկ ճաշակին պիտի գմայլի։ Կուզեի ձեզի փոխադարձաբար յուրաքանչյուրիդ այցելություն տալ, բայց Պոլսո մեջ, այս մասին եղած դժվարությունից և իմ տկարությանս պատճառով ձեր ամենուդ ներողամտությունը կխնդրեմ»։[4]

Հովհ. Այվազովսկու ճառը լսվում է մեծ հետաքրքրությամբ։ Այստեղ՝ ճարտարապետ Սարգիս Պալյանի տանը, տեղի ունեցող հանդիպման ժամանակ ցուցադրված մեծ ծովանկարչի ավելի քան 40 պատկերները ավելի են ուժեղացնում տպավորությունը և մխիթարությամբ և այցելության պահին մեջ Այվազովսկիի վրձնին արդյունքն եղող 14 կտոր նկարներուն վրա հիացմամբ լցված, բաժանվեցան այս տեսության հիշատակն անջինջ պահելով իրենց սրտին մեջ, նորին վեհության խրախուսալից խոսքերն ավելի ուժ առնելով»[5]։

Հայ նկարիչների և ընդհանրապես պոլսահայ մտավորականության հետ վերոհիշյալ հանդիպումից հետո Այվազովսկին ավելի լայն ճանաչում է գտնում արևմտահայության շրջանում։ Այդ ճանաչումը սկսվում է այն ժամանակից, երբ նա առաջին անգամ 1845 թ. և այնուհետև՝ 1850-ական թվականներին լինում է Կոստանդնուպոլսում, շփվում հայերի հետ, հանդիպումներ ունենում առանձին արվեստագետների հետ։ 1857 թ., օրինակ, նկարիչ Ումետ Հովհաննես Պեյզատը (1809-1874) Այվազովսկու հետ ծանոթանալուց հետո, քաջալերված մեծ հայրենակցի խրախուսանքներով, լուսանկարի հիման վրա նկարում է Այվազովսկու դիմանկարը և նվիրում նրան։ Վերջինս փոխադարձաբար Ումետ Հովհաննես Պայազետին նվիրում է ծովափնյա տեսարանի մի պատկեր, որը շատ է ուրախացնում պոլսահայ նկարչին, որը նկարում է նաև ծովանկարներ։

Նույն ժամանակ Պոլսում գործող նկարիչ Սիմոն Յազըճյանը, որը «Մեղու» և «Թատրոն» թերթերի ծաղրանկարիչն էր, երկար զրույցներ է ունենում Այվազովսկու հետ, 1840-

---

4. «Մամուլ», Կ. Պոլիս, 1874, հոկտեմբերի 15, № 425։ Տե՛ս նաև «Արարատ», էջմիածին, 1874, № 10, էջ 395։

5 Նույն տեղ.։ Տե՛ս նաև «Սուրհանդակ», 1900, № 354։

1830-ական թվականներին այստեղ ապրել և գործում էին հայ նկարիչներ Աբրահամ Սողայանը (1821-1876), Պետրոս Սրապյանը (1813-1898), Մելքոն Տիրացյանը (1837-1904) և ուրիշներ, որոնք ամենայն հավանականությամբ նույնպես ծանոթ են եղել Այվազովսկու հետ և ներկա են եղել նրա հետ հանդիպման ժամանակ։

1870-ական թվականներին պոլսահայ իրականության մեջ արդեն համբավ էր վայելում երիտասարդ ծովանկարիչ Մկրտիչ Ճիվանյանը (1848-1906)։ Նա նկարում էր մեծ մասամբ ծովանկարներ ու ծովափնյա տեսարաններ։ Այն ժամանակ Կ. Պոլսում գեղարվեստական ցուցահանդեսներ կամ ցուցասրահներ չլինելու պատճառով, շատ նկարիչների նման, նա ևս իր նկարները ցուցադրում էր քաղաքի մարդաշատ հրապարակներում, մեծ մասամբ ռուսական հյուպատոսարանի շենքի մոտ, նրա պատերի տակ, մայթերի վրա, ուղղակի փողոցում՝ բաց երկնքի տակ։ Դա հնարավորություն էր տալիս շատերին, մանավանդ օտարերկրացիներին, տեսնելու նկարչի աշխատանքները և գնումներ կատարել։ Այդ կարգի ցուցահանդեսներից մեկը տեսնում է նաև Հովհ. Այվազովսկին։

Մեծ սեր ունենալով դեպի ծովանկարչությունը՝ Մ. Ճիվանյանը իր ստեղծագործություններում աշխատել է նմանվել Այվազովսկուն։ Վերջինս, նկատելով այդ, հետաքրքրվում է նրանով։ 1874 թ. հոկտեմբերին Մ. Ճիվանյանը այցելում է Այվազովսկուն և ցույց տալիս իր նոր ծովանկարները։ Վարպետը հավանում է դրանք և կատակով առաջարկում է այդ ծովանկարների տակ դնել «Այվազովսկի» ստորագրությունը դրանք ավելի թանկ գներով վաճառելու համար։ Երիտասարդ՝ 31 ամյա, նկարիչը ոգևորվում է մեծ հայրենակցի խրախուսանքից և, կուռքի պես պաշտելով հանճարեղ ծովանկարչին, շարունակում է ստեղծագործել ծովանկարներ Այվազովսկու ազդեցությամբ։ Այդ է հաստատում Մ. Ճիվանյանից մեզ հասած «Ալեկոծ ծովը փոթորիկից առաջ» պատկերը (1894), որը գտնվում է Երևանում, մասնավոր անձի մոտ։ Ցավոք մեզ չեն հասել պոլսահայ այդ նկարչի այլ գործեր, Մ. Ճիվանյանի և Այվազովսկու ստեղծագործական կապերը և ազդեցության հարցը լայնորեն մեկնաբանելու համար։ Կարող ենք միայն նկատել, որ Այվազովսկին երբեմն ինքն է առարկել

ուրիշ նկարիչներին նմանվելու և ընդօրինակության դեմ, և դա արտահայտվել է ոչ միայն իր արտասանած վերոհիշյալ ճառում, այլև մասնավոր զրույցների ժամանակ։ Մի անգամ, դարձյալ 1874 թ. հոկտեմբերին, նկարիչ Սիմոն Յազըճյանի հետ փողոցով անցնելիս, ինչպես վկայում է Ռ. Շիշմանյանը, Այվազովսկին ասում է նրան ծովանկարիչ Մկրտիչ Ճիվանյանի մոտ նկատվող նմանողականության մասին. «Այդ տղան հիանալի վրձին ունի, բայց ափսոս, որ փչացնում է»։

Հայ արվեստագետների հետ Հովհ. Այվազովսկու ունեցած զրույցները, նրա դիտողությունները և մանավանդ մտավորականության հետ 1874 թ. հոկտեմբերին ունեցած վերոհիշյալ հանդիպումները, որի ժամանակ ցուցադրվում են նաև նրա ստեղծագործությունները, կարևոր նշանակություն ունեցան արևմտահայ իրականության մեջ գործող հայ նկարիչների հետագա գործունեության համար։ Նրա բարձր արվեստը և համաշխարհային փառքը ոգևորում են այստեղի բոլոր նկարիչներին։

Պոլսահայ մշակույթի գործիչների հետ Այվազովսկու ունեցած այդ շփումը, միաժամանակ, նպաստավոր է լինում նաև հենց իր՝ Այվազովսկու համար։ Նա ավելի լավ և մոտիկից է ճանաչում իր հարազատ ժողովրդի այդ հատվածի կյանքը, մտավոր աշխարհը, մարդկանց և ավելի է մտահոգվում նրանց գեղարվեստական կյանքի հետագա զարգացման հեռանկարներով։ Դա արտահայտվում է ոչ միայն նրա հայրական խորհուրդներում և դիտողություններում, այլև առանձին անձանց կամ ուսումնակրթական հիմնարկներին պատկերներ նվիրելու և, ինչպես ցույց կտանք ստորև, հայ իրականության մեջ նոր ցուցահանդեսներ կազմակերպելու, դրանց մուտքի գումարը բարեգործական նպատակներով հատկացնելու մեջ ևս։

Այդ ամենը առաջ է բերում հայության մեծ հարգանքը իր հարազատ զավակի նկատմամբ և միաժամանակ ոգեկոչում է պաշտպանել նրան նրա դեմ թշնամիների անբարյացակամ վերաբերմունքից։ Հետաքրքրական է, որ Կոնստանդնուպոլսում եղած ժամանակ, երբ, ինչպես «Մշակ» թերթն է հաղորդում «հայազգի նկարիչ Հովհ. Այվազովսկին փառավոր ընդունելություն է գտնում Կ. Պոլսի բոլոր շրջանների

մէջ»[6], այստեղ լոյս տեսնող Ֆրանսիական «Կուրիէր դը օրիան» թերթը և ուրիշներ, նշելով մեծ ծովանկարչի ժամանումը մայրաքաղաք, գրում է թե Այվազովսկին հայ չէ, այլ՝ ռուս, այդ կապակցութեամբ զարմանք հայտնելով, թե ինչո՞ւ են հայերը այդիպիսի ընդունելութեան ցուցց տալիս նրան։

Այդ կնդծիքի դեմ հանդես են գալիս հայ նշանաւոր գրողներգիծաբան Յակոբ Պարոնեանը և ուրիշներ, ցուցց տալով օտարերկրյա թերթերի զրպարտանքի անանկութիւնը։ Յակոբ Պարոնեանն իր հրատարակած «Բատրոն» թերթում հոկտեմբերի 16-ին հրապարակում է «Հովհաննես Այվազովսկի» վերնագրով ընդարձակ հոդված, որտեղ ծաղրելով բոլոր նրանց, ովքեր հայ նկարչին ռուս են համարում, իրեն հատուկ ոճով և սարկազմով գրում է. «Ընթերցող, դուն ալ ինձի պես լսած ես անշուշտ կամ ես էլ քեզի պես լսած եմ նույն անունով տիեզերահռչակ հայ մը որուն համար կըսեին թէ մեր Մենզուլիի հոդվածներուն մեծութիւնը համբավ ունի նկարչութեան մէջ, թէ՝ անոր ամեն մեկ պատկեր անչափ գուն ունի, որչափ որ կարծիք ունի Օրագիր մեկ խնդրուն մէջ, թէ ալեկոծութեան բռնված նավ մը նկարած ունի եղեր, որ չորս կողմեն ջուր կառնե եղեր և թէ այս պատկերն կղզի բանող շոգենավուն ամեն օրվան պատկերն է եղեր, ահավասիկ ընթերցող, այս մեծանուն Հովհաննես Այվազովսկին, լրագրաց գրածին նայելով, այս օրերս Պոլիս կգտնվի։

Ինչպես որ օրեն է, ինչպես որ պարտքն է, մենք ալ մյուս լրագրաց պես կծանոթացնենք, որ այս մեծահամբավ հայազգի նկարիչն այս օրերս Պոլիս կգտնվի»։

Բարձր գնահատելով Հովհ. Այվազովսկուն և նրա արվեստը, Յակոբ Պարոնեանը նույն այդ հոդվածում գրում է. «Բնութիւնը, որ առաջին գաղտնապահ մ' է, չէ կրցեր խեղճ բան մը պահել Այվազովսկիեն, սա յուր վրձինը առած բնութեան խորն է թափանցեր և անոր գաղտինքներուն տեղեկանալով զանոնք ի տես հաներ է։ Բնութիւնն ալ ունի հիմա իր հայելին։ Այվազովսկին նկարներուն նայելուն պես կրնա

---

6 «Մշակ», 1874, № 45։

անոր մէջ տեսնել իր պատկերը։ Հովհաննես Այվազովսկին հայոց փառքն է»։[7]

Ծովանկարիչ Հովհ. Այվազովսկու Կոնստանդնուպոլիս գալը միաժամանակ հետաքրքրություն և նույնիսկ կասկած է առաջացնում նաև... քաղաքական, պետական շրջաններում։ «Մայրաքաղաք գալուս նախօրեին,— պատմում է նկարիչը,— տեղական թերթերում հրապարակվում է հաղորդագրություն, թե «Ադմիրալ Այվազովսկին, որը գալիս է Ռուսաստանից, շուտով ժամանելու է մեր մայրաքաղաքը։

Քաղաքացիական իմ այդ կոչմանը տեղական օտարերկրյա թերթերի խմբագիրները ծանոթ չլինելով, փոխադրել էին զինվորական կոչման, մոռանալով «նկարիչ» բառը։ Անգլիական կոնսուլն այցելում է Կոնստանդնուպոլիսի ռուսական դեսպանությունն և մեր դեսպանին հարցնում է. «Ո՞վ է այդ ադմիրալ Այվազովսկին և ի՞նչ նպատակով է եկել Պոլիս»։ Թյուրիմացությունը հարթվում է, երբ նրան բացատրում են, որ այդ «Ադմիրալը» նկարիչ Այվազովսկին է։

Վերադառնալով Թեոդոսիա, Այվազովսկին ասում է. «Կոստանդնուպոլսում գտնվելուս երեք շաբաթվա ընթացքում ես նկարեցի վեց պատկեր, որոնցից «Ալիքների մեջ ընթացող շոգենավը» և «Շուկայի տեսարան», պատկերները նկարել եմ սուլթան Աբդուլ Ազիզի տված գծանկարների հիման վրա։ Ղրիմ վերադառնալուց հետո ես ուղարկեցի նրան երկու պատկեր ևս՝ «Պետերբուրգի տեսարանը Տրոիցկի կամուրջի մոտից» և «Մոսկվան ձմեռ ժամանակ» պատկերները, որոնց դիմաց սուլթանը նվիրեց ինձ թանկարժեք մի ծխախոտաման բրիլիանտներով զարդարված։ Ընդհանուր առմամբ սուլթանական պալատներում եղած իմ պատկերների թիվը հասնում է 40-ի»։[8]

Տարվա վերջում՝ դեկտեմբեր ամսին, Այվազովսկին նկարում է նոր պատկերներ ևս, որոնցից երկուսը, որոնք պատկերում են Կոստանդնուպոլսի մերձակայքի տեսարաններ, ուղարկում է Կ. Պոլիս՝ ռուսական կոնսուլ Ն. Պ. Իգնատևին և նրա կնոջը՝ նոր տարվա նվեր։ Այդ մեկը, գրում է նկա-

---

[7] «Ծաւալն Կ. Պոլիս, 1874, №66։

[8] «Русская старина», 1878, т. 23, էջ 297։

բիչը, «ներկայացնում է Կոստանդնուպոլիսը ծովից կիոսկի կողմից։ Որքան հիշում եմ հատկապես այդ տեսարանով շատ էր հիացած եկատերինա Լեոնիդովնան (Իգնատևի կինը, Մ. Ս.)։ Երկրորդը — պատկերում է Բյուկդերե տեսարանը»։ Դեկտեմբերի 22-ին նամակում նկարիչը հայտնում է, որ ճարտարապետ Սարգիս Պալյանի քարտուղար Պեշտիմալջյանը կներկայանա Իգնատևին և ուղարկված կտավները կդնի շրջանակի մեջ. «այնպես որ նոր տարվա նախօրեին այդ պատկերները իրենց ոսկեզօծ շրջանակներով կլինեն Ձեզ մոտ։ Շատ ուրախ կլինեմ, եթե այդ պատկերները Ձեզ և տիկնոջը դուր գան»,— գրում է նկարիչը։[9]

Ինչպես տեսնում ենք, 1874 թ. ընթացքում Հովհ. Այվազովսկին նկարում է բավական շատ՝ մեր համեստ հաշվով ավելի քան 30 պատկեր։ Դրանցից մի քանի պատկերների անուններ մենք նշեցինք։ Սակայն, ցավոք, այդ պատկերներից շատերը մեզ չեն հասել, կամ հայտնի չլինելով դրանց կատարման տարեթվերը ու փոխված լինելով վերնագրերը, չեն մտել Ն. Բարսամովի կազմած Այվազովսկու ստեղծագործությունների ընդհանուր ցուցակում։

Այդ ցուցակում նշված 1874 թ. միակ պատկերը՝ «Նեապոլի ծովածոցը մառախլապատ առավոտյան», գտնվում է Հայաստանի պետական պատկերասրահում։ Այդ մեծակտավ պատկերը (148×214) դարձել է ազգային հավաքածուի զարդերից մեկը։

ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ ԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

1875 թ. ձմռան ամիսները Այվազովսկին, հակառակ իր սովորության, անց է կացնում ծննդավայրում։ Դեռևս անցյալ տարի դեկտեմբերին նա ակադեմիայի ղեկավարությանը տեղյակ էր պահել, որ «այս ձմեռ ես ստիպված կլինեմ մնալ Թեոդոսիայում»։[1] Թեոդոսիայում մնալը կապված էր այն

9 «Документы...», էջ 168։

1 «Документы...», էջ 168։

պատվերների կատարման հետ, որոնք նա ստացել էր առանձին անձերից և հատկապես սուլթան Աբդուլ Ազիզից։ Հունվար-փետրվար ամիսներին նա կատարում է շատ աշխատանքներ, այդ թվում՝ «Կոնստանդնուպոլսի տեսարանը գիջեր ժամանակ» պատկերը, որը նա մարտի 24-ին ուղարկում է ռուսական կառավարության դեսպան Ն. Պ. Իգնատևին նվեր, վերջինիս ուղարկած մի, ինչպես նկարիչն է անվանում «հիանալի նվերի» դիմաց։ Մայիսի 23-ին պատասխանելով Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանի սիրալիր նամակին, որով նա հայտնում է, թե «Գիշերը» պատկերը դուր է եկել իրեն և կնոջը, Այվազովսկին տեղեկացնում է, որ սուլթանի բոլոր պատվերներն ինքն արդեն նկարել ավարտել է դեռևս ձմռանը և ստացել դրանց հոնորարը Սարգիս Պալյանի միջոցով։ «Թեև սուլթանը ինձ հարգալից հրավիրել է ամռանը կրկին այցելել իրեն,— գրում է նկարիչը,— սակայն ես առանց երկրորդ անգամ հրավերի, իհարկե, չեմ գնա»։[2]

Ապրիլին Այվազովսկին ուրախ լուր է ստանում՝ ծնվում է նրա թոռը, ավագ աղջկա՝ Հեղինեի որդին՝ Միքայելը։ Հեղինեն ամուսնու՝ բժիշկ Տելոպիդ Սավվիչ Լատրիի հետ ապրում է Օդեսայում։ Ամուսինը աշխատում էր քաղաքային հիվանդանոցում։ Նրանց որդին՝ Միքայել Լատրին հետագայում պապի օգնությամբ դառնում է նկարիչ և ապրում է մինչև 1930 թ.։ Այվազովսկին այնքան է սիրում իր նորելուկ թոռնիկին, որ որոշ ժամանակ անց, երբ նա դառնում է 3—4 տարեկան, բերել է տալիս իր մոտ և քրոջ օգնությամբ պահում ու դաստիարակում է նրան, սերմանելով նրա մեջ սեր և հետաքրքրություն գեղեցիկ արվեստների նկատմամբ։

Հունիսի 20-ին Այվազովսկին Շախ-մամայից գրում է ԴԱ կոնֆերենց քարտուղարին. «Այժմ ես աշխատում եմ մեծակտավ մի պատկերի վրա մոխրագույն երանգներով և մտադիր եմ այդ պատկերը նվիրել գեղարվեստի ակադեմիային, որպես իմ լավագույն ստեղծագործություններից մեկը։ Այդ պատկերի հետ ես կուղարկեմ նաև երկու կամ չորս ոչ մեծ պատկերներ ևս, որոնցից կարելի է ցուցահանդես կազմել... աղքատ աշակերտների կամ նկարիչների օգտին։ Այս տար-

[2] Նույն տեղ, էջ 171։

վեց ընթացքում ես նկարել եմ ավելի քան 25 պատկեր սուլթանի համար, իսկ այժմ, բացի վերը ասված մեծաքանակ պատկերից, նկարում եմ Վիեննայի և Մյունխենի համար»:

Գեղարվեստի ակադեմիայի ղեկավարությունը շնորհակալությամբ է ընդունում նկարչի նախաձեռնությունը և հունվարի 6-ի գրությամբ հայտնում է, որ ակադեմիան կարող է պատրաստել սրահ նրա ցուցահանդեսի համար: Այդ ցուցահանդեսում շատ նոր նկարներով հանդես գալու նպատակով նա ստեղծում է նաև «փոքրիկ Այա հրվանդանի մոտ» պատկերը, որը կարելի է դասել նրա լավագույն ստեղծագործությունների շարքում:

Այվազովսկին Թեոդոսիայում մնում է մինչև հոկտեմբերի մեկը: Դրանից հետո նա երկու օրով մեկնում է Յալթա, որտեղ հանդիպում է Պ. Ն. Տրետյակովի ընտանիքին և ջերմ տպավորությամբ մի երկտող է գրում Մոսկովյան պատկերասրահի տնօրենին:

Հոկտեմբերի կեսերին նա արդեն ճանապարհվում է դեպի Պետերբուրգ: Այս անգամ նա մայրաքաղաք է մեկնում ոչ թե Տուլայով, որի ճանապարհը այդ ժամանակ, ինչպես ասում են, խափանվել էր, այլ Օդեսայի, Բրեստի վրայով: Օդեսայում կարճատև կանգառի ժամանակ նա տեսնում է իր նորելուկ բոռնիկին՝ Միքայել Լատրիին, ավագ աղջկան և նրա ամուսնուն, որոնց նա վաղուց չէր տեսել և կարոտել էր:

Նոյեմբերի վերջերին նա արդեն Պետերբուրգում էր: Գեղարվեստի ակադեմիան նրան տրամադրում է ակադեմիայի ցուցասրահներից մեկը, որտեղ կախում է իր հետ բերած 11 նկարները: Ցուցահանդեսը հասարակության համար բացվում է դեկտեմբերի 5-ին: Վերը նշված նկարներից բացի այստեղ ցուցադրվում են նույն տարում նկարած «Արևամուտը Նիցցա քաղաքի մոտ», «Փոքրիկ Սև ծովում», «Արևամուտը կապրի կղզում», «Առավոտը Վենետիկում» և այլ պատկերներ:

Չնայած դեկտեմբերյան ցրտերին, ցուցասրահ են լցվում մեծ ծովանկարչի արվեստը գնահատող բազմաթիվ արվեստասեր, նկարիչներ, ուսանողներ և մշակույթի այլ գործիչներ: Այվազովսկու նոր ստեղծագործությունները լավ տպավորություն են թողնում նաև ակադեմիայի պրոֆեսոր-

ների վրա։ Ակադեմիայի խորհուրդը բարձր գնահատելով նկարչի վաստակը՝ որոշում է հարց բարձրացնել Այվազովսկուն պարգևատրելու համար։ Պրեզիդենտ Վլադիմիրի ստորագրությամբ 1876 թ. հունվարի 24-ին թագավորին է ներկայացվում գեղարվեստի ակադեմիայի միջնորդություն, որտեղ ասվում է. «Պրոֆեսոր Այվազովսկին գեղարվեստի ասպարեզում կատարած իր մշտական աշխատանքով հատուկ ուշադրության է արժանանում։ Այժմ գեղարվեստի ակադեմիայի դահլիճում բացված նրա ստեղծագործությունների ցուցահանդեսը լավագույնն է։ Չնայած իր պատկառելի տարիքին, տարբեր ժամանակներում նրա ստեղծած բազմաթիվ պատկերներն այժմ էլ ծառայում են որպես գեղեցիկ օրինակներ երիտասարդ նկարիչների համար՝ ծովային տեսարանների նկարչության ուսումնասիրության գործում»[3] 1876 թ. փետրվարի 10-ին Հովհ. Այվազովսկուն շնորհվում է սբ. Ստանիսլավի առաջին կարգի շքանշան գերազանց տաղանդի, եվրոպական լայն ճանաչման և կերպարվեստի զարգացմանը մատուցած նրա օգտակար ծառայության համար։

Դարնանը Պետերբուրգից վերադառնալով Թեոդոսիա, նա տեղեկանում է, որ ինքը ունի արդեն երկրորդ թոռնիկը, միջնակ աղջկա տղան՝ Ալեքսեյ Դենգենը։ Պետք է ասել, որ Այվազովսկու ամուսնացած աղջիկները չորսն էլ ունեն օտարազգի ազգանուններ։ Նկարչի կինը, չարությամբ լցված լինելով ամուսնու դեմ, իր բոլոր աղջիկներին հեռու է պահել հորից և երբեմն նույնիսկ նախօրոք տեղյակ չպահելով նրան, աղջիկներին ամուսնացնում է օտարազգի անձանց հետ, հայկական ոչ մի հետք չթողնելով նրանց ընտանիքներում։ Կրտսեր աղջկան՝ Հովհաննային, որին հայրն ամենից ավելին էր սիրում և նկարել էր նրա դիմանկարը, Այվազովսկին ցանկանում էր ամուսնացնել լազարյաններից մեկի հետ, բայց կինը, լսելով այդ մասին, Հովհաննային շտապ կանչում է իր մոտ՝ Օդեսա, և ամուսնացնում օտարազգու հետ։ Դա խորը ցավ է պատճառում նկարիչ-հորը, որը չափազանց զբաղված լինելով ստեղծագործությամբ, ցուցահանդեսային գործունեությամբ և արտասահմանյան ճա-

---

[3] «Документы...», էջ 175։

պարհորդություններով, անհրաժեշտ ժամանակ չէր գտնում ընտանեկան գործերով զբաղվելու համար։ Ջարամիտ կնոջ այդ վարմունքը այն պատճառներից մեկն էր, որ ստիպեց մեծ արվեստագետին բաժանվել կնոջից։

Չնայած դրան, նկարիչը սիրում էր իր թոռներին։ Նա մտածում էր նրանցից մի քանիսին, որոնք հակում ունեն գեղարվեստի նկատմամբ, նկարիչ դարձնել։ Այդ մտքով տարված՝ նա իր հովանավորության տակ է առնում Ալեքսեյ Գենզենին եւս։ Ալեքսեյ-թոռը նկարչական նախնական պատրաստությունը ստանում է պապի մոտ։ Հետագայում նա ստանում է գինվորական (ծովային) և գեղարվեստական հիմնավոր կրթություն, ծառայության է անցնում բալթյան նավատորմում և միաժամանակ զբաղվում է նկարչությամբ։ Ալ. Գենզենը դառնում է ջրանկարչության վարպետ։ Նա ընտրվում է «Պետերբուրգյան ջրանկարիչների ընկերության» անդամ, բայց և զբաղվում է հաստոցային նկարչությամբ։

Պետերբուրգում եղած ժամանակ Այվազովսկին այցելում է կնոջը, որն ապրում էր առանձին և բժիշկների խորհրդով կարիք ուներ օդափոխության։ Չնայած նրանց միջև վաղուց ստեղծված սառը հարաբերություններին, նկարիչը նրան հրավիրում է ճանապարհորդության և առողջարանային քաղաք Նիցցա։ Կինը համաձայնվում է և ամուսնու հետ գալիս է Թեոդոսիա, այստեղից արտասահման մեկնելու համար։

Ամռան ամիսները Ղրիմի ծովափնյա շրջանում անցկացնելուց հետո, հոկտեմբերի կեսերին Այվազովսկին կնոջ հետ շոգենավով մեկնում է Իտալիա։ Ավելի քան երեք շաբաթ նրանք մնում են Ֆլորենցիայում, շրջապատված հայտնի ծովանկարչի արվեստը գնահատող և նրան ճանաչող անձանցով։

Նոյեմբերի 17-ին կարապետ Էզյանին գրած նամակում Այվազովսկին հայտնում է, որ իրենք երկու շաբաթ ևս կմնան Ֆլորենցիայում, ապա կմեկնեն Նիցցա, ուր կմնան հավանաբար երկու շաբաթ։ Մտածում են գնալ նաև Փարիզ։

Դեկտեմբերին նրանք արդեն Ֆրանսիայի նշանավոր առողջարանային քաղաքում են։ Յուլիա Գրևսը իրեն այստեղ ավելի լավ է զգում։ Ավելի քան երկու շաբաթ այստեղ մնալուց հետո, նրանք միասին մեկնում են Փարիզ և շատ չանցած վերադառնում են Պետերբուրգ։

Այդ եռամսյա ճանապարհորդությունը նպաստավոր եղավ ինչպես նկարչի, նույնպես և նրա հիվանդ կնոջ համար։ Այվազովսկին նկարում է մի շարք նոր պատկերներ, իսկ Յուլիա Գրևսը օգափոխությունից բավական կազդուրվում է։

Պետերբուրգում Այվազովսկուն է այցելում ռուս բանաստեղծ Ա. Ն. Մայկովը, որը նրան ցույց է տալիս նկարչին նվիրված իր բանաստեղծությունը։

АЙВАЗОВСКОМУ

Стиха не ценят моего
Ни даже четвертью червонца,
А ты даришь мне за него
кусочек искреннего солнца,
Кусочек солнца твоего!
Когда б стихи мои вливали
такой же свет в среде людей,
Как ты — в безбрежность этой дали
И здесь вкруг этих кораблей
с их парусом, как жар горящим
над зеркалом живых зыбой
и в этом воздухе дышащем
Так горячо и так легко
На всем пространстве необъятном.
Как я ценил бы высоко,
Каким бы даром благодатным
считал свой стих, гордился б им,
и мне бы пелось, вечно пелось,
своим бы солнцем сердце грелось,
как ныне греется твоим!

Այվազովսկին երկար չի մնում Պետերբուրգում։ 6 նկար թողնելով առաջիկայում բացվելիք գեղարվեստական ցուցահանդեսի համար և հրաժեշտ տալով կնոջը, որը ոչ մի կերպ չի ցանկանում Թեոդոսիա գնալ, Այվազովսկին գարնան սկզբներին մեկնում է Պետերբուրգից։

1877 թ. մարտի 5-ին գեղարվեստի ակադեմիայի սրահներում բացվում է «Գեղարվեստական ստեղծագործությունների ցուցահանդեսների ընկերության» երկրորդ ցուցահանդեսը, որին մասնակցում են նկարիչներ Պ. Վերեշչագինը, Գ. Լագորիոն, Գորևսկին, Կլեվերը, Մ. Մակովսկին, Պ. Պ.

Ջիստյակովը, Ի. Ռեպինը, Ի. Յասինսկին և օտարերկրացի նկարիչներ Կլեյնը, Ա. Բելլոպին, Տ. Նեֆֆը, Տ. Դեվիլլը, Դյուբան (Հռոմից) և ուրիշներ։ Հովհ. Այվազովսկու ստեղծագործություններից այստեղ ցուցադրվում են «Փոթորիկ Ղրիմի ժայռերի մոտ» (Ա. Ս. Պուշկինի հիշատակին), «Նեապոլի առավոտը», «Սառցակույտեր», «Նևայի ծովախորշի մոտ», «Խաղաղ ծովը առավոտյան», «Փոթորիկ ծովում» և «Զկնորսի ընտանիքը»։

Մայրաքաղաքի թերթերը, հատկապես գեղարվեստական քննադատությունը, արտահայտվում են այդ ցուցահանդեսների մասին, հրապարակելով տարբեր մեկնաբանություններ։ Քննադատական հոդվածով հանդես է գալիս ռուս գրող Վ. Մ. Գարշինը (1855-1888)։ 22-ամյա գրողը խստորեն քննադատում է առանձնապես Այվազովսկու ստեղծագործությունները։ «Էլի նույն թափանցիկ ջրերը, նույն մառախուղը ջրի վրա,— գրում է Վ. Մ. Գարշինը,— և էլի նույն վարդագույն, կարմրագույն, կապտագույն» պատկերները։ Երիտասարդ գրողը բացասաբար է արտահայտվում հատկապես Պուշկինին նվիրված պատկերի մասին, նկատելով դրա մեջ միայն «որոշ նմանություն»։ Գարշինը գրում է. «Լաց մի լինի, հարգելի պոետ, թեև քեզ շատ է վիրավորել նկարիչը»։ Գրողն աննպաստ է արտահայտվում նաև «Սառցակույտեր Նևայի վրա» և կենցաղային բնույթի «Զկնորսի ընտանիքը» պատկերի վերաբերյալ։ Չնայած քննադատության սրությանը և որոշ ծայրահեղության, գրախոսականը պարունակում էր արդարացի մի քանի դիտողություններ։ 60-ամյա նկարիչը, անշուշտ, հաշվի է առնում քննադատության խոսքը։ Թերևս դրանով պետք է բացատրել այն փաստը, որ, չբավարարվելով արածով, ծովանկարիչը հետագայում ևս անդրադառնում է Պուշկինի կերպարին, փորձելով ավելի բարեհաջող լուծել իր համար դժվար սյուժետային-թեմատիկ պատկերները։

Ապրիլին Հովհ. Այվազովսկին կրկին դիմում է էջմիածնի սինոդին իր կնոջից բաժանվելու հարցը լուծելու համար։ Մեկ ամիս հետո՝ մայիսի 30-ին, էջմիածնի սինոդը վերջնական որոշում է կայացնում բաժանության մասին։ Կինը՝ Յուլիա Գրևսը, իմանալով այդ մասին, անմիջապես դիմում է Լու-

քերական եկեղեցուն և անօրինական է համարում այդ միակողմանի որոշումը։ Նկարիչը նորից խճճվում է ընտանեկան հոգսերի մեջ։

ՆԿԱՐՉԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՎՐՋԻՆԸ

Այդ ժամանակ՝ ապրիլի 12-ին, սկսվում է ռուս-թուրքական պատերազմը, և հայրենասեր նկարիչը ամբողջապես կը-լանվում է պատերազմի հորձանուտում։ Հովհ. Այվազովսկին այս անգամ ևս, ամբողջապես նախորդ՝ Ղրիմի պատերազմի ժամանակ, իր վրձնով ու ստեղծագործությամբ եռանդուն մասնակցություն է ցուցաբերում։ Նա սկսում է նկարել պատերազմական անցքեր, իր արվեստը դարձնելով հայրենիքի պաշտպանության, թուրքական բռնակալությունից ժողովուրդներն ազատագրության և հայրենիքի քաջարի զինվորականներին մեծարելու հզոր ու ազդեցիկ զենք։

Հատկանշական է, որ այդ պատերազմի ծովային ճակատամարտերից նկարիչն ընտրում է հենց այն անցքերը, որոնք առավել բնորոշ կերպով են արտացոլում ռուսական ռազմածովային նավատորմի հզորությունը, ուժը, լավ հասկանալով, որ ռուսական զենքի հաղթանակից է կախված թուրքական բռնակալությունից քրիստոնեական ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ազատագրությունը։ Այդ պատերազմի թեմաներով կատարած աշխատանքներից են «Ռուսական «Կոնստանդին» կատերի ականի պայթյունը թուրքական «Շեֆքեթ» զրահանավի տակ», «Թուրքական «Մեհտսխի» շոգենավի գրավումը «Ռուսիա» շոգենավի կողմից և «Ռուսական «Վեստա» շոգենավի ճակատամարտը թուրքական զրահանավի հետ» պատկերները, որոնք այժմ գտնվում են Լենինգրադի ռազմածովային թանգարանում։ Այստեղ է գտնվում նաև 1878 թ. Այվազովսկու նկարած «Թուրքական զրահանավի պայթյունը Սուլինյան նեղուցում» մեծ կտավը, որն արտացոլում է ռուսական հզոր ռազմածովային նավատորմի հաղթանակը թուրքական նավերի դեմ։

Բացի ծովամարտերից Հովհ. Այվազովսկին արտացոլում

է ռուսական զենքի հաղթանակը նաև ցամաքում։ Նրան առանձնապես ուրախացնում է կովկասյան ռազմաճակատներում ռուսական բանակների հաղթանակները։ Այս պատերազմում հայերը, անշուշտ, ցանկանում էին ռուսական զենքի հաղթանակը, քանի որ թուրքական բռնակալությունից ազատագրվելու իրենց հույսերը նրանք կապում էին Ռուսաստանի հետ։ Հայ մտավորականությունը խրախուսում էր հայությանը՝ ամեն կերպ օգնել ռուսական բանակին։ «Մշակ» թերթի խմբագիր Գր. Արծրունին, գրողներ Րաֆֆին, Ռ. Պատկանյանը և ուրիշներ բազմաթիվ հոդվածներ, աշխատություններ և բանաստեղծություններ են գրում՝ կոչ անելով ժողովրդին զենքի ուժով ազատագրվել թուրքական լծից։

Ռուս-թուրքական պատերազմի թեմաներով բազմաթիվ ծովամարտեր նկարելուց բացի, Այվազովսկին ընտրում է ռուսական բանակի հաղթանակը պատկերող այնպիսի դրվագ, որն անմիջականորեն կապվում է հայերի ազատագրության հետ։ Այդպիսին է «Կարս քաղաքի ազատագրումը»։

Ինչպես հայտնի է, Կարսը ռուսական զորքը վերցնում է 1877 թ. նոյեմբերի 5-ին լույս 6-ի գիշերը։ Քաղաքի ազատագրմանը ռուսական զորամասերի հետ անմիջականորեն մասնակցում են նաև մի քանի հայ գեներալ, բազմաթիվ հայ զինվորներ ու տեղական բնակիչներ։ Կարսի հերոսական ազատագրումը մեծ ցնծություն է առաջացնում կովկասահայ բնակչության մեջ։ Անդրկովկասում ռուսական բանակի այդ փառավոր հաղթանակը և հայերի ազատագրությունը թուրքական լծից նշվում է քնդանոթային հարյուր և մեկ համազարկով ու հրավառությամբ։ Այդ օրերին «Մշակ» թերթը գրում է. «Կիրակի, նոյեմբերի 6-ին Թիֆլիսն իմացավ, որ Կարս բերդը մեր զորքերը գրոհով վեր առան։ Քնդանոթների հարյուր և մեկ անգամ արձակելը և երեկոյան քաղաքի լուսավորությունը արտահայտեցին այն ուրախությունը, որ Թիֆլիսցիներից յուրաքանչյուրը զգում էր Կարսի գրավման լուրն իմանալով»[1]։

Այդ ուրախությամբ համակված՝ Այվազովսկին մտահղանում է նկարել Կարս քաղաքի գրավումը գիշեր ժամանակ։ «Այդ պատկերը, ըստ մեր հարգարժան նկարչի մտահղացման,

---

1. «Մշակ», 1877, № 83։

պետք է պատկերի կարսը գիշեր ժամանակ,— կարդում ենք Այվազովսկու հետ զրույց ունեցողի մի հոդվածում, ավելացնելով,— բացի գծանկարներից ու լուսանկարներից Հովհ. Կոնստանտինովիչը մտադրվում է օգտագործել Ասիական Թուրքիայի այդ ամրոցը տեսած անձանց ցուցմունքները»։[2]

Թե ինչպես է եղել այդ պատկերը, հայտնի չէ, քանի որ այն մեզ չի հասել, բայց հենց միայն այն փաստը, որ նա մըտահղացել է հայկական կարս քաղաքի ազատագրման թեմայով պատկեր ստեղծել և այդ նպատակով նա զրուցել ու խորհրդակցել է ամրոցը տեսած շատ մարդկանց, այդ թվում՝ գեներալ-լեյտենանտ Արշակ Տեր-Ղուկասյանի (Ղուկասով) հետ, ինքնին խոսում է նկարչի հայրենասիրության մասին։ Հովհ. Այվազովսկին հետագայում ևս ստեղծում է ռուս-թուրքական պատերազմների թեմաներով ծովային մարտանկարչական պատկերներ։

ՆՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ ՕԴԵՍԱՅՈՒՄ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, ապրելով ու ստեղծագործելով մշտապես Թեոդոսիայում, Այվազովսկին նկարում է բազմաթիվ նոր բնանկարներ և դիմանկարներ, այդ թվում՝ հոր դիմանկարը, «Ոչխարների լողացում», որոնցից կազմելով մի հավաքածու պատերազմական թեմաներով սյուժետային պատկերների հետ սեպտեմբեր ամսին ցուցահանդես է բացում Օդեսայում։ Մեկ ամիս հետո այդ ցուցահանդեսը տաղափոխվում է Նիկոլաև քաղաքը։ Այդ երկու ցուցահանդեսների մուտքի գումարը նա հատկացնում է վիրավոր ու հիվանդ զինվորների օգնության ֆոնդին։ Ավելի մեծ ցուցահանդես, լրացված նոր ստեղծագործություններով, նա բացում է Պետերբուրգում, որտեղ նա մեկնում է նոյեմբերին։ Հարմար տեղ չգտնելով, նա իր ստեղծագործությունների այդ նոր ցուցահանդեսը կազմակերպում է Հայազգի Քանանյանի

---

[2] «Русская старина», 1881, стр. 454.

(Կանանով) առանձնատանը (Պոլիցեյսկի կոչված կամուրջի մոտ)։ Այդ ցուցահանդեսի մուտքի գումարը ևս, որը կազմում է շուրջ 800 ռ., նկարիչն ամբողջությամբ նվիրում է հիվանդ և վիրավոր զինվորների օգնության համար։ Դրա համար նա պարգևատրվում է կարմիր խաչի նշանով։

Այստեղ ցուցադրված պատկերներից առանձնապես մեծ հետաքրքրություն է առաջացնում «ժամանակի հատկանշականը» («Знамения времены»), որի մասին գրում և արտահայտվում են մայրաքաղաքի համարյա բոլոր պարբերականները, իսկ «ժողովրդական օգնության տեղեկագիր» ամսագիրը դրա լուսանկարը տպագրում է մի առանձին էջի վրա[1]։ Պետերբուրգյան ցուցահանդեսում ներկայացված «ժամանակի հատկանշականը» պատկերի մասին մի բանաստեղծություն է գրում Ա. Ն. Մայկովը։

Воздушный этот крест — ты угодал — всегда
Сиял в выси таинственной под нами!
Он шел нашими полками
Как вифлеемская звезда
В чудесную ту ночь, перед теми постухами,
Что́ первые приветствовать пошли.
Благую в сонь любви и мира на земле...
Он вел нас за Дунай, в метели, в дни и ночи,
На высоте Балкан гоня пред нами тьмы
И пазших в поле быть тускнеющия очи.
Взносили исповедь последнюю к нему...

Նույն ժամանակ մի ռուս կին ևս, ոգեշնչված Այվազովսկու «ժամանակի հատկանշականը» սիմվոլիկ պատկերով, գրում է բանաստեղծություն դրա մասին։ Ռուսական ամսագիրներից մեկը, քաղվածաբար մեջ բերելով այդ բանաստեղծությունից առանձին հատվածներ, գրում է, որ դա «ճիշտ է վերարտադրում պատկերի սյուժետը և նկարչի միտքը»։

Պետերբուրգյան ցուցահանդեսի այցելուների թվում շատ հայեր կային, որոնք ևս, խանդավառությամբ դիտելով մեծ հայրենակցի ստեղծագործությունները, իրենց հիացմունքն էին հայտնում ցուցահանդեսում մշտապես ներկա գտնվող վար-

[1] «Вестник народной помощи», 1877, № 27.

ւլետին։ Այդ այցելուներից մեկն էր երիտասարդ էմանվել (Մանուկ) Մահտեսյանը, որը մոտենալով նկարչին հայտնում է նրան նկարիչ դառնալու իր ցանկության մասին ու խնդրում նրա օժանդակությունը։ Հովհ. Այվազովսկին տալիս է նրան միջնորդական մի գրություն՝ գեղարվեստի ակադեմիա ընդունվելու համար։ Ղրիմի Սիմֆերոպոլ քաղաքից Պետերբուրգ եկած քսանամյա այդ պատանին հետագայում սովորում է գեղարվեստի ակադեմիայում և դառնում ծովանկարիչ, շարունակելով մեծ հայրենակցի ծովանկարչության ժանրը։

Պետերբուրգում Այվազովսկին զբաղվում է նաև իր ընտանեկան գործերով։ Կնոջ հետ նա այլևս չէր հանդիպում։ Նա մեկնել էր Օդեսա և ապրում էր իր կյանքով, շարունակելով չարախոսել ամուսնու դեմ։ Նկարիչը ստիպված դիմում է ներքին գործերի մինիստրությանը՝ անձամբ Լ. Ս. Մակովին, խնդրելով օժանդակել իր նախկին կնոջից ամուսնալուծության գործի վերջնական լուծումը։ Նա գրում է մի ընդարձակ բացատրական, փաստարկելով բաժանության հանգամանքները։ Նրան խոստանում են օգնել այդ գործի լուծմանը։[2] Դրանից հետո Այվազովսկին մեկնում է Թեոդոսիա և, չնայած պատերազմի արհավիրքին, շարունակում է ստեղծագործել։

1878 թ. սկզբներին ռուս-թուրքական պատերազմը մոտենում է Ղրիմի ափերին։ Թուրքական ռազմանավերը ռմբակոծում են նաև Թեոդոսիան։ Հունվարի 2-ին թուրքական զրահանավի ուղիղ նշանառությամբ արձակված ռումբը ընկնում է նկարչի տան վրա և ծակում է տան պատերը։ Այդ մասին Օդեսայի շրջանի ռուսական հրամանատարության հեռագրում ասվում է. «Այվազովսկու տան մեջ ռումբը ծակում է երկու պատ և պայթում է դահլիճում։ Ընդամենը վնասվել են 12 տուն, դրանցից երկուսը քանդվել է, սկսած հրդեհը անմիջապես հանգցվել է»։ Կարծում ենք՝ պատահական չէր ուղիղ նշանառությամբ ռումբի արձակումը նկարչի տան վրա։ Թուրքական հրամանատարությունը լավ էր հասկանում Այվազովսկու զենքի՝ նրա հանճարեղ վրձնի, ռուսական ռազմածովային նավատորմի հզորությունը մեծարող նրա ստեղծագոր-

---

2. *ՀՍՀՄ ԿՊՊ Ա. Ֆ. 821 թ. 10. գ. 626, թ. 1։ Տե՛ս նաև «Լրաբեր», 1984, № 3, էջ 88-89։*

ծությունների ներգործող ուժը և փորձում էր ոչնչացնել այդ ուժի աղբյուրը։ Բարեբախտաբար, նյութական վնասից բացի մարդկային զոհեր չեն լինում։ Հովհ. Այվազովսկին շարունակում է ապրել ու ստեղծագործել։ Ժողովրդին ոգեշնչելու համար նա մտածում է պատերազմական թեմաներով իր նոր ստեղծագործությունների նոր ցուցահանդես բացել մայրաքաղաքում։ Այդ նպատակով նա նկարում է «Թեոդոսիայի ամբակոծությունը» պատկերը։

Հունվարի 21-ին վերջանում է ռուս-թուրքական պատերազմը։ Կնքվում է խաղաղության դաշնագիր։ Հետաքրքրական է նկատել, որ Ռուսաստանի կայսրի և թուրքական կառավարության բանակցությունները հաշտության մասին տեղի են ունենում Կոստանդնուպոլսի թուրքական պալատի այն սրահում, ուր կախված էին Այվազովսկու խաղաղ ծովի, այգաբացի և իրիկնամուտի տեսարաններ ներկայացնող պատկերները։

Փետրվարի վերջերին Այվազովսկին կրկին մեկնում է Պետերբուրգ։ Նա իր հետ տանում է նախորդ տարում նկարած պատերազմական թեմաներով պատկերները, որոնք թագավոր-կայսրի և կայսրուհու ցանկությամբ տարվում են Ձմեռային պալատ, դիտելու համար։ «Թագավոր-կայսրը գոհունակությամբ արտահայտվեց իմ «Կայսրի անցումը Դանուբի վրայով» ոչ մեծ պատկերի մասին,— հետագայում ասում է նկարիչը,— կայսրը ինձ հարցրեց.

— Դու ցուցահանդես ունե՞ս Պետերբուրգում։

— Այո, Ձերդ մեծություն, Քանանյանի տանը։

— Կաշխատեմ այցելել,— սիրալիր ասաց նա։

Իմ հույսերը իրականացվեցին նրանով, որ ինձ առաջարկվեց պատկերներս բերել Ձմեռային պալատ»։[3]

Նույն ժամանակ՝ մարտի 9-ին, Պետերբուրգում «Նկարիչներին օգնող ընկերության» դահլիճում բացվում է «Շրջիկ (Պերեդվիժնիկ) ցուցահանդեսների նկարիչների ընկերության» 6-րդ ցուցահանդեսը, որի բացմանը ներկա է գտնվում Այվազովսկին։ Ռուս առաջավոր, դեմոկրատ նկարիչների միջավայրում նա մոտիկից է շփվում այդ կրթված, բազմակողմա-

[3] «Русская старина», 1881, էջ 431։

նիվ զարգացած և ազգային արվեստի զարգացմամբ շահագրգռված անձանց հետ և ծանոթանում նրանց նոր ու բարձրարվեստ ստեղծագործություններին, որոնք, անշուշտ, նպաստավոր են լինում նկարչի դեմոկրատական հայացքների ամրապնդման գործում։

Մարտի 20-ին Այվազովսկին գեղարվեստի ակադեմիայի առաջարկությամբ կազմում է վերջին չորս ամիսների ընթացքում (1877 թ. նոյեմբերի 15-նց մինչև 1878 թ. մարտի 20-ը) նկարած պատկերների ցուցակը։ Այդ ցուցակում նա նշում է 19 պատկերի անուն, բայց և գրում է. «ընդհանուր առմամբ չորս ամսում նկարել եմ մինչև 30 պատկեր (հաշվելով նաև փոքրերը)»։ Այս փաստը, ինքնին, վկայում է պատերազմի ժամանակ նկարչի բեղմնավոր ստեղծագործական գործունեության մասին։ Հովհ. Այվազովսկին, իսկապես, ժամանակ չի կորցնում։ Նա աշխատում է ամեն օր, վաղ առավոտից սկսելով աշխատանքը, նկարիչը աշխատում է ամբողջ օրվա ընթացքում, փոքրիկ ընդմիջումներով։ Նա չի հեռանում նկարակալից, մինչև որ կտավի վրա չկերպավորվի մտահղացած գաղափարը։ Շատ պատկերներ նա նկարում է մեկ օրում, իսկ երբեմն նաև... մի քանի ժամվա ընթացքում։ Եվ այդպես. չորս ամսում մինչև 30 պատկեր՝ հաշվելով նաև փոքրերը։ Եվ եթե նկատի ունենանք նկարչի տարիքը ևս՝ պարզ կդառնա այն հսկայական պոտենցիալ ուժը, որը կրում է իր մեջ և որը մղում է նրան բեղմնավոր ստեղծագործության։

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Ապրիլ ամսին Այվազովսկին Պետերբուրգից վերադառնում է Ղրիմ և ամռան ամիսներն անց է կացնում Շախ-մամայ կալվածքում։ Այստեղ նա պատրաստվում է եվրոպական նոր ճանապարհորդության։ Այդ նպատակով նկարում է մի քանի նոր ծովանկարներ, հարստացնելով իր մոտ եղած հավաքածուն։ Ճանապարհորդության նպատակն էր մոտիկից ծանոթանալ եվրոպական երկրների ժամանակակից նկարչությանը,

նոր տեսարժան վայրեր տեսնել ստեղծագործության համար և, ցուցահանդեսներ կազմակերպելով, լայն ճանաչում գտնել Եվրոպայի նոր սերնդի հասարակության մեջ։

Հոկտեմբերի կեսերին Այվազովսկին մեկնում է Հոլանդիա։ Այստեղ նա այցելում է նկարիչների արվեստանոցները, ծանոթանում շատ նոր արվեստագետների հետ և Ամստերդամ քաղաքում բացում է իր ստեղծագործությունների ցուցահանդեսը։ Հոլանդիայում «նկարչությունը գտնվում է ծաղկման շրջանում»,— գրում է նա[1]։ Ապա մեկնում է Ֆրանկֆուրտ, ուր մնալով շուրջ մեկ ամիս, նկարում է, իր ասելով, 10 պատկեր։ Դրանցից «Արևմուտը Աբխազիայի ափերի մոտ», «Փոթորկոտ ծովը», «Կոնստանդնուպոլիսը և Մարմարա ծովը գիշեր ժամանակ» մյուս պատկերների հետ ցուցադրում է այստեղ բացած ցուցահանդեսում։ Այնուհետև իր նկարների մի մասը ուղարկելով Մյունխեն, առաջիկայում այնտեղ բացվող գեղարվեստական ցուցահանդեսի համար, ինքը նոյեմբերին գնում է Ֆրանսիա։ Փարիզում Այվազովսկին մնում է մինչև դեկտեմբերի 15-ը։ Ֆրանսիական մայրաքաղաքի գեղարվեստական կյանքը նրա վրա ուժեղ տպավորություն է թողնում։ Նա հանդիպում է իր հին ու նոր ծանոթներին, այդ թվում նկարիչ-իլյուստրատոր Գուստավ Դորեին, որի հետ նա երկար ժամանակ է անցկացնում։ «Փարիզում ես շաշխատեցի,— ասում է նկարիչը,— եռուն կյանքը, մարդկանց շատությունը, եվրոպական այդ մայրաքաղաքի անհանգիստ գործունեությունը աչքառու էր հատկապես սառած (ապատիկ) Հոլլանդիայից հետո։ Թվում էր, թե կիսամութ խոնավ ներքնահարկից տեղափոխվել եմ մի պայծառ լուսավորված մեծ սրահ»[2]։ Հոլլանդիայում և Փարիզում վաճառելով մի շարք պատկերներ՝ Այվազովսկին տեղափոխվում է Շտուտգարդ։

1879 թ. հունվարին Վիտենբերգյան թագավորության մայրաքաղաք Շտուտգարդում Այվազովսկին հրավիրվում է պալատ՝ թագավորական ճաշկերույթի։ Թագավորը և թագուհի Օլգա Նիկոլաևնան (Նիկոլայ կայսրի աղջիկը), որը նը-

---

1 «Русская старина», 1881, № 7, էջ 413։

2 Նույն տեղ։

կարչին ճանապարհ էր Պետերբուրգից, նրան շատ սիրալիր են ընդունում։

— Ափսոս, որ դուք նկարելու համար երկար մնացիք Ֆրանկֆուրտում և ոչ թե այստեղ՝ մեզ մոտ,— ասում է թագուհին։

— Ժամանակ ունենալով,— պատասխանում է նկարիչը,— ես կարող եմ, Ձերդ մեծություն, օգտվել Ձեր սիրալիր թույտվությունից, մնալ Շտուտգարդում և զբաղվել այստեղ նկարչությամբ»[3]։

Շտուտգարդում Այվազովսկին, իհարկե, երկար չի մնում։ Նա նկարում է երկու պատկեր, որոնք իր հետ բերած ուրիշ այլ նկարների հետ ցուցադրում է հասարակությանը, մուտքի վճարը հատկացնելով աղքատների ու քաղցածների օգտին։ «Այդ ցուցահանդեսը նշանակալի գումար տվեց»,— ասում է նկարիչը։ Այստեղ նկարած պատկերներից մեկը Այվազովսկին նվիրում է Շտուտգարդի թագավորական գեղարվեստի ակադեմիային, իսկ մյուսը («Փոթորիկը») գնում է թագուհի Օլգա Նիկոլաևնան ամուսնուն նվիրելու համար։ Իր այդ նվիրատվության, գեղեցիկ ցուցահանդեսի, բարեգործության և բարձրարվեստ ստեղծագործությունների համար Այվազովսկին պարգևատրվում է Վիրտենբերգյան թագի 2-րդ կարգի շքանշանով ու կոմանդորական խաչով[4]։

Փետրվարի սկզբներին Այվազովսկին մեկնում է Գերմանիա և իջևանում Մյունխեն քաղաքում՝ հանգստանալու համար։ Այստեղ էին գտնվում գեղարվեստի ակադեմիան, որ հայտնի էր Եվրոպայում և շատ նկարիչներ։ Այս «Գերմանական Աթենքում,— ինչպես գրում է նկարիչը,— զարգանում էին հատկապես կենցաղային ու պատմական նկարչության ժանրերը։ Կան շատ տաղանդավոր նկարիչներ»։ Սովանկարչին ամենից ավելի դուր են գալիս Լեխբախի և Պեչոտտի դիմանկարչական ստեղծագործությունները։

Մարտի սկզբներին Այվազովսկին մեկնում է Իտալիա։ Ֆլորենցիայում նկարում է չորս պատկեր, ապա գնում է Վենետիկ և Ջենովա Քրիստափոր Կոլումբոսի կյանքի, ճանա-

---

[3] «Русская старина». *1881, № 7, էջ 414։*

[4] *Նույն տեղը։*

պարհորդության և նրա ժամանակի առագաստանավերի վերաբերյալ նյութեր հավաքելու համար։ Նա մտածում է Կոլումբոսի և Ամերիկայի հայտնագործության թեմաներով սյուժետային պատկերներ նկարել։ «Ջենովայում և Վենետիկում ես նկարեցի մի քանի ճշգրիտ գծանկարներ այն ժամանակվա կարավելներից և Կոլումբոսի դիմանկարը»,— գրում է նկարիչը իր հաշվետվության մեջ։

Մարտի 15-ին Այվազովսկին վերադառնում է հայրենիք։ Մեկնելուց առաջ նա երկու պատկեր ուղարկում է Փարիզ տարեկան ցուցահանդեսի համար և երեք պատկեր թողնում է Մյունխենում հուլիսին այստեղ բացվելիք համաշխարհային գեղարվեստական ցուցահանդեսին։ Վերադառնալով Թեոդոսիա, նա կարճատև հանգստից հետո, սկսում է աշխատել, օգտագործելով իր ճանապարհորդական ալբոմում և առանձին թերթիկների վրա կատարած գծանկարները, էսքիզներն ու էյուդները։

Որոշ ժամանակ անց Այվազովսկին ակադեմիային հայտնում է. «...Այժմ նախապատրաստվում եմ նկարել Կոլումբոսի կյանքից մի պատկեր, որը ներկայացնելու է Քրիստափոր Կոլումբոսին Ամերիկայի հայտնագործման ժամանակ։ Դա լինելու է բավական մեծակտավ պատկեր։ Ջենովայում ես նկարեցի այն ժամանակվա նավերի ճշգրիտ գծանկարներ։ Հույս ունեմ, որ առաջիկա ձմռանը կավարտեմ այդ պատկերը»։[5]

Հովհ. Այվազովսկին այդ ժամանակ աշխատում է Ամերիկայի հայտնագործման թեմայով պատկերի վրա։ Բայց նա աշխատում էր ոչ միայն մեկ, այլև միաժամանակ մի քանի պատկերների վրա, երբեք չկրկնելով իրեն, մինչև տարեվերջը՝ 8 ամսում, նա նկարում է «Կոլումբոսի ափ իջնելը Սան-Սալվադոր կղզում», «Կոլումբոսը ջարդված նավի բեկորների վրա», «Փոթորիկ օվկիանոսում», «Քրիստափոր Կոլումբոս» մեծակտավ պատկերը, ինչպես նաև՝ «Գիշերը Ղրիմում», «Ջրաղացը գետափին Ուկրաինայում», «Ա. Ս. Պուշկինը Գուրզուֆի ժայռերի մոտ» և «Ալեկոծում Ղրիմի ափերի մոտ» ոչ մեծ կտավները։

---

5 «Документы...», էջ 179։

Հայաստանի պետական պատկերասրահում գտնվող «Կոլումբոսը ջարդված նավի բակորի վրա» պատկերը, որը ներկայացվում է «Քրիստափոր Կոլումբոս» վերնագրով, արտացոլում է մեծ ճանապարհորդի արկածային կյանքի մի անցք։ Ահեղ փոթորկից խորտակվող նավի բակորին կառչել է մի մարդ, որը ուժասպառ փորձում է փրկություն գտնել։ Նա նկարված է պատկերի առաջին պլանում, ձախ անկյունի մոտ, գիշերային մթության մեջ, իսկ հեռվում հազիվ երևում է ջարդված, խորտակվող նավը հրդեհի մեջ։ Օվկիանոսի անզուսպ, լայն ու հզոր ալիքները արտահայտում են անհանգստություն։ Դրության դրամատիզմը ավելի է զգացվում մարդու դիմագծերում։ Այստեղ ամեն ինչ՝ և՛ մարդը, և՛ առարկաները, և՛ ջուրը նկարված են իրենց նյութական-առարկայական հատկություններով, ռեալիստական են ու համոզիչ։

Հուլիսի 1-ին Մյունխենում բացվում է համաշխարհային գեղարվեստական ցուցահանդեսը, որին Այվազովսկին մասնակցում է երեք պատկերով։

1880 թ. հունվարի 3-ին Ռուսաստանի ժողովրդական լուսավորության մինիստր Դ. Ա. Տոլստոյը պաշտոնապես տեղեկացնում է նկարչին Թեոդոսիայի արական գիմնազիայի կարիքների վերաբերյալ քաղաքացիների խնդրանքը բավարարելու մասին։ Դեռևս անցյալ տարի Թեոդոսիայի քաղաքացիները, Այվազովսկու միջնորդությամբ, դիմել էին լուսավորության մինիստրությունն, խնդրելով միջոցներ հատկացնել դպրոցական պարագաներ, գրենական պիտույքներ և դասագրքեր ձեռք բերելու, ինչպես նաև դպրոցական հին շենքի վերանորոգման համար։ Նկարիչը, որը այդ պրոգիմնազիայի հոգաբարձուն էր, եռանդուն միջամտություն է ցուցաբերում և, օգտագործելով իր ծանոթությունը, հաջողացնում է այդ կենսական խնդրի լուծումը։ Դա մեծ արվեստագետի հասարակական գործերից մեկն էր Թեոդոսիայում։

Հայրենի քաղաքի կյանքին ու նրա գործերին Այվազովսկու անմիջական մասնակցության ցայտուն օրինակ էր նաև նույն ժամանակ՝ փետրվարի 19-ին, նրա տանը կազմակերպված բեմադրություններն ու ճաշկերույթը։ Ռուսաստանում ճոր-

աստիրության վերացման օրվա առթիվ Թեոդոսիայի տղաներն ու աղջիկները պատրաստում են մի մեծ, հսկայական «կենդանի պատկեր», որը ցուցադրվում է Նկարչի հյուրասրահում։ Դրանից հետո նկարիչը իր տանը կազմակերպում է ճոխ ճաշկերույթ, հրավիրելով ամբողջ ուսանող երիտասարդությանը և ուսուցիչներին իր մոտ։

Տեղյակ պահելով այդ մասին լուսավորության մինիստրությանը՝ Այվազովսկին միաժամանակ իր գործերի մասին մարտի 23-ին գրում է. «Ամռան ընթացքում և ձմռանը ես զբաղված եմ եղել երկու մեծածավալ պատկերներով, որոնք ներկայացնում են Ամերիկայի հայտնագործությունը։ Դրանցից մեկը պատկերում է այն պահը, երբ Քրիստափոր Կոլումբոսը իր շքախմբով իջնում է Սան-Սալվադորի ափը, այսուր՝ Կոլումբոսի նավը փոթորիկի մեջ։ Թեև այդ պատկերներն արդեն ավարտված են, սակայն դրանք Պետերբուրգում կցուցադրվեն եկող տարում»։[6]

Հովհ. Այվազովսկին սովորություն ուներ ավարտված նկարներն անմիջապես ցուցադրել կամ վաճառել։ Բայց այս անգամ Կոլումբոսի թեմաներով նրա ավարտված երկու պատկերները եկող տարի ցուցադրելու միտքը կապված էր նրա չափազանց զբաղվածության հետ։ Այվազովսկին կառուցում էր պատկերասրահի մեծ շենք։ Իր ստեղծագործությունների համար պատկերասրահ կառուցելու միտքը նրա մոտ վաղուց էր ծագել։ Բայց միայն այժմ՝ 1880 թ. սկզբներին, նա ընդհուպ ձեռնամուխ է լինում այդ գործին և վեց ամսում սկսում և ավարտում է իր նախագծով ու միջոցներով 260 քառ. մետր մակերեսով, 12 մետր բարձրությամբ պատկերասրահի կառուցումը։ Նա պատկերասրահի մի կողմում՝ մուտքից դեպի ձախ, կառուցում է հատակից 11 աստիճան բարձր մի բեմ իր բեմահարթակով, ներկայացումների ու համերգների համար։

Մինչ նա զբաղված էր շինարարական գործերով, Պետերբուրգի «Գեղարվեստական ստեղծագործությունների ցուցահանդեսների նկարիչների ընկերությունը» գեղարվեստի ակադեմիայի սրահներում ցուցադրում է Յու. Կլեվերի, Վ.

---

5 ՀՍՀՄ ԿՊՊԱ. Ֆ. 733, ց. 162, գ. 934, թ. 125-126։

Օրլովսկու, Ի. Ռեպինի, Ծ. Լանսերեի, Վ. Յակոբիի, Վ. Պ. Վերեշչագինի, Պ. Պ. Վերեշչագինի, Ա. Մորոզովի, Ա. Ցեմիրադսկու և ուրիշների աշխատանքները։ Հովհ. Այվազովսկին այստեղ ցուցադրում է մեկ նկար՝ «Ծովը»։

Նույն օրերին՝ ապրիլի 8-ին, Թիֆլիսում մեռնում է նշանավոր գրականագետ, թարգմանիչ և գիտնական արքեպիսկոպոս Գաբրիել Կոստանդնի Այվազյանը (Այվազովսկին)։

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Ծղրոր մահվան կսկիծը սրտում նկարիչը շարունակում է շինարարական աշխատանքները Թեոդոսիայում։ Հուլիսին հիմնականում ավարտվում է պատկերասրահի շինարարությունը, կատարվում են միայն ներքին հարդարման գործերը, պատերից կախվում են նկարներ, իսկ բեմի մեծ վարագույրի վրա Այվազովսկին նկարում է Վենետիկի ընդհանուր տեսարանը, որը օրգանապես կապվում է ցուցասրահի մյուս նկարների հետ և ստեղծում պատկերազարդ դահլիճի ամբողջական տպավորություն։ Դնելով այստեղ 23 պատկեր իր ստեղծագործություններից, Ա. Ս. Պուշկինի և Կ. Պ. Բրյուլովի դիմանկարները, արձաններ ու սափորներ, հուլիսի 17-ին՝ իր ծննդյան օրը, նկարիչը բացում է պատկերասրահը։ Դա ազգային կերպարվեստի առաջին պատկերասրահն էր հայ իրականության մեջ և երրորդը Ռուսաստանում՝ կայսերական Էրմիտաժից (1852) և 1862 թ. Մոսկվայում հիմնադրված Ռումյանցևյան թանգարանից հետո։

Թեոդոսիայի քաղաքային դուման, դեռևս հուլիսի 14-ին, երեսուն անդամի ներկայությամբ միաձայն որոշում է կայացնում. հավերժացնել հասարակության համար անմոռաց Հովհ. Այվազովսկու անունը. Հովհ. Այվազովսկուն Թեոդոսիայի պատվավոր քաղաքացի ճանաչել, այն սարը, որի վրա նկարիչը թանգարան է կառուցել, անվանել «Այվազովսկու սար», այն փողոցը, որտեղ գտնվող տանը ծնվել է նկարիչը, անվանել «Այվազովսկու փողոց», այն ճանապարհը և այդին,

որոնք տանում են դեպի նկարչի առանձնատունը, ընդլայնել, վերակառուցել և անվանել «Հովհ. Այվազովսկու այգի»։

Հովհ. Այվազովսկու պատկերասրահի բացումը տեղի է ունենում մեծ հանդիսավորությամբ։ Ասվում են ողջույնի և մեծարանքի ճառեր։ Շենքը զարդարվում է ծաղիկներով ու ծովային դրոշներով։ Երեկոյան տեղի են ունենում խաղեր, զվարճալիքներ և ճաշկերույթ։ Դա հասկանալի է։ Ամբողջ Ղրիմը մինչև այդ չուներ նման մշակութային օջախ։ Պատկերասրահը դառնում է խոշոր մշակութային կենտրոն ոչ միայն ղրիմահայության, այլև ամբողջ հայ ժողովրդի, ռուս և օտարազգի մտավորականության ու արտիստների համար։ Այստեղ են լինում բազմաթիվ գրողներ, նկարիչներ, արտիստներ և երաժիշտներ։ Տարբեր ժամանակներում այս պատկերասրահում հանդիպումներ են ունենում Վ. Ս. Կրիվենկոն, Ա. Պ. Չեխովը, Է. Մահտեսյանը, Վ. Սուրենյանը, Վ. Մախոխյանը, Ե. Թադևոսյանը, Ե. Շահազիզը, Ա. Արմենյանը, Ղրիմյան հայրիկը։ Պատկերասրահի բեմից ելույթներ են ունենում Պ. Ադամյանը, Ա. Գ. Ռուբինշտեյնը, Գ. Վենյավսկին, Կ. Ա. Վառլամովը, Ալ. Սպենդիարյանը, Հովհ. Նալբանդյանը և շատ ուրիշներ։ Պատկերասրահի բացման հանդիսություններն անցնելուց հետո Այվազովսկին, գոհ իր նկատմամբ հասարակության ցուցաբերած ջերմ վերաբերմունքից, շարունակում է աշխատել։ Նա նկարում է Պուշկինի կերպարն արտացոլող նոր պատկեր։ Այդ թեման նրա գլխից չի հեռանում։ Դա կապված էր նաև Մոսկվայում մայիսի 6-ին Պուշկինի հուշարձանի բացման հետ։ Ռուս քանդակագործ Օպեկուշինի կերտած բրոնզե այդ գեղեցիկ արձանը բավական աշխուժացնում է հասարակության մեջ ռուս մեծ բանաստեղծի նկատմամբ եղած հետաքրքրությունը։ Դա ոգեշնչում է նաև ծովանկարչին։ «Ռուսական պոեզիայի արևի» թեմայով մինչև այդ նրա նկարած պատկերներն իրեն չեն բավարարել։ Քննադատությունն էլ չի անտեսել նրա թերությունները։ Այժմ նա ձգտում է նոր և համոզիչ կերպար ստեղծել։ Հենց այդ ժամանակ էլ Պետերբուրգի ««Նկարիչներին խրախուսող կայսերական ընկերության» նախագահ Վ. Պ. Գաևսկուց ըստանում է հրավեր Պուշկինյան ցուցահանդեսին մասնակցելու համար։ Նկարիչը անմիջապես պատասխանում է. «Ձեր նա-

մակը տվեցին ինձ այն ժամանակ, երբ ես աշխատում էի հենց «Պուշկինը Ղրիմում» նկարի վրա։ Ես մտադիր էի դա ուղարկել Մոսկվա, քանի որ խնդրել էին ինձնից, բայց, ըստ տանալով Ձեր նամակը, ես մեծ բավականությամբ ավարտեցի այն և ուրախ եմ անկեղծ ասելու, որ այս անգամ պատկերը ստացվել է ավելի հաջող, քան նախորդ Պուշկինյան իմ պատկերները։ Հոկտեմբերի 1-ին Պուշկինի դիմանկարը կլինի Պետերբուրգում և հասցեագրված կլինի «Նկարիչներին խրախուսող ընկերությանը»։ Ես ինքս էլ Պետերբուրգ կմեկնեմ նոյեմբերի սկզբներին և հավանաբար կզբաղվեմ անհատական ցուցահանդես բացելու գործով»։[1]

Իսկապես։ Հոկտեմբերին Այվազովսկին փոստով Պետերբուրգ է ուղարկում Պուշկինյան թեմայով իր նկարած նոր պատկերը, իսկ նոյեմբերին, վերցնելով իր հետ ավելի քան 10 նկար, մեկնում է Պետերբուրգ։

Դեկտեմբերին բացվում է Պուշկինյան ցուցահանդեսը նվիրված լիցեի՝ կայսերական ուսումնարանի տարեդարձին։ Այստեղ ցուցադրվում են Պուշկինի ձեռագրերը, նամակները, նրա երկերի իլյուստրացիաներ և նրա ժամանակի նկարիչների դիմանկարներ։ Հովհ. Այվազովսկու նկարած «Ա. Ս. Պուշկինը Ղրիմում Գուրզուֆի ժայռերի մոտ» մեծադիր պատկերը (196×156) դրվում է ցուցահանդեսի ելքի մոտ՝ բոլորի աչքի առաջ։ «Պուշկինը այնտեղ է, ուր ծովը հավերժապես ծփում է»— գրում ժամանակակից ռուսական ամսագիրը։

Դեկտեմբերի 28-ին Պետերբուրգում՝ Յանտանկա գետի Սիմյոնովյան կամուրջի մոտ գտնվող Յաֆֆի առանձնատանը բացվում է Այվազովսկու ստեղծագործությունների նոր ցուցահանդեսը։ Այստեղ ցուցադրվում են նկարչի նոր ծովանկարները և սյուժետային մի քանի մեծադիր պատկերներ, այդ թվում՝ Քրիստափոր Կոլումբոսի ճանապարհորդության թեմաներով երկու պատկեր՝ «Կոլումբոսը իր շքախմբով իջնում է Սան-Սալվադորի ափը» և «Կոլումբոսի նավը փոթորիկի մեջ»։ Ցուցահանդեսը լայն հետաքրքրություն է առաջացնում մայրաքաղաքում և շատ այցելություններ է ունենում։ Այդ մասին է վկայում գեղարվեստական նոր ամսագրի հրատարակության կապակցությամբ Ն. Ալեքսանդրովի նամակը

[1] «Документы...», էջ 179-180։

նկարիչ Դ. Պ. Բոտկինին. «...Գործը, փառք աստուծո, շատ լավ է գնում, այսինքն՝ ցուցակագրությունը օրեցօր ավելանում է։ Բաժանորդագրությունն ավելի լավ գնում է Այվազովսկու ցուցահանդեսում, որտեղ օրական հաճախում են մինչև հազար մարդ։ Ես հաշվի եմ առնում և Ձեր ցուցահանդեսը, որի համար խորապես խնդրում եմ անել այնպես, ինչպես արել է Այվազովսկին ինձ համար։ Նրա մոտ բոլոր աստիճանների վրա, նույնպես և դրամարկղում և դահլիճներում փակցված են իմ մեծ հայտարարությունները»։

1881 թ. հունվարին փակվում է Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսը Պետերբուրգում։ «Այդ ցուցահանդեսը,— ասում է նկարիչը,— գերազանցեց իմ բոլոր սպասելիքները։ Մինչև այժմ հասարակությունն այնպես աչքառու չէր արտահայտել իր զգացմունքը և այնքան շատ մարդ չէր այցելել, ինչքան այս անգամ»[3]։ Ցուցահանդես են այցելել ավելի քանի 22000 մարդ։

Հունվարի 14-ին թագավոր կայսրը թույլատրում է Թեոդոսիայի պատվավոր քաղաքացու կոչում տալ Հովհ. Այվազովսկուն և հաստատում է քաղաքային դումայի որոշումը։ Այդ կապակցությամբ նկարիչը իր տանը փետրվարի 14-ին կազմակերպում է տոնախմբություն։ Նորաբաց պատկերասրահի թատերաբեմում տեղի է ունենում առաջին թատերական ներկայացումը՝ «Կենդանի պատկերներ», երգով ու պարերով։ Դա պետք է դառնա հայ թատրոնի պատմության ուշագրավ էջերից մեկը։ Պատկերում է Նեապոլի հրապարակը, որտեղ առաջին պլանում գեղեցկատես աղջիկները ծաղիկներ ու նարինջ են վաճառում, իսկ խորքում, ծովափին, ձկնորսները ձուկ են որսում։ Բեմ է բերվում նույնիսկ կենդանի մի էշ կանաչեղենով բեռնավորված։ Պահպանելով Նեապոլիների հագուստների ճշտությունը և երգերը նրանց բնորոշ մոտիվներով, բեմադրությունը ներկայացնում է հարավային ժողովուրդների աշխույժ կյանքը։ Ճշմարտորեն ներկայացնելով իրականությունը, հիացած դիտողները դժվարանում են որոշել այն սահմանը, որը բաժանում է բնությունը արվեստից։ «Դա իսկապես ներկայացնում է Նեապոլի

[2] Ամսիվակի Լենինյան գրադարանի արխիվ, Ֆ. 258, 1-1, թ. 1-5։

[3] «Русская старина», 1881, № 7, էջ 431։

մի անկյունը, որը ինչ-որ կախարդական ուժով տեղափոխվել է Սև ծովի ափը»,— գրում է ժամանակակից ռուսական մամուլը։

Իր տանը կազմակերպած այս ներկայացումից մի քանի օր հետո Այվազովսկին շտապ մեկնում է Պետերբուրգ, այնտեղից Լոնդոն մեկնելու համար։

Փետրվարի 21-ին նա արդեն Պետերբուրգում էր, այստեղից նա մի նամակ է ուղարկում Մոսկվա, որով խնդրում է «Փարոս Հայասատանի» հայերեն պատկերազարդ ամսագրի խմբագիր Ջայրմայր Մեսրոպի Մսերյանից ուղարկել իրեն այդ ամսագրի վերջին համարները։ «Ձեր իլլյուստրացիոն ամսագիրն աննման է բոլոր տեսակետներից,— գրում է նա,— տա աստված Ձեզ հաջողություններ, որը ես ցանկանում եմ անկեղծորեն»։ Նա հայտնում է, որ այդ ամսագիրը ինքը ստանում է Ղրիմում, բայց ուզում է ամբողջ տարվա համար բաժանորդագրվել։ Միաժամանակ խորհուրդ է տալիս այդ ամսագրից ուղարկել նաև Կոնստանդնուպոլիս։ «Ես ենթադրում եմ,— վերջում գրում է նկարիչը,— այստեղից ապրիլի 1-ին մեկնել Լոնդոն, որտեղ մտադիր եմ իմ վերջին ստեղծագործությունների ցուցահանդեսը բացել»։[4]

Այվազովսկին, սակայն, ապրիլի 1-ին Լոնդոն չի մեկնում։ Նա ապրիլի 12-ին Պետերբուրգում պարգևատրվում է սբ. Աննայի Առաջին կարգի շքանշանով։ Բայց նախքան Լոնդոն մեկնելու մասին խոսելը համառոտակի նշենք Խարկովում բացված գեղարվեստական ցուցահանդեսում նրա ունեցած մասնակցության մասին։ Այդ ցուցահանդեսը Խարկովում բացվում է մարտի 23-ին, երբ նկարիչը գտնվում էր Պետերբուրգում։ Ռուս նկարիչների այդ ցուցահանդեսին մասնակցում էին Վերեշչագինը, Կլոդտը, Պրյանիշնիկովը, Տրուտովսկին։ Այդ ցուցահանդեսում, ահա թե ինչ է գրում հայկական թերթը. «...առաջին տեղը բռնում է հայտնի հայազգի նկարիչ Հովհ. Այվազովսկին։ «Արեգակի խավարումը» զարմանալի իսկությամբ ներկայացրել է բնության այդ գեղեցիկ երևույթը»։[5] Այստեղ Այվազովսկին ցուցադրել է նաև Ցալթայի, Սևաստոպոլի ծովափնյա տեսարանների պատկերներ։

[4] «Документы...», էջ 182։

[5] «Մշակ» 1881, № 62։

Այս ցուցահանդեսի մուտքի ամբողջ գումարը հատկացվում է տեղի այգեգործական ուսումնարանի կարիքներին։

ԼՈՆԴՈՆՈՒՄ

Ապրիլի կեսերին Այվազովսկին մեկնում է Լոնդոն։ Ապրիլի 24-ին նա արդեն գրում է կոնֆերենց-քարտուղարին. «20 պատկերից բաղկացած իմ ցուցահանդեսը արդեն պատրաստ է և բացվելու է չորս օր հետո, այսինքն՝ մայիսի 1-ին։ Երեկ և այսօր ինձ մոտ եկան նշանավոր շատ նկարիչներ՝ Միլլե, Ալմա Տադեմը և ուրիշներ։ Նրանք անկեղծորեն հիացան։ Այսօր ցուցահանդես այցելեց մեր դեսպանը և ուրիշներ։ Այս ցուցահանդեսն ինձ թանկ նստեց՝ արդեն 800 ռ. ծախսվել է, բայց հաջողության դեպքում դա ոչինչ չի նշանակում։ Առայժմ թվում է հաջողություն է սպասվում։ Ես մտածում եմ մնալ այստեղ դեռ 16 օր ևս, հետո կվերադառնամ հայրենիք։ Ես արդեն կարոտել եմ Ղրիմը...»։[1]

Մայիսի 1-ին Լոնդոնի Պելե Մոլլ պատկերասրահում բացվում է Այվազովսկու 20 ստեղծագործությունների ցուցահանդեսը։ Անգլիական հասարակությունը մեծ հետաքրքրությամբ է ընդունում նկարչի ցուցահանդեսը։ «Լրագրերում կարդում ենք,— գրում է «Մշակ» թերթը»,— որ հայազգի երևելի նկարիչ Այվազովսկու պատկերահանդեսը մեծ հաջողություն է ունեցել Լոնդոնում, անգլիական մամուլը նրան եվրոպական արտիստներից շատ բարձր է դասում»։[2] *Իսկապես, անգլիական ամսագիրը գրում է. «Նկարիչը անընդհատ զարգացրել է իր արվեստը և հասել կատարելագործմանն։ ...Այդ պատկերները գեղեցիկ են ոչ միայն իրենց մտահղացումով, այլև կատարմամբ»։ Անգլիական մի այլ թերթ հայտնում է, որ Ուելսի պրինցը (թագաժառանգը) գնել է Այվազովսկու երկու պատկեր։*[3]

Ցուցահանդեսից գնվում են մի շարք այլ նկարներ ևս։

---

1 «Документы...», էջ 133։

2 *«Մշակ», 1881, № 95։*

3 *Տրետյակովյան պատկերասրահի արխիվ։*

Ավելի քան երկու շաբաթ լինելով Լոնդոնում՝ Այվազովսկին մոտիկից ծանոթանում է անգլիական արվեստին, շրջապատյում է տեսարժան վայրեր, հատկապես ծովափնյա շրջաններըր, դիտում, ուսումնասիրում և գծանկարներ է անում ճամփորդական ալբոմում։ Մայիսի կեսերին փակելով իր ցուցահանդեսը Անգլիայից Այվազովսկին վերադառնում է հայրենիք։ Պետերբուրգում նա մնում է մի քանի օր և ապա վերադառնում Թեոդոսիա։

«ՍԵՎ ԾՈՎԸ»

Նոր տպավորություններով սկսելով իր ամենօրյա աշխատանքը, Այվազովսկին ձեռնամուխ է լինում նոր պատկերների ստեղծմանը։ Մինչև այդ՝ անցած ամիսների ընթացքում, նա արդեն նկարել է մի շարք պատկերներ, որոնցից մեզ են հասել «Արևածագը», «Ծովը» (ալեկոծում), «Կապրի կղզին», «Անհանգիստ ծովը» և ուրիշներ։ Այժմ նա մտադրվում է ստեղծել նոր, մեծ գաղափարներ արտահայտող ծովանկար, հավերժացնել Սև ծովի «կերպարը»։ Եվ նա սկսում է նկարել Սև ծովի տեսարանը, պատկերելով այն պահը, երբ ծովի վրա սկսում է մոլեգնել փոթորիկը։ Նա հենց այդպես էլ անվանում է այդ նկարը՝ «Սև ծովում սկսվում է մոլեգնել փոթորիկը»։ Մի քանի ժամ նկարակալի առաջ կանգնած՝ նա հոգնելու աստիճան աշխատում է, օրվա վերջում նա նկատում է, որ իր ցանկացած պատկերը դեռ չի ստացվել։ Այն, ինչ որ ստեղծվել է կտավի վրա, ներկայացնում է բնության կարճատև, անցողիկ վիճակը, մեկն այն ծովանկարներից, որոնք նա նկարել էր բազմիցս։ Մինչդեռ, նա մտածում էր ստեղծել ծովի, հատկապես Սև ծովի ընդհանրացած կերպարը, մի սինթետիկ պատկեր, որն արտահայտի անհուն, անծայր, հզոր և միաժամանակ գեղեցիկ, հարազատ դիմանկարչական ծովային բնությունը։

Հոգնած օրվա լարված աշխատանքից և իրեն հուզող մտքերից, Այվազովսկին արդեն նկարած կտավը հանում է նկարակալի վրայից, դնում է մի կողմ և գնում հանգստի։ Հաջորդ օրը նկարակալի վրա նա դնում է նոր, ավելի մեծ

կտավ և սկսում նոր աշխատանք։ Այս կտավի վրա նա աշխատում է մի քանի շաբաթ։ Նկարիչը, որ սովոր էր կարճ ժամանակամիջոցում ավարտել սկսած նկարը, այս անգամ աշխատում է դանդաղ, մանրակրկիտ, ձգտելով ստեղծել Սև ծովի տիպական կերպարը (149×208)։

Թեոդոսիայի իր արվեստանոցում ստեղծված այս պատկերը, որին նկարիչը տալիս է «Սև ծովը» վերնագիրը, դեռևս տանից դուրս չեկած լայն ճանաչում է գտնում արվեստի աշխարհում։ Տրետյակովկու պատկերասրահի տնօրենը գնում է այդ պատկերը ուղղակի արվեստանոցից։ Հետագայում ռուս նշանավոր նկարիչ, «Շրջիկ (Պերեդվիժնիկ) գեղարվեստական ցուցահանդեսների նկարիչների ընկերության» ղեկավար Ի. Ի. Կրամսկոյը, տեսնելով այդ պատկերը 1885 թ. հիացած գրում է. «Պատկերի մեջ ոչինչ չկա, բացի օդից և ջրից, դա անսահման օվկիանոս է, ոչ փոթորկալից, բայց ալեկոծվող, խիստ, անվերջ, իսկ երկինքն էլ ավելի անծայր։ Դա մեկն է, այն մեծագույն պատկերներից, որպիսիք ես գիտեմ»։ Ի. Կրամսկոյը նշում է, որ նրա ժամանակակից շատ նկարիչներ «հիացած էին այդ պատկերի մտքով ու բարձր պոեզիայով»։

«Սև ծովը» ներկայացնում է մի անծայրածիր ծովային բնության տևսարան։ Երկինքը ծածկված է մոխրագույն ամպերով։ Քամի է։ Դրանից էլ ծովն անհանգստացել է, ու նրա ալիքները մեկը մյուսի հետևից հոսում են մի ուղղությամբ։ Պատկերի ամբողջ առաջին և երկրորդ պլանները, ընդհուպ մինչև պատկերի խորքը, զբաղված են հեռվից եկող ծանր ու խոր ալիքներով։ Միմյանց հաջորդող նրանց բնական, տարերային շարժումը, որն այստեղ վերարտադրված է մեծ վարպետությամբ ու գարմանալի համոզչականությամբ, պատկերի մեջ ստեղծում է ռիթմիկականություն։ Միանգամայն բնական են տրված ջրի շարժվող ալիքների կանաչակապտադույն երանգները, նրանց արծաթափայլ գագաթները և փրփուրը, լուսավորության տակ երևացող մշատաշարժուն ծովաջրի մակերևսի գունային երանգների բազմազանությունը։ Ջուսպ գունային գամման, որը կառուցված է երկնքի մոխրագույն երանգների ու կանաչակապտավուն գույների հարաբերության վրա, լիովին համապատասխանում է պատկերի

բովանդակության հասուկ բացահայտմանը։ «Սև ծովը» կրտավը մոնումենտալ ստեղծագործություն է։ Ծովային բնության քաջ իմացությունը և սուր դիտողականությունը հնարավորություն են տվել նկարչին խոր ճշմարտությամբ, լիարյուն և ռեալիստորեն պատկերել ծովային բնությունը։

«Սև ծովը» միաժամանակ հաստատում է, որ Այվազովսկին 1870—80-ական թվականներին, հաղթահարելով իր ստեղծագործություններում անցյալում տեղ գտած որոշ էֆեկտայնությունը, բնության ռոմանտիկ պատկերման նախասիրած հակումը, ստեղծում է նոր, հարուստ բովանդակությամբ ռեալիստական բարձրարվեստ ծովանկարներ, որոնք առաջնային տեղ են գրավում համաշխարհային նկարչության մեջ։ Նկարիչը թևակոխում է զարգացման նոր շրջան, որը էտապային նշանակություն է ստանում մեծ ծովանկարչի գեղարվեստական գործունեության մեջ։ Այդ հանճարեղ ստեղծագործությամբ և հետագայում նկարած լավագույն պատկերներով Այվազովսկին ավելի ու ավելի լայն ճանաչում է գտնում, որպես ժամանակի առաջնակարգ ծովանկարիչ աշխարհի բոլոր երկրների ծովանկարիչների շարքում։

ԵՐԿՐՈՐԴ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

1882 թ. սկզբներին Հովհ. Այվազովսկու անձնական կյանքում տեղի են ունենում նշանակալից իրադարձություններ։ Հունվարի 30-ին նա (64 տարեկան հասակում) ամուսնանում է 26-ամյա այրիացած Աննա Մկրտչի Բուռնազյանի հետ։ Դա նկարչի երկրորդ ամուսնությունն էր։ Առաջին կնոջից, ինչպես նշել ենք, նա բաժանված էր վաղուց։ Ապրում էր միայնակ։ Նրան օգնում էին քույրը և մյուս հարազատները։ 1881 թ. նա առիթ է ունենում նկարել Աննա Բուռնազյանի դիմանկարը և այդ ժամանակվանից, չնայած տարիքի մեծ տարբերության, սկսում է մտերմություն նրանց միջև, որը, շատ չանցած, ավարտվում է ամուսնությամբ։

Ամուսնությունը տեղի է ունենում Սիմֆերոպոլի Հայ-Գրիգորյան դավանանքի սբ. Ուսպենսկու հայոց եկեղեցում։

Եկեղեցական մատյանում այդ ամուսնությունը գրանցվում է այսպես. «Իսկական ստատսկի սովետնիկ Հովհ. Կ. Այվազովսկին, որը էջմիածնի սինոդի 30 մայիսի 1877 թ. №1361 հրամանով բաժանված է առաջին կնոջ հետ ունեցած օրինական ամուսնությունից, երկրորդ անգամ օրինական ամուսնանում է Թեոդոսիայի վաճառականի կին, այրիացած Աննա Մկրտչի Սարկիզովայի հետ, երկուսն էլ հայ-Գրիգորյան դավանանքի են։ Նրանց հայրացուն է Կարասուբազարցի առևտրական էմիլ Քրիստափորի Միրզոյանը (Միրզոև)։ Ամուսնությունը կատարվել է իմ կողմից։ Սիմֆերոպոլի հայ-Գրիգորյան սբ. Ուսպենսկու եկեղեցու վանահայր Ա. Խոջանյանց»։[1]

Բավական հասուն տարիքում երկրորդ անգամ, ինչպես ինքն է գրում, «ըստ օրինաց եկեղեցւոց մերոյ» ամուսնանալով այրի Աննայի՝ «դուստր Մկրտիչ Բուռնազյանի» հետ, Այվազովսկին իրեն շատ երջանիկ է զգում։ Այդ ամուսնությունից 6 ամիս հետո՝ 1882 թ. հուլիսին, Կոստանդնուպոլսի իր ծանոթներից մեկին գրած նամակում նա հայտնում է. «...Լըսած ց[ձ]եր վուրերը ճշմարիտ է. անցած մատի ամիսվան մեջ ես կարգըվեցա մեկ հայ խաթունի մը հետ (որբեվայրի կինն մը), պինքը չէր ճանչնա, միայն իրեն բարի անունը շատ շատ լըսեր էի միշտ, հիմա ինքս հանգիստ ու պահտավոր իմ, առջի կընկանս հետ 20 տարի է որ չէր կենայի, չի տեսածըս նորա՝ կա 14 տարի, հինկ տարի ալ կա, վոր էճմիածինին սինոտը և կաթողիկոսը ինծի բաժանմունք տուվին, այնպես որ կըրնայի կարգըվիլ, միայն շատ կը վախենայի մեկ ուրիշ աս[զ]գի հետ կապվելու ու նորէն անպահք լալ, Աստուծով այսպես եղավ... սրտանց շնորհակալ իմ»*[2]։

Այդ երկրորդ ամուսնությունը հայուհու հետ մեծ նկարչին պատճառում է ոչ միայն ուրախություն, հանգիստ ու բախտավոր կյանք, այլև, ինչպես ինքը, Այվազովսկին է գրում նույն նամակում. այդ ամուսնությամբ «...ավելի նորեն աս[զ]գիս մոտըկացա»։ Դա շատ կարևոր միտք է մեծ ծովա-

---

1 «Документы...», *էջ 183—184։*

* *Պետք է լինի հունվարի (Մ. Ս.)։*

2 «Документы...», *էջ 185—186։*

նկարչին հասկանալու և նրա կյանքի վերջին շրջանի գործունեությունը գնահատելու համար։

Կապելով իր կյանքը այդ գեղեցիկ ու երիտասարդ հայուհու հետ, Այվազովսկին լցվում է ստեղծագործական նոր ուժով։ Չնայած պատկառելի տարիքին, նա ստեղծում է ոչ միայն նոր ու բարձրարվեստ ծովանկարներ, այլև իր ստեղծագործություններում նա ավելի հաճախ է անդրադառնում Հայաստանի, հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի թեմաներին։ Բոլորովին էլ պատահական չէ, որ 1882 թվականին՝ ամուսնության տարում, աշխարհառնչակ ծովանկարիչը նկարում է «Արարատ լեռան հովիտը», «Ուղտերի քարավանը Արարատյան դաշտում» հայրենական թեմաներով մի շարք պատկերներ, ինչպես օրինակ՝ «Արարատ» (1887), «Հայ ժողովրդի մկրտությունը» (1892), «Հայ զորավարի երդումը» (Վարդան Մամիկոնյան), «Խրիմյան հայրիկը էջմիածնի շրջակայքում» (1895), Հայկական ջարդերը Թուրքիայում թեմայով եռանկարը (տրիպտիխան), «Բայրոնի այցը Մխիթարյաններին սբ. Ղազար կղզում», «Կովկասյան կանանց փախցնող թուրքական նավի բռնագրավումը ռուս նավաստիների կողմից» (1883) և այլն, որոնց մասին խոսք կլինի առանձին։ Նա նկարում է նաև բազմաթիվ հայերի, այդ թվում Աննա Բունաձյանի մի քանի դիմանկարներ, որոնք այժմ գտնվում են Թեոդոսիայի պատկերասրահում։

Աննա Բունաձյանի դիմանկարը ծովանկարչի դիմանկարչական լավագույն ստեղծագործություններից է։ Աննան պատկերված է գոտկատեղից, հայկական ազգային տարազով, մետաքսյա թափանցիկ գլխաշորը գլխին, դիմացից, դիտողին ուղղված հայացքով։ Խորապես արտահայտիչ են նրա մեծ, սև աչքերը։ Գլուխը և դեմքի մի մասը ծածկող գլխաշորը չի խանգարել նկարչին վերարտադրելու նրա մեղմ, կանացիական գեղեցիկ դիմագծերը, որոնք այնքան քնքշորեն տրված հայացքի հետ առանձին հրապույր են տալիս կերպարին։ Աննա Բունաձյանի դիմանկարը, միաժամանակ, ունի ընդհանրացող գծեր։ Հովհ. Այվազովսկին այստեղ ստեղծել է երիտասարդ հայուհու՝ հայ կնոջ, ռեալիստական կերպարը և, որպես այդպիսին, այն հետաքրքրական է նաև ազգային դիմանկարչության պատմության համար։ Հովհ. Այվազով-

կին Աննային նկարել է նաև թեմատիկ սյուժետային պատկերում։ Նկարը կոչվում է «Խաղողի բերքահավաքը Ղրիմում»։ Դա ներկայացնում է խաղողի այգի, որտեղ երկանիվ սայլի վրա կանգնած Աննան խաղող է քաղում։ Նրա մոտ՝ սայլի մեջ, նստած պատանին բռնել է զամբյուղը և ուշադիր նայում է տիրուհուն։ Արևի ճառագայթներով լուսավորված երիտասարդ կնոջ ֆիգուրը ցայտուն կերպով ընդգծված է այգու փարթամ կանաչի և ծաղիկների հենքի վրա։ Մանրամասնորեն, զարմանալի ճշգրտությամբ պատկերելով գոմեշների գլուխները, սայլը, պատանու ֆիգուրը և նրա շրջապատի առարկաները, նկարիչն առանձնապես շեշտել ու առաջին պլան է մղել սպիտակ զգեստով կնոջ ֆիգուրը, որը ակամայից հիշեցնում է Կ. Բրյուլովի «Կեսօրը» հայտնի պատկերը։ Արտահայտիչ է կնոջ կենդանի, վառվռուն դեմքը։ Կյանքի ուրախությունը նկարիչը մարմնավորել է այս երիտասարդ կնոջ՝ գեղադեմ հայուհու կերպարի մեջ։ Դիմանկարչական այս ստեղծագործությունների գաղափարական հիմնական բովանդակությունը մարդու նկատմամբ նկարչի ունեցած ջերմ սերն ու հարգանքն է։ Այդ էլ հենց նկարչին անընդհատ մղում է ստեղծագործության։

ՀԱՄԱՏԵՂ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Փետրվարի սկզբներին վերցնելով իր նոր նկարները, Այվազովսկին մեկնում է Պետերբուրգ։ Այստեղ նա ակադեմիայի ռեկտոր, էստոնացի նկարիչ Ի. Պ. Կելլերի հետ փետրվարի 14-ին գեղարվեստի ակադեմիայի ցուցասրահում ցուցահանդես է բացում։ Երկու նկարիչների ստեղծագործությունների այս համատեղ ցուցահանդեսը հաջողություն է գտնում։ Լինում են շատ հաճախորդներ և վաճառվում են պատկերներ։ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսորները բարձր գնահատական են տալիս նկարիչների վերջին տարիների ստեղծագործություններին։ Երկու ակադեմիկոս նկարիչները մայրաքաղաքի հասարակության և արվեստի ղե-

կավար մարմնի կողմից ստանում են բարոյական խրախուսանք։ Էլ ավելի ուրախ էր կանանց կոմիտեն։ Բարեգործական նկատառումով կազմակերպված այս ցուցահանդեսի մուտքի ամբողջ գումարը, որը կազմում է 1159 ռ. 91 կ., լրիվ հանձնվում է կանանց կոմիտեի կարմիր խաչի ընկերության, կարիքավորներին նյութապես օգնելու համար։ Այդպիսի բարեգործություններ այն ժամանակվա նկարիչների կողմից ընդհանրապես չէր կատարվում։ Գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտ Վլադիմիր Ալեքսանդրովիչը նկատի ունենալով նաև այդ, ապրիլի 28-ին շնորհակալություն է հայտնում Հովհ. Այվազովսկու և Ի. Պ. Կռլլերին, նրանց ստեղծագործություններով ցուցահանդեսի մուտքի ամբողջ գումարը կանանց կոմիտեի հովանավորությամբ գործող Կարմիր խաչի օգտին նվիրաբերելու համար։[1]

Հավանաբար այդ ժամանակ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի ուսանող-ակադեմիստ Գևորգ Բաշինջաղյանը, այցելելով մեծանուն հայրենակցին, ցույց է տալիս իր նկարչական աշխատանքները, զրուցում նրա հետ։ «Կարծեմ 1882 թվականն էր, դիմեցի նրան Պետերբուրգում իբրև ակադեմիայի ուսանող և նա ինձ բարի խորհուրդներ տալուց հետո, առաջարկեց մի-մի անգամ այցելել նրան, որպեսզի ներկա լինեմ աշխատության միջոցին»։[2]

Գ. Բաշինջաղյանը դրանից հետո ևս լինում է Այվազովսկու արվեստանոցում և, ինչպես նա է գրում, մեծ նկարիչը իրեն, նույնպես և ուրիշ երիտասարդ նկարիչների, «...խորհուրդներ էր տալիս, երեսին էր ասում լավն ու վատը, չէր ծածկում իր կարծիքը, թեև գիտեր, որ սիրտը պետք է ցավեցնե, բայց և գովաբանում էր, երբ հարկավոր էր համարում։ Այս կողմից մեծ երախտիք ունի ևս բազմաթիվ նկարիչների վրա, որոնց թվին պատկերելու բախտը ունեմ ևս»։[3] *Այդ մտերմական զրույցներից մեկի մասին Բաշինջաղյանը գրում է. «Հիշում*

---

1 «Документы...», էջ 185։

2 Գ. *Բաշինջաղյան, Ճանապարհորդական նոթեր, էսքիզներ, հոդվածներ, 1957, էջ 242։*

3 *Նույն տեղ։*

եմ, ինչպես մի անգամ գանգատվեցի նրան ակադեմիայում տեղի ունեցած մի դեպքի մասին, և նա այսպես պատասխանեց.

— Ի՞նչ անենք, ինձ նույնիսկ ոմանք հայհոյում են, ոմանք չեն հայհոյում...

Որքա՜ն համեստություն։ Դարձյալ իմ հարցին, թե ինչո՞ւ × ծովանկարչին այդպես մեծարում են, երբ նա չարժե, նա ծիծաղելով պատասխանեց.

— Ուզում են, որ օտարը հայից լավ լինի»[4]

Այդ մտերմական զրույցների և հետագայում ունեցած հանդիպումների ընթացքում երիտասարդ Բաշինջաղյանը շատ բան է սովորում Այվազովսկուց։ Դեռևս պատանի հասակում նկարչի ստեղծագործությունները նրա վրա ուժեղ տպավորություն են թողել։ Իր ինքնակենսագրականի մեջ, որը գեռևս գտնվում է ձեռագիր վիճակում, վերհիշելով 1870-ական թվականները, Բաշինջաղյանը գրում է. «...ինձ վրա առաջին ուժեղ էսթետիկական տպավորությունը թողնում են Այվազովսկու երկու պատկերները՝ «Պետերբուրգի տեսարանը» և «Գունիբ», որոնք գտնվում էին Կովկասյան թանգարանում»[5]։ Հետագայում, երբ ավելի հաճախ է դիտում Այվազովսկու ծովանկարները, Բաշինջաղյանը մեծարանքով է արտահայտվում նրա մասին գրած հոդվածներում։

Ուշագրավ է Բելոռուսական ԽՍՀ պետական պատմական արխիվում պահպանված այս փաստաթուղթը ևս «Գործ Մինսկի ուսանողության օժանդակ ընկերության օգտին Հովհ. Այվազովսկու «Ծովային տեսարան» պատկերը վիճակախաղի բույլատրելու մասին», որտեղ ասվում է. «...Նշանավոր նկարիչ Այվազովսկին մայրաքաղաքային թերթերից տեղեկանալով Մինսկում ուսանողների թշվառ և ծանր նյութական վիճակի մասին, նրանց օգնելու նպատակով նկարեց «Ծովային տեսարան» պատկերը և նվիրեց Ընկերությանը, կարիքավոր ուսանողների օգտին վիճակախաղ դնելու համար։ Շուտով վաճառվում է 600 տոմս յուրաքանչյուր տոմսը 1 ռուբլով և գումարը անմիջապես մուծվում է ուսումնական

---

4 «Մշակ», 1900, № 97։

5 Զ. Գ. Բաշինջաղյանի անձնական արխիվ։

հիմնարկների դրամարկղ, աղքատ ուսանողների ուսման վարձի վճարման համար»։[6]

1882 թ. ընթացքում Այվազովսկին նկարում է մի շարք նոր պատկերներ ևս, որոնցից մեզ են հասել «Ծովը», «Ֆինական ծովածոցի ափը», «Փոթորիկ ծովում» (գուաշ) և «Արարատ լեռան հովիտը»։ Վերջինս պատկերում է Հայաստանի բնության տեսարանը՝ Արարատ լեռը և Արարատյան դաշտը վաղ առավոտյան։ Նկարիչը ճշմարտորեն է վերարտադրել արագ անցնող վաղորդյան մթությունը։ Խաղաղ և հանգիստ Արարատյան դաշտը դեռ ծածկված է գիշերային մթության քողով։ Հորիզոնում երևացող լեռների և հատկապես Արարատի հավերժական ձյունով ծածկված սպիտակ գագաթների վրա ու բաց կապտագույն երկնակամարում դանդաղորեն սահող սպիտակ նոսր ամպերի մեջ այգաբացի արևը շողում է իր փայլով։ Առաջին պլանում նկարված ճանապարհով դանդաղորեն դեպի դիտողը եկող քարավանը և մարդկանց ֆիգուրներն ավելի կենդանի և բովանդակալից են դարձնում տեսարանը։ Ճանապարհի մի կողմում նկարիչը պատկերել է իրար մոտ ընկած մի քանի հայկական խաչքարեր՝ հայերեն արձանագրություններով։ Հենց այստեղ էլ, պատկերի ձախ անկյունում, մի քարի վրա Այվազովսկին՝ դրել է իր սովորագրությունը հայերեն՝ «Այվազեան, 1882», իսկ պատկերի աջ կողմի ներքևի անկյունում՝ «Айвазовскій» ռուսերեն։ Հեվհ. Այվազովսկին հետագայում ևս նկարում է Արարատի ու Արարատյան դաշտի պատկերներ։ Հայրենի գեղատեսիլ լեռան նկարը նա դնում է նաև սյուժետային ու դիմանկարչական ստեղծագործություններում, ինչպես օրինակ՝ «Հայ ժողովրդի մկրտությունը», «Խրիմյան Հայրիկը էջմիածնի շրջակայքում» և այլն։

---

6. *Ռևլոռուսական ՍՍՀ Պետական պատմական արխիվ, ր. Սրտնպ։*

1883 թ. հունվար-փետրվար ամիսներին Այվազովսկին Թեոդոսիայի առանձնատանը շարունակում է իր ստեղծագործ կյանքը երիտասարդ, սիրելի կնոջ և բարեկամների շրջապատում։ Այդ ժամանակ ծրագրվում էր Սևաստոպոլում առևտրական նավակայան կառուցել։ Հովհ. Այվազովսկին, խորապես շահագրգռված Թեոդոսիա քաղաքի արագ զարգացման խնդրով, փետրվարի 10-ին դիմում է ճանապարհների հաղորդակցության մինիստրության ինժեներական խորհրդի նախագահ Վ. Վ. Սալովին Թեոդոսիայի նավահանգստի, որպես առևտրական նավակայանի, առավելության մասին։ Նկարիչը նպատակահարմար է համարում առևտրական նավահանգիստը կառուցել ոչ թե Սևաստոպոլում, այլ՝ Թեոդոսիայում։ Այդ խնդրով նա շտապ մեկնում է Կերչ և Սիմֆերոպոլ, փետրվարի վերջերին՝ Մոսկվա, այնտեղից Պետերբուրգ գնալու համար։

Մոսկվայում տեղեկանալով, որ հայ նշանավոր արտիստ Պետրոս Ադամյանը եկել է հյուրախաղերի, Այվազովսկին ցանկություն է հայտնում տեսնել նրան և ծանոթանալ այդ մեծատաղանդ արտիստի հետ։ Պ. Ադամյանը այցելում է նկարչին և ծանոթանում նրա հետ Անանյանների (Անանով) տանը։ Այդ մասին Պ. Ադամյանը մարտի 6-ին գրում է իր բարեկամուհուն. «Անցյալ կիրակի այնտեղ հանդիպեցա Այվազովսկուն՝ երևելի նկարչին, որ ինձ ուզել էր տեսնել։ Ջորս վայրկյանի մեջ մի ծովային տեսարան ուրվագծեց գրչով և ինձ նվիրեց։ Կարո՞ղ եք երևակայել, թե որքան ուրախացա։ Հետո ուզեց, որ մի բան արտասանեմ. արտասանեցի «Գործադուլ դարբնյաց»՝ իբրև ի փոխարինություն յուր քանկագին ուրվագծին, սակայն, իմս անցավ, նորանը մնաց»։[1]

Այդ ծանոթությունից հետո Ադամյանի և Այվազովսկու հանդիպումները հետագայում ևս կրկնվում են և, ինչպես ցույց կտանք ստորև, նրանք դառնում են մտերիմ ու բարեկամ։

Մոսկվայից մեկնելով Պետերբուրգ՝ Այվազովսկին այնտեղ բացում է ցուցահանդես «նկարիչներին խրախուսող ընկե-

---

1. Պ. Ադամյան, Նամակներ, 1959, էջ 48։

րության դահլիճում ցուցադրված ծովային ու ցամաքային բնության պատկերները նորից գրավում են հասարակության ուշադրությունը։ Վաճառվում են մի քանի պատկերներ։ Դոհ այս այցից, նա վերադառնում է տուն և պատրաստվում արտասահմանյան ուղևորության։

ԱՅՑ ՀՈՒՆԱՍՏԱՆ

Այս անգամ Այվազովսկին արտասահման է մեկնում կնոջ հետ։ Նրանք այցելում են Հունաստան։ Այստեղ նրանք մոտիկից ու մանրամասնորեն ծանոթանում են հին հունական դասական ճարտարապետության և կերպարվեստի հուշարձաններին, ժողովրդի կյանքին ու պատմությանը։ Նրանք լինում են տարբեր քաղաքներում և հիշարժան վայրերում, զրուցում մարդկանց հետ, ձեռք բերում հուշանվերներ։ Այդ ամբողջ ընթացքում, որ տևում է մի շաբաթ, նկարիչը իր ճանապարհորդական ալբոմում նշումներ է անում, գծանկարում, ջրաներկով տեսարաններ նկարում։ Նրա վրա ուժեղ տպավորություն են թողնում հատկապես Եուրքերի դեմ հույն ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունները։

Տուն վերադառնալուց հետո՝ 1880-ական թվականներին, Այվազովսկին նկարում է «Աթենքի Ակրոպոլը», «Դանթեն ցույց է տալիս նկարչին անսովոր ամպերը», «Հրդեհված նավի կործանումը գիշեր ժամանակ» և ուրիշներ։ Նկարչի բազմաթիվ ստեղծագործություններից մեզ են հասել նաև «Հունձի ժամանակը Ուկրաինայում» բազմաֆիգուր կոմպոզիցիան, ավազ եղերը՝ Գաբրիել Այվազովսկու (Այվազյանի) դիմանկարը, «Կերչի նեղուցը», «Բնանկար» և մատիտով կատարված մի քանի գծանկար։

1884 թ. հունվարին ի մի հավաքելով վերջին տարիներին նկարած պատկերները, որոնք բավական շատ են, Այվազովսկին մտածում է նոր ցուցահանդես բացել այս անգամ Կիևում։ Մինչև այդ Կիև քաղաքում նա ցուցահանդես չէր կազմակերպել։ Կիևցիները, իհարկե, լսել էին նրա մասին, գիտեին նրան, բայց իրենց մոտ չէին տեսել նրա ստեղծագործությունները։ Այվազովսկին որոշում է ցուցահանդեսը բանալ Կիևի համալսարանում՝ Ուկրաինական մշակույթի այդ խոշոր օջախում։ Եվ ահա նկարչի ստեղծագործությունները Կիևում են, որոնք բերել էին Լ. Մազիրյանը և նկարիչ Ա. Ֆեսլերը ճանապարհային կառքով։

Հովհ. Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսը բացվում է Կիևի համալսարանի մեծ դահլիճում 1884 թ. հունվարի վերջերին։ Բացմանը շատ մարդիկ կային, ցուցահանդեսի օրերին, շուրջ երկու շաբաթ, մարդկանց հոսքը ցուցահանդես չէր դադարում։ «Շատ աշքառու երևույթ եղավ Կիևի համալսարանում բացված Այվազովսկու պատկերների ցուցահանդեսը 1884 թ. հունվարի վերջերին,— իր հիշողությունների գրքում գրում է Կիևի նկարչական դպրոցի դիրեկտոր, նկարիչ Ն. Ի. Մուրաշկոն։— Ցուցահանդեսի վերջում եկավ Հովհ. Կոնստանտինովիչը։ ...Ես անձամբ այցելեցի նրան, իսկ ինքը երեք անգամ եղավ մեզ մոտ, համառորեն ցանկանալով գտնել ինձ տանը։ Այստեղից էլ ես նկատեցի, որ մեծ մարդիկ լինում են շատ զգույշ և ուշադիր փոքրերի նկատմամբ։ Մեկնելով Կիևից՝ Այվազովսկին մեր դպրոցին նվիրեց ոչ մեծ մի պատկեր իր ստեղծագործություններից, իսկ ցուցահանդեսի մուտքի ամբողջ գումարը բաժանեց երկու մասի՝ մի մասը մեր դպրոցին, մյուսը՝ աղքատ ուսանողների օգտին»։[1]

Փետրվարի 12-ին՝ կիրակի օրվա վերջում, փակվում է Այվազովսկու ցուցահանդեսը։ Ցուցահանդես են այցելել 5592 մարդ, ծախվել է երեք պատկեր, հայտնում է հայկական

---

[1] Н. И. Мурашко, Воспоминания старого учителя, Киев, 1907, ч. 2, (ուկրաիներեն)։

քերքը։[2] Ցուցահանդեսի հաջողությանը բավական նպաստում են տեղի նկարիչները։ «Եկածների հետ մենք պատրաստեցինք հարուստ ցուցահանդես, որը հաջողություն ունեցավ»,— վկայում է Ն. Ի. Մուրաշկոն։ Տեղյակ լինելով այդ ցուցահանդեսի մասին, Ի. Ռեպինը ապրիլի 20-ին նկարիչ Ն. Ի. Մուրաշկոյին գրած նամակում Այվազովսկուն համարում է «Մեծագույն հեղինակություն»։

Կիևյան ցուցահանդեսից հետո Այվազովսկին ծրագրում է գետային ճանապարհորդություն կատարել Վոլգայով։ Հունիսին նա մեկնում է ճանապարհորդության և հուլիսի սկզբներին վերադառնում տուն միանգամայն գոհ և լավ տրամադրությամբ։ Վ. Ստասովին հուլիսի 9-ին գրած նամակում հայտնում է. «Վոլգայից ես հիացած եմ, Ռիբինսկիից մինչև Սամարա եղանակը հիանալի էր»։ Այդ նամակում, կատարելով Ստասովի խնդրանքը, նկարիչը գրում է. «Տուն վերադառնալուց հետո երեկ իմ առաջին գործը եղավ փնտրել Շտերնբերգի նամակները։ Եվ ահա բախտի բերմամբ գյուղում գտա երկու նամակ և շտապում եմ ուղարկել Ձեզ։ Քաղաքում ևս կփնտրեմ, գուցե այնտեղ էլ կգտնեմ, բայց դա այնքան հաստատ չէ, ուստի միք հետաձգի Ձեր հոդվածը, սպասելով դրան»։[3]

Վ. Վ. Ստասովը իհարկե, չի հետաձգում իր գործը։ Նա հրապարակում է ընդարձակ հոդված վաղամեռիկ նկարիչ Վ. Շտերնբերգի մասին, օգտագործելով Այվազովսկուն նրա գրած նամակները։ Նույն ժամանակ նկարիչը սիրով կատարում է Պետերբուրգում նոր ստեղծված «Новь» ամսագրի խմբագիր Սպիրիդոն Ալեքսանդրովիչի խնդրանքը՝ ողջունել ամսագրի հիմնադրումը և ուղարկել լուսանկարներ ամսագրի համար։ «Այդ ամենը կուղարկեմ մոտ օրերս»,— գրում է նկարիչը սեպտեմբերի 8-ին։[4]

Նույն տարում Այվազովսկին կազմակերպում է մի ցուցահանդես ևս Վիեննայի արվեստի տանը։

---

2. «Նոր Դար», 1884, № 31։

3 «Документы...», էջ 191։

4. Բախրուշինի անվան թանգարանի արխիվ, №. 4891։

* * *

1885 թ. Այվազովսկու համար սկսվում է մի նոր և ուրախալի լուրով՝ հունվարի 1-ին նա ստանում է Դաղստնի խորհրդականի աստիճան։ Այդ փաստին կարևորություն տալով՝ գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտը նշում է իր տարեկան հաշվետվության մեջ։[5]

Հետևյալ՝ փետրվար-մայիս ամիսներին նկարիչը ապրում ստեղծագործում է իր առանձնատանը կնոջ և հարազատների հետ։ Այդ ժամանակ նա իր ծովանկարներից մի քանիսը ուղարկում է Բեռլին, այստեղ գարնանը բացվող ամենամյա ցուցահանդեսի համար։ Նրա ծովանկարները Գերմանիայի և օտարազգի մյուս նկարիչների բազմազան պատկերների շարքում ուշադրություն են գրավում։ Պոլսահայ «Արևելք» թերթը այդ օրերին հաղորդում է. Պրուսիայի թագաժառանգը հանձնարարում է ցուցասրահի տնօրենին հաղորդել իր հիացմունքը և հարգանքը նկարիչ Այվազովսկուն և ասել, որ «տեսած չեմ երբեք այնպիսի նկար մը, որ օդն ու ծովը այնքան հստակ և թափանցիկ նկարված լինի»։[6]

Հունիսին Այվազովսկին մեկնում է Յալթա և երկա է լինում իր ավագ աղջկա համար կառուցվելիք առանձնատան հիմնադրմանը։ Այդ առանձնատունը, նկարչի մտահղացմամբ, միայն բնակելի տուն չի լինելու։ Նկարիչը մտածում է երրորդ հարկում կառուցել ցուցասրահ և արվեստանոցներ նկարիչների համար։ «Դի լինելու է եկամտաբեր տուն,— գրում է նկարիչը օգոստոսի 12-ին,— բայց ես մտադիր եմ տան երրորդ մասը հատկացնել գեղարվեստի ակադեմիայի նպատակների համար, այսինքն՝ բացի արտաքին զարդարանքից (արձաններ և այլն), ներսում կունենա պատկերասրահ վերևից լուսավորված, ապա մեծ արվեստանոց և մի քանի սենյակներ։ Այդ բոլորը միասին կազմելու են գեղարվեստական պավիլիոն, որը կարող է հարմար լինել ոչ միայն մեր բոլոր երիտասարդ նկարիչների գործերի ցուցադրման հա-

---

5 «Документы...», էջ 202։

6. «Արևելք», 1885, №. 282։

մար, այլև արվեստանոց անվանի նկարիչների համար էժանացված գներով»։[7]

Սկսելով իր աղբկա առանձնատան կառուցումը Այվազովսկին վերադառնում է Թեոդոսիա, ուր գտնում է իր թոռնիկներին պապիկի առանձնատան սենյակներում վազվզելիս։ Որպիսի՞ ուրախություն։ Նկարիչ-պապիկը զբաղվում է նրանցով, խաղեր է կազմակերպում, զբոսանքի է տանում, ներկա է պահում իր նկարչական դպրոցի՝ «Գեղարվեստական արվեստանոցի» աշակերտների դասերին, ազատ ժամերին սովորեցնում է նկարել։ 9—10 տարեկան Միքայելը և Ալեքսանդրը, որոնք արդեն դպրոցականներ էին, սիրով և հաճույքով էին կատարում պապիկի ցուցմունքները։

Հուլիսին Պետերբուրգից Թեոդոսիա է գալիս գեղարվեստի ակադեմիայի ուսանող ակադեմիստ Էմանվել (Մանուկ) Մահտեսյանը՝ 28 ամյա նկարիչը, և ընդունվում Այվազովսկու «Գեղարվեստական արվեստանոցը» ծովանկարչության մեջ մասնագիտանալու նպատակով։ Վարպետը նրան հանձնարարում է իր պատկերներից պատճեններ նկարել և միաժամանակ էսյուդներ անել բնությունից։ Այդ առաջադրանքները Մահտեսյանը կատարում է հաջողությամբ։ Օգոստոսին Այվազովսկին արդեն հաղորդում է ակադեմիային. «Ես պատիվ ունեմ գրելու Ձեզ, որ թերթերում հայտարարություններ տպագրելուց հետո Ռուսաստանի բոլոր ծայրերից եկել են երիտասարդներ, որոնցից երկուսը մեր ակադեմիայի աշակերտներից են։ Համարյա բոլորը չանասեր պարապում են, առանձնապես Մահտեսյանը (ակադեմիայի աշակերտ), որը նկարել է գեղեցիկ էսյուդներ։ Հետևյալ ամռանը, դատելով նամակներից, շատերն են գալու ինձ մոտ, ես ինքս շատ ուրախ եմ, որ չնայած իմ ծերությանը, ինձ հաջողվում է օգտակար լինել այնքան, որքան ես կարող էի լինել հենց ակադեմիայում»։[8]

---

[7] «Документы...», էջ 192—193։

[8] Նույն տեղ, էջ 192։

ԿՐԿԻՆ ԱԴԱՄՅԱՆԻ ՀԵՏ

Նույն ժամանակ Թեոդոսիա է գալիս հայ նշանավոր արուեստ, գրող և նկարիչ Պետրոս Ադամյանը, հանգիստը այստեղ անցկացնելու համար՝ վերհիշելով իր առաջին ծանոթությունը Մոսկվայում՝ Անանյանների տանը, Ադամյանն այցելում է մեծ ծովանկարչին: Այդ հանդիպումը շատ է ուրախացնում երկուսին էլ: Նրանց միջև սկսվում է իսկական ընկերություն. միասին լողանում են ծովում, ուրախ ժամանակ անցկացնում: Այվազովսկին Ադամյանին է նվիրում երկու լուսանկար՝ մակագրությամբ: Դրանցից մեկի վրա, որը այժմ գտնվում է Երևանում՝ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, նկարիչը իր ձեռքով մի փոքրիկ ծովանկար է նկարել: Արտիստ Ադամյանը, որը միաժամանակ գրում էր բանաստեղծություններ, գրում և Այվազովսկուն է նվիրում մի ընդարձակ բանաստեղծություն, որից բերում ենք այստեղ երկու քաղվածք.

«...Հանկարծ շունչ մ' ուժգին
կցնցե զերկիր,
Ալիք ուժգնակի
Բաշխին ժայռերու,
Սփռեն փրփուրներ,
Գոլորշիք ոսկի,
Հայնժամ քեզ հիշեմ.
Ո՜վ Այվազովսկի»:

Ասյա.

«...Ինչպես, որ կնոջ գեղանի
հարկավոր է մի հայելի,
որ յուր ձեռքերն աննման
Մեջը տանե ու զմայլի
Նույնպես բնությունն ուզեց գտնել
իրեն արժան շքեղ հայելի,
ու քո հանճարն գտավ առավ,
քո ներկապնակ ճոխ, լեզվանի,
Եթե այլացդ պակսին լոկ մռնչյուն,
Ջերմություն արփվույն, սառնություն լուսնի,
ուր որ քո հոգին սլանա գեղավարժ

Թէ նկարներումդ իրք մնան անշարժ,
Թէ անդ չէ լսվում մրմունջ ծովերի,
Այդ պատճառով որ վրձնովդ են դրոշմած
ու հանճարովդ կտավում գամված,
Որպեսզի մնան միշտ անմահացած»[1]։

Երկու մեծ արվեստագետների մտերմական-բարեկամական հարաբերությունները կարող էին երկար շարունակվել, եթե օգոստոսի վերջերին արտիստը չմեկներ հյուրախաղերի։

Հովհ. Այվազովսկին նույնպես մտածում է մեկնել Թեոդոսիայից, ցուցահանդեսներ կազմակերպել Պետերբուրգում և այլուր։ Այդ նպատակով նա նկարում է նոր, ուշագրավ սյուժետային, ինչպես ինքն է արտահայտվում «բարձր հնչող պատմական փաստեր» ներկայացնող պատկերներ՝ «Հերկուլեսումի կործանումը», Ծովակալ Պլինիուսի ամառանոցից երևացող «Պոմպեյը Վեզուվ սարի հրաբխի առաջին պահին», «Ահեղ կործանման նախօրյակը կամ առավոտը» և ուրիշներ։ «Բացի դրանից,— գրում է նա,— կան 10 նոր պատկերներ ևս, որոնք միասին կարող են կազմել բավական մեծ հավաքածու, որի համար հարկավոր կլինի երկու սրահ»։[2]

Այդպիսի մեծ ցուցահանդես կազմակերպելու նպատակն էր միջոցներ հայթայթել իր մտահղացումը ՅալթայումԷկամրտաբեր տուն՝ նկարիչների համար արվեստանոցներ, ցուցասրահ և բնակելի սենյակներ կառուցելու գործը իրականացնելու համար։ «Այդ կառույցի համար ես փող չունեմ,— գրում է նա գեղարվեստի ակադեմիայի ղեկավարությանը օգոստոսի 12-ին,— և կցանկանայի առաջիկա ցուցահանդեսների մուտքի և վաճառվելիք պատկերների գումարը հատկացնել դրան։ Պետերբուրգից հետո անհրաժեշտ կլինի նույն նպատակով ցուցադրել Մոսկվայում և էլի ուրիշ մեծ քաղաքներում, որպեսզի մինչև առաջիկա ամառը հավաքվի 15—20000 ռ., որը բավական կլինի»[3]։

Որոշ ժամանակ անց՝ հոկտեմբերի 12-ին, գեղարվեստի ակադեմիայի կոնֆերենց-քարտուղար Պ. Ֆ. Խաևը պաշտոնապես հայտնում է, որ ակադեմիայի խորհուրդը ծանոթա-

---

1 Պ. Ադամյան, Երկեր, 1956, էջ 217։

2 «Документы...», էջ 193։

3 Նույն տեղ, էջ 192—193։

նալով նրա նամակին, շնորհակալություն է հայտնում նկարչին բարեգործական նպատակով Յալթայում նոր տուն կառուցելու մտադրության համար և ակադեմիայի եռկու սրահները տրամադրում է նրա պատկերահանդեսին. «Խորհուրդը շատ շնորհակալ կլինի,— վերջում գրում է կոնֆերենց-քարտուղարը,— որ անկախ այդ ցուցահանդեսից 1886 թ. ակադեմիական ցուցահանդեսի համար ուղարկեք թեկուզ մի պատկեր»[4]:

Հովհ. Այվազովսկու համար ակադեմիայի այդ խնդրանքը բավարարելը մեծ դժվարություն չէր կարող պատճառել, ուստի նա շարունակում է հանգիստ աշխատել, ստեղծելով նոր պատկերներ: Այդ շրջանից մեզ են հասել ավելի քան 8 պատկեր, այդ թվում՝ «Յալթայի ափերը», «Փոթորիկ Նիցցայի ափերի մոտ» նոր տարբերակը, «Կովկասի ժայռերի մոտ», «Բուրգեր», «Նավը ծովում», «Ղրիմի հարավային ափերը», «Անդորր», «Առագաստանավը փոթորիկի մեջ» և ուրիշներ:

Մինչ նա զբաղված էր Թեոդոսիայում ստեղծագործությամբ, Մոսկվայում նկարիչ Ի. Ն. Կրամսկոյը մի խումբ նկարիչների հետ այցելում է Պ. Տրետյակովի պատկերասրահը, որտեղ նրանք տեսնում են Այվազովսկու «Սև ծովը» մեծակտավ պատկերը: Բոլորը երկար ժամանակ հիացած դիտում են այդ հանճարեղ ստեղծագործությունը: Առանձնապես մեծ հիացմունք է ապրում Ն. Ի. Կրամսկոյը՝ նոր, ռեմոկրատական, ռեալիստական արվեստի բոցաշունչ չատագովը: Այդ հիացական տպավորության տակ նա գրում է մի երկտող «Նովոյե վրեմյա» ամսագրի խմբագիր Կ. Սուվորինին. «...Ով ահա այստեղ, այսպիսի հավաքածուի մեջ մենք հիացանք այդ պատկերի համարձակ և բարձր պոեզիայով»[5]:

Դեկտեմբերի 11-ին «Նովոյե վրեմյա» ամսագրում հրապարակվում է Ի. Կրամսկոյի բաց նամակը, որտեղ, առաջ քաշելով Հովհ. Այվազովսկու հոբելյանը նշելու հարցը, նա գրում է. «Այվազովսկին, ով ինչ էլ ասի, համենայնդեպս, առաջին մեծության աստղ է, և ոչ միայն մեզ մոտ, այլև արվեստի պատմության մեջ ընդհանրապես... Նա պատմության արժանանալու իրավունք ունի 3—4 հազար պատկերների

---

4 «Документы...», էջ 194:

5 Крамской И. Письма, 1937, էջ 379, տե՛ս նաև «Книга для чтения по истории русского искусства», 1948, էջ 29.

մեջ, որոնք նկարել է Այվազովսկին, կան ֆենոմենալ գործեր և կմնան ընդմիշտ այդպիսինը»[6]

1886 թ. հունվարի սկզբներին Այվազովսկու ստեղծագործություններն արդեն Պետերբուրգում էին։ Մննդյան օրերն անցնելուց հետո գեղարվեստի ակադեմիայի երկու ցուցասրահները տրամադրվում են ցուցահանդեսի համար։ Հունվարի 11-ին նշանակվում է փակ դիտում և հրավիրատոմսերով այստեղ են գալիս պետական, հասարակական և ստեղծագործական կազմակերպությունների ղեկավարներ, մինիստրներ, պալատին մոտ կանգնած անձինք։

Հաջորդ օրը՝ հունվարի 12-ին, ցուցահանդեսը բացվում է։ Մի քանի օր հետո՝ հունվարի 16-ին, պետերբուրգյան թերթերից մեկը գրում է. «Այվազովսկու պատկերների ցուցահանդեսը, որի մասին մենք բազմիցս հաղորդել ենք, գեղարվեստի ակադեմիա է գրավում հսկայական քանակությամբ հասարակություն։ Մեր այցը ցուցահանդես, որը տեղի ունեցավ մառախլապատ օրը, կրում էր իր մեջ հակադրության իսկական հիացմունք։ Դա մի ճանապարհորդություն էր Սև ծովի ափերով դեպի Միջերկրական ծովը, ուրախության և արևի երկրները»[7]։ Ցուցահանդեսը մեծ հաջողություն է ունենում։ Մայրաքաղաքի արվեստասեր հասարակությունը, որ անցյալում շատ անդամ էր տեսել նկարչի ստեղծագործությունները, նորից ու նորից է շտապում ակադեմիա, մեծ ծովանկարչի նոր կտավներով հիանալու համար։ Ցուցահանդեսից ծախվում են պատկերներ, հավաքվում է մուտքի մեծ գումար։ Այվազովսկին, չափազանց գոհ հասարակության ջերմ վերաբերմունքից, երկտող նամակով հայտնում է ակադեմիային, որ ինքը 600 ռ. տալիս է գեղարվեստի ակադեմիայի ուսանողական դրամարկղին աղքատ ուսանողներին օգնելու համար։[8]

Սկսվում են ամառային շոգերը։ Դեպի Թեոդոսիա և Ղրիմի հարավային կունաշապատ ծովափերն են մեկնում հազարավոր ամառանոցայիններ, այդ թվում՝ Այվազովսկու ծանոթներն ու երկրպագուները։

---

[6] Крамской И. Письма, 1937, էջ 379։

[7] Տրետյակովյան պատկերասրահի արխիվ, № 14։

[8] «Документы...», էջ 195։

Հուլիսին կրկին Թեոդոսիա է գալիս նաև Պետրոս Ադամյանը հանգստի ու հյուրախաղերի համար։ Վերսկսվում է հայ ժողովրդի երկու մեծ զավակների ընկերությունը։ Նրանք հաճախ են միասին լինում։ Այդ հանդիպումների ու զրույցների ընթացքում պ. Ադամյանը, որը միաժամանակ նկարիչ էր ու նկարում էր մեծ մասամբ նատյուրմորտներ, այս անգամ բռնականից նկարում է Այվազովսկու դիմանկարը։ Նկարը հաջող է ստացվում։ Այվազովսկին հավանում է այն։ Դա պատկերում է նկարչին կիսադեմ (պրոֆիլ), դեպի առաջ նայող կենդանի ու արտահայտիչ հայացքով։ Պ. Ադամյանը կարողացել է որսալ մեծ մարդու ծերունական դեմքի տիպական գծերը, նմանությունը և, որ կարևորն է, վերարտադրել է կենդանությունը՝ դիմանկարը դարձնելով համոզիչ։ Այդ ըստեղծագործության մեջ բազմատաղանդ արտիստը միաժամանակ արտահայտել է իր ջերմ սերը մեծ արվեստագետի նկատմամբ։

Ուրախացած, որ Այվազովսկին հավանում է իր ստեղծագործությունը, Պ. Ադամյանը սիրով նվիրում է նրան։ Այդ մասին վկայում է հենց ինքը՝ Ադամյանը։ «Այստեղ ամեն օր երկու անգամ ծովն եմ լողանում,— գրում է նա,— նկարեցի և վերջացրի, ընծայելով իրեն՝ Այվազովսկու պատկերը, որից շատ բավական մնաց և հավանեցավ աշխատությունս, մի փոքր նկար ընծայեց ինձ»։[2]

Հովհ. Այվազովսկու դիմանկարը այժմ գտնվում է Ջրբենցի անվան գրականության և արվեստի թանգարանում։ Այստեղ է պահվում նաև մեծ ծովանկարչի երկտողը ուղղված Պ. Ադամյանին։ Այդ գրությամբ Այվազովսկին խնդրում է Ադամյանին «Օթելլո» ներկայացման համար պահել երեք տոմսակ։ Նկարիչը, նրա կինը և քույրը միասին դիտում են Ադամյանի խաղը։ Խաղը այն աստիճան լավ տպավորություն է թողնում ծովանկարչի վրա, որ նա ներկայացումից հետո մոտենում է Ադամյանին, գրկում նրան և հասարակության աչքի առաջ համբուրում է նրա ճակատը։[10]

---

9 Պ. Ադամյան, Նամակներ, 1959, էջ 48։

10 Գ. Ստեփանյան, Պ. Ադամյան, 1941, էջ 117։

«Մշակ» թերթը նույն օրերին հաղորդում է հետևյալը. «Թեոդոսիա ժամանած Կոնստանտին Նիկոլաևիչ մեծ իշխանը իր շքախմբով այցելում է նկարչին։ Այվազովսկին ցանկանալով օգտվել առիթից, անմիջապես իր մոտ է կանչում Թեոդոսիայում գտնվող Ադամյանին և խնդրում է մի բան արտասանել իր բարձրաստիճան հյուրերի համար։ Արտիստ Ադամյանը արտասանում է Կոպպեի «Դարբինների գործադուլը» բանաստեղծությունը ֆրանսերեն, որը լավ տպավորություն է թողնում բոլորի վրա»։ Դրանով Այվազովսկին առիթը բաց չի թողնում Ռուսաստանի բարձրաստիճան և ազդեցիկ անձանց ներկայացնելու իր ժողովրդի լավագույն զավակներին հայ ժողովրդի մասին նպաստավոր կարծիք ստեղծելու նպատակով։

Օգոստոսի վերջերին, երբ Պ. Ադամյանը ստիպված էր մեկնել Թեոդոսիայից, իր բարեկամներին ուղարկած մի նամակում նա ցավով է գրում. որ սեպտեմբերի «ճիշտ տասնհինգին Տփխիս գտնվելու համար պիտի թողնեմ Այվազովսկու ընկերությունը»։ Այդ ընկերությունը, սակայն, շարունակվում է մինչև Ադամյանի մահը (1892)։ Պատահական չէ, որ կյանքի վերջին ամիսներին, Կոստանդնուպոլսի իր բնակարանում անկողնում գամված հիվանդ Ադամյանն իրեն այցելող ծանոթների հետ ունեցած զրույցների ժամանակ կամ բարեկամների գրած նամակներում հաճախ է հիշում Այվազովսկու հետ ունեցած իր հանդիպումների, ինչպես և նրա ծովանկարներից ստացած տպավորությունների մասին։

Մինչև տարվա վերջը աշխատելով Թեոդոսիայում՝ Այվազովսկին նկարում է բազմաթիվ նոր պատկերներ, որոնցից մեզ են հասել և խորհրդային տարբեր թանգարաններում են գտնվում ավելի քան 12 մեծ ու փոքր պատկերներ։ Հավաքելով իր բոլոր նոր նկարները՝ Այվազովսկին դեկտեմբերի վերջերին տանում է իր հետ Պետերբուրգ այնտեղ ցուցահանդես բացելու համար։

1887 թ. Հունվարին Այվազովսկին առաջարկում է Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի վարչությանը ակադեմիայի սրահներում բացել իր ստեղծագործությունների նոր ցուցահանդես ակադեմիայի ուսանողական դրամարկղի օգտին։ Համաձայնվում են։ Հունվարի 22-ին հրապարակվում է ակադեմիայի գրասենյակի հայտարարությունը հունվարի 25-ից մինչև փետրվարի 22-ը Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդես բացելու մասին։

Ցուցահանդեսը լայն արձագանք է գտնում մայրաքաղաքում։ Համարյա բոլոր ուսումնական հիմնարկների ուսանողները, աշակերտները և ուսուցիչները, քաղաքի հյուրերն ու օտարազգիները, մարդիկ, որոնք մի քանի անգամ տեսել են նկարչի ցուցահանդեսները, կրկին այցելում են ակադեմիա մեծ արվեստագետի ստեղծագործությունները տեսնելու և հրճվելու համար։ Մեկ ամսվա ընթացքում այստեղ են հաճախում ավելի քան 10.000 մարդ, վաճառվում է 8800 տոմս, գնվում է 3471 կատալոգ, վաճառվում են նկարներ։ Ցուցահանդեսը փակվում է փետրվարի 22-ին։ Բայց նախքան փակվելը՝ մեկ օր առաջ, փետրվարի 21-ին ակադեմիայի կոնֆերենց դահլիճում տեղի է ունենում Այվազովսկու և ուսանողության, ինչպես և երիտասարդ նկարիչների հանդիպումը։ Պաշտոնապես հայտարարվում է, որ նկարիչը ներկա ցուցահանդեսից ստացված ամբողջ գումարը նվիրում է կարիքավոր ուսանողներին օգնելու ֆոնդին։ Նա անցյալ տարի ևս 600 ռ. էր մուծել ուսանողական դրամարկղին նույն նպատակի համար։ ԵՒս մեծ շուք է տալիս այդ հանդիպմանը, որը վեր է ածվում մեծարման հանդեսի։ Ակադեմիայի ուսանողները և երիտասարդ նկարիչները մեկը մյուսի հետևից ամբիոն են բարձրանում և ողջույնի ջերմ խոսքեր ասում։ Այդ ամենը խոթոթանքս հուզում և ոգեշնչում է 70-ամյա նկարչին։ Վերջապես կարդացվում է ուսանողների կազմած ուղերձը։ Մեծ ծերունկարչին և մարդուն ուղղված իրենց ուղերձում ուսանողները շնորհակալություն են հայտնում նկարչին և հավատացնում են, որ նրա արվեստի նկատմամբ միշտ կպահպանեն սիրո ու հարգանքի ջերմ զգացմունքներ։ «Մեծարգո պր-

րոֆեսոր,— գրում են նրանք իրենց ուղերձում,— ջերմ, սրտացավ վերաբերմունքը մեր՝ արվեստի բնագավառ նոր միայն ոտք դնողներիս նկատմամբ, մեր կարիքների համար կարեկցությունը առիթ են տալիս հրապարակորեն արտահայտել մեր հարգանքի, անկեղծ սիրո զգացմունքները և խոր երախտապարտությունը Ձեր նկատմամբ»[1]

Հուզված և զգացված Այվազովսկին ևս, բարձրանալով ամբիոն, դիմում է ուսանողությանը և դահլիճում նստած երիտասարդ նկարիչներին. «Պարոններ,— ասում է նա.— ինձ համճելի է լսել, որ ես արժանացել եմ ձեր շնորհակալությանը։ Ապրելով Պետերբուրգից հեռու, ես չեմ կարող ձեզ համար այնքան օգտակար լինել, ինչքան իմ կոլեգիաները, իսկ այն նյութական օգնությունս, որ տվել եմ ձեզ, ես պարտական եմ իմ ստեղծագործությունների նկատմամբ հասարակության ներողամիտ վերաբերմունքին։ Ինձ սփոփում է և այն, որ դրանք արդարացրին ինձ ակադեմիայի առաջ, որը միշտ էլ առատորեն պարգևատրել ու պաշտպանել է, ինչպես օրինակ 50 տարի առաջ եղած մի դեպքի առիթով։ Կրկին սրտագին շնորհակալություն ձեզ, պարոններ»։[2]

Այս մեծարման հանդեսից մի քանի օր հետո, փետրվարի վերջերին, Այվազովսկին վերադառնում է Թեոդոսիա։

Թեոդոսիայում Այվազովսկին ստանում է Պ. Մ. Տրետյակովից մի նամակ, որը մեզ չի հասել։ Սակայն Տրետյակովյան պատկերասրահի արխիվում պահվում է Այվազովսկու պատասխան նամակը, որից կարելի է ենթադրել, որ մոսկովյան պատկերասրահի տնօրենը հարցում է արել նկարչի վերջին շրջանի նոր ստեղծագործությունների մասին, և խնդրել մի նկար պատկերասրահի համար։

Եվ ահա Այվազովսկին ուղարկում է հետևյալ պատասխանը. «...ես անպայման կկատարեմ Ձեր խնդրանքը, բայց միայն Պետերբուրգ գալուց հետո, որտեղ ես պետք է լինեմ այս տարվա աշնանը և կմնամ երեք ամիս, ուր և լինելու է իմ նոր պատկերների ցուցահանդեսը։ Եթե անցնեմ Մոսկվա-

---

1 «Документы...», էջ 197—198։

2 Նույն տեղ, էջ 198։

յով՝ կանցնեմ Ջեզ մոտ»։ Նամակում միաժամանակ տեղեկացնում է. «Այժմ ես զբաղված եմ Կիպրոսի (Կոնդ) ապստամբության թեմայով պատկերի վրա։ Ավարտեցի մեծածավալ կտավը, որը պատկերում է Արկադիա (կղզու վրա գրտնվող) վանքի պայքարը և թուրքական բարբարոսության բոլոր սարսափները, որոնք ցուցադրել եմ այդ պատկերի մեջ, նկարել եմ այնպիսի ուժով, որ ավելին հնարավոր չէ։ Նկարել եմ երկու այլ պատկեր ևս. մեկը պատկերում է, թե ինչպես մեր «Գեներալ-ադմիրալ» ֆրեգատը ընդունում է դրժբախտ հույներին, իսկ մյուսը, ինչպես հունական շոգենավ «Իզվեստնին» գիշեր ժամանակ ափ է իջեցնում ապստամբներին։ Սյուժետը զեղանկարչական է և հենց իմ հոգուն մոտ», ավելացնելով, որ մտադրություն ունի իր նոր ստեղծագործություններ ցուցադրել Օդեսայում և մուտքի գումարը հատկացնել Կիպրոսի ապստամբների ընտանիքների օգտին[1]։

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ՍՏՈԿՀՈԼՄՈՒՄ

1887 թ. հունիսի վերջերին Հովհ. Այվազովսկին իր կնոջ՝ Աննայի և քրոջ որդու՝ Լևոն Մազիրյանի հետ մեկնում է Շվեդիա։ Դա նկարչի առաջին և միակ ճանապարհորդությունն էր այդ հեռավոր Սկանդինավյան երկիրը։ Ստոկհոլմ քաղաքում նա ցուցահանդես է բացում։ Մինչ այդ ոչ մի հայ կամ ռուս նկարիչ Շվեդիայում ցուցահանդես չէր բացել։ Նույնիսկ Այվազովսկու ստոկհոլմյան ցուցահանդեսի մասին ռուսական արվեստագիտական գրականության մեջ ոչ մի խոսք չի գրվել։ Մինչդեռ հայկական աղբյուրները բավական հարուստ տեղեկություններ են հաղորդում այդ ցուցահանդեսի ու նրա նշանակության մասին։

Ստոկհոլմում ցուցադրվում են 20 պատկեր։ Պոլսահայ «Փունջ» թերթը այդ օրերին գրում է. «Կլսեմք, թե մեր ազգի ականավոր նկարչին Յոհաննես Այվազովսկեայ 20 նկարներին ցույց տված են ի Ստոկհոլմ երկու ամսոց հետէ. այս նը-

---

1 «Документы...», էջ 200—201։

կարներն մեծամասամբ ծովային տեսարան են Միջերկրականի, Բոսպորի և Սեաւ ծովու։ Ստոկհոլմի լրագիրք մեծ գովութեամբ կը խոսին Այվազովսկեայ արվեստին վերա, և ի պատճառս հայ պատկերահանին այլև այլ հետաքրքրական յօդուածներ կհրատարակեն զհայոց։ ...Այվազովսկին ծրագիրներ հաներ է Ստոկհոլմի քանի մը գեղեցիկ դրից, զորոց նկարներն խոստացեր է յեղեր ի Ստոկհոլմ երկու ամսենն»[1]

Շվեդիայում Հովհ. Այվազովսկու և նրա ստեղծագործությունների ցուցահանդեսի ունեցած հաջողությունների մասին է վկայում նշանավոր գիտնական, բանասեր և լեզվաբան Նորայր Բյուզանդացին, որն այդ ժամանակ ապրում և գործում էր Ստոկհոլմում։ Հուլիսի 15-ին գրած իր մի նամակում Ն. Բյուզանդացին հաղորդում է. «Քսան նկարք Այվազովսկեայ (մեծամասամբ ծովային տեսարանք) ի ցույց դրված են ի քաղաքիս երկու ամսոյ հետե։ Լրագիրք մեծ գովեստութեամբ կխոսին մեր հայրենակցին արվեստին վրա։ Armenien *(Հայաստան) և* Armenier, Armenisk *(հայ) բառերն Ստոկհոլմի թե լրագրաց և թե խոսակցութեանց մեջ բավական հոլովեցան ի պատճառս Այվազովսկեայ»*[2]

Հովհ. Այվազովսկին կնոջ հետ Շվեդիայում մնում է շուրջ մեկ շաբաթ։ Այդ ժամանակամիջոցում նա մոտիկից ծանոթանում է շվեդական ժողովրդի կյանքին, նրա արվեստին և նկարում Շվեդիայի ծովափնյա բնության տեսարաններից մի քանի էսյուդ, հետագայում դրանց հիման վրա պատկերներ նկարելու համար։ Ստոկհոլմում նկարիչը նոր ծանոթություններ է ստեղծում մշակութային գործիչների հետ, այդ թվում՝ գիտնական և բանասեր, «Բազմավեպի» նախկին խմբագիր, իսկ այդ ժամանակ «Քննասեր» հայկական ամսագրի հրատարակիչ-խմբագիր Նորայր Բյուզանդացու հետ։ Հուլիսի 3-ին Ն. Բյուզանդացին երկտող-նամակով հրավիրում է նկարչին, նրա կնոջը և Լ. Մազիրյանին իրենց տուն տեսակցության և

---

[1] *«Փունջ», 1887, հուլիսի 18։ Տե՛ս նաև Վ. Գրիգորյան, «Հ. Այվազովսկին Ստոկհոլմում» հոդվածը։ «Սովետական արվեստ» 1964, № 12, էջ 46—50։*

[2] *Նույն տեղը։*

զրույցի համար և, նշելով իր հասցեն, գրում է. «Կինս և ես մեծապես պիտի ուրախանանք Ձեր այցելությամբ»[1]։ Նկարիչը, Աննան և Մազիրյանը այցելում են Ստոկհոլմի Ֆրենդլսգարտեն փողոցի վրա գտնվող Զելմա Յակոբսոնի՝ Բյուզանդացու կնոջ, լուսանկարչատունը (տուն-ալբոմատնոց) և երկար զրույցներ ունենում նրանց հետ։ Այստեղ էլ լուսանկարչուհի Զելմանը լուսանկարում է նկարչին և նրա հարազատներին տարբեր դիրքերով։ Այդ զրույցի ժամանակ, ինչպես վկայում է Ն. Բյուզանդացին Ս. Մալխասյանին 1888 թ. գրած նամակում, Այվազովսկին խորհուրդ է տալիս Ստոկհոլմում ապրող Ն. Բյուզանդացուն ծանոթ լինել և կապեր պահպանել Պետերբուրգում գործող հայ գիտնականներ Կարապետ Էզյանի և Քերովբե Պատկանյանի հետ։ Ն. Բյուզանդացին սիրով ընդունում է այդ առաջարկը և հենց տեղում նրան է հանձնում իր հրատարակած «Քննասեր» հայերեն ամսագրի մի քանի օրինակ այդ գիտնականներին և ուրիշներին հանձնելու համար։ Պահպանվել է Ն. Բյուզանդացու երկտող նամակը Կ. Էզյանին, որ նա գրում է. «Մեծապատիվ Կ. Էզյան, մեր ականավոր հայրենակցին՝ Հովհ. Այվազովսկու, Պետերբուրգ ուղևորվելու պատեհ առիթ համարեցա յեղու առ Ձեզ օրինակ մի «Քննասեր» հանդեսիս առաջին օրինակեն»[2]։

Հուլիսի 5-ին Հովհ. Այվազովսկին և նրա կինը՝ Աննան, Շվեդիայից մեկնում են հայրենիք։ Լևոն Մազիրյանը մնում է Ստոկհոլմում, ցուցահանդեսի հետ, մինչև դրա փակվելը։

Պետերբուրգում Հովհ. Այվազովսկին և Աննան մնում են մինչև օգոստոսի առաջին կեսը։ Այդ ժամանակ էլ նկարիչը Շվեդիայից ստանում է Ն. Բյուզանդացու ուղարկած 24 լուսանկարները և օգոստոսի 4-ին գրած մի նամակ, որտեղ ասվում է. «Ընկալայ նուեր երկու գիրք, չորս յղեց ինձ ի Պետերբուրգէ վսեմ տէր Կարապետ էզեանց հանդերձ մի ազնիւ նամակաւ, ընկալայ իւս ևս գիրք նուեր տէր Ք. Պատկանյանէ։ Շատ շնորհակալ եմ Ձեզ, վսեմաշուք տէր, որ պատճառ եղաք իմ անձնական յարաբերութեանց, ընդ երկու հարգելի

---

1 «Документы...». էջ 207։

2 Նույն տեղ, էջ 208։

գիտունս Պետերբուրգի հայ հասարակութեան»[1]։ Այս փաստը, ինքնին, մի նոր ապացույց է այն մասին, որ Այվազովսկին իր կյանքի ընթացքում դրական դեր է կատարել նաև աշխարհի տարբեր երկրներում ցրված հայ ժողովրդի մշակույթի գործիչներին միավորելու, նրանց միջև ծանոթության և կապերի հաստատման գործում, դրանով իսկ նպաստելով հարազատ ժողովրդի գիտության, գրականության, արվեստի և մշակույթի մյուս բնագավառների արագ զարգացմանը։

Հովհ. Այվազովսկու այցը Շվեդիա և նրա ցուցահանդեսը Ստոկհոլմում կարևոր նշանակություն ունեցավ նկարչի ստեղծագործական կյանքում։ Հանճարեղ նկարիչը լայն ճանաչում գտավ այստեղ ևս։ Նրա ցուցահանդեսի շնորհիվ շվեդացիները առիթ ունեցան մոտիկից ծանոթանալ մեծ ծովանկարչի ստեղծագործություններին և դրանց միջոցով գաղափար կազմել հայ ժողովրդի արվեստի մակարդակի մասին։ Վերջապես, իր այդ ճանապարհորդության ընթացքում Այվազովսկին տեսավ բնության նոր տեսարաններ, մասնավորապես Շվեդիայի ծովափնյա բնությունը և նկարեց նոր պատկերներ, ընդլայնելով իր ստեղծագործությունների թեմատիկան։

Օգոստոսի սկզբին Այվազովսկին և Աննան Պետերբուրգից վերադառնում են Ղրիմ, այդ ճանապարհորդությունից հանգրստանալու համար։ Սակայն նկարիչն այստեղ հանգիստ չի գտնում։ Նրա նախկին կինը՝ Հուլիա Գրևսը, Պետերբուրգից եկել էր Օդեսա և այնտեղից սկսել նոր հարձակումներ նախկին ամուսնու վրա։ Օգոստոսի 16-ին Կ. Էզյանին գրած նամակում Այվազովսկին ցավով գանգատվում է իրեն չարամտորեն հետապնդելու համար։ «Օդեսայից ինձ գրում են,— հայտնում է նկարիչը.— անհանգիստ կինը ասում է, թե ինքը երբեք չի ընդունի իրեն առաջարկվող կոմբինացիան։ ...Նրա նպատակը, ինչպես 30 տարի առաջ, ինձ տանջելն ու վախեցնելն է։ Շատ ափսոս, որ գործը կախված է նրա համաձայնությունից»։

---

[1] «Документы...», էջ 209։

Պետերբուրգի կայսերական գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսորները 1887 թ. սկզբներին հարց են բարձրացնում նշելու Հովհ. Այվազովսկու ծննդյան 70 և գեղարվեստական գործունեության 50-ամյա հոբելյանը։ Այդ կապակցությամբ պրեզիդենտ Վլադիմիրը մարտի 20-ին զեկուցագիր է ներկայացնում կայսերական տան մինիստրին թագավոր-կայսրի թույլտվության համար։ Զեկուցագրում ասվում է. «Պրոֆ. Այվազովսկին կես դարյա գեղարվեստական գործունեությամբ իր տաղանդով և աշխատանքներով հսկայական օգուտ է բերել արվեստին ու ձեռք է բերել պատվավոր ճանաչում ոչ միայն ռուս նկարիչների ընտանիքում, այլև արտասահմանում։ Նրա ստեղծագործությունները ներկայացնում են արտակարգ տաղանդի և բարձր արվեստի օրինակներ։ Հանրահայտ են նրա բարեգործական գործունեությունը»։ Պրեզիդենտը միջնորդում է շնորհել նրան Վլադիմիրի 2-րդ կարգի շքանշան, թույլատրել տոնել 50-ամյա գեղարվեստական գործունեության հոբելյանը ակադեմիայի հանդիսավոր ժողովով և թույլատրել Այվազովսկու պատվին մեդալ կտրել գեղարվեստի ակադեմիայի անունից։[1]

Ապրիլին թագավոր-կայսրը տալիս է իր համաձայնությունը։ Մայիսի 2-ին ակադեմիայի կոնֆերենց քարտուղարը պաշտոնապես դիմում է դրամահատման տուն նկարչի հոբելյանի առիթով նրա պատվին մեդալ պատրաստելու համար։ Այդ գրության մեջ ասվում է. «Կայսերական ԳԱ գրաբենյակը խնդրում է, վերադասի կարգադրությամբ, ավագ մեդալյոր, ակադեմիկոս Ալեքսեևին պատրաստել մեդալի ըշտեմպել և այն ավարտելուց հետո կտրել մեկ հատ ոսկուց 20 մսխալ քաշով (մոտ 100 գրամ) և 100 մեդալ բրոնզից»[2]։

Սկսվում է հոբելյանի նախապատրաստությունը։ Մինչ մայրաքաղաքում պատրաստվում էին նկարչի մեծարմանը, Թեոդոսիայում Այվազովսկին հալածվում էր նախկին կնոջ հետապնդումներից։ Ջուլիա Գրևսը՝ արդեն ծերացած ու

---

[1] «Документы...», էջ 201—203։

[2] Նույն տեղ, էջ 204։

Տոռացված մի կին, Պետերբուրգում լսելով նկարչի Գորբելյանը նշելու որոշման մասին, ավելի է կատաղում և բանավոր ու գրավոր դիմում է ակադեմիայի վարչությանը, կառավարական մարմիններին, Թեոդոսիայի քաղաքային դումային և նույնիսկ թագավոր-կայսրին, նախկին ամուսնուն վարկաբեկելու և Գորբելյանը չեղյալ հայտարարելու նպատակով։ Դեռևս մարտի 16-ին Այվազովսկին դիմել էր ակադեմիայի ղեկավարությանը՝ խնդրելով օժանդակել իր ամուսնալուծության գործի վերջնական լուծմանը։ Թեև արդեն 5 տարի էր, ինչ նախկին ամուսինը նոր ընտանիք էր կազմել, իսկ առաջին կնոջը նյութապես լիովին ապահովել էր, սակայն, չարությամբ ու նախանձով լցված Ջուլիա Գրևսը անընդհատ և ամենուր հետապնդում էր նրան՝ ահավոր բամբասանքներով վարկաբեկելով նկարչին։ «Այդ կինը ընդունակ է ամեն ինչի,— գրում է նկարիչը Կ. Էզյանին մայիսի 3-ին,— հարկ է իմանալ, թե դա ինչ չար արարած է»։ Մայիսի 28-ին պրեզիդենտ Վլադիմիրը, ստիպված, դիմում է թագավորի անունով դիմումներ ընդունող գրասենյակի պետ գեներալ ադյուտանտ Ո. Բ. Ռիխտերին Այվազովսկու ամուսնալուծության հարցով զբաղվելու և վերջնական լուծում տալու դրան մինչև Գորբելյանի սկսվելը։ Այդպիսով, ամուսնալուծության գործը հասնում է մինչև կառավարական բարձր մարմինները։

Մինչ Գորբելյարը հոգեկան ծանր վիճակում էր, Գորբելյանի նախապատրաստությունը շարունակվում էր եռանդուն կերպով։ Օգոստոսի 30-ին Պետերբուրգի երկաթուղային մինիստրության կողմից կարգադրություն է իջեցվում. «Հոգ տանել Գորբելյար Այվազովսկուն Սիմֆերոպոլից կամ Սևաստոպոլից վագոնով մինչև Պետերբուրգ առանց գնացքը փոխելու ճանապարհելու հնարավորության մասին»[1]։ Սեպտեմբերի 1-ին ակադեմիայի ղեկավարությունը պաշտոնապես տեղյակ է պահում նկարչին, որ Գերագույնի համաձայնությամբ ակադեմիան որոշել է նրա գեղարվեստական գործունեության 50-ամյակը հանդիսավոր ժողովով նշել կոնֆերենց մեծ դահլիճում սեպտեմբերի 26-ին և խնդրում է մեկնել մայրաքա-

---

1 ԽՍՀՄ ԿՊՊԱ ֆ. 58, թ. 169—170։

ցույք[1]։ Գեղարվեստի ակադեմիայի մեծ կոնֆերենց դահլիճը և ճաշկերույթի սրահը հոբելյանի կապակցությամբ ծովային ատրիբուտներով և դեկորատիվ զարդարանքի համար ակադեմիայի դրասենյակը սեպտեմբերի 19-ին ծովային մինիստրությունից խնդրում է ժամանակավորապես իրեն տրամադրել ազգային բոլոր դրոշների երկու կոմպլեկտ, երկու դյուժին կախիչ, վեց ոչ մեծ խարիսխ, մի քանի կապոց ծովային պարաններ, ազդանշանային դրոշների լրիվ կոմպլեկտ, ինչպես նաև մեկ նավաստի ազդանշան տվող։ Այդ բոլորը դրրվում է նկարիչ ակադեմիկոս Ն. Ն. Կարազինի տրամադրության տակ և նա շքեղ զարդարում է դահլիճը։ Սկսվում է տարբեր կազմակերպությունների և ստեղծագործական ընկերությունների կողմից պատգամավորների ու ներկայացուցիչների ընտրություններ հոբելյանին մասնակցելու համար։

Սեպտեմբերի 22-ին Այվազովսկին կնոջ հետ Թեոդոսիայից ժամանում է Պետերբուրգ։ Դեռևս Մոսկվայում նա ստանում է հեռագիր կոնֆերենց-քարտուղար Պ. Ֆ. Խսեևից. «Ձեզ դիմավորելու են այստեղ ակադեմիայի խորհրդի կողմից ակադեմիկոսներ Շամշինը, Վիլևալդեն, Ռոզանովը և Զիմինը իմ փոխարեն, քանի որ ես պետք է լինեմ պալատում առավոտյան»[2]։ Պետերբուրգի երկաթուղային կայարանում բազմության կողմից ջերմորեն դիմավորվելով, Այվազովսկին և նրա կինը իջևանում են իրենց համար հատկացված հյուրանոցում։

Սեպտեմբերի 26-ի առավոտյան «Շրջիկ (Պերեդվիժնիկ) գեղարվեստական ցուցահանդեսների նկարիչների ընկերության» մի խումբ նկարիչներ այցելում են Այվազովսկուն՝ հյուրանոց, և ջերմորեն շնորհավորում են հոբելյարին։ «Ուրա առաջավոր նկարիչների այդ խմբական այցելությունը խորապես ուրախացնում է բազմավաստակ ծովանկարչին»[3]։ Նույն օրը հոբելյանական հանդիսավոր նիստում հրապարակվում է ողջույնների և ելույթների կարգը, որը նախատեսում է ավելի քան 10 ողջույնի խոսք։

---

1 «Документы...», էջ 210։

2 ԽՍՀՄ ԿՊՊԱ ֆ. 58, թ. 217։

3 Մ. Սարգսյան, Հովհ. Այվազովսկի, 1976, էջ 135։

Սեպտեմբերի 26-ին, ցերեկվա ժամը 12-ին կայսերական գեղարվեստի ակադեմիայի մեծ կոնֆերենց-դահլիճում ըսկըսվում է Հովհ. Այվազովսկու գեղարվեստական գործունեության 50-ամյակին նվիրված ակադեմիայի հանդիսավոր ժողովը։ Ժողովը բացում է ակադեմիայի կոնֆերենց-քարտուղար Պ. Ֆ. Խսեևը, որը կարդում է ակադեմիայի խորհրդի ուղերձը։ Այստեղ ասվում է. «...50 տարի առաջ հենց այս պատերի մեջ դուք հանդիսավոր կերպով պսակադրվեցիք ակադեմիական դափնիներով։ Ձեզ համար անմոռանալի այդ օրը Դուք միայն 20 տարեկան պատանի էիք՝ ռուսական արվեստի սոսկ փայլուն հույսը։ ...Այդ ժամանակվանից անցել է կես դար և ակադեմիան կրկին հանդիսավոր ողջունում է Ձեզ, բայց արդեն պատվաբժան նկարիչ, արդարացնելով ակադեմիայի հույսերը։ ...Կեսդարյա շրջանում Ձեր աշխատանքներով անընդհատ պատճառել եք նկարիչներին և արվեստի բարեկամներին բարձր հիացմունքի պահեր։ Գունանկարչության բնագավառում դուք հիմնադրել եք դպրոց, որին անկասկած վիճակված է գոյության շարունակությունը։ Դուք տվել եք անխոնջ աշխատանքի ընտրած ուղուց չշեղվելու օրինակ և քող տա աստված, որ այդ օրինակով ղեկավարվեն այստեղ ներկա նկարիչների նոր սերունդը արվեստի մեջ իրենց ծառայության ասպարեզում և մեծ նպատակներին հասնելու մեջ։ ...Ի նշանավորումն հայրենական արվեստի փառքին մատուցած Ձեր ծառայության, կայսերական գեղարվեստի ակադեմիայի խորհուրդը շնորհում է Ձեզ ակադեմիայի պատվավոր անդամի կոչում և Ձեր պատվին կտրում է ոսկե մեդալ»[1]։

Այդ ուղերձը և որոշումը՝ Այվազովսկուն ակադեմիայի պատվավոր անդամ ընտրելու մասին, հասարակությունն ընդունում է բուռն ծափահարությամբ և հոտնկայս։ Այնուհետև ուղերձներ են ներկայացնում կայսերական էրմիտաժի կողմից նկարիչ Ա. Ի. Սոմովը և քանդակագործ Մ. Ա. Զիժովը, «Նկարիչներին օգնող ընկերության» կողմից Վ. Պ. Գաևսկին և Ն. Լ. Բենուան, Պետերբուրգի համալսարանի կողմից ռեկտոր

---

1 «Документы...», *էջ 217—219։*

ակադեմիկոս Մ. Ի. Վլադիսլավսկին և Ի. Ն. Պոմյալովսկին, Աշխարհագրական ընկերության անունից ակադեմիկոս Պ. Պ. Սեմենովը, թատերական ընկերության անունից Ի. Ֆ. Սազանովը, Ն. Ա. Վարլամովը և Ի. Ֆ. Դորբունովը, Պետերբուրգի հայկական համայնքի և ընդհանրապես հայ ժողովրդի անունից գեներալ Կ. Կ. Դոլուխանյանը, նկարիչ Ա. Ի. Հուսիկյանը, Մ. Ա. Համազյանը, այնուհետև Պետերբուրգի, Մոսկվայի, Թեոդոսիայի քաղաքային դումաների պատգամավորներն ու այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Հայ պատգամավորների ուղերձում ասվում է. «Մեծարգո Հովհաննես Կոստանտինովիչ. ...Այն բոլոր հիսուն տարիների ընթացքում, Ձեր ամբողջ փառքի ընթացքում, դուք միշտ եղել եք հպարտության առարկա այն ազգի համար, որից Դուք ծագում եք։ Աննման աշխատասիրությունը, որը միացած աստծուց Ձեզ տրված ահագին տաղանդի հետ կարող է մեր զավակների համար ծառայել որպես ուսանելի օրինակ, որ հանճարի կատարյալ ծաղկման համար պահանջում է տոկուն, անընդհատ աշխատասիրություն, Պետերբուրգի հայոց հասարակությունը տեսնելով Ձեզ գրեթե ամեն օր իր եկեղեցու ծխականների թվում, սկսած այն ժամանակներից, երբ դուք ուսանում էիք Գեղարվեստի ակադեմիայում, մինչև մեր օրերը, ամենամերձավոր վկան էր Ձեր աշխատանքների ու Ձեր փառքի, և այդ պատճառով նա խոնարհաբար մատուցում է Ձեզ իր շնորհակալությունը Ձեր Հոբելյանի առթիվ, որով լրանում է աշխատանքի ու գեղարվեստի ասպարեզում Ձեր անխոնջ ծառայության հիսուն ամյակը։ Դուք ընդունել եք մարմին և արյուն հայոց ազգից, ուրեմն ընդունեցեք Պետերբուրգի Ձեր հայրենակիցներից գեղարվեստի այն գործիքները, որով Դուք հռչակեցիք և փառավորեցիք Թե՛ Ձեզ, և Թե՛ Ձեր ազգությանը։ Թող մեր համեստ պարգևը ծառայի որպես արտահայտություն մեր անկեղծ ցանկությունների, որ Աստված Ձեզ դեռ երկար օրեր պահպանի Ձեր կյանքը՝ գեղարվեստի համար»[1]։ Ուղերձը կարդացվում է հայերեն և թարգմանվում ռուսերեն։ Դա փորագրված էր արծաթյա պալիտրայի վրա, որը նվիրվում է նկարչին, պալիտրայի մյուս երեսին փորա-

---

1 «Մշակ», 1887, № 89։ Տե՛ս նաև «Документы...», էջ 226—227։

գրված էր Արարատի պատկերը։ Հոբելյարին է նվիրվում նաև նկարչի մի ձեռնափայտ (մուշտաբել)։ Վերջում կարդացվում են հեռագրերը։ Այդ օրը ստացվել էր 300 հեռագիր Ռուսաստանի տարբեր քաղաքներից և արտասահմանից, առանձին գրողներից ու արվեստագետներից, այդ թվում՝ երաժշտական ընկերության Մոսկվայի բաժանմունքից և կոնսերվատորիայի անունից՝ Չայկովսկուց, Տանեևից, Յուրգենսոնից և Ալեքսեևից, Մոսկվայի արվեստասերների ընկերության անունից՝ Պ. Տրետյակովից և ուրիշներից։

Հայ ժողովրդի և նրա հասարակական, մշակութային օջախներից Այվազովսկուն հեռագրերով ողջունում են Թիֆլիսի ներսիսյան դպրոցը, «Մշակ» թերթի խմբագրությունը, Բաքվի հայ հասարակությունը, Նոր Նախիջևանի քաղաքային դուման, Թեոդոսիայի հայոց համայնքը, Մոսկվայի լազարյան ճեմարանը, գեներալ-լեյտենանտ Լորիս Մելիքյանը, Յարոսլավլի և Ռոստովի եպիսկոպոս Հովնաթանը և ուրիշներ։ Իրենց ողջույնի հեռագրերում և ուղերձներում նրանք բոլորն էլ նշելով հանճարեղ նկարչի արժանիքները, ընդգծում են նրա խոշոր ծառայությունները ինչպես ռուս նկարչությանը, նույնպես էլ հայ ժողովրդի գեղարվեստական մշակույթին։ «Մոսկվայի հայերը ցանկանում են,— կարդում ենք Հովհաննես Աննանյանի (Անանով) և Զարմայր Մսերյանի հեռագրում,— բեղմնավոր գործունեություն Ռուսաստանի և բոլոր հայերի փառքի ու պատվի համար»։ Բաքվի հայերը մաղթում են նրան երկար կյանք և նոր բեղմնավոր գործունեություն «ի փառս հայ ժողովրդի»։ Արտիստ Պ. Ադամյանը հեռագրում է. «Ձեր փառքի այսօրվա պսակին ցանկանում եմ այնքան փայլ, որքան կյանք կա Ձեր հանճարեղ վրձնով ստեղծած ալիքներում»։ «Մշակի» խմբագրությունը ողջունում է մեծ նկարչին, որն «...իր անունով փառք է տվել իր հայրենակից հայերին»։ Թիֆլիսի հայկական սեմինարիան ողջունում է հայ ժողովրդի մեծ զավակ Հովհաննես Այվազովսկուն և ցանկանում է նրան քաջառողջություն «ի հպարտություն հայ ժողովրդի և ի օգտակարություն նրա արվեստի»։ Հովհ. Այվազովսկու անունով հեռագրեր են ստացվում նաև հեռավոր Պերուից, որտեղ Ռոբերտո-Կոլեջի մի խումբ հայ ուսանողներ մայրենի լեզ-

վով ուշադրի հետաքրքիր են ուղարկում Այվազովսկուն, արտահայտելով իրենց ուրախությունը[1]։

Հոբելյանի օրը Թիֆլիսի հայերը կազմակերպում են ճոխ երեկո-ճաշկերույթ՝ նվիրված Հովհ. Այվազովսկուն ծննդյան 70, գեղարվեստական գործունեության 50-ամյակին։ Երեկոն տեղի է ունենում Առևտրական ակումբում։ «Մեծ դահլիճը զարդարված էր Այվազովսկու իսկական նկարներով ու նրա մի կիսանդրիով,— գրում է «Մշակ» թերթը,— հանդես դրված բոլոր նկարները և իրան՝ նկարչի կենդանագիրը, շքեղապատված էին կանաչով ու ծաղիկներով։ Նույն երեկո կլուրը ուղարկեց Այվազովսկու անունով մի շնորհավորական հեռագիր»։ Այդ երեկոյում կարդացվում է հակիրճ զեկուցում Այվազովսկու մասին, իսկ վերջում տեղի է ունենում ճոխ համերգ[2]։

Խորապես զգացված հայրենակիցների այդօրինակ ջերմ, արտագին վերաբերմունքից, Հովհ. Այվազովսկին հոբելյանի օրն իր նկարած «Քրիստոսը ջրի վրա» նկարը նվիրում է Պետերբուրգի հայոց եկեղեցուն[3]։

Սեպտեմբերի 26-ի ցերեկը սկսված հոբելյանը ավարտվում է երեկոյան ճոխ ճաշկերույթով։ Տոնականորեն զարդարված Պավլովայի հանրահայտ գահլիճում (Տրոիցկի 15, Նկարիչների նախկին ակումբը) կազմակերպված ճաշկերույթում բազմաթիվ ճառեր են ասվում։ Այդ բոլորին հոբելյարը պատասխանում է շնորհակալությամբ և խոստանում այստեղ ևս նվիրումով ծառայել նկարչությանը։ Նոյեմբերի մեկին 30 ծովային բարձրաստիճան սպաներ, այդ թվում ծովակալներ, Պետերբուրգի ռեստորաններից մեկում կազմակերպում են grande dine— *մեծ ճաշկերույթ նկարչի պատվին, որին Այվազովսկին ներկայանում է ծովային նավատորմի շտաբային սպայի արտահագուստով և ուրախ ժամանակ անցկացնում։*

Մեծ ծովանկարչի պատվին մայրաքաղաքում տեղի ունեցած այդ ճոխ հոբելյանը և մեծարման երեկոները անջնջելի

---

1 «Документы...», *էջ 228—233։*

2 *«Մշակ», 1887, № 109։*

3 *«Արձագանք», 1887, էջ 585։*

հետք են թողնում։ Նույն ժամանակ գրած հայերեն նամակներից մեկում Այվազովսկին ասում է, որ «Այսպես jubilé եղած չէր Բեռնբուրգի մեջ»։ Այդպես էլ նշվում է «Կառավարական հաղորդագրություններ» թյուլետենում. «Տոնակատարությունը և նկարչի մեծարումը կրում էին հսկայական, մինչև այժմ մեզ մոտ Ռուսաստանում համարյա չեղած բնույթ»[1]։

* * *

Մեծ նկարչի հոբելյանի փառավոր տոնակատարությունը և այդօրինակ մեծարումը պայմանավորված էր այն խոշոր դերով ու նշանակությամբ, որ ունեցել է հանճարեղ նկարիչը ռուսական նկարչության զարգացման գործում։

Ռուս քննադատ Վ. Վ. Ստասովը, որը տարբեր առիթներով արտահայտվել, իսկ երբեմն նաև քննադատել է նրա առանձին ստեղծագործությունները, միշտ էլ առանձնացրել է Այվազովսկուն, որպես մեծ և առաջավոր ծովանկարիչ, շատ բարձր գնահատելով նրա արվեստը։ Դեռևս 1863 թ. արտահայտվելով այդ տեսակ ակադեմիական ցուցահանդեսի մասին, Ստասովը առանձնացնում է Այվազովսկուն ակադեմիական ուղղության մյուս նկարիչներից և գրում է. «Այվազովսկին ունի իր իսկական պոետիկ ջիղը, ունի բռնկումներ իսկական գեղեցկության և ճշմարտության նկատմամբ, ընդ որում նա արեց իրենը՝ նա առաջ մղեց ուրիշներին նոր ուղիով»[2]։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, բարձր է գնահատվել ոչ միայն ծովանկարչի արվեստը, այլև այն, որ Այվազովսկին առաջ է մղել ուրիշներին նոր ուղիով։ Ի. Ն. Կրամսկոյը նույնպես, ինչպես արդեն նշել ենք, համարելով նրան «առաջին մեծության աստղ», հաստատում է, որ նա «Պատմության կողմից ուշադրության արժանանալու իրավունք ունի»։ Ռուս արվեստագետները միշտ էլ նշել են ծովանկարչի բարերար ազդեցությունը ռուսական նկարչության և առանձին վարպետ-

---

1 «Կառավարական հաղորդագրություններ», 1887, Բյուլետեն (ռուսերեն)։

2 В. В. Стасов, Избранные, *հ. 1, 1937, էջ 123։*

նրի ստեղծագործությունների վրա։ Ծովանկարիչ Ա. Պ. Բոգոլյուբովը (1824—1896), որը պատանի հասակում՝ նախքան ակադեմիա ընդունվելը, հաճախ էր լինում Այվազովսկու արվեստանոցում, հետագայում գրում է. «...ես առաջին անգամ տեսա գույների այնպիսի փայլ կտավի վրա, որ նույնիսկ մոռացա Թյորներին. կապույտ, կանաչ, սպիտակ, մոխրագույն և կարմիր պատկերներն ինձ ուղակի կուրացրին։ Ես տարվեցի նրանցով մինչև զզվելիության աստիճան և սկսեցի նմանվել»[1]։ Նրա կենսագիրը հաստատում է, որ այդպես տարվելը տեղի է ունենում ակադեմիայում Բոգոլյուբովի ուսման ամբողջ ընթացքում և «ունենում է զգալի ազդեցություն նրա ստեղծագործության ձևավորման վրա»։ Ռուս նկարիչներ Ա. Ի. Կուինջին, Լ. Լագորիոն, Բոգոլևսկին և ուրիշներ որոշ ժամանակ սովորել ու աշխատել են Այվազովսկու ղեկավարությամբ։ Նրան է հետևել նաև ծովանկարիչ Դ. Դ. Սուդկովսկին, որի ծովափնյա բնության պատկերներում պահպանվել են Այվազովսկու նկարելու եղանակը և մոտիվները։ Ռուսաստանի տարբեր քաղաքներում Այվազովսկու կազմակերպած ամենամյա ցուցահանդեսները, ինչպես նաև նրա պատկերներից պատճեններ նկարելը բավական նպաստել է երիտասարդ նկարիչների գեղարվեստական ճաշակի զարգացմանը։ Նրա պատկերներից պատճեններ նկարողներից է եղել նաև Ա. Ս. Սավրասովը, որը հետագայում դարձավ ռուսական լիրիկական բնանկարչության ականավոր վարպետներից մեկը։

Հովհ. Այվազովսկու արվեստը, նրա դերն ու նշանակությունը ռուսական կերպարվեստի զարգացման գործում բարձր են գնահատել ռուսական մշակույթի առաջավոր շատ գործիչներ, որն իր արտահայտությունը գտավ Հոբելյանի ժամանակ։ Ինչպես ասվում է ակադեմիայի ուղերձում, Այվազովսկին գունանկարչության մեջ «հիմնադրեց գպրոց», նա սկզբնավորեց ծովանկարչության ժանրը ռուսական նկարչության մեջ և նպաստեց այդ ժանրի հետագա զարգացմանը։

Ռուսական արվեստին Այվազովսկու մատուցած ծառայության բարձր գնահատականն իր արտահայտությունն է

---

[1] Воголюбов А., Записи моряка-художника, 1856—1872 гг., տե՛ս «Русская старина», 1888, № 2.

գտնում նաև նկարչության և քանդակագործության մեջ։ Սկսած 1840-ական թվականներից Այվազովսկու կերպարը արտացոլում է գտնում մի շարք ռուս նկարիչների ստեղծագործություններում։ Հայտնի են Վ. Ի. Շտերնբերգի և Ս. Վ. Տիրանովի, Ի. Ն. Կրամսկոյի, Կ. Ե. Մակովսկու նկարած Այվազովսկու դիմանկարները։ Այվազովսկու կենդանության օրոք բնականից կերտվում են դիմաքանդակներ, որոնցից հայտնի են Ս. Ն. Բելյաևի մարմարե կիսանդրին (1847), Մ. Ս. Չիժովի 1873 թ. քանդակած կիսանդրին (մարմար), Լ. Ա. Բերնշտամի մեծածավալ մարմարե քանդակը (1891) և ուրիշները։ Ավելի ուշ Ի. Կ. Գինզբուրգը ստեղծում է Այվազովսկու բրոնզե արձանը, որը 1917 թ. դրվում է Թեոդոսիա-յում, նրա տուն-թանգարանի մուտքի առաջ և ամբողջ հա-սակով ներակայացվող մի արձանիկ (բրոնզ), որն այժմ գըտ-նվում է Հայաստանի պետական պատկերասրահում։

Հոբելյանն ավարտվելուց հետո Այվազովսկին կնոջ հետ որոշ ժամանակ մնում է Պետերբուրգում և զբաղվում ստեղ-ծագործական աշխատանքով։ Հոկտեմբերի 20-ին նա Ի. Ե. Ռեպինի հետ դիմում է «Թատրոնի կարիքավոր գործիչներին նյութապես օգնող ընկերությանը»՝ հայտնելով, որ իրենց նը-կարած «Պուշկինի հրաժեշտը ծովին» պատկերը տարբեր քա-ղաքներում այդ ընկերության օգտին ցուցադրվելուց հետո, 1888 թ. սեպտեմբերի 1-ին վերադարձնել տիրոջը՝ Պետեր-բուրգի ռուսական թատրոնների արտիստական ընկերությանը։

Այվազովսկիները Պետերբուրգում մնում են մինչև նոր տարվա մարտ ամիսը։ Այդ ժամանակամիջոցում նկարիչը անընդհատ ստեղծագործում է։ Մեզ են հասել 1887 թ. նկա-րած պատկերներից 11 հատ, այդ թվում՝ «Պուշկինի հրա-ժեշտը ծովին» (Ի. Ռեպինի հետ նկարած), Վոլգա գետի տե-սարաններ պատկերող երկու նկար։ «Փոթորկալից ծովը», «Միսուծանը ծովում փոթորիկից հետո» և ծովային տեսարան-ների մի շարք։ Ուշադրություն է գրավում «Այվազովսկին մանուկ հասակում» գունանկարը, որը պատկերում է իրեն՝ նկարչին, մանուկ հասակում, ծովափին նստած նկարելիս։ Դա հավանաբար ստեղծվել է ծննդյան տարեդարձի տպա-վորության տակ, որպես վերհուշ։

Այդ տարվա ստեղծագործություններից մեկը՝ «Լուսնյակ

21. Մեծ ծովանկարչի կյանքը

գիշեր Սև ծովում» պատկերը, և աշակերտական մի աշխատանք, որ կատարել է նա դեռևս 1831 թ. Սիմֆերոպոլի գիմնազիայում սովորելիս՝ «Ճանապարհորդություն «Ավրորա» ֆրեգատով» վերնագրով, նա ցուցադրում է հունվարի վերջերին ակադեմիայում բացված գեղարվեստական ստեղծագործությունների ընդհանուր ցուցահանդեսում։ Ցուցահանդեսը կազմակերպվել էր ճարտարապետների այրիների և ազքատների օգնության օգտին։ Դրան մասնակցում էին ռուս և օտարազգի նկարիչներ՝ Ֆ. Ա. Բրունին, Նեֆը, Վերդեն, Ժերիկոն, Ջիչին, Դելարոշը, Գյուդենը, Կալամը, Կ. Մակովսկին, Վ. Օրլովսկին, կոմս Տոլստոյը, Ի. Շիշկինը, Ա. Կիվշենկոն, Ա. Բոգոլյուբովը, Կլեվերը և ուրիշներ։ Այդ ցուցահանդեսի մասին փետրվարի 14-ին Վ. Ստասովի հրապարակած հոդվածում նշվում են «Մեր բնակիչներ Շիշկինի, Այվազովսկու, Սուդկովսկու, Լագորիոյի և Կլեվերի մի քանի լավ էտյուդները»։

ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ ԹԵՈԴՈՍԻԱՅԻՆ

Մարտի սկզբներին Այվազովսկին կնոջ հետ Պետերբուրգից վերադառնում է տուն։ Թեոդոսիայում նա անմիջապես ձեռնամուխ է լինում վաղուց ծրագրած քաղաքին խմելու ջուր մատակարարելու մեծ ու դժվարին գործին։ Ննդավայրի բնակչության անընդհատ աճի պայմաններում խմելու ջուրը այլևս չէր բավարարում։ Սակավաջուր Թեոդոսիան նեղվում էր, առավել ևս ամռան ամիսներին։ Քաղաքային վարչությունը միջոցներ չուներ քաղաքը ջրով ապահովելու համար։ Եվ ահա նկարիչը այդ գործը վերցնում է իր վրա։ Նա իր ծախսով իր Շախ-մամայ կալվածքի մոտից 26 վերստ հեռավորության վրա ջրի գետնափոր խողովակներ է անցկացնում և օրոստոսին լեռնային սառնորակ ջուրը բերում է քաղաք։ Ավելին։ Նա իր նախագծերով և ծախսերով քաղաքի տարբեր մասերում կառուցել է տալիս աղբյուր-հուշարձաններ, որոնցից մեկի՝ քաղաքային այգում արևելյան-հայկական ոճով կառուցված աղբյուր-հուշարձանի ջրի ծորակի մոտ դնում է արծաթյա երկու բաժակ «ՀՈՎՀԱՆՆԷՍ» և «ԱՆՆԱ»

մակագրությամբ՝ սառնաղբյուրի ջուրը խմողների համար նա մի աղբյուր-հուշարձան վաղուց կառուցել էր նաև իր տան մոտ, որի մասին, ինչպես արդեն նշել ենք, վիմադիր հուշատախտակ է թողել առանձնատան մուտքի ճակատին։

Օգոստոսի 30-ին Թեոդոսիայում տեղի է ունենում մեծ տոնահանդես նկարչի նախաձեռնությամբ, նրա ջանքերով ու ծախսերով լեռնային սառը խմելու ջուրը քաղաք բերելու առիթով։ Քաղաքային այգու աղբյուր-հուշարձանի մոտ հավաքված մեծ բազմության առաջ ճառ է ասում գրական-հասարակական գործիչ և թարգմանիչ վարդապետ Խորեն Ստեփանեն (Ստեփանյանը) «Դեղեցիկ ջրի Պարգևումը Թեոդոսիային մեծ գործը է և պարգևողը արժանի է փառավոր հիշատակի,— ասում է նա,— որքա՜ն մեծ պատիվ է հայկական ազգի համար ծնել Հովհաննես Այվազովսկին։ ...Մենք՝ հայերս, արդարև կատարյալ իրավունք ունինք մեզ պարծանք համարել Հովհ. Այվազովսկուն իբրև հայի, որին խորին կերպով հարգում և գնահատում է հայկական ազգը»[1]

Այդ ժամանակ Թեոդոսիայում հորինվում է մի բանաստեղծություն՝ նվիրված Այվազովսկու կառուցած աղբյուրներին, որը շուտով երգի է վերածվում։ Այդ երգ-բանաստեղծության վերնագիրն է «Յանդէս բացման ջրմուղին Թեոդոսիոյ և աղբիւրին Այվազեան առ նկարչապետ Յովհաննես Այվազեան երգ»։ Այս երգի մեջ մեծարելով նկարչին, վերջին քառյակներում ասվում է.

«Կաֆա քաղաք վաղեմի,
Փոշիներու մեջ թաղ՚ալ,
Անդա այսօր ջրալի,
Հիշէց իրեն փառքի անցյալ։
Նրախտապարտ քեզ Կաֆա,
Մարմարիոն Քե արձան
Կանգնէ դարձյալ քիչ կուգա
Սուսս տուրբիդ ի փոխան։
Այլ քեզ արձան կենդանի,
Դու կանգնեցիր աննման,
Ջրիկդ անուշ, որ հոսի
Նոր աղբյուրն Այվազեան»[2]

---

[1] «Բազմավեպ», 1889, № 6, էջ 183—184։

[2] Նույն տեղ, էջ 215։

Այս երգ-բանաստեղծությունը դեռ երկար ժամանակ լսվում էր Թեոդոսիների շուրթերից։ Հետաքրքրական է նկատել, որ քաղաքային դուման, նկարչի առաջարկությամբ ներքին գործերի մինիստրի միջոցով դիմել է թագավոր-կայսրին նորակառույց աղբյուր-հուշարձանը կայսրի անունով կոչելու համար, սակայն, ինչպես գրում է նկարիչը, «Նորին մեծությունը կարգադրեց շատրվանը իմ անունով կոչել։ Շատրվան արևելյան ոճով է, այնքան լավ, որ ոչ Կոստանդնուպոլսում, ոչ էլ որևէ տեղ ես չգիտեմ այդպիսին։ Ավելի հաջողը հատկապես չափերի մեջ է»[1]։

Սեպտեմբերի 18-ին Թեոդոսիայի քաղաքային զբոսայգում կառուցված աղբյուր-հուշարձանի վրա փակցվում է մարմարե հուշատախտակ նկարչի անունով, «Հ. Կ. Այվազովսկու շատրվան, 18.9.1888»։ Նույն օրը Թեոդոսիայի բնակիչները բազմաթիվ ստորագրություններով, իսկ անգրագետները իրենց մատների դրոշմով, շնորհակալագիր-ուղերձ են ներկայացնում նկարիչ Այվազովսկուն քաղաքին մաքուր և սառնորակ ջուր մատակարարելու և աղբյուրներ կառուցելու համար։

Այս ամբողջ ժամանակաշրջանում Այվազովսկին զբաղվում էր նաև ստեղծագործությամբ և հասարակական այլևայլ գործերով։ Թեոդոսիայում ամառային շոգերը ուժեղանալու կապակցությամբ նկարիչը դիմում է լուսավորության մինիստրությանը, խնդրելով երկարացնել դպրոցական արձակուրդները, նկատի ունենալով, որ երեխաները շոգից հիվանդանում են։ Նա առաջարկում է «ընդունել Ղրիմում այն ժամկետները, ինչը կիրառվում է Կովկասում։ ...Եթե մեզ մոտ ընդունվի հունիսի 15-ից մինչև օգոստոսի 25-ը, դա կլինի փրկարար»։

Նույն շրջանում գարնան ամիսներին Այվազովսկին բնականից նկարում է իրեն այցի եկած հայ նշանավոր զորավար, գեներալ-լեյտենանտ Միքայել Տարիելի Լորիս-Մելիքյանի դիմանկարը Թիֆլիսի նորաբաց թանգարանի՝ «փառաց տաճարի» համար։ Հուլիսի 1-ին Շախ-մամայից Կ. Էզյանին

---

1 «Документы...», էջ 238։

ուղարկած նամակում նա ուրախությամբ գրում է. «Այս օրերին ես ավարտեցի մեր հարգելի ու սիրելի Միքայել Տարիելովիչի դիմանկարը և կարծում եմ, միանգամայն հաջող է ստացվել։ Այժմ գրված է Ձեր ուղարկած շրջանակի մեջ, իսկ օգոստոսի սկզբներին իմ երկու մեծ նկարների հետ կուղարկեմ Թիֆլիսի թանգարանի համար իշխան Դոնդուկով-Կորսակովի անունով»[1]։ Այդ նկարները, իհարկե, ուղարկվում են Թիֆլիս և երկար ժամանակ ցուցադրվում են «փառաց տաճարում»։

Հովհ. Այվազովսկին միաժամանակ շատ գործեր է անում Թեոդոսիայի հայկական ճարտարապետության հնագույն հուշարձաններից մեկի՝ սբ. Սարգիս եկեղեցու վերանորոգման համար։ Նրա խորհրդով ժողովրդից հանգանակությամբ հավաքված գումարով վանահայր Խորեն վարդապետ Ստեփանեն կատարում է շինարարական-վերանորոգման աշխատանքներ։ Եկեղեցու նկարչական-ձևավորման գործերը կատարում է Այվազովսկին։ Նա նկարում է ավետարանական թեմաներով մի քանի պատկեր, այդ թվում և «Գեթսեմանի պարտեզում աղոթող փրկչի կերպարը» և նվիրում եկեղեցուն։ Այդ մասին է վկայում տաճարի հարավային պատի վրա ներսից փակցված մարմարյա հուշատախտակի արձանագրությունը. «Տաճարս սբ. Սարգիս վերանորոգեցան յավերակաց շնորհօքն աստուծոյ ի 1888 ամի, յորդորանօք եւ ջանիւնք Խորէն ծայրագոյն վարդապետի Ստեփանեի, առ որ նպաստեցին Հայազն նկարչապետ Յովհաննէս Այվազովսկի, ընծայօղն հոյակերտ պատկերաց եւ բարեպաշտ ժողովուրդն հայոց Թեոդոսիոյ»[2]։

Հովհ. Այվազովսկին նոր էր ավարտել հայոց եկեղեցու նկարչական աշխատանքները, երբ նրան այցելում է ռուս գրող Ա. Պ. Չեխովը։ Նկարիչը այդ ժամանակ հանգստանում էր Շախ-մամայում։ Այստեղ գրողը երկար զրույց է անում

---

[1] «Документы...», էջ 236։

[2] «Խորհրդային արվեստ», 1969 թ. № 6, էջ 57։

Նկարչի հետ։ Հուլիսի 20-ին քրոջը գրած նամակում Ա. Պ. Չեխովը այսպես է նկարագրում այդ կալվածքը և նկարչին. «Դա մի ճոխ, փոքր էլ հեքիաթային կալվածք էր, հավանաբար, այդպիսին կարելի է տեսնել Պարսկաստանում։ ...Ինքը՝ Այվազովսկին, առույգ ծերուկ է, 75 տարեկան,* իրենից ներկայացնում է բարեհոգի հայի և հոգևոր հովվապետի խառնուրդ, լի է սեփական արժանապատվությամբ, թեթև ձեռքեր ունի և գեներալական ձևով է դրանք շարժում։ Սահմանափակ է, բայց նրա նատուրան բարդ է ու արժանի ուշադրության։ Իր մեջ նա մարմնավորում է գեներալը, և՛ միաժամանակ պապիկը, և՛ Օթելլոն... Ես նրա մոտ մնացի ամբողջ օրը ու ճաշեցի, ճաշկերույթը երկարատև էր ու ձգձգված, անվերջ կենացներով»[1]։ Ա. Պ. Չեխովը հետագայում էլ հանդիպում է նկարչի հետ և նրանց ծանոթությունը շարունակվում է երկար ժամանակ։

Հովհ. Այվազովսկին սիրում էր խոսել, զրուցել ու հարցուփորձ անել այն մարդկանց հետ, որոնք հետաքրքրությունից մղված այցելում են իրեն։ Այդպիսի մի զրույց նա ունենում է Հայաստանից եկած մի հայ երիտասարդի հետ, որը հետո պիտի գնար Օքսֆորդ՝ ուսանելու։ «Խոսակցության սկզբին նա հարցրեց մեր երկրի, Կովկասի և իմ ծննդավայրի՝ Շիրակի, մասին,— գրում է այդ երիտասարդը «Արձագանք» շաբաթաթերթում,— երբ լսեց, որ ուսանող ժամանակ պարապելու եմ գյուղատնտեսական գիտություններով, նա հարցրեց երկրագործ ժողովրդի մասին, ցանկանալով իմանալ, թե «հողը բավարա՞ր է, գյուղացին, հողագործը լա՞վ դրության մեջ է, նեղություն չի՞ քաշիլ...»։ Նկարչին հետաքրքրում էր նաև արևմտահայերի սոցիալական վիճակը։ «Իմանալով, որ իմ ծննդավայրս մոտ է գտնվում Տաճկահայաստանի սահմաններին և մեզանում երբևեկություն միշտ լինում է Կարինի, Մուշի, Բիթլիսի և Վանա հետ, հարգելի նկարիչը հարցրեց «անոնց դրություն, անոնց կացություն աղե՞կ է, աղե՞կ է, հաց կա՞, հաց ունի՞ն, չե՞ն նեղվի։ Այսօրվա պես ականջիս հնչում են «աղե՞կ է, աղե՞կ է» խոսքերը, վկայե-

* Այդ ժամանակ Այվազովսկին 71 տարեկան էր։

1 А. П. Чехов, Собр. соч., т. 11 էջ 249

լով, որ Այվազովսկին ասաց. «Երբ երթաս, ինձմէն բարև տար ձեր երկրին, այնտեղի հայերուն»[1]։

ՆՈՐ ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐՔ

Ամառվա շոգերն անցնելուց հետո, Այվազովսկին մտածում է աշնանը մի նոր ցուցահանդես բացել Կոնստանդնուպոլսում, այստեղ ապրող շուրջ 200.000 հայ բնակչությանը, հատկապես նոր հանդես եկող երիտասարդ մտավորականությանը մոտիկից ու լայնորեն ծանոթացնելու իր արվեստի հետ, արևմտահայության կողմից ավելի ճանաչվելու համար։ Այդ նպատակով նա սեպտեմբերի 29-ին մի նամակ է ուղարկում պոլսահայերի շրջանում անվանի գործիչ, վառոդապետ Հարություն Տատյանին՝ իր մտերիմ ծանոթներից մեկին, ուր գրում է. «Մեծապատիվ տեր Շատոնց հետէ պատիվ ունեցա վայելել Ձերույդ գերազանցության՝ Ձեր մեծանուն ընտանեաց ծանոթությունը, ուստի վստահություն կառնեմ վրաս ներկայացնել Ձեզ քեռորդի Լեոնիդ Մազիրովը, որը մայրաքաղաք գալով հանձն առավ իմ հանձնարարությունս ևս կատարել։

Հանգուցյալ Ապտուլ Ազիզ սուլթանին, նորա իշխաններուն և իմ պոլսեցի հայրենակիցներուս դեպի ինձ ցուցուցած համակրությունը Պոլիս գտնվելուս միջոցին 1874 թվին քաղցր պարտք դրած է իմ վրաս կերպ մը հայտնել իմ երախտագիտությունս մայրաքաղաքիդ համայն բնակիչներուն և մանավանդ մեր ազգայիններուն, որոնք դեռ անցյալ տարի սիրալիր նամակագրություններով և հեռագրերով հիանամյա հոբելյանիս հանդեսներուն մասնակից եղան։ Այս պատճառով դիտավորված լինելով իմ մի քանի պատկերներս Ֆրանսա ուղարկելու, ես հանձնեցի վերոհիշյալ քեռորդուս այդ պատկերները Պոլիս ցուցահանդեսի (exosition) հանելու, որպեսզի մուտքի համար ժողոված փողի կեսը ազդօգուտ ձեռնարկությանց գործածվի։ Բացի այդմանե երկու պատկեր կնվիրեմ

[1] «Արձագանք», 1897, № 129, էջ 1-2։

Հայոց բարեգործական ընկերությանց և մի-մի պատկեր թուրքաց, ռուսաց և հունաց՝ խնդրելով Ձեր գերազանցությանը չզրկելու պ. Մազիրովը Ձեր բարձր հովանավորությունեն... Ձեր Հովհաննես Այվազեան»։ Նամակի տողատակին ավելացնում է. «Այս ծրարի մեջ կգտնեք իմ պատկերս, փոքրիկ աշխատությունովս հանդերձ, որ կխնդրեմ բարեհաճեք ընդունել»։[1]

Հայերեն գրված այս նամակը Լևոն Մազիրյանը Կոստանդնուպոլսում անձամբ հանձնում է Հարություն Տատյանին, որը անմիջապես պատասխանում է նամակով՝ «Յոժարությամբ պիտի ջանամ ընծայել պետք եղած դյուրությունը և աջակցությունը. աներկմիտ եղեք,— գրում է նա և ավելացնում,— Մեծ ուրախություն ունեցա նմանապես ընդունելով մեծավ հաճությամբ Ձեր ձեռաց սքանչելի մեկ նկարը հանդերձ Ձեր պատկառելի կենդանագրով, որուն համար անչափ զմայլումն անկարելի է գրովս բացատրել Ձեզ։ Ձեր այս եզական համակրական յիշատակին համար և կփութամ յայտնել կրկնակի շնորհակալություն»։

Ցուցահանդեսը բացվում է հոկտեմբերին, Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանատան լայն սրահներում, քանի որ այդ ժամանակ քաղաքում ուրիշ ցուցասրահներ չկային։ Ցուցադրվում են 24 պատկեր։ Պոլսահայ մամուլը, ինչպես և տեղի ֆրանսիական և օտարերկրյա թերթերն անմիջապես արձագանքում են այդ ցուցահանդեսի մասին և հրապարակում են հոդվածներ նկարչի ու նրա արվեստի վերաբերյալ։ Ցուցահանդեսն առանձնապես ջերմ ընդունելություն է գտնում պոլսահայ աշխատավորական խավերի ու մշակույթի գործիչների շրջաններում։ «Մեր սրտերը քանի հրճվանք կզգան, երբ կլսենք հայ արվեստագետ մը անուն աշխարհածանոթ,— գրում է երիտասարդ բանաստեղծ Վահան Մալեզյանը «Արեվելք» թերթում 1888 թ., ավելացնելով, որ,— ցուցահանդեսի բացման հայ, ինչպես և օտար հասարակության հետզհետե կխռնի անդ հիանալ ընդ ճարտար արվեստն հայ հանճարին»։ Այնուհետև մեկառմեկ նկարագրելով իր՝ որպես դիտողի և քաղաքացու հիացմունքը, հոդվածագիրը շարունակում է. «Այդ

---

1 «Документы...», էջ 239—240։

հրաշալի կերտված նկարք պատվաբեր են հույժ պ. Այվազովսկիի տիեզերահռչակ անվան և փառքին ու պարծանք Ազգին, ում կպատկանի նկարիչը»։ Նշելով մեծ նկարչի խոշոր նշանակությունը և տեղը հայկական արվեստի մեջ, բանաստեղծը գրում է. «Ով այդ մեծահանճար անձնավորության ճարտար արվեստն և մարդասիրական ոգին կուտան ինձ ասել, թե պ. Այվազովսկին ինչպես և համայնից, մանավանդ հայ ազգին մեջ իրավամբ անհամեմատ կարևորություն ունի իբրև ոք տաղանդավոր հույժ և բազմահանճար մարդասեր և ազգասեր։ Ուրեմն, ի վերջին բան. անթիվ հիացողաց իբրև ետին խորին հիացումն և սքանչացում՝ կհայտնեմ առ դյուցազնն հայկական նկարչության»։

Այս գրախոսությունը վկայում է, թե ինչպիսի ջերմությամբ, սիրով և արժանապատվության խորը գիտակցությամբ են ընկալվել Այվազովսկու ծովանկարները և նույնիսկ նրա «օտար» թեմաներով պատկերները իր ժամանակի հայ իրականության մեջ։ Նկարչի մասին արևմտահայ մամուլում հրապարակված բազմաթիվ հաղորդագրությունները միաժամանակ հաստատում են, որ 1880-ական թվականներին հայ հասարակությունը ոչ միայն հասկանում է հայրենակցի ստեղծագործությունները, հիանում նրանցով, այլև միանգամայն մոտ ու հարազատ է զգում իր հոգուն, ճաշակին և ձգտումներին։ Դրանում էլ հենց կայանում է Հովհ. Այվազովսկու ստեղծագործությունների ժողովրդայնությունը և օրգանական կապը մայր ժողովրդի հետ։ Ռուսական «Նովոյե վրեմյա» լրագրի խմբագիր Ա. Ս. Սուվորինը, որ այդ ժամանակ Կոստանդնուպոլսում էր, Այվազովսկու ցուցահանդեսի բացման առթիվ գրում է. «Ամբողջ Կ. Պոլսի հասարակությունը, մանավանդ նրա հայրենակիցները՝ հայերը, ինչպես այն ժամանակ (1874), նույնպես յուրաքանչյուր գալու ժամանակ միշտ առանձին պատվով են ընդունում նրան, և այդ պատճառով հասկանալի է Այվազովսկու ցանկությունը՝ հանդես դնել իր պատկերները Կ. Պոլսում»[1]։ Անվանի գրող Արփիար Արփիարյանը Կ. Պոլսից գրած իր նամակ-հոդվածում հայտնում է, որ պոլսահայերի «...գեղարվեստական կյանքներիս Այվազովս-

1 «Մշակ», 1888, № 122։

կին նկարահանդեսն էր, որ արդեն փակվեցավ։ Ռուսական դեսպանության պալատին մեջ բացված այդ հանդեսը ազգայնության մր դույն ունեցավ և գլխավորաբար հայերն էին, որ կդիմեին անդ։ Այդ պատկերներն հինգ հատ նվեր տված է Պոլսո ազգային բարեգործական հիմնարկությանց»[1]։

Հովհ. Այվազովսկու 1888 թ. ցուցահանդեսը Պոլսում և հայերի այդօրինակ ջերմեռանդ վերաբերմունք նրա նկատմամբ ավելի նշանակալից երևույթ է դառնում նաև այն պատճառով, որ հենց այդ ժամանակ Թուրքիայի սուլթան Աբդուլ Համիդը նոր և ավելի ծանր հրաման էր արձակել իր երկրում ապրող հայերի իրավունքները սահմանափակելու, նրանց մի քանի ազգային կազմակերպությունները և թերթերը փակելու, հայերեն լեզվով ներկայացումներն արգելելու մասին։ Նույնիսկ Կ. Պոլիս հյուրախաղերի եկած Պետրոս Ադամյանին արգելվել էր խաղալ «Լիր արքա», և «Համլետ» այն տարօրինակ պատճառաբանությամբ, թե քանի որ մայրաքաղաքում ապրում է «օգոստափառ» թագավոր Աբդուլ Համիդը, հարկ չկա ուրիշ թագավորի ներկայացնել թեկուզ... բեմի վրա։ Արգելվում էր «Հայաստան», «ազատություն» բառերի ազատ գործածությունը արևմտահայերի շրջանում։ Ահա այդպիսի ծանր, թուրքիայում ուժեղացող ռեակցիայի ու համիդյան հայատյաց քաղաքականության աննպաստ պայմաններում, երբ, ինչպես Արփիարյանն է գրում. «Ամեն ինչ դադարյալ վիճակի մեջ է», Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսը կենարար, հուսատու նշանակություն է ստանում։

Թեև նկարիչը կարգադրել էր իր ազգական, ցուցահանդեսի տնօրեն Լևոն Մազիրյանին Թուրքիայի մայրաքաղաքում եղած ժամանակ «իրեն հեռու պահել պալատից», սակայն, Կոստանդնուպոլսի նկարչական դպրոցին (որի տնօրենն էր հայ քանդակագործ Երվանդ Ոսկանը) պատկեր նվիրելը դիտվում է որպես նվեր սուլթանական կառավարության։ Այդ առթիվ սուլթանը Այվազովսկուն շնորհում է «Մեջիդիե» թուրքական առաջին կարգի շքանշանը։ Այդ անսպասելի նվիրատվության լուրը Այվազովսկին Ղրիմում ընդունում է դժկամությամբ։ Գեղարվեստի ակադեմիային ու իր բարեկամ Կ.

1 Նույն տեղ, № 132։

Էգյանին ուղղած բացատրական նամակներում նկարիչը գրում է, որ այդպիսի նվերը «իմ այս տարիքում ինձ քիչ է հետաքրքրում և ես երբեք չեմ կրի այնո՛ւ Ծվ, իսկապես, թուրքական շքանշանը նկարիչը երբեք չի կրել իր կրծքին։ Դեկտեմբերի 12-ին Պ. Ֆ. Իսևևին ուղղած նամակում նկարիչը ցավով գրում է. «Անկեղծորեն խոստովանում եմ. ես խիստ անհարմար եմ զգում... Ես այնպես եմ ամաչում, որ նույնիսկ չեմ ուզում խնդրել թույլատվություն այդ շքանշանը կրելու համար»[1]։ Սակայն բնականից օժտված լինելով դիպլոմատի արտակարգ ընդունակությամբ՝ Այվազովսկին գտնում է տեղի ունեցածը մեղմացնելու ձևը։ «Գիտենալով արևելյան սովորությունը,— գրում է նկարիչը— ես պետք է այժմ մի պատկեր ուղարկեմ սուլթանին և ես որոշել եմ զոհաբերել հիանալի փորագրված և լավ պահպանված մի շիրմա իմ նկարած 5 մանրանկարներով»։

Նույն ժամանակ Այվազովսկուն խիստ վրդովեցրել է նաև «Նովոյե վրեմյա» թերթում տպագրված մի հոդված կաթոլիզմի մասին։ Չհամբերելով՝ նկարիչը նոյեմբերի 8-ին գրում է խմբագրին. «Հոդվածի հեղինակը, հավանաբար, չգիտե միջնադարյան կաթոլիզմի պատմությունը, կաթոլիզմի բոլոր զզվելի գործունեությունը վերջին հարյուրամյակում, երբ Հռոմը պատկանում էր Ճիզվիտներին։ Ե՞ւ, շատ-շա՛տ են կաթոլիզմի սարսափները... Ես դեռ 1840-ական թվականներին տեսա Հռոմեացիների սարսափելի աղքատությունը և դրա կողքին՝ կարդինալների հարստությունը, շքեղությունը, ոսկեզօծ կառքերով իրենց երեք լաքեյներով բոլորն էլ ոսկեզօծված։ ...Ճիզվիտները գործում են այն ամենի դեմ, ինչ ազնիվ է, ընդդեմ կրոնի, ընդդեմ ընտանեկան կյանքի, իսկ պատեհ առիթին, Աստծու և Փրկչի անունով հափշտակում են մեռածի ունեցվածքը, գողանում են երեխաներին։ Այդպիսի միլիոնավոր օրինակներ կան Իտալիայում։ Գիտենալով այդ ամենը և ինքը բավական տուժած լինելով կաթոլիզմից, իմ եղբայրը, որը մի քանի տարի պատկանելիս է եղել կաթոլիկ նկեղեցուն, 1850-ական թվականներին վերադարձավ դարձ-

---

[1] «Документы...». էջ 244—249։

յալ իր արևելյան հայկական կրոնին։ Ապրի անգլիական տեր-տերը, որը ասել է. «Մենք պետք է միասին պայքարենք մեր ընդհանուր թշնամու՝ Պապի դեմ»[1], կաթոլիզմի դեմ նկարիչն արտահայտվում է նաև հետագայում։

* * *

1889 թ. հունվարի սկզբներին Այվազովսկին, Տագանրոգ քաղաքի ուղղափառ Պաղեստինյան հասարակության խընդրանքով, նկարում է «Ջրերի վրա քայլող փրկիչը» պատկերը և նվիրում ուղղափառների մատուռին։ Այդ կապակցությամբ նա ստանում է Պաղեստինյան այդ ընկերության շնորհակալագիրը, ուր ասվում է. «Ձեր գեղարվեստական վրձնի աշխատանքը կլինի ոչ միայն պանդուխտանոցի մատուռի լավագույն զարդը, այլև կդառնա Տագանրոգի ամենահիշարժան հուշարձաններից մեկը»[2]։

Մարտ ամսին Փարիզում բացվում է համաշխարհային գեղարվեստական ցուցահանդես։ Այդ կապակցությամբ Ի. Ե. Ռեպինը գրում է Պ. Պ. Չիստյակովին. «Փարիզյան ցուցահանդեսին մենք չենք մասնակցի»։ Սակայն Ռուսաստանից այդ ցուցահանդեսին մասնակցում են մի քանի նկարիչներ իրենց նոր ստեղծագործություններով։ Հովհ. Այվազովսկին ներկայացնում է «Նավախորտակում» և «Մեռած անդորրություն» պատկերները և մի նկար ևս բիբլիական սյուժեով։

Ապրիլին Այվազովսկին կնոջ՝ Աննայի, հետ տեղափոխվում է Շախ-մամայ ավելի հանգիստ պայմաններում աշխատելու համար։ Հավանաբար այդ օրերին էլ նկարում է «Ալիքը» մեծակտավ պատկերը։ Այստեղ էլ նա լուր է ստանում, որ իր բարեկամներից մեկը՝ հայ մշակույթի նշանավոր գործիչ Քերովբե Պատկանյանը, որը արևելագետ էր, ռուսական ակադեմիայի թղթակից-անդամ և զբաղվում էր հայոց լեզվի ու գրականության, ինչպես և կովկասյան ժողովուրդների և Իրանի պատմության ուսումնասիրությամբ, մեռել է։ «Ափսոս խեղճ Պատկանովը»,— գրում է նկարիչը մայիսի 5-ին

---

1 «Документы...», էջ 243—244։

2 Նույն տեղ, էջ 246—247։

Գ. Էջյանին,— Դա կորուստ է շատ տեսակետից, թե որպես մարդ, և թե որպես օգտակար գործիչ»[1]։

Նույն նամակում Այվազովսկին հայտնում է, որ ինքը կրնոջ հետ մեկնելու է կաճատև ճանապարհորդության Սև ծովի կովկասյան ափերով։ «Վաղը մենք ձեռնամուխ ենք լինելու ծովային ճանապարհորդության մեկ շաբաթով։ Գնալու ենք Բաթումի և վերադառնալու ենք նույն շոգենավով։ Ես արդեն ծանոթ եմ այդ ափերին, բայց կինս կովկասյան ափերը կրտեսնի առաջին անգամ։ Ի դեպ, ինձ ևս հարկավոր է նորից տեսնել այդ ափերը։ Քանի որ այնտեղից վերադառնալուց հետո կսկսեմ նկարել մի պատկեր, որը կպատկերի արգոնավորդների արշավանքը Կոլխիդա»։

Այդ ծովային ճանապարհորդությունը կատարելուց հետո, Այվազովսկին իսկույն սկսում է նկարել իր մտահղացած պատկերը, որը հետո կոչվում է «Արգոնավորդներ»։ Նոր ու թարմ տպավորություններով նա նկարում է այլ պատկերներ ևս՝ «Դեսանտ Սուբաշիում», «Թարմ օդ», «Աշխարհի ստեղծագործությունը», «Ամպերը ծովի վրա», իր աղջկա՝ Հովհաննայի դիմանկարը, մի տղամարդու դիմանկար, «Ամպերի խմբեր» և ինքնանկարը, որոնք բոլորն էլ հասել են մեզ։

Նույն ժամանակ նկարիչը ստանում է նամակ իր բարեկամ Ն. Ն. Կուզմինից, որով նա խնդրում է գրել իր հիշողությունները Վ. Գ. Բելինսկու հետ ունեցած ծանոթության և հանդիպումների մասին։ Հունիսի 29-ին Այվազովսկին գրում է իր հիշողությունները ռուս մեծ քննադատի մասին, որը մենք քաղվածաբար նշել ենք սույն աշխատության առաջին գլուխներից մեկում։

Հուլիսին Այվազովսկին մեկնում է Բիարիցա առողջարանային քաղաքը ծովային բնության նոր պատկերներ նկարելու համար։ Ռուս նկարիչն Ի. Ս. Օստրոումովը, որն այդ ժամանակ գտնվում էր այդտեղ և ապրում էր նույն հյուրանոցում, ուր իջևանել էր ծովանկարիչը, հետագայում գրել է, թե ինչպես էր աշխատում Այվազովսկին։ Մի մառախլապատ օր,— գրում է նա,— Այվազովսկին շրջագայում է օվկիանոսի ափե-

---

1 *Նույն տեղ, էջ 247։*

րին։ Նա մի փոքրիկ ծոցագրքույկի մեջ նկարում է ընդամենը 3 գիծ՝ լեռների եղրագծերը, օվկիանոսի ու ծովափնյա գծերը, իսկ հաջորդ օրը նա նկարում է օվկիանոսային ալեկոծություն Բիարիցում՝ առավոտյան, կեսօրին, երեկոյան։ Այստեղ եղած ժամանակ հասարակության խնդրանքով Այվազովսկին մի պատկեր է նվիրում տեղի ուղղափառ եկեղեցու կարիքների օգտին։ Նկարը գնահատվում է 1500 ռ., բայց այդ ժամանակ գնորդ չի գտնվում այստեղ։ Որոշվում է վիճակահանության դնել։ Մեկ տարի հետո վիճակահանության միջոցով ձեռք է բերվում շուրջ 2000 ռ. ուղղափառ եկեղեցու օգտին, որն օգտագործվում է վերանորոգման նպատակով։

Վերադառնալով Բիարիցայից նկարիչը ամբողջ ամառը և աշնան առաջին ամիսն անց է կացնում Թեոդոսիայում և իր կալվածքում։ Այդ ժամանակ էլ նա ստանում է 18-ամյա Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարյանից (հետագայում հայ նշանավոր կոմպոզիտոր) նամակ, որով հայտնում է, որ իր հայրը մտադիր է Յալթայում համերգային դահլիճ կառուցել։ Նկարիչը հետաքրքրվում է այդ հարցով և մտածում է այդ գործը միասին կատարել։ Սուրակում ապրող Սպենդիարյանները և Թեոդոսիացի Այվազովսկիները, ինչպես և Ղրիմի մյուս բնակիչները, իրար վաղուց գիտեին և բարեկամներ էին։ Ինչպես արդեն նշել ենք, դեռևս 1860-ական թվականների վերջերին նկարիչը մասնակցել է կոմպոզիտորի ծնողների հարսանիքին, իսկ այնուհետև նրանք մշտապես այցելել են միմյանց։ Ծովանկարիչը հատուկ ուշադրություն է դարձրել մանուկ Ալեքսանդրի վրա, նրա մեջ նկատելով ընդունակություններ գեղեցիկ արվեստների նկատմամբ։ «Հազիվ երեք տարեկան կլինեի,— գրում է Ալ. Սպենդիարյանը իր հուշերում,— երբ ես սկսեցի թղթից, առանց որևէ գործիքի, կտրել տարբեր կենդանիների ու թռչունների ֆիգուրներ։ Հիշում եմ, երբ ես 6 տարեկան էի, թղթից պատրաստած իմ առարկաներով շատ հետաքրքրվեց Սիմֆերոպոլ քաղաքում մեզ այցելած նկարիչ Հ. Կ. Այվազովսկին։ Նա վերցրեց իմ թղթե կենդանիների ու թռչունների մի քանի օրինակ գեղարվեստի ակադեմիայում ցուցադրելու համար։ Ութ տարեկան հասակում սկսեցի նկարել և բանիմաց մարդիկ այդ ասպարեզում

էլ իմ մեջ որոշակի ընդունակություններ էին նկատում»[1]։ Հետագայում կոմպոզիտորի աղջիկը՝ Մ. Ա. Սպենդիարյանը, գրում է. «Այվազովսկին տեսնելով պատանի Ալեքսանդրի այդ աշխատանքները «...սկսեց հաստատապես խորհուրդ մորը՝ որդուն քանդակագործություն ուսուցանել»։

Այս երկարամյա հարաբերությունների պայմաններում ծագում է և համերգային դահլիճը միասին կառուցելու միտքը։ Նկարիչը մտածում էր, որ այդ դահլիճը միաժամանակ կարող է ծառայել որպես իր պատկերների ցուցասրահ։ Այդ կապակցությամբ Այվազովսկին 1889 թ. հոկտեմբերի 18-ին գրում է ապագա կոմպոզիտորի հորը. «Ալեքսանդր Աֆանասևիչի նամակից ես տեղեկացա, որ դուք սկզբունքով չեք առարկում դահլիճի կառուցման դեմ, դրա համար էլ ես կրկին արտահայտում եմ իմ կարծիքը և շտապում եմ, ապա այն պատճառով, որ իմ տարիքի համար ժամանակը շատ նշանակություն ունի։ ...Այդ դահլիճը ես կօգտագործեմ քանի դեռ կենդանի եմ ու աշխատում եմ։ Հետո շատ նպատակահարմար կլինի Ալ. Աֆանասևիչի համար որպես համերգային դահլիճ»։ Նախահաշվով դահլիճի կառուցման համար անհրաժեշտ էր 7000 ռ. ոչ ավելի։ «Ես սիրով տարեկան կվճարեմ 500 ռ. սեզոնի համար.— գրում է նկարիչը,— և բացի այդ դահլիճի համար կնկարեմ մեծակտավ պատկեր 4-5000 ռ. արժեքով, և այդ պատկերը Ձերը կլինի, որը սակայն պետք է մնա այդ դահլիճում»[3]։ Միատեղ շինարարություն կատարելու և ապագա համերգային դահլիճը միասին օգտագործելու ցանկությունը, որը սակայն չի իրագործվում, ինքնին, վկայում է այն մերձավոր հարաբերությունների ու բարեկամության մասին, որ եղել է երկու հայ անվանի ընտանիքների ու մշակույթի նշանավոր գործիչների միջև։ Այդ սերտ բարեկամությունը շարունակվել է հետագայում ևս, և ինչպես ցույց կտանք, կարևոր նշանակություն է ունեցել ապագա կոմպոզիտորի անձնական կյանքում։

---

[1] **Спендиаров**, Литературное наследие, 1962, էջ 98—99։

[2] Մ. Ա. Սպենդիարովա, Սպենդիարով, 1966, էջ 8—9։

[3] «Документы...», էջ 251—252։

1890 թ. հունվարին, ծննդյան օրերն անցնելուց հետո, Այվազովսկին վերսկսում է իր ստեղծագործական աշխատանքը։ Նա ծրագրում է Փարիզ մեկնել և նոր ցուցահանդես կազմակերպել այնտեղ։ Այդ նպատակով նա օրն ի բուն աշխատելով ստեղծում է նոր պատկերներ, որոնք, նկարչի կարծիքով, կարող են գրավել ֆրանսիացիների ուշադրությունը և արժանացնել բարձր գնահատականի։ Հունվարի 6-ին «Նովոյե վրեմյա» թերթի խմբագրին ուղղած նամակում Այվազովսկին գրում է. «Ես նկարել եմ 7 կապիտալ նկար փարիզյան իմ ցուցահանդեսի համար։ Այդպիսով, անցյալ տարի նկարած և ոչ մի տեղ դեռևս չցուցադրվածների հետ, բոլորը միասին, կլինի 24 պատկեր։ Դրանցից ամենամեծը՝ «Վերջին րոպեն օվկիանոսում» պատկերն իմ լավագույն փոթորիկն է, որը 7 և կես արշին երկարություն ունի»[1]։

«ԱՀԱ ՄԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

Փետրվարի 24-ին Այվազովսկին կնոջ հետ շոգենավով գնում է Օդեսա, որտեղից մարտի սկզբներին մեկնում է Փարիզ։ Մարտին Փարիզի Դուրան Ռուելլի պատկերասրահում բացվում է Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսը, որին ներկա են լինում նկարիչը և Աննան։ Ցուցադրվում է 30 պատկեր։ Փարիզյան այս նոր ցուցահանդեսը, ինչպես և նախորդները, ջերմ ընդունելություն են գտնում ֆրանսիացիների և արտասահմանյան հյուրերի կողմից, թերթերը մեծ գովասանքով են արտահայտվում նկարչի արվեստի մասին։ Ֆրանսիական «Le Temps» թերթը հրապարակում է մի ընդարձակ հոդված, որը դրվատելով ծովանկարչի ստեղծագործությունները, առանձնապես բարձր է գնահատում «Վերջին րոպեն օվկիանոսում» մեծակտավ պատկերը, որի մասին, ինչպես նշեցինք, նկարիչը ասել է, որ «դա իմ լավագույն փոթորիկն է»։ Իսկապես։ Այդ ստեղծագործությունը ներկայացնում է փոթորկոտ ծովի հոյակապ տեսարան։ Հսկա, իրար հետևից ուժգնորեն եկող փրփրակալած ալիքներ պատկերող

1 Նույն տեղ, էջ 253—254։

կտավի կենտրոնական մասում երևում է խորտակված, արդեն ծովի հատակն իջնող առագաստանավի սյան միայն վերին ծայրը։ Դա էլ, ահա, ուր որ է կխորտակվի կատաղի ալիքների ճնշման տակ։ Նկարիչը ռեալիստորեն վերարտադրել է ծովի ահեղ ուժը և միանգամայն համոզիչ է դարձրել բնության տարերքի տվյալ պահը. «Իմ խորին համոզմամբ այդ պատկերը պատկանում է իմ լավագույն ստեղծագործությունների թվին, որի մեջ ինձ հաջողվել է վերարտադրել իմ երկարատև գեղարվեստական գործունեության ամբողջ փորձը»,— գրել է նկարիչը հետագայում, դրանով իսկ արդարացնելով ժամանակակիցների ու քննադատների բարձր տպավորությունը։[1]

Յուցահանդեսը տևում է ավելի քան 3 շաբաթ, որի ընթացքում այցելում են բազմաթիվ ֆրանսիացիներ, օտարերկրյա արվեստագետներ ու հյուրեր, ֆրանսահայեր։ Հայ այցելուներից մեկը Փարիզից գրում է. «Ես հանդարտությամբ կդիտեի նկարը, երբ հանկարծ մոտեցավ ինձ նկարչապետն ու ըսավ.

— Անշուշտ հայկական նյութ մը կփնտրեք իմ նկարացո՞ մեջ։

— Այո՛, տէր, լավ գուշակեցիք միտքս,— պատասխանեցի։

Ու տարավ զիս սրահի մեջ ու ցուցուց հեռուեն և ըսավ.

— Ահա մեր Հայաստանը։

Դա «Նոյը իջնում է Արարատ սարից» պատկերն էր։[2]

Յուցահանդեսի վերջին օրերին Ֆրանսիական Հանրապետության պրեզիդենտ Նապոլեոն երրորդը իր կնոջ հետ այցելում է ցուցահանդես և գոհունակությամբ շնորհավորում է նկարչին ու նրա կնոջը։ Շատ չանցած՝ ապրիլի 3-ին, ֆրանսիական կառավարությունը Այվազովսկուն շնորհում է «Պատվո լեգեոնի» շքանշան կոմանդորական նշանով[3], նկարչության մեջ ունեցած մեծագույն հաջողությունների համար։ Այդ օրերին ռուսական «Գուսլյար» ամսագիրը հրապարակում է Փարիզից ուղարկած մի հոդված, որտեղ ասվում է, որ

---

1 «Документы...», էջ 256։

2 «Բազմավեպ», 1889, էջ 176-177։

3 «Документы...», էջ 254-255։

Սղևմուտքում այժմ «չկա և չի եղել ծովանկարչության մեջ արժանի մրցակից»[1]։ Ապրիլի 12-ին նկարիչը Պետերբուրգից ստանում է պաշտոնական ծանուցում, որով առաջարկվում է բնդունել և կրել «Պատվո լեգեոնի» շքանշանը։ Արդեն Փարիզում նա կրծքին կրում է այդ պատվավոր շքանշանը։ Նույն ամսին Փարիզում գտնվող երիտասարդ ռուս նկարիչ-մոդելյոր Ս. Վաստյունսկին արծաթի վրա փորագրում է մեդալ նկարչի պատվին (տրամագիծը 44 մմ, կշիռը 34.68 գ.)։ Մեդալի առաջնե երեսին կերտում է Այվազովսկու դիմաքանդակը կից ադեմ (պրոֆիլ) «Ի. Կ. Այվազովսկի» մակագրությամբ։ Մեդալի երկրորդ օրինակը, սպիտակ մետաղից պատրաստված, առաջնի հետ պահվում է Լենինգրադում՝ Էրմիտաժի դրամապիտական բաժնում[2]։

Փարիզում Այվազովսկին այցելում է ֆրանսահայ գաղութի առանձին օջախներ, ինչպես նաև «իր ազնվասիրտ տիկնոջ հետ ներկա է լինում հայոց եկեղեցում կայացած մի պատարագի»[3]։

«ԱՇԽԱՏՈՒԹՅԱՄԲ ԵՂԵԼ ԵՄ ԻՆՉ ՈՐ ԿԱՄ»

Ապրիլի կեսերին փակելով իր ցուցահանդեսը, Այվազովսկին կնոջ հետ Փարիզից մեկնում է Կոստանդնուպոլիս, այնտեղից նավով հայրենիք վերադառնալու համար։ Մայիսի սկզբներին նրանք արդեն հայ մշակույթի այդ խոշոր օջախում էին։ Ռուսական դեսպանատուն այցելելուց հետո Այվազովսկին և Աննան այցի են գնում հայոց կուլտուր-լուսավորական հիմնարկները, եկեղեցի և պատրիարքարան, ամենուր մոտիկից շփվելով տեղի հայ բնակչության լայն շրջանների հետ։ «Հովհ. Այվազովսկին իր ազնիվ տիկնոջ հետ երեկ առավոտյան մայր եկեղեցի գնաց, ուր ներկա գտնվեցան պատարագի,— գրում է «Արևելք» թերթը,—

---

1 «Гусляр», 1890, *ապրիլ*։

2 Библиографический словарь, 1972, *հ. 2, էջ 206*։

3 «*Արևելք*», *1890, մայիս*։

Առաջուց իմացած ըլլալով մեծանուն ծովանկարչին գալուստ հազարաւոր ժողովրդեան բազմութիւն լցված էր տաճարին մէջ։

Հայ բնակչութիւնը թանկագին հյուրերին սրտաբաց, ջերմ ընդունելութիւն է ցույց տալիս նաև պատրիարքարանում։ «Բակին և փողոցին մէջ խռնեալ յոգնախուռն բազմութիւնը եռանդագին «կեցցեներով» ու ծափահարութիւնքով դիմավորեց ներանց»,— գրում է նույն թերթը,— ծերունի արվեստագետը կանգ առնելով, խոնարհութիւնքով շնորհակալութիւն հայտնեց և խոսքը ուղղեց դիմաքը շրջապատող երիտասարդութեանն. «Այդ ծափերն ու կեցցեները զիս կամշրջցընեն,— ըսավ, հուզեալ շեշտելով,— աշխատութիւնքով եղեր եմ ինչ որ եմ, զոր կծափահարեք։ Դուք ալ աշխատեցեք և ես ալ ձեզ կծափահարեմ»։ Այդ ժամանակվանից մինչև մեր օրերն ապրած անվանի դերասան Արմեն Արմենյանը, որը մասնակից է եղել աշխարհահռչակ ծովանկարչի հետ տեղի ունեցած հանդիպմանը, իր հիշողությունների գրքում գրում է. «Ուսանողներս իմանալով, որ նկարիչը այցի է գնացել պատրիարքարան, հավաքվել էինք բակը, ողջունելու մեծ Ռուսիո հայ հանճարին, մեր բուռն օվացիաներից անակնկալի եղած համակրելի ծերունին, հուզմունքից դողացող ձայնով մոտավորապես այս խոսքերով պատասխանեց մեր ողջույնին. «Ինչքան էլ որ իմ արվեստով ես պարտական եմ իմ հայրենիք մեծ Ռուսիային, որը կրթել ու դաստիարակել է ինձ, ես այն, նույնքան պարտական եմ մանավանդ իմ համառ կամքին և աշխատասիրությանը։ Դրանով միշտ կարելի է հասնել նպատակին։ Ձեզ էլ, ուրեմն, ցանկանում եմ նույնը։ Ունեցեք հաստատ կամք ու աշխատելու սեր, աշխատեցե՛ք, աշխատեցե՛ք ու կհասնեք իմ տարիքին»։ Անջնջելի է մնացել ինձ համար այդ օրվա հիշատակը»[1]

Կոնստանդնուպոլսում Այվազովսկին բազմաթիվ հանդիպումներ է ունենում արևմտահայ նկարիչների, քանդակագործների, ճարտարապետների, գրողների, լրագրողների, ու-

---

1 Ա. Արմենյան, Վաթսուն տարի հայ բեմի վրա, 1957, էջ 45-47։ Տե՛ս, նաև Մ. Սարգսյան, Հովհ. Այվազովսկի, 1976, էջ 265-266։

ուցիչների և ընդհանրապես ազգային մշակույթի գործիչների հետ։ Երիտասարդ նկարիչներից մի քանիսը, օրինակ՝ Տիրան Զրաքյանը, ծաղրանկարիչ Տիգրան Արփիարյանը, Սոփոն Պեզիրճյանը, Տորք Զաքարյանը և ուրիշներ այցելում են հայրենակցին և, ցույց տալով իրենց աշխատանքները խորհուրդներ են հարցնում։ Գրող և նկարիչ Տ. Զիրաքյանը նույնիսկ մի փոքրիկ ծովանկար է նվիրում նրան, որը, ինչպես գրում է ժամանակակիցը. «Այվազովսկին հոժարեցավ ընդունել զայն շնորհակալությամբ և ինչ-ինչ դիտողություններ ընելով, քաջալերական խոսքերով հորդորեց դեռահաս պատանուն ի հաքատև աշխատություն»։ Ժամանակակիցը վկայում է, որ վարպետը այնքան է հավանում Զրաքյանի նկարը, որ ուզում էր չհավատալ, որ «այդ ինքնատիպ պատկերը հորինած ըլլա տղան մը մատներով»[1]։ Նույն տարեցույցը վկայում է, որ «Այվազովսկին հիացող մը եղած է Սոփոն Պեզիրճյանի տաղանդին, երբ Պոլիս գալուն տեսած է անոր գործերը»[2]։ Հովհ. Այվազովսկին խրախուսական խոսքեր է ասում նաև սկսնակ բնանկարիչ Տորք Զաքարյանին (1870—1940), երբ վերջինս ցույց է տալիս իր աշխատանքները։ «Ապրիս, փոքրիկ վարպետ» ըսելով Այվազովսկին կքաջալերի Տորքը և միասին քեյ առնելու պահուն Տորքին ցույց կուտա Վոսփորի տեսարանները, ըսելով «փոքրիկ վարպետ, ահա քո դպրոցը՝ բնությունը»[3]։

Նույն ժամանակ պոլսահայ «Մասիս» ամսագիրը թարգմանաբար տպագրում է ֆրանսիական «Թան» թերթում տպագրված արվեստագետ Գյուկ լ'Ռյուլու հոդվածը Այվազովսկու ցուցահանդեսի մասին։ Ամփոփելով հայազգի նկարչի մեկ շաբաթյա գործունեությունը Կ. Պոլիսի հայկական համայնքում, ամսագիրը գրում է. «Այվազովսքիի ներկայությունն ի Կ. Պոլիս ազգային դեպք մը համարվեցավ, ազգային գեղարվեստական տաղանդ մը իր փառակից կընծե օտարներու հանդեպ, նաև այն ազգին որուն կպատկանե ինքն»[4]։ Կոստանդ-

---

1 *Թեոդիկ «Ամենուն տարեցույց», 1916—1920, էջ 86։*

2 *Թեոդիկ «Ամենուն տարեցույց», 1912, էջ 255։*

3 *«Ակն և ականեցիք», Փարիզ, 1952, էջ 716։*

4 *«Մասիս», 1890, № 6, էջ 301։*

Եուպոլսում հայ մտավորականները Այվազովսկու մեկնելուց առաջ նրա պատվին ճաշկերույթ են տալիս և փառավոր ճանապարհում դեպի հայրենիք։

ԱՅՑ ԾՈՎԱՆԿԱՐՉԻՆ

Հունիսին Այվազովսկիներն արդեն իրենց տանն էին։ Ընդրանք կարճատև հանգստանում են Շախ-մամայ կալվածքում և հետո տեղափոխվում են Թեոդոսիա, ուր նկարիչը վերսկսում է իր ամենօրյա աշխատանքը։ Նա Պոլսից բերել էր մի քանի էսքիզ, որոնցից մեկի հիման վրա նկարում է «Կոնստանդնուպոլսի տեսարանը գիշեր ժամանակ» պատկերը։ Ապա ավարտում է Բիարիցայի ծովափնյա բնության պատկերները և մի քանի այլ ծովանկարներ, պատրաստելով դրանք ցուցահանդես ուղարկելու համար։ Այդ ժամանակ նկարչին են այցելում Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանի մի խումբ աշակերտներ, նրանց թվում՝ Եղիշե Թադևոսյանը, որոնք պատկերասրահի ծովանկարները դիտելուց և նկարչի հետ զրուցելուց հետո մեկնում են Թեոդոսիայից։ Իր ինքնակենսագրության մեջ Թադևոսյանը նշում է, որ Այվազովսկին հաճույքամբ ընդունեց իրենց և ցուցմունքներ տվեց ծովանկարչության հարցերի շուրջը։ Ղրիմում Թադևոսյանը նկարում է «Սև ծովի արեվելյան ափերը» պատկերը, որը հետո ցուցադրվում է ուսումնարանի աշակերտական ցուցահանդեսում։ Այդ հանդիպումը և զրույցները մեծ ծովանկարչի հետ մնում են անմոռաց և թողնում են դրական հետք երիտասարդ նկարչի ստեղծագործական կյանքում։

Հովհ. Այվազովսկին վճռական և բախտորոշ նշանակություն է ունենում առանձնապես ծովանկարիչ Արսեն Շաբանյանի (1864—1949) կյանքում։ Էրզրումի հյուսիսային շրջանի Սուսինց գյուղում ծնված և Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան ուսումնարանում սովորած սկսնակ նկարիչը 1890 թ. ամռանը՝ «Օգոստոսի կեսերին,— ինչպես գրում է պոլսահայ թերթերից մեկը,— անձամբ գնացել է Թեոդոսիա, հռչակավոր արվեստագետի մոտ, նրա քննությանը և դատողությանը

ներկայացնելու համար իր նկարչական փորձերը։ Այվազովսկին, որ դեռ չէր տեսել Շաբանյանի նկարները, նախ նրան ընդունում է շատ պաղ և խորհուրդ է տալիս իզուր ժամանակ չվատնել, հայտնելով, որ շատերը կարծում են, թե ունեն նկարչական ընդունակություն։ Սակայն, երբ հետևյալ օրը տեսնում է Շաբանյանի նկարները, իսկույն փոխում է իր սառակցության և ընդունելության ձևը, առաջնորդում է նրան իր սեփական աշխատանոցը և իր հսկողությամբ նկարել է տալիս։ Ամբողջ ինն օր մնում է երիտասարդ նկարիչը վարպետի մոտ, որը հորդորելով, հրահանգներով խրախուսում է նրան։ Ի վերջո, Այվազովսկին բացարձակ հայտնում է Շաբանյանին, որ իր նկարչափորձերը մեծ ապագա են խոստանում և հորդորում է նրան անհողդողդ շարունակել, վստահ լինելով կատարյալ հաջողության վրա»[1]։

Այդօրինակ խրախուսանքը խորապես ոգեշնչում է սկսնակ նկարչին։ Ա. Շաբանյանը թողնում է Բաթումի քաղաքը, ուր աշխատում էր առևտրական մի բանկի գրասենյակում, մեկնում է Փարիզ և ընդունվում գեղարվեստի ակադեմիա։ Այստեղ նա սովորում է սկզբում նկարիչ Գուստավ Մորոյի, ապա՝ Ժան Պոլ Լորանսի և Բենժամեն Կոնստանի մոտ։ Նա մասնագիտանում է ծովանկարչության մեջ և այնուհետև ամբողջ կյանքում, հետևելով Այվազովսկուն, նկարում է ծովանկարներ։ Հայաստանի պետական պատկերասրահում ցուցադրվող «Նորմանդիայի ձկնորսները» պատկերը (1898) վկայում է նրա պրոֆեսիոնալ բարձր կարողությունների մասին։ Շաբանյանի «Ծովը լուսնյակ գիշերին» և «Ծովափ» պատկերները 1900 թ. ցուցադրվում է Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում։ Իր բազմաթիվ ծովանկարներով նա լայն ճանաչում է գտնում Ֆրանսիայում և նույնիսկ դառնում է Փարիզի «Ծովանկարիչների ընկերության» հիմնադիրներից մեկը, միաժամանակ ներկայացնելով Այվազովսկու սկզբնավորած Հայկական ծովանկարչության դպրոցը։ Ֆրանսիական կառավարությունը Արսեն Շաբանյանին ևս շնորհում է «Պատվո լեգիոնի» շքանշան։

---

1 «Հայրենիք», 1891, նոյեմբերի 11։ Տե՛ս նաև Ռ. Շիշմանյան, բնանկարն ու հայ նկարիչները, 1958, էջ 266։

Նույն ժամանակ Այվազովսկու աշակերտ Ա. Ֆեսլերը ուսուցչին է ներկայացնում 18-ամյա Կ. Ֆ. Բոգոևսկուն (1872-1943), որը ուզում էր նկարիչ դառնալ։ Վարպետը ընդունում է նրան, հանձնարարում է աշխատել արվեստանոցում և պատճեններ նկարել։ «Այվազովսկու արվեստանոցում ես մատիտով նրա ծովանկարների պատճեններն էի նկարում, այդպիսին էր այդ անվանի նկարչի ուսուցման մեթոդը»։ Կ. Բոգոևսկին որոշ ժամանակ աշխատում է նկարչի արվեստանոցում, նրա հսկողությամբ։ Աշխատանքի ընթացքում վարպետը ցուցմունքներ է տալիս և սովորեցնում է նկարել։ Սակայն դա երկար չի տևում։ «Այդ արտանկարչությունը շուտով ինձ ձանձրացրեց և իմ հաճախումներն Այվազովսկու արվեստանոցը, դադարեցին»,— գրում է Կ. Ֆ. Բոգոևսկին հետագայում իր ինքնակենսագրության մեջ[1]։

Աշնան սկզբներին Այվազովսկին իր նոր ստեղծագործություններից մի քանիսը ուղարկում է Պետերբուրգ՝ ակադեմիական ցուցահանդեսի համար։ Սեպտեմբերի 24-ին գեղարվեստի ակադեմիայի սրահներում բացված աշնանային ցուցահանդեսում նկարչի աշխատանքներից ներկայացվում է երկու պատկեր՝ «Բիարիցան արևմուտին» և «Ալեկոծում Բիարիցայի ժայռերի մոտ», որոնք ուշադրություն են գրավում։ Նույն ցուցահանդեսում հայ նկարիչներից մասնակցում է Գ. Բաշինջաղյանը, որը ցուցադրում է «Հարթավայր Հյուսիսային Կովկասում» պատկերը[2]։

Նույն տարում Այվազովսկին հրավիրվում է մասնակցելու ռուս բանաստեղծ Մ. Յու. Լերմոնտովի երկերի հոբելյանական հրատարակությանը, որպես նկարազարդող։ Նկարիչը խոստանում է մի շարք բանաստեղծություններ նկարազարդել։ Այդ նպատակով նա սկսում է նորից ու նորից կարդալ, վերընթերցել ռուս բանաստեղծի երկերը, ընտրելով այնպիսի թեմաներ, որոնք մոտ ու հարազատ են իր ստեղծագործական տարերքին։ Եվ ահա, նրա ուշադրությունը գրավում են «Թամարա», «Առագաստներ», «Օդային նավ» և «Թերեքի նվեր-

---

1 Богоевский. Автобиография. Տե՛ս ԹՊ արխիվ, Բոգոևսկու ֆոնդ։

2 1890 թ. ակադեմիական ցուցահանդեսի կատալոգ, № № 120, 123, 334։

ները» բանաստեղծություններըՏեղյակ պահելով այդ մասին հրատարակչությանը, նկարիչը, որը գրքի գրաֆիկայով քնդհանրապես քիչ է զբաղվել, 73-ամյա հասակում ձեռնամուխ է լինում այդ գործին։ Նրա աշխատանքը շուտով ավարտվում է և նկարչի իլյուստրացիաները հանձնվում են տպագրության։

1891 թ. հունվարին Այվազովսկին դարձյալ Պետերբուրգում է։ Նա եկել էր այստեղ իր ստեղծագործությունների նոր ցուցահանդես կազմակերպելու համար և բերել իր հետ ավելի քան երեք տասնյակ նկար։ Ցուցահանդեսը բացվում է հունվարի կեսերին գեղարվեստի ակադեմիայի սրահներում։ Ցուցադրվում է 33 նկար։ Պետերբուրգի արվեստասեր հասարակությունը, ինչպես միշտ, այս անգամ էլ սիրով այցելում է հանրահայտ նկարչի ցուցահանդեսը և գնումներ կատարում։

Հովհ. Այվազովսկու ցուցահանդեսը փակվում է փետրվարի կեսերին։ Նկարիչը դիմում է սկզբում ակադեմիայի պրեզիդենտին, իսկ հետո նաև կայսերական տան մինիստրին իր «Վերջին րոպեն օվկիանոսում» մեծ պատկերը էրմիտաժ թանգարանին նվիրելու համար։ Այդ նվերը ընդունվում է սիրով և, ինչպես տեղեկացնում է կայսերական տան մինիստրը, «թագավոր-կայսրը գոհունակություն հայտնեց»։ «Վերջին րոպեն օվկիանոսում» նկարը տեղափոխվում է Ձմեռային պալատ։

Դրանից հետո Այվազովսկին մարտի 12-ին Պետերբուրգից մեկնում է Թեոդոսիա։ Տանը, ամենից առաջ, զբաղվում է ընտանեկան հարցերով։ Նրան անհանգստացնում էր ժառանգության հարցը։ Նկարիչը արու զավակ չուներ, իսկ աղջիկները՝ չորսն էլ ամուսնացած լինելով օտարազգիների հետ, չէին կարող կրել իր ազգանունը, իսկ նկարիչը տարեց-տարի ծերանում էր և մահից հետո Այվազովսկի ազգանունն էլ նրա հետ կհանգչեր։ Այդ խոհերով տարված՝ Այվազովսկին որոշում է որդեգրել իր աղջիկներից մեկի ամուսնուն և տալ նրան ու նրա ընտանիքի բոլոր անդամներին իր «Այվազովսկի»

---

1 ԽՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 709, 1891, գ. 17, թ. 172, տե՛ս նաև 1891 թ. անհատական ցուցահանդեսի կատալոգը։

ազգանուն։ Ով ահա, օգոստոսին նա դիմում է Ալեքսանդր երրորդ թագավոր-կայսրին։ «Ջունենալով որդիներ, ինչպես նաև արական սեռի ազգականներ ժառանգական ազնվականությունից իմ ազգանունով, և որպեսզի ինձնից հետո իմ ազգանունը չհանգչի, ես որոշել եմ որդեգրել իմ Ալեքսանդրա աղջկա ամուսին Միքայել Խարլամպիևիչ Լամպսիին, նրա կընոջը և երկու որդիներ՝ Հովհաննեսին և Նիկոլային իմ ազգանունով, և միավորել նրանց դեռևս իմ կենդանության օրոք»։ Ներկայացնելով անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, նկարիչը խնդրում է թագավոր-կայսրի համաձայնությունը[1]։

Այս դիմումին անմիջապես պատասխան չի տրվում։ Նըկարիչը, իհարկե, հասկանում էր այդ խնդրի բարդությունն ու դժվարությունները, ուստի, շտապ պատասխանի չսպասելով, շարունակում է զբաղվել իր նկարչական գործերով։ Օգոստոսի 24-ին նա մոսկովյան պատկերասրահի տնօրեն Պ. Տրետյակովին նամակով առաջարկում է գնել իր նոր պատկերներից մեկը, որը կենցաղային (ժանրային) բնույթ ունի։ «Օգտվելով հանրահայտ Կրապիվինիցկու այստեղ գտնվելուց, նրա ֆիգուրը նկարեցի,— գրում է նկարիչը,— ես ինքս գոհ եմ այդ նկարից այնքան, որ պատրաստ եմ ցուցադրել իմ նախկին լավագույն պատկերների հետ, բայց կուզեի, որպեսզի այդ պատկերը, որպես նոր տեսակ, լինի Ձեր հիանալի հավաքածուի մեջ։ Այդ պատճառով, համեմատաբար, ուղարկում եմ լուսանկարը և եթե Դուք կցանկանաք ունենալ այն, ապա ես կհամարեմ գնված, գինը նշանակել եմ 700 ռուբլի։ Նկարի չափը մոտավոր է, նկարը շրջանակով 1×2 արշին»[2]։ Նկարիչը միաժամանակ հայտնում է. «Այդ պատկերը և էլի մի քանի փոքրերի հետ կցուցադրվեն Յալթայում, սեպտեմբերի ընթացքում, հետո հնարավոր է՝ Օդեսայում։ Յուցահանդեսները կազմակերպվում են բարեգործական նպատակով։ ...Այժմ և ամբողջ ձմեռը ես կմնամ Թեոդոսիայում»։ Թե ինչ ընթացք է ունեցել նկարչի վերոհիշյալ առաջարկությունը ժամանակին՝ դժվար է ասել, բայց այն փաստը, որ

---

1 ՆՍՀՄ, ԿՊՊՍ ֆ. 1343, ց. 16, գ. 656. թ. 2։

2 «Документы...», էջ 258—259։

այժմ այդպիսի նկար չկա Տրետյակովյան պատկերասրահում, հիմք է տալիս հավանական համարելու, որ նկարը չի գնվել։ Ինչ վերաբերում է Յալթայում և Օդեսայում ցուցադրելու ցանկությանը, ապա այդպիսի ցուցահանդեսներ 1891 թ. չեն եղել։

Օգոստոսին Սիմֆերոպոլում գործող հայ ճարտարապետ Համբարձում Կարապետյանը Թեոդոսիայում այցելում է Այվազովսկուն և նրա հետ երկար զրույցներ է ունենում։ «Իմանալով իմ հայ լինելը նա իսկույն խոսակցությունը փոխեց հայերենի և էլ չփոխեց ռուսերենի,— գրում է ճարտարապետը Թեոդոսիայի սբ. Սարգիս եկեղեցու վանահայր վարդապետ Տեր-Ստեփանյանին սեպտեմբերի 12-ին, առաջարկելով նրան գրել մեծ հայրենակցի կյանքի պատմությունը.— նրան իմանալ և խորապես ծանոթանալ նկարչի կյանքին ու նրա գործունեությանը շատ հարկավոր է ամեն մի հայի համար։ Ով, բացի դրանից, շատ օգտակար, ուսանելի կլինի նրա ընդարձակ կենսագրությունը, քանի որ եթե այդ՝ մենագրություն, գրվի լավ և փորձառու ձեռքով, դա կլինի լավագույն դաս կամ օրինակ աշակերտներու, երիտասարդներու և հասակավորներու համար»[1]։ Ճարտարապետ Հ. Կարապետյանը հայտնում է նաև, որ եթե Ս. Ստեփանյանը գրի նկարչին նվիրված մենագրություն, ապա դրա տպագրության բոլոր ծախսերը վերցնում է իր վրա։ Հայաստանի պետական արխիվում պահված փաստաթղթերից երևում է, որ Ս. Ստեփանյանն արդեն սկսել էր մենագրությունը, բայց թե հետո ինչ ընթացք է ունեցել այդ գործը, հայտնի չէ։

Հայրենակիցների մշտական հոգատարությունը և հետաքրքրությունը Այվազովսկու նկատմամբ, բնականաբար, նրա մեջ ուժեղացնում է փոխադարձ սերը և հարգանքը հարազատ ժողովրդի ու նրա պատմության նկատմամբ։ Նա այժմ 1890-ական թվականներին, ավելի է մերձենում իր ժողովրդին, սիրով ու անվճար կատարելով հայ հասարակության բոլոր պահանջները, այդ թվում՝ նկարչական պատվիրոնները։ Ղրիմի

---

1 *Հայկական ԽՍՀ Արխիվային վարչության գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, 1958, № 1, էջ 28-29։*

Հայոց սբ. Վարդան Մամիկոնյանի եկեղեցում պակասում էին նկարները։ Հայ հասարակությունը խնդրում է նկարչին մի պատկեր նկարել այդ եկեղեցու համար։ Սիրով ընդառաջելով այդ ցանկությանը, Այվազովսկին նկարում է պատմական թեմայով մեծակտավ պատկեր հայրենասիրական բովանդակությամբ։ Նա նկարում է հայոց եկեղեցու անունը կրող Վարդան Մամիկոնյանի՝ 5-րդ դարի հայ մեծ զորավարի դիմանկարը, և նրա որդու երդումը պարսկական շահ Հազկերտ երկրորդի դեմ կայանալիք ճակատամարտից առաջ։ Բարձունքի վրա կանգնեցված խաչքարի առաջ ծնկաչոք հայր և որդի, ձեռքերն իրար հպած, երդվում են մինչև արյան վերջին կաթիլը կռվել անարգ թշնամու դեմ, որն ուզում է դավանափոխ անել հայ ժողովրդին և ապա նվաճել հայրենիքը։ Հեռվում՝ պատկերի երկրորդ պլանում, սարալանջին երևում են վաղ միջնադարյան զինվորական հագուստով մարդիկ իրենց զենք ու զրահով, երկար նիզակներն ուսերին, որոնք և սպասում են իրենց առաջնորդին։ Նրանք պատկերված են Հայաստանի գեղեցիկ լեռնաշխարհը հիշեցնող բնության տեսարանում և կարծես ձուլվում են բնության հետ։ Շատ արտահայտիչ է Վարդան զորավարի դեմքը։ Նկարված լինելով բնորդից, որը հիշեցնում է Թեոդոսիայի հայոց եկեղեցու վանահայր, վարդապետ Խորեն Ստեփանյանի արտաքինը, նա կենդանի արտահայտություն ունի։ Նրա լայն, լուսավոր ճակատը, աչքերի սուր հայացքը, հայկական գեղեցիկ դիմագծերով դեմքը, բեղերն ու մորուքը գլխի երկար մազերի հետ դիտողին ներկայացնում են սիրելի ու հարազատ հայրենասեր մի մարդու, որն իր կյանքը զոհելու է հանուն հայրենիքի և ժողովրդի փրկության։ Նրա լայնաթիկունք և հուժկու մարմինը, լույսով ողողված զրահավորված կուրծքը և գետնին դրած երկար ու հաստ նիզակը մարմնավորում են անձնավորության հերոսականությունը։ Պատկերի մեղմ գունային գամմայում հնչող Վարդանի հագուստի մուգ կարմրագույնը, դեմքի և ճակատի բաց շականագույնը և կրծքի վրա շողացող արևի լույսը կոմպոզիցիայի կենտրոնում տեղադրված հերոսի ֆիգուրը մղում են առաջին պլան և ցայտուն դարձնում նրա կերպարը։ 1891 թ. սկսած այդ պատկերը որոշ ընդմիջումներով նկարիչն ավարտում է 1892 թ. և նվիրում հայոց եկեղեցուն։ Մեծ է

լինում ժողովրդի ուրախությունը՝ տեսնելով իր ցանկության իրականացումը։ Պետք է նկատել, որ Վարդան զորավարի կերպարը, մինչև այդ պատկերել են հայ նկարիչներից շատերը, սակայն այս յուղաներկ ստեղծագործությունը միակն է, որ օծվել է ժամանակին և, երկար տարիներ կախված լինելով հասարակության աչքի առաջ, կատարել է հայրենասիրական դեր և Թեոդոսիայի պատկերասրահ է տեղափոխվել այդ եկեղեցին փակվելուց հետո։ Հայ ժողովրդի պատմության և հայրենասիրական թեմաներով ծովանկարիչը մի շարք նոր պատկերներ է նկարում նաև հետագայում՝ 1890-ական թվականներին։

ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐ ՍՈՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ժողովրդասեր նկարիչը չէր կարող անտարբեր լինել նաև ռուս ժողովրդի կյանքում այդ շրջանում տեղի ունեցող ողբերգական անցքերի նկատմամբ։ Ռուսաստանի կենտրոնական գավառներում ամռանը մեծ երաշտ լինելու պատճառով սով էր սկսվել և այն տարածվում էր մյուս շրջանները։ Պետության միջոցառումները թույլ էին և անօգուտ։ Հասարակական կազմակերպությունները, հատկապես առաջավոր դեմոկրատական մտավորականությունը կոչ են անում՝ ով ինչով կարող է թող օգնի սովյալներին։ Հովհ. Այվազովսկին ևս արձագանքում է այդ կոչերին. որոշում է նոր պատկերներ նկարել և վաճառել սովյալների օգտին։ Դեկտեմբերի 30-ին «Նովոյե վրեմյա» թերթի խմբագիր Ա. Ս. Սուվորինին ուղղած նամակում նա գրում է. «Խնդրում եմ համբերություն ունենալ և կարդալ այս նամակը մինչև վերջ։ Ինչպես ամբողջ ռուս ժողովուրդը, ես նույնպես ձեռնամուխ եղա իմ ուժերի սահմաններում անելու հնարավորը տառապյալների օգտին։ Վերջին երկու ամիսը ես բացառիկ զբաղված էի։ Այդ նպատակով ես նկարեցի 17 պատկեր յուղաներկով և 32 ջրանկար։ Կազմակերպելու եմ վիճակախաղ (ալեգրի) Թեոդոսիայում, Սիմֆերոպոլում և Սևաստոպոլում, ամեն քաղաքում շահում՝ 4 պատկեր և 10 գծանկար սեպիայով։ Բացի այդ, ներկա-

բարի օգնությամբ ես նկարեցի երկու դեկորատիվ պատկեր հսկայական մեծությամբ բեմի համար։ Առաջինը պատկերում է ժժքախտ գավառի մի գյուղ ձմռանը, մարդկանց ֆիգուրներով, որոնք ուրախանում են՝ տեսնելով արագընթաց եռաձիով սահնակը։ Երկրորդ դեկորացիան պատկերում է ցորենի դաշտ, հորիզոնում երևում է գյուղը, այստեղ-ամֆտեղ երևում են աղջիկների ու տղաների 20 ֆիգուրներ, խմբով երգում են ռուսական երգեր, իսկ վերջին պլանում պարում են։ Այդ երկու տեսարանների հենքի վրա երեք-չորս ժամվա ընթացքում տեղի է ունենալու վիճակախաղ (ալեգրի) և տոմսերի վաճառք... Բացի այդ վիճակախաղ-ալեգրիից ես երեկ Պետերբուրգ ուղարկեցի չորս պատկեր վաճառելու կամ միացնելու վիճակախաղին, և փողը հանձնել օգնության գլխավոր կոմիտեին, որտեղ ուղարկվելու են նաև Թեոդոսիայում, Սիմֆերոպոլում և Սևաստոպոլում իմ կազմակերպած վիճակախաղի փողերը»։[1]

1892 թ. հունվարի 8-ին Թեոդոսիայում Այվազովսկու նախաձեռնությամբ կազմակերպվում է վիճակախաղ-ալեգրի, որի ժամանակ խաղացվում են նկարչի 4 յուղաներկ պատկեր և 10 ջրանկար Ռուսաստանի սովյալների օգտին։ Վիճակախաղից գոյացած 1800 ռ. գումարը ամբողջապես ուղարկվում է Պետերբուրգ՝ սովյալներին օգնող կոմիտեին։ Հաջորդ օրը նկարիչը իր ստեղծագործություններից 14 հատ ուղարկում է Սևաստոպոլ դարձյալ նույն նպատակով՝ վիճակախաղի համար։ Նման վիճակախաղեր նա կազմակերպում է Սիմֆերոպոլում և Օդեսայում ևս, որոնց արդյունքը՝ բավական մեծ գումար՝ հատկացվում է սովյալների օգնության ֆոնդին։

Մեծ ծովանկարչի մարդասիրական այդ նախաձեռնությունը բարձր է գնահատվում ժամանակին։ Ռուսական և հայկական պարբերական մամուլը, մասնավորապես «Նովոյե վրեմյա», «Արձագանք» և այլ պարբերականներ, մշտապես հաղորդելով Այվազովսկու հայրենասիրական նախաձեռնությունների մասին, մեծարանքով են արտահայտվում նրա վերաբերյալ՝ օրինակ դարձնելով ուրիշների համար։ «Նովոյե վրեմյա» թերթը հրապարակելով հոդված Այվազովսկու մասին, մե-

---

1 «Документы...», *էջ 259-260։*

ծարում է «վեհանձն ու հանճարեղ զավակներին, որոնք Ռուսաստանին օգնության են հասնում տառապանքի ժամանակ», Նկարիչը, «շատ զգացված, շնորհակալություն» է հայտնում այդ թերթի խմբագրին, «ուժեղ արտահայտությունների համար»։

Նույն ժամանակ Այվազովսկուն մեծարում են նաև արվեստագետները։ «Նովոստի բիրժևայա գազետա» թերթում Վ. Ստասովը, խոսելով քանդակագործ Մ. Մ. Անտակոլսկու ըստեղծագործությունների փարիզյան ցուցահանդեսի հաջողության մասին, հունվարի 14-ին գրում է. «Ե՛վ ֆրանսիական հասարակությունը, և՛ ֆրանսիացի նկարիչները, և՛ նույնիսկ ֆրանսիական քննադատները վաղուց արդեն ռուսական նոր արվեստի և նոր ռուս նկարիչների կողմն են։ Դա շատ անգամ ապացուցվում է ամենափայլուն և ամենաանհերքելի կերպով Վերեշչագինի, Այվազովսկու և ուրիշների ցուցահանդեսներով»[1]։

Հովհ. Այվազովսկու գրաֆիկական ստեղծագործությունները ևս, հատկապես սեպիայով կատարված և ջրանկար աշխատանքները բարձր գնահատականի են արժանանում մայրաքաղաքում։ Ջրանկարիչների ընկերության նախագահ, ակադեմիկոս Ն. Ն. Կարազինը և մյուս ջրանկարիչները խընդրում են ուղարկել գրաֆիկական գործեր առաջիկայում բացվելիք ցուցահանդեսի համար։ Փետրվարի 26-ին Այվազովսկին Պետերբուրգ է ուղարկում 8 գծանկար, միաժամանակ խնդրելով, «ինձ ընդունել ջրանկարիչների ընկերության անդամ և ցուցահանդեսում տեղ տալ իմ համեստ գծանկարներին»[2]։ Այվազովսկու գրաֆիկական աշխատանքները ցուցադրվում են Պետերբուրգյան ջրանկարչական ստեղծագործությունների ցուցահանդեսում, իսկ 75-ամյա նկարիչը միաձայն ընդունվում է ջրանկարիչների ընկերության անդամ։

---

1 **В В Стасов**, Статьи и заметки. 1954, էջ 164։

2 «Документы...», էջ 261։

ԱՄԲԻԿԱՑՈՒՄ

Ստացվում է պաշտոնական հաղորդում այն մասին, որ 1893 թ. մարտ ամսին Ամերիկայի Չիկագո քաղաքում տեղի է ունենալու համաշխարհային գեղարվեստական ցուցահանդես։ Այդ կապակցությամբ ակադեմիայի փոխպրեզիդենտ Ի. Ի. Տոլստոյը հարցում է անում Այվազովսկուն. ի՞նչ ստեղծագործություններով է նա ուզում մասնակցել Չիկագոյի համաշխարհային ցուցահանդեսին։ Ապրիլի 27-ին Այվազովսկին Թեոդոսիայից գրում է պատասխան նամակ. «... Չիկագո քաղաքում առաջիկայում տեղի ունենալիք ցուցահանդեսի համար ես ունեմ ուղարկելու հետևյալ պատկերները. երկու մեծ պատկեր Ամերիկայի հայտնագործության թեմայով (յուրաքանչյուրը 7 արշին 59 վերշոկ), երրորդը նույնպես պատկերում է Կոլումբոսին՝ կառչած նավի ջարդված կայմի բեկորին, երիտասարդական տարիներին Պորտուգալիայի մոտ (5 արշին շրջանակով)։ Էլի երկու պատկեր, վերոհիշյալներից փոքր, դարձյալ Ամերիկայի հայտնագործության ժամանակաշրջանից անցքեր պատկերող, այսինքն Կոլումբոսի մեկնումը Պալոս նավահանգստից և Կոլումբոսի ժամանումը Ամերիկա։ Ամեն մեկը դրանցից շրջանակով երկարությունն է 2 արշին, լայնքը՝ 3,5 արշին։ Բացի այդ 5 պատկերներից կուզենայի կցել դրանց 3 փոքր նկարներ ևս 2 արշին լայնքով և 3 արշին բարձրությամբ»։[1]

Չիկագոյի ցուցահանդեսին Այվազովսկու մասնակցության մասին հաղորդում են բոլոր թերթերը, այդ թվում և հայկական պարբերական մամուլը։ «Արձագանք» շաբաթաթերթը ստույգ աղբյուրներից տեղեկանալով գրում է. «...Հոչակավոր նկարչի ազգականները պատմում են, որ նա երբեք այնքան չի աշխատել և այնքան առողջ չի եղել, որքան այժմ։ ... «Նովոյե վրեմյա» լրագրի ասելով «Այվազովսկու մասնակցությունը Չիկագոյի համաշխարհային ցուցահանդեսում կապահովի ռուսական մասի հաջողությունը ցուցահանդեսում»։[2] *Հուլիսի 10-ին Այվազովսկին կազմում է համաշխարհային ցուցա-*

---

1 ՆՍՀՄ ԿԳԳԱ, ֆ. 789, ց. 11. 1891, գ. 80. թ. 124։

2 «Արձագանք», 1892, № 73. էջ 2։

հանդեսին իր ուղարկելիք 20 պատկերների վերջնական ցուցակը։ 1. «Ամերիկա ճանապարհվող նավը այն պահին, երբ Կոլումբոսը շրջապատված էր դժգոհ նավաստիներով, փոթորիկի ժամանակ», 2. «Կոլումբոսի շքախումբը իջնում է Սան-Սալվադոր կղզու ափը», 3. «Կոլումբոսը երիտասարդ հասակում փրկվում է վենետիկյան հանցագործների կողմից հրդեհված առևտրական նավի կայմի վրա, Պորտուգալիայի ափերի մոտ», 4. «Իսպանական Պալոս նավահանգստում Կոլումբոսը հրաժեշտ է տալիս ճանապարհվելուց առաջ», 5. «Կոլումբոսի նավակի մոտենալը Ամերիկայի ափերին», 6. «Նետապուր լուսնյակ գիշերին», 7. «Զբոսանք վենետիկում գոնդոլով», 8. «Պարթենոնը Աթենքում հնագույն ժամանակներում», 9. «Փրկվածները նավի մեջ», 10. «Գարիբալդին Գարիբալդիականների հետ շոգենավի տախտակամածի վրա», 11. «Յալթան առավոտյան», 12. «Փողոց Բախչիսարայում», 13. «Փոթորիկ Ղրիմի ափերի մոտ», 14. «Նավակը փոթորիկի ժամանակ», 15. «Լուսարձակը Մարմարա ծովում», 16. «Կոստանդնուպոլիսը Մարմարա ծովի կողմից», 17. «Ալեկոծում Ազովյան ծովում», 18. «Ալեկոծում Սև ծովում», 19. «Յալթան գիշեր ժամանակ», 20. «Մալթայի շրջակայքում»[1]։

Այս պատկերների կեսից ավելին, ինչպես նշեցինք վերևում, մեծակտավ ստեղծագործություններ են։ Մեծակտավ պատկերների նախատեսելը միջազգային ցուցահանդեսի համար մի նոր ապացույց է այն մասին, որ իր ստեղծագործական կյանքի վերջին շրջանում՝ 1880—1890-ական թվականներին, Այվազովսկին հակված է եղել ստեղծելու մեծակտավ պատկերներ։ Հուլիսի կեսերին այդ պատկերները նկարիչը ուղարկում է Պետերբուրգ։ Գեղարվեստի ակադեմիան դրանցից ընտրում է 15 պատկեր և ուղարկում է Ամերիկա Չիկագոյի 1893 թ. համաշխարհային գեղարվեստական ցուցահանդեսի համար։

Ամռան ամիսներին Այվազովսկին շարունակում է անխոնջ աշխատել և նկարել նոր պատկերներ։ Հավանաբար

---

1 ԽՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 789, ց. 11, 1892, գ. 80, էջ 124։
Տե՛ս նաև Մ. Սարգսյան, Ովանկարիչ Հովհ. Այվազովսկին Ամերիկայում, «Հայկական արվեստ», հ. 2, 1984, էջ 116—124։

այդ ժամանակ էլ նա նկարում է «Հայ ժողովրդի մկրտությունը» մեծակտավ պատկերը (150×96), որը ժողովրդի խնդրանքով, նվիրում է ս. Սարգիս հայոց եկեղեցուն։ Հայ ժողովրդի մկրտությունը՝ հեթանոսությունից քրիստոնեական հավատին անցնելու 301 թ. տեղի ունեցած պատմական իրադարձությունը, մեր ժողովրդի պատմության նշանակալից անցքերից մեկն է։ Այդ թեմայով պատկերի համար, որպես գործողության վայր, նկարիչն ընտրել է հայրենի երկրի օրրանը՝ Արարատյան դաշտը Արարատ լեռան տեսարանով։ Առաջին պլանում են երկու հայ մարդ, որոնք, չոքած Գրիգոր լուսավորչի առաջ, մկրտություն են ընդունում։ Պատկերի խորքում երևում է հայ ժողովուրդը։ Գրիգոր լուսավորիչը կաթողիկոսական գավազանը մի ձեռքում, մյուսում խաչը բռնած, կանգնել է ժողովրդի առաջ և հանդիսավորությամբ մկրտում է։ Լուսավորչի հանգիստ ու հանդիսավոր կեցվածքը, հայկական ազգային եկեղեցական տարազը և բարեհամբույր դեմքը գրավում են դիտողի ուշադրությունը։ Նկարիչը ճշտորեն պատկերել է ինչպես մկրտվող մարդկանց, այնպես էլ Գրիգոր Լուսավորիչին ու հետևում կանգնած շքախմբի հոգևոր անձանց հայկական դիմագծերը։ Այստեղ զգացվում է պատմականություն։ Դրան նպաստում է նաև պատկերի առաջին պլանում, Երքևի ձախ անկյունի մոտ, գետնին դրված քարի վրա հայերեն տառերով գրված «Յամի տն 303» տարեթիվը, որը համարվել է Հայաստանում քրիստոնեությունն ընդունելու սկիզբը։ Թեև ծովանկարիչը վարպետ չէ մարդկային մեծածավալ ֆիգուրների պատկերման և մանավանդ բազմաֆիգուր-սյուժետային պատկերներ ստեղծելու ժանրում, այնուամենայնիվ նրան հաջողվել է իր մտահղացումը՝ հայ ժողովրդի մկրտությունը, վերարտադրել գեղարվեստական համոզիչ ձևերով ու արտահայտչականությամբ։ Պատկերը շուտով օծվում է և կախվում Թեոդոսիայի սբ. Սարգիս եկեղեցում և սա ևս տասնյակ տարիներ մնում է հասարակության աչքի առաջ։ Դա հավատացյալների վրա ուժեղ տպավորություն է թողնում ոչ միայն իր պատմական բովանդակությամբ, այլև իր գունային կառուցվածքով։ Լույսով ողողված Գրիգոր Լուսավորչի և նրա շքախմբի անձանց, հագուստների մուգ կարմիրը և շականակագույնը,

ինչպես և ոսկեզօծ գավազանի ու ոսկեթել երիզով կարմրագույն խուրջի տաք ու վառ գույները հստակորեն գծվում են հեռվում երևացող Արարատի լանջի բաց կապտավունի հենքի վրա, պատկերը դարձնելով հյութեղ և կոլորիտային։

Հովհ. Այվազովսկին նկարում է այլ պատկերներ ևս։ Մեզ են հասել այդ տարում նկարած ավելի քան 10 կտավ, որոնցից առանձնապես ուշագրավ են «Անդորր Միջերկրական ծովում» մեծակտավ (216×345) պատկերը, որը գտնվում է Հայաստանի պետական պատկերասրահում, և Թեոդոսիայի Այվազովսկու անվան պատկերասրահում պահվող «Ամպրոպ», «Իսկիա կղզին Նեապոլի մոտ», «Մերկուրի» նավի հարձակումը թուրքական երկու ռազմանավերի վրա» (218×332), «Ալեկոծում Ղրիմի ափերի մոտ», «Մարիա» նավը ալեկոծման ժամանակ» (227×213) և ինքնանկարը ծովակալական արտահագուստով (226×158) և այլն։

Օգոստոսին Այվազովսկին որոշում է վերջապես իրականացնել իր վաղեմի ցանկությունը. մեկնել Ամերիկա, ցուցադրվել ու ճանաչվել այն երկրում, ուր երբեք չէր եղել, ամերիկյան պատկերներ նկարել և ներկա լինել Չիկագոյի համաշխարհային դեղարվեստական ցուցահանդեսի բացմանը։ Այդ մասին է վկայում սեպտեմբերի 4-ին իր բարեկամ Կ. Լլյանին ուղարկած նամակը, որտեղ նա գրում է. «...գրում եմ համարյա մեկնելուց առաջ։ Առայժմ հայտնի է այն, որ դնում ենք Փարիզ, որտեղ ամենայն հավանականությամբ կմնանք երկու շաբաթ։ ...Եթե, ինչպես գրում են [թերթերը], 2-ի օր կարանտին է լինելու նաև Նյու-Յորքում, ապա, բնականաբար, կմնանք ձմեռելու Փարիզում կամ Նիցցայում, բայց ես հույս ունեմ, որ ամեն ինչ լավ կլինի։ ...Իմ գլխավոր նպատակը օվկիանոսն ուսումնասիրելն է, նիագարան այցելել, չորս ամիս մնալ Վաշինգտոնում, նկարել նոր՝ ամբողջական պատկերների շարք և դրանք հավանաբար կցուցադրվեն առանձին գլխավոր քաղաքներում հունվարի մեջ, իսկ մենք կմեկնենք Չիկագո մարտին»[1]։

Այդպիսի ծրագրով 75-ամյա նկարիչը պատրաստվում է մեկնել Ամերիկա։ Նրա հիմնական խնդիրը՝ «օվկիանոսն

---

1 «Документы...», էջ 263-264։

ուսումնասիրելը», տարօրինակ չի թվա, եթե նկատի ունենանք, որ աշխարհահռչակ ծովանկարիչը տարբեր ծովեր, լճեր և օվկիանոսներ իրար նման չի նկարում։ Ատլանտյան օվկիանոսը նա տեսել էր դեռևս 1840-ական և 1880-ական թվականներին դեպի Անգլիա մեկնելիս։ Սակայն դա եղել է վաղուց և շատ բան մոռացության է տրվել։ Նկարիչը ցանկանում էր բնականից նկարել Ատլանտյան օվկիանոսը։ Դա նշանակում է, որ Այվազովսկին նկարում է ոչ թե ընդհանրապես ծով, այլ կոնկրետ, որոշակի ծովը, լիներ դա մեծ կամ փոքր, լիճ, գետ կամ ջրանցք, ձգտելով պատկերել դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները։ Այդ պատճառով նկատելիորեն տարբերվում են Բալթիկ, Սև և Միջերկրական ծովերի՝ դրանց ծովային զանգվածների, այվազովսկիական բնութագրություններ։ Ուշադիր դիտողը կարող է նկատել նաև ծովավինյա բնության տարբեր տեսարաններ, Լադոգա լճի, Վոլգա, Նևա, Ռիոն գետերի, Սուեզի ջրանցքի, Բոսֆորի նեղուցի և աշխարհի այլ վայրերի ջրային տարածությունների բնական առանձնահատկությունները Այվազովսկու ծովանկարներում։

Սեպտեմբերի վերջերին վերցնելով իր հետ 14 պատկեր Այվազովսկին իր կնոջ՝ Աննա Մկրտումի Բուռնազյանի՝ հետ մեկնում է Օդեսա, այնտեղից շոգենավով Ֆրանսիա դնալու համար։ Օդեսայում նրան այցելում է «Ռուսսկի վեստնիկ» լրագրի աշխատակիցը և հարցազրույց է ունենում նրա հետ։ Նկարիչը ասում է. «Ուղևորությանս գլխավոր նպատակն է նորից տեսնել օվկիանոսը և վերանորոգել 40-ական թվականների ճանապարհորդության ժամանակ ստացած տպավորությունները։ Սիրում եմ այդ տպավորությունները, ջրի անսահման գեղեցկություններով լի տեսարաններ։ Նայում եմ հաճախակի փոփոխվող այդ տեսարաններին և հոգիդ խաղաղվելով ցանկություն է ծնվում բոլորը, բոլորը ընկալել և պատկերել կտավի վրա»։ Նկարիչը հայտնում է, որ ինքը մտադիր է լինել Նյու-Յորքում, ձմեռն անցկացնել Վաշինգտոնում, այնուհետև մինչև Չիկագոյի ցուցահանդեսի բացումը այցելել Նիագարայի ջրվեժը։ «Գիտե՞ք,— ասում է նա լրագրողին,— այդ նշանավոր ջրվեժը լի է բնության հրաշալիքներով։ Այն-

տեղ պետք է ճիգ թափել նկարելու զանազան էյուդներ, խազմել ուրվագծեր և այլն։ Ցուցահանդեսի բացումից քսան օր անց կվերադառնամ հայրենիք, իհարկե, եթե կենդանի մնամ,— ժպտալով ավելացնում է Այվազովսկին»[1]։

Օդեսայից շոգենավով մեկնելով Ֆրանսիա՝ Այվազովսկիները մնում են Փարիզում շուրջ երկու շաբաթ։ Բարեբախտաբար այդ ժամանակ Ատլանտյան օվկիանոսում եղանակները նպաստավոր են լինում, և Այվազովսկիները բարեհաջող մեկնում են Ամերիկա։

1892 թ. հոկտեմբերի 13-ին Այվազովսկին և Աննան արդեն Նյու-Յորքի նավահանգստում էին։ Ամբողջ ճանապարհորդության ընթացքում նկարիչը, չնայած պատկառելի տարիքին ու հոգնածությանը, օրվա մեծ մասն անց էր կացնում շոգենավի տախտակամածի վրա, զարմանք պատճառելով ուղևորներին։ Նա սիրով դիտում և ուսումնասիրում էր Ատլանտյան օվկիանոսը, նշումներ անում նկարչական ալբոմում, հնոչ հետ հիանում ծովային բնության նոր գեղեցկություններով։ Ամերիկային մոտենալիս նա գծանկարում է հեռվից երևացող ծովափնյա տեսարանները և Նյու-Յորքի նավահանգիստը։

Նյու-Յորքի նորակառույց հյուրանոցներից մեկի երեք սենյակներում տեղավորվելուց հետո, Այվազովսկիները ծրագրում են մոտիկից ծանոթանալ այդ քաղաքին։ Նրանց հետաքրքրում էր ամեն ինչ։ Նկարչին ճանաչող անձանց ուղեկցությամբ նրանք լինում են համարյա բոլոր հիշարժան վայրերում, դիտում բարձրահարկ շենքերը, հրապարակները, խանութները, այցելում պետական ու մասնավոր պատկերասրահներ, տեսնում ամերիկյան նկարիչների աշխատանքները, հաստատում նոր ծանոթություններ։ Ավելի քան երկու շաբաթ այստեղ անցկացնելուց հետո՝ նրանք մեկնում են Սան-Ֆրանցիսկո, Վաշինգտոն և այլ քաղաքներ։ Ամենուր, որտեղ լինում են նրանք, մոտիկից ծանոթանում են առօրյա կյանքին և մշակութային օջախներին։ Սակայն նրանց, հատկապես նկարչին, ամենից ավելի հետաքրքրում էր Նիագարայի ջրվեժը։

---

1 «Նոր դար», 1892, № 107։

Վերջապես նրանք լինում են նաև այդ վայրում և անսահման հիանում ջրվեժի հոյակապ տեսարաններով։ Այվազովսկին մատիտով, ջրաներկով ու յուղաներկով նկարում է բազմաթիվ ճեպանկարներ, էտյուդներ, դիտում և ուսումնասիրում է Նիագարայի ջրվեժը տարբեր կողմերից և օրվա տարբեր պահերին, նույնիսկ լուսնյակ գիշերին։ Հարուստ նյութերով և բնության հրաշալիքների ուժեղ տպավորությամբ վերադառնալով Նյու-Յորք, Այվազովսկին հյուրանոցի սենյակներից մեկը վերածում է արվեստանոցի և նկարում նոր պատկերներ ամերիկյան թեմաներով։

Թեոդոսիայի պատկերասրահի արխիվում պահվում է նրկարչի ճանապարհորդական ալբոմը, որի մեջ 24 առանձին թերթերի վրա նկարված են Ամերիկայի ծովափնյա տեսարանները, Նիագարայի ջրվեժը և ապագա պատկերների բազմաթիվ էսքիզներ՝ կատարված մատիտով, գրչով և ջրաներկով։ Այստեղ ուշագրավ են շոգենավի տախտակամածից նրկարված «Նյու-Յորքը ծովի կողմից» գծանկարը, «Նոր երկիր», «Ամերիկյան մայրցամաքի ուրվանկարը» և այլ աշխատանքներ, մեծ մասամբ ծովային տեսարաններ, որոնցից շատերի տակ նկարիչն իր ձեռքով նշումներ է արել։ Այսպես. «Ամերիկյան մայրցամաքի ուրվանկարը» գծանկարի տակ նա մանր տառերով ռուսերեն գրել է. «Առաջին ամերիկյան ափը» 13 հոկտեմբերի, 1892»։ Այս, իշխաես և «Նյու-Յորքը ծովի կողմից» գծանկարների և ալբոմում եղած մի շարք մատիտանկարների հիման վրա Այվազովսկին Ամերիկայում նրկարում է մեծակտավ պատկերներ, որոնք ցուցադրվում են տարբեր քաղաքների անհատական ցուցահանդեսներում։

Հովհ. Այվազովսկին իր ստեղծագործությունների առաջին ցուցահանդեսը բացում է Նյու-Յորքում։ Այստեղ նա ցուցադրում է 24 պատկեր, որոնցից 14-ը բերել էր իր հետ հայրենիքից։ Դրանց մեծ մասը ծովանկարներ են։ Ցուցահանդեսի նպատակն էր ամերիկյան հասարակությանը ծանոթացնել իր ստեղծագործություններին։ Այդ մասին է վկայում մեզ հասած Նյու-Յորքյան ցուցահանդեսի կատալոգը, որի վրա նրկարիչը ժամանակին զանազան, մասնավորապես դների վերաբերյալ, նշումներ է կատարել։ Համարյա բոլոր պատկերների գները նշելուց բացի, կատալոգի մի անկյունում նա գր-

րել է. «Անհրաժեշտության դեպքում ամբողջ կոլեկցիան վաճառել 25.000 դոլլարով», Թե նրա 24 պատկերների շարքից հանենք երկուսը, որոնց դիմաց նա գրել է. «Այս երկու պատկերները թողնել պատկերասրահում մինչև վաճառքը», ապա կարելի է ընդունել, որ նկարիչն իր յուրաքանչյուր նկարը Ամերիկայում գնահատել է միջին հաշվով ավելի քան 1000 դոլլար։

Հովհ. Այվազովսկու ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը Նյու-Յորքում, ինչպես և նրա մուտքը Ամերիկա, լայն արձագանք է գտնում Միացյալ Նահանգներում։ Համարյա բոլոր կենտրոնական թերթերը, նույնիսկ Արևմտյան Եվրոպայի պարբերական մամուլը, ռուսական և հայկական թերթերը նշում են նկարչի ամերիկյան ճանապարհորդությունների ու նրա ցուցահանդեսների մասին։ Նկարիչը դառնում է օրվա խոսակցության նյութը։ Հայկական պարբերականը նշում է. «Ինչպես հաղորդում են ամերիկյան թերթերը, Այվազովսկին օրվա դյուցազն է Նյու-Յորքում»[1]։ Պետերբուրգյան թերթերի վկայությամբ. «Այժմ Այվազովսկին ընդհանուր հետաքրքրության և ուշադրության առարկա է Նյու-Յորքում։ Ի պատիվ աշխարհահռչակ նկարչի, ռուսաց ընդհանուր հյուպատոսը տվել է մի ճաշկերույթ, որին ներկա են եղել գրական ու գեղարվեստական աշխարհի, այլև Նյու-Յորքի բարձրագույն հասարակության ներկայացուցիչները։ Այդ երեկո ռուսաց դեսպանությունն մինչև 500 հյուր է եղել»[2]։

Դա պատահական չէր։ Այվազովսկու ծովանկարներն արտակարգ նորություններ էին ամերիկյան արվեստասեր հասարակության համար։ Մինչև այդ, Ամերիկայում չկային մասնագետ ծովանկարիչներ։ Այդ երկրի կերպարվեստը, որն ուներ շուրջ 200 տարվա պատմություն, գունանկարչության մեջ ծովանկարի ժանր դեռ չէր ստեղծել։ Բնանկարչությունն էլ, որպես ինքնուրույն ժանր, սկսում է առաջադիմել միայն 19-րդ դարի երկրորդ կեսում։ Այստեղ նկարչության հիմնական, առաջատար ժանրը դիմանկարն էր, որն ուներ հարուստ ավանդներ։ Այդ ժանրի ամերիկյան նկարիչներից ոմանք,

---

1 «Հանդես ամսօրեայ», 1894, էջ 717։

2 «Արձագանք», 1892, № 144, էջ 43։

օրինակ, ամերիկյան ռեալիստական նկարչության ականավոր ներկայացուցիչներ Ունիսլոու Հոմերը (1834—1903), Թոմաս Էկինսը (1844—1916) և ուրիշներ նկարել են ծովային ու գետափնյա տեսարաններ, սակայն, նրանց մի քանի պատկերները չեն ստեղծել ծովանկարչության ինքնուրույն ժանր ամերիկյան արվեստի մեջ։ Հովհ. Այվազովսկուն ժամանակակից ամերիկացի այն նկարիչները, որոնք հեռացել էին երկրից և մեկնել Եվրոպա (Մ. Կասատ, Սարժենտ, Ջ. Իննես), իրենց ստեղծագործություններով կապվում են արևմտաեվրոպական, մասնավորապես ֆրանսիական արվեստի հետ։ Դա այն ժամանակն էր, երբ հետզհետե ուժեղանում էր ֆրանսիական և ընդհանրապես եվրոպական մոդեռնիստական հոսանքների ազդեցությունն ամերիկյան կերպարվեստի վրա։

18-19-րդ դարերի եվրոպական տիպի դասական արվեստի ավանդներ ստեղծած ամերիկյան նկարչությունն ու քանդակագործությունը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին ձեռք են բերում նոր առանձնահատկություններ։ Անցյալի ռեալիստական ավանդույթներին զուգընթաց երևան են գալիս ֆորմալիզմի նախանշաններ, որոնք, նպաստավոր պայմաններ գտնելով այստեղ, արագորեն զարգանում են։ 20-րդ դարի կեսերին Միացյալ Նահանգները արդեն դառնում են մոդեռնիզմի համաշխարհային կենտրոն, ուր հովանավորվում են ֆորմալիզմը, գլխավորապես վերացական (աբստրակտ) էքսպրեսիոնիզմը և «Պոպ» կոչված արվեստը։

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին Ամերիկայում ցուցադրված Այվազովսկու ծովանկարները մեծ հիացմունք են պատճառում իսկական արվեստը գնահատող հասարակությանը։ Առանձնապես հետաքրքրական էին օտարազգի նկարչի աչքով ընկալված հայրենի բնության պատկերները, մասնավորապես Նյու-Յորքի ծովափնյա և Նիագարայի չքնաղ տեսարանները պատկերող ստեղծագործությունները։ Այդ պատկերները մեզ, դժբախտաբար, չեն հասել։ ԽՍՀՄ տարբեր թանգարաններում կան «Նիագարայի չքնաղը» ներկայացնող շուրջ 5 մեծ ու փոքր նկարներ, որոնք, ամենայն հավանակա-*

---

* *Նիագարա ամերիկյան հնդիկների լեզվով նշանակում է մեծ ազմուկ։*

նությամբ, նկարված են տեղում կատարած գծանկարների և էսքիզների հիման վրա, Տարբենիքում, 90-ական թվականների կեսերին։ Այդպիսին է, օրինակ, Թեոդոսիայի պատկերասրահում գտնվող «Նիագարայի ջրվեժը» մեծակտավ պատկերը (121×162), որը նկարված է 1893 թվականին։ Դա ներկայացնում է բնության հրաշալիքներից մեկը՝ մի հոյակապ տեսարան, որը դիտողի մեջ անմոռաց տպավորություն է թողնում։ 323 մետր լայնքով և ավելի քան 50 մետր բարձրությունից գահավիժող ջուրն այստեղ այնպիսի ուժով և ճշմարտացիությամբ է պատկերված, որ դիտելիս կարծես լսում ես նույնիսկ նրա խլացնող աղմուկը։ Հսկայական բարձրությունից ուժգնորեն թափվող լայնահուն ջրի ցայտերի մանր կաթիլները գոլորշու պես բարձրացել են վեր և օդը լցրել խոնավությամբ։ Այստեղ թափանցած արևի աղոտ ճառագայթները հյուսել են ծիածան, որի կամարի տակից լողում է զբոսաշրջիկների փոքրիկ շոգենավը։ Ջրանցքի համեմատությամբ՝ վերևից դիտված լինելով, այն չափազանց փոքր է երևում։ Փոքր, շատ մանր են թվում նաև ջրվեժը դիտող մարդկանց ֆիգուրները, որով ավելի է ընդգծվում ջրանցքի ահռելի մեծությունը։

«Նիագարայի ջրվեժը» պատկերի մեջ որոշակի նկատվում են գունային գամմայի կառուցման և երանգավորման այն նոր սկզբունքները, որոնք մասնակիորեն երևան էին եկել դեռևս 1870—1880-ական թվականներին Հայրենիքում ստեղծված լավագույն գործերում։ Ձգտելով օտար բնությունը հասու ու ճշմարտացի պատկերել, նկարիչը խուսափել է վաղ շրջանի որոշ ստեղծագործություններին բնորոշ էֆեկտայնությունից։ Ամբողջ կտավը զբաղեցնող ջրային տարածությունը նա վերարտադրել է ռեալ, իրականությանը մոտ։ Ջուրն այստեղ այն թեթևությունն ու թափանցիկությունը չունի, ինչը հատուկ է նկարչի նախորդ գործերին։ Առաջին պլանում նկարված արագահոս ջուրը և մանր, կտրտված ալիքները նկարված են նյութական ու ծանրակշիռ, զգացվում է ջրի շարժումը խորությամբ։ Ծույլ տալով շրջապատի կանաչ բնության ուրվագծումներ, նկարիչը ջրանցքի ջուրը պատկերել է մուգ կանաչավունի երանգներով, որոնց ջրային զանգվածը կապտագույնի հետ տեսարանին հաղորդում են որոշ սառնություն։

Նիագարայի ջրվեժի տեսարանը նոր թեմա էր ծովանկարչի ստեղծագործական կյանքում։ Դա նոր թեմա էր նաև հայ նկարչության մեջ։ Մինչև այդ ռուս նկարիչներից էլ ոչ ոք այն չի նկարել։ Այդ ստեղծագործությամբ, ինչպես և «Նոր երկիր», «Նյու-Յորքը ծովի կողմից», «Ազատության հուշարձանը» և մյուս նկարներով Այվազովսկին հարստացնում է ոչ միայն հայ, այլև ռուս նկարչությունն ամերիկյան պատկերներով։

Հովհ. Այվազովսկին իր ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսներ բացում է ամերիկյան մի քանի քաղաքներում ևս, այդ թվում՝ Սան-Ֆրանցիսկոյում և Վաշինգտոնում։ Վաշինգտոնի պատկերասրահի լայնարձակ ու լուսավոր սրահներում բացված ցուցահանդեսը շատ այցելուների է գրավում։ Առավոտից մինչև կեսօր ցուցասրահները միշտ էլ լեցուն են գեղեցիկ արվեստներ սիրողներով։ Մայրաքաղաքի «Նրեկոյան Վաշինգտոն» թերթը հաղորդում է նաև, որ «Ամերիկայում եղած ժամանակ Այվազովսկուն տրվում են մի շարք նշանակալից աշխատանքների պատվերներ»[1]։ Թերթը միաժամանակ հաղորդում է, որ «Մի քանի օր առաջ նկարիչը Կորկորանի արվեստի թանգարանին է նվիրել երկու պատկեր»։ Այժմ դժվար է ասել, ինչ պատկերներ են դրանք, բայց թերթի այն տեղեկությունը, թե այդ պատկերների հետ նա երկտող-նամակ է ուղարկում թանգարանի տնօրենին, շատ կարևոր է արվեստագետի հայրենասիրության ու քաղաքացիական զգացումները հասկանալու համար։ Այդ նամակում, ամերիկյան թերթի վկայությամբ, Այվազովսկին գրել է.«Մեծարգո տնօրեն. ես անձամբ ցանկանում եմ իմ երկու պատկերները նվիրաբերել Կորկորանի արվեստի թանգարանին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ազգային մայրաքաղաքում, ձգտելով այդ ճանապարհով արտահայտել իմ հայրենիքի ժողովրդի սրտագին շնորհակալությունն այն առատաձեռն ու արագ օգնության համար, որ ցուցաբերեց Միացյալ Նահանգների կառավարությունը անցյալ տարի Ռուսաստանում»[2]։

---

[1] Տե՛ս Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահի արխիվը։

[2] Նույն տեղ։

Սեփական ստեղծագործությունների անշահախնդիր նվիրատվությունը պետական թանգարանին, ի նշան ժողովրդի սրտագին շնորհակալության սուվի ժամանակ ցույց տված օգնության համար, այդպիսի քայլը հազվադեպ երևույթ էր այն ժամանակվա նկարիչների կյանքում։ Այդպես կարող է վարվել միայն ժողովրդի շահերով խորապես ապրող հայրենասեր արվեստագետը։ Այստեղ նոր և հատակ արտահայտություն է գտել նկարչին բնորոշ ինտերնացիոնալիզմը, նրա մոտահոգությունը հարազատ հայ և ռուս ժողովուրդների սոցիալական վիճակի բարվոքման խնդրում։

Այդ նվիրատվությամբ նկարիչը միաժամանակ նկատի ուներ Ամերիկայում ապաստանած հարազատ ժողովրդի զանգվածների նկատմամբ այստեղ ցուցաբերվող մեծահոգությունը։ Թուրքական բռնակալության կողմից հալածված, տնավեր, գաղթական հայրենակիցներին Ամերիկան ընդունել, ապաստան էր տվել և դրա շնորհիվ հայ ժողովրդի այդ հատվածը նկարչի օրոք ապրում էր բնաջնջումից զերծ և, ինչպես ինքն էր նկարել շրջագայությունների ժամանակ, համեմատաբար նպաստավոր պայմաններում։ Դա նկարչի սիրտը լցնում էր ուրախությամբ, և նա իր գոհունակությունն արտահայտում էր նվիրատվություններով միջոցով։ Դա լավ էին հասկանում ամերիկահայերը, թերևս այդ պատճառով ամեն տեղ, ուր լինում էր նկարիչը, հայերը նրան ընդունում էին արտակարգ ջերմությամբ և մեծ սիրով։ Ամերիկահայերի համար պատիվ և հպարտություն էր հայազգի մեծանուն նկարչի այցը Ամերիկա և նրա ստեղծագործությունների այստեղ գտած հաջողությունը։ Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիվում պահպանվում են փաստաթղթեր, որոնց վկայությամբ նկարիչը տիկնոջ հետ այցելել է հայոց բարեգործական ընկերություններ, հայկական դպրոցներն ու եկեղեցիները, ամենուր գտնելով ջերմ ընդունելություն։ Նույն արխիվային փաստաթղթերից տեղեկանում ենք, որ այստեղ Այվազովսկին ընտրվում է նոր կազմակերպված Հայկական ընկերության անդամ[1]։

Դա նշանակում է, որ ամերիկահայերը ևս Հովհ. Այվա-

---

1 Հայկական ԽՍՀ. ՊԿՊԱ. ֆ. 56. գ. 155. 95—98։

զովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսներն ընդունում էին արդեն հայ ժողովրդի ազգային արվեստի ցուցադրում Ամերիկայում։ Մինչև այդ ոչ մի հայ նկարչի աշխատանք Ամերիկայում չի ցուցադրվել։ Այվազովսկին առաջին հայ նկարիչն էր, որ այցելեց Ամերիկա և իր բարձրարվեստ ստեղծագործություններով ցույց տվեց, թե ինչ է ներկայացնում հայ ազգային նկարչությունը 19-րդ դարում։ Նկարչի այցը և նրա ժողանկարների ցուցահանդեսները Ամերիկայի Միացյալ Նահանգներում կարևոր նշանակություն ունեցան հայ ժողովրդին ու նրա արվեստը ճանաչելու գործում։ Այստեղ ևս, ինչպես և 1887 թ. Շվեդիայում «Հայ», «Հայաստան», «Հայ ժողովուրդ» բառերը անընդհատ երևում էին ամերիկյան պարբերական մամուլի էջերում Այվազովսկու ցուցահանդեսների կապակցությամբ։ Արևմտահայ մամուլը ևս, վկայակոչելով ամերիկյան ու եվրոպական թերթերի հաղորդագրությունները նշում է, որ հայազգի մեծ նկարչի Ամերիկայում գտնվելը և նրա ցուցահանդեսները, որոնք լայն ժողովրդականություն են վայելում այստեղ, բավական նպաստեցին ամերիկահայ գաղթօջախի և հատկապես հայ ժողովրդի լայն ճանաչմանը։ Դրան ոչ պակաս նպաստեցին հայերի կազմակերպած մեծարման երեկոներն ու ելեկույթները, որոնք նույնպես արձագանք են գտնում արևմտյան մամուլում։

«Արձագանք» շաբաթաթերթը 1892 թ. դեկտեմբերի 30-ին հրապարակում է «Հովհ. Այվազովսկին և Նյու-Յորքի հայերը» վերնագրով հոդված, որը նկարագրում է այդ հանդիսությունններից մեկը։ «Եվրոպական լրագրերը հաղորդում են,— կարդում ենք այստեղ,— որ դեկտեմբերի 9-ին Նյու-Յորքի հայ հասարակության հրավերով անվանի ծովանկարիչ Հովհ. Այվազովսկին ներկա է գտնվել ի պատիվ նորա մի հայկական երեկույթի։ Տեղացի հայերից մեծ բազմություն էր հավաքվել նրան տեսնելու։ Դահլիճի ճակատին ամերիկյան դրոշակների մեջ զետեղված է եղել Այվազովսկու պատկերը, որը նկարել էր Նյու-Յորքի մի հայ նկարիչ։ Երեկոյան ժամը 9-ին պարոն և տիկին Այվազովսկիները մտել են ժողովի դահլիճը դոկտոր Ավագյանի առաջնորդությամբ և ընդունվել ծափահարություններով ու կեցցեներով։ Ժողովում առաջինը ելույթ է ունեցել դոկտոր Ալթունյանը, որը ներբողել է հայ

ազգի հանճարները, տիկին Հակոբյանը դաշնամուրի նվագակցությամբ երգել է «Միծեռնակ» երգը, օրիորդ Այվազյանը բարի գալուստի ճառ է արտասանել։ Հովհ. Այվազովսկին ոտքի ելնելով, իրեն հղած այդ ընդունելության համար, իր շնորհակալությունն է հայտնել Ղրիմի հայերին բարբառով։ Ժողովից հետո հռչակավոր ծովանկարիչը բոլոր հանդիսականների ձեռքը սեղմելով ու հրաժեշտ տալով՝ մեկնել է իր տիկնոջ հետ»[1]։

Այս և նմանօրինակ երեկույթներն ու ցերեկույթները Ամերիկյան տարբեր քաղաքների հայկական գաղթօջախներում, ուր արտասանվում են ճառեր հայ ժողովրդի պատմության և մշակույթի մասին, կատարվում են «Միծեռնակ» և հայկական այլ երգեր ու ազգային պարեղանակներ, խորապես նպաստում են ինչպես նկարչի, նույնպես և ամերիկահայերի հայրենասիրական զգացումների ուժեղացմանը, ազգային ինքնագիտակցության ամրապնդմանը ու ազգահավաքման մեծ գործին Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Հովհ. Այվազովսկին ու Աննան խորապես ուրախ էին դրա համար և սիրով ընդառաջում էին նման ձեռնարկումներին, այցելության գնալով նույնիսկ առանձին անձանց։

1893 թ. հունվարին Այվազովսկիները շարունակում են շրջագայել Ամերիկայում։ Ֆիլադելֆիա մեկնելուց առաջ, հունվարի 5-ին Նյու-Յորքից, հյուրանոցի բլանկի վրա գրած մի նամակում նա իր կոմիսիոներ Ի. Ֆեոդորովիչին հայտնում է, որ ինքը երկու մեծ պատկեր է ուղարկել Պետերբուրգ. «Իմ նկարներից մի քանիսը վաճառվել են, մնացածները ցուցադրվելու են Վաշինգտոնում և հետո Բոստոնում։ Մենք Վաշինգտոնից այստեղ վերադառնալուց հետո կմեկնենք Եվրոպա։ Կինս սարսափելի տխրում է,— շարունակում է նկարիչը,— դե ես նույնպես, երբ զբաղված էի, այդ չէի զգում, բայց այժմ ուրախ կլինեմ Ռուսաստան վերադառնալու համար»։ Նույն նամակում նա արտահայտում է իր անհանգստությունը Պետերբուրգում ունեցած գործերի համար. «Ինձ

---

11 «Արձագանք» 1892, № 152։ Տե՛ս նաև Մ. Սարգսյան, «Ծովանկարիչ Հովհ. Այվազովսկին Ամերիկայում», «Հայկական արվեստ», 1934, հ. 2, էջ 122։

հարկավոր է լինել Պետերբուրգում,— գրում է նկարիչը նամակի վերջում,— դրա համար էլ երեք օր Փարիզում մնալուց հետո կուղևորվենք անպայման Պետերբուրգ։ ...Հենց որ ստանաք իմ ուղարկած երկու պատկերները և Գոսսեն կըպատրաստի դրանց շրջանակները, դուք դրանք ցուցադրեք, առանց ինձ սպասելու։ Ես ենթադրում եմ, որ եթե Աստված օգնի, մենք պետք է որ Պետերբուրգում լինենք մոտավորապես հունվարի 25-ին»[1]։

Դրանից հետո Այվազովսկիները մեկնում են Ֆիլադելֆիա, իսկ նկարչի պատկերները ցուցադրվում են Վաշինգտոնի Իրլ-Ֆիլադելֆիա պատկերասրահում, ապա՝ Բոստոն քաղաքում։ Վերադառնալով Նյու-Յորք՝ Այվազովսկիները հունվարի երկրորդ կեսում մեկնում են Ամերիկայից։ Նրանք այլևս չեն սպասում Չիկագոյի համաշխարհային գեղարվեստական ցուցահանդեսի բացմանը, որը պիտի տեղի ունենար 1893 թ. մարտ ամսին։ Խիստ հոգնած լինելը, Պետերբուրգում ունեցած անհետաձգելի գործերը, հատկապես այստեղ բացվելիք իր երկու պատկերների ցուցահանդեսի կազմակերպման գործը ստիպում են նկարչին շտապ մեկնել Հայրենիք։

«ԱՏԼԱՆՏՅԱՆ ՕՎԿԻԱՆՈՍԸ»

Հովհ. Այվազովսկին և նրա կինը՝ Աննան, Ամերիկայից Եվրոպա են մեկնում օվկիանոսյան մեծ նավով, որը ճանապարհին՝ Ատլանտյան օվկիանոսում ահեղ փոթորկի է հանդիպում։ Այդ ժամանակ ինչ որ տեղի է ունենում այստեղ՝ չոգենավում, բնորոշ է ծովամնկարչի ու նրա ընտանիքի ռոմանտիկ կյանքի համար։ Փոթորիկից ալեկոծվող օվկիանոսում, հսկայական ալիքների ուժով տաշեղի պես օրորվում է չոգենավը։ Այն պահին, երբ համարյա բոլոր ուղևորները սարսափից պատսպարվել էին իրենց խցիկներում, նկարիչը, Աննան և մի քանի խիզախներ մնում են տախտակամածի վրա և հիանում մոլեգնող քամու և ալեկոծման ահեղ տեսարանով։ Հաջորդ օրը, երբ դադարում է փոթորիկը և խաղաղվում է օվկիանոսը, չոգենավի հանգիստ ընթացքի ժամանակ,

[1] *Տրետյակովյան պատկերասրահի արխիվ։*

նկարիչը նստում է տախտակամածի վրա դրված նկարակալը (մոլբերտ) առաջ և ուշադրության ներկայությամբ մեծ կտավի վրա սկսում է նկարել նախորդ օրվա տեսարանը։ Դա զարմանք և հիացմունք է պատճառում բոլորին։ Այդ պատկերն ավարտվում է մինչև Եվրոպայի ափերին հասնելը։ Ավարտելով այդ ստեղծագործությունը՝ նկարիչը այն անվանում է «Ատլանտյան օվկիանոս»։ Նկարը անմիջապես տեղափոխվում է Բեռլին և ցուցադրվում այնտեղ հենց նոր բացվող ցուցահանդեսում։

«Ատլանտյան օվկիանոս» մեծակտավ պատկերը և դրա ստեղծման պատմությունը լայն արձագանք է գտնում աշխարհում։ Եվրոպական համարյա բոլոր երկրների մայրաքաղաքային թերթերը, այդ թվում ռուսական և հայկական մամուլը, գրում են այդ մասին։ Ռուսական «Սեվեր» թերթը մեծարանքով է արտահայտվում ծերունազարդ նկարչի համարձակության, նրա աշխատասիրության և բարձրարվեստ գործերի մասին։ «Ամերիկա կատարած նկարչի վերջին ճանապարհորդությունը դա հաստատեց ապշեցուցիչ հստակությամբ,— գրում է այդ թերթը։— օվկիանոսի հզոր լայնությունը նրա վրա ուժեղ տպավորություն է թողնում և այդ տպավորությունը հենց նույն տեղում՝ շոգենավի տախտակամածի վրա, արտահայտվում է մեծակտավ պատկերի մեջ»։ Հայկական «Տարազ» շաբաթաթերթի խմբագրությունը պատվիրում է դրա կլիշեն Բեռլինում և այդ պատկերի լուսանկարը երկու էջի վրա տպագրում է 1894 թ. ապրիլյան համարում։ Հաղորդագրություն է տպագրում նաև «Արաքս» տարեգիրքը։

«Ատլանտյան օվկիանոսը» իսկապես, ուշագրավ ստեղծագործություն է, ինչպես նկարչի բազմահազար նկարների շարքում, նույնպես և հայ կերպարվեստի պատմության մեջ։ Դա նոր թեմա էր նաև նկարչի ստեղծագործության մեջ։ Կտավը ներկայացնում է լայն ու անծայրածիր ջրային տարածություն։ Մինչև այժմ նկարած փոթորիկի և ալեկոծման տեսարաններից սա տարբերվում է իր հոյակապությամբ, մասշտաբային ընդգրկումով ու կոմպոզիցիոն նոր լուծումով։

«Ատլանտյան օվկիանոսը» միաժամանակ ինքնակենսագրական բովանդակություն ունի։ Դժբախտաբար, այդ բանը

վրիպել է նկարչի կենսագիրների ուշադրությունից։ Ս. Բարսամովը նշել է միայն, որ «տախտակամածի անկյունում պատկերված են մի խումբ ուղևորներ՝ փոքրորիկը դիտելիս»[1]։ Մինչդեռ այս ստեղծագործության մեջ նկարիչը պատկերել է իրեն և իր կնոջը՝ Աննային, մի քանի նավաստիների և ուղևորների հետ։ Դա շատ կարևոր է նկարչին հասկանալու և նրա այս աշխատանքը ճիշտ ընկալելու համար, մանավանդ, որ Աննա Բուռնազյանը, որը մինչև 1945 թ. ապրել է Թեոդոսիայում, այդ մասին պատմել է բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվել են իրենց կյանքով։

Ձգտելով ճշգրիտ ու համոզիչ պատկերել օվկիանոսային նոր բնության առանձնահատկությունները, նկարիչը այստեղ զգալիորեն հաղթահարել է անցյալ գործերում նկատվող տրպավորչականության տարրերը և խորացրել ռեալիզմը իր արվեստի մեջ, ուժեղացնելով ծովանկարչության ճանաչողական հատկությունը։

«Ատլանտյան օվկիանոսը» պատկերով ավարտվում է մեծ նկարչի ամերիկյան ճանապարհորդության պատմությունը։ Այդ ճանապարհորդությունը որոշակի հետք է թողնում նկարչի ստեղծագործական կյանքում։ Նա տեսավ և մոտիկից ճանաչեց Ամերիկան, նկարեց բնության նոր տեսարաններ, հարըստացնելով ինչպես իր, նույնպես և հայ և ռուս արվեստը բարձրարվեստ նոր ստեղծագործություններով։ Ամերիկա կատարած Արվադովսկու ճանապարհորդությունը և այնտեղ բացած ցուցահանդեսները միաժամանակ կարևոր նշանակություն ունեցան Միացյալ Նահանգների տարբեր քաղաքներում ցրված, առանձին համայնքներ և մշակութային օջախներ կազմած հայերի համախմբմանը, նրանց հայրենասիրական զգացումների ուժեղացմանը և, որ կարևոր է, ազգային ինքնագիտակցության ամմանը։ Այդ է հաստատում նաև այն փաստը, որ նկարչի մահից հետո ևս՝ 1900-ական թվականների սկզբներին, ամերիկահայ մամուլը, ինչպես և հայերի հրատարակած անգլերեն թերթերն ու ամսագրերը շարունակում են պարբերաբար գրել ու հրապարակել հոդվածներ և լուսանկարներ հայազգի նկարչի մասին։ Նյու-Յոր-

---

1 Н. Барсамов, И. К. Айвазовский, 1962, էջ 135։

քում լույս տեսնող «The nev Armenia» ամսագիրը 1915 թ. սկսած բազմաթիվ լուսանկարներ և հաղորդագրություններ պարբերաբար տպագրելուց բացի, 1929 թ. հրատարակում է Հովհ. Թումանյանի «Այվազովսկու նկարի առաջ» հայտնի բանաստեղծությունը ամերիկուհի Ալիս Շթոուն Բրեքուելի թարգմանությամբ[1]։

Ալիս Շթոուն Բրեքուելը անծանոթ անձ չէր։ Հովհ. Այվազովսկու այցը Ամերիկա լայն արձագանք է գտնում ոչ միայն ամերիկահայ գաղթօջախներում, այլև լայն հետաքրքրություն է ստեղծում ամերիկյան առաջադեմ հասարակության մեջ հայերի և Հայաստանի նկատմամբ։ Մենք կարծում ենք, որ պատահական չէ, որ հենց այդ տարում՝ 1893 թ., այստեղ՝ Ամերիկայում, հիմնադրվում է «Հայաստանի բարեկամներ» ընկերությունը, որի քարտուղարն է ընտրվում ամերիկացի կին գործիչ, լրագրող ու թարգմանիչ Ալիս Շթոուն Բրեքուելը։ Լինելով միաժամանակ «Կանանց հանդեսի» հրատարակիչն ու «Ամերիկացի կանանց ընտրական իրավունքի ասոցիացիայի» քարտուղարը Ալիս Շթոուն Բլեքուելը հասարակական լայն գործունեություն է ծավալում։ Ամերիկա կատարած Հովհ. Այվազովսկու այցից 3 տարի հետո նա թարգմանում և 1896 թ. Բոստոնում հրատարակում է «Հայկական բանաստեղծություններ» անգլերեն ժողովածուն ընդարձակ առաջաբանով, որը 1917 թ. վերահրատարակվում է լրացված Գր. Նարեկացու, Շնորհալու, Սայաթ-Նովայի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի և Ջիվանու ստեղծագործություններով։

ՆԿԱՐՉԻ ՈՂՋՈՒՅՆԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

1893 թ. հունվարի վերջերին Այվազովսկիները վերադառնում են Պետերբուրգ։ Նկարիչն անմիջապես զբաղվում է նոր պատկերների ցուցահանդես կազմակերպելու գործով։ Իսկապես, երկու ստեղծագործություններից կազմված այդ

1 Մ. Սարգսյան, Ծովանկարիչ Հովհ. Այվազովսկին Ամերիկայում, տե՛ս «Հայկական արվեստ», 1984, էջ 123—124։

ցուցահանդեսը բացվում է փետրվարի 13-ին, Նիկոլաևյան նախկին պալատում։ Այստեղ նկարիչը ցուցադրում է Ամերիկայում նկարած երկու մեծադիր պատկեր՝ «Նիագարայի ջրվեժը» և «Ատլանտյան օվկիանոսը»։ Դա մի տեսակ ինքնահաշվետվություն էր հասարակության առաջ Ամերիկա կատարած հեռավոր ճանապարհորդության արդյունքների մասին, և դա արվեստասեր հասարակությանը, ինչպես և գեղարվեստի ակադեմիան ընդունում են մեծ գոհունակությամբ։

Այդ ժամանակ նկարիչը լուր է ստանում, որ Հայաստանում ամենայն հայոց կաթողիկոս է ընտրվել Մկրտիչ Խրիմյանը՝ Հայրիկը։ Այդ ընտրությանը մասնակցել էր և Ղրիմի հայությունը իր ներկայացուցիչների միջոցով։ Այվազովսկին անտարբեր չի եղել այդ ընտրության նկատմամբ։ Եվ ահա, օգոստոսի 24-ին հայերեն գրած նամակով Թեոդոսիայից նա շնորհավորում է նորընտիր կաթողիկոսին. «Լուր ընտրութեան վեհափառութեանդ յաթոռս սրբոյն Լուսավորչի հրճուանք և ցնծութեամբ լեցուցին սիրտ իմ և բոլոր աշխարհի ազգայնոցս, որոնց համակրանքը և սերը ի վաղուց հետէ ըստ արժանւոյն վայելած է սրբութիւնդ բազմամեայ և բազմարդիւն գործունէութեամբ յօգուտ ազգիս և եկեղեցւոյ։ Մեր Պետրապիոյ վիճակը առաջինն է Ռուսաստանի հողին վրայ, որ բարեբախտութիւն ունի շնորհավորելու զսուրբ գալուստն վեհափառութեանդ. ցաւելով կցաւիմ, որ հասակս և ըստ մասին առողջութիւնս չեն ներեր ինձ անձամբ փութալ ընդառաջ Ձեր վասն շնորհակալութեան և մանաւանդ քաղցր տեսութեան սրբազնադուին հօրդ, որ գուցե աստուած արժանի արասցէ յայլ դեպ ժամանակի։ Իսկ այժմ կրկին շնորհավորելով զգալուստ շնորհաբեր վեհափառութեանդ ի բոլոր սրտէ և ջերմ զգացմամբ կմաղթեմ յԱրարչէն յաւիտեան ճանապարհորդութիւն ի սուրբ էջմիածին և երկար կեանք և մխիթարութիւն և ի փառս ազգիս հայոց։ Յարազատ որդի և ամենախոնարհ ծառա, Յովհաննէս Այվազովսկի»[1]։

Այվազովսկին մի քանի ամիս հետո՝ դեկտեմբերին, նորից հայերեն գրած նամակով շնորհավորում է Մկրտիչ Խրիմյանին նոր տարվա առիթով և սիրով, ջերմեռանդությամբ հրավե-

1 «Документы...», էջ 265-266։

րում է նրան Ղրիմ, տեղի հայության կյանքին և վիճակին մոտիկից ծանոթանալու համար։ «Առաքելաշնորհ Հայրապետ,— գրում է նկարիչը,— Ամենախորին յարգանօք և յերիս շնորհակալու մտօք ընկալեալ զկոնդակ օրհնութեան սրբութեանդ, փութամ շնորհաւորել զառաջիկայ տարեմուտ 1894 ամի, մաղթելով երկար կեանս և կատարեալ առողջութիւն վեհիդ, յուրախութիւն և ի պարծանս ազգիս Հայոց, որոյ երախտագիտութիւն և սէր որդիական վայելեք ի հերուն հետէ փոխարեն բազմամեայ հայրախնամ գործովդ, ի փառս նոյն ազգիս և եկեղեցւոյ։ Ուստի մեծ է, Վեհափառ տէր, փափաք ժողովրդեանդ աչօք տեսնել զհովուապետն իւր, թէ՛ ի հեռաւոր վիճակս և թէ՛ ի մօտակայս, ի թիւս առաջնոյն գտանիմք և մեք, յուսալով զի վեհափառութեանդ արժանացուսցն և մեզ այցելութեան Ձերոյ, յանհնարին ուրախութիւն և ի միխիթարութիւն սրտից մերոյ պանդրխտացս»[1]։

Նկարչի այս հրավերը ունենում է իր դրական հետևանքը։ Երկու տարի հետո՝ 1895 թ. ապրիլին, ինչպես ցույց կտանք, ամենայն Հայոց կաթողիկոսն այցելում է Ղրիմ և Նոր Նախիջևան քաղաքը, մոտիկից ծանոթանալով ժողովրդի կյանքին։

Այս հասարակական եռանդուն գործունեության հետ Այվազովսկին միաժամանակ ստեղծագործում է նոր պատկերներ։ Հետաքրքրական է նկատել, որ դրանցից մեկի հատկապես անունը ճշտելու վրա, որքան էլ տարօրինակ է, շատ է տանջվում։ Զգտնելով իր նոր նկարին համապատասխան վերնագիր, նա ստիպված Թեոդոսիայից դիմում է Պետերբուրգ, իր բարեկամ Ա. Ս. Սուվորինին, խնդրելով տալ իր նոր նկարած պատկերին վերնագիր։ Ահա այդ նամակը. «Ինչպես Հայտնի է Ձեզ,— գրում է նկարիչը,— ես մշտապես աշխատում եմ և ամառվա ընթացքում նկարել եմ շատ պատկերներ, որոնց մի մասն ուղարկել եմ Պետերբուրգ։ Դրանց թվում կա մի մեծ նկար, որի լուսանկարը ուղարկում եմ սրա հետ։ Բովանդակությունը ֆանտաստիկական է, ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Նույնիսկ հատուկ սրբագրքերում չգտա համապատասխան անուն։ Դրա համար ուղար-

1 «Документы...», էջ 266—267։

կում եմ լուսանկարը, որպեսզի դուք կարողանաք երկու-երեք բառերով տալ անվանում, եթե դուք ճիշտ եք գտնում «Տիեզերք և Մոլորակ» անունը, ինչպես գրվել է «Նովոյե վրեմիայի» հաղորդագրության մեջ, ապա այդպես էլ կթողնենք. ... Այդ պատկերը, 12 այլ աշխատանքների հետ, ուղարկելու եմ Պիտեր. և դրանք պետք է ցուցադրվեն փետրվարի ընթացքում Նիկոլաևյան պալատում[1]*, Թե ինչ պատասխան է եղել, հայտնի չէ, բայց Այվազովսկու ստեղծագործությունների ջարդում այդպիսի անվանը պատկեր ժամանակին եղել է, նույնիսկ ցուցադրվել է 1894 թ. ցուցահանդեսում, բայց մեզ չի հասել։*

«ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ»

Մեծ ծովանկարչի կյանքի վերջին տարիներին ստեղծված այդ, ինչպես և հետագայում նկարած դիցաբանական սյուժեներով մեծակտավ պատկերները վկայում են այն մասին, որ Այվազովսկին այս շրջանում ձգտում է ընդհանրացման, լայն ընդգրկումների և, որ կարևոր է, գեղարվեստական նոր միջոցներով հասնել իրականության ճշմարտացի պատկերմանը։

Թերևս այդ կողմը նկատի ուներ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որը «Մուրճ» ամսագրում 1893 թ. հրապարակում է «Այվազովսկու նկարի առջև» գեղեցիկ բանաստեղծությունը, որը չափազանց սեղմ միջոցներով տալիս է ալեկոծ ծովը հանճարեղ պատկերող նկարչի գեղարվեստական կերպարը.

«Ելած՝ օվկիանի անդունդ ալիքներ,
Ծանր հորձանքով զարկելով դեպ վեր,
Լեռնանում էին, դառնալով ահեղ,
Եվ մրրիկն ուժգին շնչում էր այնտեղ
Անեզր ու անվերջ
Տարածության մեջ։
«Կանգնեցե՛ք», գոչեց վրձինը ձեռքին,

---

[1] «Документы...», էջ 268։

Կախարդ ծերունին հուզված տարերքին.
Եվ լուռ, հնազանդ հանճարի ձայնին,
Մութ ալիքները, փոթորկի ժամին,
Կտավի վրա
Կանգնած են ահա»[1],

Այս բանաստեղծությունը ցույց է տալիս, որ Թումանյանը ոչ միայն տեսել է Այվազովսկու ծովանկարները, այլև խորապես հասկացել, հիացել, ոգևորվել է նրանցով և ըստ արժանվույն բարձր գնահատել նկարչին։ Դա, միաժամանակ, վկայում է, որ բանաստեղծը ծովանկարչին համարում է ռեալիստ նկարիչ, ծովային ահեղ բնությունը և նրա տարերքը ճշմարիտ ու համոզիչ պատկերող մեծ արվեստագետ։ Իրականության գեղարվեստական ճշմարիտ պատկերումը միշտ էլ եղել է հայ բանաստեղծի դավանանքը, և նա հենց այդ տեսանկյունից էլ անդրադառնալով Այվազովսկուն, նրան անվանում է հանճարեղ նկարիչ։

Ուկրաինացի ականավոր բանաստեղծ Պավլո Տիչինան, որը թարգմանել է այդ բանաստեղծությունը, դրա մեջ ավելի լայն ընհանրացում է տեսնում։ 1939 թ. գրած «Հովհաննես Թումանյան» հոդվածում, խոսելով 1890-ական թվականների կեսերին տեղի ունեցած հայկական ջարդերի ժամանակ գրված այդ բանաստեղծության գաղափարական բովանդակության մասին, նկատում է. «Իր ժողովրդի բանաստեղծ Հովհ. Թումանյանը, վերջնականապես զայրացած հայերի այդպիսի աննպատակահարմար հետապնդումից, անմեղ բանաստեղծության քողի տակ, որը նույնպես անմեղ վերնագիր ունի՝ «Այվազովսկու նկարի առջև», իր ահեղ խոսքն է նետում այն սև ուժին, բավակա՞ն է եղեռն, բավակա՞ն է ծաղրն ու ծանակը, և լացն կոծը, «էյ, կանգնեցե՛ք, ուշքի՛ եկեք»։ Ապա մեջ բերելով իր թարգմանությունը և նշելով 1915 թ. մեծ եղեռնը՝ գրում է. «Եվ իսկապես։ Ալեկոծված արյունոտ օվկիանոսը կարծես իրոք մի պահ հանդարտվեց ու խաղաղվեց։ Բայց... մի պահ»[2]։

---

1 *Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, 1950, էջ 107։*

2 *Պ. Տիչինան և Մ. Ռիլսկին Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, 1968, էջ 40։*

1894 թ. փետրվարին Պետերբուրգի Նիկոլաևյան նախկին պալատում բացվում է Այվազովսկու հին և նոր ստեղծագործությունների ցուցահանդես, որտեղ ցուցադրվում են նկարչի 14 պատկերներ։ Հրատարակիչ և լուսանկարիչ Գ. Ա. Բուլգակովը լուսանկարում է բոլոր ստեղծագործությունները և շուտով հրատարակում մի առանձին ալբոմով։

Թեև մայրաքաղաքի արվեստասեր հասարակությունը տեսել էր այստեղ ցուցադրված պատկերների մի մասը նախորդ տարիներին, սակայն ցուցահանդեսը, առաջվա պես, շատ այցելողներ է ունենում։ Գնվում է մի քանի պատկեր։ Նույն ժամանակ նա նկարում է «Թեոդոսիայի տոնահանդեսը» նվիրված Ղրիմում ամենամեծ առևտրական նավահանգստի կառուցումը ավարտելու օրվան։ Նկարիչը երկար տարիներ չատ չանք էր թափել մարդկանց, հատկապես ղեկավար անձանց, համոզելու Թեոդոսիայում առևտրական նավակայան կառուցելու կարևորության մասին։ Եվ ահա, նա տեսնում է իր աչքերի առաջ այդ նավակայանն արդեն կառուցված և ավարտված, իսկ բնակիչներին՝ տոնական տրամադրության։ Այդ պատկերը նա նվիրում է Թեոդոսիայի քաղաքային վարչությանը։ 1894 թ. հուլիսին տոնվում է նաև Այվազովսկու ծննդյան տարեդարձը։ Նկարիչը էջմիածնից՝ Ամենայն հայոց կաթողիկոսի անունից, հեռագիր է ստանում, որով շնորհավորում է նրա ծննդյան տարեդարձը։ Հաջորդ օրը՝ հուլիսի 18-ին, Հին Ղրիմից Այվազովսկին հեռագիր է ուղարկում էջմիածին. «Խորապես զգացված եմ նրա սրբազանության բարձր ուշադրությունից։ Խնդրում եմ հաղորդել սրտագին շնորհակալություն շնորհավորանքի համար»։

Հովհ. Այվազովսկին շնորհակալ էր և հայ գրողներից, որոնցից մի քանիսը բանաստեղծություններ, արձակ էջեր և հոդվածներ են հրապարակում իր ստեղծագործությունների մասին։ Անցյալ տարի, ինչպես նշել ենք, հրապարակվել էր Հովհ. Թումանյանի «Այվազովսկու նկարի առջև» բանաստեղծությունը, որի մասին, կարծում ենք, տեղյակ էր նկարիչը։ Այս տարի «Հորիզոն» օրաթերթում, որը ամենամատչելի սայական պարբերականներից մեկն էր 90-ական թվականների հայ իրականության մեջ, հրապարակվում է Հովհ. Թու-

մանյանի մի նոր բանաստեղծությունը ևս, որը հնդինակը անվանել է «Սև ծովի ափերը» պատկերի առաջին բանաստեղծը, ոգեշնչված մեծ ծովանկարչի ծովափնյա ժայռերի պատկերներով, վերհիշում է իր հայրենի երկիրը. «Ժայռերը իմ հայրենիքի» և իր անցած կյանքի գեղեցիկ վայրերը...

Ես տեսա հեռվ
Տաղանդի մի գործ՝
Անհագուր Պոնտոսի
Ափերն ալեկոծ.
Տեսա, հիացա,
Եվ սիրտս լցվեց,
Եվ իրա մեջ՝
Որպես վանդակից
Արծիվ գերի,
Մի կարոտալի
Հառաչանք թռավ,
Շուխ դարձավ կորավ
Դեպի ժայռերը
Իմ հայրենիքի,
Դեպի վայրերը
Իմ անցած կյանքի»[1]:

Այս գողտրիկ բանաստեղծությունը, իր քնարերգական շնչով հանդերձ, խորապես հայրենասիրական բովանդակություն ունի: Տեսնելով անհագուր Պոնտոսի (Սև ծովի) ժայռոտ ափերին զարկվող ալեկոծ ծովի հանճարեղ պատկերը (պատկեռնները) բանաստեղծն ապրում է մի քաղցր վերհուշ՝ հայրենի երկրի կարոտի զգացում, որն այստեղ ընդհանրացված լինելով դարձել է համահնչյուն բոլոր այն ընթերցողների ընկալմանը, ովքեր գեթ մի անգամ տեսել են մեծ ծովանկարչի ստեղծագործություններ: Դա նշանակում է, որ Հովհ. Այվազովսկու ծովանկարները, մանավանդ ծովափնյա բնության ասպարանները, դիտողի մեջ արթնացնում են հարազատ հայրենի բնության զգացում: Դրանք հարազատ ու մոտ են, սիրելի ու գեղեցիկ, ինչպես հայրենիքը և նրա գեղատեսիլ բնությունը:

Այս տարվա ընթացքում նկարչի կյանքում տեղի է ունենում մի ուշագրավ անցք ևս: Նա, որ ընդհանրապես խուսա-

---

1 Հովհ. Թումանյան, երկերի ժողովածու, հ. 1, 1950, էջ 117:

փում էր այս կամ այն ստեղծագործական կազմակերպության անդամ լինել, հրավիրվում է «Գեղարվեստական ստեղծագործությունների ցուցահանդեսների պետերբուրգյան ընկերության» կողմից և դառնալով այդ ընկերության անդամ ցուցահանդեսներ է կազմակերպում դրա օգտին։ Այդ մասին է վկայում պրոֆ. Գ. Գ. Ձիստյակովի նամակը նկարիչ Վ. Դ. Գոլենովին. «Ես Գեղարվեստական ստեղծագործությունների ցուցահանդեսների ընկերության» անդամ եմ,— գրում է Գ. Գ. Ձիստյակովը։ — Այդ ընկերության նպատակն է կապիտալ [ստեղծել] ռուսական արվեստի առաջադիմության ապահովում ապագայում։ Այվազովսկին հրավիրված լինելով այդ ընկերության մեջ, մեծ շնորհակալությամբ ընդունվեց և արդեն Ընկերության օգտին ցուցահանդեսներ է կազմակերպում։ Նրա մոտ կա նաև իդեա՝ Ղրիմում կառուցել պավիլիոն նկարիչների համար, նույնպես Ընկերության անունով։ Ահա, տեսնո՞ւմ եք ինչ փառավոր պատանի է երևան եկել։ Իսկ գլխավորը՝ սկսվել է «Ա» տառից»[1]։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ

Փետրվարի վերջերին Այվազովսկին մեկնում է Պետերբուրգ։ Այստեղ, իր գործերով զբաղվելու ընթացքում տեղեկանալով, որ ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը գալու է մայրաքաղաք, իսկ Ճանապարհին մի քանի օրով իջևանելու է Նոր Նախիջևան քաղաքում, Այվազովսկին գրում է նամակ, որով ցանկություն է հայտնում տեսակցություն ունենալ նրա հետ։ «Վեհափառ Տէր, ս. Հայրապետ ազգիս հայոց,— գրում է նա հայերեն մարտի 20-ին,— Ձերոյդ սրբութեան բազմավաստակ կենաց համաշխարհայ համբաւը և մեծամեծ գործերը, որ կատարել եք յօգուտ ազգին, շատուց է վեր գրավում են իմ սիրտս, ուստի Ձեր սրբութեան աջը համբուրելը միշտ եղած է իմ ամենամեծ փափաքս։ Իմանալով ցնծութեամբ որ Ձեր սրբութիւնը ժամանակաւոր եկած եք

[1] **Е. В. Сахарова, В. Д. Поленов.** Письма. 1950. ст. 107—108.

Նախիջևան քաղաքը ես մտադիր եմ անձամբ ներկայանալու Ձեզ։ Բայց ստիպված լինելով անձնական գործերուս պահանջովը այսօր Թէոդոսիայ մեկնելու, ես կարող եմ Նախիջևան հասնել միայն ապրիլի տասին յուսալով, որ Ձեր սըրբութիւնը դեռ այնտեղ կգտնեմ»[1]։

1895 թ. ապրիլի 10-ին Նոր Նախիջևանում նրանք հանդիպում են, ողջագուրվում և բարեկամություն հաստատում միմյանց միջև։ Հանդիպման հենց առաջին օրը նկարիչը նրան նվիրում է իր ստեղծագործություններից մեկը՝ մի ծովանկար, որը Խրիմյանն ընդունում է մեծ գոհունակությամբ։ Այնուհետև նրանք, չորս օր շարունակ, միասին են անցկացնում։ Նկարիչ Այվազովսկին և կաթողիկոս Խրիմյանն իր շքախմբով այցելում են հայոց եկեղեցի, լսում են հայկական ժամերգություն, լինում են դպրոցներում, հայոց կուլտուր-լուսավորական հաստատություններում և քաղաքագլուխ Պալապանյանի կազմակերպած հանդիսավոր ընդունելությանը։ Այդ օրերին նկարիչը մի քանի պատկեր է նվիրում հայոց ուսումնական և հոգևոր հիմնարկներին, մի պատկեր էլ՝ քաղաքագլուխ Պալապանյանին, քաղաքային դումայի տրամադրության տակ է դնում «Վեզուվ» պատկերը, որպեսզի այն վիճակախաղ դեվի և ստացված գումարը բաժանվի Նոր Նախիջևան քաղաքի չքավորներին։ Նա խոստանում է Տագանրոգ քաղաքի նորակառույց հայոց եկեղեցու համար նկարել Գրիգոր Լուսավորչի պատկերը։ «Մենք 4 օր մնացինք Նախիջևանում, այժմ վերադառնում ենք տուն։ Մեզ հիանալի ընդունեցին, մի քանի անգամ եղա պատրիարքի մոտ, նույնիսկ ճաշեցինք միասին ժողովրդի հետ»,— գրում է նկարիչը՝ ավելացնելով, որ դեպի հյուսիս [Պետերբուրգ] մեկնելով պատրիարքը «ենթադրում է, որ հայկական հարցը և ընդհանրապես Եվրոպայում ամեն ինչ կխաղաղվի»։[2] Այդ ամբողջ ժամանակամիջոցում նկարիչը իր կնոջ հետ իջևանել էր Ղարիբյանների առանձնատանը։ Ապրիլի 13-ին կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին դնդի Պետերբուրգ ճանապարհելուց հետո, Այվազովսկիները վերադառնում են Թեոդոսիա։ Մեկնելուց առաջ կաթողիկոսն ասում

---

1 «Документы...», էջ 269։

2 «Документы...», էջ 270—271։

է նկարիչին, որ Պետերբուրգից վերադառնալիս կայցելի Թեոդոսիա և տեսակցություն կունենա նկարչի, նույնպես և ղրիմահայության հետ։

Նոր Նախիջևանում Խրիմյանին այցելող բազմաթիվ անձանց հետ Այվազովսկին հանդիպում է նաև բժիշկներ Հովհաննես Բերբերյանին և Անանիա Սուլթան-Շահինի։ Հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ, գրող ու հրապարակախոս Միքայել Նալբանդյանի այդ երկու հավատարիմ ընկերներին նկարիչը 1850-ական թվականներից ծանոթ էր, նրանց հյուրասիրել էր իր Շախ-մամայ ամառանոցային տանը և, նույնիսկ, ինչպես վկայում է Ռուբեն Բերբերյանը՝ Հովհ. Բերբերյանի որդին, «նկարել է այդ հյուրերին իր պարտեզի ծառի տակ նստած ու նկարն էլ նրանց նվիրել»[1]։ Սակայն Միքայել Նալբանդյանի ձերբակալությունից հետո, կասկածելով նկարչի եղբորը՝ Գաբրիելին, նրանք՝ այդ երկու բժիշկները, ինչպես և հասարակության մի քանի այլ անդամներ, Մ. Նալբանդյանի ձերբակալության հանգամանքներին ստույգ ծանոթ չլինելով, իրենց հեռու են պահում Այվազովսկիներից։ «Բարեկամական հարաբերությունները խզվեցին և ահա քառորդ դար է, որ նկարիչը և այդ երկու բժիշկներն իրարից խուսափում են ու չեն տեսնվում իրար հետ»,— գրում է բժիշկ Հովհաննեսի որդի Ռ. Բերբերյանը[2]։

Դա ցավ է պատճառել նկարչին։ Խորապես հուզված ու ցավատանջ՝ մեծ արվեստագետը երկար տարիներ չարշարվելուց հետո, դիմում է թագավոր-կայսրին և նրա կարգադրությամբ ներքին գործերի մինիստրությունը թույլատրում է նկարչին նայել «քաղաքական հանցավորների» արխիվը, մասնավորապես «Մ. Նալբանդյանի և արտասահմանյան պրոպագանդիստների գործը»։ Մի քանի ամսվա ընթացքում, իսկ նկարչին թույլատրվում էր միայն շաբաթը մեկ անգամ երկու ժամով նայել արխիվը, նկարիչը ծանոթանում է Նալբանդյանին մեղադրող բոլոր փաստաթղթերին*, բայց ոչ մի

---

1 «Անահիտ», 1932, № 1—2։

2 Նույն տեղ։

* Մ. Նալբանդյանի ձերբակալության բոլոր փաստաթղթերը հրապարակվել են խորհրդային շրջանում։

Նյութ չի պտնում իր եղբոր կողմից գրված։ Հոգեպես թևթևացած՝ նա ստորագրում է մի գրություն, որով պարտավորվում է իր կարդացած և ծանոթացած փաստաթղթերի մասին լռել։

Ով ահա, այժմ՝ 1895 թվականին Այվազովսկին, օգտվելով առիթից, որ գտնվում է Նոր Նախիջևանում, ուր դեռ ապրում են Մ. Նալբանդյանի ընկերներն ու բարեկամները, հարկ է համարում, վերջապես, տեղյակ պահել այդ մասին և հասարակությանը այսուհետև զերծ պահել թյուրիմացություններից։

«Նոր Նախիջևան գալու հաջորդ օրը,— գրում է Հ. Բերբերյանը իր մորեղբոր հիշատակարանի հիման վրա,— հայ նկարիչը այցելեց բժիշկ Հովհաննես Բերբերյանի ընտանիքը, ու երկու ժամ չանցած խնդրեց առանձնանալ երկու բժիշկների հետ կողքի սենյակում, մի շատ կարևոր խնդրի առթիվ»[1]։

Պատահական չէ, որ նկարիչն ընտրել էր հենց այդ բժիշկներին «շատ կարևոր խնդրի» վերաբերյալ տեղյակ պահելու համար։ Հովհ. Բերբերյանը և Ա. Սուլթան-Շահը Նալբանդյանի վաղեմի ընկերներն էին, որոնք, համախմբված «Հյուսիսափայլի» շուրջը, աշխատակցում էին այդ ամսագրին։ Դեռևս 1861 թ. Նալբանդյանի հետ նրանք Փարիզում ուրախ օրեր էին անցկացրել, Հովհ. Բերբերյանը որպես «վկա» ներկա է եղել Նալբանդյանի տան խուզարկության ժամանակ, իսկ հետո՝ 1863 թ. երկու բժիշկներն այցելել էին Նալբանդյանին Պետրոպավլովսկու բանտում։ Անանիա Սուլթան-Շահի մոտ էր պահվում բանտից գրած Նալբանդյանի 18 նամակները։

Ահա այդ անձանց տեղյակ պահելով պետական արխիվում իր կատարած որոնումների արդյունքների մասին և հայտնելով նրանց Նալբանդյանի ձերբակալության իսկական պատճառներն ու հանգամանքները՝ Այվազովսկին ասում է. «Դաբրիելին մեղադրելը մեծ թյուրիմացություն է եղել...», ապա ավելացնում է, որ եթե իր եղբայրը «գեղ բաներ գրած է, բայց

---

1 Ռ. Բերբերյանի մորեղբայր Անանիա Սուլթան-Շահի «Ուրախ և տխուր օրերի տետրակ» հիշատակարանը մեզ չի հասել։

և այնպես պատճառ չի եղած, որ Նալբանդյանցի պես մեծ մարդը ասպարեզեն հեռացվի ու բանտի մեջ մեռնի»[1]։

1895 թ. Պետերբուրգից վերադարձի ճանապարհին Մրկըրտիչ Խրիմյանը երկաթուղով մեկնում է Թեոդոսիա։ Հունիսի 25-ին նրան դիմավորում են բազմաթիվ պատգամավորներ, հայոց դպրոցների ուսուցիչներ, հոգևոր անձինք և աշակերտներ։ Հովհ. Այվազովսկին և Խրիմյանը՝ իր հոգևոր շքախմբով, երկաթուղային կայարանից գնում են դեպի հայոց սբ. Սարգիս եկեղեցին, որտեղ հայերի մեծ բազմություն հավաքված սպասում էին մեծարգո հյուրերի գալուստին։ Երբ նրանք մտնում են եկեղեցու բակը, ժողովուրդը նրանց ծափահարում է արտահայտելով իր ուրախությունը։ Այստեղ դառնալով կաթողիկոսին նկարիչն ասում է. «Վեհափառ տէր, մեր եկեղեցու խաչակալի, սեղանի և բեմի պատկերները ես քաշած եմ։

— Հա, դուն վատ բան չես քաշիլ, նայելու արժան է,— պատասխանում է կաթողիկոսը և սկսում է ուշադրությամբ դիտել Այվազովսկու նկարած պատկերները»[2]։

Ապա նկարչի և նրա քեռորդու՝ Լևոն Մազիրյանի ուղեկցությամբ հյուրերը դիտում են եկեղեցում պահվող Անի քաղաքից բերված հայկական քանդակազարդ դռները, խաչքարեր և մանրանկարչական հարուստ հին ձեռագրեր, կարդալով նրանց վրա գրված հայերեն արձանագրությունները։ Այնուհետև նրանք միասին գնում են նկարչի տուն, որտեղ կարճատև հանգստից հետո Խրիմյանը կազմակերպում է ընդունելությունն։

Հաջորդ օրը այդ ընդունելությունը շարունակվում է Այվազովսկու անմիջական մասնակցությամբ։ Նրանց են այցելում Ղրիմի տարբեր կողմերից եկած հայության ներկայացուցիչներ, պատգամավորական խմբեր, ուսանողական, դատական, մշակութային և հոգևոր հիմնարկների բազմաթիվ պաշտոնական անձինք։ Այստեղ՝ նկարչի տանը, Այվազովսկու ներկայությամբ, երբեմն նաև նրա միջամտությամբ, լուծվում են շրջանի հայության հուզող շատ հարցեր։

---

[1] «Անահիտ», Փարիզ, 1932, № 1—2։

[2] «Նոր դար», 1895, № 119։

Կեսօրին, Այվազովսկին իր տան ծաղկազարդ պատեզում ի պատիվ հայոց կաթողիկոսի և հյուրերի, տալիս է ճաշկերույթ 300 մարդու ներկայությամբ։ Այստեղ կաթողիկոս Խրիմյանը դրվատում է մեծ ծովանկարչի արժանիքներն ու նշանակությունը հայ ժողովրդի պատվի համար և ասում.

«— Հովհաննես աղա, սիրեմ զքեզ։ Եվրոպայի մայրաքաղաքներում հայտնի մուզեների մեջ, երբ որ քո ձեռագիր հրաշալի նկարները կտեսնեի, սիրտս ու հոգիս անհուն բերկրությամբ կլցվեր, ինքս ինձ կըսեի. «Ահ, աստված իմ, ե՞րբ պիտի տեսնեմ այն տունը, ուր աստված մեզի Այվազովսկի է պարգևել և երբ պիտի տեսնեմ այն հռչակավոր սենյակը, ուր մի կտոր կտավի վրա բնության հրաշալիքները ճարտարությամբ կնկարես... Մեկ ժամ առաջ տեսա քո աշխատության սենյակը, ինչպես ինքդ ասացիր, մինչև այժմ վեց հազար մեծ ու փոքր նկարներ պատրաստեր հաներ ես, որոնք Պետերբուրգի, Մոսկվայի և Եվրոպայի նշանավոր թանգարաններու զարդարանք կհամարվին։

Հովհաննես աղա, շատ մարդիկ կծնվեն, կմեռնին և օսկորներու փտելու հետ իրենց անուններն ալ կփտին, կան-հետանան աշխարհիս երեսեն, բայց հանճարեղ մարդոց անունները հավիտյան անմահ կմնան։ Դու քո անունդ արդեն անմահացրած ես կենդանությանդ օրով։ Բայց մեկ բան կպակսի քեզի և ինձի։ Դու հանճարեղ նկարիչ, քո վրձինով աշխարհ զարմացրած ես, ես ալ խրիմյան Հայրիկ մըն եմ, մեկ ձեռքիս խաչ, մյուս ձեռքիս՝ ավետարան, պիտի աղոթեմ քեզի համար և իմ խեղճուկ հայ գյուղական ժողովրդի համար։ Ինձմեն դուն երկու տարով մեծ ես, դու 77 տարեկան ես, իսկ ես՝ 75 տարեկան, դուն ալ ապրիս ես ալ. դեռևս մեռնելու միտք չունիմ, որովհետև իմ ազգիս հատուցանելու շատ պարտքեր ունիմ։ Երբ որ պարտքերս կվճարեմ ազգիս, այն ժամանակ թող աստծու կամքն օրհնյալ լինի։ Ուրեմն լավ մտիկ ըրե ինձի. արի ես ու դու իրարու ձեռք-ձեռքի տանք և մեր մնացած օրերը մեր խեղճ ազգին համար աշխատինք։

— Վեհափառ տէր,— պատասխանում է Այվազովսկին,— որքան որ կրնամ, կաշխատեմ Ձերդ սրբության քաղցր խոսքերն արդարացնել։

Հոյակավոր նկարչի այս խոսքերի վրա բակը թնդաց «կեցցե Այվազովսկին» աղաղակներով[1]։

Խրիմյան հայրիկը Այվազովսկու մոտ մնում է մեկ շաբաթ՝ երեք օր՝ Թեոդոսիայում և 3օր՝ Շախ-մամայ կալվածքում։ Այդ օրերին հայ ժողովրդի երկու ականավոր գործիչներն իրենց գործերի, ժողովրդի վիճակի և ապագայի, լուսավորության, արվեստի և կրթական հարցերի մասին երկար զրուցելիս ավելի են մտերմանում։ Շախ-մամայ ամառանոցային գյուղում նրանք հանդիպում և զրուցում են շրջակայքում նոր բնակություն հաստատած Թուրքիայում հայկական ջարդերից մազապուրծ հայ գաղթականների հետ, որոնց սրտացավ նկարիչը ինքն էր տեղ տվել իր սեփական կալվածքում և շարունակում էր ամեն կերպ նյութապես օգնել։

Խրիմյանի և Այվազովսկու այս հանդիպումը նշանավորվում է նաև նրանով, որ նկարիչը այդ օրերին նկարում է ամենայն հայոց կաթողիկոսի դիմանկարը, ամբողջական հասակով։ Նկարիչը նրան պատկերել է կանգնած դիրքով, ոչխարներին խոտ տալիս, որպես «հոտի հովիվ». և այդ ամենը հայրենի բնության՝ Արարատյան դաշտի և Արարատի հենքի վրա։ Պատկերը կոչվում է «Խրիմյան հայրիկը էջմիածնի շրջակայքում»։

Վերադառնալով էջմիածին Ամենայն հայոց կաթողիկոսը Այվազովսկուն կոնդակ է հղում, որի մեջ նկարիչը բնութագրվում է որպես «նորին գերազանցության մեծահռչակ ծովանկարչի և պատուական բարեկամի մերոյ... Հարազատ որդւոյ սրբոյ կաթողիկէ էջմիածնին»։ Արտահայտելով իր հիացմունքը և շնորհակալությունը նկարչի կողմից էջմիածնի թանգարանին նվիրված պատկերի համար, հայոց կաթողիկոսը կոնդակում նշում է. «ցնծութիւն բազում եղեն հոգւոյ մերոյ, տեսեալ զհարազատիդ սրտաբուխ նուերն, որ ի զարդ նորակառոյց թանգարանի Մայր Աթոռոյ, որ հասեալ մեզ անեղծ և ապահով. պատկեր չքնաղ և հոյատիպ յորում արտահայտեն ի տես ողջմտութիւն Աստուածային առ ստեղծագործեալն մերմէ աշխարհի»։ Այնուհետև կոնդակում ասվում է. «... Ոչ այնքան ընդ պատկերն կամք հիացեալ, որքան ընդ

[1] «Նոր դար», 1895, № 119։

ջերմեռանդութիւն նկարողիդ և նուիրողիդ եմք զգացեալ, որ իբրև որդի հաւատարիմ և հարազատ, գիտացիր երախտահատոյց լինել ա՛ո Մայր Աթոռն պանծալի, ընդորոյ Հովանիաւ կիաս և վայելես, զհոգևոր բարիս, վասն ցանկամբ և մաղթեմք յԱմենակալին Աստուծո, արժանի լինիլ Ձեզ տեսնել զցանկալին Համայնից հայոց զԱրարատեան Մայր կաթողիկէն և զլեառն մեծ, յորոյ վերայ հանգեաւ տապանն ապրեցուցիչ պահելով զմնացորդն ի համատարած ջրհեղեղեն»[1]։

Ամենայն հայոց կաթողիկոսի հետ ծովանկարչի ունեցած զրույցներից հետո, որոնց ընթացքում շոշափվում են նաև Թուրքիայում այդ ժամանակ արդեն սկսած հայկական ջարդերի հարցերը, Այվազովսկին ավելի է մտահոգվում իր հարազատ ժողովրդի վիճակով։ Նա մտածում է ստեղծել մի շարք նոր պատկերներ հայկական թեմաներով և առաջին հերթին եղեռնի՝ Թուրքերի կողմից հայերի կոտորածի պատկերներ։ Նկարիչ Վարդգես Սուրենյանցն արդեն նկարել էր այդպիսի մի նկար՝ «Պղծված սրբավայր», որը ցույց է տալիս բարբարոս Թուրքերի կողմից ավերված և թալանված հայկական եկեղեցու ներսը, և սպանված վանահոր դիակը հայոց ձեռագիր նկարազարդ գրքերի մոտ։ Թուրքական կառավարության այդ անմարդկային ու ոճրագործ քաղաքականության դեմ իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել հայ մտավորականներն ու պարբերական մամուլը։ Ծովանկարիչը, թեև հիվանդ ու կազմալուծված, որոնում էր իր տարերքին համապատասխան թեմա հայկական ջարդերը պատկերելու համար։ Սակայն ծերունական հիվանդությունը օրըստօրե սաստկանալով ստիպում է նրան բուժման համար մեկնել արտասահման։

ՇՔԵՐԹԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

1896 թ. հունվարին Այվազովսկին մեկնում է Պետերբուրգ, այնտեղից արտասահման գնալու համար։ Այստեղ հանդիպելով Ի. Ե. Ռեպինին, միասին հունվարի 18-ին հայտարա-

---

[1] «Документы...», էջ 272—273։

բություն են հրապարակում իրենց միասին նկարած «Պուշկինը Սև ծովի ափին» («Հրաժեշտ ծովին») պատկերը «Թատերական նշանավոր գործիչներին նյութապես օգնող ընկերության» կարիքավորների օգտին վաճառելու մասին։ «Այդ պատկերի գլխավոր աշխատանքը և նախաձեռնությունը պատկանում էր Այվազովսկուն,— գրում է Ի. Ե. Ռեպինը,— այդ պատճառով ես առաջարկում եմ նրան տալ վճռական խոսքը»։ Հովհ. Այվազովսկին նույն գրության տակ ավելացնում է. «Ես միանգամայն համաձայն եմ վաճառել այդ պատկերը այն բանի համար, որ գումարը հատկացվի թատերական ընկերության արտնթեր օգնության ֆոնդին»[1]։

Մեկ ամիս հետո՝ փետրվարի կեսերին, Այվազովսկին ստանում է թագավոր-կայսեր կողմից գնված և Ձմեռային պալատում գտնվող երկու պատկերների («Մրրիկ» և «Սևծովյան նավատորմը անդորր ժամանակ») հոնորարը՝ շուրջ 4000 ռ. և մեկնում է արտասահման։ Նա գնում է Նիցցա ծովափնյա առողջարանային քաղաքը, ուր գլխավորապես զբաղվում է բուժման խնդրով։ Սակայն այստեղ էլ նա ցանկացած հանգիստը չի գտնում։ Թերթերից տեղեկանում է Թուրքիայում հայկական ջարդերի սարսափելի անցքերի մասին, և հուզված ու մտահոգված նկարում է ապագա պատկերների էսքիզները։ Դրանցից երեքը՝ «Հայերի ջարդը Տրապիզոնում», «Հայերին լցնում են նավերը» և «Կենդանի հայերին Թուրքերը թափում են Մարմարա ծովը», Նիցցայից ուղարկում է Պետերբուրգ՝ «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին»՝ հոդվածների ժողովածուի մեջ հրապարակելու համար։

Ավելի քան մեկ ամիս Նիցցայում մնալուց, բուժվելուց և մի քանի պատկեր նկարելուց հետո, Այվազովսկին ապրիլի սկզբներին վերադառնում է Ղրիմ և շարունակում է աշխատել Թեոդոսիայում։

Այդ ժամանակ Նիժնի-Նովգորոդում բացվում է համառուսական արդյունաբերական ու գեղարվեստական ցուցահանդես, գեղարվեստական բաժնում մասնակցում են պե-

1 «Документы...», էջ 274։

տերբուրգյան նկարիչները, Շրջիկ գեղարվեստական ցուցահանդեսների նկարիչների ընկերությունը, չրանկարիչների ընկերությունը և նկարիչներ, որոնք ոչ մի ընկերության չեն պատկանում։ Գեղարվեստի ակադեմիայի կողմից ցուցահանդեսին մասնակցում է Հովհ. Այվազովսկին 4 պատկերներով, որոնք նա նկարել էր անցյալ տարիներին՝ «Ոչխարների հոտը ձմռանը», «Մրրիկից հետո», «Արևածագ» և «Փոթորիկից հետո»։ 28-ամյա երիտասարդ գրող Մաքսիմ Գորկին հրապարակում է հոդված համառուսական ցուցահանդեսի մասին, որտեղ Այվազովսկու ստեղծագործությունների տպավորության տակ նկարչին անվանում է «ջրի հանճար» և ավելացնում. «Գեղարվեստական բաժինը շատ տխուր կլիներ, եթե չլինեին Այվազովսկին, Մակովսկին, Կիսելյովը, Կասատկինը»[2]։

Մայիսի 14-ին Հովհ. Այվազովսկու կյանքում տեղի է ունենում մի արտակարգ, իր բնույթով բավական ծիծաղաշարժ դեպք, որը անմոռաց է դառնում նրա ամբողջ կյանքում։ Ցարական Ռուսաստանի տոներից մեկի՝ թագադրության օրը, երբ սովորաբար տեղի է ունենում զինվորական շքերթ-զորահանդես, Թեոդոսիայի գիմնազիայի աշակերտներն ու ուսուցիչները դիմում են ծովակալի պատվավոր կոչում ունեցող Այվազովսկուն, խնդրելով ընդունել իրենց շքերթը։ Թեև այդ միտքը նկարչին թվաց ծիծաղաշարժ, այնուամենայնիվ, նա համաձայնեց դրան,— պատմում է Թեոդոսիայի հնաբնակիչ՝ գիմնազիայի նախկին ուսուցիչ Յու. Ա. Գալաշուտսկին իր թողած հուշերում,— հագնելով ծովակալի տոնական հագուստ՝ մունդիր բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով, գոտուց կախելով սուրը և եռակողմ գլխարկով նկարիչը կանգնում է տրիբունի վրա զինվորական ղեկավարների շարքում։ Երբ զորքն անցնում է իր բրիգադային գեներալի առջևով, շարժվում է նաև գիմնազիան հանդիսավոր մարշով և իրենց նվագախմբով։ Նկարիչ—ծովակալը ողջունում է իր մոտով անցնող գիմնազիայի աշակերտներին և ուսուցիչներին ստանալով պատասխան. «Առողջություն Ձեզ,

---

2 М. Горький, собр. соч., հ. 23, 1953, էջ 248—256; տե՛ս նաև «Русские писатели об изобразительном искусстве». 1971, էջ 271.

Ձերդ գերազանցություն»։ Շքերթից հետո Այվազովսկին ծիծաղելով ասում է. «Իմ կյանքում շատ տարօրինակ բաներ են եղել և շատերի համար ես դադարել եմ պարմանալ, բայց եթե որևէ մեկը ինձ ասեր, թե ես երբևէ շքերթ կընդունեմ, դրան ես ոչ մի կերպ չէի հավատա»[1]։

Գարնանը ծերունի նկարչին ուրախության մի նոր առիթ է լինում. ծնվում է նոր թոռ. կրտսեր աղջիկը՝ Հովհաննան, նրան պարգևում է մի տղա ևս՝ Կոնստանտին Կոնստանտինովիչ Արշեուլովը (1896—1980), որը հետագայում դառնում է ռուսական հայտնի օդաչու և նկարիչ։ Վաղ մանկության շրջանում ծովանկարիչ պապիկից սովորելով նկարել՝ Կոնստանտին Արշեուլովը խորհրդային տարիներին զբաղվում է նաև նկարչությամբ։ Նա երկար տարիներ եղել է «Տեխնիկա մոլոդյոժի» ամսագրի նկարիչը։

Ամռան սկզբներին Գերմանիայից Թեոդոսիա է գալիս Մյունխենի գեղարվեստի ակադեմիան ավարտած ծովանկարիչ Վարդան Մախոխյանը (1879—1937) և այցելում Այվազովսկուն։ Վարպետը երիտասարդ հայազգի նկարչին սիրով ցույց է տալիս իր պատկերասրահը, խոսում ծովանկարչության մասին և խորհուրդներ տալիս։ Այդ հանդիպումը և զրույցները, հատկապես մեծ ծովանկարչի ստեղծագործությունները երիտասարդ նկարչի վրա ուժեղ տպավորություն են թողնում։ Հիացած նրա ծովանկարներով՝ Մախոխյանը տարիներ հետո ասում է. «Այվազովսկին, որուն հետ ծանոթանալու մեծ բարեբախտություն ունեցա ասկի տարիներ Կովկաս գտնվելու առենս, պետք է խոստովանիմ ամենքս ալ, թե իրոք շատ մեծ նկարիչ մըն էր։ Աննման կերպով ըմբռնած էր գույներու համերաշխությունը և անոնց թողած հոգեպարար տպավորությունը դիտողի վրա»[2]։ Հետագայում ևս՝ 1933 թ. անդրադառնալով Այվազովսկուն, Մախոխյանը Մոնտե Կառլոյից գրում է իր բարեկամին. «Իր ծովանկարներուն մեջ տեսած եմ գույներու մեծ համերաշխություն, հարուստ երևակայություն և մանավանդ աննման

---

[1] ՔՊՊ արխիվ, Տե՛ս նաև Н. Барсамов, Айвазовский в Крыму, 1970, էջ 33—34։

[2] «Շանթ», 1912, էջ 343։

հիշողություն։ Այս վերջինս այն աստիճան զորավոր է, որ իր նկարներեն ոմանց մեջ perspective-*ի անճշտություն կա, թեև զանցառությունը ներելի կդարձնեն Բնության մեջ չկա տարր մը, որ երևույթապես անշափ փոփոխությանց ենթարկվի քան իրր գծագրություն և քան իրր գունավորում՝ ինչպես ծովը, և զայն նկարելու համար հարկ է ըմբռնել և ստեղծել։ Այվազովսկին այդ հազվագյուտ ստեղծագործողներն էր*[1]*։ Ահա «այդ հազվագյուտ ստեղծագործող» Այվազովսկին շատ կողմերով ուսանելի և ոգևորության աղբյուր է եղել ինչպես Վ. Մախոխյանի, նույնպես և շատ հայ, ռուս և օտարազգի նկարիչների համար։*

«ԽՈՐԻՆ ՑԱՎՈՎ ՎՇՏԱՅԱԾ Է ՍԻՐՏՍ...»

1890-ական թվականների կեսերին Թուրքիայում տեղի են ունենում հայկական ջարդեր, որոնք հայ ժողովրդի պատմության ամենամռայլ և ողբերգական էջերից են։ Հայերի ազատագրության հարցը ընդմիշտ վերացնելու նպատակով սուլթան Աբդուլ Համիդը կազմակերպում է Թուրքիայում ապրող հայերի մասսայական ջարդեր 1894—1896 թթ. Կոստանդնուպոլսի, Տրապիզոնի, Էրզրումի, Մարաշի, Տիգրանակերտի և մյուս բնակավայրերի հայ բնակչությունը մասսայաբար ոչնչացվում է։ Ավերվում, հրդեհվում են դպրոցները, եկեղեցիները, հասարակական ու մշակութային օջախները։

Ահա այդ ծանր ժամանակ՝ 1896 թ. օգոստոսի վերջերին, ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը (Հայրիկը) Հովհ. Այվազովսկուն հղում է մի նոր կոնդակ, որը, դժբախտաբար, մեզ չի հասել։ Սակայն դատելով նկարչի պատասխանից, կարելի է ասել, որ այն պարունակել է Արևմտյան Հայաստանում ուժեղացող հայկական ջարդերի մասին տեղեկություններ, առաջարկություն նկարչին՝ այդ խնդրով ըղձաղվելու և ջարդերի թեմայով նոր պատկերներ նկարելու մասին։ Սեպտեմբերի 8-ին գրված պատասխան նամակում Այվազովսկին ասում է. «Վեհափառ տէր. ի վաղուց սրտիս

---

1 *«Հանդես ամսօրեայ», 1934, էջ 180։*

փափագն է այցելութիւն անել Մայր Աթոռոյդ և դորա վեհափառ գահակալիդ և կցանկամ, որ Տէրը յաջողէ միջոց գտնելու փափագս կատարելու։ Ձեր օծութիւնը շատ զգայուն և զեղեցիկ առաջարկութիւն կանեք ինձ նկարել կարմիր գույնով հայոց կոտորածի պատկեր, արեան դաշտեր և լճակներ և վշտահար հայոց Հայրիկին աւերակաց վերայ։ Թէև տէրը կհաճի ինձ դեռևս կյանք պարգևել, կուգա օր, որ կկատարեմ այդ սրտաշարժ առաջարկութիւնը։

Այո՛, վեհափառ տէր, խորին ցաւով վշտացած է սիրտս անբախտ հայոց չքսուած, չտեսնուած կոտորածով։ Ձեր վեհափառութիւնը այդտեղ, մենք այստեղ և ամենքն իրենց տեղեր կուլանք և կողբանք մեր թշվառ, կորստեան մատնուած հայոց վրայ և կխնդրենք աստուածային գթութիւն։ Կխոնարհիմք ես և ամուսինս ի համբույր սբ. աջոյդ, մաղթելով առաւել մխիթարական օրեր։ Ձեր վեհափառութեան խոնարհ ծառայի և որդի Յովհաննէս Այվազովսկի»[1]։

Հովհ. Այվազովսկու «խորին ցավով վշտացած սիրտը» ավելի է ցավ զգում, երբ անձամբ լսում է Տրապիզոնից, Իզմիրից և Սև ծովի թուրքական ափերից փախած հայ գաղթականների պատմածները Թուրքիայի բռնակալության տակ եղած հայաբնակ վայրերում տեղի ունեցող հայկական ջարդերի՝ անմեղ մարդկանց կոտորածների մասին։ «Ուրախ և զվարթ դեմքը թախիծ էր արտահայտում այդ րոպեին, երբ թուրքահայ գաղթականները պատմում էին այն ահռելի ու սարսափելի տեսարանների մասին, որոնք տեղի ունեցան 1896 թականին,— պատմում է ականատեսը.— Տղերիս գիրողը շատ անգամ էր նկատում, թե ինչպես արցունքներ էին ցայտում ծերունու աչքերից, երբ թուրքահայը հուզված պատմում էր իր քույրերի առևանգման և որդիների կոտորման մասին։ Նա տանջվում էր տեսնելով, որ չի կարողանում օգնել իր համարյուն եղբայրներին և միայն հույս էր տալիս ասելով. «Մի՛ հուսահատվեք, աշխատեցե՛ք, երևի մի օր կպարզվի մութ հորիզոնը և կտեսնեք պայծառ արշալույսը... ա՛խ»։ Նույն թղթակիցը գրում է նաև «Հայկական ջարդերի ժամանակ իրենց կրած տառապանքների մասին Այվազովսկուն

---

1 «Документы...», էջ 277։

աստմող գաղթականները մեծ հայրենակցի տանից դուրս էին գալիս հոգեպես թեթևացած... ու անդորր սրտով»[1]։

Լավատեսությունը, ահեղ փոթորիկների պահերին խորտակված նավերի մարդկանց փրկության հույսի գաղափարը, որը վարպետորեն արտահայտում էր իր ծովանկարներում, Այվազովսկին կիրառում է նաև կյանքում. այն ծանր օրերին դժբախտ մարդկանց սփոփելով հույսով ու լավատեսությամբ։ Բայց նա հասկանում էր, որ իր այդ սփոփանքը և հուսատու խոսքերը դեռ շատ քիչ են իրական օգնության կարիք ունեցող ժողովրդի համար։ Եվ նա խոսքից անցնում է գործի։ Նա Ղրիմ գաղթած բազմահազար հայ գաղթականներին տեղավորում է հայաբնակ գյուղերում և քաղաքներում, նրա միջնորդությամբ նոր հողամասեր ու բնակելի տարածություններ են հատկացվում նրանց, իսկ ոմանց, հատկապես ընչազուրկներին, նա տեղավորում է իր Շախ-մամայ կալվածքի հողամասերում՝ տալով նրանց բնակատեղ և աշխատանք։ Ջբավարարվելով դրանով, նկարիչը որոշում է նոր ցուցահանդեսներ կազմակերպել և վաճառել իր ստեղծագործությունները, դրանց գումարը հատկացնելով ջարդերից տուժած հայերի օգնության ֆոնդին։ Բացի այդ, նորաբնակների համար նա իր իսկ նախագծով և երբեմն նաև իր միջոցներով Ղրիմի տարբեր վայրերում կառուցում է մատուռներ, նույնիսկ եկեղեցի. մեկի նախագծի մի օրինակը ցուցադրվում է Թեոդոսիայի Այվազովսկու անվան պետական պատկերասրահի մեմորիալ բաժնում։

Սակայն նկարչի համար գլխավորը նրա ստեղծագործություններն են։ Այս շրջանում իր մեծ զայրույթը թուրքական բարբարոսության դեմ Այվազովսկին արտահայտում է հայկական ջարդերի թեմաներով նկարած պատկերներում։ Դրանցից ավելի հայտնի է «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թ.» մեծ կտավը, որը ստեղծվել է իրական անցքերի հիման վրա։ Պատկերը նեկայացնում է Տրապիզոն հայաբնակ քաղաքի ծովափնյա շրջանը, որտեղ թուրքերը իրենց կեռ սրերով սպանում են հայերին։ Սպանդը այստեղ պատկերված է կտավի կենտրոնական մասի աջ կողմում՝ ծովափին։ Այս ու այն

---

[1] *«Մշակ», 1900, № 82։*

կողմ են ընկած սպանված, գլխատված և խոշտանգված մարդկանց դիակներ, բայց ջարդը դեռ շարունակվում է։ Նկարիչը պատկերել է թուրք ջարդարարներին իրենց անմարդկային գործողության պահին՝ կանանց, երեխաներին և ծերունիներին մորթելիս։ Տեսարանը սարսուռ է առաջացնում դիտողի մեջ։ Տպավորությունն ավելի են ուժեղացնում սև ագռավները, որոնք խմբերով իջել են գետնին փռված մարդկանց դիակների վրա։ Մովսիսյա ավազը և չորը ծածկված են արյունով։

Պատկերելով իրական անցք, որը նա իմացել էր ոչ միայն թերթային տագնապալի հաղորդագրություններից, այլև Զրիմ գաղթած ականատեսների պատմածներից, Այվազովսկին ճշգրիտ ու մանրամասնորեն է ներկայացրել ոչ միայն Ջրապիզոնի ծովափնյա տեսարանը, որը նա տեսել էր անցյալում, այլև տեղի ունեցող ողբերգությունը։ Մեծ հումանիստի և հայրենասերի վերաբերմունքն այստեղ արտահայտվել է նաև ծովի տեսարանում։ Ծովի սառը, հայելապատ ու անշարժ մակերեսը վկայում է այն մասին, որ կարծես ծովաջուրն անգամ սառել, քարացել է՝ իր ափերին տեսնելով անմարդկային այդ ծանր եղեռնագործությունը։

Հայկական ջարդերի թեմաներով Այվազովսկին նկարում է նաև «Հայերին լցնում են նավերը» և «Ուղևորների բեռնաթափումը Մարմարա ծովը» պատկերները, որոնց նյութը նույնպես վերցված է իրականությունից։ Հայտնի է, որ ջարդերի ժամանակ թուրքերը բռնությամբ հայերին լցրել են նավերը և, տանելով դեպի բաց ծով, նրանց կենդանի լցրել են ծովը։ Իր այդ պատկերներում նկարիչը գեղարվեստական համոզիչ միջոցներով ներկայացնում է հենց իրական ու ողբերգական պատմությունը։ Մեզ են հասել ժամանակին ցուցադրված այդ պատկերների միայն գրչանկար էսքիզները, որոնք, ինչպես նշեցինք, նկարիչը ուղարկել էր «եղբայրական օգնություն տուժած հայերին» գրական-գեղարվեստական ժողովածուում տպագրելու համար[1]։

Այդ գրչանկար էսքիզներից մեկը ներկայացնում է ծովափնյա մի տեսարան, ուր թուրքերը հայերին բռնությամբ

[1] «Братская помощь пострадавшим армянам». 1880։

Ճամբեցնում են նավ՝ նրանց դեպի հեռուները տանելու համար։ Մյուս էսքիզը կարծես հանդիսանում է այդ ողբերգության երրորդ մասը՝ կենդանի հայերին թափում են ծովը։ Այստեղ Այվազովսկին պատկերել է մարդկանց կործանման մի ծանր տեսարան. բազմաթիվ մարդիկ նետված են ծովի մեջ, նրանց միայն գլուխներն են երևում։ Մարդկանց մի ամբ խումբ դեռ նոր են նետվում ջուրը։ Մի քանիսը դեռ օգում են։ Էլ ավելի ողբերգական է նավի մեջ գտնվող հայերի վիճակը։ Թուրք զինվորը մի հայի բարձրացրած օդ նետում է ծովը. մյուսները, ձեռքերը վեր պարզած, աղերսում են աստծուն։ Վերևում՝ երկնակամարի վրա, երևում է միայն կիսալուսինը՝ թուրքական խորհրդանիշը, իսկ ներքևում՝ նավի մեջ, հրամանատարական աշտարակի վրա կանգնած թուրք սպաները հանգիստ դիտում են եղեռնական տեսարանը։

Հայկական ցեղասպանության թեմաներով այդ պատկերները նկարիչն ավարտում է 1897 թ. և նույն տարում ցուցադրում է Օդեսայում, իսկ 1898 թ.՝ Մոսկվայում, որոնք ցնցող ազդեցություն են գործում հասարակության վրա։ Մոսկովյան այդ ցուցահանդեսի մասին «Մշակ» թերթում մի ընդարձակ հոդվածում թղթակիցը գրում է. «Այվազովսկու «Տրապիզոնի կոտորածը» սարսափելի է։ Մարդկանց ոչ թե կոտորում, այլ սաղ-սաղ ածում են ծովը... Մարդիկ փախչում են, բայց ո՞ւր... մարդիկ աղաչում են, բայց ո՞ւմ... Առանց արտասվելու չի կարելի երկար դիտել այս դրախտ զոհերին»[1]։

Ժամանակի մամուլը հաղորդում է նաև, որ 1897 թ. Օդեսայում բացված ցուցահանդեսում «...պատկերների մի ամբողջ խումբ ներկայացնում է հունական և հայկական վերջին դժբախտ անցքերի էպիզոդներ, օրինակ «Հայերի կոտորածը Տրապիզոնում», «Եվրոպական նավատորմիղը Կրետե կղզու մոտ», «Թեսալիա» փոքրիկ պատկերը և մանավանդ «Կենդանի բեռների Մարմարա ծովը թափելը», «Լուսնկա գիշեր», «Միայնակ շոգենավը» և այլն։ Այդ լուռ դրաման սարսափելի տպավորություն է գործում»[2]։

---

[1] «Մշակ», 1898, № 32։

[2] Նույն տեղ։

ցող հայկական ջարդերի հետևանքով հայ ժողովրդի մի զգալի զանգվածի կոթծանումը Այվազովսկին պատկերել է մի այլ ծովանկարում ևս. 1897 թ. նկարած ծովանկարը, որի սյուժեն «...կապ ունի հայերի վերջին ըշվառությունների հետ»։ Այդ պատկերը մեզ չի հասել։ Իր ժամանակին դա գնել է անգլիացի ժուռնալիստ Էմիլ Դիլոնը, և հավանաբար այժմ գտնվում է Անգլիայում։ «Ռուսկիե վեդոմոստի» լրագրի ըղըթակիցը, որը տեսել է այդ պատկերը և դրա շուրջ զրույցել է նկարչի հետ, այսպես է նկարագրում այդ պատկերը. «Ալեկոծությունը հանդարտվելու ժամանակ ընթանում է լաստը և նրա վրա փոթորկից ազատված ծովագնացը։ Արդեն երևում է ծովափը, փրկությունը մոտ է, բայց նրան վիճակված չէ ծովափին հասնել, նա մեռնում է սովից ու ցրտից»։ Յեղասպանության թեմաներով վերոհիշյալ պատկերները ցուցադրելով տարբեր քաղաքներում նկարիչը ստեղծում է հասարակական կարծիք հայերի մասին։ «Սարսուռ ազդող այդ պատկերները» ուղղված լինելով թուրքական հետադիմական կառավարության վարած քաղաքականության դեմ, պաշտպանում էին աշխատավոր ու ստեղծագործ հայ ժողովրդի շահերը։ Դրանում է այդ ստեղծագործությունների կարևոր նշանակությունը։

Հովհ. Այվազովսկին, միաժամանակ, նյութական օգնություն է ցույց տալիս ջարդերից տուժած հայերին և նկարներ է նվիրում Ղրիմահայերի նորակառույց եկեղեցիներին։ Այդ մասին է վկայում Ղրիմի հայոց նյութական կուլտուրայի հուշարձաններն ուսումնասիրող պատմաբան-Ճարտարապետ Կուզուկ-Հովհաննիսյանը։ «Հուլիսի 23-ին մենք Թեոդոսիայից գնացինք հին Ղրիմ, որտեղ դեռ պահպանվել են հայկական մի քանի եկեղեցիների ավերակները։ Ջարխափան գյուղի ավերակների մոտ նկարիչ Հովհ. Այվազովսկին կառուցել է նոր եկեղեցի նույն անունով։ Ինքը՝ Այվազովսկին էլ, այդ եկեղեցու բեմի համար նկարել է Աստվածամոր սրբանկարը» կարդում ենք հաշվետվության մեջ[1]։ Նկարչի խորհրդով ու նրա նախաձեռնությամբ այդ եկեղեցում են հավաքում շրջակայքում գտնված հայերեն արձանագրություններով քա-

1 «Документы...», էջ 280։

բեր և առարկաներ, որոնցից մեկի՝ 1656 թ. հայերեն արձանագրությունը վերծանելով, Կուչուկ-Հովհաննիսյանը տեղյակ է պահում նկարչին. «Այվազովսկին պատմեց մանրամասնություններ իր բանվորների կողմից եկեղեցու հիմքը փորելու ժամանակ հողի միջից այդ քարի հայտնաբերման մասին», գրում է Կուչուկ-Հովհաննիսյանը. 1897 թ. փետրվարի 23-ին իր բարեկամ Կ. Էզյանին գրած նամակում նկարիչը հայտնում է. «Վերջերս ես Սիմֆերոպոլի հայոց եկեղեցուն նվիրեցի Ածմայր մեծ պատկեր և Թեոդոսիայի հայոց եկեղեցուն՝ Փրկիչի Երեշտակապետի նկարը։ Այդ բոլորը դատարկ բաներ են հայ ազգի համար այս դժբախտ ժամանակ»[1]։

Ղրիմում Այվազովսկին միաժամանակ զբաղվում է ուսումնակրթական և դպրոցական հարցերով։ Տեսնելով, որ Թեոդոսիայի գիմնազիայի շենքը խարխուլ է, նկարիչը դիմում է լուսավորության մինիստրությանը միջոցներ հատկացնել նոր շենք կառուցելու համար[2]։ Նա միաժամանակ դիմում է իր բարեկամ՝ լուսավորության մինիստրության դեկավար աշխատող Կարապետ Էզյանին, ընթացք չտալ իր դիմումին, որով խնդրել էր ազատել իրեն «Պատվավոր հոգաբարձուի» պաշտոնից, նկատի ունենալով, որ «Այստեղ գիմնազիան իմանալով, որ ես այլևս չեմ ուզում մնալ պատվավոր հոգաբարձու, բոլոր ուսուցիչները ներկայացան խնդրանքով, որ ես փոխեմ իմ մտադրությունը»[3]։ Մի քանի օր հետո՝ ապրիլի 20-ին, հայտնելով Կ. Էզյանին, որ «Իմ Աննա Մկրտումովնան մեծ բարև կանչ» (հայերեն), միջնորդում է, որ Թեոդոսիայի հայոց եկեղեցու վանահայր վարդապետ Խորեն Ստեփանյանին չազատել աշխատանքից, քանի որ եթե նա «Հեռանա, եկեղեցին առաջվա պես միանգամայն կդատարկվի»։

Թեոդոսիայի գիմնազիայի նոր շենք կառուցելու կամ նախկինը արմատապես վերանորոգելու պահանջը մերժվելու կապակցությամբ Այվազովսկին դիմում է լուսավորության մինիստր Ի. Դ. Դելյանովին, խնդրելով նրա համաձայնությունը

---

1 «Документы...», էջ 281։

2 ՆՀՀՄ ԿՊՊԱ, ֆ. 733, ց. 165, գ. 1469։ Տե՛ս նաև ԳԱ «Տեղեկագիր», 1984, № 3, էջ 91-92։

3 «Документы...», էջ 282։

առաջարկվող 126.000 ռ. գիմնազիայի միջոցներով 16 տարում մարելու պայմանով։ Այդ խնդիրը ևս, ինչպես երևում է, չի լուծվում։

Նույն ժամանակ՝ հուլիսի 3-ի գրած նամակում նկարիչը հայտնում է. «Մոտ օրերս ես կլինեմ 80 տարեկան։ Սեպտեմբերի 26-ը ադամանդե հոբելյան է։ Ինձ ուզում են հրավիրել Պետերբուրգ այդ ժամանակ, բայց բժիշկներն ինձ արգելել են աշնանը և ձմռանը լինել Պետերբուրգում։ ...Չնայած ծերունական տարիքին, ես աշխատում եմ առաջվա պես և շատ արդյունավետ»։ Այդ կենսուրախ տրամադրությամբ էլ նա, օգոստոսի 8-ին գրում է նկարիչ Մ. Պ. Բոտկինին. «...ես առաջվա պես շատ եմ նկարում և ահա ներկա ամռանը նկարեցի ավելի քան 40 պատկեր, որոնցից չորսը կամ հինգը կուղարկեմ Պետերբուրգ, որպեսզի մինչև իմ հոբելյանը՝ սեպտեմբերի 25-ը, այդ պատկերները լինեն ակադեմիայում, որպեսզի տեսնեն, որ անխոնջ աշխատանքը հասցրել է ինձ իմ գործունեության 60-ամյա հոբելյանին»[1]։

«ԱԴԱՄԱՆԴՅԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԸ»

Հովհ. Այվազովսկու ծննդյան 80 և գեղարվեստական գործունեության 60-ամյակի կապակցությամբ Պետերբուրգի կայսերական գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտ Վլադիմիրը կայսերական տան մինիստրին է ներկայացնում զեկուցագիր, պրոֆեսոր, ակադեմիայի պատվավոր անդամ, ծովանկարիչ Հովհ. Այվազովսկու հոբելյանի առթիվ սբ. Ալ. Նևսկու շքանշանով պարգևատրելու մասին, նկատի ունենալով ինչպես գրված է զեկուցագրում, որ նա շարունակում է իր գեղարվեստական գործունեությունը, «հարստացնում է ռուսական արվեստը օրինակելի ստեղծագործություններով»[2]։

---

1 ԽՍՀՄ ԳԱ ռուսական գրականության ինստիտուտ, Պուշկինյան տուն, ֆ. 265, ց. 1, թ. 1։

2 «Документы...» էջ 284—285։

Որքան մոտենում է «ազամանդյա հոբելյանի» օրը, այնքան ավելի ու ավելի շատ և լարված է աշխատում նկարիչը։ «Աշխատում եմ առաջվա պես անխոնջ, և մշտապես, և ահա այդպիսով հասցրի իմ անընդմեջ գործունեությունը մինչև 60-ամյա հոբելյանին, որը Թեոդոսիա քաղաքը մտադիր է տոնել սեպտեմբերի 26-ին նույն այս Թեոդոսիայում»,— գրում է նկարիչը իր բարեկամներից մեկին օգոստոսի 20-ին։ Օրըստօրե մեծանում են նաև նրա հասարակական և անձնական հոգսերը։ Արևմտյան Հայաստանում ծավալվող հայկական ջարդերը նրան հանգիստ չեն տալիս։ Դրան ավելանում է ընտանեկան-անձնական հոգսը «... Հովհաննան բաժանվեց ամուսնուց և ապրում է Սևաստոպոլում, իսկ նրա երեք երեխաները գտնվում են մեզ մոտ,— գրում է նկարիչը,— Ալեքսանդրա Համպսին կորցրեց ավագ որդուն՝ Վալյային, որը մեկ տարի առաջ ամուսնացավ Խարկովում Լիցերի հետ, որը նույնպես մեռավ ծննդաբերությունից։ Մյուսները ծերացել են»[1]։

Չնայած այդ բոլոր հոգսերին նկարիչը դարձյալ լավատեսորեն է նայում ապագային և ուրախանում իր ծննդավայր քաղաքի բարգավաճմամբ. «Միայն Թեոդոսիան է ծաղկում,— գրում է նա իր նամակի վերջում,— դուք չեք ճանաչի Թեոդոսիան։ Հիանալի տներ, փողոցներ են կառուցվել, ամեն տեղ մայթերը բետոնացվել են։ Ձեր ժամանակ քաղաքի բնակիչները եղել են 15 000, իսկ այժմ ավելի քան 26.000, կան շատ ծառեր»[2]։ «Իմ 60-ամյա գործունեության կապակցությամբ,— գրում է նկարիչը օգոստոսի 31-ին ակադեմիայի կոնֆերենց-քարտուղարին,— ես ցանկանում եմ գործով ապացուցել, որ աստծու շնորհիվ ես նույն էներգիայով ու սիրով շարունակում եմ աշխատել։ Եվ ահա իմ վերջին ստեղծագործություններից 6 պատկեր, որոնք նկարված են այս ամռանը, սեպտեմբերի սկզբներին կուղարկեմ ձեր ակադեմիան։ Իմ ցանկությունն է, որ այդ պատկերները ցուցադրվեն այժմ, որպեսզի ակադեմիայի պրոֆեսորները դրանցից

---

2 ՀՍՀՀՄ ԿՊՊԱ, ֆ. 2039, ց. 1, գ. 91, թ. 2։

3 Նույն տեղ։

մեկը ընտրեն ակադեմիայի համար, որպես նվեր իմ կողմից ի հիշատակ իմ 60-ամյա հոբելյանիս[1]։

Հոբելյանի հանդիսավոր նիստը տեղի է ունենում նկարչի տան պատկերասրահի մեծ դահլիճում։ Ողջույնի խոսքով հանդես է գալիս ակադեմիկոս Ա. Ն. Սոկոլովը և կարդում գեղարվեստի ակադեմիայի ուղերձը, որը Այվազովսկուն բնութագրում է որպես «Ռուսական արվեստի պատմության մեջ լուսավոր էջ ստեղծող» արվեստագետ։ Այնուհետև ընթերցվում է ակադեմիայի փոխ-պրեզիդենտ կոմս Ի. Տոլստոյի շնորհավորական հեռագիրը, որով տեղեկացվում է, որ նկարիչ Այվազովսկին կառավարության որոշմամբ պարգևատրվում է սբ. Ալեքսանդր Նևսկու շքանշանով։ Բոլորը հոտընկայա ողջունում և շնորհավորում են ծերունազարդ նկարչին։ Ապա հաղորդվում է Թեոդոսիայի քաղաքային դումայի որոշումը պատվավոր քաղաքացի Հովհ. Այվազովսկու անվամբ նոր դպրոց հիմնելու և նրա անունով թոշակ նշանակելու մասին։ Պետերբուրգի հայկական համայնքի և ընդհանրապես հայ ժողովրդի անունից ողջույնի խոսք է ասում իշխան Կ. Բ. Բեհբությանը (Բեբութովը)։ Նա ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզվով գրված ուղերձը արծաթյա կազմով, որտեղ բազմաթիվ անվանի անձանց հետ ստորագրել էր նաև նկարիչ Գ. Բաշինջաղյանը։ Ռուսաստանի լուսավորության մինիստրության անունից ելույթ է ունենում Կարապետ Էշյանը, Տավրիկյան գավառի անունից՝ նահանգապետ Լազարևը, Ղրիմի հայության անունից՝ Ջերնիկյանը, Ալթունյանը, Պապայանը, Թեոդոսիայի քաղաքագլուխ Ա. Դուրանտեն, Վենետիկի սբ. Ղազար կղզու Մխիթարյան միաբանության կողմից գիտնական-բանասեր Վ. Հացունին և Ս. Սարինյանը, ռուսական ռազմածովային նավատորմի և ծովային մինիստրության ներկայացուցիչը և ուրիշներ։ Հոբելյանն ավարտվում է ճոխ ճաշկերույթով։

Հոբելյանի կապակցությամբ նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը, որը լայնորեն ճանաչված արվեստագետ էր այդ ժամանակ և, ինչպես ասացինք, ստորագրել էր ողջույնի ուղերձը, «Մշակ» թերթում 1897 թ. հրապարակում է հոդված Այվա-

---

[1] «Документы...», էջ 286—287։

զովսկու մասին, որտեղ նա գրում է. «...Դարուս հանճարների շարքում մի պատկառելի տեղ է բռնել ութսունամյա ծերունի Հովհ. Այվազովսկին։ Նա մեծ բանաստեղծ է, բայց ավելի հարմար է ասել՝ ողբերգու բանաստեղծ։ Նա իր կյանքի ընթացքում բնությանը գերի չի եղել, չի հպատակվել նրան, այլ իշխել է նրա վրա, հրամայել է և ենթարկել իր ցանկություններին։ Ծովային բնությունը այդ աստիճան վսեմ և հրապուրիչ արտահայտել՝ մինչև այսօր չի վիճակվել ոչ մի նկարչի անսահման ռուսաց երկրի մեջ։ Լուսնի մելամաղձոտ ջողերը, արևի այրող ճառագայթները, փոթորիկի կատաղությունը, կայծակի սպառնալիքը և ծիածանի ժպիտը Այվազովսկու սրտին հավասար չափով մոտ են։ Նա այդ բոլորը հավասար կերպով աննման արտահայտել է. ...Նա իր կենդանության ժամանակ մտավ այն անմահների շարքը։ Մենք չգիտենք արդյոք կա՞ աշխարհիս մեջ մի մարդ, որ իր աշխատասիրությամբ ու բեղմնավորությամբ հավասարվեր հանճարեղ ծերունուն։ Նա երբեք սպասած չէ մուսային, որ գար ու ոգևորեր իրան։ Մուսան անբաժան է եղած Այվազովսկուց 80 տարվա ընթացքում։ Կարելի՞ է հավատալ, որ մի նկարիչ հարյուր քսան անգամ պատկերահանդես բանար յուրաքանչյուր անգամ տարբեր նկարներից կազմված։ Այվազովսկու հարյուր քսաներորդ պատկերահանդեսին դրված էր յոթանասունհինգ նկար»[1]։

ՆՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՄՈՍԿՎԱՑՈՒՄ

Հոբելյանն ավարտվելուց և հյուրերին ճանապարհելուց հետո Այվազովսկին շարունակում է իր ամենօրյա ստեղծագործական աշխատանքը։ Հոկտեմբերի 24-ին Պ. Մ. Տրետյակովին գրած նամակում նա հայտնում է, որ ինքը մտադիր է Մոսկվայում նոր ցուցահանդես բացել։ Այդ նպատակով նա

---

1 Գ. Բաշինջաղյան, Ճանապարհորդական նոթեր, էսքիզներ, հոդվածներ, 1957, էջ 238։

8 պատկեր է ուղարկում Մոսկվա[1]։ Այդ միտքը նա հայտնում է նաև «Մոսկովսկի վեդոմոստի» թերթի խմբագիր Ի. Ա. Նովիկովին, նշելով նաև, որ «այժմ զբաղված եմ մի մեծ պատկերով, որը ներկայացնում է տիեզերքի ոգին մոլորակների միջև»։ Թե ինչ է ներկայացրել այդ ստեղծագործությունը պարզ չէ, քանի որ այդպիսի վերնագրով պատկեր մեզ չի հասել։ Բայց ցուցահանդեսներ, իսկապես, կազմակերպվել են։ Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսը բացվում է դեկտեմբերի 1-ին, Օդեսայում, որտեղ ցուցադրվում են 16 նկար։ Դեկտեմբերի 9-ին Կարապետ Էջյանին ուղարկած նամակում այդ մասին նկարիչը գրում է. «Այժմ Օդեսայում իմ վերջին ստեղծագործությունների ցուցահանդեսն է։ 16 պատկերների շարքում երեք նկար կա, որոնք պատկերում են թուրքերի վայրագությունները՝ հայերի ջարդերը Տրապիզոնում, շոգենավից կենդանի հայերի մարմարա ծովը նետելը և երրորդը, թե ինչպես թուրքերը պատերազմի ժամանակ Թեսալիայում այրում են հույներին։ Ցուցահանդեսից ստացված մուտքի վճարի ամբողջ գումարը հատկացվելու է տուժած հույներին և հայերին օգնության համար»[2]։

Այդ ցուցահանդեսի մուտքի վճարի գումարը կազմում է 2000 ռ., որը նկարիչն ուղարկում է Կոնստանդնուպոլսի ռուսական դեսպանին և մի առանձին նամակով՝ նաև հայոց պատրիարք Օրմանյանին և խնդրում այդ գումարի մի մասը հատկացնել «Գլխավորապես Փոքր Ասիայի հայերի» օգնությանը, իսկ մյուսը՝ Թուրքիայում տուժած հույներին։ Ռուսական դեսպանը որոշ ժամանակ անց պատասխանում է, որ նկարչի նվիրաբերած գումարը ուղարկվել է Էրզրումի ռուսական դեսպանությանը «առավել տուժած հայերին հանձնելու համար»[3]։ Դժբախտաբար որոշ ռուս նորելուկ քննադատներ, չհասկանալով մեծ ծովանկարչի հայրենասիրական ձգտումները, հարձակումներ են գործում նկարչի վրա, փորձելով նսեմացնել հայկական թեմաներով սյուժետային պատկերները։ «Այվազովսկին «Ջարդը Տրապիզոնում» ձեռ-

---

1 «Документы...», էջ 294։

2 Նույն տեղ, էջ 298։

3 «Документы...», էջ 302։

նարկել է իրեն չվերաբերվող գործ,— գրում է «Մոսկովսկի վեդոմոստի» թղթակիցը,— Այդ կարգի դրամատիկ տեսարանների պատկերումը միանգամայն առանձնահատուկ պահանջներ է ներկայացնում նկարչին, այն էլ ոչ ծովանկարչին»[1]։

Այս և նմանօրինակ քննադատությունը, անկասկած, ըզգալի արգելք է եղել մեծ ծովանկարչի ստեղծագործական ճանապարհին իր ժողովրդի կյանքից թեմատիկ-սյուժետային պատկերներ ստեղծելու գործում։ Սակայն, չնայած դրան, Այվազովսկին հետևողականորեն, հատկապես կյանքի վերջին շրջանում աշխատում է հայկական թեմաներով պատկերների վրա և ստեղծում է Հայաստանի բնությունը, ժողովրդի կյանքը, կենցաղը և պատմական անցքերն արտացոլող սյուժետային պատկերները։ Ցուցադրված թեմատիկ պատկերները, ինչպես և հետագայում նկարածները, հարըստացնում են ազգային գունանկարչությունը 19-րդ դարում, խորացնում թեմատիկ-սյուժետային նկարչության գաղափարական բովանդակությունը։

Մարտի վերջերին փակվում է Այվազովսկու ստեղծագործությունների մոսկովյան ցուցահանդեսը, և նկարիչը Պետերբուրգ մեկնելուց առաջ մարտի 29-ին մի երկտող է գրում տեղի բարեգործական ընկերության նախագահ, իշխանուհի Մ. Ն. Գալիցինային, ցուցահանդեսի մուտքի վճարից ստացված 2200 ռ. բարեգործական ընկերությանը կարիքավորներին օգնելու համար։

Պետերբուրգում նկարիչը նոր ցուցահանդես չի կազմակերպում։ Նա միայն մի քանի նկար է թողնում ակադեմիայում առաջիկա աշնանային (ակադեմիական) ցուցահանդեսի համար։ Նա մտածում է իր նկարներն ուղարկել Անգլիա և ցուցահանդես կազմակերպել Լոնդոնում։ Մայրաքաղաքում նա զբաղվում է գլխավորապես այդ գործով։

Օգտվելով Պետերբուրգում Այվազովսկու ներկայությունից՝ նկարիչ Կուինջին, որը դասավանդում էր ակադեմիայում, խնդրում է ծովանկարչին իր աշակերտների ներկայությամբ նկարել մի ծովանկար. «Ցույց տվեք նրանց, թե ինչ-

1 «Московские ведомости», 1893, № 61.

պես է հարթավոր նկարել ծովը»,— ասում է Կուինջին։ Այվազովսկին համաձայնվում և գնում է Կուինջիի ակադեմիական արվեստանոցը, ուր հավաքվել էին բոլոր աշակերտները։ Մեկ ժամ հիսուն րոպեում Այվազովսկին բոլորի ներկայությամբ աշակերտական վրձնով նրանց ներկապնակով մաքուր գրունտված կտավի վրա նկարում է «Ալեկոծություն» պատկերը և ստորագրում։ «Ազնվալի ծափահարությամբ մենք արտահայտեցինք մեր շնորհակալությունը վարպետ նկարչին և ամբողջ դասարանով ուղեկցեցինք նրան մինչև փողոցում կանգնած կառքը»,— գրում է այդ աշակերտներից մեկը՝ հետագայում ռուս նշանավոր նկարիչ Ա. Ռիլովը իր «Հիշողություններ» գրքում[1]։

Նույն ժամանակ Պետերբուրգում Այվազովսկուն է ներկայանում 19-ամյա Միքայել Միքայելյանը և խնդրում է օգնել իրեն գեղարվեստի ակադեմիա ընդունվելու և քանդակագործության սովորելու համար։ Մեծ հայրենակիցը իր մոտ է հրավիրում նրան, զրուցում, նկարչական աշխատանք է կատարել տալիս և, նկատելով նրա մեջ գեղարվեստական ընդունակություններ, միջնորդում է ակադեմիա ընդունվելու համար։ «Ես Ձեզ ասում եմ,— գրում է Մ. Միքայելյանը նոյեմբերի 31-ին Բաքվի հայոց բարեգործական ընկերությունը,— որ ես ակադեմիայում ընդունված եմ մեր հայ ազգի հանճարավոր նկարչի ձեռով՝ Հովհաննես Այվազովսկու ձեռամբ, որ ակադեմիայում իր ձեռով տեղ է բացել երկու պրոֆեսորի մոտ, որ ես մի քանի անգամ մոտը ներկա եմ եղել, ինձ սիրով ընդունել է»[2]։ Մ. Միքայելյանը հետագայում դառնում է նշանավոր քանդակագործ, աշխատում գլխավորապես կենցաղային քանդակագործության բնագավառում, բայց և ստեղծում է դիմաքանդակներ, այդ թվում՝ Հովհ. Այվազովսկու կիսանդրին։

Գարունը սկսվելուն պես՝ ապրիլին, Այվազովսկին կնոջ հետ վերադառնում է Թեոդոսիա։ Այստեղ նա ծրագրում է նոր ճանապարհորդություն՝ այս անգամ նավարկություն Սև ծովի կովկասյան ափերով։ Այդ նավարկության ընթացքում

---

[1] А. Рылов, Воспоминания, 1977, էջ 64։

[2] Մ. Սարգսյան, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան և հայ նկարիչները, 1978, էջ 172։

Այվազովսկի ամուսինները լինում են ծովափնյա այն քաղաքներում, որոնց նավահանգիստներում շոգենավը, ըստ չվացուցակի, կանգ է առնում։ Համեմատաբար երկար են մնում Բաթումի քաղաքում, որտեղ հասարակությունը, մասնավորապես հայերը, նրանց շատ ջերմ ընդունելիություն են ցույց տալիս։ Այստեղ ցանկություն է հայտնվում Անդրկովկասի հայաբնակ քաղաքներում կազմակերպել Այվազովսկու ստեղծագործությունների ցուցահանդեսներ։ Նկարիչը խոստանում է հաջորդ այցին իր հետ նկարներ բերել և կատարել հայրենակիցների ցանկությունը։ Շուրջ մեկ շաբաթյա նավարկությունից տուն վերադառնալով՝ Այվազովսկին իր հետ բերում է բազմաթիվ ճեպանկարներ՝ գրչանկար, ջրանկար և էտյուդներ, դրանց հիման վրա նոր պատկերներ նկարելու համար։

«ԱԼԻՔՆԵՐԻ ՄԵՋ»

1898 թ. Հովհ. Այվազովսկին նկարում է «Ալիքների մեջ» մեծակտավ պատկերը։ Դա նկարում է ընդամենը 10 օրում։

«Ալիքների մեջ» պատկերը (282×425), որը գտնվում է Թեոդոսիայի պետական պատկերասրահում, ներկայացնում է բաց ծովը ալեկոծման պահին։ Դիտողի առաջ բացվում է ծովային ահեղ տարերքի հոյակապ տեսարան։ Պատկերի սյուժեն կազմում է սև, ամպամած երկինքը և փոթորկոտ ծովը։ Այստեղ ամբողջ կտավը պատկերում է միայն ալեկոծվող, կարծես թե եռացող անծայրածիր ծովը՝ հսկա ու լայնածավալ ալիքներով։ Այս նկարը փոթորկի տեսարան ներկայացնող նախորդ պատկերներից տարբերվում է նախ և առաջ նրանով, որ այստեղ չկա նկարչի նախասիրած ծովափնյա ժայռերի, նավարեկման տեսարան, բնության ահեղ տարերքի և մարդկանց համառ պայքարի մոտիվներ։ Հսկայական կտավը բաժանվում է երկու անհավասար մասերի։ Առաջին մասը, որը գրավում է կտավի կեսից ավելին, պատկերում է փոթորկոտ, ալեկոծ ծովը, իսկ կտավի երկրորդ՝ վերևի փոքր մասը՝ երկինքը, ծովի վրա կախված սև, մռայլ ամպերով։ Այդ ամպերի արանքից ջրի վրա են թափանցել արևի

աղոտ ճառագայթները, որոնք լուսավորել են միայն կոմպոզիցիայի կենտրոնական մասը։ Լույսի շողերը ալիքներին տվել են թափանցիկություն, իսկ նրանց շարժուն, վճռվճռոց փրփուրներին՝ թեթևություն և փայլ։ Իրար հաջորդող ալիքների ռիթմիկ դասավորությունը և լույսի երանգային տեղաբաշխումը ուժեղացնում են ամբողջ կոմպոզիցիայի շարժունակությունը և թվում է, թե ալիքները լեռնացած, մեկը մյուսին հրելով նետվում են դեպի դիտողը։ Պատկերի կենտրոնական մասում լույսով ողողված հսկայական ալիքը ուժեղ ընդգծվածությամբ ու իր ծավալային լուծումով կարծես դուրս է ընկնում կտավից։ Դրան նկարիչը հասնում է նաև գունային գամմայում կիրառած սառը գույների՝ մոխրագույնի, կապույտի, մուգ կապույտի և կանաչի երանգների համադրությամբ։ Ստեղծելով այնպիսի տպավորություն, ինչ զգում է մարդը ուժեղ քամու ժամանակ ծովի ալիքներին մոտ լինելու պահին։ «Ալիքների մեջ» պատկերն աչքի է ընկնում կոմպոզիցիայի պարզությամբ և արտահայտչականությամբ։ Համոզիչ ու բնականորեն է վերարտադրվել դիտողին մոտ թվացող ալիքները, դրանց հզոր ուժը, խորությամբ ընթացող շարժումը։ Այստեղ նկարիչը կերտել է ալեկոծ ծովի ալիքների կերպարներ։ Ծովի կենդանի շարժման և քամու կատաղի ուժի պատկերումը առաջ է բերում վեհության զգացմունք, որպիսին ստեղծվում է միայն արվեստի մեծագույն ստեղծագործություններում։

Այս պատկերը, ինչպես և 90-ական թվականներին նկարած մյուս նկարները ուշագրավ են ոչ միայն թեմատիկայի բազմազանությամբ, այլև գունանկարչական տեխնիկայի առանձնահատկությամբ։ Այժմ նրա պատկերներն այլևս չունեն փայլային վերնաշերտ, որպիսի տեխնիկան հատուկ էր նրա վաղ շրջանի ստեղծագործություններին։ Նկարիչը հակվում է գունանկարչական ավելի լայն ընդհանրացման։

«Ալիքների մեջ» պատկերը նկարիչը անմիջապես ցուցահանդես չի ուղարկում։ Ակադեմիայի սեպտեմբերյան (աշնանային) ցուցահանդեսում, որտեղ ներկայացվում են 390 գործ, նա ցուցադրում է նախորդ տարիների ստեղծագործություններից 6 պատկեր։ Հայ նկարիչներից այդ ցուցահան-

ռեհն մասնակցում է նաև երիտասարդ նկարիչ Էմանվել Մատեսյանը, որը ցուցադրում է 4 էտյուդ[1]։

Ակադեմիական ցուցահանդեսին մասնակցելը Այվազովսկուն չի բավարարում։ Նա մտածում է նորից հանդես գալ մայրաքաղաքի արվեստի աշխարհում անհատական ցուցահանդեսով, բայց չգիտի, թե ինչպե՞ս կընդունի հասարակությունն իր նոր նկարները, երբ ռուսական արվեստի մեջ սկսվել էին ծավալվել մոդեռնիստական-դեկադենտական հոսանքները։ Այդ պատճառով նա Թեոդոսիայից հարցում է անում Պետերբուրգում իր նկարները վաճառող Ի. Ֆեոդորովիչին. «Ես ևս հրաժարվել եմ Պետերբուրգում ցուցահանդես բացելուց,— գրում է նկարիչը հոկտեմբերի 21-ին,— սակայն մի քանի նպաստավոր հանգամանքներ ինձ մղում են նորից որոշել։ Բայց նախքան իմ որոշումը ես ցանկանում եմ իմանալ Ձեր կարծիքն անկեղծորեն. այսինքն՝ արժե՞ ցուցահանդես բացել։ Իսկ գլխավորը, ո՞ր շենքում։ ...Ցուցահանդեսը բաղկացած կլինի իմ վերջին պատկերներից բացի երկու մեծ, մնացածները ոչ մեծ պատկերներ կլինեն»[2]։ Կոմիսիոները, հավանաբար, դրական պատասխան է տվել, և նկարիչը վերջնականապես որոշել է առաջիկա փետրվար ամսին Պետերբուրգում ներկայանալ անհատական ցուցահանդեսով։

Տարեվերջին՝ դեկտեմբերի 31-ին, Այվազովսկին Թեոդոսիայից հեռագրով շնորհավորում է ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկին նոր տարվա առթիվ։ Խրիմյան Հայրիկը էջմիածնից պատասխան հեռագրով շնորհակալություն է հայտնում մեծ նկարչապետին և մաղթում երկար կյանք և առողջություն[3]։

1899 թվականին 82-ամյա նկարիչը Թեոդոսիայում շարունակում է աշխատել նոր կտավների վրա։ Թեև նա որոշել էր փետրվար ամսին ցուցահանդես բացել Պետերբուրգում, սակայն հետո հրաժարվում է այդ մտքից։ Նրան անհանգստացնում էր ոչ միայն ծերունական հիվանդությունը, որի պատճառով բժիշկներն արգելել էին հեռավոր ճանապարհոր-

---

1 *1898 թ., ցուցահանդեսի կատալոգ։*

2 *ՆՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 58, էլ 24։*

3 «Документы», *էլ 306։*

գործյուն կատարել, այլև արվեստի աշխարհում տեղի ունեցող գաղափարական-գեղարվեստական տարբեր ուղղությունների ու խմբավորումների հետզհետե ուժեղացող պայքարը, որի սուր սլաքները երբեմն, ինչպես ցուց կտանք ստորև, ուղղվում էին նաև նրա դեմ։ Ինչպես միշտ, այս շրջանում ևս նկարիչն իր սփոփանքը, հայրենասիրական զգացմունքներն ու ուրախությունը գտնում է ստեղծագործական աշխատանքում։

Գարնան ամիսներին Այվազովսկին նկարում է մի շարք ծովանկարներ ևս. այդ թվում՝ «Անդորրը Ղրիմի ափերի մոտ» գեղեցիկ պատկերը, «Առագաստանավը փոթորկի մեջ», «Կովկասյան լեռները ծովի կողմից», «Փոթորկի մեջ», «Մրրիկը ծովում» և ուրիշներ, որոնցից մի քանիսը ուղարկում է Փարիզ՝ համաշխարհային գեղարվեստական ցուցահանդեսի համար։ Այստեղ Այվազովսկու ստեղծագործությունները ցուցադրվում են ռուսական բաժնում։

Այդ ժամանակ, երբ Փարիզում, ընդհանրապես Արևմտյան Եվրոպայում և հայ իրականության մեջ Այվազովսկու ստեղծագործությունները հետաքրքրությամբ դիտվում, գնվում են բարձր գներով, թանգարաններում և մասնավոր հավաքածուներում պատվավոր տեղեր հատկացվում, Ռուսաստանում մի խումբ դեկադենտներ կատաղի հարձակում են սկսում մեծ ծովանկարչի արվեստի դեմ։ Պետերբուրգում հրատարակվող «Միր իսկուստվա» ամսագիրը, որի հրատարակիչներն էին իշխանուհի Մ. Ֆ. Տենիշևան և Ս. Ի. Մամոնտովը, իսկ խմբագիրը՝ Ս. Պ. Դյագիլևը, օգոստոսյան համարում (№ 8) հրապարակում է «Դիտողություն» («Заметка») հոդվածը, որտեղ հարց է բարձրացվում Ռուսաստանի ազգային թանգարաններից արագորեն և որքան հնարավոր է շուտ դուրս նետել «ամոթալի, ազգային արվեստը վարկաբեկող» ստեղծագործությունները, այդ թվում և Հովհ. Այվազովսկու «Համաշխարհային ջրհեղեղը» մեծակտավ պատկերը[5]։ Այդ անարդարացի, ըստ էության արատավոր մտքի դեմ հանդես են գալիս ռուսական արվեստի առաջավոր գործիչներ, մասնա-

[5] «Мир искусства», 1899, № 8:

վորապես Ի. Ե. Ռեպինը։ Նա «Նիվա» ամսագրում հրապարակում է մի բաց նամակ-հոդված, որտեղ գրում է. «Ես երկրորդ անգամ վճռել եմ անվերադարձ հեռանալ «Միր իսկուստվա» ամսագրի հետ ունեցած ամեն կարգի մասնակցությունից, որի մասին հայտարարում եմ։ Երբեք ես չեմ համաձայնվի խմբագրության այն կարծիքի հետ, թե Ալեքսանդր II-ի թանգարանում գտնվող Այվազովսկու «Համաշխարհային ջրհեղեղ» պատկերը, ինչպես և նկարիչներ Մոլլերի, Պլեշանովի, Վ. Պ. Վերեշչագինի և ուրիշների պատկերները պետք է անհապաղ դուրս նետել թանգարանից, որպես «ազգային արվեստը վարկաբեկող և ամոթալի» իրեր»։ Այդ ուղղությունը դեկադենտական է բառիս իսկական իմաստով։ Նրա իդեալն է ատավիզմ արվեստի մեջ, դիլետանտիզմը դարձվել է դպրոցի (շկոլա) սկզբունք։ ...Էհե՛յ, պարոններ... որտե՞ղ է Ձեր ինքնուրույնությունը... Ձեզ մոտ չկա ոչ մի հարգանք այնպիսի պատվավոր սպիտակամազի, ինքնատիպ տաղանդի նկատմամբ, ինչպիսին միշտ եղել է Այվազովսկին»[1]։ Այս նամակ—հոդվածը արտատպվում է «Միր իսկուստվա» ամսագրում[2], Ի. Ե. Ռեպինին պաշտպանում է ռուս արվեստագետների դեմոկրատական խավը՝ նկարիչներ, գրողներ, երաժիշտներ և մշակույթի այլ գործիչներ։ Սակայն «Միր իսկուստվա» խմբավորման անդամները չեն դադարում հարձակումներից։ Այդ ժամանակ գրված և 1901 թ. հրատարակված «19-րդ դարի ռուսական նկարչության պատմության» գրքում նկարիչ Ալ. Բենուան, որ այդ ընկերության անդամ էր ու դրոշակակիրը, գրում է, թե Այվազովսկին «դուրս է կանգնած ռուսական բնանկարչության դպրոցի ընդհանուր զարգացումից» և որ նրա նկարները վաճառվում են միայն շուկաներում, էժանագին գներով՝ ամիկ ժողովրդի ճաշակին համապատասխան[3]։

Հովհ. Այվազովսկին լսում էր այդ ամենը, դառնությամբ լցվում, բայց վստահ իր գործի արդարությանը, հանդես չէր

---

1 «Нива», 1899, № 15։

2 **Ал. Бенуа**, История русской живописи XIX века», 1901։

3 «Мир искусства», 1899, № 10։

գալիս այդ նորելուկ քննադատների դեմ, համբերատար և լուրջ շարունակում էր աշխատել նոր կտավների վրա, ստեղծագործության մեջ գտնելով իր հանգիստն ու երջանկությունը։

ՆՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

1899թ. հոկտեմբերի սկզբներին «Մի քանի հայերի խրնդրանքով» Հովհ. Այվազովսկին Բաքու է ուղարկում 14 նկար ցուցահանդեսի համար։ Այդ գործի կազմակերպումն իր վրա է վերցնում մի հայ՝ Ֆ. Ա. Բաբայանը։ Հետագայում մի քանի նոր գործեր ավելացնելով, նոյեմբերի 6-ին Բաքվի հասարակական ժողովարանի ամառային շենքում բացվում է նկարչի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը։ Ցուցադրվում են 23 մեծ ու փոքր պատկեր, այդ թվում՝ «Նիագարայի լրվեժը», «Թուխպը Նեապոլի ծովածոցում», «Ալեկոծ ծովը», «Ղրիմի ծովափերը», «Օդեսայի ափերի մոտ», «Արշասարը լուսնկա գիշեր ժամանակ», «Փոթորիկ ծովափի մոտ», «Հնադարյան նավեր», «Ջորջ Բայրոնի այցը Մխիթարյաններին սբ. Ղազար կղզում» և ուրիշներ։

«Այվազովսկու պատկերահանդեսը ունեցավ մեծ հաջողություն»,— գրում է հայկական թերթը[1]։ Ցավոք, պետք է նշել, որ այս ցուցահանդեսի և նրա նշանակության մասին ռուսական արվեստագիտական գրականության մեջ բացարձակապես ոչինչ չի գրվել և նույնիսկ չի մտցվել Ն. Բարսամովի հրապարակած անհատական ցուցահանդեսների ցանկում։ Մինչդեռ Բաքվի ցուցահանդեսը ինչպես նկարչի կյանքի, նույնպես և հայ կերպարվեստի պատմության նշանակալից անցքերից է։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Բաքուն 1890-ական

---

[1] «Մշակ», 1899, № 223։

[2] Նույն տեղ։

քականներին հայ մշակույթի խոշոր կենտրոններից էր Կ. Պոլսի և Թիֆլիսի հայկական օջախներից հետո։ Թերթերը հաղորդում են, որ առավոտից մինչև երեկո ցուցահանդեսը լիքն է այցելուներով։ Արվեստասեր մարդիկ երբեմն ընտանիքներով շտապում են տեսնելու մեծ հայրենակցի արվեստը։ Շատերը գնում են երկու-երեք, իսկ ոմանք շատ ավելի տոմսեր պարբերաբար հաճախելու համար։

Ցուցահանդեսը բացվելուց հետո՝ նոյեմբերի 30-ին, «Մշակ» թերթը հաղորդում է. «Այվազովսկու պատկերահանդեսը, որ բացված էր Բաքվում, ունեցավ մեծ հաջողություն, համարյա բոլոր պատկերները ծախված են։ Շատերի համար ցանկալի էր ունենալ նշանավոր նկարչի ստեղծագործությունները և, անկասկած, եթե ավելի մեծ թվով պատկերներ բերված լիներ, դրանք կծախվեին Բաքվում»[1]։

Հովհ. Այվազովսկին շատ գոհ է մնում Բաքվում բացված իր ստեղծագործությունների ցուցահանդեսից, որը հնարավորություն է ընձեռում մոտիկից ճանաչվելու այդ քաղաքում ապրող հարյուր հազարավոր հայրենակիցների կողմից։ Նրա պատկերները ցուցահանդեսից տեղափոխվում են մեծ մասամբ հայերի բնակարանները։ Դրանք, անշուշտ, ոչ միայն զարդարում են նրանց սենյակները, այլև նպաստում են գեղագիտական ճաշակի մշակմանը։ «Ընդհանրապես շատ հաջող է Բաքվի ցուցահանդեսի արդյունքը,— գրում է նկարիչը Կ. Էզյանին դեկտեմբերի 1-ին,— բացի ծախված 10 պատկերից դեռ երկու մեծ նկար (5000 ռ.) ուղարկելու եմ Թաղիևին՝ նրա պատվերով»[2]։

Հովհ. Այվազովսկին, թեև ցանկանում էր ներկա գտնվել Բաքվի ցուցահանդեսի բացմանը, սակայն նոյեմբերի սկզբներին ծանր հիվանդանալու պատճառով մնում է տանը և բուժվում է հատուկ հսկողությամբ։ Այդ օրերին՝ նոյեմբերի 15-ին, Կարապետ Էզյանին գրած նամակում նա ասում է. «Թեև հիվանդագին վիճակիս ես, այնուամենայնիվ, շտապում եմ գրել մի քանի խոսք։ Երկու շաբաթ առաջ ես ուժեղ հիվանդացա իմ ծերունական հիվանդությամբ։ Ստիպված եղա

---

1 «Документы...», էջ 305։

Մոսկվայից հրավիրել հատուկ բժիշկ Սինիցինին, որը հասցրեց ժամանակին պարզել թոքերի սուր բորբոքում։ Այժմ տեղական բժիշկները, նրա ցուցմունքով, շարունակում են բուժել ինձ, իսկ նա 3 օր հետո վերադարձավ Մոսկվա։ Թուլ եմ, հազիվ նստում եմ, աշխատել այժմ չեմ կարող, իսկ ցուցահանդեսի և այս ձմռանը Պետերբուրգ մեկնելու մասին չեմ էլ մտածում...

Այժմ հեռագիր եմ ստանում, որ շատ պատկերներ գնվել են... Ընդհանրապես հայերը ջերմ վերաբերմունք ունեցան։

Բաքվի հայության ջերմ վերաբերմունքը խորապես ոգեշնչում է նկարչին։ Դրա մեջ նա տեսնում էր իր հարազատ ազգին մատուցած ծառայության գնահատականը՝ այն մեծ, անհուն սերը, որ նա զգացել էր իր ամբողջ կյանքի ընթացքում։ Այվազովսկին միաժամանակ նկատում էր, որ իր ծովանկարներից բացի հայրենակիցներին հետաքրքրում էին, թերևս ամենից ավելի, ազգային հայկական թեմաներով սյուժետային պատկերները։

Այդ է հաստատում նաև Բաքվի ցուցահանդեսում ներկայացված «Ջորջ Բայրոնի այցը Մխիթարյաններին սբ. Ղազար կղզում» պատկերի նկատմամբ հայերի ցուցաբերած բուռն հետաքրքրությունը։ Իսկապես, Առաջին անգամ այստեղ ցուցադրված այդ բազմաֆիգուր սյուժետային պատկերը ընդունվեց որպես հայերի հայրենասիրական ձգտումների և ազատագրական տենչերի գեղարվեստական պատկերավորում։ Նույն տարիներին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած հայկական ջարդերի ծանր ու թարմ տպավորության տակ գտնվող հայերը խորապես հասկանում էին, որ հետամնաց Թուրքիայի բարբարոսական քաղաքականության դեմ ըմբոստացած և նրա դեմ մղվող հույների ազատագրական պայքարում 1824 թ. զոհված անգլիացի բանաստեղծի պատկերումը հայ իրականության մեջ կապված էր հանճարեղ ծովանկարչի հայրենասիրական միտումների հետ։

Պատահական չէ, որ Այվազովսկին իր այդ ստեղծագործության համար թեմա է ընտրել անգլիացի նշանավոր բանաստեղծի այցը հայ մշակույթի օջախներից մեկը։ Ամենից առաջ դա պատմական իրողություն է։ Ինչպես հայտնի է

Իտալիայում եղած ժամանակ՝ 1816 թ., Բայրոնը առաջին անգամ այցելում է Վենետիկի մոտ գտնվող սբ. Ղազարի կղզին՝ Մխիթարյանների հայոց միաբանություն։ Այստեղ նա մոտիկից ծանոթանում է հայ անցյալի գրականությանը, տեսնում է հայերեն նկարազարդ ձեռագրեր, հին հունարեն և հռոմեական պատմիչներից կատարված հայերեն թարգմանություններ՝ գրական հուշարձաններ, որոնց անտիկ բնագրերը վաղուց կորել, անհետացել են և մնացել են միայն դրանց հայերեն թարգմանությունները, ծանոթանում է հայ միջնադարյան պոեզիային՝ Գր. Նարեկացու, Ն. Շնորհալու Ն. Քուչակի և մյուսների երկերին Մխիթարյանների կատարած թարգմանությամբ և այնքան է հրապուրվում հայկական մշակույթով, որ որոշում է հայերեն սովորել։ Դրանից հետո նա համարյա ամեն օր Վենետիկից նավարկում է սբ. Ղազարի կղզին (իսկ երբեմն լողալով անցնում է այն ափից մինչև այս ափը) և վարդապետ Հարություն Ավգերյանի մոտ կարճ ժամանակամիջոցում հայերեն կարդալ ու գրել է սովորում այնքան լավ, որ ձեռնամուխ է լինում հայերենից անգլերեն թարգմանել դասական երկերից հատվածներ, պատմական արժեքավոր փաստաթղթեր, իսկ Ավգերյանի հետ նույնիսկ կազմում է հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն բառարաններ ու հրատարակում։ Այդ կապակցությամբ Բայրոնը 1817 թ. գրել է. «...Ինձ դժվար է թվում գտնել մի որևիցե ազգի ժամանակագրություն զերծ մեծ արատներից, որքան հայերի պատմությունը, որոնց առաքինությունները խաղաղության արգասիք են, իսկ թերությունները՝ բռնադատության արդյունք։ Սակայն ինչ էլ եղած լինի նրանց բախտը և ինչ էլ որ կարող է լինել ապագայում և այդ եղել է արդեն դառնագույնը. նրանց երկիրը հավերժորեն ամենահետաքրքրականը պիտի լինի ամբողջ տիեզերքում և թերևս նրանց լեզուն է միայն, որ ինչքան ուսումնասիրվում է, այնքան դառնում է գրավիչ»[1]

Ծանոթանալով հայ ժողովրդի և նրա բազմադարյան հարուստ մշակույթի պատմությանը, ազատատենչ Բայրոնը

---

[1] Հայկական ԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 3, էջ 68։

1824 թ. Հունաստան է գնում Թուրքիայի բռնակալության դեմ կռվելու Հունաստանի և հույն ժողովրդի ազատագրության համար։ Բայց նա կռվում և զոհվում է ոչ միայն Հունաստանի, այլև մյուս ճնշված փոքր ժողովուրդների ազատության համար։ Իզուր չէ, որ Բայրոնի ժամանակակիցներից մեկը՝ Մխիթարյան միաբանության վանահայր Նիկողոսը, հետագայում Բայրոնի անգլիացի կենսագիրներից մեկին հիշողություններ պատմելիս, ասում է «Իմ լորդ Բայրոնը մեռավ Հունաստանի համար, բայց նա մեռավ նաև Հայաստանի համար»։

Հայ ժողովուրդը և նրա առաջավոր գործիչները միշտ էլ բարձր են գնահատել անգլիացի մեծ բանաստեղծին։ 19-րդ դարում Բայրոնը դիտվել է որպես հեղափոխական պոեզիայի ներկայացուցիչ և հայ դեմոկրատական գործիչներն անդրադառնալով Բայրոնին, օգտագործել են նրա մարտաշունչ պոեզիան իրենց ազգային իղձերն արտահայտելու համար։ Հայ իրականության մեջ Բայրոնի մեծարումը միաժամանակ կապված էր այն նշանակալից դերի հետ, որ կատարել է Բայրոնը հայոց լեզուն և նրա մշակույթը օտարերկրացիներին, մասնավորապես եվրոպացիներին, ծանոթացնելու գործում։ Վերջապես Բայրոնի պոեզիայի հեղափոխական ռոմանտիզմը, նրա բոցաշունչ, ազատագրական ձգտումները, նրա պայքարը հին, կործանարար ուժերի, անարդարության, բռնակալության դեմ, նրա լավատեսությունն ու ժողովրդասիրությունը համահնչուն էին անցյալ դարի երկրորդ կեսի հայ գրականության և արվեստի առաջավոր գործիչների ձգտումներին։ Դրանով պետք է բացատրել, որ տեղևս Ջորջ Բայրոնի կենդանության օրոք և առանձնապես 19-րդ դարի երկրորդ կեսին հայ գրողներն ու արվեստագետները բազմիցս անդրադարձել են Բայրոնին, նրա ստեղծագործություններից թարգմանություններ կատարել, նրա մասին գրել են հոդվածներ, ուսումնասիրություններ, բանաստեղծություններ և գրքեր։

Նույն ժամանակ Բայրոնի կերպարը արտացոլում է գրտնում նաև հայ նկարչության մեջ։ Դեռևս անցյալ դարի 80-ական թվականների սկզբներին Կ. Պոլսում նկարիչ Մկրտիչ Ճիվանյանը նկարում է «Լորդ Բայրոնի երազը» պատկերը,

որը 1882 թ. մայիսին ցուցադրվում է Կ. Պոլսի անգլիական դեսպանի կազմակերպած գեղարվեստական ցուցահանդեսում։ Ժամանակակից պոլսահայ մամուլը հաղորդում է, որ այդ պատկերի մեջ «...անվանի քերթողը կերևի երազուն, և իր շուրջը կնշմարվեն շքեղ բնություն, արևելյան քարավաններ և Հայաստանի ավերակներ»[6]։ Այդ պատկերը մեզ չի հասել։ Սակայն դատելով ականատեսի սեղմ նկարագրությունից կարելի է ընդունել, որ արևմտահայ նկարիչը ձգտել է գեղարվեստական կերպավորման միջոցներով վերարտադրել հայ ժողովրդի ու Հայաստանի վերաբերյալ Բայրոնի հիացական խոսքերն Արարատյան երկրի գեղատեսիլ բնության, նրա արևելյան կոլորիտի ու միաժամանակ օտար զավթիչների կողմից ավերակ դարձած հայոց նախկին շեն օջախները...

Հովհ. Այվազովսկին, ամենայն հավանականությամբ, տեսել է այդ նկարը 1890 թ. Կ. Պոլսում հայազգի արվեստագետի հետ ունեցած հանդիպման ժամանակ, երբ տեղացի նկարիչները նրան ցույց են տվել իրենց ստեղծագործությունները։ Սակայն հանճարեղ ծովանկարիչը 1890-ական թվականներին ականատես լինելով հարազատ ժողովրդի նկատմամբ թուրք բարբարոսների մասսայական վայրագություններն ու հայկական ցեղասպանությունը, մտահղանում է ծովային տեսարանով այս սյուժետային պատկերը, որտեղ աչքառու ցույց է տրվում, թե ինչպիսի համաշխարհային մեծություններ, այդ թվում և Ջորջ Բայրոնը, բարձր են գնահատել հայ ժողովրդին, նրա բազմադարյան հարուստ մշակույթը և ազնիվ, ստեղծագործ աշխատանքը, որոնք այժմ թուրքերն անխնա ոչնչացնում են։

Հովհ. Այվազովսկին այստեղ պատկերել է Բայրոնի հավանաբար երկրորդ այցը։ Ինչպես հայտնի է, բանաստեղծը առաջին անգամ Մխիթարյան միաբանության հայրեր Ս. Սոմալյանի և Հարությունի հետ երկու ժամ զրուցելուց և վանքում կատարվող գիտական աշխատանքներին ծանոթանա-

---

6 «Մասիս», 1882, մայիս

լուց հետո ցանկություն է հայտնում այցելել նաև հայոց օրը առավոտյան, որը նա կատարում է ճշտորեն։ Ահա հենց այդ երկրորդ այցելության ժամանակ Մխիթարյաններ մեծ խմբով ու հանդիսավոր դիմավորում են անգլիացի նշանավոր գրողին։ Նկարիչը, այսպիսով, պահպանել է պատմական իրողությունը։

«Ջորջ Բայրոնի այցը Մխիթարյաններին ս. Ղազար կղզում» նկարը պատկերում է հանդիսավոր ընդունելության տեսարան։ Ռեալիստորեն և դիմանկարային ճշգրտությամբ նկարիչը պատկերել է ծաղկազարդ գոնդոլով ս. Ղազար եկած և արդեն ափ իջած անգլիացի երիտասարդ բանաստեղծին ու նրան սիրալիր դիմավորող Մխիթարյաններին։ Առաջին պլանում են Միաբանության ավագ հայրերը՝ Հարություն Ավգերյանը, Սուքիաս Սոմալյանը, Հարություն վանահայրը և միաբանության մյուս հոգևոր ու գիտնական անձինք, իսկ նրանց հետևի շարքում՝ ուսումնարանի պատանի սաները։ Հեռվում երևում են Վենետիկի ծովափնյա շենքերի սիլուետները, նավահանգստի առագաստանավեր և գոնդոլներ, որոնցից մեկի մեջ եղած մի խումբ մարդիկ և գոնդոլավարը հետաքրքրությամբ դիտում են այդ հանդիսավոր հանդիպումը։ Ծովածոցի խաղաղ, հայելապատ մակերեսի վրա արտացոլված վաղորդյան արևի պայծառ ճառագայթները, սպիտակ ու թեթև ամպերով պատած բարձր երկնակամարի լուսառատությունը և մարդկանց դեմքերի ջերմագին արտահայտություններն այս պատկերին տալիս են տոնական կենսուրախ տրամադրություն։ Դրան նպաստում են նաև Բայրոնին ուղեկցող երաժշտի ուրախ կերպարը և գետնին փռված ուղեգորգի տաք կարմրագույնը։

Պատկերի կոմպոզիցիայի հիմնական առանցքը բանաստեղծի կերպարն է։ Բայրոնի ֆիգուրը նկարիչը տեղադրել է դիտողին մոտիկ, նրա աչքի առաջ՝ մեծ կտավի աջ կողմի ներքևի շրջանակի մոտ, գետնին փռված կարմիր ուղեգորգի վրա արագ քայլերով հյուրընկալներին մոտենալիս։ Բանաստեղծն այստեղ երևում է գեղեցիկ դիմագծերով, ինչպես իրականում իրոք եղել է, աշխույժ և կայտառ շարժման մեջ։ Ձեռքերը երկու կողմ լայն բացած, մեկում՝ գլխարկը, նա,

Գործես, ուզում է գրկաբաց փարվել իրեն ընդառաջ եկող անձանց՝ բազմաչարչար, ազատությունը կորցրած, բայց անկախության ու ստեղծագործ ոգին պահպանած հայ ժողովրդի հոգևոր ու գիտնական զավակներին, որոնք այդ ժամանակ էլ շարունակում էին իրենց մշակութային բեղմնավոր գործունեությունը։

Հայ մշակութային այդ խոշոր օջախը կատարած անգլիացի բանաստեղծի այցի ու նրա գործերի մասին նկարիչը լսել էր դեռևս 1840—1843 թթ. ս. Ղազար կատարած այցելությունների ժամանակ։ Այդ նույն տարիներին այստեղ ապրում և աշխատում էր նաև նրա ավագ եղբայր Գաբրիել Այվազյանը (Այվազովսկին), որի երիտասարդ ժամանակվա դիմանկարը, չնայած տարիների տարբերությանը, նկարիչը տեղադրել է սույն կոմպոզիցիայի աջ անկյունում՝ Բայրոնին դիմավորողների խմբում (աջից երկրորդը)։ Հովհ. Այվազովսկու այս ստեղծագործությունը, որի մեջ մեծ տեղ է գրավում բնության տեսարանը, պատմական ժանրի նկար է։ Սակայն նկարիչը պատկերել է ոչ միայն պատմական անցք, այլև ազատատենչ մեծ բանաստեղծի կերպարով արտահայտել է իր հարազատ ժողովրդի ազատագրական ձգտումները։ Հայրենասիրական բովանդակությամբ այս մեծակտավ բազմաֆիգուր սյուժետային պատկերը նշանակալից ներդրում է 19-րդ դարի ազգային կերպարվեստի և հասարակական մտքի պատմության մեջ։

Հովհ. Այվազովսկին նոր էր ապաքինվել թոքերի բորբոքումից և արդեն սկսել էր աշխատել, երբ նրան է այցելում նկարիչ Վարդգես Սուրենյանցը։ Նա բերել էր Ա. Ս. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի ռուսերեն հոբելյանական շքեղ հրատարակությունը իր գեղարվեստական ձևավորմամբ և նկարազարդումներով։ Վ. Սուրենյանցը մեծ ծովանկարչին է նվիրում իր ստեղծագործական աշխատանքի պտուղը՝ պատկերազարդ «Բախչիսարայի շատրվանը» գիրքը, հետևյալ մակագրությամբ.

«Профессору И. К. Айвазовскому. Иллюстраций в этом с глубочайшим уважению посвящает Вардгес Суренянца ... 7

---

7 А. С. Пушкин, «Бахчисарайский фонтан», 1899, Спб.:

Այս ժամանակ էլ նրանց միջև տեղի են ունենում զրույցներ հայ կերպարվեստի վիճակի և հայ նկարիչների միավորման, մեկ միություն կազմելու մասին։ Վ. Սուրենյանցի վկայությամբ Այվազովսկին հոգատարություն է ցուցաբերում հայ կերպարվեստի ապագա բախտի և տարբեր երկրներում ապրող ու գործող ազգային նկարիչներին գեղարվեստական մեկ ընկերության մեջ համախմբելու համար։ Հետագայում կարդացված մի զեկուցման մեջ Վ. Սուրենյանցը խոսելով այն մասին, որ «Մենք ունենք առանձին հայ նկարիչներ՝ ցրված աշխարհի զանազան ծայրերում... որ այդ կերպ անջատված ենք իրարից և չենք կազմում մի ամփոփ ընկերություն» միաժամանակ հայտնում է, որ այդ «գանգատը ես անձամբ հանգուցյալ Հովհաննես Այվազովսկուց ևս լսել եմ»։ Դա նշանակում է, որ Այվազովսկին դեռևս 1890-ական թվականներին ոչ միայն հետաքրքրվել, այլև միջամտել է հայ նկարիչների միությունը կազմակերպելու գործին՝ մի խնդիր, որ իրականացվեց միայն 1916 թվականին։

Հովհ. Այվազովսկին միևնույն ժամանակ հատուկ հետաքրքրություն է հանդես բերում նաև իր թոռան՝ Մ. Լատրիի նկատմամբ։ Նա իր թոռանը ուղարկում է Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիա՝ տալով միջնորդական մի նամակ ակադեմիայի բնանկարչության դասարանի ղեկավար, ակադեմիկոս Լ. Ա. Կիսելյովի անունով. «Այս երկտողը կտա Քեզ իմ թոռը՝ Միքայել Լատրին։ Նա մեկնում է Պետերբուրգ, որպեսզի շարունակի աշխատել ակադեմիայում։ Խորապես խնդրում եմ չհրաժարվեք նրան խորհուրդներ տալ։ Նա տաղանդավոր ու լավ երիտասարդ է»։ Այդ տաղանդավոր ու լավ երիտասարդը որոշ ժամանակ սովորում է Լ. Ա. Կիսելյովի մոտ, բայց շուտով թողնում է ակադեմիան և զբաղվում է նկարչությամբ։

Նա նկարում է գերազանցապես էտյուդներ։ Նույն ժամանակ Հովհաննես Այվազովսկին կենսագիր Ն. Կուզմինի խնդրանքով գրում է հիշողություններ բանաստեղծ Ս. Ծա. Նազոնի հետ ունեցած ծանոթության և նրա մասին, որը հետագայում տպագրվում է պետերբուրգյան «Միր» ամսա-

գրում[1]։ Ընդառաջելով Ն. Կուզմինի խնդրանքին՝ նա մի ընդգարձակ պատասխան-նամակ է գրում նաև իր պատկերասրահի մասին։ Կենսագրի այն հարցին, թե ո՞ր պատկերներն է նա համարում իր լավագույն ստեղծագործությունները, նկարիչը դժվարանում է պատասխանել, քանի որ, ինչպես ինքն է գրում, ամեն մեկի մեջ ինչ-որ հաջող բան կա, բայց ընդհանրապես «Դրանք ինձ լիովին չեն բավարարում։ Եվ այժմ այդ պատճառով ես շարունակում եմ նկարել՝ ձգտելով հնարավորին չափ ուղղել իմ նախկին թերությունները, որի համար էլ ստիպված եմ երբեմն կրկնել նախկին սյուժեներն ու մոտիվները։ Ընդհանրապես, կարող եմ ասել մեկ բան... այն պատկերները, որոնց մեջ գլխավոր ուժը արևի կամ լուսնի լույսն է, ինչպես և ալիքները և ծովային փրփուրները, պետք է համարել լավագույնները»[2]։ Այնուհետև Այվազովսկին գրում է. «Գիտեմ, որ կան և շատ կան դեկադենտներ, որոնք չեն համակրում իմ ստեղծագործությունները և դեռ ձգտում են ստեղծել իրենցը, բայց իմ կողմից անշնորհակալ կլիներ չտեսնել ինձ հարգողներին և՛ արտասահմանում, և՛ Ամերիկայում, և՛ Ռուսաստանում, և՛ ընդհանրապես չգնահատել քաղաքակիրթ ռուսական հասարակության համակրանքը, որը հաստատվում է իմ ամբողջ գեղարվեստական գործունեության ընթացքում և ինձ թանկ է հենց այդ համակրանքը, որի շնորհիվ էլ ես աշխատում եմ։ 20—30 տարի առաջ իմ դեմ ուղղված բոլոր բանսարկությունները ինձ ոչ մի չափով չեն վհատեցրել և իմ մշտական աշխատանքը հաղթանակել է»[3]։

Եվ իսկապես։ Մեծ արվեստագետի և նրա ստեղծագործությունների դեմ անցյալի հարձակումները և, ինչպես ցույց տվեցինք, վերջին տարիներին դեկադենտների բացարձակ ժխտումը և նույնիսկ թանգարաններից դուրս նետելու պահանջները, բնավ էլ չեն ընկճել նկարչին։ Ազնիվ արվեստագետի դեմոկրատական արվեստը հաղթանակել է հետադիմական ուժերի նկատմամբ, ոգեշնչված հասարակության

1 Мир», 1912, № 1, էջ 70—71; տե՛ս նաև «Документы...», էջ 306։

2 «Документы...», էջ 308։

3 Նույն տեղ, էջ 309։

առաջավոր խավերի և ժողովրդի սիրով ու համակրանքով։ Այվազովսկին շարունակում է աշխատել առաջվա պես և 82 տարեկան հասակում դարձյալ մտածում է կրկին մեկնել Պետերբուրգ և այնտեղ ցուցադրել իր նոր ստեղծագործությունները...

«Ես այժմ այնքան լավ եմ զգում, որ երազում եմ Պետերբուրգ մեկնել մեկ ամսով փետրվարի 25-ից մինչև մարտի 25-ը,— գրում է նկարիչը Կ. Էզյանին դեկտեմբերին և ավելացնում,— իհարկե, Աննա Մկրտումովնայի և քրոջս հետ, կիջևանենք Եվրոպական հյուրանոցում»։

ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

1900 թ. հունվար-փետրվար ամիսներին Այվազովսկին Թեոդոսիայում շարունակում է լարված աշխատել։ Մայրաքաղաքի արվեստասեր հասարակայնությանը կրկին ներկայացնելու համար նա նկարում է նոր ծովանկարներ և թեմատիկ-ժանրային մեծակտավ պատկերներ։

Թեոդոսիայում նկարիչը միաժամանակ զբաղվում էր իր հայրենակիցներին, մասնավորապես մշակութային գործիչներին հովանավորելու և հայկական համայնքի օգնության գործերով։ Հունվարի 14-ին Սիմֆերոպոլի հայոց եկեղեցում օծվում է հայկական եկեղեցուն նվիրված Այվազովսկու «Սուրբ Աստվածածին» պատկերը։

Այդպիսի մի պատկեր Այվազովսկին նվիրում է նաև Թեոդոսիայի Հայոց Հրեշտակապետաց եկեղեցուն, որը օծվում է փետրվարի 2-ին։ Պատկերը կոչվում է «Հիսուսը ծովի վրա ման գալիս», որը մինչ այդ ցուցադրվել էր Մոսկվայի 1897 թ. անհատական ցուցահանդեսում և Ռիգայի գեղարվեստական պատկերասրահում։ Այդ պատկերն օծելու ժամանակ ինչպես հաղորդում է մամուլը, «...եկեղեցին լիքն էր բազմությամբ, նույնիսկ վերնատանն ու գավթում պարապ տեղ չէր մնացել, այնքան շատ էր ժողովուրդը»[1]։

---

1 «Մշակ», 1899, № 25։

Հովհ. Այվազովսկու հոգատարությունն արտահայտվում է նաև երիտասարդ երաժիշտ Ալեքսանդր Սպենդիարյանի ամուսնության հարցում։ Ալ. Սպենդիարյանը սիրահարվել էր իր վաղամեռիկ եղբոր կնոջը, որը նկարչի բարեկամն էր և ցանկանում է ամուսնանալ անպայման նրա հետ։ Ալեքսանդրը, ինչպես և նրա բարեկամներն ու հարազատները, խնդրում են նկարչից միջնորդել ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի առաջ, որ նա թույլատրի այդ ամուսնությունը։ Էջմիածնի կաթողիկոսական արխիվում պահպանված փաստաթղթերից երևում է, որ նկարիչը միջնորդել է այդ ամուսնության օգտին և գործը պսակվել է հաջողությամբ։ Տարիներ հետո, երբ ծովանկարիչն այլևս չկար, կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանը գրում է «Ղրիմի էսքիզներ» երաժշտությունը և նվիրում Այվազովսկու պայծառ հիշատակին, որպես երախտագիտության նշան[1]։

Շատ հուզիչ է Այվազովսկու միջնորդությունը պաշտոնից զրկված Խորեն եպիսկոպոս Ստեփանյանի (Ստեփանե) իրավունքները վերականգնելու խնդրում։ Ազգային մշակույթի ճանաչված գործիչ, գրականագետ և թարգմանիչ Խորեն Ստեփանյանը, որ երկար տարիներ Թեոդոսիայի հայոց վանքի վանահայրն էր, պաշտոնաթող էր արվել։ Այվազովսկին, որ մոտիկից գիտեր նրան և նույնիսկ նկարել էր նրա դիմանկարը (1899), խորապես ցավում է նրա համար։ Նա փետրվարի 16-ին գրում է կաթողիկոս Խրիմյան Հայրիկին վերականգնելու այդ վաստակաշատ գործչի իրավունքներն ու պատիվը։ «...Նորեն կդիմեմ Ձեր վեհափառությանը և կխնդրեմ անուշադիր չթողուլ այս օգտակար եկեղեցիականը,— գրում է նկարիչը Խրիմյանին,— ցավալի է, որ այդպիսի գործունյա և իրոք հայասեր եկեղեցիականի կյանքը ապարդյուն կանցնէ։ Մանավանդ Ձեր վեհափառության օրոք... Կտեսնենք Խորեն եպիսկոպոսին եռանդը նույնիսկ անմարդարնակ անտառի մեջ և ավելի կցավինք, որ իր ունեցած շնորհներն այն օգուտ չեն տար, որի կարիք շատ զգալի է ամեն տեղ։ Իր վանքին մեջ այսօր նոր գմբեթ կշինե, վաղը աղբիւր կնորոգե, մի ուրիշ անգամ այգիներ մշակել կտա, մերձակա Սիմ-

1 «Документы...», էջ 356—357։

Ֆերոպոլի, Թեոդոսիայի, Կարասու-բազարի հայոց ժողովրդեան թե՛ անձամբ քարոզելով և թե՛ գրով կյորդորէ իրենց մայրենի լեզուն սովորել, իրենց եկեղեցին պաշտել, ազգային քրիստոնեական պատարագը չմոռանալ և այլն։ ...Դուք գիտեք, որ ինձ համար ոչինչ անձնական պետք չկա այս խնդրո մեջ, այլ իբրև հայ և տեսնելով հանգամանքները, կցավիմ շատ այս դրութեան վրա։ Պետերբուրգի մեջ պատրաստ եմ հարկավոր միջնորդութիւն անել Խորէն եպիսկոպոսի վերաբերմամբ, եթե կ'ուզէք։ Ուստի բարեհաճեք ընդունել յանդիման, զոր կմատուցանեմ Ձեզ կյանքիս վերջին շրջանի մեջ, ապերդյուն չթողուլ հայ ժողովրդեան համեստ այս արդյունավոր հոգևորականի կյանքը, որ տկարացած է արդեն անգործութեան մեջ եւ այժմ իսկ բժշկվելու պետք կը գայ»[1]։

Ինչպես տեսնում ենք Այվազովսկին այս միջնորդությունը, ինչպես և նրա մյուս միջնորդությունները էջմիածնի առաջ, կատարում է «իբրև հայ» և «հայ ժողովրդեան համար»։ Նրկարչի միջնորդությունը հարգվում է. Խորեն եպիսկոպոս Ստեփանյանը տեղափոխվում է Թիֆլիս, ուր շատ չանցած, ծանր հիվանդությունից մեռնում է։

Այս նամակը ուղարկելուց առաջ Այվազովսկին իր մոտ է կանչում Խորեն Ստեփանյանին «առանձնացած» զրուցելու համար։ Հայաստանի պետական պատմական արխիվում պահպանվել է փետրվարի 17-ին ցերեկը գրած այն երկտող նամակը, որով նկարիչը հրավիրում է նրան իր մոտ երեկոյան ժամը 7-ին։ «Պատվական սրբազան,— գրում է նկարիչը հայերեն,— կրնա՞ք ժամը 7-ին գալ այսօր մեկ-երկու ժամվա չափ շատ ուրախ կլնայինք, ուրիշ մարդ չըլլար։ Շուտով ճամփորթինք Պեթերպուրկ, ուրախ կլլամ տեսնվիլ յերթալե առաջ։ Մնամ խոնարհ ծառայ Յով. Այվազովսկի»[2]։

Խորեն եպիսկոպոս Ստեփանյանը, իհարկե, երեկոյան գընում է նկարչի մոտ և նրանք միասին, երբ «ուրիշ մարդ չըլլար», երկար զրուցում են։ Ամենայն հավանականությամբ նրանք միասին կազմում և վերջնական տեսքի են բերում Այվազովսկու կտակը, քանի որ 83-ամյա նկարիչը Պետերբուրգ

---

1 «Մշակ», 1900, № 90։

2 «Документы...», էջ 209։

Մեկնելուց առաջ մտածել էր կարգավորել իր բոլոր գործերը, իսկ կտակի վրա զգացվում է այդ գիտնական-վանականի ազդեցությունը։*

ՎԵՐՋԻՆ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԵՍԸ

Խորեն եպիսկոպոս Ստեփանյանի հետ ունեցած երեկոյան զրույցից մի քանի օր հետո՝ փետրվարի վերջերին, Այվազովսկին մեկնում է Պետերբուրգ, ուրտեղ իր ստեղծագործությունների նոր ցուցահանդես կազմակերպելու նպատակով։ Նա իր հետ մայրաքաղաք է տանում 10 փոքրածավալ նկար, իսկ մեծատաղ պատկերները ուղարկում է փոստով։ Պետերբուրգում այդ ժամանակ բոլոր այն շենքերը, որոնք ցուցահանդեսային սրահներ ունեին, զբաղված էին։ Այվազովսկին ստիպված իր ցուցահանդեսը բացում է Ֆոնտանկա գետի ափին գտնվող մի իշխանի առանձնատան երկրորդ հարկի երեք սենյակներում։ Այդպիսի բան ընդունված էր այն ժամանակ։ Այստեղ ցուցադրվում է 15 պատկեր։ Բոլոր մեծ ու փոքր պատկերները պատերից կախվում կամ նկարակալի վրա են դրվում ծերունի նկարչի ձեռքով ու նրա անմիջական մասնակցությամբ։ Նրան օգնում էր միայն իր թոռը Միքայել Լատրին, որը սովորում էր գեղարվեստի ակադեմիայում։ Այվազովսկին է գրում նաև նկարների պիտակները և իր ձեռքով փակցնում դրանց տակ։ Այդ ցուցահանդեսով, ինչպես նկարչին է գրում, ինքը ցանկանում է «...Պետերբուրգի հասարակության դատին ներկայացնել իր վերջին ստեղծագործությունները»։ Թերևս այդ նպատակով էլ նա, չնայած պատկառելի տարիքին և մարտ ամսվա սառնամանիքներին, հա-

---

* *Այդ կտակում Այվազովսկին իր պատկերասրահը առանձնատան հետ, այնտեղ եղած 49 պատկերներով, որը ժամանակին (1900 թ.) գնահատվել է 300.000 ռ. նվիրում է ծննդավայր Թեոդոսիա քաղաքին, իսկ Ղրիմում ունեցած կալվածքը և այգիները 40.000 ռ. արժեքով հատկացնում է հայոց կուլտուր-լուսավորական հիմնարկներին, դպրոցների և Ղրիմի հայկական եկեղեցիների օգտին։*

մարյա ամեն օր լինում է ցուցահանդեսում, զրուցում այցելուների հետ, հետաքրքրվում նրանց կարծիքով, ուրախանում և հուզվում է մարդկանց բազմազան տպավորություններով։

Պետերբուրգի արվեստասեր հասարակայնությունը, չընայած այդ ժամանակ ուժեղացող ֆորմալիստական հոսանքների աղմկոտության և նկարչի դեմ մի քանի նորելուկ քննադատների ժխտողական վերաբերմունքին, բարյացակամ ընդունելություն է ցույց տալիս։ Առանձնապես գրավիչ էին «Պետերոս Մեծը ֆինլանդական ծովափին կրակե ազդանշան է տալիս ռուսական նավատորմին», «Միջերկրական ծովի ափին» մեծակտավ պատկերները, «Լուսնյակ գիշեր Սև ծովում» և այլ պատկերներ։ Ռուսական գեղարվեստի ակադեմիան ևս բարձր գնահատելով Այվազովսկու նոր ստեղծագործություններ և դրանց նշանակությունը նկարչության հետագա զարգացման գործում, մարտի 18-ին որոշում է կայացնում Այվազովսկու անունով անհատական թոշակ նշանակել գեղարվեստի ակադեմիայում։

Այդ օրվանից ամեն տարի պարբերաբար Այվազովսկու անվան անհատական թոշակ է տրվում ակադեմիայի լավագույն ուսանողներին։ Մեծ ծովանկարչի անունով ակադեմիայում ուսանողական անհատական թոշակ նշանակելու մասին վերհիշյալ որոշումը արդյունք էր Այվազովսկու վերջին պատկերահանդեսի ունեցած հաջողության և գեղարվեստի աշխարհում ունեցած լայն ճանաչման։

Պետերբուրգում Այվազովսկին միաժամանակ զբաղվում է իր ընտանեկան գործերով։ Նա գրավոր դիմում է թագավորկայսր Ալեքսանդր Երրորդին, խնդրելով նրա թույլտվությունը և կարգադրությունը Այվազովսկի ազգանունը իր ավագ դստեր՝ Հեղինեի որդուն՝ Ալեքսանդր Լատրիին, տալու համար։ Նկարիչը գրում է. «Ջուենեայով արու որդիներ, աստված ինձ աղջիկներ ու թոռներ է պարգևել։ Ցանկանալով ունենալ և պահպանել Այվազովսկի ազգանունը կրող, իմ տոհմը շարունակող, ես որդեգրում եմ իմ թոռ Ալեքսանդր Լատրիին՝ իմ ավագ աղջկա, դոկտոր Լատրիի այրու որդուն, որի մասին ես արդեն հայտարարություն եմ արել,— գրում է նկարիչը 1900 թ. մարտի 24-ին,— Համարձակվում եմ... խնդրել... որդեգրած թոռանս՝ Ալեքսանդր Լատրիին, տալ իմ ազգա-

նունը տոհմի գերբի ու տոհմական ազնվականի արժանապատվության հետ»[1]։

Այս դիմումին թագավոր-կայսրը, որը անցյալում միշտ բնդառաջել է նկարչի խնդրագրերին, այս խնդրում անմիջապես չի պատասխանում։ Նկարչի խնդրագիրը երկար ժամանակ մնում է կայսերական տան մինիստրության թղթապանակներում*։

Երկար չսպասելով՝ Այվազովսկին մարտի վերջերին փակում է իր պատկերահանդեսը, մուտքի վճարի ամբողջ գումարը նվիրում է «Գեղարվեստի ստեղծագործությունների ցուցահանդեսների ընկերության»։ Ստեղծագործական նոր ու մեծ պլաններով լցված, ապրիլի 5-ին հրաժեշտ է տալիս Պետերբուրգին։ Երկաթուղային կայարանում նրան ճանապարհելու եկած մարդկանց նա ասում է, որ ինքը մտադրություն ունի առաջիկայում կրկին ճանապարհորդել դեպի Իտալիա, նորից լինել Հռոմում և նեապոլում, աշունն ու ձմեռն անցկացնել այդ երկրում, իսկ վերադարձին կրկին գալ Պետերբուրգ։ Այդ տրամադրությամբ և լավատես ոգով Այվազովսկին ապրիլի սկզբներին վերադառնում է Թեոդոսիա։

ՄԵՆ ԾՈՎԱՆԿԱՐԶԻ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

«Ներունի նկարիչը Պետերբուրգից եկավ առողջ և զվարթ»,— հաղորդում է հայկական թերթը[2]։ Նորից իր սեփական տանը, իր հարազատ ժողովրդի մեջ, հայրենակիցների այն միջավայրում, ուր նկարիչն անց էր կացրել իր ամբողջ կյանքը, նորից հին ու նոր բարեկամների այցելություններ։ Գարնանային թարմ օդը, ապրիլյան պայծառ արևոտ օրերը նրան ներշնչում են նոր եռանդ և ստեղծագործական նոր խիզախումներ։

---

1 ՀՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1412, 1800, ց. 1, գ. 213, թ. 1։

* Հովհ. Այվազովսկու դիմումը թագավոր-կայսրի կողմից բավարարվել է նկարչի մահից հետո՝ 1901 թ. մայիսի 17-ին։

2 «Մշակ», 1900, № 76։

Իր առանձնատանը և Շախ-մամայում որոշ ժամանակ հանգստանալուց հետո, Այվազովսկին կազմում է դեպի Իտալիա կատարելիք նոր ճանապարհորդության պլան։ 83-ամյա նկարիչը ծրագրում է նորից լինել Հռոմում, Նեապոլում, Վենետիկում. վերհիշել երիտասարդ տարիներին իր տեսածները, և նոր պատկերներ նկարել իտալական թեմաներով։ Իր այդ ծրագրերի մասին նա գրում է. «Ես վճռականորեն որոշել եմ այս տարի մեկնել Իտալիա և այժմ երազում եմ Հռոմում և Նեապոլում կատարելիք այդ ճանապարհորդության մասին, որտեղ կանցկացնեմ երեք ամիս աշնանը և ձմռանը։ Այդ երկրում 1841 թ. սկսվեց իմ եվրոպական փառքը և այժմ՝ 58 տարի հետո, ես հույս ունեմ այնտեղ աշխատել, ինչպես 1841 թ. պատանեկության և հույսերի ժամանակ։ Միայն [չգիտեմ] կզարմացնե՞մ նեապոլցիներին (այսինքն՝ նրանց թոռներին) այժմ այնպես, ինչպես առաջ»[1]։

Տարված Իտալիա մեկնելու երազանքով՝ Այվազովսկին, սակայն, չի մոռանում իր հարազատ ժողովրդի, մասնավորապես ղրիմահայության վիճակի բարելավման հոգսերը։ Թուրքիայում հայկական ջարդերը թեև դադարել էին, սակայն դրանց ողբերգական հետևանքները շարունակում էին իրենց զգացնել տալ նաև 1900-ական թվականներին, իսկ ներգաղթը Ղրիմ դեռ շարունակվում էր։ Այդ բոլորը խորապես ազդում էր արդեն ծերացած արվեստագետի վրա։ Եվ նա ապրիլի 19-ի (նոր տոմարով մայիսի 2-ին) առավոտյան վերցնում է վրձինը, մոտենում նկարակալին և սկսում նկարել մի նոր սյուժետային պատկեր, որի էսքիզը գրիչով նա գծանկարել էր նախորդ երեկոյան, ճաշասեղանի վրա դրված մի թերթիկի վրա։ Նկարիչն աշխատում է լարված, հուզված և վրդովված։ Նա ուզում է հենց նույն օրն ավարտել և անվանում է այն «Թուրքական նավի պայթյունը»։ Թեման նա վերցրել էր իրականությունից և, այդ անցքը սրտին ու հոգուն մոտ զգալով, սկսել էր նկարել։ Ավելի քան երկու ժամ անընդմեջ աշխատելով՝ ծերունի նկարիչն արդեն նկարել էր խաղաղ ծովի մակերեսը, անամպ երկնակամարը և կոմպոզիցիայի մեջտեղում պայթած ռազմանավի հրեղեն բոցերը։ Թուրքական մեծ,

---

[2] **Н. Барсамов**, И. К. Айвазовский в Крыму, 1970, էջ 42:

Եռահարկ ոտզմանավը պայթել է, և նրա միչից հրդեհի հրբռնեն բոցերը հրաբուխի պես ժայթքել են վեր, դեպի երկինք, որտեղ ծխի սև քուլաներն ամպերի նման ծածկել են երկնակամարը։ Այդ հրեղեն բոցերի հետ ուժեղ պայթյունից վեր են նետվել նավի այրվող տախտակյա մասերը։ Ռազմանավի եզերքին հազիվ երևացող մարդկանց մանր ֆիգուրները՝ թուրք զինվորները, իրարանցման մեջ են։ Բայց նրանց փրկություն չկա։ Պայթած նավի հրդեհը, որը ուժեղ ընդգծված է նկարում, կլանել է բոլորին։ Այդ ամենը դատապարտված է կործանման։ Այս է «Թուրքական նավի պայթյունը» պատկերի գաղափարական իմաստը։ Այվազովսկին թուրքական ռազմանավի պայթյունը նկարել է հենց Թուրքիայի լեռնային բնությյան հենքի վրա, նավահանգստային քաղաքի մոտ, դրանով իսկ նավի պայթյունը կապելով այդ երկրի հետ։

Նկարիչը շարունակում էր ոգեշնչված աշխատել, երբ կեսօրին Աննան մոտենում է ամուսնուն և առաջարկում է մի փոքր զբոսնել ծովափին, մինչև որ սպասվող հյուրերը կգան։ Այվազովսկին, արդեն հոգնած, ընդհատում է աշխատանքը և կիսատ թողնելով գործը, կնոջ հետ գնում է ծովափ։

ՄԱՀԸ. ԱՐՋԱԳԱՆՁՆԵՐԸ. ԹԱՂՈՒՄԸ

Ծովափնյա կարճատև զբոսանքից տուն վերադառնալուց հետո, Այվազովսկին նստում է բազկաթոռին և հանգիստ, ուրախ տրամադրությամբ սպասում է հյուրերին։ Հենց այդ պահին, ինչպես հաղորդում են Թեոդոսիայից տրված հեռագրերը «բազկաթոռում նստած ժամանակ նա իրեն վատ է զգում և միայն կարողանում է զանգահարել... Նա մեռավ առանց տանջանքների, րոպեապես... նրա մահը բոլորովին անսպասելի էր»։[1]

Հովհաննես Այվազովսկին մեռավ 1900թ. ապրիլի 19-ին (նոր տոմարով մայիսի 2-ին) Թեոդոսիայում, իր տանը,

---

1 «Մշակ», 1900, № 76։

հանկարծամահությունից։ Նրա մահվան լուրը կայծակի արագությամբ տարածվում է ամբողջ աշխարհում։ Բոլոր երկրների թերթերը, այդ թվում ռուսական և հայկական համարյա բոլոր թերթերն ու ամսագրերը, նշում են նրա մահը, հրապարակում մահազդեր և հոդվածներ աշխարհահռչակ նկարչի գեղարվեստական հարուստ ժառանգության և նրա նշանակության մասին։ Կոմս Ի. Ի. Տոլստոյը Պետերբուրգից հեռագրով խոր ցավակցություն է հայտնում կայսերական գեղարվեստի ակադեմիայի անունից։ Ռուսական «Նովոյե վրեմյա», «Ռուսսկիե վեդոմոստի», «Խսատորիչեսկիե վեստնիկ», «Կավկազ», «Նովոստի», «Ռոսսիա», «Տիֆլիսսկի լիստոկ» և բազմաթիվ այլ թերթեր ու ամսագրեր մեծարանքի խոսքերով են նշում հանճարեղ արվեստագետի մահը, հրապարակելով նյութեր նրա կյանքի ու գործունեության մասին։

Հայկական «Սուրհանդակ» օրաթերթը Այվազովսկու մահվան լուրը հաղորդում է «Ազգային լուրեր» խորագրի տակ. «Այվազովսկիի մահվան գույժով կսկսինք մեր այսօրվա Ազգային լուրերու շարքը։ ...Հայ գեղարվեստական աշխարհին ըրած կորուստը, հանձին Այվազովսկիի, անփոխարինելի է։ Ազգը դարերու մեջ հազիվ կունենա այդպիսի հանճար մը, որ օր մըն ալ կմարի կերթա, առանց իրեն արժանավոր հաջորդ մը ձգելու, ինչպես չունեցավ Պարոնյան, Սարգիս Պալյան, Ադամյան, Դուրյան և այլն։ Եվ հուսկ ուրեմն Հովհաննէս Այվազովսկի»[1]։ «Հանրագիտակ» ամսագիրը ապրիլի 29-ին գրում է. «Հայ հանճարներու համաստեղութեան նոր աստղ մ'ալ անհետացավ... կողբանք այդ մեծ հայուն մահվան վրա, որ իր բովանդակ կյանքի մեջ կարծես աշխատեցավ հաստատելու համար, թե հայերը թեև հանճարավոր զավակներ քիչ ունեն, բայց իրենց ունեցած սակավությունները ալ հսկաներ են»[2]։ «Վերջացնելով խոսքս, պետք է ասեմ, որ Հովհ. Այվազովսկին նման է մի տարօրինակ լուսատուի, որ ծագելով հայկական խավար երկնակամարի միջից և ութսուներեք տարի լուսավորելուց հետո անհետացավ, թողնելով իր հետևից այնպիսի պայծառ գես,

---

1 «Սուրհանդակ», 1900, ապրիլի 25, էջ 853։

2 «Հանրագիտակ», 1900, № 93, էջ 1445—1446։

որով հավիտյան պետք է հպարտանա ամեն հայ»,— գրում է նկարիչ Գ. Բաշինջաղյանը[1]։ Բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Վրիմում, խոր-բոպես ցնցված մեծ ծովանկարչի մահից, ապրիլի 24-ին՝ նկարչի մահից 5 օր հետո, գրում է «Ծովի կախարդը» արձակ բանաստեղծությունը, որի մեջ գեղեցիկ ու պատկերավոր լեզվով արտահայտում է այն միտքը, թե «հանճարեղ հայազգի նկարիչ» Այվազովսկու մահը ողբում են ոչ միայն հայկական մարդկությունը և նրա հայրենակիցները, այլև նույնիսկ ծովը. այն Սև ծովը, որի ափերին ծնվել, մեծացել, զմայլվել է մեծ նկարիչը և հանճարեղ կերպով վերարտադրել է իր բազմահազար ծովանկարներում։ «Մեռավ Այվազովսկին,— գրում է Ալ. Ծատուրյանը «Ծովի կախարդը» արձակ բանաստեղծության մեջ,— մոտ երեք քառորդ դար լարված ուժերով սպասավորել գեղարվեստին, պատանեկան խանդով ու թարմությամբ ստեղծագործել, երեք քառորդ դար կյանքն անցկացնել ոգևորության մեջ, ամբողջությամբ ներշնչվել գեղեցիկի և վսեմի գաղափարով, գեղարվեստական աշխարհը ճոխացնել ստեղծագործող հսկա, բեղուն տաղանդների բազմաթիվ թանկագին հրաշալիքներով, մի խոսքով՝ բնության մեծության, բնության լեզվին և հոգուն նվիրաբերել 83-ամյա մի կյանք և ապա մեռնել...

Մի՞թե դա մահ է...
Հապա ո՞րն է անմահությունը...

Այվազովսկիները չեն մեռնում[2]։

Հայ ժողովրդին ու նրա մշակույթին Այվազովսկու մատուցած ծառայություններից մեկն էլ Ծատուրյանը համարում է այն, որ ծովանկարիչը «Մինչև խորին ծերություն երգեց կտավի վրա ծովի անվախճան կյանքը», իր բարձրարվեստ ծովանկարներով «Մեր առաջ բացեց, մեր սրտին մատչելի դարձրեց այդ մեծ, այդ բարդ ու անքնին կյանքի բոլոր ծալքերը, բոլոր ելևէջները»[3]։ Թերևս Այվազովսկու

---

1 «Մշակ», 1900, № 97։
2 «Մշակ», 1900, № 11։
3 Նույն տեղ։

բարերար ազդեցությամբ Ալ. Ծատուրյանը, ինչպես և հայ գրողներից շատերը, գրում են ծովին նվիրված բանաստեղծություններ և ծովի թեման դառնում է հայ նոր պոեզիայի ուշագրավ թեմաներից մեկը։

Հովհ. Այվազովսկու թաղումը հանդիսավոր էր ու շքեղ։ Բոլորն էլ հասկանում էին, որ թաղում են համաշխարհային հռչակ ունեցող նկարչի, մեծ մարդու և բարեգործի։ Նրա մահվան լուրը ստանալուց հետո Ռուսաստանի տարբեր քաղաքներից և հայ մշակույթի առանձին օջախներից Թեոդոսիա են գալիս բազմաթիվ պատվիրակներ և պատվիրակություններ ծաղկեպսակներով։ Բացի Թեոդոսիայի հայոց համայնքից, թաղմանը ներկա են լինում Սիմֆերոպոլի, Ղրիմի և Կարասու-բազարի հայկական համայնքների ներկայացուցիչները, հայ մշակույթի գործիչների անունից այստեղ է գալիս բանաստեղծ Ալ. Ծատուրյանը, թաղմանը մասնակցում են նաև քաղաքի համքյարներն իրենց դրոշակներով։

Նկարչի մահվան օրից Թեոդոսիայի հայոց, ռուսաց և հունաց բոլոր եկեղեցիների զանգերը սկսում են անընդհատ և երկարատև զանգահարել երեք օր շարունակ։ «Ամբողջ քաղաքը վարանման ու շարժման մեջ է,— գրում է «Մշակ» թերթը,— օրական մի քանի անգամ հոգեհանգիստ է կատարվում»։ Այդ հայաբնակ քաղաքում բոլոր խանութները փակվում են։ Հովհ. Այվազովսկու դագաղը, ծածկված շքեղ ծաղիկներով ու արծաթյա պսակներով, որոնց մեջ և Մոսկվայի հայ համայնքի շքեղ ծաղկեպսակը դրվում է նկարչի տան պատկերասրահի նկարների առաջ։ Հազարավոր քաղաքացիներ, տարբեր ազգերի մի քանի հարյուր հյուրեր երեք օր շարունակ այցելում էին նկարչին հրաժեշտ տալու համար։ Պատկերասրահուն Անվանի բանասեր և թարգմանիչ Հորեն եպիսկոպոս Ստեփանյանը ապրիլի 22-ին՝ թաղման օրը, կատարում է հոգեհանգիստը և արտասանում մի սրտաշարժ ճառ, ուր, մեծարելով նկարչին, նշում է նրա բարեգործությունները, այդ թվում նաև իր ժողովրդին ու նրա գեղարվեստական մշակույթին մատուցած ծառայությունները։ Այնուհետև երգում է Թեոդոսիայի քառաձայն երգչախումբը, որից հետո սկսվում է հուղարկավորությունը։

Հովհ. Այվազովսկին թաղվում է Թեոդոսիայի հայոց սբ.

Սարգիս եկեղեցու բակում՝ ճանապարհը, որն անցնում է քաղաքի միջով մոտ մեկ կիլոմետր երկարությամբ, քաղաքային գումայի որոշմամբ ծածկվում է կանաչով և ծաղիկներով, իսկ քաղաքի բոլոր շենքերի ու փողոցների լապտերները ծածկվում են սև քողով։ Քաղաքի երկու կողմերում կենդանի ալտանեշ կազմած, մինչև գերեզմանատուն ուղեկցում են գագաղը։ Ճանապարհին մի քանի տեղ հոգեհանգիստ կատարելով, թաղման թափորը շարժվում է դեպի հայոց եկեղեցին, որի լայնարձակ բակում արդեն հավաքվել էին ավելի քան հազար մարդ։ Այստեղ աթոռներին դրված առանձին բարձիկների վրա շարվում են նկարչի ստացած բոլոր շքանշաններն ու մեդալները, այդ թվում նրա ոսկյա մեդալները։ Նորընծա եպիսկոպոսը կատարում է թաղման պատարագը, որից հետո ասվում են հրաժեշտի մի քանի ճառեր։ Քաղաքի բոլոր եկեղեցիների զանգակների երկարատև զողանջների ուղեկցությամբ և քառաձայն երգչախմբերի մեղեդիների ներքո ապրիլի 22-ին Այվազովսկու դագաղը իջեցվում է գերեզմանի մեջ և հողով ծածկվում։ «Այդպիսի փառավոր թաղում չէր տեսել ոչ միայն Թեոդոսիան, այլև ամբողջ Ղրիմը»,— գրում է «Նոր Դար» թերթը[1]։

Հետագայում Այվազովսկու գերեզմանի վրա դրվում է իտալական սպիտակ մարմարից մի մեծ դամբարանաքար, որի աջ կողմի վրա բարձրաքանդակ հայերեն տառերով գրվում է.

«ՀՈՎՀԱՆՆԷՍ ԿՈՍՏԱՆԴԻՆԵԱՆ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ
ԾՆԵԱԼ ՅԱՄԻ 1817-Ի 17 ՀՈՒԼԻՍ ԱՄՍՈՑ
ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ՏԷՐ ՅԱՄ 1900-Ի 19 ԱՊՐԻԼԻ»։

Դամբարանաքարի ձախ կողմի վրա դարձյալ հայերեն բարձրաքանդակ տառերով գրվում է.

«ՄԱՀԿԱՆԱՑՈՒ ԾՆԵԱԼ ԱՆՄԱՀ ՋԻՒՐՆ
ՀԻՇԱՏԱԿ ԵՔՈՂ»։

Ապա ռուսերեն՝

ПРОФЕССОР ИВАН КОНСТАНТИНОВИЧ АЙВАЗОВСКИЙ.
1817—1900».

---

1 «Նոր դար», 1960, № 80։

Հայոց եկեղեցու բակի արևմտյան մասում, Այվազովսկու գերեզմանից մի քանի մետր հեռավորության վրա, ճարտարապետորեն ձևավորված քարե ցանկապատի վերևի մասում փակցվում է սպիտակ մարմարե մի հուշատախտակ, որի վրա գրվում է հայերեն.

«ԱՍՏ ՀԱՆԴՉԻ ՄԱՐՄԻՆ
ՊՐՈՖԵՍՈՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈՆՍՏԱՆԴԻՆԵԱՆ
ԱՅՎԱԶՈՎՍԿԻՑ
1817—1900»

Թեոդոսիայի հայոց սբ. Սարգիս եկեղեցու բակում գըտնըվող մարմարե այդ գերեզմանը դառնում է սրբավայր, ուր այցելում են աշխարհի տարբեր երկրներից Ղրիմ եկող զբոսաշրջիկների խմբեր և անհատներ, իրենց խորին հարգանքը մատուցելու ժողովուրդների հավերժ բարեկամությունը մարմնավորող հայ ժողովրդի մեծ զավակին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Մանկության և պատանեկության տարիներ . 6

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Գեղարվեստի ակադեմիայում . 19

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Հայրենի բնության գրկում . 42

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

Արտասահմանում 59

Հանդիպում եղբոր հետ 59
Առաջին հանդիպումը Գոգոլի հետ 60
Ռուս արվեստագետների միջավայրում 63
Ջ. Գարիբալդիի ապագա թիկնապահի հոդվածը 65
«Քաոսը» Վատիկանում 66
Ջ. Թյորների բանաստեղծությունը 73
Բոլոնյան երշիկներ 77
Ուղերձ երիտասարդ նկարչին 80
«Գնեցիկ արվեստների նկատմամբ իմ ունեցած բոցավառ սերը պաշտպանել է ինձ ամեն մի գայթակղությունից» . . 82
«Ռուզում եմ մրցել Ֆրանսիացիների հետ» 84
Նոր ճանապարհորդություններ, նոր տպավորություններ . . 87
Նկար հայկական օրացույցի համար 95
Անակնկալ դեպք 99
Տպավորություններ վերադարձի ճանապարհին . 99

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Հայրենիքում . . . 103

Պետերբուրգում 103
Մաքրասիրության չատագովը . . 104
Նոր կոչումներ 105

Նոր պատկերներ ցուցահանդեսում 107
Ջատիի առաջին օրը 110
Ճանապարհորդություն դեպի Կոնստանդնուպոլիս . . . 112
Ղրիմում 118
Ղրիմահայության հետ 121
Հոբելյանական ցուցահանդեսը Թեոդոսիայում 126
Առաջին անհատականը Ռուսաստանում 135
Անակնկալ այց նկարչի արվեստանոցում 138
Առանձնատունը 140
Մարտանկարը 142
Անկոչ հյուրը 145
Ամուսնություն 146
Ցուցահանդես Մոսկվայում 149
Ցուցահանդես աղքատների օգտին 150
«Ինններորդ ալիքը» 151
Երկու նկարիչների ցուցահանդեսը 154
Գեներալ Ա. Պ. Երմոլովի և նախկին դեկաբրիստ Զ. Գ. Զերնիչևի հանդիպումը նկարչի արվեստանոցում 156
«Ծովի թագավորը» 158
Մեծ բարեկամների մահը 159
Օգտակար նախաձեռնության մերժումը 160
Հնագիտական պեղումներ 161
Ղրիմյան պատերազմը և Այվազովսկին 164
Ցուցահանդես մարտական Սևաստոպոլում 166
«Ոչխարները փոթորկի ժամանակ» 174
Փարիզում 176
«Պատվո լեգեոն» շքանշանը 177
Մարշալ Ֆելիսեն և կոմպոզիտոր Ռոսսինին՝ նկարչին . . . 180
Գաբրիել Այվազովսկու նամակը նկարիչ եղբորը 182
Հայ մշակույթի օջախում 184
Այվազովսկիները Լազարյան ճեմարանում 187
Նոր ուսումնարանի հիմնադրումը 188
14 կենցաղային պատկերներ մեկ ցուցահանդեսում . . . 190
Երիտասարդ լրագրող Մատթեոս Մամուրյանի այցը Այվազովսկուն . 191
«Քան զԱյվազեան, քան զԱճեմյան, լավ է Միքայել Նալբանդյան» . 193
Երկու նոր պատկեր 195
Ընտանեկան հոգսեր 196
«Արտակարգ սիրալիր էին իմ նկատմամբ» 198
Նոր իրադրության պայմաններում 202
«Համաշխարհային չրհեղեղը» 205
Ընդհանուր գեղարվեստական արվեստանոց 208
«Գրիգոր Լուսավորիչ» պատկերը 210
Նոր պատկերներ ցուցահանդեսի համար 211
«Կիպրոս կղզին» 214

Կայսրուհու հրավերով 216
Շնորհալիների հետ 217
Ճանապարհորդություն դեպի Եգիպտոս 227
Ցուցահանդես արևելյան քամանիով 231
Հայոց բաժանության 234
Բանգարան սեփական նախագծով ու միջոցներով 237
Որկրպագողները 242
Նոր գործեր 248
Հանդիպում Կոնստանդնուպոլսում 252
Մննդավայրում և մայրաքաղաքում 260
Նկարչի մարտական վրձիններ 267
Նոր ցուցահանդեսներ Օդեսայում և Պետերբուրգում . . . 269
Նոր ճանապարհորդություն Եվրոպայում 273
Պատկերասրահի հիմնադրումը 279
Լոնդոնում 284
«Սև ծովը» 285
Երկրորդ ամուսնություն 287
Համատեղ ցուցահանդես 290
Առաջին հանդիպումը Ագամյանի հետ 294
Այց Հունաստան 295
Ցուցահանդես Կիևում 296
Կրկին Ագամյանի հետ 300
Ուսանողական ուղերձ 306
Ցուցահանդես Ստոկհոլմում 308
Մեծ հոբելյան 312
Եմելու չուր Թեոդոսիային 322
Նոր ցուցահանդես Կ. Պոլսում և արևմտահայերը . . . 327
«Ահա մեր Հայաստանը» 336
«Աշխատությամբ եղել եմ ինչ որ կամ» 338
Այց ծովանկարչին 341
Վիճակախաղեր սովյալների օգտին 348
Ամերիկայում 351
«Ատրանտյան օվկիանոս» 365
Նկարչի ողջույնը կաթողիկոսին 368
«Այվազովսկու նկարի առջև» 371
Հանդիպում կաթողիկոսի հետ 375
Եգերթի ընդունումը 382
«Նորին ցավով վշտացած է սիրտս...» 386
«Ագամանդյա հոբելյանը» 393
Նոր ցուցահանդես Մոսկվայում 396
«Ալիքների մեջ» 400
Նոր ցուցահանդես հայկական միջավայրում 405
Հայրենակիցների միջավայրում 415
Վերջին պատկերահանդեսը 418
Մեծ ծովանկարչի կյանքի վերջին օրերը 420
Մահը, արձագանքները, թաղումը 423

МИНАС САРКИСОВИЧ САРКИСЯН

Жизнь великого мариниста

Монография

(На армянском языке)

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՆԱՍ ՍԱՐԳՍԻ

Մեծ ծովանկարչի կյանքը

Մենագրություն

Համ. վարիչ՝ Ս. Ա. Խաչատրյան
Համբագիր՝ Ռ. Կ. Ղարիբյան
Նկարիչ՝ Հ. Մ. Կարապետյան
Գեղ. խմբագիր՝ Ֆ. Ա. Գուլանյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերատեսող սրբագրիչ՝ Ա. Ս. Աբրահամյան

ИВ 6522։

Հանձնված է շարվածքի 25. 03. 1990։ Ստորագրված է տպագրության 10 1990 թ.։ ՎՖ 06465։ Ձևաչափ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 1։ ռատեսակ «Գրքի սովորական»։ Տպագրություն բարձր, 22,68 պայմ. մամ., 23,1 պայմ. ներկ. թերթ., 19,5 հրատ. մամ.+2,0 մամ. ներ Տպաքանակ՝ 30.000։ Պատվեր՝ 3459։ Գինը՝ 3 ռ.։

«Անահիտ» հրատարակչություն, Երևան—9, Ջրաշատ 1։

Издательство «Анаит», Ереван-9, ул. Джрашат, 1.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գոր պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 6։

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издател полиграфии и книжной торговли, Ереван, ул. Алавердяна,